

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

YEREVAN STATE UNIVERSITY  
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

**3 (6)**

**ARMENOLOGICAL ISSUES**

**BULLETIN**

ԵՐԵՎԱՆ – YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS  
2015

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ  
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.  
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

**Ավագյան Ա. Ա.**

**Ավետիսյան Լ. Վ.** (գլխավոր  
խմբագրի տեղակալ)

**Ավետիսյան Հ. Գ.**

**Ավետիսյան Յու. Ս.**

**Բայրամյան Հ. Ս.**

**Բարդակչյան Գ.** (ԱՄՆ)

**Դեդեյան Ժ.** (Ֆրանսիա)

**Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.**  
(Գերմանիա)

**Զաքարյան Ս. Ա.**

**Հայրունի Ա. Ն.**

**Հովհաննիսյան Մ. Ս.**

**Հովսեփյան Լ. Ս.**

**Ղարիբյան Ա. Ա.**

**Մարգարյան Հ. Գ.**

**Մինասյան Է. Գ.**

**Մուրադյան Ս. Պ.**

**Պողոսյան Վ. Ա.** (պատասխանատու քարտուղար)

**Սայադով Ս. Ս.** (Ռուսաստան)

**Սաֆարյան Ա. Վ.**

**Տազեայան Ա. (Լիբանան)**

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

**Avagyan A.**

**Avetisyan H.**

**Avetisyan L.** (Deputy editor-in-chief)

**Avetisyan Y.**

**Bardakchian G.** (USA)

**Bayramyan H.**

**Dakessian A.** (Lebanon)

**Dedeyan G.** (France)

**Drost-Abgaryan A.** (Germany)

**Gharibyan A.**

**Hayruni A.**

**Hovhannisyanyan M.**

**Hovsepian L.**

**Margaryan H.**

**Minasyan E.**

**Muradyan S.**

**Poghosyan V.** (Executive Secretary)

**Safaryan A.**

**Sayadov S.** (Russia)

**Zakaryan S.**

ROLF HOSFELD

## FROM MORAL POLITICS TO INTERNATIONAL JUSTICE

**Key words** – William Gladstone, Johannes Lepsius, Alfred Dreyfus, Emile Zola, Bad government, Imperialism, Indictment, Friedrich Naumann, Weltpolitik, Enver Pasha, Talaat Pasha, Adolf Hitler, Henry Morgenthau, Boghos Noubar, James Bryce, Crimes against humanity, Rafael Lemkin

Moral politics became a public issue in the European XIX century. Based on an evolutionary concept of human progress after the Vienna Congress, who besides the European balance of powers also cared about general moral values in politics by demanding the abolition of slave trade, the campaign for the abolition of slavery became the first strong civil society movement in modern history. The British Empire released the slaves in its colonies in 1833, France in 1848, the US during the Civil War of the 1860s, timely paralled by the liberation of the Russian peasants. Mostly these campaigns were flavoured by the idea of a Christian *mission civilatrice*. In the late XIX century the secular language of human rights (which had already been part of the American and French declarations of the Rights of Men in the late XVIII century) dominated the French *Ligue pour la Défense des Droits de l'homme* in the case of Captain Alfred Dreyfus<sup>1</sup>, who was accused of high treason for anti-Semitic reasons. Campaigns against colonial crimes used the same two languages. So did campaigns against the “bad government” in the Ottoman Empire, beginning with William Ewart Gladstones *Bulgarian Horrors* of 1876 and later in the case of the Ottoman Armenians. Moral politics in all these cases relied on the growing power of public opinion in European societies and its influence on the decisions of official politics.

The German pro-Armenian movement of the 1890's was mainly upheld by protestant Fellowship circles as well as educated liberal Protestants in the vicinity of Martin Rade's intellectual journal *Christliche Welt* (“Christian World”). It carried a strong Christian undertone, and in Rade's case encompassed a Neo-Kantian flavour. Its most prominent figure – closely related to Rade – was Johannes Lepsius, whose 1896 tome, *Armenien und Europa* (“Armenia and Europe”), was translated into several languages, exerting a tremendous international influence. The governments of Europe painted a picture of the massacres which was guided by imperial interests rather than following politico-moral standards, British liberal William Gladstone wrote in an 1897 letter to Lepsius, having read the book. He called this “one of the

---

<sup>1</sup> Hoffmann S.-L., Einführung. In: Stefan-Ludwig Hofmann (Ed.): Moralpolitik. Geschichte der Menschenrechte im 20. Jahrhundert, Göttingen, 2010, S. 14-18.

saddest, if not the saddest, truths of our time”<sup>1</sup>. The former Prime Minister – whom Bismarck considered an insufferable moralist<sup>2</sup> – invoked Lepsius’ authority for his pro-Armenian campaigns of the 1890’s. He may be described as the era’s most efficacious proponent of an ethically motivated foreign policy and as an early visionary of a liberal, pan-European legislative system<sup>3</sup>. As Hans Lukas Kieser has pointed out, Lepsius, a protestant internationalist, very much influenced by Anglo-American sources<sup>4</sup>, was driven by similar concepts, albeit exhibiting a particularly German bent. His book he labelled an “Indictment” against the major European powers<sup>5</sup>. This meant cultivating a sentiment which would only two years later find its *locus classicus* in Émile Zola’s famous *J’accuse* during the Dreyfus campaign.

Like Gladstone, Lepsius was a liberal imperialist of ethical principles. His tract was published during an era when Bismarck’s calculated *Realpolitik* was increasingly being supplanted by visions of a geographically expansive German power state. The turnaround of public opinion toward an impatient brand of imperialism had been brought about in 1895 by Max Weber’s widely received Freiburg inaugural address<sup>6</sup>. This also affected a sought-after new sphere of influence in the Ottoman Empire. In the new climate, British calls for an intervention prompted by the Armenian massacres were – after a moment of hesitation – abruptly dismissed by Wilhelm II as a sinister ploy designed to increase London’s Eastern influence<sup>7</sup>.

For these very reasons, Lepsius and the moral politics of the German pro-Armenian movement were strongly opposed to the Reich’s official policies. In 1897, he wrote in Maximilian Harden’s journal *Zukunft* that national interest should never become the guiding principle of moral thought, judgment and action<sup>8</sup>. Adolf Stoecker’s *Deutsche Evangelische Kirchenzeitung* accused him of being overly dependant on English influence, politically as well as theologically<sup>9</sup>. The Prussian Ministry of the Interior intervened. Friedrich Naumann, subsequent *doyen* of German-minded liberalism, went as far as spin doctoring the victims of the Hamidian massacres to serve some higher purpose. This was supposed to lie in the German destiny for *Weltpolitik* (World Politics) in the Orient. Anyone who, like Lepsius,

---

<sup>1</sup> William Ewart Gladstone to Johannes Lepsius, 25 July 1897, Lepsius-Archiv Potsdam (LAP) 157-1710.

<sup>2</sup> Mommsen W. J., *Großmachtstellung und Weltpolitik 1870-1914. Die Außenpolitik des Deutschen Reiches*. Frankfurt am Main/Berlin, 1993, S. 32.

<sup>3</sup> Ceadel M., *Gladstone and a Liberal Theory of International Relations* // Gosh P. and Goldman L. (Ed.), *Politics and Culture in Victorian Britain: Essays in Memory of Colin Matthew*, Oxford, 2006, p. 79 ff.

<sup>4</sup> Kieser H.-L., *Nahostmillenarismus, protestantische Internationale und Johannes Lepsius* // Hosfeld R. (Hg.): *Johannes Lepsius – Eine deutsche Ausnahme*, Göttingen, 2013, S. 62 ff.

<sup>5</sup> Lepsius J., *Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland*, Berlin, 1896.

<sup>6</sup> Joas, Hans/ Wolfgang Kölbl: *Kriegsverdrängung. Ein Problem in der Geschichte der Sozialtheorie*, Frankfurt am Main, 2008, S. 161, 166.

<sup>7</sup> Mommsen W. J., *op. cit.*, p. 129.

<sup>8</sup> Lepsius J., *Antwort auf Hans Barth, Zukunft 18 (1897)*, S. 478.

<sup>9</sup> Feigel U., *Das evangelische Deutschland und Armenien. Die Armenierhilfe deutscher evangelischer Christen seit dem Ende des 19. Jahrhunderts im Kontext der deutsch-türkischen Beziehungen*. Göttingen 1989, S. 52.

thought international, i.e. “English”, as Naumann contended, might well take the Armenian side<sup>1</sup>.

However, Lepsius was not fundamentally opposed to German *Weltpolitik*, although his take on the subject was only distantly related to the Wilhelmine boom of power politics. To Lepsius the theologian, *Weltpolitik* predominantly presented itself as a necessary condition for the final advent of the kingdom of Christ. He expected the latter to come about in the shape of a constitutionally ordered world on earth, based on human rights principles of the gospel. Basically, in Germany at this time, these were often also neo-Kantian influenced ideas. Yet Lepsius, like virtually every educated German protestant of his day, viewed Luther’s Germany as God’s predestined country. However, he had to witness how the atrocities committed in the Ottoman Empire during World War I stood in increasingly stark contrast to his vision of the coming kingdom of Christ on earth.

In the beginning of August 1915, Lepsius wrote from Istanbul to his wife Alice at Potsdam: “Unspeakable things have happened and are happening still. The goal is perfect extermination – executed under the veil of martial law. There is nothing else to be said”<sup>2</sup>. Lepsius, 57 years old at the time, was received for an audience with War Minister Enver Pasha on 10 August 1915 after a recommendation by Auswärtiges Amt (the German State Department) and the German Embassy. This was precisely when the siege at Musa Dagh was unfolding, where some 5000 Armenians had sought refuge on the escape from their persecutors, the fateful days that are recounted in Franz Werfel’s novel, which also tells the story of this meeting. It was by no means a matter of course. Its background, too, remains unclear to this day and will in all likelihood never be fully uncovered. Certainly, the Reich’s government at that point took a strong interest in exercising a mitigating influence on its Turkish ally<sup>3</sup>. The German Embassy at Istanbul, however, doubted it could ever end successfully<sup>4</sup>. Enver, in turn, had a vested interest in a certain amount of German backing<sup>5</sup>. At least until the increasing success in defending the strategically important Dardanelles and the resulting growth in Turkish confidence would have completely dispelled any qualms.

Lepsius produced a protocol of this conversation at the War Ministry which is extensively quoted by Werfel. The most important exterminatory sentence in this conversation was the following. “We can handle our internal enemies”, Enver said: “You in Germany cannot. In this we are stronger than you”<sup>6</sup>. For the time being, thoughts like this were foreign to German politics, which were still (at least partly) anchored in values of traditional XIX century Wilhelminism. Yet, not much later, they were the very reason why Adolf Hitler admired Enver as an example to follow, whom – among others, particularly Mussolini – he referenced in his trial before the Munich People’s Court in 1924. According to Hitler, Enver managed to build up a whole new

---

<sup>1</sup> Naumann F., “Asia“, Berlin-Schöneberg 1900, S. 145, p. 141.

<sup>2</sup> Lepsius to Alice Lepsius, beginning of August 1915, Lepsius-Archiv Potsdam (LAP) 118-1320.

<sup>3</sup> Wangenheim to Scheubner-Richter, 21 June 1915. Politisches Archiv des Auswärtigen Amtes (PA-AA) /BoKon/169.

<sup>4</sup> Wangenheim to AA, 9 June 1915. PA-AA R 14086.

<sup>5</sup> Wangenheim to AA, 31 May 1915. PA-AA R 14086.

<sup>6</sup> Lepsius J., Mein Besuch in Konstantinopel // Der Orient, vol. 1/3 (1919), S. 8.

nation, successfully detoxifying the multicultural Gomorrhia that was Constantinople<sup>1</sup>. This unveiled a deep congruency of fundamental imaginations of purification. Hitler's "awaking" Germany welcomed the radically nationalist Young Turks (and their Kemalist followers) as a congenial example<sup>2</sup>.

Henry Morgenthau relates that Lepsius was determined to try to persuade his own government to put a halt to this crime against humanity perpetrated by a wartime ally – as we know, he failed. "His feelings were aroused chiefly against his own government", Morgenthau records in his memoirs in view of those hours spent together at the American Embassy. "He expressed to me the humiliation which he felt as a German, that the Turks should set about to exterminate their Christian subjects, while Germany, which called itself a Christian country, was making no endeavours to prevent it"<sup>3</sup>.

Lepsius decided not to remain silent after his return to Germany. This was in stark contrast to the considerable amount of people in the Reich who knew exactly what was going on in Turkey, yet did not speak up in order to preserve the *raison d'état*. Even the majority of the German clergy adhered to this practice almost unconditionally. "Nationalized Christianity's conscience" he wrote in March 1916, "is easily swayed in such conflicts of interest to subordinate that which is imperative on grounds of humanity to that which is politically opportune"<sup>4</sup>. Johannes Lepsius did not succumb. He wanted to take a stand by again publicly promoting moral politics as far as he could under wartime circumstances.

It was at a Berlin press conference on 5 October 1915, short after his return from Istanbul, when Lepsius made himself very clear for the first time. There, he actually accused the German government of having become a slave to the Ottoman leadership instead of duly ruling as its master. In the beginning of the war, Lepsius had subscribed to the unrealistic illusion that the German-Turkish alliance would by necessity bring about a certain hegemonial Europeanization of Turkey at the hands of Germany as well as establish order in its judicial system. These Lepsius had considered positive effects<sup>5</sup>, even in the Armenian case. But such pipe-dreams of a "German Egypt" were soon shattered, as it became more and more apparent that Turkey was following its own agenda in this war. Johannes Lepsius, although a German patriot, adopted the stance of denouncing his own government in the face of the great crime against humanity that was the Genocide. The Reich's Oriental opportunism in the case of the Armenian Genocide was steeped in a German spirit of cultural relativism Lepsius had never shared. The "belief that in warfare, might is the only decisive factor and that right and humanity can be disregarded until victory is achieved"<sup>6</sup>, as he put it later, was leading to a moral catastrophe.

---

<sup>1</sup> **Gordon H. J.** (Ed.), *The Hitler Trial before the People's Court in Munich*. Vol. 1. Arlington 1976, p. 180.

<sup>2</sup> See also **Ihrig S.**, *Atatürk in the Nazi Imagination*. Cambridge, Mass./ London, UK, 2014; *idem*: *Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler*. Cambridge, Mass./ London, UK, 2016.

<sup>3</sup> **Morgenthau H.**, *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918, p. 344.

<sup>4</sup> Lepsius to August Winkler, 26 March 1916. LAP 7183.

<sup>5</sup> "Memel and Basra are the endpoints of the European Limes towards Asia". Johannes Lepsius: *Unsere Waffenbrüderschaft mit der Türkei // Der Christliche Orient*, vol. 16 (1915), S. 17.

<sup>6</sup> Lepsius: *Was hat man den Armenien angetan? Die Zeit zu reden ist gekommen*. Mitteilungen aus der Arbeit von Dr. Johannes Lepsius, September/Dezember, 1918, S. 113.

Military intelligence had him under surveillance. In his devastation he went as far as publicly demanding German military control of the northern Ottoman Empire to establish a rule of law there. He even suggested surrendering the Ottoman Arabic territories to the British for the same reason<sup>1</sup>. Not unlikely Lepsius was informed about Boghos Nubar's negotiations with the British military command in Egypt concerning an invasion in the gulf of Iskenderun. This was an unrealized plan that had the support of the Armenian Dashnaksuyun party at Sofia with whom Lepsius had close ties. The German government reacted in a fairly moderate manner considering the scope of this provocation. A course of deliberate disinformation was taken, complemented by a warning against inadvertently being used as a battering ram for the Armenian question<sup>2</sup>. On 11 January 1916 however, a query from Social Democratic MP Karl Liebknecht confronted the Reichstag (the German parliament) with "Professor Lepsius's" assessment of "an outright extinction of the Turkish Armenians"<sup>3</sup>. Documents, originating from Lepsius's material gathered during his Turkish journey, have doubtless found their way into James Bryce's and Arnold Toynbee's 1916 British Bluebook. How this was possible is still unclear. Probably the channels were Swiss. In turn Lepsius learned certain details from British sources, for instance concerning the developments at the Musa Dagh. These he published in 1916, taking some literary liberties, in his Potsdam based journal *Der Christliche Orient*<sup>4</sup>. International contacts and attempts to exert influence on policies were, despite the war, still intact.

In summer of 1916, Lepsius published his report *Die Lage des armenischen Volkes in der Türkei* ("The Situation of the Armenian People in Turkey") spanning over three hundred pages. It contained precise chronological representations as well as meticulous statistics, as well as a thorough analysis of causes. Despite the looming military censorship, he personally managed to have 20.500 copies printed secretly and distributed all over the Reich. The pamphlet was banned by military censorship on 7 August 1916. The German Turkophile Ernst Jäckh working at the State Department issued him a warning pertaining to his "propaganda lectures and leaflets"<sup>5</sup> and prompted the Ministerial passport office to bar Lepsius from entering Switzerland for further talks<sup>6</sup>. However, he had already left Germany by mid-July to take residence in the neutral Netherlands where it was possible for an anonymous Dutch translation of his *Bericht* to be published. A French translation had already been undertaken in Potsdam<sup>7</sup> and was published in Paris after the war in late 1918.

The *Bericht* is an astonishing opus. First and foremost, it is a testimony of extraordinary personal courage. During this time, as the so-called national "home peace" of the World War was kept, censorship turned any public utterance about war

---

<sup>1</sup> Jackh Papers, No 22, OHL (Zensurbüro) to Ernst Jäckh, 1 November 1915, No. 2,610 O.Z. see **Trumpener U.**, *Germany and the Ottoman Empire 1914-1918*, Princeton, 1968, p. 223.

<sup>2</sup> **Trumpener U.**, op. cit., p. 224.

<sup>3</sup> Anfrage des Reichstagsabgeordneten Karl Liebknecht in der 26. Sitzung des Reichstags, 11 January 1916. PA-AA R 14089.

<sup>4</sup> **Lepsius**, *Das rettende Kreuz // Der Christliche Orient*, vol. 17 (1916). H. I/III, S. 12-19.

<sup>5</sup> Jäckh to Lepsius, 11 September 1916. LAP 13321(2).

<sup>6</sup> Jäckh to Zimmermann, 31 Juli 1916. PA-AA R 14092.

<sup>7</sup> **Meißner A.**, *Martin Rades "Christliche Welt" und Armenien*, Berlin, 2010, S. 231 ff.

crimes into a potentially dangerous affair, be they of German origin or committed by Her allies. His book was, as the *New York Tribune* noted in July 1919, the most “powerful indictment of Turkey’s crimes in Armenia” that appeared during the war in all countries<sup>1</sup>. By the same token, the *Bericht* marks the beginning of a serious historiography of the Armenian Genocide. Lepsius was not only a Theologian whose upbringing, environment and wealth of experience had equipped him with a diverse historico-educational backdrop and a charismatic public persona. He was an academically trained Mathematician, held a doctorate in Philosophy, and commanded the ability to think systematically and conceptually.

The main thesis of the book – which, according to Ulrich Trupener, has been “the best work of synthesis on this subject”<sup>2</sup> for decades – is that, beginning in the spring of 1915, government-planned ethnic cleansing was being executed by the organs of a “deep state”, immediately turning into genocidal measures. More recently, detailed studies have accentuated how ideological hardliners of the Young Turk Committee – one might call them ethno-nationalist political commissars – tried to enforce extreme exterminatory measures everywhere, even against the resistance of some military officials and provincial governors. The purpose of these was, as Lepsius highlighted, to essentially annihilate everything not purely Turkish in an ethnic or cultural sense<sup>3</sup> – or at least anything proven to be incapable of assimilation. In his view, the genocide was an exclusively Turkish project of a domestic and ethno-political nature and deadly mass-robbery on a great scale. The *Bericht* also poses the *quaestio juris*, quoting the Allied declaration of 24 May 1915 where these events were literally characterized as “crimes against humanity and civilization”<sup>4</sup>. Of course, in wartime Germany, this had to be considered “enemy propaganda”.

Lepsius focused on the right-wing nationalist modernity and systematicity of this genocide, and in 1916 he was the first one to clearly see the fundamental difference to former atrocities. Unaltered were his post-war comments. He drew an express comparison between the Young Turks and the Pan-German movement<sup>5</sup> whose radically anti-Semitic wing was just garnering attention in the early 1920’s through political assassinations. In this respect, he saw the genocide of 1915/16 as an immensely dangerous model<sup>6</sup>. Moreover, he accused Germany of “complicity” by “indulgence and coward failure to act” as early as at the end of 1918<sup>7</sup>.

After the World War, the question was raised for the first time whether it be necessary to institute an international legislation, especially to handle gross violations of human rights at the hand of governments. On 15 March 1921, former Ottoman Grand Vizier Mehmet Talaat was shot dead in Berlin’s Hardenbergstraße. This assassination made history, and notably, legal history. The June 1921 court case of

---

<sup>1</sup> Another Chapter in Germany’s Confession of Turkish Guilt // *New York Tribune*, July 27, 1919. PA-AA R 14106.

<sup>2</sup> **Trupener U.**, op. cit., p. 204.

<sup>3</sup> **Wegner A. T.** (Ed.), *Der Prozess Talaat Pascha. Stenographischer Bericht*, Berlin, 1921, S. 56, 60 f.

<sup>4</sup> **Lepsius**, *Bericht*, p. 200.

<sup>5</sup> *Ibid.*, p. 61.

<sup>6</sup> Lepsius to Weckeser, 2 December 1922, LAP 141-1555 (1).

<sup>7</sup> **Lepsius**, Was hat man den Armeniern getan? Die Zeit zu reden ist gekommen // *Mitteilungen aus der Arbeit von Dr. Johannes Lepsius*, vol. 11/12, September/December, 1918, S. 116.



Tehrirjan and its public reception had, albeit inadvertently, all the markings of an early Genocide tribunal. Specifically, the formal structure of a criminal trial necessitated a substantial assessment of the accused's motives. The latter, by the way, was ultimately acquitted on grounds of temporary insanity. In essence, the perpetrator's motives, and *ipso facto* the deeds of the victim, took precedence over the actual crime. Johannes Lepsius' expert opinion at the court played an integral part in this development, as the *New York Times* observed<sup>1</sup>.

In fact, the trial unearthed several new aspects. One of Tehrirjan's three defenders, attorney Werthauer, scrutinized the perversions of nationalist militarism. He thereby raised the question of boundaries to legitimate violence in war against the backdrop of an existing discourse that had arisen from the Hague Conventions of 1899 and 1907. His colleague Niemeyer, on the other hand, went one step further, calling for "jurisdiction (...) in the sense of a universal and enlightened insight into the nature of the law as well as the duties of humanity"<sup>2</sup>. Thus, a component of natural law theory was introduced into a criminal trial, by this augmenting along a moral-political line. That was unusual and amounted to an implicit demand for substantial legislative consequences in the future. Apparently after this major crime against humanity during the First World War - the genocide of the Armenians - time was mentally ripe for this major step. As regards the matter of the verdict, the court had previously been informed by its expert witness Johannes Lepsius that the murder victim had actually been sentenced to death. A ruling to this effect had been handed down *in absentia* by a Turkish court-martial on 5 July 1919, in fact, on grounds of – literally – "crimes against humanity"<sup>3</sup>.

The Berlin trial brought about some unexpected, far-reaching consequences, one of which relates to Raphael Lemkin. "Will not passion sway such a form of justice and make a travesty of it?" Lemkin asked in his autobiographical sketches, after having read about the case in 1921 newspapers: "I felt that a law against this type of racial or religious murder must be adopted by the world. (...) Sovereignty, I argued, cannot be conceived as the right to kill millions of innocent people"<sup>4</sup>.

The consequences of that train of thought are well-known. Lemkin was the first to attempt a legally sound definition of the concept of "genocide" in 1944. He succeeded by introducing the result into the UN genocide convention of 1948. Even after World War II and the Shoah, he revisited his initial experience again and again: that memorable Berlin trial of 1921, the Armenian genocide, and the fundamental defects of international law which it had revealed.

---

<sup>1</sup> **Montgomery G. R.**, Why Talaat's Assassin was Acquitted // *New York Times Current History*, July 1921.

<sup>2</sup> *Der Prozess Talaat Pascha*, S. 120 f.

<sup>3</sup> **Hosfeld R.**, *Tod in der Wüste. Der Völkermord an den Armeniern*, München, 2015, S. 226.

<sup>4</sup> **Donna-Lee F.** (Ed.), *Totally Unofficial. The Autobiography of Raphael Lemkin*, New Haven & London, 2013, p. 20.

## **Ռոլֆ Հոսֆելդ – Բարոյական քաղաքականությունից դեպի միջազգային արդարություն**

Եվրոպայի համար XIX դարը Ֆրանսիական հեղափոխության և նապոլեոնյան պատերազմների փորձառություններից հետո բնութագրվում էր տերությունների միջև հավասարակշռության գերակայության գաղափարով: Չնայած շահերի վրա հիմնված քաղաքականության որոշակի գերակշռությանը՝ ժամանակն իր հետ բերում էր նաև բարոյական քաղաքականության կողմնորոշում: Հետհեղափոխական քառսի համայնապատկերում նրան բնորոշ էր նաև մարդկային առաջադիմության զարգացման հայեցակարգը: Ստրկացման և զաղութային հանցագործությունների դեմ ի հայտ եկան կարևոր բարոյաքաղաքական քարոզարշավներ: XIX դարի վերջի հայամետ քարոզարշավները պետք է դիտարկվեն այդ համատեքստում: Վիլյամ Գլադստոնը գործում էր եվրոպական ժողովուրդների ժողովրդավարական միության՝ մարդու իրավունքների և ազատականության հայեցակարգի հիման վրա, որը «լիբերալ» իմպերիալիզմի դիրքորոշումը չէր բացառում: Նույնը վերաբերում էր Գերմանիայում Ֆոհաննես Լեփսիուսին: Նրանք երկուսն էլ, հակառակ իրենց կառավարությունների՝ սուկ շահերի վրա հիմնված քաղաքականությանը, ձգտում էին ամրապնդել հասարակական կարծիքի իշխանությունը: Ընդ որում՝ արտակարգ էին համաշխարհային պատերազմի ժամանակ հետապնդվող հայերի փրկության նպատակով Լեփսիուսի գործադրած ջանքերը, որը ամեննին հաշվի չէր առնում բեռլինյան պաշտոնական քաղաքականությունը: Հանուն մարդու իրավունքների տեղի ունեցող հասարակական բարոյաքաղաքական քարոզարշավները պետք է, այնուհանդերձ, ունենային ինստիտուցիոնալ և քաղաքական հետևանքներ: Դա առաջին անգամ պարզորոշ դարձրեց 1921 թ. Բեռլինում Սողոմոն Թեխիրյանի դատավարությունը, որն ուղղակիորեն նպաստեց ՄԱԿ-ի՝ Ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի ի հայտ գալուն:

### ***Рольф Хосфельд – От нравственной политики до международной справедливости***

XIX век для Европы после испытания Французской революцией и наполеоновскими войнами характеризуется идеей баланса сил между государствами. Несмотря на некоторый перевес политики, основанной исключительно на интересах, время с собой принесло также и ориентацию моральной политики. В постреволюционном хаосе ему был характерен также концепт развития человеческого прогресса. Появились важные морально-политические кампании против рабства и колониальных преступлений. Проармянские пропагандистские кампании конца XIX века также должны рассматриваться в этом контексте. Вильям Гладстон действовал на основе демократического союза европейских народов – концепта прав человека и либерализма, который не исключал позицию «либерального» империализма. То же касалось и Йоханнеса Лепсиуса в Германии. Они оба стремились укрепить власть общественного мнения против воли своих правительств – политики, основанной исключительно на интересах. При этом, чрезвычайными были усилия Лепсиуса, направленные на спасение армян, преследуемых во время мировой войны, который никак не принимал во внимание официальную берлинскую политику. Общественные морально-политические кампании за права человека должны были иметь институционные и политические последствия. Это впервые было определено во время судебного процесса над Согомоном Тейлиряном в 1921 г. в Берлине, который непосредственно способствовал появлению конвенции ООН о геноциде.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ  
(1965 և 2015 թթ.)**

*Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, թուրքական ժխտողականություն, հայ համայնք, մամուլ, պաշտոնական թեզեր, միջազգային ճանաչում*

Հայոց ցեղասպանության նկատմամբ Թուրքիայի Հանրապետության քաղաքականության ձևավորման, մշակման և որդեգրման համար կարևոր սկզբնակետ կարելի է համարել 1965 թվականը՝ ցեղասպանության 50-ամյակը, երբ Խորհրդային Հայաստանում և հայկական Սփյուռքում Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչելուն միտված զարգացումները Թուրքիային ստիպեցին որոշ հակաքայլեր ձեռնարկել, որոնք սկզբնական շրջանում կրում էին հախտոն բնույթ, սակայն կարճ ժամանակ անց դրանք դարձան թուրքական ժխտողական քաղաքականության և հակահայկական քարոզչության հիմքերը: Հենց այդ քաղաքականությունն է որոշ վերափոխումներով և հավելումներով շարունակվում նաև ներկայումս: Ուստի կարևոր ենք համարում դիտարկել Թուրքական Հանրապետության որդեգրած ժխտողական քաղաքականության և հակահայկական քարոզչության զարգացումները սկսած 1965 թ. առ այսօր՝ անհրաժեշտ գուգահեռներ անցկացնելով 1960-ական թվականների և ներկա իրավիճակների միջև: Սույն հոդվածում այդ խնդիրը քննարկվում է թուրքական մամուլի հրապարակումների և ներկայիս քաղաքական հայտարարությունների ու գործընթացների համեմատական-գուգադրական ուսումնասիրության առանցքում:

Նախ հարկ ենք համարում փաստել, որ թուրքական հասարակության գերակշիռ մասում առանց այդ էլ մեծ տարածում գտած հակահայկական տրամադրությունները և թշնամանքը 1965 թ. անմիջապես սկսեցին ցայտուն դրսևորվել թուրքական մամուլի էջերում, ինչպես նաև հասարակական-քաղաքական շրջանակներում: 1965 թ. ապրիլի 10-ի համարում «Հուրիյեթ» թերթը Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի առթիվ նախատեսվող միջոցառումներին տալիս է հետևյալ ազգայնամոլական որակումը. «Հայերը ցանկանում են իրենց դավաճանության տարելիցի առթիվ հանրահավաք անել»<sup>1</sup>: Ծայրահեղական շեշտադրումներ է անում նաև «Թերջուման» թերթի

<sup>1</sup> 2015'ten 50 Yil Önce... 1915'ten 50 Yil Sonra... 1965, (haz. Korucu S., Nalci A.), İstanbul, 2014, s. 22.

հողվածագիրներից Քաղիքջան Քաֆլընը. «Կոմիտեականների մնացուկները էլ ի՞նչ են ուզում: Ի՞նչ է, Ռուսաստանում Հայաստան նահանգ չկա՞: Թուրքիայի տարածքում Հայաստան հիմնելու դատը երևակայության արդյունք էր և հնարավոր չեղավ իրագործել: Իսկ հիմա դա արդեն նույնիսկ երևակայությունից էլ դուրս է: Թուրքիայի տարածքում ո՛չ Հայաստան կա և ո՛չ էլ հայ»<sup>1</sup>:

Նկատենք նաև, որ 1965 թ. ապրիլի 24-ին հատկապես Լիբանանում և Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության հիշատակման միջոցառումները եղել են թուրքական մամուլի ուշադրության կենտրոնում, և բոլոր թերթերը այդ խնդրին անդրադարձել են գրեթե նույն շեշտադրումներով ու ազգայնամուլական հայտարարություններով:

Սկսած 1965 թ. ընդհուպ 2015 թ.՝ իրավիճակը այս առումով փոփոխություններ չի կրել. այսօր ևս թուրքական հասարակական-քաղաքական քննարկումները, մամուլը, համացանցը լի են հայերի նկատմամբ ծայրահեղ ազգայնամուլական, խտրական և վիրավորական արտահայտություններով, հողվածներով ու վերլուծականներով: Այսինքն՝ Թուրքիայի քաղաքականությունը զարգացում է ապրել միայն ազգայնամուլական կոչերը խստացնելու և վիրավորական արտահայտությունները բազմապատկելու հարցում:

Ուշագրավ է, որ հենց 1965 թ. են արձանագրվում թուրքական ժխտողականության ոչ միայն հիմնական թեզերը, այլև հռետորաբանության որոշ կարևոր տարրեր: Այսպես, 1965 թ. ապրիլի 24-ին «Ջումհուրիյեթ» թերթում սյունակագիր Սադրք Աթաքը «Հայերի անհանգստությունը» հողվածում<sup>2</sup> թերևս առաջին անգամ կիրառում է «այսպես կոչված հայկական կոտորած» արտահայտությունը, որը տասնամյակներ շարունակ դառնալու էր թուրքական մամուլի, քաղաքական գործիչների և հասարակության մեծ մասի կողմից կիրառվող հիմնական արտահայտությունը, որն արդեն 50 տարի է, ինչ վերածվել է թուրքական ժխտողականությունը խորհրդանշող կարևոր տարրերից մեկի:

Թուրքական իշխանությունների առաջին պաշտոնական արձագանքը, որը անմիջապես տեղ գտավ և տարածվեց գիտական, վերլուծական, լրագրողական հանրություն, այն էր, որ հայերին ընդդեմ թուրքերի լարել են երրորդ կամ «դրսի» ուժերը: Այդ մասին արդեն 1965 թ. ապրիլի վերջերին հայտարարեց Թուրքիայի վարչապետ Սուաթ Հայրի Ուրգյուփլուն<sup>3</sup>: Այդ ժամանակ «դրսի» ուժերի թեման անմիջապես շաղկապվեց հակահոնական տրամադրությունների հետ. օրինակ՝ «Հուրիյեթ» թերթը 1965 թ. ապրիլի 9-ին գրել է. «Հայերին հրահրել են հույները, որպեսզի ապրիլի 24-ին «հայերի կոտորած» անվան տակ ամբողջ աշխարհում սկսեն մի հին դեպքի շահար-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>2</sup> **Atak S.**, Ermenilerin Rahatsızlığı // «Cumhuriyet», 24. 04. 1965.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 100-101:

կումներ»<sup>1</sup>: Հենց նույն ժամանակ է ավելի մեծ թափով շրջանառվում «դրսի» ուժերի գործոնի ամենաձայրահեղական և իշխանությունների համար առավել խոր արմատներ ունեցող գլխավոր վարկածը, ըստ որի՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերը դավաճանել են Օսմանյան կայսրությանը՝ համագործակցելով ռուսների հետ:

Անգամ առաջադիմական համբավ վայելող որոշ թուրք գրողներ իշխանությունների նախանշած քարոզչական շրջանակներում են անդրադառնում Հայոց ցեղասպանության խնդրին: Օրինակ՝ հայտնի թուրք գրող, երգիծաբան Ազիզ Նեսինը, որը ձախակողմյան գաղափարախոսության կրող էր և ընդդիմադիր (չնայած հետագայում լուրեր շրջանառվեցին, թե նա համագործակցել է թուրքական հատուկ ծառայությունների հետ), 1965 թ. ապրիլի 26-ին «Աքշամ» թերթում հրատարակում է «Մատը» վերնագրով հոդված, որտեղ կարծիք է հայտնում, որ հայ-թուրքական առձակատումը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը վերաբերող զարգացումները հրահրել են արևմտյան պետությունները, այդ ամենում նրանց «մատը խառն է»<sup>2</sup>:

«Երբորդ կողմի» հրահրումների մասին 1965 թ. հստակորեն ուրվագծվող տեսակետը թուրքական գիտական, քաղաքական, լրագրողական շրջանակները շահարկում են արդեն 50 տարի, և այդ թեզը լայնորեն տարածվել է թուրքական հասարակության տարբեր շերտերի գիտակցության մեջ, ինչպես նաև տեղ գտել դպրոցական դասագրքերում՝ դառնալով «դասագրքային ճշմարտություն»:

Թուրքական հակաթեզերը անմիջապես ներառեցին հակագիտական, շատ հաճախ իրականությունը գլխիվայր ներկայացնող «փաստարկներ», որոնցից հարկ ենք համարում ընդգծել 1915 թ. հայերի կողմից թուրքերի նկատմամբ իրականացված կարծեցյալ կոտորածները: 1965 թ. այդ կեղծ փաստարկը արդեն սկսում է ինտենսիվորեն տարածվել թե՛ գիտական, թե՛ լրագրողական և թե՛ քաղաքական ոլորտներում: Այսպես, 1965 թ. ապրիլին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում Կարսի պատգամավոր Հասան Էրդողանը արտահերթ ելույթ է ունեցել և նշել, որ Հայոց ցեղասպանության 50-ամյակին նվիրված հայության կազմակերպած միջոցառումները «Թուրքիայի արևելյան նահանգների բնակչության կողմից ընդունվել են մեծ գայրույթով»: Նա շեշտել է նաև, որ այդ տարածքների բնակիչները «չեն մոռացել 50 տարի առաջ հայերի կողմից կազմակերպված կոտորածները», որոնց իբր գոհն են դարձել հազարավոր մուսուլմաններ<sup>3</sup>: Հ. Էրդողանը նշել է, թե Վանի, Էրզրումի, Կարսի նահանգներից ստացել է հայերի գործողությունները քննադատող բազմաթիվ նամակներ: Այս կեղծ և անհիմն բողոքի բովանդակային

<sup>1</sup> «Hürriyet», 09.04.1965.

<sup>2</sup> Տե՛ս **Nesin A.**, Parmak // «Akşam», 26.04.1965.

<sup>3</sup> 2015'ten 50 Yıl Önce... 1915'ten 50 Yıl Sonra... 1965, s. 47.

կողմին հարկ չհամարելով անդրադառնալ՝ ուղղակի ավելորդ չենք համարում նշել, որ 1960 թ. Թուրքիայի բնակչության հազիվ 39 տոկոսն էր տառաճանաչ<sup>1</sup>, մեծ մասամբ քաղաքաբնակները, ուստի գավառաբնակների՝ թերթեր ընթերցելու և «բազմաթիվ» նամակներ գրելու հնարավորությունը զուտ տեխնիկական տեսակետից նվազ հավանական է:

Կարսի պատգամավորի ելույթից բացի, մի շարք թերթեր լուրեր տպագրեցին, թե օրինակ՝ Իզդիրի բնակչությունը զայրացած է հայերի միջոցառումներից և պատրաստ է պաշտպանել «իր հողերը», ինչպես նաև կրկին հիշատակեցին «հայերի կազմակերպած կոտորածների» մասին<sup>2</sup>: Այդ նույն «փաստերը» այսօր ևս տարածված են թուրքական թե՛ գիտական և թե՛ քաղաքական շրջանակներում, ինչպես նաև պաշտոնական հոետորաբանության մեջ:

Գաղտնիք չէ, որ 1923 թ. հիմնադրված Թուրքիայի Հանրապետությունում ոչ մուսուլման փոքրամասնությունները և մասնավորապես հայերն ու հույները պետության կողմից մշտապես դիտվել են որպես յուրահատուկ պատանդներ: Այդ մտածելակերպը ևս մեկ անգամ իրեն զգացնել տվեց 1965 թ.: Թուրքական իշխանությունները ուղղակի կամ անուղղակի պարտադրանքով Թուրքիայի հայ համայնքին սկսեցին օգտագործել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ իրենց պայքարում և համայնքի որոշ անդամների ներգրավեցին էժանագին քարոզչական խաղերում: Առաջնային թիրախը Պոլսո Հայոց պատրիարքությունն ու պատրիարքն էին, ով թե՛ de facto և թե՛ ինչ-որ տեղ նաև de jure Թուրքիայի հայ համայնքի ղեկավարն է: Պոլսո Հայոց նախկին պատրիարք երջանկահիշատակ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը (1961-1990) փորձում էր դիմագրավել թուրքական տարատեսակ հալածանքներին և իր գլխավորած համայնքը հեռու պահել բարդություններից: Սակայն, միաժամանակ, նրա դիրքը ստիպում էր պարտադրված և թուրքական «արարողակարգով» նախատեսվող որոշ քայլեր ու հայտարարություններ անել: Գտնվելով նման բարդ վիճակում՝ Շնորհք պատրիարքը ոչ միայն կարողացել է ըմբռնելի սահմաններում պարտադրված հայտարարություններ անել, այլև երբեմն հանդես է եկել նաև համարձակ ելույթներով: Եվ քանի որ թուրքական իշխանությունների մեթոդներից մեկը դարձել է Պոլսո Հայոց պատրիարքին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ հանդես գալու պարտադրանքը, ուստի Շնորհք պատրիարքը 1965 թ. ապրիլի 25-ին հայտարարություն է տարածել, որտեղ նշում էր, որ հանգուցյալներին հիշելը յուրաքանչյուր մարդու իրավունքն ու պարտականությունն է: Պատրիարքը շեշտում էր, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից ի վեր տարբեր երկրներում

---

<sup>1</sup> Տե՛ս Մաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., Դումանյան Ա., Տեր-Մաթթոսյան Վ., Չաքրյան Հ., **Հովհաննիսյան Ա.**, Թուրքիայի Հանրապետության պատմություն, Երևան, 2014, էջ 106:

<sup>2</sup> 2015'ten 50 Yıl Önce... 1915'ten 50 Yıl Sonra... 1965, s. 80.

բնակվող հայերը յուրաքանչյուր ապրիլ ամսին կազմակերպել են հիշատակի կրոնական արարողություններ: Այնուհետև Շնորհք արքեպիսկոպոսը նշում էր, որ որպես Թուրքիայի քաղաքացիներ և «Աթաթուրքի սկզբունքներով դաստիարակված մարդիկ» թուրքահայ համայնքի ներկայացուցիչները իրենց երկրի շահերին հակասող ցանկացած քայլ հավանության չեն արժանացնելու<sup>1</sup>: Պատրիարքի այս գուսպ և պարտադրանք պարունակող խոսքերը անմիջապես տեղ են գտնում թուրքական մամուլում՝ «Հուրիյեթ», «Ուլուս», «Աքշամ», «Յենի Իսթանբուլ», «Ջումհուրիյեթ», «Դունյա» թերթերում: Իսկ ավելի ուշ մի միջոցառման ժամանակ թուրք լրագրողները ուղղակիորեն հարցրել էին Շնորհք պատրիարքին, թե արդյոք ցեղասպանություն է եղել: Վերջինս տվել է խուսափողական պատասխան՝ նշելով, թե ինքը պատմաբան չէ, ուստի հարցի պատասխանը գերադասում է թողնել պատմաբաններին: Սակայն երբ թուրք լրագրողները պնդել են իրենց հարցը, պատրիարքը տվել է հետևյալ հստակ պատասխանը. «1915 թ. ես 7 տարեկան էի, մեր 70 հոգանոց գերդաստանից միայն ես ու մայրս ողջ մնացինք: Աքսորի ժամանակ մորս ևս կորցրի, քանի որ նա ստիպված ամուսնացավ մուսուլման մի թուրքի հետ: Հիմա դուք ինձ պատասխան տվեք, թե ուր են իմ ազգականները: Եթե դուք գտնեք այս հարցի պատասխանը, դրանով նաև պատասխանած կլինեք այն հարցին, թե արդյոք ցեղասպանություն եղել է, թե ոչ»<sup>2</sup>:

Հայոց պատրիարքության նկատմամբ այս նույն քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում և ընդհուպ մեր օրերը. այսօր ևս թուրքական իշխանությունները Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկը համարում են իրենց զինանոցի տարրերից և ըստ նպատակահարմարության օգտագործում այն: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ քանիցս ելույթներով հանդես է եկել ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը, որն անգամ այցելեց ԱՄՆ, որպեսզի կանխի ամերիկյան Սենատում Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծի ընդունումը: Ներկայումս ևս Պոլսի Հայոց պատրիարքական փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը երբեմն հանդես է գալիս համանման հայտարարություններով, որոնցում ակնհայտ են թուրքական քարոզչության հիմնական դրույթները:

Սակայն 1965 թ. թուրքական քարոզչության ամենակարևոր քայլերից էր հայ համայնքի աշխարհիկ շրջանակների միջոցով էժանագին մի հնարք. իշխանությունների կազմակերպմամբ և պարտադրանքով Ստամբուլի հայ համայնքի մի խումբ անդամներ հանդես եկան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը դատապարտող հայտարարություններով, դիմեցին որոշ հրապարակային քայլերի և սկսեցին մամուլում ակտիվորեն քարոզել, թե Թուրքիան իդեալական երկիր է, որտեղ հայերը գտնվում են «հանգիստ ու

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

<sup>2</sup> Ermeni Patriği Şınork Kalustyan'ın üvey kardeşi Diyanet işleri başkanı Lütfi Doğan, - [www.angelfire.com/wy/yaw/Ermeniler/ermeniler.html](http://www.angelfire.com/wy/yaw/Ermeniler/ermeniler.html)

ապահով» վիճակում: Սակայն գլխավոր միջոցառումը նախատեսված էր հենց ապրիլի 24-ին. արդեն 1965 թ. ապրիլի 23-ին թուրքական «Միլլիյեթ» թերթը տեղեկացնում էր, որ ապրիլի 24-ին Ստամբուլի Թաքսիմ հրապարակում նախատեսվում է ստամբուլահայերի հանրահավաք, որի ժամանակ մասնակիցները Հանրապետության հուշարձանին ծաղկեպսակ են դնելու և քննադատելու Լիբանանում ու Ֆրանսիայում սփյուռքահայերի «հակաթուրքական նախաձեռնությունները», ինչպես նաև հայտնելու են «Թուրքիային ու թուրքերին իրենց նվիրվածության մասին»<sup>1</sup>: Ծաղկեպսակ դնելու արարողությունը, ըստ թուրքական իշխանությունների, պետք է դառնար «լավագույն հակահարվածը հայկական սփյուռքին»: Գրեթե ամբողջ թուրքական մամուլը պատրաստվում էր լուսաբանել այդ «դարակազմիկ իրադարձությունը»: Սակայն մի քանի տասնյակ հազարի հասնող հայկական համայնքից այդ արարողությանը ներկա են գտնվում ընդամենը 30-ը, իսկ թուրքական լրատվամիջոցները դա ներկայացնում են իբրև «հայկական համայնքի լուրջ ներկայություն»: «Անադոլու» լրատվական գործակալությունը և ժամանակի բոլոր հայտնի օրաթերթերը անդրադառնում են այդ լուրին նաև փոքր-ինչ կենցաղային, սենտիմենտալ մանրամասներով: Նախ նշվում էր, որ հայերի մի խումբ, որոնց շարքում է եղել հայազգի նախկին սենատոր Պերճ Թուրանը, 2,5 մետր բարձրության և մոտ 500 լիրա արժողության ծաղկեպսակ են դրել հուշարձանին, որի վրա գրված է եղել, թե նրանք «մեծն Աթաթուրքի ներկայությամբ հայտնում են իրենց երախտագիտության և եղբայրության զգացումները թուրք ազգին»<sup>2</sup>: Թուրքական «Դունյա» թերթը մեջբերում էր Թաքսիմում հավաքված մի քանի ծառայամիտ հայերից Եթվարթ Բեզազի խոսքերը. «Մենք այստեղ ենք հավաքվել, որպեսզի ևս մեկ անգամ ցույց տանք մեր կապվածությունը Թուրքիային: Մենք թուրք ենք և Աթաթուրքի զավակներն ենք: Մեր մուսուլման եղբայրների հետ միշտ միասին ենք»<sup>3</sup>:

Հատկապես տհաճ են Պերճ Թուրանի ելույթները և հողվածները, որոնք տեղ են գտնում այդ օրերին թուրքական մամուլում: «Ջումհուրիյեթ» թերթում 1965 թ. ապրիլի 25-ին տպագրված «Թուրք-հայկական հարաբերությունները» խորագրով հոդվածում նախկին սենատորը մի կողմից նշում էր, որ «Թուրքիան իրավական պետություն է», իսկ հետո հայտնում մի անհեթեթ միտք. «Թուրքահայերը թուրք են մնալու»<sup>4</sup>: Նաև ժամանակի թուրք-հունական հակամարտության սրված բնույթը հաշվի առնելով՝ Թուրանը անդրադառնում էր Կիպրոսի և Հունաստանի վերամիավորման՝ էնոզիսի խնդրին՝ դա համարելով սոսկ երևակայության արդյունք<sup>5</sup>:

<sup>1</sup> «Milliyet», 23.04.1965.

<sup>2</sup> 2015'ten 50 Yıl Önce... 1915'ten 50 Yıl Sonra... 1965, s. 74.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Turan P., Türk-Ermeni İlişkileri // «Cumhuriyet», 25.04.1965.

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 78:



Սակայն թուրքական իշխանությունների՝ ապրիլի 24-ի ծրագիրը, ըստ էության, կամ կարելի է համարել տապալված, կամ առնվազն չիրականացված, քանի որ նրանք ակնկալում էին Թաքսիմ հրապարակում տեսնել Թուրքիային իրենց հավատարմության մասին հայտարարող և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը դատապարտող հայերի ավելի հոծ զանգվածի: Թուրքական ծրագրի ձախողման իրական պատճառը երկար ժամանակ հայտնի չի եղել, և միայն տարիներ անց այդ ամենի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Թուրքիայի խորհրդարանի հայազգի նախկին պատգամավոր Մկրտիչ Շելեֆյանը<sup>1</sup>, բացել է որոշ փակագծեր: Այսպես, ապրիլի 24-ի համար նախատեսված թուրքական ծրագրի իրականացումը կարողացել է տապալել հայ համայնքի հոգևոր ղեկավարությունը՝ ի դեմս երջանակահիշատակ պատրիարք Շնորհք Գալուստյանի և համայնքում մեծ հեղինակություն վայելող Մկրտիչ Շելեֆյանի: Ներքին և կիսագաղտնի քարոզչությամբ նրանք կարողացել են հասնել այն բանին, որ 1965 թ. ապրիլի 24-ին Թաքսիմ հրապարակում հավաքվել է ընդամենը 30 հայ: Դրանից հետո Շելեֆյանը իր վրա է վերցրել թուրքական իշխանությունների ծրագրի տապալման ողջ պատասխանատվությունը (ըստ երևույթին պատրիարքին վտանգից զերծ պահելու համար): Այս առիթով նրան հրավիրել են Թուրքիայի ազգային անվտանգության Ստամբուլի վարչության պետի մոտ՝ պարզաբանումների: Այստեղ ցուցաբերելով համարձակություն՝ Շելեֆյանը հայտարարել է, որ 1915 թ. իր ընտանիքի անդամներից զոհվել են 10-ը, և ապրիլի 24-ը հայերի համար ոչ թե հրապարակային միջոցառումների, այլ սգո օր է<sup>2</sup>:

Սակայն, այնուամենայնիվ, ստեղծված վախի մթնոլորտը, ակնհայտ պարտադրանքները և ծառայամտության զգացողությունը ստիպում են հայ համայնքի որոշ ներկայացուցիչների թերթերում հոդվածներ, նամակներ հրապարակել և հարցազրույցներ տալ: Նմանատիպ մի նամակ է տպագրվում 1965 թ. ապրիլի 26-ին «Աքշամ» թերթում, որտեղ Բաղդասար Փալույան անունով հայ քաղաքացին, քննադատելով Լիբանանում տեղի ունեցած միջոցառումները, նշում է. «Մեր սգո օրը ոչ թե նրանց ասած ապրիլի 24-ն է, այլ նոյեմբերի 10-ը, երբ մեր մեծ առաջնորդ Աթաթուրքը հեռացավ այս աշխարհից»<sup>3</sup>: Երբեմն տպագրվում էին նաև «անանուն» հայերի նամակներ, որտեղ նրանք քննադատում էին սփյուռքահայերին.

---

<sup>1</sup> Մկրտիչ Շելեֆյանի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Մկրտիչ Շելեֆյան. Վերջին հայ պատգամավորը թուրքական խորհրդարանում // «21-րդ դար», 2011, թիվ 5, էջ 5-19:

<sup>2</sup> Տե՛ս Մկրտիչ Շելեֆյանի անձնական արխիվ (Ժնն):

<sup>3</sup> 2015'ten 50 Yıl Önce... 1915'ten 50 Yıl Sonra... 1965, s.81.

դրանք կրում էին «Մի՞ թե այդ հայերը չեն ամաչում»<sup>1</sup> և համանման այլ վերնագրեր:

Նախկին սենատոր Պերճ Թուրանի և մյուս հայերի իշխանահաճո և ստրկամիտ հայտարարությունները, բնականաբար, դրական արձագանք էին գտնում թուրքական մամուլում և համարվում նրանց «հասունության» ապացույց: Բացի դրանից, երբեմն որոշ թուրք հոդվածագիրներ հույներին քննադատելիս և Կիպրոսի խնդրի մասին խոսելիս որպես «օրինակելի» քաղաքացիների մատնանշում էին մի քանի տասնյակի հասնող ստրկամիտ հայերի և նրանց գործողությունները:

1965 թ. ապրիլի 24-ին Թաքսիմի հրապարակում ծաղկեպսակ դնելու արարողությունը անմիջապես դառնում է նաև թուրքական պաշտոնական հոետորարանության մի կարևոր մաս, և այդ դեպքի մասին նրանք հայտարարում են ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային տարբեր հարթակներից: Առաջինը խնդրին անդրադառնում է Թուրքիայի վարչապետ Սուաթ Հայրի Ուրգուվուն՝ նշելով, որ «խելքը գլխին» հայերը ոչ միայն չեն դարձել օտար պետությունների գործիք և չեն մասնակցել ապրիլի 24-ի միջոցառումներին, այլև ապրիլի 24-ին ծաղկեպսակ են դրել Հանրապետության հուշարձանին՝ «դրանով պարսավելով և դատապարտելով» սիյուռքահայերի հակաթուրքական ձեռնարկները<sup>2</sup>:

Գալով մեր օրերին՝ կարող ենք ասել, որ այսօր ևս թուրքական իշխանությունները փորձում են շարունակել այս էժանագին հնարքը, սակայն ավելի նվազ հաճախականությամբ՝ հաշվի առնելով դրա ոչ այդքան մեծ արդյունավետությունը: Սակայն այսօր Պոլսի հայ համայնքի աշխարհիկ շրջանակներում կան մարդիկ, որոնք պատրաստ են մաս կազմել թուրքական քարոզչական սցենարներին և ապացուցել իրենց հավատարմությունը Թուրքիային:

Ուշագրավ է, որ 1965 թ. բախվելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ահագնացող իրողությանը՝ թուրքական իշխանությունները դիմեցին նաև փոքր-ինչ քողարկված և երբեմն հանդուրժողականության շղարշով պատված քայլերի, որոնք այսօր ևս ավելի մեծ թափ են ստանում: Նախ թուրքական մամուլում սկսեցին հայտնվել «լավ» հայերի մասին պատմող հոդվածներ՝ դրանով իսկ փորձելով որոշակի սեպ խրել հայության շրջանում: Հետաքրքիր է, որ 1965 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ քանիցս անդրադարձներ էր կատարում լրագրող և «Միլլիյեթ» թերթի սյունակագիր, սակայն կարճ ժամանակ անց մեծ քաղաքականության կարևոր դեմքերից և Թուրքիայի ապագա վարչապետ Բյուլենթ Էջնիթը, որը նկարագրում էր հայերի ու թուրքերի «ընդհանրությունները», և այն, որ «դրսի

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 100-101:

ուժերը» լարում են երկու ժողովուրդների հարաբերությունները: Նրա հողվածներից մեկը ունի շատ լակոնիկ վերնագիր՝ «Հայր»<sup>1</sup>:

Կարծում ենք, որ այդ ժամանակ է մշակվում նաև «պատմությունը պատմաբաններին թողնելու» թեզը, և ի հայտ են գալիս հպանցիկ անդրադարձներ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գոհված հայերի մասին: Շրջանառվում էին «երկուստեք գոհերի» մասին տվյալներ, որոնք դառնալու էին այսօր «ընդհանուր ցավ» անվանումը ստացած հակաթեզի հիմքը, որը ներկայումս փորձ է արվում տարածել նաև հայ հասարակության որոշակի շերտերում: Սա ոչ այլ ինչ է, քան իրականության խեղաթյուրում և «տոլերանտ քննարկումների» մթնոլորտի ձևավորման փորձ, որի իրական նպատակը Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման իրավական լուծմանը վնաս հասցնելն է:

Խիստ ուշագրավ է, որ այսօրվա թուրքական քարոզչության նոր տարրերից մեկը՝ Դարդանելի ճակատամարտը, և դրան հայազգի զինվորականների մասնակցությունն է: Սակայն սա նույնպես նոր չէ և արդեն 1965 թ. լայնորեն շրջանառվել է: Այսպես, «Ջումհուրիյեթ» թերթում այունակագիր Սադրք Աթաքը 1965 թ. ապրիլին գրել է, որ այն գումարտակում, որտեղ ինքն է ծառայել, եղել են պահեստագորային երկու հայ սպաներ, որոնցից մեկը ավարտած է եղել իրավաբանության ֆակուլտետը, իսկ մյուսը՝ գեղեցիկ արվեստների ակադեմիան<sup>2</sup>: Նկարագրելով, որ հայ զինվորականները իրենցից ավելի անձնագոհաբար են կռվել Աթաքը շեշտել է, որ հայերը և թուրքերը ուս ուսի տված են պատերազմել: Սրանք գրեթե նույն բառերն են, որոնք կան Թուրքիայի նախագահ Էրդոդանի՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին 2015 թ. սկզբին հղած հրավերում՝ մասնակցելու Դարդանելի ճակատամարտի 100-ամյակին նվիրված միջոցառումներին: Սակայն Աթաքը 1965 թ., ինչպես և Էրդոդանը 2015 թ., շրջանցել են այդ և շատ այլ հայ զինվորների հետագա ճակատագրերի քննարկումը:

Հայոց ցեղասպանության նկատմամբ թուրքական քաղաքականության նոր ուղղվածություն կարելի է համարել Թուրքիայում վերջին տարիներին ձևավորված մտավորականության մի խավի գործունեությունը, որը երբեմն ընդդիմադիր պահվածք ունի, երբեմն թուրքական պաշտոնական թեզից տարբերվող հայտարարություններով է հանդես գալիս, սակայն ունի մի կարմիր գիծ, որից այն կողմ չի անցնում, և որը Հայոց ցեղասպանության հարցի համատեքստում առնչվում է արդար փոխհատուցմանը և խնդրի իրավական հստակ գնահատականին: Ավելի կոնկրետ՝ այս խմբից ոչ մի հայտնի թուրք մտավորական երբևէ հստակ չի անդրադառնում Հայոց ցեղասպանությանը իրավական որակում տալու և դրանից բխող փոխհատուցման խնդրին: Փոխարենը նրանք հարցը սուկ բարոյական հարթության վրա

<sup>1</sup> Ecevit B., Ermeni // «Milliyet», 26, 04, 1965.

<sup>2</sup> 2015'ten 50 Yıl Önce... 1915'ten 50 Yıl Sonra... 1965, s. 65.

քննարկելու և լուծում տալու կողմնակիցներ են, որը հանգեցնելու է թուրքական իշխանությունների կողմից բանավոր ներողություն խնդրելուն: Բացի դրանից, մտավորականության այդ խումբը խնդիր ունի գիտակցաբար կամ անգիտակցաբար հենք ստեղծելու հայ-թուրքական «նորմալ երկխոսության», տարատեսակ հասարակական միջոցառումների համար, որոնցում ընդգրկված են արևմտյան պետական և հասարակական որոշակի կառույցներ՝ շատ հաճախ իբրև կազմակերպիչներ կամ ֆինանսավորողներ: Թուրքիայում այլախոհ, ընդդիմադիր լրագրողների, հրապարակախոսների և հասարակական գործիչների խումբն էր, որը 2008 թ. նախաձեռնեց «Ներողություն ենք խնդրում հայերից» ստորագրահավաքը, որը այդ պահին ոգևորության մեծ ալիք առաջացրեց, սակայն կարճ ժամանակ անց պարզվեց, որ այդ ձեռնարկը ավելի շատ սպասարկեց թուրքական շահերին և Թուրքիային հնարավորություն ընձեռեց ներկայանալու որպես ավելի հանդուրժողական պետություն:

Ավելորդ չէ մեջբերել մի փաստ, որը ապացուցում է այն, որ այլախոհ մտավորականությունը գիտակցաբար կամ անգիտակցաբար օգտագործվում է թուրքական իշխանությունների կողմից ժխտողական քաղաքականության համատեքստում: Թուրքիայում հայտնի Էրզենեքոն ահաբեկչական կազմակերպության գործով ձերբակալված Անկարայի Էսենյուրթ վարչական շրջանի նախկին ղեկավար Գյուրբուզ Չափանը իր հարցաքննության ժամանակ անդրադառնում է 1995 թ. հուլիս ամսին Հայաստան գալու, ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ հանդիպելու և Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելության մասին, որի ժամանակ իրենց ուղեկցում էին Թուրքիայում հայտնի երկու մտավորականներ, որոնք այսօր ևս ակտիվորեն ներգրավված են հայ-թուրքական երկխոսության տարատեսակ ծրագրերում. նրանք են Օրալ Չալըշլարը և Ջենգիզ Չանդարը: Ըստ Չափանի ցուցմունքների՝ նրա Հայաստան կատարած այցը նախաձեռնել և կազմակերպել էր ԱՄՆ-ը, իսկ մտավորականներ Չալըշլարին ու Չանդարին «ընտրել և ուղարկել էր Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (ՄԻԹ) պետը»<sup>1</sup>: Ի դեպ, վերադարձից հետո այս երկու մտավորականները մամուլում հանդես են եկել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման կոչեր պարունակող և Հայոց ցեղասպանության փաստի նկատմամբ ավելի հանդուրժողական, անգամ երբեմն թուրքական հասարակության համար անընդունելի ինքնախոստովանական և ինքնամեղադրական շեշտադրումներով: Նրանք նաև «Ներողություն ենք խնդրում հայերից» ստորագրահավաքի ակտիվ մասնակիցներից էին:

---

<sup>1</sup> Gürbüz Çapan'ın Ermenistan İtirafı: Türkiye Başlattı... ABD İstedi..., <https://gizlibelge.wordpress.com/2010/03/16/gurbuz-capanin-ermenistan-itirafi-turkes-baslatti-abd-istedi/>

Ամփոփելով կարելի է նշել, որ Թուրքիայի քաղաքականությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ անցած տասնամյակներին կառուցողական դաշտում որևէ առաջընթաց չի արձանագրել. 50 տարի առաջ որդեգրված հակաթեզերը մնացել են գրեթե նույնը, և երբեմն փոխվել են միայն դրանց իրագործման մեթոդները՝ ներառելով ժամանակի առաջադրած նոր հնարավորությունները: Սակայն խորքային առումով թուրքական քարոզչությունը և քաղաքականությունը Հայոց ցեղասպանության խնդրի առնչությամբ հենվում են կեղծիքի վրա, ուստի սին են: Մինևույն ժամանակ, թուրքական քարոզչությանը վերջին տարիներին հավելվել են քողարկված ծուղակներ, այսինքն՝ այնպիսի քայլեր, որոնք իբրև թե չեզոք են կամ հանդուրժողական և միտված են երկու ժողովուրդների միջև հարաբերությունների կարգավորմանը, սակայն խորքային առումով կրկին թուրքական ուրացման քաղաքականության բաղկացուցիչ մասն են, իսկ դրա իրականացնողների մի մասը գիտակցաբար, իսկ մյուս մասը անգիտակցաբար ծառայում են թուրքական պետական քաղաքականության իրականացմանը:

**Рубен Мелконян – *О некоторых особенностях турецкой политики относительно Геноцида армян (1965 и 2015 гг.)***

Важной и вероятно основной точкой отсчета становления, разработки и внедрения политики Турции относительно Геноцида армян можно считать 1965 год – 50 годовщину Геноцида. Связанные с международным признанием Геноцида развития и процессы, имевшие место в Советской Армении и Армянской Диаспоре в 1965 г., заставили Турцию предпринять определенные антишаги, которые на начальном этапе имели спонтанный характер, однако через некоторое время стали основой турецкой политики отрицания и антиармянской пропаганды. Именно эта политика с некоторыми изменениями и дополнениями продолжается и в настоящее время. В статье рассматривается 1965 год как точка отсчета политики отрицания и антиармянской пропаганды современной Турецкой Республики. Автор сопоставляет политику с современной ситуацией и подвергает критическому анализу «эволюцию» всех процессов.

**Ruben Melkonyan – *On some Peculiarities of the Turkish Policy Towards the Armenian Genocide (1965 & 2015)***

1965, the 50<sup>th</sup> anniversary of the Armenian Genocide can be considered as an important and probably the main starting point for the formation, development and application of the policy of the Republic of Turkey towards the problem of the Armenian Genocide. The developments and processes connected with the international recognition of the Genocide took place in Soviet Armenia and Armenian Diaspora in 1965 and made Turkey take some anti-steps which were spontaneous at first, but after some time became the basis of Turkish policy of denial and anti-Armenian propaganda. The same policy with certain changes and additions continues at present. The article is devoted to the starting point, i.e. 1965, of the Turkish policy of denial and anti-Armenian propaganda, its comparison with the modern situation and analysis of the “evolution” of all these processes.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ՄԱՍՈՒԼԻ  
ԵՐԿԽՈՍԱՅԻՆ ԴԻՄԿՈՒՐՄՈՒՄ (2015 թ.)**

*Բանալի բառեր – Գրիգոր Նարեկացի, Հայոց ցեղասպանություն, հայկական առցանց մամուլ, մեդիատեքստ, երկխոսային դիսկուրս, հայ հանրայթ, հայ մշակույթ, կաթոլիկ եկեղեցի, թուրքական իշխանություններ, թուրք մտավորականություն*

Երկխոսայնությունը տեքստի պոլիֆոնիայի՝ բազմաձայնության առանց-բային հատկանիշներից է: Երևույթը բնորոշ է նաև մեդիատեքստերին: Այդ բազմաձայնությունն առկա է թե՛ ուղղակի երկխոսություն պարունակող հրապարակումներում և թե՛ այն գործերում, ուր տեքստն արտաքինապես մենախոսական է, սակայն խորքում ենթադրում է հասցեատիրոջը (ընթերցողին) ուղղված խոսք՝ հարցադրման, պատասխանի կամ առաջարկի տեսքով, որոնք հնարավոր երկխոսության լայն դաշտ են բացում<sup>1</sup>:

Մեդիայի, այդ թվում նաև հայկական առցանց մամուլի, երկխոսային դիսկուրսում լրագրող հեղինակի հնչեցրած միտքը անմիջական պատասխանից բացի, որ ուղղակի երկխոսություն է, առավել հաճախ ենթադրում է անուղղակի պատասխաններ, այսինքն՝ անուղղակի երկխոսություն: Եթե այս երկու երկխոսային շերտերին ավելացնենք նաև տեքստի ներսում բացվող ներերկխոսային դիսկուրսի իրողությունը (հեղինակ-ներքին հասցեատեր փոխառնչությունների լայն կտրվածքով)<sup>2</sup>, ապա պարզ կլինի, թե ինչ բարդ ու բազմաշերտ հյուսվածք է առցանց մամուլի երկխոսային դիսկուրսը:

Հոդվածում կանդրադառնանք այս դիսկուրսին բնորոշ մի քանի կողմերին: Այդ նպատակով ուսումնասիրել ենք 2015 թ. հունվար-ապրիլ ամիսներին Հայոց ցեղասպանությանը նվիրված մեդիատեքստերը առցանց

<sup>1</sup> Տե՛ս մասնավորապես **Колокольцева Т. Н.**, Понятие дискурса. Типология диалогических дискурсов, <http://libvuz.net/>, **Сажина Е. В.**, Внешняя диалогическая структура полемического дискурса, <http://elibrary.miu.by/> **Виноградова С. Н.**, Некоторые семиотические аспекты диалога с текстом // «Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского», 2012, N 5 (1), с. 292-296, **Дзялошинский И. М.**, **Пильгун М. А.**, Технология диалога в современном медиапространстве: анализ и перспективы, [jq.isea.ru/classes/pdf.ashx?id=19845&l=1](http://jq.isea.ru/classes/pdf.ashx?id=19845&l=1), **Саркисян О. Н.**, Некоторые особенности массмедийного дискурса // Университетские чтения – 2011 (13-14 января 2011 г.): материалы науч.-метод. чтений ПГЛУ. – Пенза: ПГЛУ, 2011, ч. II, с. 118-124, **Чайкин Ю.**, Диалогичность и монологичность газетных жанров, [www.proza.ru/2014/11/06/1695](http://www.proza.ru/2014/11/06/1695) և այլն:

<sup>2</sup> Տե՛ս **Պետրոսյան Դ. Վ.**, Լրագրողը և ներքին հասցեատերը հայկական մեդիատեքստերում // «Վեմ», 2014, թիվ 2 (46), էջ 166-173:

մամուլում: Դրանցում առկա երկխոսային վեկտորները բաժանել ենք թեմատիկ երեք խմբի՝

1. Երկխոսություն հայ հանրույթի ներսում,
2. Հայ մշակույթ-արտաքին աշխարհ երկխոսություն,
3. Հայաստան-Թուրքիա երկխոսություն:

### **Երկխոսություն հայ հանրույթի ներսում**

Վերջին հարյուրամյակում Հայոց ցեղասպանությունը հայ իրականության մեջ առավելապես համախմբող դեր է ունեցել: Նրա ողբերգական հետևանքների իրողությունն ընդունելով հանդերձ՝ Ցեղասպանության համակողմանի լուսաբանման, աշխարհին այն առավել ճանաչելի դարձնելու գործում անհատների, քաղաքական գործիչների և իշխանությունների գործունեության ներքին շերտերը միօրինակ ուղղվածությամբ չեն բնութագրվում, ինչն առիթ է տվել երկխոսային դիսկուրսի տարատեսակ դրսևորումների: Իմաստային առումով կարելի է առանձնացնել երկու մակարդակ՝ **երկխոսություն հայ հանրույթի ներսում՝ ներհակ մղումներով, և համախմբող երկխոսություն:**

Առաջին դեպքում միջտեքստային երկխոսություններն ընթանում են հիմնականում քաղաքական հարթությունում: Բնութագրական օրինակը 2015 թ. հունվարի 29-ին ընդունված Համահայկական հռչակագիրն էր և սրան իբրև այլընտրանքային տարբերակ Լևոն Տեր-Պետրոսյանի ներկայացրած «Ուղերձի նախագիծը»<sup>1</sup> Ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ: Երկխոսային դիսկուրսը բանավեճի տեսքով ծավալվում է Հայաստանի առաջին և երրորդ նախագահների միջև:

Մի կողմ թողնելով խնդրի քաղաքական, գաղափարական սկզբունքների շուրջ ծագած տարաձայնությունները՝ կենտրոնանանք դիսկուրսի երկու մասնակիցների երկխոսային հարաբերությունների վրա: Երկու նախագահներն այս դեպքում հանդես են գալիս իրենց երկու «ես»-երով, որոնցից մեկը պետական քաղաքական գործչի «ես»-ն է, մյուսը՝ անհատինը: Ս. Սարգսյանի դեպքում լայն առումով բացակայում է անհատի դիրքորոշումը. երկխոսողը ՀՀ ներկա նախագահն է, որին իրավունք է վերապահված ընթերցելու Համահայկական հռչակագիրը, և որի կեցվածքը բխում է այդ հռչակագրի դրույթներից: Նրա ակտիվությունը դրսևորվում է բանավեճի այն հատվածում, երբ, համաձայն չլինելով Լ. Տեր-Պետրոսյանի նախագծին,

---

<sup>1</sup> Տե՛ս «Լևոն Տեր-Պետրոսյան. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ Հայաստանի կողմից միջազգային հանրությանը հասցեագրված ուղերձի նախագիծ», hetq.am, «Լևոն Տեր-Պետրոսյան. Խոհեր «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի» հրապարակման առթիվ», iLur.am

այնուհանդերձ պատրաստ է հանդիպելու և երկխոսությունը շարունակելու<sup>1</sup>: Իսկ ընդհանրապես երկրորդ «ես»-ը, ի դեմս անձնական մոդումների, արտաքնապես նկատելի չէ:

Լ. Տեր-Պետրոսյանի դեպքում հակառակ երևույթն է: Նա թեև հանդես է գալիս իբրև պետական շահերին հետամուտ քաղաքական գործիչ, սակայն, իր իսկ խոստովանությամբ, ներկայացրել է «Ուղերձի» անձնական նախագիծ: Եվ այս դեպքում ակտիվ է երկրորդ՝ անձնական «ես»-ը, որը նկատելի է հատկապես Հռչակագրի մասին նրա քննադատական դիտարկումներում: Դրանով է պայմանավորված նաև ներկա նախագահի հետ հանդիպումից նրա հրաժարվելը: Արդյունքում Ս. Մարգարյանի՝ որպես **նախագահի և պետական գործչի** «ես»-ը բախվում է Լ. Տեր-Պետրոսյանի **անձնական սկզբունքներով** գործող «ես»-ի ակտիվությանը, ինչը երկխոսային դիսկուրսը տանում է փակուղի:

Ցեղասպանությանը նվիրված դիսկուրսի երկրորդ մակարդակում՝ **համախմբող երկխոսություններում**, քաղաքական դիրքորոշումները մոլվում են երկրորդ պլան: Առաջնայինը ազգային ողբերգությունն է՝ որպես չփակվող վերք, իսկ երկխոսության դաշտը հազեցած է Եղեռնի գողգոթայի վերհուշերով: Նմանատիպ տեքստերում երկխոսային դիսկուրսը մարմնավորվում է **ցեղասպանության գոհի** առանցքի շուրջ, այսինքն՝ հեղինակը կամ նյութի հերոսները իրենց խոսքը կազմակերպում են նրա միջոցով: Այս համատեքստում հատկապես հետաքրքիր են news.am կայքի էջերում «Վերապրածները» նախագծի շրջանակներում Ցեղասպանության վերջին կենդանի վկաների մասին հրապարակումները<sup>2</sup>, հանրապետության նախագահի շնորհավորական նամակը 105-ամյա Աստղիկ Թեթեգյան-Ալեմյանին<sup>3</sup> և այլն:

Երկխոսային դիսկուրսի համախմբող գործառույթներից մեկը ժամանակային մեծ տարածքի մեջ, տվյալ դեպքում՝ հարյուրամյա հեռավորությամբ, մեդիատեքստերի համադրման ուշագրավ փորձն է «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից» կայքում: Վերջինս այս տարվա սկզբից շարունակաբար հատվածներ է մեջբերում 1915 թ. արևելահայ և արևմտահայ պարբերականների («Հորիզոն», «Մշակ», «Հայաստան», «Արեգ», «Աշխատանք» և այլն) էջերում տպագրված նյութերից: Դրանք՝

---

<sup>1</sup> Տե՛ս «Ս. Մարգարյանը մերժել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի վերաբերյալ Տեր-Պետրոսյանի որակումները», [hetq.am](http://hetq.am)

<sup>2</sup> Տե՛ս «100 տարվա զոջման սպասումով» խորագրի ներքո Մարիամ Մելմարյանի, Արևալույս Ամալյանի, Անդրանիկ Մաթևոսյանի, Մարգարիտա Մխիթարյանի և բազմաթիվ այլ վերապրածների մասին հրապարակումների շարքը, <http://news.am/arm/news/255895.html>

<sup>3</sup> «Նախագահը շնորհավորել է Ցեղասպանությունը վերապրած Աստղիկ Թեթեգյան-Ալեմյանին՝ ծննդյան 105-րդ տարեդարձի առթիվ», <http://www.yerkirmedia.am/>



- ա) Վերստին հավաստում են Մեծ եղեռնը՝ իբրև ցեղասպանություն, և նրան բնորոշ բաղադրիչների բնութագրումը այդ տարիների մամուլում,
- բ) Մատնանշում են հիշյալ թերթերի օպերատիվ արձագանքը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ջարդերին և դրանք համաշխարհային հանրության ուշադրությանը սևեռելու ակտիվ ջանքերը,
- գ) Այդ նյութերում առկա մի շարք մտահոգություններ, դիտարկումներ խիստ արդիական են. թվում է, թե գրված են մերօրյա հոդվածագիրների ձեռքով,
- դ) Նախորդ դարասկզբի թերթերի և մերօրյա մամուլի երկխոսային դիսկուրսը հուշում է սերունդների հերթափոխի մեջ ազգային արքետիպերի մնայուն որակը և դրանց հանդեպ դիրքորոշման կայունությունը Հայոց ցեղասպանության համատեքստում:

Նշված երկու մակարդակներից բացի՝ առկա է դիսկուրսի մի մակարդակ ևս, որ սվյալ դեպքում դուրս է մեր հոդվածի շրջանակներից, և որի գոյությունը ուրվագծվում է առանձնապես ամսագրային մամուլում («Վեմ», «21-րդ դար», «Հայագիտության հարցեր» և այլն): Այն խնդիր ունի հետազոտական չափանիշներով մոտենալու «ցեղասպանություն» երևույթին և հավաքական հիշողությունը վերածելու գիտական հղացքի<sup>1</sup>:

## **Հայ մշակույթ-արտաքին աշխարհ երկխոսություն**

Երկխոսային դիսկուրսն այս դեպքում ընդգրկում է Հայոց ցեղասպանության հետ կապված՝ օտար պետությունների, նրանց քաղաքական, հասարակական և մշակութային գործիչների մասին առցանց մամուլի մեծաթիվ հրապարակումները: Մրանց մեջ առաջնային նշանակություն ունեցող մի շարք միջոցառումներ (պատարագի արարողությունը Վատիկանում, Եվրախորհրդում ընդունված բանաձևը, Հայաստանում «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ համաժողովը և այլն) լայն և տարաբնույթ քննարկումների առիթ են ընձեռել<sup>2</sup>: Երկխոսային բազմաձայնության մեջ Հայոց ցեղասպանության հանդեպ վերաբերմունքը ներկայացված է տարբեր

<sup>1</sup> Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտական հոդվածները տե՛ս <http://vemjournal.org/>, [info@armin.am](mailto:info@armin.am), <http://www.noravank.am/> և մի շարք այլ կայքերում:

<sup>2</sup> Տե՛ս մասնավորապես «Եվրախորհրդարանը եվրոպական բոլոր երկրներին կոչ է արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը», 168.am, **Առաքելյան Ա.**, Հռոմի Պապն արեց ավելին, քան միայն Ցեղասպանության ճանաչումը, [hetq.am](http://hetq.am), **Դարբինյան Գ.**, Հռոմի պապի՝ Ցեղասպանությունը ճանաչելու քայլի նշանակությունը, [yerkir.am](http://yerkir.am), «Մերժ Սարգսյանի ելույթը «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» հասարակական-քաղաքական գլոբալ համաժողովում» և բազմաթիվ այլ հրապարակումներ:

ընդգրկումներով՝ պետությունների քաղաքական շահերից մինչև համա-  
մարդկային արժեքների գերակայություն:

Արտաքին աշխարհի հետ երկխոսային դիսկուրսը դիտարկենք մշա-  
կութային մեկ դրվագով. նկատի ունենք Վատիկանում տեղի ունեցած պա-  
տարագր և նրա լայն արձագանքը աշխարհում: Թեև առցանց մամուլի  
ուշադրության կենտրոնում Հռոմի պապի ելույթն էր և Հայոց ցեղասպա-  
նությանը նրա տված խորքային ու արդարացի գնահատականը, այնուհան-  
դերձ փորձենք դիսկուրսի շրջանակներում քննել պատարագի՝ **Գրիգոր  
Նարեկացու** առնչվող հատվածը:

Հայ հանճարեղ բանաստեղծին տիեզերական եկեղեցու վարդապետների  
շարքը դասելու արարողությունը մամուլում քննարկվում է հընթացս՝ որոշ  
դեպքերում մնալով Հռոմի Պապի կողմից Հայոց ցեղասպանության գնահատ-  
ման ելույթի ստվերում: Ի դեպ, երկխոսային դիսկուրսը թեմատիկ տարբեր  
շերտերի մեկնաբանման պայմաններում իր բազմաձայնության (պոլիֆո-  
նիայի) ընդգծված կողմերից մեկը կարող է դարձնել առաջնային՝ ակամա  
հետ մղելով մյուսների նույնքան կարևոր լինելու գործոնը: Հնարավոր է նաև,  
որ առաջին պլանում չհայտնված դիսկուրսիվ այդ շերտը հետագայում  
մշակութային մեծ ժամանակի տիրույթում կարևորվի ոչ պակաս, գուցե  
ավելի մնայուն իր նշանակությամբ: Մեր կարծիքով՝ նման իրողություն է  
Նարեկացու պարագան: Հայոց ցեղասպանությունն այս դեպքում առիթ է  
դառնում, ի դեմս Նարեկացու, հավերժացնելու հայ մշակույթն ու նրա գործ-  
չին: Երկխոսային դիսկուրսի չերևացող հատվածում կամ այլ խոսքով՝  
ներքին դիսկուրսի տարածքում բանաստեղծի ներկայությունն առկա է: Նրա  
«Մատյանն» արդեն իսկ ներքին երկխոսության հսկայական դաշտ է՝ հոգու  
տարամերժ վիճակների, դրանց ժխտումների ու հաստատումների համակե-  
ցությամբ: Այդ երկխոսությունը հազար տարի հետո հաղորդակցվում է  
կաթոլիկ աշխարհում տեղի ունեցող պատարագի խորհրդին՝ **միավորվելով  
հոգևոր նույն տարածության ու ժամանակի մեջ**: Եվ «Գրական թերթի»  
մերօրյա հոդվածագրին պարզապես մնում է արձանագրել. «...Նարեկացուն  
Տիեզերական եկեղեցու վարդապետ հռչակումը նաև դարերից եկող ու դեպի  
դարեր գնացող, իր հոգում բազմաթիվ գանձեր թաքցնող հայ ժողովրդի  
անմահության գրավականն է»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> **Դեմիրճյան Պ.**, Ճշմարտության Լույսի հազարամյա ճանապարհը, <http://www.grakan-tert.am/>

## Հայաստան-Թուրքիա երկխոսություն

Երկխոսային այս դիսկուրսի վեկտորներից առանձնացնենք երկուսը՝ Հայոց ցեղասպանության հանդեպ մի դեպքում թուրքական իշխանությունների և մյուս դեպքում ցեղասպանությունը ճանաչող թուրք մտավորականների վերաբերմունքի դրսևորումները:

Ցեղասպանության 100-ամյա տարելիցին թուրքական իշխանությունների առաջին գործնական պատասխանը այս տարի Գալիպոլիի ճակատամարտի 100-ամյակը ապրիլի 24-ին նշելու որոշումն էր, ինչն առիթ տվեց Հայաստանի նախագահին կտրուկ արձագանքելու Էրդոհանի հրավերին: Առցանց պարբերականների դիրքորոշումները այս և մյուս իրադարձությունների մասին հիմնականում բխում են սեփական երկրի շահերից. հայկական կայքերը քննադատում են թուրքական իշխանությունների կեցվածքը, իսկ թուրքական կայքերին առավել բնորոշ է արդարանալու կամ հարցից խուսափելու միտումը: Այս մակարդակում երկխոսայնությունը բնեռացվում է: Այդուհանդերձ, կա հետաքրքիր մի դրվագ, որն ըստ էության որոշակի աշխուժություն է հաղորդում այդ երկխոսությանը: Խոսքը հայկական և թուրքական կայքերում ազգությամբ հայ **Էթին Մահչուպյանին** Թուրքիայի վարչապետի խորհրդականի պաշտոնից ազատելու տեղեկության և այդ առիթով արված մեկնաբանությունների մասին է: Սրանք ներկայացված են այնպես, որ մտքերի երկխոսային կառույցը շարունակ տատանվում է կեղծիքի և ճշմարտության փոխակերպումների միջև: Ընդամենը մի քանի ամիս աշխատած խորհրդականը, ենթարկվելով վերադասի ճնշումներին, ստիպված է թուրքական թերթին տված հարցազրույցում բուն ճշմարտությունը թաքցնել իր խոսքի ենթատեքստերում: «Ես վարչապետ լինեի, չէի ճանաչի ցեղասպանությունը, վարչապետը **պատասխանատու է իր քաղաքացիների բարօրության և շահի համար**», – ասում է Հռոմի Պապի ելույթին հավանություն տված Մահչուպյանը (ընդգծումը մերն է – Դ. Պ.): Սրան հակառակ հայկական կայքերում նրա մասին վերլուծաբանների կարծիքը միանշանակ է. «Մահչուպյանին ազատելու որոշումը... սիմվոլիկ է, – գրում է yerkir.am-ի հոդվածագիրը:– Այն խորհրդանշում է Ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացը խոչընդոտելու, 100-րդ տարելիցի ոգեկոչման արարողությունները տապալելու հարցում Անկարայի կրած պարտությունը»<sup>2</sup>:

Երկխոսային դիսկուրսն այլ դրսևորումներ ունի Հայոց ցեղասպանությունը ճանաչող թուրք մտավորականների հրապարակումներում: Դրանք բնորոշվում են՝

---

<sup>1</sup> «Մահչուպյանը պարզաբանել է՝ ինչու է թողել վարչապետի խորհրդականի պաշտոնը», <http://sivilnet.am>

<sup>2</sup> **Դարբինյան Գ.**, Թուրքիան ընդունեց իր տապալումը, <https://www.yer-kir.am/am/news/83988/htm>

- ա) Մեփական մեղքի գիտակցման պատրաստակամությամբ,
- բ) Համամիտ են 1915 թ. իրադարձությունները ոչ թե «ցավալի դեպքեր», այլ ցեղասպանություն որակելուն,
- գ) Փորձում են դառնալ երկխոսային դիսկուրսի միջնորդ իրենց նախորդ և գալիք սերունդների միջև:

Այս դիսկուրսում նրանց համարձակ ելույթները գոնե արտաքինապես որոշակի դրական ազդակներ են հաղորդում Թուրքիայում ցեղասպանության ճանաչման գործընթացին: Ըստ թուրք գիտնական Չենգիզ Աքթարի՝ իրենց երկրում «գնալով ավելի ու ավելի են արմատանում Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջները: ...Ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր վերընդունում են իրենց հավատքը, բացահայտում իրենց ազգությունը: Հրապարակային, բաց միջոցառումներ են տեղի ունենում... Թուրքիայի 9 տոկոսը ճանաչում է Հայոց ցեղասպանությունը. կարող է թվալ, թե ինչ է 9 տոկոսը, բայց դա 7 միլիոն մարդ է»<sup>1</sup>:

Այսպիսով, երկխոսայնությունը Հայոց ցեղասպանության թեմայի շուրջ հայկական առցանց մամուլի ուսումնասիրության դիսկուրսում ի հայտ է բերում ուշագրավ զարգացումներ:

Հայ հանրության ներսում ցեղասպանության շուրջ երկխոսությունը քաղաքական հարթության վրա գերծ չէ հակընդդեմ մղումներից, որոնցում, սակայն, անձնական հավակնությունների առկայությունը երկխոսային դիսկուրսը մղում է փակուղի: Մեր հանրության առավել բնութագրականը համախմբող երկխոսությունն է. մի դեպքում այն մարմնավորվում է ցեղասպանության գոհի առանցքի շուրջ, մեկ այլ դեպքում մշակութային մեծ ժամանակը ներառում է երկու տարբեր դարաշրջաններում գործած մեղիատեքստերի երկխոսություն, որոնցում քիչ չեն ընդհանուր մոտեցումները:

Հայ մշակույթ-արտաքին աշխարհ երկխոսային դիսկուրսում, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին զուգահեռ, արժևորվում է ազգային մշակույթի հավերժական ընթացքը՝ ի դեմս նրա գործչի հոգևոր ժառանգության: Նարեկացու «Մատյանի» ներքին երկխոսությունը հաղորդակցվում-համադրվում է կաթոլիկ եկեղեցու պատարագի խորհրդին՝ միավորվելով նրա հետ հոգևոր մեծ ժամանակի և տարածության մեջ:

Երկխոսային դիսկուրսը բևեռացվում է Հայաստան-Թուրքիա, մասնավորապես հայաստանյան և թուրքական իշխանությունների հետ փոխհարաբերություններում:

Երկխոսային այս բազմաձայնությունը արտաքին ու ներքին փոխկապակցումներով ձևավորում է մի **մեզատեքստ**, որի սահմաններն օրեցօր ընդ-

---

<sup>1</sup> «Թուրքիայի 9 %-ը ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, և դա 7 մլն մարդ է. Չենգիզ Աքթար», <http://www.Iragir.am/>

լայնվում են նոր տեքստերով, ինչը ենթադրում է դրանց հետազոտության նոր հնարավորություններ:

**Давид Петросян – *Тема Геноцида армян в диалогическом дискурсе армянской онлайн прессы***

В статье проблема рассматривается в трех аспектах: 1. Внутриаармянский диалог, 2. Диалог армянская культура – внешний мир, 3. Диалог Армения – Турция. В среде армянской общественности диалогу вокруг Геноцида армян, за исключением некоторых противоположных устремлений, имеющих в политическом поле, присуща объединяющая функция, которая воплощается вокруг идеи «жертва геноцида». В диалогичном дискурсе «армянская культура – внешний мир» акцентируется церемония канонизации святого вардапета Г. Нарекаци. В данном случае внешний диалог “Книги скорбных песнопений” сопоставляется с литургией католической церкви, объединяясь с ней в большом времени и пространстве. Диалогичный дискурс «Армения – Турция» поляризован, что особенно очевидно во взаимоотношениях политических элит двух стран.

Вся эта полифония формирует один мегатекст, границы которого могут постоянно расширяться новыми текстами.

**David Petrosyan – *The Topic of the Armenian Genocide in the Dialogic Discourse of Armenian Online Media***

The present article discusses the matter of the Armenian Genocide in the dialogic discourse of Armenian online media in three dimensions – 1. Dialogue inside Armenian Community, 2. Dialogue between Armenian Culture and the outer world, 3. Dialogue between Armenia and Turkey.

Inside Armenian Community the dialogue over Armenian Genocide, except for several controversial intentions present in politics, is characterized with the consolidating function, embodied around the pivotal of the victim of Genocide. In the dialogic discourse of Armenian Culture and the outer world, the Canonization ceremony of Grigor Narekatsi is highlighted. In this case the inner dialogue of the “Book of Lamentations” is combined with the liturgy of Catholic Church combining with the latter in spiritual time and space. The dialogic discourse Armenia-Turkey is polarised, which is obvious especially in the relationships between the authorities of the two countries. This polyphony forms a megatext the boundaries of which are broadened daily by new texts.

**ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
100-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ**

*Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, ֆրանսիական մամուլ, հարյուրամյակ, ճանաչում, ժխտողական քաղաքականություն, հանրային կարծիք*

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարն անհնար կլիներ առանց դարասկզբին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության մասին աշխարհի ժողովուրդներին տեղեկացնելու և հանրային կարծիքի ձևավորման, որում գլխավոր դերը վերագրվում է զանգվածային լրատվամիջոցներին: Բազմաթիվ հետազոտություններ, հոդվածներ են գրվել, զանազան միջոցառումներ են կազմակերպվել՝ ներկայացնելու ցեղասպանության արձագանքները դարասկզբի համաշխարհային մամուլում: Որոշ տեսաբաններ գնահատել են տարբեր երկրների լրատվամիջոցների աշխատանքը, դրանց ներդրումը նախ այդ ոլորերգական իրադարձությունը լուսաբանելու, ապա հայոց պահանջատիրության և Թուրքիայի ժխտողական քաղաքականության վերաբերյալ միջազգային հանրության կարծիք ձևավորելու գործում<sup>1</sup>:

Առանձնահատուկ է ֆրանսիական մամուլի արձագանքը՝ պայմանավորված այդ երկրում բավական մեծ հայկական սփյուռքի գոյությամբ: Տարիներ առաջ, երբ հեղինակներից մեկն ուսումնասիրում էր ֆրանսիական առաջատար և հեղինակավոր օրաթերթի՝ « Le Monde »-ի 1987-2006 թվականների հրապարակումները հայերի և Հայաստանի մասին, արձանագրեց, որ ցեղասպանությունը և դրա ճանաչումը կենտրոնական տեղ են զբաղեցնում հայկական թեմատիկայում<sup>2</sup>: Ուսումնասիրված ժամանակահատվածում միայն Հայոց ցեղասպանության թեմայով օրաթերթում տպագրվել էին 700-ից ավելի մեծ ու փոքր հոդվածներ: Ֆրանսիական մյուս խոշոր թերթերը՝ « La Libération »-ը, « Le Figaro »-ն, « L'Humanité »-ն, նույնպես առանձնահատուկ տեղ են հատկացրել այս թեմային: Վերջինը միակ թերթն էր, որ մինչև 1965 թվականը, երբ ոչ ոք բացահայտ դեռևս չէր խոսում Հայոց եղեռնի մասին, ամեն տարի իր էջերում անդրադառնում էր ապրիլի 24-ին: Ըստ

<sup>1</sup> Տե՛ս **Դեմոյան Հ.**, Հայոց ցեղասպանության լուսաբանումը համաշխարհային մամուլի առաջին էջերին, Երևան, 2014:

<sup>2</sup> Տե՛ս **Մենենշյան Ա.**, « Le Monde »-ը և հայ իրականությունը, Երևան, 2009, էջ 130:

«Լուի Չարրի Ֆրանս»<sup>1</sup> սոցիոլոգիական ինստիտուտի հարցման տվյալների՝ ֆրանսիական հասարակության շուրջ 70 տոկոսը տեղյակ է 1915 թ. Հայոց ցեղասպանությանը շնորհիվ ֆրանսիական լրատվամիջոցների:

Մենք փորձեցինք պարզել՝ արդյոք Հայոց ցեղասպանության թեման շարունակում է պահպանել իր արդիականությունը ֆրանսիական մամուլի համար: Առանձնացրել ենք վեց ազգային օրաթերթեր՝ « Le Parisien », « Le Monde », « Les Échos », « La Libération », « Le Figaro », « La Tribune », և դիտարկել դրանց՝ 2014-2015 թթ. (2015 թ. ապրիլը ներառյալ) բոլոր թողարկումները: Ընդհանուր առմամբ դրանք Հայաստանի և հայերի վերաբերյալ նշված ժամանակահատվածում հրապարակել են մոտ 335 նյութ, որոնցից բուն ցեղասպանությանն առնչվում է շուրջ 300-ը: Մյուս հրապարակումները շոշափում են ֆրանս-թուրքական, թուրք-ամերիկյան հարաբերությունները, սիրիական ճգնաժամը, մասնավորապես՝ 2014 թ. Քեսաբի դեպքերը, որոնցում անուղղակիորեն անդրադարձ կա նաև Հայոց ցեղասպանությանը: Հայտնի թուրք և ֆրանսահայ մտավորականների, արտիստների հետ որոշ հարցազրույցներ ևս հիշատակում են 1915 թ. պատմական անցքերը: Ընդ որում, վեց պարբերականները միևնույն հաճախականությամբ չեն անդրադառնում խնդրին. անհամեմատ շատ անդրադարձների հանդիպեցինք « Le Monde » և « La Libération » պարբերականներում, գրեթե կիսով չափ քիչ՝ « Le Figaro »-ում և « Le Parisien »-ում, իսկ, օրինակ, « La Tribune »-ը և « Les Échos »-ն տպագրել են թեմային առնչվող անհամեմատ քիչ հոդվածներ: Ի դեպ, առաջին երկու պարբերականներն աչքի են ընկնում նաև թեմայի վերաբերյալ իրենց հեղինակային նյութերով, այն դեպքում, երբ մյուսները մեծ մասամբ բավարարվում են լրատվական գործակալությունների տրամադրած տեղեկատվությամբ:

2014 թվականի ընթացքում Հայոց ցեղասպանության թեմային նվիրված հրապարակումներն առանձնապես շատ չեն. ընդհանուր առմամբ դրանք չեն գերազանցում յոթ տասնյակը և հիմնականում տպագրվել են 2014 թ. ապրիլին՝ ցեղասպանության 99-րդ տարելիցի առիթով: Շատ քիչ են այն հոդվածները, որոնք խնդրին անդրադարձել են առանց առիթի: Դրանք հիմնականում Ֆրանսիայում ապաստան գտած և տեղի հանրային կյանքում ճանաչում ձեռքբերած հայերի ժառանգներին, նրանց ընտանեկան պատմությունները ներկայացնող հրապարակումներն են, որոնք ընթերցողի վրա ավելի մեծ տպավորություն են գործում, քան հարյուրավոր քաղաքական վերլուծությունները: Օրինակ, Գիյոմ Պերիերի «Աստված ինձ ողջ է թողել, որ ես պատմեմ» հոդվածը<sup>2</sup> 106 տարեկան հայ կնոջ պատմությունն է, ով 1915 թ.,

---

<sup>1</sup> Un sondage et une pétition sur le génocide arménien, Le Monde, 07.04.1996, [http://www.lemonde.fr/archives/article/1996/04/07/un-sondage-et-une-petition-sur-le-genocide-armenien\\_3726792\\_1819218.html#27qWEIEjAGhQMsEb.99](http://www.lemonde.fr/archives/article/1996/04/07/un-sondage-et-une-petition-sur-le-genocide-armenien_3726792_1819218.html#27qWEIEjAGhQMsEb.99).

<sup>2</sup> Տե՛ս **Perrier G.**, Dieu m'a laissée en vie pour que je raconte // Le Monde, 17.01.2014.

երբ դեռևս ութ տարեկան էր, ստիպված է եղել լքել հայրենիքը ընտանիքի հետ միասին: Ֆրանսիական պարբերականը մանրամասն նկարագրում է, թե ինչպես է փոքրիկ Օվսաննայի ընտանիքը կիրակի օրը՝ եկեղեցուց վերադառնալուց անմիջապես հետո, տեղեկանում եռօրյա ժամկետում թաղամասը լքելու թուրքական կառավարության պահանջին: Պարբերականը հատուկ նշում է այն փաստը, որ խոսքը սրճարան, աստամնաբուժարան և վարսավիճարանոց ունեցող ընտանիքի մասին էր, որի անդամների հետ անգամ թուրքերը և հույները աշխատում էին հայերեն խոսել: Ցույց տալով բազմանդամ ընտանիքի գաղթի ընթացքը՝ ոտքով, գնացքով, ապա նավով, պարբերականը ուրվագծում է հայերի հատած դժվարին ճանապարհը՝ որոշակի տեղեկատվական համատեքստ սահմանում ցեղասպանության թեմայի համար: « La Libération »-ի հետաքրքիր հրապարակումներից է նաև Վալերի Թորանյանի դիմանկարը, որը ֆրանսիական հայտնի « Elle » կանանց ամսագրի նախկին խմբագիրն է: Ակնարկի առիթը Վալերիի հրատարակած գիրքն է իր ընտանիքի մասին<sup>1</sup>: Նշենք նաև ֆրանսահայ ռեժիսոր Ռոբեր Գետիկյանի մասին պատմող հոդվածը « Le Parisien »-ում, որի առիթը ռեժիսորի նոր ֆիլմն է՝ «Մի խենթի պատմություն», որն իրականում 1915 թվականը վերապրած մի ընտանիքի պատմությունն է<sup>2</sup>:

Թեմայի համատեքստի կառուցմանը նպաստում են նաև ֆրանսիական մամուլի անդրադարձները ֆրանս-թուրքական հարաբերությունների ընթացքին կամ Թուրքիայի՝ Եվրամիությանը անդամակցության գործընթացին, որտեղ հաճախ շեշտադրվում են Թուրքիայի պարտավորությունները իր պատմության հանդեպ: Օրինակ, 2014 թ. հունվարին Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի՝ Թուրքիայում հնչեցրած կոչը պաշտոնական Թուրքիային՝ կատարել «հիշողության գործը»՝ առերեսվելով սեփական պատմությանը, գրավեց ֆրանսիական գրեթե բոլոր պարբերականների ուշադրությունը<sup>3</sup>:

Ապրիլ ամսին, իհարկե, ամենաշատ նյութերն են տպագրվում ցեղասպանության թեմայով, ուստի 2014 թ. ապրիլը ևս բացառություն չէր: Ֆրանսիական պարբերականները հեղինակային հոդվածներով անդրադարձան

<sup>1</sup> [http://www.liberation.fr/livres/2015/04/26/valerie-torian-d-ici-et-d-aieule\\_1269376](http://www.liberation.fr/livres/2015/04/26/valerie-torian-d-ici-et-d-aieule_1269376).

<sup>2</sup> <http://www.leparisien.fr/espace-premium/seine-saint-denis-93/tournage-a-domicile-pour-robert-guediguian-26-07-2014-4028513.php>

<sup>3</sup> Տե՛ս **Hélène Sallon**, Le long chemin de l'adhésion turque à l'Union européenne, LeMonde.fr 29.01.2014, [http://www.lemonde.fr/international/article/2014/01/29/le-long-chemin-de-l-adhesion-turque-a-l-union-europeenne\\_4355569\\_3210.html#iHoDytXMEBpAoOyz.99](http://www.lemonde.fr/international/article/2014/01/29/le-long-chemin-de-l-adhesion-turque-a-l-union-europeenne_4355569_3210.html#iHoDytXMEBpAoOyz.99); **Guillaume Perrier**, M. Hollande appelle Ankara à faire son « travail de mémoire » sur la tragédie arménienne, LeMonde, 29.01.2014, [http://www.lemonde.fr/europe/article/2014/01/28/francois-hollande-appelle-la-turquie-a-faire-son-travail-de-memoire-sur-la-tragedie-armenienne\\_4355594\\_3214.html](http://www.lemonde.fr/europe/article/2014/01/28/francois-hollande-appelle-la-turquie-a-faire-son-travail-de-memoire-sur-la-tragedie-armenienne_4355594_3214.html);

Turquie: «le travail de mémoire doit être fait», lefigaro.fr, avec AFP, 27 janvier 2014, <http://www.lefigaro.fr/flash-actu/2014/01/27/97001-20140127FILWWW00507-turquie-le-travail-de-memoire-doit-etre-fait.php>.



Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ցավակցական ուղերձին<sup>1</sup> ցեղասպանության 99-րդ տարելիցի առիթով՝ բացահայտելով դրանում առկա ենթատեքստերը: «Le Monde»-ի թղթակիցը վտանգ է տեսնում Թուրքիայի երկիմաստ հռետորաբանության մեջ՝ փաստելով, որ այս պետությունը խոսում է «ընդհանուր տառապանքների» լեզվով, Բալկաններում «մուսուլման» զոհերի հարցը և հայերի կոտորածը դիտարկում միևնույն հարթության վրա: «Հայերը կորցրել են իրենց կյանքը, բայց մենք չգիտենք, թե ինչպես են նրանք կորցրել, և ով է այն վերցրել»<sup>2</sup>,– գործարար, բարերար Օսման Կավալայի խոսքերն է մեջբերում ֆրանսիական օրաթերթը: Իհարկե այս օրերին եղան նաև հրապարակումներ, որոնք ողջունում էին Էրդողանի քայլը՝ չնկատելով դրանում առկա վտանգավոր ենթատեքստերը, նշելով, որ առաջին անգամ է, որ Թուրքիան նման բարձրաստիճան քաղաքական գործչի անունից ցավակցություն է հայտնում<sup>3</sup>: Արձանագրվեց նաև, որ «Փարիզի համար Անկարայի «ցավակցությունները» բավարար չէին»<sup>4</sup>:

Կարող ենք վստահ ասել՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը մեծ ուշադրության է արժանացել ֆրանսիական մամուլում: 2015 թ. առաջին քառամսյակում մեր դիտարկած վեց ֆրանսիական թերթերը հրապարակել են թեմային առնչվող չորս անգամ ավելի հոդված, քան 2014 թ.: Միայն 2015 թ. ապրիլին հրապարակվել է շուրջ 230 հոդված, որից 100-ը՝ ապրիլի 21-25-ը ընկած ժամանակահատվածում: Այլ խոսքերով՝ ցեղասպանության համատեքստի կառուցումը այս օրերին բավականին հաճախադեպ է, ընդ որում՝ թե՛ տեղեկատվական-փաստագրական և թե՛ զգացական-զգացմունքային ուղղություններով:

Տեղեկատվական-փաստագրական համատեքստը ապահովեցին ֆրանսիական մամուլի հրապարակումները՝ նվիրված 100-ամյա տարելիցին առնչվող գրեթե բոլոր անցքերին, դեպքերին ու դեմքերին: Ֆրանսիական պարբերականների համար քննարկման նյութ դարձան Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին ուղղված Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հրավերը՝ մասնակցելու Թուրքիայում

---

<sup>1</sup> **Laure Marchand**, Ankara présente ses condoléances aux Arméniens pour les massacres de 1915, lefigaro.fr, 23 avril 2014, <http://www.lefigaro.fr/international/2014/04/23/01003-20140423ARTFIG00303-ankara-presente-ses-condoleances-aux-armeniens-pour-les-massacres-de-1915.php>.

<sup>2</sup> **Perrier G.**, M. Erdogan présente ses condoléances aux Arméniens pour les massacres de 1915 // Le Monde, 24.04.2014, [http://www.lemonde.fr/international/article/2014/04/24/m-erdogan-presente-ses-condoleances-aux-armeniens-pour-les-massacres-de-1915\\_4406503\\_3210.html#fVv3LUAZqDY0VhE7.99](http://www.lemonde.fr/international/article/2014/04/24/m-erdogan-presente-ses-condoleances-aux-armeniens-pour-les-massacres-de-1915_4406503_3210.html#fVv3LUAZqDY0VhE7.99).

<sup>3</sup> Génocide arménien : Hollande salue l'« évolution » du discours turc // Le Monde.fr, 24.04.2014.

<sup>4</sup> **Wieder Th.**, Pour Paris, les « condoléances » d'Ankara sur le génocide arménien ne suffisent pas // Le Monde, 25.04.2014, [http://www.lemonde.fr/politique/article/2014/04/25/pour-paris-les-condoleances-d-ankara-sur-le-genocide-armenien-ne-suffisent-pas\\_4407364\\_823448.html#hDkiQZLIsDhMmEA.99](http://www.lemonde.fr/politique/article/2014/04/25/pour-paris-les-condoleances-d-ankara-sur-le-genocide-armenien-ne-suffisent-pas_4407364_823448.html#hDkiQZLIsDhMmEA.99);

Génocide arménien : Hollande note une « évolution » de la Turquie mais qui ne suffit pas Lefigaro.fr, avec AFP, 24 avril 2014.

Գալիպոլիի ճակատամարտի հարյուրամյակի միջոցառումներին<sup>1</sup>, Հռոմի պապ Ֆրանցիսկոսի ելույթը, ով Վատիկանում կայացած եկեղեցական արարողության ժամանակ օգտագործեց «ցեղասպանություն» եզրույթը<sup>2</sup>, այդ համատեքստում Թուրքիայի և Վատիկանի դիվանագիտական հարաբերությունների ճգնաժամը<sup>3</sup>, Ավստրիայի Հանրապետության խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը, ԵՄ կոչը անդամ երկրներին՝ ճանաչել Հայոց ցեղասպանությունը<sup>4</sup>, Գերմանիայի խորհրդարանում ցեղասպանության ճանաչմանը վերաբերող քննարկումները<sup>5</sup> և Գերմանիայի նախագահ Ֆրանկ-Վալթեր Ֆաուկի կողմից «ցեղասպանություն» բառերի օգտագործումը<sup>6</sup>, Հայաստանում և Ֆրանսիայում 1915 թ. զոհերի հիշատակման արարողությունները<sup>7</sup>, փաստավավերագրական նյութերը, որոնք այս ընթացքում տպագրվեցին, ցեղասպանությունը վերապրած հայերի և նրանց զավակների պատմությունները<sup>8</sup> և այլն:

Հիշատակման արժանի է « La Libération » պարբերականի ապրիլ-քսանչորսյան լուսաբանումը: Խմբագրությունը հատուկ թղթակից էր գործուղել Հայաստան, որը թերթի համացանցային տարբերակում 24-ժամյա ռեժիմով անընդհատ թարմացվող տեղեկություններ էր հաղորդում Երևանում և Ստամբուլում տեղի ունեցող հիշատակի միջոցառումների մասին: «Օլանդը կոչ է անում կիսել հայերի ճակատագիրը»<sup>9</sup>, «Ոչ մեկը չի հավատում այս պարզունակ ժխտողականությանը»<sup>10</sup>, «System of a Down»-ի համերգը՝

---

<sup>1</sup> Le président arménien invité en Turquie en avril, LeFigaro.fr, avec AFP, 16 janvier 2015. <http://www.lefigaro.fr/flash-actu/2015/01/16/97001-20150116FILWWW00106-le-president-armenien-invite-en-turquie-en-avril.php>.

<sup>2</sup> Le Pape évoque le « génocide » des Arméniens, lefigaro.fr, avec AFP, 12 avril 2015;

Les Arméniens victimes du « premier génocide du XXe siècle », selon le pape François, Le Monde.fr, avec AFP et AP, 12.04.2015.

<sup>3</sup> **Gautheret J.**, Chambraud C., Crise diplomatique entre la Turquie et le Vatican // Le Monde, 13.04.2015;

Jean-Marie Guénois, Crise entre la Turquie et le Vatican, lefigaro.fr, 12 avril 2015;

Samuel Forey, Génocide arménien : toujours dans le déni, la Turquie rappelle son ambassadeur au Vatican, lefigaro.fr, 12 avril 2015.

<sup>4</sup> **Adrien Jaulmes**, Le Parlement européen reconnaît le génocide arménien, lefigaro.fr, 15 avril 2015.

<sup>5</sup> Berlin va reconnaître le génocide arménien, Figaro.fr, avec Reuters, 20 avril 2015.

<sup>6</sup> Allemagne : le président reconnaît le génocide arménien, Figaro.fr, avec AFP, 23 avril 2015.

<sup>7</sup> Génocide arménien : commémorations en France, Figaro.fr, 24 avril 2015;

Adrien Jaulmes, À Erevan, la tragédie de 1915 reste le socle du sentiment national arménien, 20 avril 2015.

<sup>8</sup> **Bertrand Guyard**, Aznavour et Guédiguian, deux hommes marqués par le génocide arménien, lefigaro.fr, 22 avril 2015; **Roux M.**, Alain Altinoglu revient sur son passé arménien, Le Monde, 18.04.2015.

<sup>9</sup> <http://www.libération.fr/monde/2015/04/24/hollande-appelle-au-partage-du-destin-des-armeniens> 1264914.

<sup>10</sup> [http://www.libération.fr/monde/2015/04/24/personne-ne-croit-a-ce-negationnisme-primitif\\_1264906](http://www.libération.fr/monde/2015/04/24/personne-ne-croit-a-ce-negationnisme-primitif_1264906).

ցեղասպանության գոհերի հիշատակին»<sup>1</sup>, «Օլանդը կոչ է անում Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը»<sup>2</sup>, «Հայոց ցեղասպանություն. հարյուր տարվա մենություն»<sup>3</sup>, «Հայոց ցեղասպանության հարյուրամյակ. միշտ կանգուն ժողովուրդ»․ Երևանի քանի վերնագրեր այս շարքից: Թերթի ստամբուլյան և այլ երկրների թղթակիցների հրապարակումները ամբողջացրել են 100-ամյակի միջոցառումների միջազգային անդրադարձը՝ բացահայտելով թուրքական ժխտողական թեզի սնանկությունը («Էրդոհանը նշում է մի հարյուրամյակ՝ դրանով թաքցնելու համար մեկ ուրիշը»<sup>4</sup>), Գերմանիայի մեղսակցությունը հայերի բնաջնջման ծրագրին<sup>5</sup>, ԱՄՆ-ի երկիմաստ դիրքորոշումը («Օբամայի «գողացված» խոստումը»)՝<sup>6</sup> և այլն:

Թուրքիայի ժխտողական քաղաքականության քննարկումները ևս դրականորեն ազդեցին Հայոց ցեղասպանության իմացական ընկալման վրա: « La Tribune »-ը, որը անհամեմատ քիչ նյութեր է տպագրել այս թեմայի մասին, հանդես եկավ վերլուծական ծավալուն հոդվածով, որտեղ նշվում էր Թուրքիայի ծայրահեղ ազգայնամոլության, այդ համատեքստում ստեղծված հակամարտության մասին, որը, հեղինակի խոսքերով, նման է վարակի, ուռուցքի, որը հարկ է բուժել Թուրքիայի հիշողության կորուստը բժշկելու և երիտասարդների հիշողության հետ աշխատանք տանելու ճանապարհով: Ժխտման թեմային անդրադարձավ նաև « Le Figaro »-ն՝ Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Մարկոզիի հետ հարցազրույցում. «Ցեղասպանության հերքումը անգամ կարծիք չի կարող լինել: Դա վիրավորանք է և սպառնալիք, ... մեր Հանրապետության հիմնարար արժեքների խեղաթյուրում: Ահա ինչու նախագահ եղած ժամանակ ես հավանություն տվեցի այն օրենքին, որով պատասխանատվություն է սահմանված ցեղասպանությունը ժխտելու համար»<sup>8</sup>,– նշում էր Մարկոզին:

Ապրիլի 20-ին « Le Monde »-ը տպագրեց մեր մեծ հայրենակցի՝ Շառլ Ազնավուրի ծավալուն հոդվածը, որը բավականին դրականորեն ազդեց ցեղասպանության համատեքստի զգացական հատվածի ուժեղացման առումով: «Հարյուր տարվա մենություն հայերի համար» հոդվածը աշխարհահռչակ երգչի զգացմունքային խոսքն է՝ ուղղված հանրությանը, որտեղ նա անդրա-

---

<sup>1</sup> [http://www.libération.fr/direct/element/video-le-concert-de-system-of-a-down-en-armenie-pour-commemorer-le-genocide\\_5803/](http://www.libération.fr/direct/element/video-le-concert-de-system-of-a-down-en-armenie-pour-commemorer-le-genocide_5803/).

<sup>2</sup> [http://www.libération.fr/monde/2015/04/24/armenie-hollande-attend-d-autres-mots-de-la-turquie\\_1263786](http://www.libération.fr/monde/2015/04/24/armenie-hollande-attend-d-autres-mots-de-la-turquie_1263786).

<sup>3</sup> [http://www.libération.fr/monde/2015/04/23/genocide-armenien-la-quete-de-memoire\\_1262262](http://www.libération.fr/monde/2015/04/23/genocide-armenien-la-quete-de-memoire_1262262).

<sup>4</sup> [http://www.libération.fr/monde/2015/04/22/istanbul-erdogan-celebre-un-centenaire-pour-en-cacher-un-autre\\_1259594](http://www.libération.fr/monde/2015/04/22/istanbul-erdogan-celebre-un-centenaire-pour-en-cacher-un-autre_1259594).

<sup>5</sup> [http://www.libération.fr/monde/2015/04/23/l-allemande-reconnait-sa-coresponsabilite-dans-le-genocide-armenien\\_1262419](http://www.libération.fr/monde/2015/04/23/l-allemande-reconnait-sa-coresponsabilite-dans-le-genocide-armenien_1262419).

<sup>6</sup> [http://www.libération.fr/monde/2015/04/23/la-promesse-envolee-de-barack-obama\\_1262185](http://www.libération.fr/monde/2015/04/23/la-promesse-envolee-de-barack-obama_1262185).

<sup>7</sup> **Turunc G.**, Université de Bordeaux, Le nécessaire « travail de mémoire » de la société turque, La Tribune, 27.04.2015.

<sup>8</sup> Génocide arménien : Sarkozy s'exprime, lefigaro.fr, 22 avril 2015.

դառնում է իր ընտանիքին, հայոց ցավին, ցեղասպանություններին և դրանց ճանաչմանը, հայ-թուրքական հնարավոր երկխոսությանը, որի պատասխանատուն թուրք երիտասարդն է, որը, երգչի խոսքերով, մի օր կբացի իր աչքերը և հաշիվ կպահանջի իր ղեկավարներից ստի և անպատվության տարիների, սեփական պատմությունը արհամարհելու համար: Որպես զոհերի հետնորդ, նրանց աղոթքները կրող և հասարակական գործիչ՝ Ազնավուրը հատուկ պատասխանատվություն է զգում մահացած և անպաշտպան հայրենակիցների արժանապատվությունը վերականգնելու համար: Մեծ հայր հողվածն ավարտում է հիշեցումով, որ այս «տխուր հոբելյանով» պատմության մեջ առաջին անգամ նշվում է Հայոց ցեղասպանության 100-ամյակը:

Նյութի զգացական ազդեցությունն ավելի է ուժեղացնում հողվածին կից նկարը՝ գլխիկոր երկու հայ որբուկներ՝ իրար ձեռք բռնած, իսկ հետևում՝ ծնողների ու ևս մեկ փոքրիկի սովերները, որոնք ամենայն հավանականությամբ արդեն չկան: Յուրաքանչյուր սովեր նշված է գումարման նշանով, որոնք շատ ավելի են, քան երեքը...

Ի դեպ, ֆրանսիական մամուլում այս օրերին հրապարակված նկարները և տեսանյութերը ևս մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն. կան հատուկ մշակված տեսանյութեր, ցուցադրություններ և կոլաժներ, որոնք քարտեզներով, փաստաթղթերով և լուսանկարներով են ներկայացնում 1915 թ. դեպքերը և խիստ ազդեցիկ են<sup>1</sup>: Մեր ուսումնասիրած պարբերականներից մեկ-երկուսն անգամ մուլտիմեդիա խոշոր նախագծեր իրականացրին՝ 1915 թ. ողբերգությունը և դրա հետևանքներն առավել պատկերավոր, տպավորիչ ներկայացնելու համար:

Հատկանշական է, որ, ի տարբերություն նախորդ տարիների, վերջին երկու տարում ցեղասպանության թեմային անդրադառնալիս ֆրանսիական

---

<sup>1</sup> [https://www.dailymotion.com/video/x2nk8jz\\_ce-qu-il-faut-savoir-du-genocide-des-armeniens\\_news](https://www.dailymotion.com/video/x2nk8jz_ce-qu-il-faut-savoir-du-genocide-des-armeniens_news);  
[http://s1.lemde.fr/image/2015/04/23/147x97/4620950\\_7\\_47f3\\_un-orphelin-armenien-rescape-de-l-horreur-des\\_4fbcf595d1ae1d450a3b62b17fd2054f.jpg](http://s1.lemde.fr/image/2015/04/23/147x97/4620950_7_47f3_un-orphelin-armenien-rescape-de-l-horreur-des_4fbcf595d1ae1d450a3b62b17fd2054f.jpg);  
[http://s1.lemde.fr/image/2015/04/15/147x97/4616166\\_7\\_86b9\\_en-1915-dans-le-village-armenien-de\\_936f71c9ada2dd1128396f2c669f0c30.jpg](http://s1.lemde.fr/image/2015/04/15/147x97/4616166_7_86b9_en-1915-dans-le-village-armenien-de_936f71c9ada2dd1128396f2c669f0c30.jpg) ;  
[http://s1.lemde.fr/image/2015/04/20/147x97/4619450\\_7\\_bf4f\\_photo-du-genocide-armenien-prise-a-alep-en\\_da2a4f0760e7d03017074aff7500127.jpg](http://s1.lemde.fr/image/2015/04/20/147x97/4619450_7_bf4f_photo-du-genocide-armenien-prise-a-alep-en_da2a4f0760e7d03017074aff7500127.jpg) ;  
[http://s2.lemde.fr/image/2015/04/20/147x97/4619210\\_7\\_a8b5\\_2015-04-18-ec97997-1684-1w3fl48\\_6a810d415eee84a061777be783c3fb1f.jpg](http://s2.lemde.fr/image/2015/04/20/147x97/4619210_7_a8b5_2015-04-18-ec97997-1684-1w3fl48_6a810d415eee84a061777be783c3fb1f.jpg);  
[http://s1.lemde.fr/image/2015/04/15/147x97/4616132\\_7\\_a03d\\_au-memorial-de-choeung-ek-au-cambodge-le-9\\_185b30564f5939ba3c45df4392e3e319.jpg](http://s1.lemde.fr/image/2015/04/15/147x97/4616132_7_a03d_au-memorial-de-choeung-ek-au-cambodge-le-9_185b30564f5939ba3c45df4392e3e319.jpg);  
[http://s2.lemde.fr/image/2015/04/24/147x97/4622023\\_7\\_d00c\\_refugies-armeniens-vers-1915\\_e8741ec73afba79c752be9d736a8f5bd.jpg](http://s2.lemde.fr/image/2015/04/24/147x97/4622023_7_d00c_refugies-armeniens-vers-1915_e8741ec73afba79c752be9d736a8f5bd.jpg);  
[http://s2.lemde.fr/image/2015/04/21/147x97/4620194\\_7\\_269d\\_chamier-d-armeniens-immoles-par-le-feu\\_714b552b47b5e9d329b448a52c5374c9.jpg](http://s2.lemde.fr/image/2015/04/21/147x97/4620194_7_269d_chamier-d-armeniens-immoles-par-le-feu_714b552b47b5e9d329b448a52c5374c9.jpg);  
[http://s2.lemde.fr/image/2014/04/25/147x97/4407440\\_7\\_ee23\\_peinture-murale-commemorant-le-genocide\\_40490b378fb10f8613ed0bb410b77404.jpg](http://s2.lemde.fr/image/2014/04/25/147x97/4407440_7_ee23_peinture-murale-commemorant-le-genocide_40490b378fb10f8613ed0bb410b77404.jpg).

պարբերականներն ավելի ու ավելի լսելի են դարձնում Թուրքիայից հնչող ողջախոհ ձայները: 2014-2015 թթ. մեր ուսումնասիրած թերթերում բազմաթիվ են հարցազրույցները այնպիսի թուրք մտավորականների հետ, ովքեր հակադրվում են պաշտոնական Անկարայի քաղաքականությանը և կոչ անում սեփական ժողովրդին ու իշխանություններին առերեսվել սեփական պատմությանը: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ « Le Parisien »-ի հարցազրույցը թուրք գրող, Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուքի հետ<sup>1</sup>, « La Libération »-ի հարցազրույցը Ստամբուլի քաղաքականության կենտրոնի պրոֆեսոր Չենգիզ Աքտարի հետ<sup>2</sup> և այլն:

2014 թ. համաշխարհային մամուլում, այդ թվում՝ ֆրանսիական, մեծ արձագանք գտավ ազգությամբ թուրք գերմանացի ռեժիսոր Ֆաթիհ Աքինի «Սպի» ֆիլմը, որին տասնյակ հոդվածներ են նվիրվել: Այս ֆիլմի մասին գրախոսությունները առիթ էին՝ ընթերցողական լսարանին ևս մեկ անգամ հիշեցնելու, իսկ անտեղյակներին՝ տեղեկացնելու նախորդ դարի առաջին ցեղասպանության մասին, որը մինչ օրս միջազգայնորեն ամբողջությամբ չի ճանաչվել:

Ընդհանուր առմամբ ֆրանսիական մամուլի անդրադարձը Հայոց ցեղասպանության թեմային այլ, օրինակ բրիտանական կամ ամերիկյան մամուլից տարբերվում է նրանով, որ այն թեև ներկայացնում է թուրքական տեսակետը, սակայն գրեթե միշտ շեշտադրում է ցեղասպանության անհերքելի փաստը:

Մեր նախորդ ուսումնասիրության մեջ<sup>3</sup> մենք փաստել էինք, որ սկսած 2001 թվականից՝ ֆրանսիական պարբերականներում կտրուկ նվազում են եղեռնի թեմայով նյութերը, և եթե հաշվի առնենք, որ հենց 2001 թ. տարեկարգին Ֆրանսիան պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, ապա կարելի էր ենթադրել, որ սա նրանց կողմից իրենց առջև դրված ոչ ուղղակի նպատակ էր, որն ի վերջո իրագործվեց: Այսօր պետք է փաստենք, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ ֆրանսիական մամուլը այլ նպատակներ է սահմանել իր համար: 2014-2015 թթ. ֆրանսիական տպագիր մեդիան ներկայացրեց Հայոց ցեղասպանության բազմակողմ պատկերը, անդրադարձավ ոչ միայն տեղի ունեցած իրադարձություններին, այլև քննության առավ խնդրին վերաբերող տարբեր իրողություններ, հրապարակեց պատմություններ և ակնարկներ, որոնք ցեղասպանության մեդիաֆոնը դարձրին զգացմունքային և ազդեցիկ:

---

<sup>1</sup> <http://www.leparisien.fr/flash-actualite-culture/l-ecrivain-orhan-pamuk-conteur-heureux-observateur-inquiet-de-la-turquie-14-02-2015-4533407.php>.

<sup>2</sup> [http://www.liberation.fr/monde/2015/02/16/1-annee-1915-malediction-turque\\_1203892](http://www.liberation.fr/monde/2015/02/16/1-annee-1915-malediction-turque_1203892).

<sup>3</sup> Տե՛ս **Մենենդյան Ա.**, նշվ. աշխ.:

**Анаит Менемшян, Лиана Саядян – Французская пресса  
к 100-летию геноцида армян**

Отклик французской прессы на 100-летнюю годовщину Геноцида армян был особым. В отличие от, скажем, британской или американской прессы, для французской прессы и общественного мнения этой страны Геноцид армян является неопровержимым фактом.

В 2014-2015 гг. (включая апрель 2015 г.) шесть национальных газет Франции (« Le Parisien », « Le Monde », « Les Échos », « La Libération », « Le Figaro », « La Tribune ») опубликовали в общей сложности около 335 материалов, из которых около 300 касались непосредственно темы Геноцида. Остальные публикации затрагивали француско-турецкие, турецко-американские отношения, сирийский кризис, в частности события в Кесабе, в которых косвенно отражалась и тема Геноцида. В целом в 2014-2015 гг. французские медиа представили разностороннюю картину Геноцида армян. Они не только рассказывали о событиях того времени, но и анализировали различные реалии, связанные с этой проблемой, публиковали истории и очерки, которые сделали медиафон Геноцида более эмоциональным и впечатляющим.

**Anahit Menemshyan, Liana Sayadyan – *The French Press:  
On the Eve of the 100<sup>th</sup> Anniversary of the Genocide***

The response of the French press to the centenary of the Armenian Genocide was unique. In contrast, say, to the British or American press, the French response differed in that, in the view of the French press and society, the Genocide is a fact that happened and is irrefutable.

From 2014 to 2015 (including April 2015), six French daily newspapers (« Le Parisien », « Le Monde », « Les Échos », « La Libération », « Le Figaro », « La Tribune ») published some 335 pieces overall, of which around 300 specifically dealt with the Genocide issue. The other pieces dealt with French-Turkish and Turkish-American relations and the Syrian crisis, particularly regarding events in Kessab, in which indirect references are made to the Genocide issue. In general, from 2014-2015 the French media presented a many-sided picture of the Armenian Genocide. It not only talked about developments that occurred but also examined different facts linked to the issue. It published stories and insights that conveyed emotion and impact to the media backdrop regarding genocide.

## HÄTTE DEUTSCHLAND DEN VÖLKERMORD AN DEN ARMENIERN VERHINDERN KÖNNEN, OHNE DIE WAFFENBRÜDERSCHAFT MIT DER TÜRKEI ZU GEFÄHRDEN?

*Schlüsselwörter* – Johannes Lepsius, Osmanisches Reich, Wangenheim, Paul Wolff Metternich, Völkermord, Walter Rössler, Colmar von der Goltz, türkische Vernichtungspolitik, Mitverantwortung Deutschlands

Es wird im Artikel die Frage gestellt, ob die kaiserlich deutsche Regierung imstande war, den Völkermord zu verhindern, und falls ja, ob dies auf Kosten der deutsch-türkischen Waffenbrüderschaft geschehen wäre? Die kaiserlich deutsche Regierung berief sich auf diese „Begründung“, um ihre vorbehaltlos duldende Haltung zu der türkischen Vernichtungspolitik zu rechtfertigen. Als Johannes Lepsius, aus Konstantinopel nach Berlin zurückkommend, im September 1915 vom Auswärtigen Amt stärkeren Druck auf die Türkei zur Verhinderung der Vernichtungsmaßnahmen forderte, wurde sein Verlangen als unmöglich abgewiesen, weil es angeblich zur Auflösung des Militärbündnisses geführt hätte<sup>1</sup>. „Wir haben alles getan, was wir konnten“, sagte der Staatssekretär Gottlieb von Jagow auf einer Sitzung im Reichstag am 29. September 1916, „Das äußerste, was uns übrig bliebe, wäre, das Bündnis mit der Türkei zu brechen. ... Sie werden mit mir übereinstimmen, dass wir so weit nicht gehen können, den Türken, die wir tatsächlich durch unsere andauernden Vorstellungen in der armenischen Frage stark verstimmt haben, noch das Bündnis zu kündigen“<sup>2</sup>.

Zuerst soll darauf eingegangen werden, was Jagow meinte, indem er sagte, dass die deutsche Regierung alles getan hätte, was sie konnte, und ob dies der Wahrheit entsprach? In der ersten telegrafischen Nachricht des deutschen Botschafters in Konstantinopel Wangenheim über die Deportation der Armenier im Osmanischen Reich, die am 31. Mai 1915 an das Auswärtige Amt gesandt war, wurde unter anderem das folgende berichtet: „Zur Eindämmung der armenischen Spionage und um neuen armenischen Massenerhebungen vorzubeugen, beabsichtigt Enver Pascha unter Benutzung des Kriegs-(Ausnahme)-zustandes eine große Anzahl armenischer Schulen zu schließen, armenische Postkorrespondenz zu untersagen, armenische Zeitungen zu unterdrücken und aus den jetzt insurgierten armenischen Zentren alle nicht ganz einwandfreien Familien in Mesopotamien anzusiedeln. Er bittet dringend, dass wir ihm hierbei nicht in den Arm fallen. Diese türkischen Maßnahmen werden natürlich in der gesamten uns feindlichen Welt wieder große Aufregung verursachen und auch gegen uns ausgebeutet werden. Die Maßnahmen bedeuten gewiss auch eine große Härte für die armenische Bevölkerung. Doch bin ich der Meinung, dass wir sie wohl in ihrer Form

---

<sup>1</sup> Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1919, S. XXII.

<sup>2</sup> Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919. S. 294. Vgl. Lanne P., Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts, München, 1977, S. 146.

mildern, aber nicht grundsätzlich hindern dürfen. Die von Russland genährte armenische Wühlarbeit hat Dimensionen angenommen, welche den Bestand der Türkei bedrohen<sup>1</sup>.

Es sind für unsere Recherche vor allem die folgenden Realitäten, die das Telegramm zu bieten hat, von gewisser Bedeutung: Daran sind weder der Umfang noch die Folgen der sogenannten türkischen Maßnahmen zu erkennen, was an der Desinformation des Kriegsministers oder des Botschafters selbst lag. Zweitens war Wangenheim bereitwillig, durch unkritische Nachahmung und Weitergabe der türkischen offiziellen Version den Türken bei der Erfüllung ihrer genannten Maßregel freie Hand zu lassen, und drittens hatte die türkische Regierung ernsthaft damit gerechnet, dass Deutschland diese Maßnahmen hindern könnte.

Es soll hervorgehoben werden, dass der Botschafter selbst von Anfang an eine durchaus dulddende Stellung zu den türkischen Vernichtungsmaßregeln genommen hatte, und was ihm dabei Besorgnisse machte, war nicht das Schicksal der von diesen Maßregeln betroffenen Menschen, sondern eher der Umstand, dass diese in der feindlichen Welt große Aufregung verursachen und gegen Deutschland ausgebeutet würden. Ja, sogar die vom Botschafter später bei der türkischen Regierung in durchaus freundlicher Form gemachten Vorstellungen und Warnungen speziell das Ziel hatten, wie er selbst es geklärt hat, die jeweils an Deutschland kommenden Vorwürfe zur Mitschuld zurückzuweisen. „Um eventuellen späteren Invektiven unserer Feinde, als seien wir mitschuldig an dem rigorosen türkischen Vorgehen, wirksam entgegnetreten zu können“, schrieb er in seinem am 7. Juli 1915 an das Auswärtige Amt geschickten Telegramm, „habe ich es daher für geboten erachtet, die Pforte darauf aufmerksam zu machen, dass wir Deportationen der armenischen Bevölkerung nur insofern billigen, als sie durch militärische Rücksichten geboten ist und zur Sicherung gegen Aufstände dient, dass aber bei Ausführung dieser Maßregel die Deportierten vor Plünderung und Metzeleien zu schützen seien. Um diesen Vorstellungen den nötigen Nachdruck zu geben, habe ich sie schriftlich in Form eines Memorandums zusammengefasst, das ich am 4. d.M. dem Großwesir persönlich überreicht habe...“<sup>2</sup>.

Dass Wangenheim auch später für geboten hielt, solche nutzlose Vorstellungen bei der türkischen Regierung über deren „nicht gerechtfertigte Maßnahmen“ zu erheben und dabei Berichte über diese Maßnahmen und deren Folgen nach Berlin zu schicken, geschah das ebenfalls ausschließlich aus dem genannten Grunde. „... Wenn ich in letzter Zeit über diese Vorgänge Eurer Exzellenz ausführlicher berichtet habe, schrieb er in seinem am 16. Juli an den Reichskanzler gesandten Telegramm, „so geschah dies in der auch von Vizekonsul Kuckhoff geteilten Voraussicht, dass unsere Feinde uns später eine gewisse Mitschuld daran nachsagen werden. An der Hand meiner Berichte werden wir in der Lage sein, der feindlichen Welt insbesondere durch die Presse zu gegebener Zeit nachzuweisen, dass wir die zu weit gehenden Maßnahmen der türkischen Regierung und noch mehr die Ausschreitungen lokaler Organe stets nachdrücklich verurteilt haben“<sup>3</sup>.

---

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., S. 79.

<sup>2</sup> S. im Internet: Revidierte Lepsius-Edition, Wolfgang Gust (Hg.), 1915-07-07-DE-001-V, <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De?OpenFrameset>.

S. Das Memorandum in der Anlage des Telegramms, ebd.

<sup>3</sup> Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan, 2004, S. 157.



Wie an den Berichten Wangenheims klar zu erkennen ist, war ihm das Los des armenischen Volkes, wenn auch er von Konsulaten zahlreiche Berichte über dessen systematische Vernichtung erhielt, ganz gleichgültig, was unter anderem auch von Morgenthau, dem amerikanischen Botschafter in Konstantinopel, vielerlei ausdrücklich bestätigt worden ist<sup>1</sup>. „Meine letzte Erinnerung an Wangenheim besteht daraus“, so Morgenthau, „dass er, in meinem Arbeitszimmer in der amerikanischen Botschaft gesessen, jegliche Einflussnahme auf die türkische Regierung zum Stoppen der Vernichtung eines ganzen Volkes absolut ablehnte. Er war der einzige Mann in der Türkei, der die Verbrechen verhindern könnte, und auch seine Regierung war die einzige Regierung, die das hätte machen können. Wangenheim hatte mir aber öfters gesagt: „Wir haben nur ein einziges Ziel, nämlich, das Siegen im Krieg“<sup>2</sup>.

Diese vorbehaltlos duldende Stellung Wangenheims wurde ganz und gar auch von seiner Regierung übernommen, die einerseits, sich auf die vom Botschafter gemachten irrelevanten Vorstellungen berufend, den Eindruck erweckte, alles Mögliche zur Verhinderung des Völkermords getan zu haben und andererseits die Ansicht vertrat, als ob beim Ausüben eines Drucks auf die Türkei das Bündnis gebrochen würde. Eine eingehende Untersuchung der betreffenden Dokumentationen aber weist darauf hin, dass Deutschland den Genozid hätte verhindern können, ohne die Waffenbrüderschaft zu gefährden. Das ist nicht zuletzt durch das Verhalten des Leiters der deutschen Militärmission in der Türkei, General Liman von Sanders, bewiesen worden, der im November 1916 unter Drohung mit Waffengewalt der türkischen Regierung verbat, die Armenier aus Smyrna zu deportieren. Was dabei nicht weniger bemerkenswert ist, begründete von Sanders den Verbot durch militärstrategische Motive, welche die türkische Regierung stets offiziell zum Vorwand für die Deportation der Armenier zu nehmen versucht hatte. „Ich schickte am 10. November morgens den Chef des Stabes der V. Armee, Oberst Kiasim Bey, zum Wali“, schrieb von Sanders in seinem am 17. November 1916 an die Botschaft geschickten Bericht, „und ließ ihm sagen, dass ich derartige Massenverhaftungen und Transporte, welche in einer vom Feinde bedrohten Stadt nach verschiedenen Richtungen in das militärische Gebiet eingriffen, nicht weiter dulden würde. Sollte die Polizei trotzdem mit diesen Maßnahmen fortfahren, so würde ich sie mit Waffengewalt durch die mir unterstehenden Truppen verhindern. Ich gab dem Wali bis zum Mittag dieses Tages Zeit, sich zu entscheiden. Den Kommandierenden General in Smyrna, Königlich Preußischen Oberst Trommer, der die Vorgänge bereits kannte, verständigte ich durch Major Prigge von obiger Mitteilung und den eventuell zu treffenden Maßnahmen. Gegen 1.30 Uhr nachmittags kam Major Kiasim Bey vom Wali, der in Burnabad war, zurück und meldete mir, dass die Verhaftungen und Transporte eingestellt worden seien und unterbleiben würden“<sup>3</sup>.

Ein weiteres Beispiel hat Feldmarschall Colmar von der Goltz geliefert, indem er die Deportation der Armenier aus Mossul erfolgreich unterbinden konnte. Als im

---

<sup>1</sup> **Morgenthau H.**, *Ambassador Morgenthau's story*, Garden-City-New York, 1918, S. 370.

<sup>2</sup> Zur ausführlicheren Information über das Gespräch von Morgenthau und Wangenheim s. Morgenthau H., *Erinnerungen des amerikanischen Botschafters Wangenheim und Geheimnisse zum Völkermord an den Armeniern*, Jerewan 1990, S. 317-320.

<sup>3</sup> *Deutschland und Armenien...*, S. 312-313. Vgl. Vierbücher H., *Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915*, Hamburg, 1930, S. 75. Vgl. Lepsius J., *Der Prozess Teilirian-Talaat*, „Der Orient“, 1921, S. 70.

Dezember 1915 die Deportation der Armenier in Mossul sowie die der dorthin verschickten Baghdader Armenier in Richtung Euphrat befohlen wurde, intervenierte der Feldmarschall energisch bei den Wilajetehörden. „Die Sache zog sich fast einen Monat lang hin“, so in einem Bericht des Legationsrats Dieckhoff, „und der Feldmarschall konnte zunächst nur erreichen, dass die Armenier einstweilen in Mossul auf weitere Weisung warten sollten. Als bis Mitte Januar 1916 keine Weisung aus Konstantinopel eingetroffen war, verbot der Feldmarschall auf Grund seiner Oberbefehlshaberbefugnisse dem Wali von Mossul, die Armenier weiter zu transportieren. Der Wali berichtete erneut nach Konstantinopel. Eine Antwort war bis zum 27. Januar nicht eingetroffen, vielmehr kam die Nachricht, die Regierung bestehe auf dem Abtransport. Hierauf bat der Feldmarschall telegraphisch um seine sofortige Abberufung. Erst jetzt antwortete Enver Pascha in einem verbindlich gehaltenen Telegramm, in welchem er Zusicherungen bezüglich des Verbleibens der Armenier in Mossul machte, im übrigen aber den Feldmarschall darauf hinwies, dass ihn seine Oberbefehlshaberbefugnisse nicht berechtigen, sich in die inneren Angelegenheiten des türkischen Reiches einzumischen“<sup>1</sup>.

Der genannte Hinweis des Kriegsministers hatte natürlich keinen Anhaltspunkt, weil, wenn man davon ausginge, dass die türkische Regierung die Deportation des armenischen Volkes offiziell beständig durch militärstrategische Gründe zu motivieren bemüht war, dürfte das in der Türkei stationierte deutsche Militär diese militärstrategisch keineswegs gerechtfertigte Maßregel vollständig oder zum größten Teil unterbinden, ohne sich deswegen eine Einmischung in die inneren Angelegenheiten des türkischen Reiches zuschreiben zu lassen. Und es war natürlich kein Zufall, dass sowohl von Sanders als auch von der Goltz ihre genannten Verbote gerade durch militärstrategische Gründe motivierten.

Wenn diese beiden deutschen Offiziere aus eigener Initiative, ja, sogar ohne zuvor Berlin um Erlaubnis zu bitten, den Todesgang der Armenier der genannten Ortschaften erfolgreich verhindern konnten, welche eine wichtige Bedeutung ein starker Druck seitens der deutschen Regierung haben würde, wenn sie sich dazu entschlossen hätte!

Die Ansicht, dass im Falle eines starken Drucks Deutschlands auf die Türkei das Waffenbündnis dennoch nicht zerbrechen würde, ist dabei von mehreren deutschen Diplomaten und Militärs, ja, nicht zuletzt vom deutschen Botschafter in Konstantinopel, Paul Wolff Metternich, vertreten worden, der nach dem Tode seines Vorgängers Wangenheim bzw. am 15. November 1915 seinen Dienst antrat und sich dafür einsetzte, seine Regierung zu einem Druck auf die Türkei zu bewegen, um wenigstens die Vernichtung der noch lebenden einigen hundert tausend Armenier zu verhindern<sup>2</sup>. „Auch soll man in unserer Presse den Unmut über die Armenierverfolgung zum Ausdruck kommen lassen und mit Lobhudeleien der Türken aufhören“, schrieb Metternich in seinem am 7. Dezember 1915 an den Reichskanzler geschickten Bericht. „Was sie leisten, ist unser Werk, sind unsere Offiziere, unsere Geschütze, unser Geld. Ohne unsere Hülfe fällt der geblähte Frosch in sich selbst zusammen. Wir brauchen gar nicht so ängstlich mit den Türken umzugehen. Leicht können sie nicht auf die andere Seite schwenken und Frieden machen. Mit den jetzigen Machthabern wird die

---

<sup>1</sup> Deutschland und Armenien 1914-1918..., S. 218-219.

<sup>2</sup> Revidierte Lepsius-Edition..., 1915-12-07-DE-001-V.

englische Regierung nicht leicht paktieren, schon eher mit Djemal, wenn er, was nicht ausgeschlossen ist, Enver verdrängen sollte. Die Englische Regierung sucht seit Jahren Enver zu Fall zu bringen. Dass sie einen Separatfrieden mit den jetzigen Machthabern anstrebt, ist höchst unwahrscheinlich. Noch viel unwahrscheinlicher, dass sie Enver Pascha für allgemeine Friedens-Sondierungen benutzt. Es stehen ihr hundert andere Kanäle hierzu offen. Um in der Armenierfrage Erfolg zu haben, müssen wir der türkischen Regierung Furcht vor den Folgen einflößen. Wagen wir aus militärischen Gründen kein festeres Auftreten, so bleibt nichts übrig, als mit ferneren erfolglosen Verwahrungen, die mehr verärgern als nützen, zuzusehen, wie unser Bundesgenosse weiter massakriert<sup>1</sup>.

Es kommen Unstimmigkeiten zur dulddenden Stellung der eigenen Regierung in Bezug auf die türkische Vernichtungspolitik auch in Berichten weiterer deutschen Diplomaten klar und ausdrücklich vor, auch wenn diese in solch einer Form formuliert werden müssten, die gegen dienstliche Kompetenzen der Verfasser nicht verstoßen dürfte. Diese Berichte beinhalten einerseits eine eingehende Darstellung der betreffenden Vorgänge und andererseits kritische Beurteilungen darüber, worin sich die Verfasser von der offiziellen dulddenden Haltung der Regierung womöglich zu distanzieren versuchen. Hierzu wird als Beispiel ein Zitat aus dem am 27. Juli 1915 an den Kanzler geschickten Bericht des deutschen Konsuls in Aleppo, Walter Rössler, angeführt. „Das berichtete Vorbeitreiben von Leichen auf dem Euphrat“, so Rössler, „das in Runkaleh, Biredjik und Djerabulus beobachtet worden ist, hatte, wie mir am 17. d. M. mitgeteilt wurde, 25 Tage lang gedauert. Die Leichen waren alle in der gleichen Weise, zwei und zwei Rücken auf Rücken, gebunden. Diese Gleichmäßigkeit deutet darauf hin, dass es sich nicht um Metzelleien, sondern um Tötung durch die Behörden handelt. ... Wie weiter unten zu berichten sein wird, hat das Vorbeitreiben nach einer Pause von mehreren Tagen von neuem begonnen und zwar in verstärktem Maße. Dieses Mal handelt es sich hauptsächlich um Frauen und Kinder.

Meine bisherige telegraphische und schriftliche Berichterstattung dürfte dargetan haben, dass die türkische Regierung über den Rahmen berechtigter Abwehrmaßnahmen gegen tatsächliche und mögliche armenische Umtriebe weit hinausgegangen ist, vielmehr durch die Ausdehnung ihrer Anordnungen, deren Durchführung sie in der härtesten und schroffsten Weise den Behörden zur Pflicht gemacht hat, auch gegen Frauen und Kinder, bewusst den Untergang möglichst großer Teile des armenischen Volkes mit Mitteln herbeiführen bestrebt ist, welche dem Altertum entlehnt sind, einer Regierung aber, die mit Deutschland verbündet sein will, unwürdig sind. - Sie hat, wie wohl kein Zweifel sein kann, die Gelegenheit, da sie sich im Kriege mit dem Vierverband befindet, dazu benutzen wollen, um sich der armenischen Frage für die Zukunft zu entledigen, dadurch, dass sie möglichst wenige geschlossene armenische Gemeinden übrig lässt. Hekatomben Unschuldiger hat sie mit den wenigen Schuldigen geopfert.

Die türkische Regierung hat ihre armenischen Untertanen, wohlgermerkt unschuldige, unter dem Vorwande, sie aus dem Kriegsgebiet entfernen zu müssen, zu Tausenden und Abertausenden in die Wüste getrieben, weder Kranke noch Schwangere noch die Familien der zu den Waffen einberufenen Soldaten ausgenommen, hat

---

<sup>1</sup> Ebd., vgl. Deutschland und Armenien 1914-1918..., S. 202.

sie ungenügend und unregelmäßig ernährt und mit Wasser versorgt, hat nichts gegen die unter ihnen ausgebrochenen Epidemien getan, hat die Frauen in Not und Verzweiflung getrieben, daß sie ihre Säuglinge und ihre Neugeborenen am Wege ausgesetzt, ihre dem mannbaren Alter entgegenghenden Mädchen verkauft, dass sie sich selbst mit ihren kleinen Kindern in den Fluss gestürzt haben, sie hat sie der Willkür der Begleitmannschaft und damit der Schande preisgegeben, einer Begleitmannschaft, die Mädchen an sich genommen und verkauft hat, sie hat sie den Beduinen in die Hände gejagt, die sie ausgeplündert und entführt haben, sie hat die Männer in einsamen Gegenden ungesetzlich niederschließen lassen und lässt die Leichen ihrer Opfer den Hunden und den Raubvögeln zum Fraß, sie hat angeblich in die Verbannung geschickte Abgeordnete ermorden lassen; sie hat Sträflinge aus den Gefängnissen entlassen, in Soldatenkleider gesteckt und in die Gegenden geschickt, wo die Verbannten durchziehen mussten, sie hat tscherkessische Freiwillige angeworben und sie auf die Armenier hingelenkt.

Wäre es nicht möglich, noch jetzt weiteren Gräueln Einhalt zu tun und wenigstens die Armenier aus dem Küstenstrich des Wilajets Aleppo noch zu retten, deren Verschickung erst noch bevorsteht? ... Sind Beilan, Soukluk, Kessab u. a. wirklich Kriegsgebiet? Ist die Anwesenheit vor Frauen und Kindern dort gefährlich, da doch die Männer so gut wie alle eingezogen sind<sup>1</sup> ?

Die deutsche Regierung zeigte sich aber auch weiterhin nicht nur nicht bereitwillig, ihre Duldungsstellung zu der Vernichtungspolitik ihres Verbündeten zu ändern, sondern sie dafür sorgte, auch in der Öffentlichkeit die jeweils damit nicht einverständenen Stimmen durch die Zensur und andere Instrumente zum Schweigen aufzuzwingen. Dazu diente beispielsweise die von der Regierung am 6. Oktober 1915 den Pressevertretern erteilte Anweisung, wodurch ein vorbehaltloses Verschweigen der Lage der Armenier bis zum Kriegsende zur allgemeinen Pflicht gemacht wurde<sup>2</sup>.

Die deutsche Regierung gab ihre duldende Stellung selbst 1918 bzw. in der letzten Phase des Völkermords nicht auf, als das osmanische Militär in Verletzung des Brest-Litowsker Abkommens weiter in die östlichen Restgebiete Armeniens vorstieß und auf diesem Vormarsch die armenische Zivilbevölkerung der neu besetzten Gebiete systematisch massakrierte. Auch in dieser Zeit appellierte nicht nur das neutrale Ausland, sondern selbst das deutsche Militär an die deutsche Regierung, während die politischen Entscheidungsträger in Deutschland diese Möglichkeit gar nicht erst in Erwägung gezogen haben.

Es ist also nicht zu bezweifeln, dass die damalige deutsche Regierung erfolgreich auf ihren osmanischen Verbündeten hätte einwirken können, um die Vernichtung der Armenier zu verhindern, und zwar ohne das Militärbündnis zu gefährden, so dass die

---

<sup>1</sup> Deutschland und Armenien..., S. 110-111.

<sup>2</sup> Sie hatte den folgenden Wortlaut: „Über die Armeniergreuel ist folgendes zu sagen: Unsere freundschaftlichen Beziehungen zur Türkei dürfen durch diese innertürkische Verwaltungsangelegenheit nicht nur nicht gefährdet, sondern im gegenwärtigen, schwierigen Augenblick nicht einmal geprüft werden. Deshalb ist es einstweilen Pflicht zu schweigen. Später, wenn direkte Angriffe des Auslandes wegen deutscher Mitschuld erfolgen sollten, muss man die Sache mit größter Vorsicht und Zurückbehaltung behandeln und später vorgeben, dass die Türken schwer von den Armeniern gereizt wurden“. Vierbücher H., Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat..., S. 78.

oben genannte „Begründung“ der kaiserlich deutschen Regierung für ihre Indolenz und Zurückhaltung in Wirklichkeit unbegründet war.

Die dadurch bedingte Mitverantwortung Deutschlands ist indirekt in dem vom Deutschen Bundestag im Juni 2005 verabschiedeten nicht-legislativen Beschluss „Erinnerung und Gedenken an die Vertreibungen und Massaker an den Armeniern 1915 – Deutschland muss zur Versöhnung zwischen Türken und Armeniern beitragen“ akzeptiert worden: Der Deutsche Bundestag, heißt es darin, „bedauert auch die unrühmliche Rolle des Deutschen Reiches, das angesichts der vielfältigen Informationen über die organisierte Vertreibung und Vernichtung von Armeniern nicht einmal versucht hat, die Gräueltaten zu stoppen.“ Im 6. Absatz handelt es sich sogar um „die Pflicht Deutschlands, sich der eigenen Verantwortung zu stellen“.

Gerade von dieser eigenen Mitverantwortung ausgehend, soll die Bundesrepublik Deutschland nicht nur selbst den Völkermord an den Armeniern im türkischen Reich anerkennen und verurteilen, sondern auch dazu beitragen, dass er von der türkischen Regierung akzeptiert und verurteilt wird.

### **Աշոտ Հայրունի – Գերմանիան կարո՞ղ էր կասեցնել Հայոց ցեղասպանությունը՝ առանց Թուրքիայի հետ դաշինքը վտանգելու**

Հոդվածում իրադարձությունների վերլուծության և տարաբնույթ կարևոր սկզբնաղբյուրների հիման վրա հանգամանալից կերպով փաստարկվում է, որ կայսերական Գերմանիան կարող էր Հայոց ցեղասպանությունը կանխել կամ կասեցնել՝ առանց նույնիսկ Թուրքիայի հետ դաշինքը վտանգելու: Անդրադարձ է կատարվում դրանից ածանցվող՝ Գերմանիայի համապատասխանատվությանը ցեղասպանության հարցում, ինչը որոշակիորեն արտացոլված է նաև Գերմանական Բունդեսթագի կողմից 2005 թ. ընդունված բանաձևում: Մատնանշվում է, որ չնայած դրան, Գերմանիան դեռևս խուսափում է պատշաճ կերպով առերեսվել այդ համապատասխանատվությունից բխող որոշակի պարտավորություններին, որոնք առաջին հերթին վերաբերում են հենց իր՝ Գերմանիայի կողմից ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը, ինչպես նաև Թուրքիայի վրա ազդեցության գործադրմանը, որպեսզի նույնը տեղի ունենա նաև այնտեղ:

### ***Ашот Айруни – Германия могла бы остановить Геноцид армян, не ставя под угрозу союз с Турцией***

В статье на основе анализа событий и разнообразных важных первоисточников детально аргументируется то, что кайзеровская Германия могла предотвратить или остановить Геноцид армян, не ставя под угрозу союз с Турцией. Как следствие этого затрагивается также и ответственность Германии в геноциде, что частично отражено в резолюции, принятой в немецком Бундестаге в 2005 г. Отмечается, что несмотря на это, Германия по-прежнему избегает обязательств, вытекающих из этой ответственности, которые в первую очередь относятся к признанию и осуждению геноцида именно со стороны Германии, а также оказанию влияния на Турцию, для того чтобы, то же самое произошло и там.

**ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ  
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՏԱՎՈՐ ԹՎԱՔԱՆԱԿԸ 1890-ԱԿԱՆ ԹԹ.**

*Բանալի բառեր – Մկրտիչ Խրիմյան, Կարսի մարզ, Կովկասի փոխարքայություն, Աբդուլ Համիդ II, ԿՀԲԸ, Կարսի մասնաճյուղ, Կաղզվանի մասնաճյուղ, զեկուցագիր, օգնություն, փախստական,*

Մասունի 1894 թ. կոտորածը դարձավ Աբդուլ Համիդ II-ի հայաջինջ քաղաքականության նախերգանքը: «Կարսի սուլթանը»<sup>1</sup> ձգտում էր արևմտահայերի ոչնչացմամբ հայաթափել Արևմտյան Հայաստանը և դրանով իսկ մեկընդմիջտ լուծել Հայկական հարցը: Սուլթանի ջարդարարական քաղաքականությունը կարելի է համարել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության քաղաքականության առաջին փուլը: Ըստ «Եղբայրական օգնություն թուրքիայում տուժած հայերին» ժողովածուի տվյալների՝ 1896 թ. փետրվարի դրությամբ ամբողջ Փոքր Ասիայում ավերվել են 39.749 տուն, 7942 խանութ, սպանվել են 37.085 քրիստոնյա, 938 մուսուլման, բռնությամբ կրոնափոխվել՝ 40.950 հայեր, համայն աշխարհով սփռվել 290.300 արևմտահայեր<sup>2</sup>: Այս պայմաններում թուրքական յաթաղանից փրկվելու համար արևմտահայության մի մասը նախընտրում է գաղթի ճանապարհը:

Արևմտահայության սովոր քարավանները շարժվեցին դեպի Կովկասի փոխարքայություն: Սակայն շատերը՝ հատկապես կանայք և ծերերը, նույնիսկ սահմանին չհասան՝ ճանապարհին մահկանացուն կնքելով սովից, հիվանդություններից և ցրտից, իսկ ոմանք սահմանագլխին ենթարկվեցին բռնությունների և կողոպուտի<sup>3</sup>: Սահմանն անցնողները, ըստ գաղթականների որակման՝ «դժխբից արքայութիւն մտնողները»<sup>4</sup>, ցրվեցին ամբողջ Կովկասում:

Սահմանագլխին գտնվող Կարսի մարզը դարձել էր արևմտահայ փախստականների հավաքատեղին<sup>5</sup>: Մոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ գտնվող հայերը հիմնականում տեղավորվում էին Կարսի մարզի գյուղերում: 1894 թ. դրությամբ որոշ գյուղերում ապաստանել էր 15-20 տուն փախստական<sup>6</sup>: Սկզբնական շրջանում փախստականներին օգնության ձեռք

<sup>1</sup> Տե՛ս **Վանդալ Ա.**, Հայերը և բարենորոգումները թուրքիայում, Երևան, 2001, էջ 19:

<sup>2</sup> Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, с. 6.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս «Երկիր», 1906, թիվ 33.08.11, էջ 3-4:

<sup>4</sup> «Մշակ», 1896, թիվ 152, էջ 3:

<sup>5</sup> «Արձագանք», 1897, թիվ 48.04.30, էջ 3:

<sup>6</sup> Տե՛ս «Մշակ», 1894, թիվ 57.05.21, էջ 2:

մեկնեց տեղի բնակչությունը, որը ևս գտնվում էր սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակում: Բացի այդ, քանի որ նրանց թիվն օրեցօր աճում էր, տեղացիները այլևս չէին կարողանում օգնել ու պատասպարել նրանց: «Karc» լրագիրը նշում էր. «Չունևորների և մի որևէ ապրուստի միջոց որոնողների թիւը այնքան մեծ է, որ մասնատր անհատների բարեգործութիւնը, որոնք յօժարութեամբ օգնում են խեղճերին, բաւական չեղաւ»<sup>1</sup>:

Հաշվի առնելով այս ամենը՝ Կարսի զինվորական նահանգապետ գեներալ-լեյտենանտ Տոմիչի հորդորով մարզում ստեղծվում է հանձնաժողով, որի նպատակն էր «չը թողնել որ սովածութիւնից մեռնեն խեղճերը»<sup>2</sup>: 1894 թ. մարտի դրությամբ այս հանձնաժողովը փախստականների կարիքների համար հավաքում է 1098 ռուբլի: Սակայն ինչ-ինչ պատճառներով այս հանձնաժողովը, որին վիճակված էր կարճատև գոյություն, նույն թվականի մայիսին «այս քանի օրերս դադարեց գործելուց»<sup>3</sup>:

Փախստականների օգնության կազմակերպման խնդիրը ստանձնում է Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (այսուհետև՝ ԿՀԲԸ), որը Կարսի մարզում և շրջական գյուղերում ապաստանած արևմտահայերի օգնությունը կազմակերպում է Կարսի և Կաղզվանի մասնաճյուղերի աջակցությամբ: Ավելի ճիշտ և տեղին օգնություն կազմակերպելու համար ԿՀԲԸ-ն իր բոլոր մասնաճյուղերին հանձնարարում է մանրամասն տվյալներ հավաքել տեղում հաստատված փախստականների քանակի, վիճակի և առավել անհրաժեշտ կարիքների վերաբերյալ: 1894 թ. սկզբներին Կարսի մասնաճյուղը իր տեղեկագրում նշում է, որ փախստականների թիվը օրեցօր ավելանում է: Ցավոք, Կարսում ևս նրանց ուղեկցում էին սովը, զրկանքները և հիվանդությունները: 1894 թ. ընթացքում մասնաճյուղը փախստականների վիճակը բարվոքելու համար ստացել է 8672 ռուբլի 20 կոպ. գումար<sup>4</sup>: Փախստականներին սովից փրկելու համար բացվել է ձրի ճաշարան, որը գործել է 53 օր և յուրաքանչյուր օր տվել է 350-400 բաժին կերակուր: Այդ ճաշարանից օգտվում էր 153 ընտանիք<sup>5</sup>: Կարսի մարզում հաստատված փախստականներին բաժանվել է ցորեն, գարի և ալյուր: Կարսի 54 գյուղեր ստացել են 1520 փութ ալյուր, իսկ Կաղզվանի 10 գյուղեր՝ 624 փութ: Ընդհանուր առմամբ օգնություն է ստացել 500 փախստական ընտանիք<sup>6</sup>:

1895 թ. Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածներն

---

<sup>1</sup> Նույն տեղում, 1894, թիվ 27.03.08, էջ 2:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, 1894, թիվ 57.05.21, էջ 2:

<sup>4</sup> Տե՛ս Տեղեկագիր Հայոց Բարեգործական ընկերութեան Կովկասում, 1894, Թիֆլիս, 1895, էջ 109:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>6</sup> Տե՛ս **Լեռ**, Երեսնամեակ Հայոց Բարեգործական ընկերութեան Կովկասում, 1881-1911, Թիֆլիս, 1911, էջ 184:

ավելի ահագնացան, որի հետևանքով սովարացավ նաև փախստականների հոսքը, ինչը դժվարացնում էր ԿՀԲԸ-ի՝ օգնություն կազմակերպելու գործը: Եթե 1894 թ. գաղթած փախստականների չնչին մասին հաջողվել էր նախապես վաճառել ունեցվածքը և փոքր-ինչ ապահով վիճակում գաղթել, ապա 1895 թ. գաղթածների վիճակը խիստ անմխիթար էր: Ճանապարհին ենթարկվելով հետապնդումների՝ նրանք ծանր վիճակում էին հասել Կարս: 1895 թ. Կարսի մարզում հաստատված փախստականների թիվը հասնում էր շուրջ 10.000-ի<sup>1</sup>: ԿՀԲԸ-ն օգնության խնդրանքով դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին և ստանում 3000 ռուբլի: 1895 թ. ապրիլ-մայիս ամիսներին ընկերությունը Կարսի շրջակա 23 գյուղերում ապաստանած 454 փախստական ընտանիքի հատկացրել է 2137 փութ ցորեն<sup>2</sup>, Բասենի գավառակի 10 գյուղերում ապաստանած 168 ընտանիքի՝ 849 փութ<sup>3</sup>:

1896 թ. փախստականների մի մեծածավալ հոսք ուղղվում է Կովկասի փոխարքայություն: Ամեն օր հայ փախստականների խմբեր, որոնց մեծ մասը ծերեր, կանայք և երեխաներ էին, հաստատվում են Կարսում, Կաղզվանում, Բաթումում, Թիֆլիսում: 1896 թ. օգոստոսի 21-ին (սեպտեմբերի 21-ին) Կաղզվանում հաստատվում են երեք խումբ փախստականներ՝ 333 հոգի: Առաջին խումբը բաղկացած էր շուրջ 152 մարդուց, որոնցից 40 տղամարդ, իսկ մյուսները՝ այրի կանայք: Հաջորդ օրը տեղ է հասնում 143-հոգանոց երկրորդ խումբը, որոնց մեծ մասը մեծահասակներ էին և երեխաներ, իսկ շուրջ 38 հոգի ժամանում է օգոստոսի 25-ին<sup>4</sup>: Իսկ հոկտեմբերին Կարսում հաստատվում են ևս շուրջ 4500 փախստականներ<sup>5</sup>՝ մեծ մասը կանայք և երեխաներ:

ԿՀԲԸ-ն շարունակում է իր գործունեությունը: Կաղզվանում հաստատված 72 տուն փախստականներից 58-ը՝ շուրջ 230 հոգի, նպաստ են ստանում Կաղզվանի մասնաճյուղից: 27 ընտանիք՝ մոտ 132 հոգի, նոր եկածներն էին, որոնք չորս ամիս շարունակ պետք է ստանային այլուր, փայտ, շոր, անկողին և յուրաքանչյուրը՝ շաբաթական տասը կոպեկ: Իսկ մոտ 98 հոգուց բաղկացած թվով 31 ընտանիքները, նախորդ տարվա գաղթածներն անխտիր ստացել են հագուստ, իսկ ոմանք՝ անկողին, վառելափայտ, այլուր և գումար<sup>6</sup>:

ԿՀԲԸ-ի մասնաճյուղերի համար կարևոր խնդիր էին հիվանդ փախստականների տեղավորումը և բուժումը, որոնց հարկավոր էր առանձնացնել վարակը կանխելու համար, իսկ հետո, արագ ապաքինման նպատակով, ապահովել ավելի սննդարար կերակրով: Մակայն ընկերությունն այդպիսի հնարավորություններ չուներ: Հիվանդները պատսպարվում էին առողջների

---

<sup>1</sup> «Մշակ», 1895, թիվ 69.06.17, էջ 3:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., էջ 185:

<sup>4</sup> «Արմենիա», 1896, թիվ 20, էջ 3:

<sup>5</sup> ՀԱՍ, ֆ. 28, ց. 1, գ. 358, ց. 1, թ. 130, տե՛ս նաև «Մշակ», 1897, թիվ 04.01.11, էջ 2:

<sup>6</sup> «Մշակ», 1897, թիվ 2.01.04, էջ 3:



հետ միևնույն սենյակում, քնում սառը հատակին: Բացի այդ, կային որոշ բժիշկներ, որոնք չէին համաձայնվում չնչին աշխատավարձով խնամել հիվանդներին: Այդ պայմաններում վարակները հեշտությամբ տարածվում էին՝ հաճախ դառնալով մահվան պատճառ: Սակայն Կարսի և Կաղզվանի մասնաճյուղերը, կարելի էր ասել, եզակիներից էին, որոնց մասամբ հաջողվեց լուծել այդ խնդիրը: Նրանք կարողացան առանձին ապաստարան վարձել հիվանդների համար, որտեղ շաբաթը երկու անգամ նրանց այցելում էր բժիշկը, իսկ ֆելդշերը հոգ էր տանում նրանց մասին ամեն օր<sup>1</sup>:

ԿՀԲԸ Կարսի մասնաճյուղի աշխատակից Եղիշե քահանա Մուրադյանցը, անձամբ շրջելով Կարսի մարզում, հայտնում է, որ 1896 թ. դեկտեմբերի դրությամբ Բասենի տասը հայկական գյուղերում փախստականները տեղաբաշխվել էին հետևյալ կերպ. Սթահան 35 տուն, Բաշագյուղ 55, Արմուտլու 42, Չուլաղլի 24, Չուրուք 21, Ղարաբունլար 22, Գուլաթափ 29, Շատևան 31, Հոբերան 33, Ղոշաքիլիսա 27<sup>2</sup>:

Այսպիսով, Բասենի հայկական տասը գյուղում ապաստանել էր 320 ընտանիք, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր միջինը ութ անձից, շուրջ 2560 հոգի: Իսկ Կարսի նահանգում ապաստանած փախստականների թիվը գերազանցում էր 20.240-ը<sup>3</sup>:

1897 թ. փետրվարի 4-ին ԿՀԲԸ-ն Վրաստանի և Իմերեթի հոգևոր առաջնորդին հասցեագրած հաշվետվության մեջ նշում էր, որ Կարսի մարզում կենտրոնացած փախստականների թիվը հասնում էր շուրջ 24.000-ի<sup>4</sup>:

1899 թ. Կարսի մարզի զինվորական նահանգապետի հաշվետվության մեջ նշվում էր, որ Կարսի սահմանը հատել են 80 հայ փախստականներ և միացել մինչ այդ այնտեղ հաստատված 14.000-ին<sup>5</sup>: 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ Կարսի մարզում 1886 թ. եղել է 174.044 բնակիչ, իսկ 1897 թ.՝ 290.654<sup>6</sup>, կարելի է եզրակացնել, որ բնակչության թվի աճը կախված է եղել նաև արևմտահայ փախստականների գաղթից:

Երբ համեմատում ենք Եղիշե քահանա Մուրադյանցի հաղորդած տվյալները և Կարսի մարզի զինվորական նահանգապետի հաշվետվությունը, նկատում ենք, որ արևմտահայ փախստականների մի մասը վերջնականապես չէր հաստատվում տվյալ մարզում կամ գյուղում, այլ սահմանն անցնելով և աշխատանք չգտնելով՝ ընկերությունից ճանապարհածախս էր

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 28, գ. 357, ց. 1, թ. 84:

<sup>2</sup> «Մշակ», 1897, թիվ 5,01,14, էջ 3:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 28, գ. 967, ց. 1, թ. 34:

<sup>5</sup> Սույն տվյալները մեզ է տրամադրել հանգուցյալ պատմաբան Դերենիկ Մուրադյանը, որի համար շնորհակալ ենք:

<sup>6</sup> **Պողոսյան Ա. Մ.**, Անցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում, Երևան, 1961, էջ 132:

խնդրում՝ իր բախտը մեկ այլ շրջանում որոնելու համար: Բացի դրանից, կային նաև ինչ-որ նահանգում ծանոթ-բարեկամներ ունեցողներ, որոնք սահմանն անցնելուն պես ճանապարհածախս էին որոնում՝ նրանց հասնելու համար: Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա երկու տվյալները մոտ են իրականությանը: Եղիշե քահանայի հաղորդած տեղեկությունները վերաբերում են 1896 թ. վերջին, երբ փախստականների հոսքը ստվար էր, իսկ նահանգապետի տեղեկությունները՝ 1899 թ., երբ փախստականները արդեն տեղավորվել էին:

1896 թ. դեկտեմբերի 11-ին Կովկասի կառավարչապետ Գրիգորի Գոլիցինի հրամանով թույլատրվում է Ռուսաստանի տարածքում կազմակերպել հանգանակություն՝ հոգուտ արևմտահայ փախստականների: Հավաքված բոլոր միջոցները պետք է ուղարկվեին Կովկասի կառավարչապետին, իսկ բաշխումը պետք է կազմակերպվեր կառավարության օղակների միջոցով: Ըստ երևույթին Գ. Գոլիցինը իր ձեռքում կենտրոնացնելով փախստականներին տրամադրվող օգնությունը փորձում էր տպավորություն ստեղծել և ցույց տալ, որ կառավարությունը «հոգում է» նրանց խնդիրները: 1897 թ. հունվարին կառավարչապետությունը հրապարակում է մի շրջաբերական, որը բոլոր պետական վարչություններին հրահանգում էր նպաստներ հավաքել և բաժանել<sup>1</sup>: Այդ հրամանից հետո ԿՀԲԸ-ն փախստականներին համարում է լոկ տառապյալներ: 1897 թ. ընթացքում վերջիններիս օգնելու համար ԿՀԲԸ ուղղված նվիրատվությունները կազմում էին 15.886 ռուբլի 62 կոպեկ<sup>2</sup>:

1908 թ. նորից հրապարակ եկավ արևմտահայ փախստականների հարցը: Երիտթուրքական հեղափոխությունից հետո հայ ժողովրդին թվում էր, թե իր տառապանքները ավարտին են հասել: Տեղեկանալով համիդյան բռնապետության տապալման մասին՝ Կովկասի սահմաններում գտնվող տասնյակ փախստականներ սկսեցին խմբերով ուղևորվել իրենց հայրենիք: ԿՀԲԸ առջև խնդիր ծառայեց 1894-1897 թթ. փախստականներին օգնել՝ վերադառնալու հայրենիք: Կարսի մասնաճյուղը, բացատրելով, թե ինչ նշանակություն ունի փախստականների վերադարձի խնդիրը, նշում է, որ տասնյակ հազարավոր հողագուրկ փախստականներ, ապաստանելով սահմանակից նահանգների գյուղերում, բեռ են դարձել առանց այն էլ սակավահող գյուղացիության համար և չգտնելով աշխատանք՝ դիմում են գողության և թալանի: Ըստ Կարսի մարզի հաշվետվության տվյալների՝ հանցագործությունները մարզում 1896 թվականից հետո հետզհետե ավելացել են: Եթե 1896 թ. տեղի է ունեցել 347 հանցագործություն, ապա 1899 թ. դրանց թիվը հասել է 854<sup>3</sup>:

Բացի դրանից, կազմակերպելով փախստականների վերադարձը հայրենի երկիր՝ ընկերությունը լուծում էր կարևոր մի խնդիր. նախ նրանք

<sup>1</sup> Լեռ, նշվ. աշխ., էջ 119:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն փաստաթուղթը ևս մեզ է տրամադրել Դերենիկ Մուրադյանը:

կվերադառնային իրենց հայրենի երկիր, կթեթևանար նրանց վիճակը, իրենց բնօրրանում աշխատանք կունենային, իսկ նրանց պատսպարած գյուղացիները կազատվեին նրանց մասին հոգալու ծանր բեռից: Վերադարձողների հոսքն այնքան մեծ էր, որ ԿՀԲԸ-ն կազմեց մի առանձին հանգանակիչ մասնախումբ, որի նախագահն էր Մարիամ Խատիսյանը:

Այս գործում անգնահատելի էր հատկապես սահմանին մոտ գտնվող ԿՀԲԸ մասնաճյուղերի գործունեությունը: Իր եռանդուն գործունեությամբ առանձնապես աչքի ընկավ Կարսի մասնաճյուղը, որը հնարավորինս հարթեց սահմանն անցնողների առջև ծառայած խնդիրներից մեկը՝ պաշտոնական ձևակերպումները: Բացի դրանից, այն իր եռանդուն գործունեության շնորհիվ կարողացավ Արևմտյան Հայաստան փոխադրել շուրջ 10.000 փախստական<sup>1</sup>:

***Лилит Косян – Положение и приблизительное количество беженцев из Западной Армении в Карсской области в 1890-х гг.***

Армянское население Западной Армении, чудом спасшееся от погромной политики Абдул-Гамида II 1890-х гг., было разбросано по всему миру. Большое количество армянских караванов устремилось к Кавказскому наместничеству. Карсская область, находящаяся на границе, стала местом дислокации беженцев. Первоначально руку помощи беженцам направило местное население, однако они также находились в неудовлетворительном социально-экономическом положении, кроме того, число беженцев росло с каждым днем, и местные жители далее не могли помогать им и укрывать их. Задачу организации помощи беженцам взяло на себя Кавказское армянское благотворительное общество (КАБО), которое оказывало помощь беженцам, укрывшимся в Карсской области и окружающих селах при поддержке Карсского и Кагзванского филиалов. Наши исследования показали, что число беженцев в Карсской области составило 20.240. Уже в 1908 г., после младотурецкой революции, КАБО оказывало поддержку возврату беженцев любой ценой.

***Lilit Kosyan – The Condition of Western Armenian Refugees Sheltered in Kars Province and Their Approximate Number in the 1890s.***

In the 1890s, the Western Armenians having survived from the slaughtering policy of Abdul Hamid II were scattered all over the world. The dense caravans of Western Armenians started to move to the Caucasus Viceroyalty. Being on the boundary, Kars Province had become a gathering place for the Western Armenian refugees. Initially they were lent a helping hand by the local population, but they themselves were also in a very poor social-economic condition and besides, the number of the refugees was increasing day by day and the locals could no longer help the Western Armenian refugees and give them shelter. The problem of refugee relief organization focused in the hands of the Caucasian Armenian Benevolent Society (hereinafter CABS), which organized the help of refugees with the support of Kars and Kaghzvan branches. Our research showed that the number of those settled in Kars Province was more than 20.240. In 1908 already after the Young Turk Revolution, the CABS assisted the refugees in the problem of return at all costs.

---

<sup>1</sup> ԼԷՈ, նշվ. աշխ., էջ 302-303:

**ՀՈՎԻԿԻՄ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ «ԴԱՏՎԱՆ» ԱՆՏԻՊ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

*Բանալի բառեր – Առաջին աշխարհամարտ, Մեծ եղեռն, անտիպ հուշագրություն, Խլաթ, հայ զինվորություն, հայ բեռնակիրներ, ինքնապաշտպանություն, Արշակ Վռամյան, տեղահանություն և ջարդ, քրդական ցեղեր*

Մեծ եղեռնի հարյուրամյակի ոգեկոչման իրադարձությունների համապատկերի վրա հայ պատմագիտական միտքը մի կողմից արձանագրում է այն ձեռքբերումները, որոնց հասել է Հայոց ցեղասպանության բարդ ու տարողունակ հիմնախնդրի տարբեր ծալքեր վերհանելու ասպարեզում, իսկ մյուս կողմից ջանում է շրջանառության մեջ դնել Հայոց գողգոթայի իրական պատկերը համալրող և ամբողջացնող նոր վավերագրեր:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը թևակոխել է մի նոր փուլ, որի վկաներն ենք մենք այսօր: Օրակարգում անխուսափելիորեն դրվում է պահանջատիրության հիմնահարցը, որի հիման վրա, կարծում ենք, շատ ավելի լուրջ խնդիրներ են ծառանում միջազգային իրավունքի մասնագետների, տնտեսագետների, քաղաքագետների, հոգեբանների առջև:

Այնուհանդերձ, դա ամենևին չի նշանակում, թե հայ պատմաբաններն այլևս անելիքներ չունեն: Նրանք պարտավոր են ամբողջացնել Հայոց ցեղասպանությանը վերաբերող, բայց ստվերում մնացած առանձին հարցեր, համաշխարհային մամուլի էջերում ժամանակին տեղ գտած հրապարակումները, վերահրատարակել ժամանակին՝ դեպքերի թարմ տպավորությամբ հրատարակված, բայց միջազգային հանրությանը տակավին նվազ հայտնի վավերագրերը, իրականացնել պետական և անձնական արխիվների զգրոցներում պահվող, ցայսօր անտիպ վավերագրերի հրապարակումը և այլն:

Հատկապես կարևորում ենք անձնական արխիվներում պահվող վավերագրերի և հուշագրական բնույթի նյութերի հնարավորինս արագ հրապարակ բերումը, քանի որ իրական վտանգ կա, որ հաջորդ սերունդների կողմից դրանք պարզապես կարող են պատշաճ վերաբերմունքի չարժանանալ և որպես «ոչ պետքական թղթեր» դեն նետվել:

Հայոց ցեղասպանության ականատեսների ժառանգների մոտ պահվող և ցայսօր գիտական հանրությանն անձանոթ գործերից է Հովակիմ Շահբազյանի «Դատվան» խորագրով հուշագրությունը, որի հեղինակը ծնվել է Բիթլիսի վիլայեթի Խլաթ գավառի Շամիրամ գյուղում՝ տանուտեր Մուղսի Գրեի (Գրիգոր) 64-հոգանոց գերդաստանում: Հայրը՝ Գրեն, հայոց ազատա-

մարտի նվիրյալներից էր, բազմիցս ձերբակալվել է և նետվել Բիթլիսի բանտ, իսկ 1905-1908 թթ.՝ մինչև երիտթուրքերի 1908 թ. հուլիսյան հեղաշրջումը, շրթայակապ վիճակում գտնվել է Բարվարիի բանտում<sup>1</sup>: Հուշագրի հորեղբոր որդին հայտնի հայդուկ, ՀՅԴ նշանավոր գործիչ Աշոտ Երկաթի (Արմենակ Լևոնյան) զինակից, Սասունի 1904 թ. ապստամբության մասնակից, խմբապետ Սողոմն էր, որը, Անդրանիկի խմբի հետ անցնելով Վան, մի փոքր ուշ դարձել է Արամ Մանուկյանի թիկնապահը: Երիտթուրքական հեղաշրջումից հետո շատ հայդուկների նման Սողոմն նույնպես հաստատվել է հայրենի բնակավայրում և Խլաթ գավառում ծավալել եռանդուն գործունեություն դպրոցներ բացելու ուղղությամբ: Ինչպես ազատագրական շարժման գործիչներից շատերը, նա ևս դարձել է Մեծ եղեռնի զոհերից<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է «Դատվանի» հուշագրին, ապա նա անցել է բարդ ու հակասական ճանապարհ: Առաջին աշխարհամարտի սկզբին զորակոչվել է թուրքական բանակ, Սարիղամիշի ճակատամարտից հետո, երբ սկսվել է հայ զինվորության զինաթափումն ու ոչնչացումը, դարձել փախստական: Խլաթի հայության տեղահանության և բնաջնջման շրջանում նա կորցրել է հորը, կնոջը և գերդաստանի մեծ մասին: Հ. Շահբազյանը մեծ դժվարությամբ հատել է ռազմաճակատի գիծը, մասնակցել թուրքերի դեմ կռիվներին, իսկ ավելի ուշ ընդգրկվել գնդապետ Ս. Սամարցյանի գլխավորած հայկական երկրորդ գնդի, այնուհետև՝ Անդրանիկի Առանձին հայկական հարվածող զորամասի կազմում՝ որպես հարյուրապետ: Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում նա եղել է զորավար Սմբատի զինակիցը:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո ստանալով մասնագիտական կրթություն՝ Հ. Շահբազյանը աշխատանքի է անցել խորհրդային տնտեսության տարբեր կառույցներում, սակայն 1949 թ. հունիսին՝ բազմահազար հայերի հետ մեկտեղ արքտրվել Ալթայի երկրամաս: Օժտված լինելով գրելու ձիրքով՝ նա թողել է մի շարք անտիպ գործեր, որոնցից կարևոր է «Դատվան» հուշագրությունը:

Հ. Շահբազյանի հուշագրության բնագիրը շարադրված է աշակերտական մի քանի տետրերում՝ մանր, հիմնականում ընթեռնելի ձեռագրով: Առաջին տետրի մեծ մասը չի պահպանվել, բայց դրանից նրա աշխատանքն առանձնապես չի տուժել, քանի որ այն վերաբերվել է գերդաստանի պատմության

---

<sup>1</sup> Տե՛ս **Շահբազյան Հ.**, Դատվան, անտիպ հուշագրության համակարգչային շարվածք, էջ 54, 108: Հուշագրության ձեռագիր բնագիրը և մեր գրած առաջաբանով ու ընդարձակ ծանոթագրություններով համակարգչային շարվածքը (շուրջ 225 էջ) պահվում են հուշագրի որդու մոտ: Մենք ունենք դրա համակարգչային շարվածքի նախնական տեքստը, որը 185 էջ է: Հուշագրությունից մեր կատարած հղումներն արվում են հենց այդ օրինակից: Այսուհետև այս հուշագրությունից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջը:

<sup>2</sup> Տե՛ս Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ալբում-ատլաս, Ա. Հատոր, Լոս Անճելլոս, 1992, էջ 162:

վաղ շրջանին: Ձեռագիր տեքստը վերածվել է համակարգչային շարվածքի և համեմատվելով բնագրի հետ, խմբագրվել ու ծանոթագրվել է մեր կողմից, բայց ցայսօր չի հրատարակվել:

Ժամանակագրական և բովանդակային առումներով հուշագրությունը բաժանվում է երեք մասի, որոնք ամփոփում են մինչև Առաջին աշխարհամարտը, աշխարհամարտի սկզբից մինչև 1918 թ. մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի Առաջին Հանրապետության ժամանակաշրջանները:

Անհամեմատ հավաստի և արժեքավոր է հուշագրության երկրորդ մասը, որն ընդգրկում է շարադրանքի կեսից ավելին: Ձերձ չլինելով հուշագրություններին բնորոշ որոշ թերություններից՝ սուբյեկտիվիզմից, ժամանակագրական ու փաստական բնույթի աղավաղումներից, որոնք հատկապես նկատելի են շարադրանքի առաջին և վերջին մասերում, Հ. Շահբազյանի հուշագրությունը, այնուհանդերձ, հնարավորություն է ընձեռում պարզաբանել Մեծ եղեռնի հետ կապված որոշ հարցեր և կատարել մի քանի կարևոր ճշգրտումներ:

Հուշագրությունն առաջին հերթին արժեքավոր տեղեկություն է պարունակում թուրքական բանակ զորակոչված հայ զինվորականների ճակատագրի մասին: Պատերազմի սկզբում ենթարկվելով զորակոչի և ծառայելով էրզրումում՝ Հ. Շահբազյանը հավաստի փաստեր է ներկայացնում հայ սպաների պաշտոնանկության, զինվորների զինաթափման ու աշխատանքային գումարտակներում ընդգրկվելու և ընդհանրապես կոլոդ ու աշխատունակ հայկական ուժի ոչնչացման մասին: Նրա վկայությամբ այդ գործընթացը սկսվում է Սարիղամիշում թուրքական բանակի պարտությունից հետո և լայն թափ ստանում հետագա ամիսներին (էջ 83-84, 86-95):

Ահա թե ինչ է գրում հուշագիրը տեղի ունեցածի մասին. «Թուրքական կառավարությունը վաղուց էր իր որոշումն իրականացրել: Բոլոր հայ զինվորականները զինաթափվել և քշվել էին աշխատավորական գումարտակներ: Այդ գումարտակներից կազմում էին 10 մարդուց բաղկացած խմբեր, նրանց բեռնում էին գրաստների նման, յուրաքանչյուրին 3 փթի չափ և թուրքական կոլոդ բանակին զինամթերք և սննդամթերք էին տեղափոխում: Հայ բեռնակիրները աշխատում էին թուրք զինվորների հսկողության տակ և օրական պետք է անցնեին 30-40 կիլոմետր տարածություն: Այս տանջանքներից բեռնակիրները հյուժվել, կմախքի նման էին դարձել: Շատերը ուժասպառ լինելով ճանապարհին ընկնում էին: Ընկածներին թուրք զինվորները ոչնչացնում էին, իսկ նրանց բեռը բաժանում մյուսների վրա» (էջ 94-95):

Շարունակելով ասելիքը՝ հուշագիրն ամբողջացնում է վերը բերված պատկերը՝ նկարագրելով թիկունքում մնացած հայ տղամարդկանց նկատմամբ կիրառված նույնանման քաղաքականությունը. «Նույն վիճակն էր նաև թիկունքի հայ գյուղացիների և քաղաքացիների նկատմամբ: Օրինակ, Բիթլիսից և շրջակա գյուղերից բանակ չգնացող հայերից, որոնք կարող էին աշխատել, հավաքել էին հարյուրյակներով, ամեն մեկին տվել էին մի պարկ

և պարան, նույնպես բեռնում էին երեք փթի չափ ցորեն կամ այլուր, որը նրանք պիտի տանեին մինչև Կոփ գյուղաքաղաքը, որը Բիթլիսից հեռու էր 115 կիլոմետր: Այս ճանապարհը բեռնակիրները պիտի անցնեին երեք օրում: Բեռնակիրների մեկ այլ խումբ այդ բեռը Կոփից տանում էր մինչև Մանազկերտ, իսկ այնտեղից էլ մինչև Մնջան և պարենը հանձնում էին բանակին: Թուրք կառավարությունը հայերին հավաքեց որպես բեռնակիրներ, իսկ քուրդ և թուրք գյուղացիներից կամավոր հիմունքներով ջոկատներ էր կազմում, մի երկու շաբաթ տեղերում վարժեցնում էին և ուղարկում պահակախմբեր, որոնց հսկողության տակ աշխատում էին հայ բեռնակիրները:

Մեր գյուղից երևում էր այն ճանապարհը, որով անցնում էին հայ բեռնակիրների քարավանները: Պարզ եղանակի դեպքում Ռավա կոչվող հարթավայրում, որը շուրջ 25 կմ երկարություն ունի և ընկած է Գրգուտ սարի և Հայկական պարի ստորոտներում, բեռնակիրների շարքը սև ժապավենի նման ձգվում էր ամբողջ հարթավայրով: Հեռվից թվում էր, թե այդ սև ժապավենն անշարժ կանգնած է, այնինչ շարքն անընդհատ շարժման մեջ էր և մարդիկ շարժվում էին իրարից չկտրվելով, և այսպես գիշեր ու ցերեկ անվերջ: Բիթլիսից մինչև Կոփ ճանապարհի մոտիկ գյուղերը բոլորը հայկական էին: Եվ այս գյուղերի տղամարդկանց արդեն հավաքել տարել էին: Գյուղերում մնացել էին կանայք, երեխաներ և գործին ոչ պիտանի ծերունիներ» (էջ 95):

Հուշագրության երկրորդ արժանիքն այն է, որ այն եզակի աղբյուրներից է, որում ակնատեսը նկարագրում է Խլաթ գավառի հայկական բնակավայրերի (Դատվան, Շամիրամ, Սոխորդ և այլն) ավերման ու կողոպտման, բնակչության տեղահանության ու ջարդի ահասարսուռ պատկերները: Ներկայացնելով ռուսական բանակի հարձակման հետևանքով նահանջող քրդական ցեղերի՝ հայերի հանդեպ բացասական դերակատարությունը՝ հուշագիրը գրում է. «Մարտի վերջերին ռուսական բանակն ամբողջ ճակատով սկսեց առաջ շարժվել և գրավեց Մանազկերտը, Արճեշը, Բերկրին, Խնուսա բերդը... Քրդերը նահանջում էին դեպի արևմուտք, ամեն մեկն իր ուղղությամբ: Հասնանցի և սրմակցի ցեղերը Կոթից ներքև Բուլանուխով Եփրատի աջ կողմից մինչև Բլիջանա սար և Նեմրութի ստորոտները բռնած՝ ավերելով, կոտորելով գնում էին դեպի Մուշ և Սշո դաշտ: Իսկ հայդարանցի ցեղերը, 30 հազար տնտեսություն, Լաթարից մինչև Ալջավազ բռնած Սիփան սարի երկու կողմով հրի ու սրի մատնելով անգեն հայերին, փախչելով հասնում են Ախլաթ... Քրդերը, տեսնելով, որ ռուսները Կոփից և Լաթարից առաջ չեն շարժվել, նստում են Ախլաթի գյուղերը և ծրագրով սկսում են կոտորել մնացած գյուղերը: Քուրդ քոչվորները նստում են ամբողջ Ախլաթի գավառը և նրանց առաջացող քոչերը արդեն հասել և նստել էին Բիթլիսի ճանապարհի Հոավա կոչվող դաշտավայրում և շրջակա դաշտերում մինչև լեռների ստորոտները: Երբ գիշերը նայում էիր նրանց վառած խարույկներին, կարծես անլուսին գիշերվա աստղեր լինեին: Նրանք այնքան շատ էին, որ նույնիսկ տեղանքին ծանոթ մարդը դաշտերով չէր կարող փախչել՝

նրանցից ազատվել: Նրանք սկսում են կոտորել Ախլաթի շրջանի բոլոր գյուղերը» (էջ 102-103):

Հ. Շահբազյանը անդրադառնում է Դատվանի ջարդերից հետո Բիթլիսում հավաքված Խլաթի և շրջակա գավառների հայ կանանց և երեխաների բնաջնջմանը, որն իրականացրել է Բիթլիսի կուսակալ նշանակված Ջևդեթը: Տարագիր հայերի 3000 հոգուց բաղկացած առաջին քարավանը Ջևդեթի հրամանով Սոսկանի քրդերի կողմից ոչնչացվում է Բիթլիսից Սդերդ տանող ճանապարհին՝ Ծակքար կոչվող վայրում: Ըստ հուշագրի վկայության՝ տեղյակ լինելով կատարվածին և համոզված, որ իրենց նույն ճակատագիրն է սպասում, երկրորդ քարավանի կազմում ընդգրկված կանայք դիմում են հուսահատ, բայց հերոսական քայլի: Բիթլիսից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Արաբու կամրջի մոտ մի փոքր հանգստանալուց հետո, երբ քարավանը շարժվելու հրահանգ է ստանում, իւլաթցի երիտասարդ կանանցից երկուսը գրկում են իրենց կրծքի երեխաներին, մոտենում կամրջի եզրին և բարձր ձայնով գոռում. «Իր պատիվը հարգող հայ կանայք, հետևեք մեզ, մեկ է, մեզ անարգելուց հետո պիտի կոտորեն, ուրեմն մեռնենք առանց անպատիվ լինելու»: Նրանք նետվում են գետի հորձանուտի մեջ: Մի քանի րոպեի ընթացքում քարավանի գրեթե կեսը՝ շուրջ երկու հազար կանայք և աղջիկներ, կամրջից նետվում են գետը և խեղդվում: Նրանց դիակները կուտակվում են կամրջի տակ և ահռելի գետը փոխում է իր ընթացքը: Հայ կանանց այդ հերոսական արարքը մեծ տպավորություն է թողնում: Ջևդեթը որոշ ժամանակով դադարեցնում է կանանց աքսորը, իսկ հետո նրանց սկսում աքսորել փոքր խմբերով և ուժեղացված պահակախմբերով (էջ 118-119):

Հուշագրության մեջ կարևոր վկայություն է պահպանվել Խլաթի հայությանը փրկելու նպատակով նախ թուրքական բանակը դասալքած զինվորներին ու զենք կրելու ընդունակ երիտասարդներին, ապա՝ հարկ եղած դեպքում, հայկական գյուղերի ամբողջ բնակչությանը Նեմրութ լեռան խառնարանի լճերի շրջան փոխադրելու և ինքնապաշտպանության դիմելու ծրագրի գոյության մասին: Վերջինս հղացել էր խմբապետ Սողոմ, որն այդ հարցով դիմել էր մյուս գյուղերի երևելի անձանց: Ցավոք, այդ նախաձեռնությունը համապատասխան արձագանք չի գտել և ձախողվել է (էջ 118-119): Այդուհանդերձ, հուշագրությունը ներկայացնում է Մեծ եղեռնի՝ առ այսօր անհայտ հերոսապատումի մի դրվագ՝ Խլաթի տարբեր գյուղերից Նեմրութի խառնարանում ապաստանած ավելի քան 325 հայերի՝ մոտ քսան օր տևած մաքառման, նրանցից շուրջ 300-ի ազատվելու, ռազմաճակատի զիծը հաջողությամբ հատելու և ռուսական բանակին միանալու պատմությունը (էջ 109-111, 113-117, 119-125):

«Դատվան» հուշագրության մյուս արժանիքն այն է, որ ներառում է այլ սկզբնաղբյուրներում բացակայող արժեքավոր տեղեկություն որոշ դեպքերի և անձանց մասին: Որպես կանոն, հայ մտավորական ու կազմակերպող ուժի ոչնչացման թուրքական քաղաքականությունը ներկայացվում է Կ. Պոլսի



մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների աքաղաղի և ոչնչացման օրինակով: Փոխարենը քիչ է գրվել գավառներում հեղինակություն վայելող գործիչների չեզոքացման ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած քայլերի մասին: Մինչդեռ Հ. Շահբազյանը հավաստի տեղեկություններ է հաղորդում ազատագրական պայքարի աչքի ընկնող գործիչներ, օսմանյան խորհրդարանի պատգամավոր Արշակ Վռամյանի (Օննիկ Դերձակյան), հայդուկներ Փալաբեխ Կարապետի և շամիրամցի Մողոյի գոհվելու հանգամանքների մասին:

Կասկած չի հարուցում, որ Վանի կուսակալ Ջևդեթի կողմից ազատագրական պայքարի նշանավոր գործիչ Իշխանի (Նիկողայոս Պողոսյան) ու նրա ընկերների սպանության կազմակերպումը Հիրճում և Ա. Վռամյանի դավադիր ձեռքարկությունը Վանում դարձան վճռորոշ ազդակներ հայերի ինքնապաշտպանության համար: Աղբյուրներում և պատմագիտական գրականության մեջ չկա միանշանակ ու սպառիչ պատասխան այն հարցին, թե, ի վերջո, ինչ ճակատագիր ունեցավ Ա. Վռամյանը: ՀՅԴ հրատարակություններում, որպես պատասխան, կարդում ենք լակոնիկ ձևակերպումներ այն ոգով, որ նա «Վանի մեջ զոհ կ'երթայ Ճեւտէթի սարքած դաւադրութեան»<sup>1</sup>, կամ թե՛ «...Վռամեանը ձեռքարկուեց ու անհետ չքացաւ...»<sup>2</sup>: Ավելի որոշակի է գերմանական վավերագրերի հիման վրա Յոհ. Լեփսիուսի տված հետևյալ տեղեկատվությունը. «Մինչ Վանում կիմանային այդ նենգ սպանության մասին (Իշխանի և նրա ընկերների – Հ. Գ.), վալի Ջևդեթ բեյն իր մոտ կանչել տվեց մյուս երկու հայ առաջնորդներին՝ Վռամյանին ու Արամին: Արամը պատահաբար բացակայում էր: Վռամյանը, ոչինչ չկասկածելով, գնում է վալիի մոտ և հենց որ մտնում է կառավարական շենքը, ձեռքարկուվում է: Վալին նրան շղթայակապ Բիթլիսով Դիարբեքի է ուղարկում: Ճանապարհին նրան սպանում են»<sup>3</sup>: Հավանաբար Յոհ. Լեփսիուսի վերը բերված տեղեկատվության համար հիմք է ծառայել Ա. Վռամյանին մահապատժի ենթարկելու նպատակով Կ. Պոլիս բերելու լուրերի վերաբերյալ 1915 թ. հուլիսի 5-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանատան կողմից Բեռլին ուղարկված ծանուցումը, որում նշվում էր, որ «...Վռամյանը ձեռքարկուվել էր մեկուկես ամիս առաջ և հեռացվել Վանից, երբ Վանը դեռ թուրքերի ձեռքում էր ու փոխադրման ժամանակ սպանվել Բիթլիսում»<sup>4</sup>:

Որոշ փակագծեր բացելով հանդերձ՝ գերմանական վավերագրերն այնուհանդերձ սպառիչ պատասխան չեն տալիս հարցին: Ա. Վռամյանին բա-

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 79:

<sup>2</sup> **Աստուածատրեան Ա.**, Արամը, տե՛ս «Արամը», Մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 73:

<sup>3</sup> Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. 1, Հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2006, էջ 23:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 207:

ժին հասած ճակատագրի վերաբերյալ բացառիկ տեղեկություն է տալիս Ն. Շահբազյանը: Նկատի ունենալով հղվող նյութի կարևորությունը՝ այն ներկայացնում ենք ամբողջությամբ: «Մարտի վերջին (1915 թ. – չ. Գ.),– գրում է նա,– Դատվան գյուղի քահանա տեր Արմենակը, որը հայ ազատագրական շարժման կողմնակից և ակտիվ մասնակից էր, գիշերը սուրհանդակ էր ուղարկել և հայտնել, որ Վանում Ջևղեթ փաշան Վռամյանին կանչել էր խորհրդակցելու համար և բանտարկել էր ու մոտորնի նավակով ուղարկել ուշ երեկոյան ժամանակ: Ես նրան տեսա. 20-ից ավել պահակախմբի հսկողությամբ նրան տարան կոռոտուն: Երեկոյան ստույգ իմացանք, որ նա կմնա այստեղ մինչև Բիթլիսից գորք կուղարկեն ապահով տեղափոխելու համար: Նույն օրը կես մետրից ավել ձյուն էր եկել և Բիթլիսից եկող գորքը, շուրջ 500 հոգի, ճանապարհ բանալով գնում էր Դատվան: Մենք Սողոյի գլխավորությամբ, 15 հոգի՝ զինված զանազան տեսակի զենքերով, մոտեցել էինք ճանապարհին և սպասում էինք առիթի Վռամյանին ազատելու համար: Բայց Բիթլիսից եկող գորքի մի մասը սպասեց Կարմրողեր կոչվող բարձունքի մոտ և հսկում էր շրջապատը: Նրանք ենթադրել էին, որ մենք շատ ուժ կունենանք և կովով կազատենք նրան: Ցերեկվա ժամը 11-ին մոտ Դատվանի կողմից գորքը հետ վերադարձավ, եկավ Կարմրողերով անցավ: Նրանց անցնելուց հետո այնտեղ դիրք բռնած գորքը նրանց հետևից նույնպես գնաց դեպի Բիթլիս: Մինչև մութն ընկնելը մենք մնացինք անշարժ մեր տեղում, գիշերը վերադարձանք գյուղ: Գյուղը չէր քնել և սպասում էր մեր վերադարձին: Գյուղի ժողովուրդը մինչ այդ էլ զգում էր իր օրհասական վիճակը, այս օրվանից նա համոզվեց, որ արդեն փրկություն չկա իրեն...»

Վռամյանին տարան Բիթլիս և սկզբնական շրջանում նրա վիճակից ոչ ոք տեղեկություն չունեց: Հետո իմացանք, որ նրան *Բիթլիսից դեպի Սղերդ տանող ճանապարհին, Ծակքար կոչվող վայրում կապել են ծառից և թնդանոթով խփել են* (ընդգծումը մերն է – չ. Գ.): Մա ինձ պատմել է Բիթլիսի շրջանի Ջլկան գյուղից Նշան Ասատրյանը: Վռամյանի բանտարկության լուրը և նրան Վանից անմիջապես և ուժեղ պահակախմբով Բիթլիս ուղարկելը ցնցեց բոլոր հայերիս: Հայերի կասկածն այն մասին, որ թուրքական կառավարությունը իթթիհատական կուսակցության գլխավորությամբ ոչնչացնելու է հայ ժողովրդին [հաստատվեց]» (էջ 100-101):

Ճշգրտումներ անելու հնարավորություն է տալիս նաև հուշագրության այն հատվածը, որտեղ ներկայացվում են շամիրամցի հայդուկ Սողոյի նահատակվելու հանգամանքները: ՀՅԴ 100-ամյակին նվիրված «Հուշամատյանում» այդ մասին հակիրճ արձանագրված է. «Եղեռնին դաւադրաբար կը սպանուի թուրքերու կողմէ, Ախլաթի մէջ»<sup>1</sup>: Հուշագրությունը էապես խմբագրում է այդ խիստ կցկտուր տեղեկությունը և մանրամասնորեն տալիս

---

<sup>1</sup> Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, էջ 162:

հայտնի հայդուկի զոհվելու իրական հանգամանքները:

Ա. Վռամյանին ազատելու և Խլաթի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու ձախողված փորձերից հետո Սողոմ, իր կամքից անկախ, Շամիրամի վրա հարձակված քրդերի ձեռքը չընկնելու համար ստիպված էր առանց զենքի հանգրվանել Դատվանում: Թուրք մյուղիբը նրա նկատմամբ առերևույթ հարգանք էր ցուցաբերում և նրան ու Խլաթի տարբեր գյուղերից այստեղ հավաքված հազարավոր հայերի, հիմնականում կանանց ու երեխաների, որոշ ժամանակ պաշտպանեց քրդերի ոտնձգություններից: Բայց 1915 թ. մայիսի կեսերին, ռուսական զորքերի հարձակմանը դիմակայել չկարողանալով ու նահանջելով, Դատվան է հասնում հայդարանցի քուրդ ցեղապետ Քոռ Հուսեյին փաշան իր աշիբերով: Հայաստյաց այս ցեղապետը, որի ձեռքերը թաթախված էին հազարավոր հայերի արյունով, վաղուց ատելությամբ էր լցված Սողոմի նկատմամբ: Բանն այն է, որ դեռևս 1906 թ. Վանի ՀՅԴ կառույցի հանձնարարությամբ Սողոմն օգնել էր հայոց ազատամարտին օժանդակող հայդարանցի քուրդ ցեղապետեր Էմին փաշային և նրա կրտսեր եղբայր Ալիբեկին՝ Քոռ Հուսեյին փաշայի դեմ կռվում, որի ժամանակ Քոռ Հուսեյինը պարտվել էր, իսկ նրա ցեղի շատ թոռուններ զոհվել էին: Քոռ Հուսեյինը տեղի ունեցածի գլխավոր մեղավոր համարում էր Սողոմին և ձգտում էր վրեժխնդիր լինել: Դատվանում իր ձեռքը զցելով Սողոմին՝ Քոռ Հուսեյին փաշան նրան և ուրիշ շատ հայ տղամարդկանց սպանում է ու նետում ցորենի հորերը: Դրանից հետո Դատվանում ապաստանած հազարավոր կանանց և երեխաներին քշում են Բիթլիս (էջ 104, 114-115):

Հովակիմ Շահբազյանի հուշագրությունը հնարավորություն է ընձեռում կողմնորոշվելու մեր ժողովրդի պատմության ամենատղբերգական շրջանի մասին հետաքրքրություն ներկայացնող այլ մանրամասներում ևս՝ նկարագրված ակնատեսի, հաճախ դեպքերի մասնակցի կողմից: Այդ հանգամանքը, ինչպես նաև վերոշարադրյալ նյութը հիմք են տալիս կատարել հետևյալ եզրահանգումը. «Դատվան» հուշագրությունը Մեծ եղեռնի կարևոր սկզբնաղբյուրներից է, որը ոչ միայն օժանդակում է 1914-1916 թթ. Խլաթ գավառում տեղի ունեցած շատ իրադարձությունների էական մանրամասների բացահայտմանը, այլև թույլ է տալիս ավելի առարկայորեն ընկալել Հայոց ցեղասպանության իրականացման թուրքական մեխանիզմի մի շարք կողմեր: Կարծում ենք, թե՛ մեկ և թե՛ մյուս առումներով հուշագրության հրատարակությունն օգտակար կլինի Մեծ եղեռնի խնդիրներով զբաղվող հետազոտողների համար:

### **Овик Григорян – *Неопубликованные воспоминания Овакима Шахбазяна “Датван”***

В статье проводится анализ и оценка значимости не опубликованных ранее и до сих пор неизвестных научной общественности воспоминаний пережившего Геноцид армян Овакима Шахбазяна – «Датван». Приведенные из «Датван» развернутые цитаты доказывают, что это источник, представляющий собой большой интерес по вопросу Геноцида армян, который позволяет выявить не только все еще неизвестные страницы разгрома армянских поселений провинции Хлат, погромов и депортаций их армянского населения, но и самообороны армян, разъяснить истинные обстоятельства гибели ряда видных деятелей армянской освободительной борьбы, но также позволяет более конкретно осознать определенные грани турецкого механизма осуществления Геноцида армян.

### **Hovik Grigoryan – *Hovakim Shahbazyan’s Unpublished Memoirs “Datvan”***

The article is an analysis and assessment of the Genocide survivor Hovakim Shahbazyan’s unpublished memoirs “Datvan”, which is still unknown to the scientific society. The detailed references brought from there show that it is a source of great importance on the Armenian Genocide, which not only reveals the destruction of the Armenian settlements in Khlat province, the massacres and deportation of the Armenian population, the unknown pages of Armenian self-defence, although not massive, explains the true circumstances of the martyrdom of a number of prominent figures of the Armenian National Liberation movement, but also allows to more substantially understand certain facets of the Turkish implementation mechanism of the Armenian Genocide.

ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II-Ը ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

*Բանալի բառեր* – Օսմանյան կայսրություն, թուրքական պատմագրություն, «կարմիր սուլթան», հայերի կոտորածներ, Աբդուլ Համիդ II-ի հուշեր, կեղծարարություն, խոսվածքներ

Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ պատմական տարբեր ժամանակաշրջաններում իրականացված ոճրագործությունների ուսումնասիրության հարցում մեծապես կարևորվում են ոչ միայն օտարագրի դիվանագետների, միսիոներների և ակնաստեսների վկայությունները, այլև պետական, քաղաքական և հասարակական թուրք գործիչների, առավել ևս հայերի տեղահանություններին և կոտորածներին առնչվող հրամաններն արձակած բարձրաստիճան պաշտոնյաների հուշերը: Թուրքիայում վերջին տասնամյակներում բազմիցս հրատարակվել են ինչպես Թալեաթի<sup>1</sup>, Ջեմալի<sup>2</sup>, Էնվերի<sup>3</sup>, այնպես էլ սուլթան Աբդուլ Համիդ II-ի<sup>4</sup> հուշագրությունները:

Սույն հոդվածում քննության կենթարկենք Աբդուլ Համիդ II-ի հուշերը, որոնցում նա թեև խիստ սահմանափակ անդրադարձներ է կատարել հայերին վերաբերող խնդիրներին, այնուամենայնիվ փորձել է պատմական իրականությունը ներկայացնել որպես հայերի ներքին խնդիրներ՝ դրանով իսկ քողարկելով իր վարած քաղաքականության, հատկապես հայերի նկատմամբ իրականացրած հանցագործությունների բուն էությունը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ սուլթանի օրագրային գրառումների վերաբերյալ թուրքական պատմագրության մեջ կան լուրջ տարակարծություններ: Այդ հարցին անդրադարձել է հայտնի պատմաբան, 2008-2011 թթ. Թուրքական պատմագիտական ընկերության նախագահ Ալի Բիրինջին, որը 2005 թ. «Սուլթան Աբդուլ Համիդի հուշագրությունները» գրքի վերաբերյալ հրատարակել է բուռն քննարկումների տեղիք տված մի հոդված<sup>5</sup>: Հեղինակը պնդում է, որ տարբեր վերնագրերով բազմիցս հրատարակված<sup>6</sup>, փոփոխու-

<sup>1</sup> Տե՛ս **Murat Bardakçı**, Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, İstanbul, 2008:

<sup>2</sup> Տե՛ս **Alpay Kabacalı**, Hatıralar Cemal Paşa, İstanbul, 2001:

<sup>3</sup> Տե՛ս **Halil Erdoğan Cengiz**, Enver Paşa'nın Anıları (1881-1908), İstanbul, 1991:

<sup>4</sup> Տե՛ս **İsmet Bozdağ**, Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, İstanbul, 1985:

<sup>5</sup> Տե՛ս **Ali Birinci**, Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, DİVÂN İlimi Araştırmaları, sy. 19 (2005/2), s. 177-194:

<sup>6</sup> «Hâtîrât-ı Abdülhamit Han-ı Sâni» («Աբդուլ Համիդ II-ի հուշերը»), «Abdülhamid Anlatıyor» («Աբդուլ Համիդը պատմում է»), «Hâtîrat» («Հիշողություններ»), «Abdülhamid'in Hatıra Defteri»

թյուններ կրած և խմբագրված այս գիրքը իրականում Աբդուլ Համիդի գրչին չի պատկանում, այլ պարզապես վերագրվել է նրան: Ըստ նրա՝ հուշերի մի մասը գրել է թուրք պետական գործիչ և գրող Մուլեյման Նազիֆը, իսկ մյուս մասը՝ գիրքը հրատարակության պատրաստած Իսմեթ Բոզդաղը: Շրջանառվում է այն տեսակետը, որ Մուլեյման Նազիֆը խնդիրներ է ունեցել իթթիհադականների հետ, որոնք փորձում էին քննադատել սուլթանի գործունեությունը, նսեմացնել նրան, ուստի նա ձեռնամուխ է եղել Աբդուլ Համիդ II-ի անունով հուշերի շարադրմանը՝ փորձելով հակադարձել իթթիհադականների գործելառճին<sup>1</sup>: Պատմաբանը մի կարևոր նկատառում է անում. հուշերում առկա բառապաշարը չի համապատասխանում այն ժամանակվա խոսակցական կամ գրավոր լեզվին, դեռ ավելին՝ այն շատ ավելի մոտ է ժամանակակից թուրքերենի գրավոր և խոսակցական ոճին<sup>2</sup>: Մինևույն կարծիքն է հայտնում նաև թուրք պատմաբան և իրավաբան Էքրեմ Բուդրա Էքինջին՝ ընդգծելով, որ Օսմանյան կայսրությունում ընդունված չի եղել, որ սուլթանները հուշեր գրեն<sup>3</sup>: Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված մի շարք գիտական աշխատանքների հեղինակ Էնգին Դենիզ Աքարլըն ևս կարծում է, որ Աբդուլ Համիդին վերագրվող հուշագրությունները իրականում նրա գրչին չեն պատկանում<sup>4</sup>: Գրող Աբդուլհամիդ Քըրմըզըն նույնպես համոզված է դրանում, քանի որ կառավարման ընթացքում նա հավանաբար ժամանակ չէր ունենա դրանք գրելու, իսկ 1909 թ. Մալունիկ արքայով ճակատակցի սուլթանին իթթիհադականները կարգելեին թղթին հանձնել իր հուշերը, որոնցում կարող էին տեղ գտնել նաև իթթիհադականների գործունեությանը վերաբերող բացասական մտքեր<sup>5</sup>:

Դեռևս 1913 թ. հասարակական-քաղաքական, պետական գործիչ, ՀՅԴ անդամ Արշակ Ջամալյանը (Իսահակյանը, 1882-1940) Թիֆլիսի «Հորիզոն» թերթում հրատարակել է «Աբդուլ Համիդի հուշերը» խորագրով հոդվածաշար<sup>6</sup>: Մակայն նա հոդվածները թարգմանել է ոչ թե գերմաներեն բնագրից, այլ Փարիզում հրատարակվող ֆրանսիական «Տան» թերթից: Հետագայում ապացուցվել է, որ Աբդուլ Համիդ II-ի հուշերը «Nord und Süd» գերմանական պարբերաթերթում հրատարակվել են 1913 թ. փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին, սակայն Ջամալյանի թարգմանությամբ մեզ է հասել

(«Աբդուլ Համիդի հուշագրությունները»), «Sultan Abdülhamid'in Hatıra Defteri» («Սուլթան Աբդուլ Համիդի հուշագրությունները»):

<sup>1</sup> Տե՛ս **Ali Birinci**, նշվ. աշխ., էջ 185:

<sup>2</sup> [http://www.dailymotion.com/video/x1j0kqn\\_sultan-abdulhamid-in-uydurma-hatira-defterleri\\_school](http://www.dailymotion.com/video/x1j0kqn_sultan-abdulhamid-in-uydurma-hatira-defterleri_school)

<sup>3</sup> Տե՛ս **Ekrem Buğra Ekinci**, Osmanlı'nın Çöküşü, İstanbul, 2014, s. 48:

<sup>4</sup> Այդ մասին տե՛ս **Ali Birinci**, նշվ. աշխ., էջ 187:

<sup>5</sup> Տե՛ս **Abdülhamid Kırmızı**, Sultan II. Abdülhamid İmparatorluğun Son Nefesi, II. Abdülhamid Modernleşme Sürecinde İstanbul, İstanbul, 2011, s. 23:

<sup>6</sup> Աբդուլ Համիդի յիշողությունները // «Հորիզոն», 1913, 21, 23, 24, 27 փետրվար, թիվ 41-44:

գերմանական պարբերաթերթում հոդվածաշարի՝ միայն մեկ ամսում լույս տեսած մասը<sup>1</sup>: 1926 թ. այս երեք հոդվածները թարգմանաբար հրատարակել է նաև Օսմանյան պատմագիտական ընկերությունը: Իսկ «Ենի Սաբահ» թերթը 1949 թ. նոյեմբերին ձեռնարկել է այս հոդվածների վերահրատարակությունը (9 և 10 համարներում), սակայն քննադատությունների և բողոքների պատճառով ստիպված է եղել դադարեցնել, քանի որ կասկածի տակ էր դրվում հուշերն Աբդուլ Համիդին պատկանելու հարցը: Այնուամենայնիվ, հուշերի իրական լինելու հանգամանքը կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ հուշագրության առանձին հատվածներ գերմանական նշված պարբերաթերթում լույս են տեսել 1913 թ., մինչդեռ սուլթանը մահացել է 1918 թ.: Այս պարագայում ինչպե՞ս է կարելի բացատրել Աբդուլ Համիդի լռությունը: Վերջինս, անշուշտ, կարդացել է դրանք և կարող էր հերքել իր գրչին պատկանելը:

Թուրքական պատմագրության մեջ նկատելի են Աբդուլ Համիդի II-ի կերպարի լուսաբանման տարբեր մոտեցումներ: Նրա հուշագրությունների շուրջ թուրք պատմաբանների միջև ծավալված վիճահարույց քննարկումները ցույց են տալիս, որ Աբդուլ Համիդի գործունեությունը միանշանակ չի ընկալվել թե՛ հասարակության և թե՛ գիտական շրջաններում: Ամեն դեպքում սուլթանի՝ իբրև հեղինակի մասին կասկածները նպաստել են դրանց նկատմամբ մեծ հետաքրքրության աճին:

Ուսումնասիրելով քննարկվող հուշագրությունը՝ մենք փորձել ենք ներկայացնել դրանում տեղ գտած պատմագիտական տեսանկյունից կարևոր և հետաքրքրություն ներկայացնող այն հատվածները, որոնք առնչվում են հատկապես Հայկական հարցին և կոտորածներին, Օսմանյան կայսրությունում հայերի կյանքին ու կարգավիճակին, ինչպես նաև սուլթանի հրամանով նրանց «խռովությունները» ճնշելուն:

Աբդուլ Համիդը իր հուշերը սկսել է գրի առնել Ստամբուլի Բեյլերբեյ պալատում տնային կալանքի ժամանակ: Գրքի՝ «Հուշեր գրելու պատճառը» բաժնում նա նշում է հետևյալը. «Իմ կառավարման 33 տարիների ընթացքում կայսրությունում տեղի են ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնց մասին միայն ես գիտեմ և ինձ շրջապատող մի քանի մարդիկ: Եվ եթե այդ մասին ես չգրեմ, և նրանք էլ չպատմեն, ապա այդ իրադարձությունները պատմությանն անհայտ կմնան... գտնում եմ, որ իմ հիշողությունները ոչ միայն իմն են, այլև պատմությանը»<sup>2</sup>:

Աբդուլ Համիդի մտքերը սկզբնական շրջանում գրի է առել Ալի Մուհսին անունով մի պալատական գրագիր, սակայն ռամագանի ժամանակ աշխատանքները դադարեցվել են, և, ինչպես նշում է նախկին սուլթանը, իրենք այ-

<sup>1</sup> Տե՛ս **Եազըճեան Գ.**, Ապտիլ Համիտ Բ. կարմիր սուլթանը, Պեյրուք, 1980, էջ 810-836:

<sup>2</sup> **İsmet Bozdağ**, նշվ. աշխ., էջ 141:

դուհետ այլևս չեն հանդիպել: Միայն որոշ ժամանակ անց որդու՝ Աբդու-ռահիմի միջոցով նա տեղեկացել է, որ Մուհսին բեյին բանտարկել են պալատի նկուղում: Աբդուլ Համիդի դուստր Այշե Օսմանօղլուն ևս, իր հուշերում անդրադառնալով այս թեմային, նշում է, որ Մուհսին բեյի բանտարկության պատճառը եղել է իր հոր հուշերը գրի առնելը<sup>1</sup>: Թուրք գրող Դանիշմենդը գրում է, թե իբր Աբդուլ Համիդի աղջիկներից Այշե սուլթանուհին տեսել է, որ իր հայրը գրության տրցակը հանձնել է փաշաներից մեկին հրատարակության նպատակով<sup>2</sup>:

Իսմեթ Բոզդաղը, ներկայացնելով սուլթանի հուշերը գտնելու պատմությունը, նշում է, որ 1944 թ. աշնանը Բուրսայի Բոզդաղ գրախանություն է ձեռք բերել հուշագրությունը, որի վրա մատիտով գրեթե անընթեռնելի գրված է եղել, որ դրանք պատկանում են Աբդուլ Համիդ II-ին: Հուշերի մասին տեղեկացնելով որոշ պատմաբանների՝ նա պարզել է, որ Աբդուլ Համիդի օրագրային որոշ գրառումներ լույս են տեսել դեռևս 1919 թ. Լայպցիգում հրատարակվող «Ութարիթ» ամսագրում: Ձեռնամուխ լինելով Աբդուլ Համիդի հուշերի ամբողջական հրատարակությանը՝ նա փնտրել և Գերմանիայում գտել է դրանց ամբողջական տարբերակը և այն լույս ընծայել<sup>3</sup>: Առաջաբանում, որը գրել է «Փընար» հրատարակչությունը, նշվում է, որ այս գիրքը պետք չէ համարել Աբդուլ Համիդին սատարող քայլ, այլ այն պարզապես շատ կարևոր սկզբնաղբյուր է տվյալ ժամանակաշրջանի օսմանյան պատմության լիարժեք և օբյեկտիվ ուսումնասիրության համար<sup>4</sup>:

Փորձելով արդարացնել Աբդուլ Համիդի վարած քաղաքականությունը՝ հուշերի խմբագիր Ի. Բոզդաղը գրքի վերջում սուլթանին գովերգող որոշ գրառումներ է կատարել: Դրանով նա փորձել է ապացուցել, որ Աբդուլ Համիդի վախկոտ ու կասկածամիտ լինելու անժխտելի և անառարկելի փաստը չի համապատասխանում իրականությանը: Նա մասնավորապես գրում է, որ ներքին գործերի նախկին նախարար Ռեշիդ բեյը, իր հուշերում անդրադառնալով Աբդուլ Համիդին, նշում է, որ նրա նման ազնիվ ու շիտակ մարդիկ շատ քիչ կան<sup>5</sup>, իսկ աբդուլիամիդյան ժամանակաշրջանի հայտնի դրամատերերից Ջարիֆին պատմում է, որ ինքը օսմանյան իշխանների թվում չի ճանաչում որևէ մեկի, ով կլիներ Աբդուլ Համիդի նման տնտեսող, կապիտալը գնահատող և ինելացի անձնավորություն<sup>6</sup>: Աբդուլ Համիդի ավելորդ կասկածամտությունը քողարկող պնդումներ կան նաև այլ թուրք պատմա-

---

<sup>1</sup> Տե՛ս **Ayşe Osmanoğlu**, Babam Sultan Abdülhamid, Timaş Yayınları, 6. Baskı, İstanbul, 2013, s. 184:

<sup>2</sup> Այդ մասին տե՛ս **Եսզըճեան Գ.**, նշվ. աշխ., էջ 810:

<sup>3</sup> Տե՛ս **İsmet Bozdağ**, նշվ. աշխ., էջ 177:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 8:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 191:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 194:



բանների գործերում: Հայտնի թուրք պատմաբան Ջուհուրի Դանըշմանը գրում է, որ սուլթանը ոչ թե վախկոտ էր, այլ զգուշավոր, քանի որ պատասխանատու էր ոչ միայն իր, այլև ամբողջ ազգի համար<sup>1</sup>: Նա նաև նշում է, որ նման մեծահոգի սուլթանը, որը ոչ մի կաթիլ արյուն չի թափել, չի կարող կոչվել «կարմիր սուլթան»<sup>2</sup>:

Անկասկած, Աբդուլ Համիդ II-ը (1842-1918) օսմանյան գահակալներից ամենաքննարկված և դեռևս քննարկվող սուլթանն է, որը գահ է բարձրացել 1876 թ. պալատական հեղաշրջման հետևանքով օսմանյան պատմության ամենաբարդ ժամանակահատվածում և Օսմանյան կայսրությունը միահեծան դեկավարել է մինչև 1908 թ.: Սկզբնապես ներկայանալով իբրև բարենորոգումների ու խորհրդարանական կարգերի կողմնակից՝ Աբդուլ Համիդը 1876 թ. դեկտեմբերի 23-ին հռչակել է սահմանադրություն, սակայն շատ չանցած ցրել է խորհրդարանը և երկրում հաստատել միահեծան վարչակարգ: Օսմանյան կայսրության անդամահատման վտանգն ու երկրի ներքին ծանր կացությունը նրա օրոք ծնունդ են տվել երիտթուքական շարժմանը: 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման փորձից հետո նա վերջնականապես գահընկեց է արվել և մինչև կյանքի վերջն ապրել տնային կալանքի տակ՝ սկզբում Մալունիկում, իսկ 1912 թ. հետո՝ Ստամբուլում: Աբդուլ Համիդ II-ը պատմության մեջ առավելապես հայտնի է «կարմիր սուլթան» մականունով, ինչը վաստակել է հայերի ու քրիստոնյա այլ ազգերի արյունալի ջարդերը կազմակերպելու համար:

Հուշերում Աբդուլ Համիդը անդրադարձել է իր կառավարման տարիներին մոլեգնող գրաքննությանը. «Երբեմն Եվրոպա ուղարկված մարդիկ իրենց հետ Թուրքիա են բերում վնասակար մտքեր, փորձում ցույց տալ եվրոպական քաղաքակրթության առավելությունը: Ես չեմ կարող նրանց դատել իրենց սխալ կյանքի համար, սակայն պարտավոր եմ կանխել, որ դրանք չփոխանցվեն մյուսներին: Եվրոպա ուղարկված երիտասարդներից ոմանք, Ֆրանսիայում ծանոթանալով Ֆրանսիական հեղափոխությանը, ժողովրդին հրահրում են ապստամբությունների՝ դա համարելով հայրենասիրություն: Բնականաբար ես դա թույլ տալ չեմ կարող: Իսկ նրանք իմ երկրի թշնամիների նման ինձ կոչում են «կարմիր սուլթան»: Ահա այստեղ է, որ գործում էր գրաքննությունը, և ես արգելում եմ միայն նման բովանդակությամբ նյութերի հրատարակումը, իսկ գիտության ոլորտում ես նույնիսկ խթանում եմ և պետության անունից շնորհակալություն հայտնում»<sup>3</sup>: Իրականում, սակայն, անհերքելի փաստ է, որ «արյունոտ սուլթանը» դաժանորեն հալածում էր մամուլը: Նրա օրոք փակվեցին բազմաթիվ թերթեր, իսկ հրատարակվող մի

<sup>1</sup> Տե՛ս **Zuhuri Danışman**, Osmanlı İmparatorluğu tarihi XIII, Sultan İnci Abdülhamid Han, İstanbul, 1966, s. 268:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 266-267:

<sup>3</sup> Տե՛ս **İsmet Bozdağ**, նշվ. աշխ., էջ 101:

քանի լրագրերը կոչված էին փառաբանելու նրա անձը, ներքին և արտաքին քաղաքականությունը: Խիստ հսկողության տակ են դրվել դպրոցները: Հայոց պատմության, աշխարհագրության դասավանդումն արգելված էր ամբողջ Թուրքիայում. այդ առարկաներին նվիրված գրքերը բռնագրավվում էին, այրվում, իսկ ուսուցիչներն ու հեղինակները՝ ենթարկվում պատժի՝ որպես ոճրագործներ:

Իր հուշագրությունում Աբդուլ Համիդը անդրադարձել է այն իրողությանը, որ Հայկական հարցը անդադար չըջանաովել է եվրոպական թերթերում, որտեղ հասարակությանը տրամադրել են իր դեմ և իրեն անվանել «կարմիր սուլթան»: Իսկ հուշագրության «Կարմիր կենդանի» (Kızıl Hayvan-Bete Rouge) վերնագրված բաժնում նա գրում է, որ այսպես իրեն առաջին անգամ անվանել է ֆրանսիացի փիլիսոփա և գրական գործիչ Պիեռ Քիառը, որը, 1893 թ. գալով Ստամբուլ, հայկական դպրոցներում չարություն և երկպառակություն է սերմանել: 1893-1896 թթ. Կոստանդնուպոլսում աշխատանքային գործունեություն ծավալած Քիառը ֆրանսիացի այն սակավաթիվ ժամանակակիցներից էր, որն արևմտահայության կոտորածների սկզբնական փուլում գտնվել է Օսմանյան կայսրությունում: Այստեղ նրան աշխատանքի էին հրավիրել Բերայի հայկական ուսումնարաններից մեկում ֆրանսերեն և լատիներեն դասավանդելու համար: Հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ Քիառի հետաքրքրության աճին մեծապես նպաստել են 1894 թ. սկիզբ առած նրա բարեկամական փոխհարաբերություններն ու սերտ համագործակցությունը Արշակ Չոպանյանի հետ<sup>1</sup>: Քիառը Ստամբուլի հայկական դպրոցներում ուսուցչություն է արել, փիլիսոփայության և գրականության դասերին զուգընթաց տվել է նաև «թուրքական լծից ազատվելու» դասեր: Աբդուլ Համիդը Սասունում և Ջեյթունում առաջացած խնդիրները կապում է Քիառի անվան հետ՝ նրան մեղադրելով հայ ժողովրդի շրջանում հակասուլթանական և ազատագրական քարոզչություն ծավալելու համար<sup>2</sup>:

Քիառի ելույթների թիրախում հառնում է Աբդուլ Համիդ II-ի հայատյաց կերպարը, որին նա համարում է հայկական կոտորածների կազմակերպիչ և անվանում «մեծ մարդասպան», «կարմիր գազան», «կայսերական ավազակ», «մարդկային կերպարանք ունեցող հրեշավոր գազան», «նորին արյունոտ մեծություն»: Քիառը, զինվորագրվելով հայ ժողովրդի գոյատևման պայքարի խնդրին, իր գործունեությունը չի սահմանափակել միայն գիտական բնույթի աշխատանքներ հրատարակելով, այլ ծավալել է նաև բեղուն հրապարակախոսական գործունեություն<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), երկրորդ հրատարակություն, Երևան, 2011, էջ 244:

<sup>2</sup> Տե՛ս **İsmet Bozdağ**, նշվ. աշխ., էջ 54:

<sup>3</sup> Տե՛ս **Պողոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 249, 277:

Աբդուլ Համիդը, անդրադառնալով ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի նկատմամբ Օսմանյան պետության քաղաքականությանը, նշել է, որ հայ ժողովուրդը միշտ աչքի է ընկել օսմանյան քաղաքակրթությանը մատուցած ծառայություններով և հավատարմությամբ: Սակայն Ռուսաստանը, հայերի շրջանում հրահրելով խռովություններ և ապստամբություններ, նպատակ էր հետապնդում խնդիրներ առաջացնել Թուրքիայի համար, քանի որ նա ևս չէր ցանկանում, որ հայ ժողովուրդը ձեռք բերի անկախություն և ունենա անկախ պետականություն:

Անդրադառնալով կոտորածներին՝ Աբդուլ Համիդը փորձում է խուսափել քրիստոնյաների, հատկապես հայերի կոտորածների պատասխանատվությունից և դրա գլխավոր մեղավոր է համարում ռուսական կառավարությանը: Նա խոստովանում է, որ հայ-թուրքական պայքարին վերջ տալու նպատակով Ջեքի փաշայի գլխավորությամբ զորք է ուղարկել և ճնշել Սասունում տեղի ունեցած ապստամբությունները՝ պատճառաբանելով, որ հայերի նպատակը թուրք ազգաբնակչության շրջանում խռովություններ հրահրելն էր, ինչը կարող էր հանգեցնել խնդրին եվրոպական տերությունների միջամտությանը: Մեղադրելով հայերին՝ նա իր հուշերում չի շրջանցել նաև իր դեմ կատարված մահափորձը՝ նշելով, որ ոչ մի ազնիվ հայ գիտակցաբար սուլթանի սպանությունը չէր ծրագրի<sup>1</sup>: Աբդուլ Համիդի հուշերը հայկական ապստամբությունները ճնշելու առնչությամբ հիմնավորում են 1894-1896 թթ. կոտորածը, որի ընթացքում սպանվեց ավելի քան 300 000 հայ:

Աբդուլ Համիդը մի առանձին բաժին հատկացրել է հայ-երիտթուրքական համագործակցությանը՝ նշելով, որ երիտթուրքերը, լինելով արևմտականացման կողմնակիցներ, լուրջ հարաբերություններ էին ձևավորել կայսրությունը մասնատել և պետականություն ստեղծել ցանկացող հայերի հետ: Մեղադրելով երիտթուրքերին հայերի հետ համագործակցության, երկրում առկա խնդիրների, ողբերգական իրավիճակի և բանակի պարտության համար՝ Աբդուլ Համիդը փորձում է անտեսել այն իրողությունը, որ թե՛ պետության առջև ծառացած խնդիրները և թե՛ հայ ժողովրդի նկատմամբ հետագա բոլոր ոճրագործությունները սկիզբ են դրվել հենց իր կառավարման ժամանակաշրջանում:

Աբդուլ Համիդի հուշերի ուսումնասիրությամբ հաստատվում է այն փաստը, որ 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո տասնամյակներ շարունակ թուրքական պատմագրության մեջ շրջանառվող Օսմանյան կայսրության պատմության կեղծարարության և Հայոց ցեղասպանության ժխտողականության ակունքները սկզբնավորվել են դեռևս օսմանյան պետության գոյության օրոք և ոչ միայն Աբդուլ Համիդ II-ի

---

<sup>1</sup> 1905 թ. հուլիսի 21-ին Ստամբուլի Յըլդըզ մզկիթում շօնախմբում կազմակերպել են նրա մահափորձը, որը ձախողվել է, իսկ գլխավոր կազմակերպիչ Քրիստափոր Միքայելյանը՝ զոհվել:

նախաձեռնությամբ Արևմտյան Եվրոպայում<sup>1</sup>, այլև բուն Թուրքիայում, ինչի վառ ապացույցներից է նախկին սուլթանի կողմից պատմական իրողությունների սուբյեկտիվ և կողմնակալ շարադրումը: Թուրքական կողմի այն պնդումները, թե իբր օսմանները «հայապահպան» քաղաքականություն են վարել, որ արևմտահայերն ազգային-ազատագրական պայքար երբևէ չեն մղել, իսկ բոլոր «հուզումները» հրահրել են արտաքին ուժերը, և որ 1894-1896 թթ. կոտորածները սուկ երկուստեք կորուստների պատճառ դարձած հայ-թուրքական ընդհարումներ են եղել, առաջինը շրջանառության մեջ դնողներից է հենց Արդուլ Համիդը:

#### **Татевик Акопян – *Абдул-Гамид II об армянах***

В своих мемуарах султан Абдул-Гамид II, вскользь обращаясь к Армянскому вопросу и резне армян (1894-1896 гг.), пытается представить эти погромы как результат внутренней разобщенности армян и тем самым скрыть истинную сущность своей антиармянской политики. Изучение мемуаров султана дает основание утверждать, что основы политики отрицания и фальсификации исторических фактов, широко распространенная в современной турецкой историографии, заложены еще при нем.

#### **Tatevik Hakobyan – *Abdul Hamid II about the Armenians***

The article is devoted to the examination of the reflection of the Armenian question and Armenian massacres (1894-1896) in the memoirs of sultan Abdul Hamid II. Even though the Red Sultan had mentioned these problems, he had tried to present the Armenian massacres as the result of internal disassociation of Armenians and thus veiling the real intentions of his policy towards the Armenians. The memoirs of sultan Abdul Hamid II represents that the policy of denial and falsification of the historical facts widely used in the modern Turkish historiography was initiated in the Ottoman period.

---

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս **Պողոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 171-209:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԳԵՐՄԱՆԱԲՆԱԿ ԹՈՒՐՔ ԳՐՈՂ ԶԱՖԵՐ  
ՇԵՆՈՋԱՔԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ<sup>1</sup>**

*Բանայի բառեր – Զաֆեր Շենոջաք, Գերմանիա, Թուրքիա, Հայոց ցեղասպանություն, թուրք գրողներ, ստեղծագործություններ, թուրքական համայնք Գերմանիայում*

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով մասնատված, հիմնահատակ ավերված ու հսկայական մարդկային կորուստներ կրած Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը 1950 թ. հաջողվեց վերականգնել արդյունաբերության նախապատերազմյան մակարդակը, իսկ 1956 թ.՝ ավելացնել այն կրկնակի: Աշխարհը սկսեց խոսել «գերմանական տնտեսական հրաշքի» մասին: Մակայն որքան զարգանում էր տնտեսությունը, այնքան ավելի ակնառու էր դառնում աշխատող ձեռքերի պակասը: Աշխատանքի ներքին շուկայում առաջացած բացը գերմանական իշխանությունները որոշեցին լրացնել ավելի թույլ զարգացած երկրների հետ հյուրաշխատողներ (գերմ. *Gastarbeiter*) հրավիրելու վերաբերյալ միջպետական պայմանագրեր կնքելու միջոցով: Այս քաղաքականությամբ Գերմանիայում ձևավորվեցին տարբեր մեծ ու փոքր էթնոկրոնական համայնքներ, որոնք ժամանակի ընթացքում դարձան երկրի ներքին ու արտաքին կյանքի անբաժանելի մասը:

Թեև Գերմանիայում պաշտոնապես փոքրամասնության կարգավիճակ և դրանից բխող իրավունքներ ունեն միայն լուժյան սերբերը, ֆրիզները և դանիացիները, սակայն գերմանաբնակ այլազգիների շարքում թե՛ քանակով, թե՛ ազդեցությամբ և թե՛ խնդիրներով առանձնանում են թուրքերը: Տարբեր հետազոտողների կարծիքով, ներկայումս Գերմանիայում բնակվում է շուրջ երեք միլիոն թուրք: Տարիների ընթացքում թուրքերը փոքրիշատե հարմարվել են ընդունող հասարակությանը, հասել բարեկեցության որոշակի մակարդակի: Նրանք ակտիվ մասնակցություն ունեն երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային, այդ թվում գրական կյանքում: Համայնքի ստեղծմանը զուգահեռ՝ 1970-ականներից Գերմանիայում սկզբնավորված թուրքական գրականությունը ուշագրավ երևույթ է: Ներկայումս Գերմանիայում բնակվող թուրք գրողների ստեղծագործությունները թարգմանվում են ամենատարբեր լեզուներով, դառնում գրականագիտական ուսումնասիրությունների առարկա:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳԼ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13YR-6B0034 գիտական թեմայի շրջանակներում:

Ուշագրավ է, որ Գերմանիայի թուրք գրողների համար, թերևս ինչ-որ գենետիկ հիշողության կանչով, ուսումնասիրության և քննարկման առարկա է դառնում Հայոց ցեղասպանության հարցը: Այս թեմային ծավալուն անդրադարձների ենք հանդիպում հատկապես 1990-ականների կեսերին գրված ստեղծագործություններում: Ժողովրդավարական ու ազատական եվրոպական հասարակությունը պարարտ հող էր ստեղծում պատմական իրողությունները բազմակողմանի ուսումնասիրելու և օբյեկտիվ գնահատականներ տալու համար: Արդեն եվրոպական չափանիշներով կրթված Գերմանիայի թուրք գրողների համար թերևս փոքր-ինչ ավելի դյուրին էր կոտրել այդ ժամանակ Թուրքիայում դեռևս խստագույնս պահպանվող ցեղասպանության տաբուն<sup>1</sup>:

Միջանկյալ շեշտենք, որ թուրքական իշխանությունները մշտապես փորձել են երկրից դուրս բնակվող իրենց քաղաքացիների շրջանում պահպանել արտաքին և ներքին քաղաքական մի շարք հարցերի շուրջ (ինչպես օրինակ՝ Կիպրոսի խնդիրը, Քրդական և Հայոց ցեղասպանության ժխտման խնդիրները) իրենց ձեռնադրել ընկալումները: Այս նպատակով Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչությունները, իսկ ավելի ուշ նաև պաշտոնական Անկարայից ֆինանսավորվող տարատեսակ հասարակական կազմակերպությունները, բավական ակտիվ գործունեություն են ծավալել Գերմանիայում թուրքական համայնքի սկզբնավորման առաջին տարիներից: Իսկ Թուրքիայի կառավարության 2010 թ. որոշմամբ արտերկրում բնակվող թուրքերի և ազգակից հանրությունների վարչության<sup>2</sup> ստեղծումից հետո այս գործունեությունը սկսեց ավելի ուղղորդված բնույթ ստանալ և ներկայումս իրականացվում է ոչ միայն քաղաքական, հասարակական, այլև կրթական ու մշակութային մակարդակով: Բնական է, որ բոլոր այս ոլորտներում գործող ամենատարբեր թուրքական կազմակերպությունների թիրախային կետերից մեկը մշտապես եղել և մնում է Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության ամրապնդումը և հակահայկական լոբբինգը: Մրան ավելացնելով հայրենիքից անխուսափելիորեն եկող բացասական անդրադարձը՝ կարող ենք փաստել, որ նույնիսկ Եվրոպայում բնակվող թուրք գրողի համար Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձ կատարելը բավական համարձակ քայլ է, որն արժանի է ուսումնասիրման և արժևորման:

Գերմանաբնակ թուրք գրողների թվում Հայոց ցեղասպանության թեման վեր են հանել հատկապես Ջաֆեր Շենոջաքը, Էմինե Սևգի Օզդամարը, Քեմալ Յալչընը: Ընդ որում, եթե Ք. Յալչընի ստեղծագործությունները որոշ

---

<sup>1</sup> XX դարի թուրքական գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի արժարժման առանձնատկությունների մասին մանրամասն տե՛ս **Մերթնյան Ռ. Հ.**, Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ, Երևան, 2010, էջ 128:

<sup>2</sup> Վարչության մասին մանրամասն տե՛ս պաշտոնական կայքէջում՝ <http://www.ytb.gov.tr>.

չափով հայտնի են հայ ընթերցողին, իսկ նրա «Միրտս քեզնով է խայտում»<sup>1</sup> գիրքը նույնիսկ հասանելի է հայերենով, ապա Է. Ս. Օզդամարի և Ջ. Շենոջափի անունները Հայաստանում գրեթե արծարծված չեն, մինչդեռ նրանց ստեղծագործություններում Հայոց ցեղասպանության մասին հիշատակումները բավական ուշագրավ են:

Սույն հոդվածում քննության կենթարկենք Ջ. Շենոջափի<sup>2</sup> Հայոց ցեղասպանության հանդեպ մոտեցումը, որի «Վտանգավոր բարեկամություն» վեպը թուրքական միջավայրում սույն թեմային անդրադարձող առաջին ստեղծագործություններից է: 1998 թ. գրված այս վեպով ամբողջանում է ավելի վաղ տպագրված «Ներքնաշապիկով մարդը» և «Պրերիա» ստեղծագործությունները ներառող եռագրությունը, որի գլխավոր հերոս, մեծ ճանաչում չվայելող գրող Սաշան փորձում է սեփական ես-ը գտնել գերմանական հասարակության ոլորաններում: Թուրք հորից և գերմանացի-հրեա մորից սերող Սաշան ինքն իրեն հասկանալու համար նույնիսկ մեկնում է ԱՄՆ, սակայն այնտեղ ևս չգտնելով իր հարցերի պատասխանը՝ վերադառնում է Գերմանիա:

«Վտանգավոր բարեկամություն» վեպը սկսվում է տխուր իրողության հիշատակությամբ. Սաշայի՝ տարիներ առաջ բաժանված ծնողները նրա համար անհասկանալի պատճառով նույն ավտոմեքենայով վթարի են ենթարկվում և զոհվում: Որպես միակ ժառանգ՝ նա ստանում է բավական լուրջ կարողություն: Սակայն երբևէ գումարի կարիք չունեցած Սաշայի համար առավել կարևոր է հորից մնացած արծաթյա տուփը, որտեղ պահված են դեռևս 1936 թ. ինքնասպանություն գործած պապի օրագրերը: Գուցե՞ այս «մոխրագույն կազմով, սովորական ֆրանսիական» տետրերի արաբատառ և ռուսատառ գրությունները լույս կսփռեն պապի տարօրինակ ինքնասպանության պատմության վրա և կօգնեն հերոսին ավարտին հասցնել իր փնտրտուքները: Գրականագետ Ջեյմս Ջորդանը գրում է. «Սաշան հույս ունի, որ կա բացահայտման ենթակա հստակ ինքնություն, և որ ընտանիքի անցյալը պարզելուն պես բոլոր կապերն ինքնըստինքյան կհաստատվեն»<sup>3</sup>: Տետրերն այնքան կարևոր են թվում հերոսին, որ նա նույնիսկ չի ցանկանում դրանք որևէ մեկին ցույց տալ, այլ որոշում է սովորել թուրքերեն և համադրելով արաբերենից իր ունեցած գիտելիքները՝ ապակողավորել գրությունները, ապա դրանց հիման վրա պապի մասին վեպ գրել: Որոշ ժամանակ անց,

<sup>1</sup> Տե՛ս **Յալչըն Ք.**, Միրտս քեզնով է խայտում, Երևան, 2005:

<sup>2</sup> Ջ. Շենոջափը ծնվել է 1961 թ. Անկարայում: 1970 թ. ծնողների հետ տեղափոխվել է Սյունիք, որտեղ 1981-1987 թթ. ուսանել է քաղաքագիտություն, փիլիսոփայություն և գերմանական գրականություն: 1988 թ. նա արժանացել է Ադալբերդ ֆոն Քամիստյի անվան գրական մրցանակին: Որպես հրավիրյալ գրող աշխատել է Օքսֆորդի, Մասաչուսեթսի, Օհայոյի համալսարաններում:

<sup>3</sup> **Jordan J.**, Zafer Şenocak's essays and early prose fiction: from collective multiculturalism to fragmented cultural identities, Zafer Şenocak, editors: Cheesman T, Yeşilada K., Cardiff, 2003, p. 101.

ասկայն, Սաշան հասկանում է այս աշխատանքի ապարդյունությունը և դիմում թարգմանչի օգնությանը: Մի քանի ամսվա ընթացքում մաս-մաս թարգմանվող տետրերից նա բացարձակապես անսպասելի բացահայտումներ է անում:

Այս պատմության ամբողջ ընթացքում, որ ներառում է տուփը ստանալուց մինչև օրագրերի թարգմանությունները ընթերցողին ներկայացնելու պահը, երկխոսություններ գրեթե չկան, այլուժեն կառուցված է Սաշայի հոգեվիճակը արտացոլող մտորումների ներկայացման վրա: Այդ մտքերն իրականում ոչ միշտ են կապված պապի օրագրերի կամ ինքնության խնդրի հետ: Համարակալումով առանձնացված գրքի 35 գլուխները արտացոլում են գերմանական հասարակությանը հուզող ամենատարբեր խնդիրների վերաբերյալ հրեա-թուրքի տեսանկյունը: Գլուխները տրամաբանական հստակ կապ չունեն, իրար հաջորդելով ու միախառնվելով՝ քննության են առնվում պապի ինքնասպանությունից մինչև Բեռլինի պատի քանդման պատճառներն ու հետևանքները ներառող հարցեր:

Գրքում փաստորեն կարևորագույն գործող անձի՝ պապի անունը չի տրվում. հիշատակվում է հպանցիկ: Այստեղ-այնտեղ թաքնված փաստերն ի մի բերելով՝ հասկանում ենք, որ Սաշայի պապը ծագումով Կարսից է և 1914-1918 թթ. եղել է օսմանյան բանակի զինվոր: Բաց գույնի մաշկ ունենալու և հայերենին ու ռուսերենին լավ տիրապետելու շնորհիվ զբաղվել է հետախուզական աշխատանքով<sup>1</sup>: Պատերազմի տարիներին հայերի անուններով առաջին ցուցակը նա է կազմել: Այդ ցուցակում 500 անուն պետք է լիներ: Մեկը դուրս է մնացել ցուցակից: Մի կնոջ անուն: Բայց ինչո՞ւ (էջ 38): Այս հարցն ի սկզբանե հուզում է Սաշային: Հատկանշական է, որ նրան չի հետաքրքրում, թե 500 անուն պարունակող ցուցակն ինչ նպատակով է կազմվել: Այսինքն՝ ի սկզբանե հեղինակը նպատակ չի հետապնդում ներկայացնել Հայոց ցեղասպանությունը, որն ավելի շուտ հենքային երևույթ է, քան հիմնական թեմա: Զարմանալի չէ, որ նա այդ առնչությամբ որևէ բացատրություն չի տալիս: Նա միայն պապի օրագրից 1921 թ. փետրվարի 21-ին արված մի գրություն է մեջբերում. «Մեր մշակույթում մեղավորություն տերմինը չկա: Մենք միայն մեղք գիտենք: Մեղքը մեր կրոնական, աստվածային գոյության առջև ունեցած պատասխանատվության սահմաններն է շրջագծում: Սակայն երբևէ ինքներս մեր առջև պատասխանատվություն չենք զգում: Մեղավորությունը մարդկային հարց է: Մարդը իր մեղքի հետ միշտ դեմ դիմաց է: Մենք միայնակ մնալուն սովոր չենք» (էջ 110):

1920-ական թվականներին պապը եղել է քեմալական շարժման ակտիվ մասնակից, կովել «մեծ փրկիչ» Մուսթաֆա Քեմալի կողքին: Ավելին, «մեծ փրկիչը» Սաշայի պապիկի ու տատիկի հարսանիքի վկան է եղել: Հանրա-

---

<sup>1</sup> **Şenocak Z.**, Tehlikeli akrabalık, İstanbul, 2006, s. 37.



պետության հռչակումից հետո պապը կարողացել է լուրջ հաջողությունների հասնել, նույնիսկ Ստամբուլում համայնքապետ դառնալ: Պապի կերպարի ամբողջ նկարագրությունը սահմանափակվում է այսքանով: Ամբողջ շարադրանքում պահպանվող այս անհատակությունը, տողատակերում ինչ-որ բան գտնելու, կիսավարտ նախադասություններում թաքնված փաստեր հայթայթելու անհրաժեշտությունը ինտրիգ է ստեղծում, ստիպում անընդ-հատ լարված մնալ և անհամբեր սպասել վերջաբանին: Սակայն հեղինակը բնավ չի շտապում: Եվ մեղքի զգացման կամ հայերի ցուցակների մասին մտորումներից նա հանկարծակի անցում է կատարում, օրինակ, պատե-րազմից հետո այրիացած գերմանացի կանանց խնդիրներին:

Գրքում գուտ գերմանական խնդիրներին բավական լուրջ տեղ հատկաց-նելու փաստը հստակ արտացոլում է հեղինակի դիրքորոշումը: Գերմանիան կարևորագույն դեր ունի նրա կյանքում: Մինչդեռ Թուրքիային շատ քիչ տեղ է հատկացված՝ այն էլ հիմնականում բացասական երանգներով: Օրինակ, պապի կենսագրությունը ներկայացնող մի դրվագ հստակ արտացոլում է Թուրքիայում տիրող ոչ ժողովրդավարական մթնոլորտը. «Պապս 35 տարե-կան է: Ուժեղ մարդ է: Համայնքապետի թեկնածու: Մրցակիցն է՝ նույն կու-սակցությունից: Պապս կեղծիք է անում, որպես կաշառք ընտրողներին ընտ-րությունից առաջ ձախ ոտքի կոշիկներ է բաժանում: Մյուսն էլ ընտրու-թյունից հետո է խոստանում տալ: Պապս էլ ընտրությունից առաջ կոշիկի գործարան է հիմնում: Ընտրություններում հաղթում է» (էջ 38): Ավելին, մար-տահրավեր նետելով Աթաթուրքի անձի անձեռնմխելիությանը՝ հեղինակը փոքր-ինչ հեզնանքով է գրում բոլորին կրթելու, քաղաքակրթելու նրա մոլուցքի մասին. «Միգուցե նա կարողացավ փրկել, բայց քաղաքակրթել՝ երբեք» (էջ 30): Նման վերաբերմունքը հատկապես աչքի է ընկնում, քանի որ գրքում ինչ-որ իրադարձությունների կամ մարդկանց հստակ գնահատա-կաններ գրեթե չկան: Հեղինակը միշտ աշխատում է փաստերի համադրու-թյամբ վերջնական հետևությունները թողնել ընթերցողին:

Տեսրերի թարգմանությանը Սաշայի սպասմանը զուգահեռ՝ գրքում զար-գանում է սյուժետային փոքրիկ երկրորդ գիծը, որն անմիջական կապ ունի հայերի հետ: Սաշայի կինը՝ գերմանուհի Մարին, վավերագրական ֆիլմ է նկարահանում Թալեաթ փաշայի մասին, որի վերաբերյալ նրա դիրքորոշու-մը հստակ է. հարյուրհազարավոր անմեղ զոհերի մարդասպանը արդարա-ցում չունի: Սակայն այս փաստը զարմանալիորեն տհաճ է Սաշայի համար: Որքան էլ նա հեռու է իր թուրքական արմատներից, այնուամենայնիվ ըմբոս-տանում է Թալեաթ փաշային իբրև ցեղասպան, վայրենի թուրքի կերպար ներկայացնելու դեմ: Նա նույնիսկ կնոջը մեղադրում է նրա կերպարը միայն եվրոպական սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնելու համար և նրան առաջարկում ծանոթանալ Թալեաթի գործունեությանը նվիրված թուրք հե-ղինակների անդրադարձներին՝ միակողմանի կարծիքից խուսափելու հա-մար: Դիմելով կնոջը և ի դեմս նրա, անշուշտ, ամբողջ Եվրոպային՝ նա հայ-

տարարում է. «Իսկական արևելյան ժողովուրդ հայերին՝ միայն մուսուլմանների շրջապատում ապրող քրիստոնյաներ լինելու համար են արևմտյան համարում: Սրա հետ մեկտեղ տարածաշրջանի բոլոր ժողովուրդներից առավել ուժեղ արևմտյան կողմնորոշում ունեցող թուրքերին մուսուլման լինելու պատճառով երբեք Եվրոպայի, Արևմուտքի մաս չեն համարում» (էջ 15): Ավելին, ժխտելով հայերին ցեղասպանության ենթարկելու թուրքերի միտումը, միաժամանակ պատմությունից օրինակներ բերելով՝ Մաշան ցանկանում է ցույց տալ, որ նույնիսկ եթե հայերի զանգվածային սպանություններ են եղել, դա դեռ տագնապ բարձրացնելու առիթ չէ. «Ֆրանսիացիներն էլ Ալժիրում են կոտորած կազմակերպել, իսկ բրիտանացիներն ընդհանրապես աշխարհի կեսը կողոպտել են, սակայն նրանց Եվրոպայի խորհրդից և Եվրոպական միությունից չեն հանել: Դուք՝ եվրոպացիներդ, կեղծ խաղ եք խաղում, երկերեսանի եք: Սպիտակ մարդը միշտ երկերեսանի է» (էջ 15): Արյան կանչն է ստիպում Մաշային նման արտահայտություններով նեղացնել սիրելի կնոջը, թե՛ սա եվրոպական ազատականության ու հավասարության սկզբունքների ծայրահեղ դրսևորումն է: Հեղինակը եզրահանգումները թողնում է ընթերցողի հայեցողությանը: Նույնիսկ Թալեաթ փաշային վերաբերող որևէ գնահատական, վերջնական կարծիք գրքում չենք գտնում: Մաշան ինքն իրեն հարցնում է. «Թալեաթ փաշան պատասխանատու է արդյոք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում հարյուրհազարավոր հայերի բռնագաղթի համար: Ինչպե՞ս կարող էր լուսավորության կողմնակից, հաջողակ քաղաքական գործիչը զանգվածային սպանության կազմակերպիչ լինել» (էջ 67): Հարցը մնում է անպատասխան: Մարին մեկնում է Սալոնիկ, ապա՝ Թուրքիա՝ նոր նյութեր հավաքելու համար: Ընթերցողը չի իմանում, թե ինչեր է նա այնտեղ քացահայտում, նոր տեղեկություններն ամրապնդում են նրա կարծիքը, թե՛ ստիպում հրաժարվել կտրուկ գնահատականներից: Կարծես հեղինակը չի ցանկանում կարծիք պարտադրել և միայն խորհրդածելու համար է հիմք ստեղծում:

Մեկը մյուսին հաջորդող Մաշայի մտքերի հորձանուտում պապի մասին տրվող ցաքուցրիվ տեղեկություններն ամբողջանում են գրքի վերջին գլխում: Տեսրերն ընթերցված են, պապի և հետևաբար նաև ամբողջ ընտանիքի պատմության մի մեծ գլուխ՝ քացահայտված: Փաստորեն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին որպես օսմանյան զինվոր պապը կազմակերպել է հայերի տեղահանությունը: Արդեն հիշատակված ցուցակի նպատակը կազմակերպված աքսորն էր: 500 հոգուց միայն մեկի անունն է ջնջել, մնացածներից և ոչ մեկին չի խղճացել, ոչ մեկի հանդեպ մեղքի զգացում չի ունեցել: Ավելին, չնայած երկիրն աղքատացել է, բայց նա կարողացել է երկրի արևելքում ստեղծված կողոպուտի հնարավորություններն օգտագործել և տեղահանվածների «լքյալ գույքի» հաշվին հարստանալ, քանի որ, իր իսկ վկայությամբ, «նրանց վերադարձը կտրականապես անհնարին է: Դրա համար անհրաժեշտ ամեն ինչ արված է»: Եվ կրկին ոչ մի ավստասնք:

Մաշան, վերաձևակերպելով պապի նոթերը, գրում է. «Հաշվի չէր առնում, որ մի օր նորից ստիպված է լինելու անցյալի մասին մտածել: Երեկ երեկ էր, այսօր այսօր է, հատկապես երբ պետք է եղած-անցածը մոռանալ»: Ավելին, պապը գտնում էր, որ իր երկրի անցյալով կարող է հպարտանալ, քանի որ «նույնիսկ բոլոր պարտություններից հետո ոտքի վրա մնաց: Ամեն անգամ վերջնական հաղթանակին հավատաց: Հաղթեց: Թանկ վճարեց: Մակայն էթե հաղթանակի համար թանկ չես վճարում, հաղթանակն արժեք չի ունենում: Իրական հաղթանակները ձեռքբերումների հետ կապ չունեն: Կորուստներով են լի» (էջ 124):

Պապը ևս, չնայած հաղթանակել է, հերոս է հռչակվել, բայց կորցրել է իր կյանքի ամենակարևոր կնոջը, իր կյանքի իմաստը: Նորից հղելով պապին՝ Մաշան փաստում է. «Այն կնոջը սիրում էր: Այն ժամանակ, սակայն, դեռ չգիտեր, թե սերն ինչպիսի զգացմունք է: Կարծում էր, որ այդ զգացմունքն իրեն չի սագում: Սպանելու համար էր պետք պայքարել, ոչ սիրելու: Այն ժամանակ կյանքն իմաստ ուներ» (էջ 126): Ճակատագրի հեգնանքով այդ կինը հայուհի է, որի անունն է ջնջել տխրահռչակ ցուցակից: Ընթերցողի համար անհայտ մնացող պատճառներով այդ կինն էլ է տարագրվել: 1936 թ. անցյալից ստացված մի նամակ տակնուվրա է անում պապի կարծես թե հաջողված կյանքը: Նամակից ընդամենը մի քանի տող մեջբերելով՝ հեղինակը ներկայացնում է մի ամբողջ կործանված կյանք: Կինը գրում է. «Մեր աղջիկը քեզ չի ճանաչում: Մինչդեռ արդեն 20 տարեկան է: Կարծում է՝ հայրը մահացել է: Այնքան էլ հեռու չէ ճշմարտությունից, այնպես չէ՞: Թե՞ ինձնից անտեղյակ դեռ ապրում ես: Եթե այլևս չկարողանանք միասին լինել, կյանքիդ վերջ ես տալու, չէ՞ իր խոստացել... Փախուստի ճանապահին հազար անգամ հարձակումների ենթակվեցի: Գուցե մեր երեխան էլ քեզնից չէ, դեմս դուրս եկած մորթարարներից և զինվորական համազգեստով վիժվածքներից է» (էջ 127): Պապի կյանքը մի ակնթարթում տակնուվրա է լինում: «Դողում էր,– պատմում է թոռը,– կյանքի միակ սիրած կինը նա էր: Ինչպե՞ս էր այսքան տարի առանց նրա ապրել: Ինչպես էր կարողացել ուրիշ կնոջից երեխա ունենալ»: Նա այլևս չի կարող սպասել: Նա իրագործում է իր խոստումն ու ինքնասպան լինում: Գիրքը վերջանում է: Ոչ մի մեկնաբանություն: Ի՞նչ է գգում Մաշան: Ինչպե՞ս է փոխվում նրա աշխարհայացքը: Ոչ մի հստակ պատասխան չի հետևում: Ցեղասպանությունը գրքի այուժեի առանցքային մասն է կազմում, սակայն կարծես չշոշափված է մնում: Չկան մանրամասն նկարագրություններ, փաստեր, թվեր: Ինչու՞, ինչպե՞ս և ուր են ուղարկել հայերին, ի՞նչ է պատահել նրանց հետ: Այս հարցերի պատասխաններն ամփոփված են վերը նշված հակիրճ նախադասություններում: Հայերը տեղահանվել են, սպանվել, կողոպտվել, ունեզրկվել: Ավելին, երիտթուրքերն ու քեմալականները գրեթե նույնականացված են. պապի անցումը մի թևից մյուսը հեշտ ու բնականոն է թվում: Այս ամենը, սակայն, բացահայտորեն գրված չէ, փոխարենը կարելի է սուս կռահել կամ տողատակերի

միջև կարդայ: Գրականագետ Լ. Անդերսոնը գրում է. «Տեքստը [Չ. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամությունը»] երբեք հստակ չի ներկայացնում 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Մակայն այն առաջինն է ներկայացնում հայերի տեղահանության ցուցակները»<sup>1</sup>:

Այսպիսով, Չ. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամություն» վեպը յուրօրինակ անդրադարձ է Հայոց ցեղասպանության թեմային: Գրքում թեն քողարկված, բայց ներկայացված են Հայոց ցեղասպանության հիմնական դրվագները: Գրքում չկան որևէ քննադատություն, բացասական վերաբերմունք, բայց ժխտողականություն կամ խեղաթյուրում նս չկա:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանությանը վերաբերող անդրադարձների հանդիպում ենք նաև Չ. Շենոջաքի այլ ստեղծագործություններում: Օրինակ, նրա «Ուր ենք գնում» վեպի գլխավոր հերոսի՝ արվեստի գործերի ոչնչացմամբ զբաղվող թուրք երիտասարդ Ջումեյթի նախկին դայակը՝ Լարան, ծագումով հայ է: Հեղինակը ներկայացնում է նրա կյանքի պատմությունը: Նրան գնչուները գտել են Արևելքի լքված գյուղերից մեկի ավիրված եկեղեցու դռան մոտ՝ սարսափելի ցրտից կիսատ-պռատ պաշտպանող մի ծածկոցի մեջ փաթաթված: Երեխայի կենդանի մնալն արդեն հրաշք պետք է համարվի: Գնչուները նրան որոշ ժամանակ իրենց մոտ պահելուց հետո վաճառել են<sup>2</sup>: Շատ դառը օրեր է ապրել Լարան և, ինչն ամենասարսափելին է, ութ տարեկան հասակում, երբ Անկարայում մի վաճառականի տանն էր ապրում, ենթարկվել է դաժան սեռական բռնությունների: Այսպես, ձեռքից ձեռք անցնելով, 15 տարեկանում Լարան հասել է Ջումեյթի տուն, որի ընտանիքում ապրած տարիները նրա համար ամենաերջանիկն են եղել: Այդտեղից էլ, սակայն, ստիպված հեռացել է. «Օդանավակայանի ճանապարհին փողոցները դատարկ էին, քանդված: Նկատեց, որ հայերին և հույներին պատկանող կամ այդպիսիք համարվող խանութները կողոպտված են...<sup>3</sup>: Ինքնաթիռ նստելիս հասկացավ, որ Մտամբուլ այլևս երբեք չի վերադառնալու: Այո՛, այո՛, մի ժամանակ իր ընտանիքի հայրենիքը համարվող, սակայն այժմ արդեն նրան չընդունող, օտարի աչքով նայող այս երկիր չէր վերադառնալու»<sup>4</sup>: Լարայի հանկարծակի հեռանալու գաղտնիքն այդպես էլ չբացահայտված է մնում: Արդեն մեծահասակ Ջումեյթը հիշում է, որ մայրը Լարայի գնալուն առնչվող իր հարցին շատ խորհրդավոր պատասխանել է, որ նրա համար ուրիշ երկրում ապրելն ավելի լավ կլինի, քանի որ նա հայուհի է<sup>5</sup>: Նույնիսկ տարիներ անց Թուրքիայի հետ կապերը լիովին կտրած

---

<sup>1</sup> Adelson L. A., *The Turkish Turn in Contemporary German Literature: Toward a New Critical Grammar of Migration*. New York, 2005, p. 108.

<sup>2</sup> Senocak Z., *Yolculuk nereye*, Istanbul, 2007, s. 37.

<sup>3</sup> Հավանաբար նկատի ունի 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի կոտորածները:

<sup>4</sup> Senocak Z., նշվ. աշխ., էջ 36.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 40:

Ջուռնալի համար այս փաստն անհասկանալի է մնում: Լարայի կերպարի հենքի վրա Ջ. Շենոջաքը փաստորեն ներկայացնում է հազարավոր հայ երեխաների ճակատագիրը, որոնք դատապարտված են եղել կիսաստրկային կարգավիճակով ապրելու թուրքերի և քրդերի ընտանիքներում, իրենց ուսերին կրելու կենցաղի ծանր բեռը և նույնիսկ դառնալու նրանց այլասերված ցանկությունների գոհերը:

Լարայի պատմության մեջ ուշագրավ է այն, որ տարիներ անց նրան հաջողվում է Փարիզում գտնել իր մորն ու մինչև վերջինիս մահը վայելել այն սերն ու ջերմությունը, որոնց երբեք չէր արժանացել: «Այդ երկու տարիները Լարայի կյանքի ամենակարևոր փուլերն էին: Մոր հետ երկար-երկար խոսակցությունների ընթացքում նա ճանաչել է ընտանեկան նկարին պատկերված շատ դեմքեր, բազմիցս լսել այդ դեմքերի անուններն ու պատմությունները, նրանց տեղավորել իր հիշողության մեջ և վերագտել իր ինքնությունը, որի մասին տարիներ շարունակ անտեղյակ էր եղել»<sup>1</sup>: Ցեղասպանությունից հետո մասնատված ընտանիքների կարևորագույն հարցը փաստորեն դուրս չի մնում թուրք գրողի ուշադրությունից:

Ջ. Շենոջաքի Հայոց ցեղասպանությանը կատարած անդրադարձների մասին խոսելիս կցանկանայինք ներկայացնել նաև 2005 թ. գերմանական թերթերից մեկում տպագրված «Ժխտված ցեղասպանություն» հոդվածը<sup>2</sup>: Նա գրում է, որ Հայոց ցեղասպանության հարցում թուրքական մերժողականությունը, առավել ևս հայկական սփյուռքին ազգայնականության մեջ մեղադրելու փորձերը բացահայտ անամոթություն են: Նա շեշտում է, որ Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը հույժ կարևոր է և ոչ մի դեպքում չի կարող փոխարինվել քննարկումներով կամ պատմաբանների տված գնահատականներով: Հեղինակը, սակայն, ցավով նշում է, որ թուրք հասարակության մեջ ժխտողականությունն այնքան խորն է արմատավորվել, որ դրանից հրաժարվելը դարձել է դավաճանության նման մի բան: Ամենից շատ Ջ. Շենոջաքին անհանգստացնում է այն փաստը, որ թուրքական իշխանությունները հայերի ողբերգությունն օգտագործում են Գերմանիայում թուրքական ազգայնականությունը բորբոքելու համար: Նման վերաբերմունքը որակելով սխալ և անթույլատրելի՝ մտավորականը դա համարում է արտերկրում բնակվող թուրքերի իրական խնդիրների նկատմամբ կատարյալ անտարբերություն և նրանց միայն սեփական շահերը առաջ տանելու գործիքի վերածելու փորձ: Հիրավի, թուրքական սփյուռքի հետ կապված պաշտոնական Անկարայի հայտարարություններին որոշ ժամանակ հետևելուց հետո պարզ է դառնում, որ սփյուռքը դիտարկվում է

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>2</sup> Հոդվածի ամբողջական տարբերակը հասանելի է <http://www.signandsight.com/features/154.html> կայքում:

որպես բացառապես թրքամետ գաղափարներն առաջ տանելու միջոց, թուրքական մշակույթի ազդեցությունը հավելելու հարթակ:

Չ. Շենոջաքը անդրադառնում է նաև Թուրքիայի ապագայի հարցին՝ նկատի ունենալով, հավանաբար, նաև ԵՄ անդամակցումը: Նա գրում է, որ եթե հասարակությունն ի վիճակի չէ ընդունել, քննադատել նման չափերի հանցագործությունը և հրաժարվում է մեղավորության կամ գոնե պատասխանատվության ճանաչումից, ապա նույն հանցանքի կրկնությունը բացաված չէ: Հիշելու կարողություն չունեցող հասարակությունը դատապարտված է անցյալի սխալներում բանտարկված մնալուն: Նման վճիռը շատ ավելի դաժան է, քան ցանկացած դատավարություն, որ կարող է բաժին ընկնել մի կառավարության: XXI դարում թուրքական հասարակությունը եթե ուզում է եվրոպացիների շրջանում ընդունված լինել, չի կարող այլևս թույլ տալ իրեն այս փոսած ու կոպիտ պատմական խեղաթյուրումը: Թուրքերը չեն կարող պահանջել, որ մյուսներն ընդունեն իրենց պատմությունը, երբ իրենք անձամբ կարող են հավատալ միայն իրենց իսկ հորինած տարբերակին:

Այսպիսով, եթե Չ. Շենոջաքի վեպերում Հայոց ցեղասպանության թեման ներակայացված է քողարկված, առանց վերջնական կարծիքներ արտահայտելու, ապա հողվածում ակնառու են հեղինակի մերժողական վերաբերմունքը Թուրքիայի որդեգրած քաղաքական գծի նկատմամբ, ինչպես նաև իրականության բավական սթափ գնահատականները:

**Наира Погосян – *Армянский вопрос в произведениях турецкого писателя из Германии Зафера Шеноджака***

С начала 1990-ых годов тема Геноцида армян, несмотря на существующее в Турции строгое табу, нашла свое отражение в работах турецких писателей, проживавших в Германии. К этой теме обращаются многие известные представители турецкой общины Германии. Одним из первых таких авторов является Зафер Шеноджак. Исследование работ этого писателя является актуальным, в особенности, в свете усиливающегося антиармянского лоббинга турецкой общины Германии.

**Naira Poghosyan – *The Armenian Question in the Works of Turkish-German Writer Zafer Shenocak***

Since the early 90s, the subject of Armenian Genocide has been reflected in the works of Turkish-German writers despite the strict taboo on discussing it in Turkey. Many famous representatives of the Turkish community of Germany refer to this subject. Zafer Shenocak is among these authors. The investigation of his works is especially important in the light of increasing anti-Armenian lobbying activity of the Turkish community of Germany.

**ԿԱՐՍԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻ ԵՎ  
ԷԹՆԻԿ ԿԱԶՄԻ ՇԱՐԺՆԸ 1878 -1914 թթ.**

***Բանալի բառեր** – էթնիկ կազմ, սեռատարիքային և դասնական կազմ, բնակչության շարժընթաց, տեղաշարժեր, բնական և միգրացիայի աճ/նվազում, բնական շարժ, բնակչության վերարտադրություն, ծնելիություն, մահացություն, բնակչության տեղաբաշխում*

**Պատմական համառոտ ակնարկ:** Կարսի մարզը 1878-1917 թթ. համարվում էր Ռուսական կայսրության վարչատարածքային միավոր, կազմավորվել էր 1877 թ. նոյեմբերի 6-ին թուրքերից ազատագրված Կարսի նահանգի (վիլայեթ) տարածքում: Ընդգրկված էր Կովկասի փոխարքայությունում՝ Անդրկովկասի հարավարևմտյան մասում, և զբաղեցնում էր շուրջ 18646 քառ. կմ տարածք<sup>1</sup>:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո՝ 1878 թ. փետրվարի 19-ին, կնքվեց Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը, որի դրույթները եվրոպական խոշոր տերությունների կողմից միանշանակ չընդունվեցին: Նրանց պահանջով հրավիրվեց եվրոպական կոնֆերանս՝ վերանայելու Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Ի վերջո նրանց միջամտությամբ 1878 թ. հունիսի 13-ին բացվեց Բեռլինի վեհաժողովը, որտեղ եվրոպական դիվանագետների մեքենայությունների հետևանքով Սան-Ստեֆանոյի պայմանագիրը զգալի փոփոխությունների ենթարկվեց, որն ադետալի էր հատկապես Արևմտյան Հայաստանի բնակչության համար<sup>2</sup>:

Կովկասի փոխարքայությունը 1878 թ. դեկտեմբերի 27-ին հաստատեց Կարսի մարզի կառավարման նոր կանոնադրությունը, ըստ որի մարզը կցվեց Կովկասի ռազմական օկրուգին և ենթարկվեց բանակի գլխավոր հրամանատարին. ի դեպ, կառավարումը իրականացնում էր նահանգապետը: Ըստ այդ կանոնադրության՝ մարզը բաժանվեց հետևյալ վարչամիավորների՝ մարզային քաղաք Կարս, Կարսի, Արդահանի, Զարիշատի, Շորագյալի,

<sup>1</sup> Կարսի նահանգը (վիլայեթը) կազմավորվել է 1876 թ. Էրզրումի նահանգի Կարսի գավառի տարածքում (համապատասխանում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վանանդ գավառին), կենտրոնը Կարս քաղաքն էր:

<sup>2</sup> St' u **Погосян А. М.**, Карсская область в составе России, Ереван, 1983, с. 5, 13.

Կաղզվանի, Օլթի-Փոսխովի օկրուզներ և Չլդըրի ու Խորասանի պրիստավություններ<sup>1</sup>:

Կարսի մարզը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան կամ Փոքր Կովկասի հարավարևմտյան մասը: Որպես Ռուսաստանի վարչամիավոր՝ հյուսիսից սահմանակից էր Թիֆլիսի, արևելքից և հարավարևելքից՝ Երևանի, հյուսիս-արևմուտքից՝ Քութայիսի նահանգներին և Բաթումի մարզին, իսկ արևմուտքից և հարավից՝ Էրզրումի վիլայեթին<sup>2</sup>:

Երկրամասի մակերևույթը խիստ կտրտված է, կազմված է տարբեր ուղղություններով ձգվող լեռնաշղթաներից, բարձրավանդակներից ու խոր գետահովիտներից: Տարածքի գլխավոր ջրբաժանն ունի միջօրեականի ուղղություն. հյուսիսային հատվածը հայտնի է Արսիանի, իսկ հարավայինը՝ Սողանլուղի լեռներ անուններով, որոնց արևմտյան մասը զբաղեցնում է Օլթիի գետահովիտը: Մարզի հարավային մասում Կաղզվանի կիրճն է՝ Արաքսի խոր հովտով, որից հարավ, գետին գրեթե զուգահեռ, ձգվում է Հայկական պար լեռնաշղթան: Այստեղ կենտրոնական դիրք է գրավում Կարսի սարահարթը, որն աչքի է ընկնում հարուստ արոտավայրերով ու բերրի հողերով:

Կարսի մարզն ունի գետային խիտ ցանց. դրանք հիմնականում պատկանում են Կուրի, Արաքսի և Ճորոխի ավազաններին. ամենամեծ լիճը Չլդըրն է, մյուս լճերից կարելի է առանձնացնել Արփին (այժմ՝ ՀՀ տարածքում): Երկրաբանական առումով մարզի տարածքը կազմված է հրաբխային ապարներից, լավաներից ու տուֆերից:

Կլիմայական պայմանները խիստ են. հուլիսին միջին ջերմաստիճանը կազմում է 16-18°C, իսկ հունվարին՝ – 16-17°, սարահարթերում սառնամանիքներն անցնում են – 30°-ը: Թերևս մեղմ կլիմա ունեն Օլթիի և Կաղզվանի շրջանները, որտեղ ջերմաստիճանը անցնում է 30°-ը: Այս առումով հետաքրքիր տվյալներ կան 1886-1905 թթ. վերաբերյալ. այսպես, Կարսում ձմռանը միջին ջերմաստիճանը եղել է –11°C, իսկ ամռանը՝ 16.5°, Օլթիում՝ համապատասխանաբար – 3.8°C և 21.6, Սարիղամիշում՝ – 8.3° և 14.8°: Տարեկան միջին ջերմաստիճանը Կարսում կազմել է 3.8°C, Օլթիում՝ 9.4°, իսկ Սարիղամիշում՝ 3.4°: Տեղումներն անհավասարաչափ են բաշխված. մարզի հյուսիսային մասերում ավելի առատ են, քան հարավայինում<sup>3</sup>:

Բնակլիմայական պայմանների բազմազանությունը նպաստավոր է ինչպես երկրագործությանը, այնպես էլ անասնապահությանը զբաղվելու համար:

---

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 63:

<sup>2</sup> Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան» (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 5, Երևան, 1979, էջ 346:

<sup>3</sup> Տե՛ս «Кавказский календарь на 1913 г.» (այսուհետև՝ КК), Тифлис, 1912, отд. Метеорологический, с. 62-63:



Հայկական և օտար սկզբնաղբյուրները վկայում են, որ մարզի ամբողջ տարածքը հնուց ի վեր հիմնականում բնակեցված է եղել հայերով. այն հիրավի հայ ժողովրդի բնօրրաններից էր: Ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Կարսի մարզի տարածքը հաճախ է ենթարկվել վաչկատուն տարբեր ցեղերի հարձակումներին ու թալանին, բնականաբար այդ ամենը իրենց բացասական ազդեցությունն են թողել տեղաբնիկների վրա: Օսմանյան կայսրությունում հայ բնակչությունը պարբերաբար ենթարկվել է ջարդերի, ձուլման ու բռնագաղթի, որոնց հետևանքով ինչպես Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում, այնպես էլ Կարսի մարզում հայ բնակչության թիվն աստիճանաբար նվազել է<sup>1</sup>:

Մարզի բնակչության համար մեծ փորձություն էին XIX դ. ընթացքում տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմները, որոնք բնակչության արտագաղթի պատճառ դարձան՝ ներագդելով ժողովրդագրական զարգացումների վրա: Հայ բնակչության թիվն ու կազմն այդ պատերազմներում զգալի փոփոխությունների ենթարկվեցին թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականության հետևանքով: Կարսի մարզի գոյության ընթացքում (1877 թ. նոյեմբեր – 1920 թ. դեկտեմբեր) չնայած հայ բնակչությունը զերծ մնաց ֆիզիկական բնաջնջումից, ու ավելացավ նրա թվաքանակը, սակայն հետագայում գոհ դարձավ քեմալական Թուրքիայի իրականացրած եղեռնի, որի հետևանքով ամբողջությամբ հայաթափվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև մարզի տարածքը<sup>2</sup>:

Կարսի մարզը Ռուսաստանին միացնելուց հետո մուսուլման բնակչության մեծ մասը (հիմնականում՝ թուրքեր) գաղթեց Թուրքիա. այսպես, շուրջ երեք տարվա ընթացքում (1878-1880 թթ.) մարզի տարածքից հեռացել է 65.4 հազ. մարդ, այդ թվում՝ միայն Կարսից՝ ավելի քան 11 հազար<sup>3</sup>: 1879 թ. ընթացքում հեռացել էր 38.2 հազ. մուսուլման, 1881 թ. օգոստոսին այդ թիվը հասավ 82.7 հազարի: Մուսուլման բնակչության արտագաղթի հիմնական պատճառը ռուսական կարգերին չենթարկվելն էր: Նրանց արտագաղթը շարունակվեց մինչև XIX դ. վերջը:

Արտագաղթին զուգընթաց ցարական կառավարությունը կազմակերպում էր ռուսների ներգաղթը՝ միևնույն ժամանակ տարբեր պատրվակներով արգելելով հայերի հոսքը Կարսի մարզ, և դա այն դեպքում, երբ արևմտահայերը, մտավախություն ունենալով թուրքերի վրեժխնդրությունից, մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի հետ. նրանք համայնքներով դիմում էին համապատասխան մարմիններին՝ թույլատրել անցնելու մարզի

---

<sup>1</sup> Տե՛ս **Հակոբյան Ա. Մ.**, Կարսի մարզի ազգաբնակչությունը (1897-1914 թթ.) // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, թիվ 4, էջ 147:

<sup>2</sup> Տե՛ս **Погосян А. М.**, նշվ. աշխ., էջ 16:

<sup>3</sup> Տե՛ս **Исмаил Зале Д. И.**, Русское крестьянство в Закавказье (30-е годы XIX – начало XX в.), М., 1982, с. 120.

տարածք, սակայն ռուսները նպատակ ունեին մարզում բնակեցնել հիմնականում իրենց հայրենակիցներին<sup>1</sup>:

Հայերի առաջին զանգվածային ներգաղթը սկսվեց 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ մարզում վերաբնակվեցին Ալաշկերտի, Բայազետի, Էրզրումի և այլ գավառներից տեղահանված բազմաթիվ հայ գաղթականներ. եթե 1878-1879 թթ. մարզի հայ բնակչության թիվը 19.4 հազ. էր, իսկ 1882 թ.՝ 31.5 հազ., ապա 1890 թ.՝ 42.4 հազ. մարդ: Կարսի հայ բնակչության թիվը շարունակեց աճել նաև XIX դ. 90-ականներին Աբդուլ Համիդ II-ի ջարդերից փրկված արևմտահայերի բռնագաղթի հետևանքով (ըստ 1897 թ. մարդահամարի՝ 73.4 հազ.)<sup>2</sup>: Նշենք նաև, որ բնակչության տեղաշարժերի արդյունքում Կարսի և Արդահանի գավառները գրեթե զրկվեցին մուսուլմաններից, որոնց փոխարեն հաստատվեցին բազմաթիվ հայեր, որոնք հիմնականում գաղթել էին Եփրատի վերին ավազանի ու Ճորոխի հովտի բնակավայրերից<sup>3</sup>:

Մուսուլմանների արտահոսքի և Արևմտյան Հայաստանի ու Անդրկովկասի տարբեր գավառներից հայերի և այլ ժողովուրդների ներհոսքի հետևանքով զգալիորեն փոխվեց մարզի բնակչության ժողովրդագրական պատկերը:

Եթե մուսուլմանների արտագաղթի վերաբերյալ արխիվային փաստաթղթերում եղած նյութերը սակավ են, ապա ներգաղթը ավելի հանգամանորեն է ներկայացված: Ըստ դրանց՝ 1879-1882 թթ. Կարսի մարզում վերաբնակություն են հաստատել բազմաթիվ ռուս ընտանիքներ Կուրանի մարզից, Սարատովի, Տավրիայի, Բաքվի, Թիֆլիսի, Երևանի և Ելիզավետպոլի նահանգներից (գ. Ելենովկա, Միխայլովկա, Կարմալինովկա, Նոր Դիլիջան, Գոլովինո, Նիկիտինո, Սեմյոնովկա, Սուխոյ Ֆոնտան, Ալեքսանդրովկա և այլն): Հույները տեղափոխվել են Թուրքիայից, Թիֆլիսի նահանգի Բորչալուի, Ախալքալակի, ինչպես նաև Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառներից: Հայերը գաղթել են գլխավորապես Թուրքիայի տարածքից ու Երևանի նահանգից, ասորիները՝ Թուրքիայից, իսկ գերմանացիները՝ Թիֆլիսի նահանգից<sup>4</sup>: Նշված տարիներին ներգաղթի հետևանքով մարզում հաստատվել է 711 ծուխ, ընդամենը՝ 3948 մարդ (2139 տղմ. և 1809 կին), այդ

<sup>1</sup> Տե՛ս **Погосян А. М.**, նշվ. աշխ., էջ 122-123:

<sup>2</sup> Տե՛ս «Сборник сведений о Кавказе» (далее – ССК), т. VII, Тифлис, 1880, с. LXIV-LXVII; «Сборник материалов для описания местностей и племен Кавказа» (далее – СМОМПК), вып. 3, Тифлис, 1883, с. 341; «КК на 1907 г.», Тифлис, 1906, отд. II, с. 112-117; **Իշխանյան Բ.**, Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914, էջ 46; **Исмаил Заде Д. И.**, նշվ. աշխ., էջ 222; Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 274, ց. 1, գ. 9/II (Обзор Карсской области, л. 118-126).

<sup>3</sup> Տե՛ս **Ռեկյոու Է.**, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազանը, Ռուսիա լիճ և Առաջավոր Ասիա, Վաղարշապատ, 1890, էջ 39:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 269, ց. 2, գ. 3026-3159:

թվում՝ Թախտինի օկրուգում՝ 136 ծուխ և 683 մարդ, Ջարուշատի օկրուգում՝ 16 և 83, Արդահանի օկրուգում՝ 172 և 932, Կադզվանի օկրուգում՝ 373 և 2204, Օլթիի օկրուգում՝ 14 և 46: Նույն տարվա երկրորդ կեսին կատարվել են բնակչության տնտեսական իրավիճակի վերաբերյալ միաժամանակյա հաշվառումներ<sup>1</sup>:

Ռուսաստանին միանալուց հետո տեղաշարժերի շնորհիվ մարզի բնակավայրերի ու բնակչության թիվը ավելացավ: Այսպես, 1878 թ. մարզում կար 630 գյուղ՝ 12.4 հազ. տնտեսությամբ, 1881 թ. հիմնվեց 81 նոր գյուղ, 1888 թ.՝ 103, իսկ 1890 թ.՝ 129 գյուղ: Գյուղերը խմբավորված էին ըստ համայնքների, որոնց հիմքում նախատեսված էր դնել գյուղախմբերի էթնիկ միատարրությունը, որը, սակայն, չիրականացավ: Դարավերջին մարզի 800 գյուղ միավորված էր 95 համայնքում, յուրաքանչյուր համայնք բաղկացած էր 150-1000 ծխերից: Յուրաքանչյուր գյուղին միջին հաշվով բաժին էր հասնում 31 ծուխ՝ 275 բնակչով: Գյուղերի կեսից ավելին բաղկացած էր 25-50 տնտեսությունից: Սովորաբար հայկական գյուղերը ունեին 200 և ավելի տնտեսություններ<sup>2</sup>:

Ըստ Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի՝ 1882 թ. փետրվարին լրանում էր այն ժամկետը, ըստ որի մարզից հեռանալ ցանկացող բնակչությանը թույլատրվում էր անցնել Թուրքիայի տարածք: Այսպես, հունվարի 1-ից փետրվարի 3-ը ընկած ժամանակահատվածում Արդահանի օկրուգից արտագաղթել է 4537 մարդ, Օլթիի օկրուգից՝ 3117, Կադզվանի օկրուգից՝ 166, Ջարուշատից՝ 6587, Խորասանի պրիստավությունից՝ 179, իսկ Կարս քաղաքից՝ 648 մարդ, ընդամենը՝ 15234 մարդ (7743 տղամարդ և 7491 կին):

Ըստ 1883 թ. իրականացված վարչատարածքային նոր փոփոխությունների՝ Կարսի մարզը բաժանվեց 4 օկրուգի՝ Կարսի, Արդահանի, Կադզվանի և Օլթիի, որոնք էլ իրենց հերթին՝ 14 տեղամասի և 148 գյուղական համայնքի<sup>3</sup>:

Այսպիսով, Կարսի մարզը Ռուսաստանին միացնելուց հետո բնակչության զանգվածային ներհոսքի ու արտահոսքի հետևանքով զգալիորեն փոխվեցին նրա թվաքանակն ու կառուցվածքը, աստիճանաբար կայունացավ բնակչությունը, և վերարտադրության մեջ կարևոր դեր սկսեց խաղալ բնական շարժը:

**Բնակչության թվի ու կազմի շարժրնթացք:** Կառավարման նոր համակարգի անցնելու և տնտեսական վիճակը փոքր-ինչ բարելավելու նպատակով ցարական կառավարությունը քաղաքական և տնտեսական դժվարին պայմաններում ձեռնամուխ եղավ մարզի բնակչության հաշվառմանը: Սկզբնական շրջանում դրանց արդյունքները, բնականաբար, շատ մոտավոր

<sup>1</sup> «КК на 1884 г.», Тифлис, 1883, отд. III, с. 317.

<sup>2</sup> Տե՛ս **Հակոբյան Ա. Մ.**, Գյուղական համայնքը Կարսի մարզում (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ), ՊԲՀ, 1987, թիվ 1, էջ 65-66; КК на 1891 г., Тифлис, 1890, отд. I, с. 16-19; КК на 1896 г., Тифлис, 1895, отд. V, с. 34-35; КК на 1905 г., Тифлис, 1904, отд. III, с. 40-43:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 64:


էին ու ոչ լիարժեք, սակայն հետագայում, հաշվառումների կատարելագործմամբ և բնակչության կայունացմամբ պայմանավորված, հնարավոր դարձավ անցկացնել ամբողջական հաշվառումներ և ստանալ համեմատաբար հավաստի տվյալներ: Այս պարագայում, սակայն, խառնաշփոթ էր ստեղծվել մշտական ու առկա բնակչությունը հաշվառելիս, ավելին՝ շատ հաճախ հաշվառվել են միայն բնիկները: Մարզի բնակչության ամենամյա հաշվառումների արդյունքները տպագրվել են տարբեր պարբերականներում ու բազմահատոր հրատարակություններում, որոնցից կարելի է առանձնացնել «Կովկասյան օրացույցում» գետեղված վիճակագրական բազմաբնույթ նյութերն ու աղյուսակները: Մակայն մարզի խնդրո առարկա ժամանակահատվածի ժողովրդագրական զարգացումների համապարփակ նկարագիրը ներկայացնելու համար գրավոր սկզբնաղբյուրներում հաճախ ենք հանդիպում թերի, իրարամերժ տվյալների ու ոչ հստակ մեկնաբանությունների, որոնք վերլուծության լրացուցիչ դժվարություններ են հարուցում:

Մարզի բնակչության թվաքանակի ու կազմի փոփոխությունների մասին ընդհանուր պատկերացում է տալիս աղյուսակ 1-ը, որտեղ ներկայացված են մի շարք սկզբնաղբյուրների հիման վրա մեր կողմից հաշվարկված տվյալներ: Աղյուսակից և գծապատկերից հետևում է, որ մարզի բնակչության ընդհանուր թիվը նշված ժամանակահատվածում հիմնականում ավելացել է, սակայն արձանագրվել են աճի տեմպերի որոշակի տատանումներ (տե՛ս գծ. 1), որոնք առանձնապես մեծ չափերի են հասել պատերազմների, բնակչության տեղաշարժերի, համաճարակների, մասամբ նաև թերհաշվառումների հետևանքով: Ինչպես ցույց են տալիս բնիկ և ժամանակավոր բնակչության թվերի, ինչպես նաև բնական շարժի ցուցանիշների վերլուծությունները, մարզի բնակչության ընդհանուր հավելաճը պայմանավորված էր ոչ միայն բնական բարձր աճով, այլև ներգաղթով: Բնակչության աճի տեմպերի նվազումը հետևանք էր 1892-1893 թթ. մարզում և հարակից տարածքներում բռնկված խուլերայի<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, իր տեսակի մեջ եզակի համառուսաստանյան առաջին մարդահամարը անցկացվեց 1897 թ. հունվարի 28-ին, որի նախապատրաստական աշխատանքները տևական էին. նախաձեռնողների թվում էին ժամանակի հայտնի ռուս մտավորականներ: Մարդահամարն անցկացվեց ցարական Ռուսաստանի ամբողջ տարածքում սոցիալ-տնտեսական, քաղաքական բարդ ու անկայուն ժամանակաշրջանում: Բավականին ծավալուն հարցաթերթիկը հնարավորություն ընձեռեց մանրամասն տեղեկություններ գրանցել ամբողջ կայսրության, այդ թվում Կարսի մարզի բնակչության թվի, կազմի, զբաղմունքների, տեղաբաշխման և շատ այլ հարցերի վերաբերյալ:

---

<sup>1</sup> ՀԱՍ, ֆ. 274, ց. 1, գ. 12, թ. 1-2 (Всепопданейший отчет военного губернатора Карсской области за 1894 г.).



Գծապատկեր 1. Կարսի մարզի բնակչության շարժընթացը 1880-1915 թթ.

Ցավոք, մարդահամարի թերթիկներում բնակչության էթնիկ կազմի մասին հարցեր չեն եղել. այդ բացը լրացնելու համար հիմնականում օգտագործում են մայրենի լեզվի տվյալները: Մարդահամարի արդյունքները առանձին գրքերով հրատարակվեցին 1904-1905 թթ.:

Ըստ այդ տվյալների՝ Կարսի մարզի առկա բնակչությունը եղել է 290.6 հազ., իսկ մշտականը՝ 296.9 հազ. մարդ: Ժամանակավոր ապրողների թիվը 4048 էր, իսկ բացակայողներինը՝ 6277 մարդ: Մարզում մեծ էր արտերկրներից եկածների թիվը՝ 22.6 հազ. մարդ: Քաղաքային էր մարզի բնակչության 13%-ը կամ 37.8 հազ. մարդ, որոնք տեղաբաշխված էին մեկ քաղաքում և երեք գյուղաքաղաքներում, ընդ որում, քաղաքային բնակչության շուրջ 55%-ը ապրում էր Կարսում: Մարզում ընդհանուր առմամբ կար 38.1 հազ. տնտեսություն, յուրաքանչյուր 1000 տնտեսությանը բաժին էր ընկնում. ա) տնտեսություններ բարեկամական կապերով՝ 970, բ) մենատնտեսներ՝ 19, գ) բարեկամական կապեր չունեցող տնտեսություններ՝ 6, դ) այլ տնտեսություններ՝ 5: Մասնավոր տնտեսությունների միջին մեծությունը հավասար էր 7.1-ի (3.7 տղմ. և 3.4 կին)<sup>1</sup>:

Մինչև 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարը, մարզի բնակչության շրջանում իրականացրած ամենամյա հաշվառումների արդյունքները, զանգվածային տեղաշարժերով պայմանավորված, շատ

<sup>1</sup> Первая всеобщая перепись населения Российской империи (далее – ПВПНИ), 1897 г. Карсская область, тетрадь 2, СПб., 1904, с. III-VIII.

մոտավոր էին, որի հետևանքով գրականության մեջ հանդիպող, նույն տարեթվին ու վայրին վերաբերող ցուցանիշները չեն համընկնում: Այդ հակասությունները հարթելու նպատակով համեմատել ենք բնակչության բնական շարժի և ընդհանուր աճի ցուցանիշներն ու փորձել լրացուցիչ հաշվարկներով դրանք հնարավորինս համադրելի դարձնել: Արդյունքում ստացանք բնակչության թվի ու սեռի շարժընթացին վերաբերող հետևյալ պատկերը (տե՛ս աղ. 1): Ինչպես տեսնում ենք, մարզի բնակչության թիվը, չնայած տարեկան միջին աճի տեմպերի տատանումներին, ուսումնասիրվող ժամանակահատվածում ավելացել է:

Աղյուսակ 1

Կարսի մարզի բնակչության թվի և կազմի փոփոխությունները 1880-1915 թթ.<sup>1</sup>

(հազ. մարդ)

| Տարեթիվ | Տղամարդ | %    | Կին  | %    | Ընդամենը | Տարեկան միջին աճը |
|---------|---------|------|------|------|----------|-------------------|
| 1880    | 49.5    | 52.0 | 45.6 | 48.0 | 95.1     | -                 |
| 1881    | 52.9    | 52.2 | 48.4 | 47.8 | 101.3    | +6.2              |
| 1882    | 75.9    | 52.2 | 69.5 | 47.8 | 145.4    | +44.1             |
| 1883    | 85.0    | 52.2 | 77.9 | 47.8 | 162.9    | +17.5             |
| 1885    | 89.5    | 52.1 | 82.3 | 47.9 | 171.9    | +4.5              |
| 1886    | 90.4    | 51.9 | 83.6 | 48.1 | 174.0    | +2.1              |
| 1889    | 97.3    | 52.0 | 89.7 | 48.0 | 187.0    | +4.3              |
| 1890    | 99.5    | 52.0 | 91.8 | 48.0 | 191.3    | +4.3              |

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 274, ց. 1, գ. 9/2, թ. 118-126 (Обзор Карсской области за 1890 г.); ֆ. 274, ց. 1, գ. 8, թ. 9-10 (Всеподданейший отчет о состоянии Карсской области за 1888 г., Карс, 1890); նույն տեղում, ֆ. 39, ց. 1, գ. 28, թ. 14, 31 (Распределение населения Закавказского края на 1.01. 1912 г. по полам); նույն տեղում, ֆ. 50, ց. 1, գ. 20, 21; ССК, т. VII, Тифлис, 1880, с. LXIV-LXVII, LXX-LXXI; **Садовский К.**, Краткие заметки о Карсской области, СМОМПК, вып. 3, Тифлис, 1883, с. 155, 341; **Эсадзе С.**, Историческая записка об управлении Кавказом, Тифлис, 1907, т. 2, с. 308; ПВПНРИ, 1897 г., Карсская область, тетрадь 2, СПб., 1904, с. III, 1-3; **Ишханян Б.**, Народности Кавказа, Петроград, 1917, с. 23; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. (далее: ССДНЗКИПС, 1886), Тифлис, 1893, б/с; **Хелмицкий П.**, Карсская область. Военно-статистический и географический обзор, часть 2, отд. III, Тифлис, 1897, с. 1-47; КК на 1882 г., Тифлис, 1881, с. 323; КК на 1884 г., отд. III, с. 355; КК на 1885 г., отд. III, с. 222-223, 233, 243; КК на 1886 г., отд. III, с. 162, 209-214; КК на 1887 г., отд. I, с. 219, 226-227; КК на 1889 г., отд. II, с. 224, 226-227; КК на 1891 г., отд. I, с. 16-19, 227; КК на 1893 г., отд. II, с. 44-45; КК на 1894 г., отд. V, с. 121-122, 226-227; КК на 1896 г., отд. V, с. 34-35, 44-45, 60-61, 130-131; КК на 1897 г., отд. V, с. 36-37; КК на 1899 г., отд. I, с. 212, отд. III, с. 21-23; КК на 1902 г., отд. III, с. 21, 36-37; КК на 1903 г., отд. III, с. 21, 44-45; КК на 1904 г., отд. III, с. 40-43; КК на 1905 г., отд. III, с. 40-43; КК на 1910 г., отд. IV, с. 444-447, 490-497; КК на 1912 г., отд. IV, с. 227-238; КК на 1913 г., отд. Стат., с. 132-135; КК на 1914 г., отд. Стат., с. 122-125; КК на 1915 г., отд. Стат., с. 234-237. Центральный статистический комитет МВД. Ежегодник России 1904 г., СПб., 1905, с. 73; 1905 г., СПб., 1906, с. 60-61; 1906 г., СПб., 1907, с. 54-55; 1907 г., СПб., 1908, с. 47; 1908 г., СПб., 1909, с. 47; 1909 г., СПб., 1910, с. 52; 1910 г., СПб., 1911, с. 53; 1911 г., СПб., 1912, с. 51; 1912 г., СПб., 1913, с. 51; 1913 г., СПб., 1914, с. 51; 1914 г., СПб., 1915, с. 51; 1915 г., СПб., 1916, с. 51; 1916 г., СПб., 1917, с. 41.

|      |       |      |       |      |       |       |
|------|-------|------|-------|------|-------|-------|
| 1891 | 102.0 | 52.1 | 93.8  | 47.9 | 195.8 | +4.5  |
| 1892 | 109.4 | 52.0 | 101.3 | 48.0 | 200.8 | +5.0  |
| 1893 | 106.0 | 52.0 | 97.7  | 48.0 | 203.7 | +2.9  |
| 1894 | 107.8 | 52.0 | 99.5  | 48.0 | 207.3 | +3.6  |
| 1895 | 110.3 | 52.0 | 101.8 | 48.0 | 212.1 | +4.8  |
| 1896 | 117.7 | 52.0 | 108.8 | 48.0 | 226.5 | +14.4 |
| 1897 | 162.7 | 55.1 | 129.8 | 44.9 | 292.5 | +66.0 |
| 1898 | 165.3 | 55.6 | 132.1 | 44.4 | 297.4 | +4.9  |
| 1899 | 167.8 | 55.5 | 134.2 | 44.5 | 302.0 | +4.6  |
| 1900 | 169.2 | 55.4 | 136.3 | 44.6 | 305.5 | +3.5  |
| 1902 | 172.5 | 55.0 | 140.8 | 45.0 | 313.4 | +1.8  |
| 1904 | 176.9 | 54.7 | 146.0 | 45.3 | 322.9 | +4.7  |
| 1905 | 185.2 | 53.9 | 158.3 | 46.1 | 343.5 | +20.6 |
| 1906 | 188.2 | 53.9 | 160.9 | 46.1 | 349.1 | +5.6  |
| 1907 | 190.2 | 53.8 | 162.9 | 46.2 | 353.1 | +4.0  |
| 1908 | 193.9 | 53.9 | 165.5 | 46.1 | 359.4 | +6.3  |
| 1909 | 196.7 | 53.9 | 168.0 | 46.1 | 364.7 | +5.3  |
| 1910 | 199.4 | 53.8 | 171.2 | 46.2 | 370.6 | +5.9  |
| 1911 | 202.5 | 53.7 | 174.7 | 46.3 | 377.2 | +6.6  |
| 1912 | 205.2 | 53.5 | 178.1 | 46.5 | 383.3 | +6.1  |
| 1913 | 208.2 | 53.4 | 181.6 | 46.6 | 389.8 | +6.5  |
| 1914 | 211.1 | 53.3 | 185.1 | 46.7 | 396.2 | +6.4  |
| 1915 | 214.3 | 53.1 | 188.7 | 46.9 | 403.0 | +6.8  |

Այդ են վկայում նաև բնակչության աճի հնգամյա ցուցանիշները. այսպես, 1880-1885 թթ. Կարսի մարզի բնակչությունն աճել էր 76.8 հազար մարդով կամ 44.6%-ով (տարեկան միջինը կազմել է 8.9%), 1885-1890 թթ.՝ 19.4 հազ. կամ 10.1% (տարեկան միջինը՝ 2.0%), 1890-1895 թթ.՝ 20.8 հազ. կամ 9.8% (տարեկան միջինը՝ 1.9%), 1895-1900 թթ.՝ 93.4 հազ. կամ 30.5% (տարեկան միջինը՝ 6.1%), 1900-1905 թթ.՝ 38.0 հազ. կամ 11.0% (տարեկան միջինը՝ 2.2%), 1905-1910 թթ.՝ 27.1 հազ. կամ 7.3% (տարեկան միջինը՝ 1.5%), 1910-1915 թթ.՝ 32.4 հազ. կամ 8.0% (տարեկան միջինը՝ 1.6%): Ընդհանրացնելով նշենք, որ մարզի բնակչությունը 1880-1915 թթ. ավելացել է ավելի քան 4.2 անգամ կամ 76.4%-ով, իսկ տարեկան միջին աճը կազմել է 2.2%: Բնակչության գերակշռող մասը տղամարդիկ էին, որոնց տեսակարար կշիռը տարեկան միջին հաշվով կազմել է 53.2%: Բնակչության վերարտադրության մեջ կարևոր տեղ ունի սեռատարիքային կազմը. այն ծնելիության շարժիչ ուժն է. ցավոք տարիքային կազմի վերաբերյալ տվյալների գրեթե բացակայությունը հնարավորություն չի տալիս բնական վերարտադրության մասին ավելի ամբողջական եզրահանգումներ կատարել: Այս առումով 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարը ընձեռել է բացառիկ այդ հնարա-

վորությունը, որի օգնությամբ կարող ենք մոտավոր պատկերացում կազմել XIX դ. վերջերին Կարսի մարզի բնակչության սեռատարիքային կազմի մասին (տե՛ս աղ. 2): Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ մինչև 9 տարեկանների խումբը կազմել է մարզի ամբողջ բնակչության 29.8%-ը, 10-59 տարեկանները՝ 64.3, իսկ 60-ից բարձրը՝ 5.8%-ը: Նշված ցուցանիշները տվյալ ժամանակաշրջանի համար կարելի է միջին համարել. համեմատության համար բերենք Երևանի նահանգի տվյալները, որոնք ավելի նպաստավոր են բնակչության բարձր վերարտադրության առումով: Այսպես, մինչև 9 տարեկանները կազմել են ամբողջ բնակչության 32.1%-ը, 10-59-ը՝ 63.1, իսկ 60-ից բարձրը՝ 4.7%-ը<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, մարդահամարի արդյունքներում տարիքային խմբերը ներկայացված են 9-ամյա կտրվածքով, որը հնարավորություն չի տալիս որոշակի պատկերացում կազմելու մարզի անչափահաս բնակչության և կանանց վերարտադրողական տարիքային խմբերի (15-49) վերաբերյալ: Ներկայացված թվերը վկայում են մարզի բնակչության երիտասարդացման մասին, որով պայմանավորված են ժողովրդագրական զարգացումների հեռանկարները:

Ինչպես վերը նշվեց, բնակչության սեռային կազմում 1897 թ. զգալի էր տղամարդկանց տեսակարար կշիռը. յուրաքանչյուր 1000 տղամարդուն ընկնում էր 810 կին: Բոլոր տարիքներում առկա էր այս պատկերը (բացառությամբ՝ 100-109 տ.), սակայն առավել ցայտուն էր արտահայտված 20-29 տարիքային խմբում (67% տղմ. և 33% կին), որտեղ 1000 տղամարդու հաշվով 491 կին էր, իսկ քաղաքներում՝ նույնիսկ 139 կին, պատճառը քաղաքներում զինվորականների առկայությունն էր<sup>2</sup>:

Աղյուսակ 2

Կարսի մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքը 1897 թ.<sup>3</sup>

| Տարիքային կազմ | Տղամարդ | %    | Կին   | %    | Ընդամենը | %    |
|----------------|---------|------|-------|------|----------|------|
| 0-9            | 43677   | 15.0 | 42952 | 14.8 | 86629    | 29.8 |
| 10-19          | 25566   | 8.8  | 24002 | 8.2  | 49568    | 17.1 |
| 20-29          | 41859   | 14.4 | 20556 | 7.1  | 62415    | 21.5 |
| 30-39          | 19563   | 6.7  | 16807 | 5.8  | 36370    | 12.5 |
| 40-49          | 12823   | 4.4  | 10551 | 3.6  | 23374    | 8.0  |
| 50-59          | 7918    | 2.7  | 7143  | 2.5  | 15061    | 5.2  |
| 60-69          | 5306    | 1.8  | 4458  | 1.5  | 9764     | 3.4  |
| 70-79          | 2395    | 0.8  | 2270  | 0.8  | 4665     | 1.6  |
| 80-89          | 1007    | 0.3  | 952   | 0.3  | 1959     | 0.6  |

<sup>1</sup> ПВДНРИ, 1897 г., Эриванская губерния, СПб., 1905, с. 6-7.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 2-3:

<sup>3</sup> ПВДНРИ, 1897 г., Карсская область, тетрадь 2, СПб., 1904, с. 2-3.



|                 |               |             |               |             |               |            |
|-----------------|---------------|-------------|---------------|-------------|---------------|------------|
| 90-99           | 258           | -           | 252           | -           | 510           | -          |
| 100 և ավելի     | 97            | -           | 118           | -           | 215           | -          |
| Անհայտ տարիք    | 102           | -           | 22            | -           | 124           | -          |
| <b>Ընդամենը</b> | <b>160571</b> | <b>55.2</b> | <b>130083</b> | <b>44.8</b> | <b>290654</b> | <b>100</b> |

**Բնակչության վերարտադրության բնույթը:** Բնակչության ժողովրդագրական գործընթացներում մեծ դեր ունի բնական վերարտադրությունը, այս առումով, ինչպես վկայում են գրավոր սկզբնաղբյուրները, Կարսի մարզին վերաբերող ցուցանիշները թեև թերի են ու ոչ ամբողջական, սակայն հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու բնակչության բնական շարժի մասին՝ դիտարկելով ծնելիության, մահացության ու բնական աճի հարաբերական ցուցանիշները: Աղյուսակ 3-ի տվյալները և գծ. 2-ը ցույց են տալիս, որ չնայած աճի ցուցանիշների տատանումներին՝ բնակչությունը նշված տարեթվերին ունեցել է վերարտադրության բացառապես դրական արդյունքներ, իսկ 1908-1913 թթ. արձանագրվել է հաստատուն աճ: 1914-1915 թթ. բնակչության բնական աճի ցածր ցուցանիշներն արտագաղթի ու ծնելիության նվազման հետևանք էին:

Աղյուսակ 3

Բնակչության բնական շարժը Կարսի մարզում 1884-1915 թթ.<sup>1</sup>

| Տարեթիվ | Ամուսնու թ. (մարդ) | Ծնունդ (մարդ) | %    | Մահ (մարդ) | %    | Աճ +, Նվազում – (մարդ) | %    |
|---------|--------------------|---------------|------|------------|------|------------------------|------|
| 1884    | 1743               | 8538          | 52.7 | 4200       | 25.9 | +4338                  | 26.8 |
| 1891    | -                  | 7861          | 40.1 | 3935       | 20.1 | +3926                  | 20.0 |
| 1893    | -                  | 7743          | 38.0 | 4678       | 22.9 | +3065                  | 15.1 |
| 1894    | 1750               | 7938          | 38.3 | 4020       | 19.4 | +3918                  | 18.9 |
| 1895    | 1541               | 7715          | 36.4 | 3561       | 16.8 | +4154                  | 19.6 |

<sup>1</sup> КК на 1887 г., Тифлис, 1886, отд. I, с. 226-227; КК на 1889 г., Тифлис, 1888, отд. II, с. 226-227; КК на 1893 г., Тифлис, 1892, отд. II, с. 44-45; КК на 1898 г., Тифлис, 1897, отд. III, с. 70; КК на 1900 г., Тифлис, 1899, отд. III, 46; КК на 1903 г., Тифлис, 1902, отд. III, с. 44-45; КК на 1905 г., Тифлис, 1904, отд. III, с. 46-47; КК на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 522-523; КК на 1912 г., Тифлис, 1911, отд. IV, с. 245; КК на 1913 г., Тифлис, 1912, отд. Стат., с. 243; КК на 1914 г., Тифлис, 1913, отд. Стат., с. 163; КК на 1915 г., Тифлис, 1914, отд. Стат., с. 216; КК на 1916 г., Тифлис, 1915, отд. Стат., с. 36; КК на 1917 г., Тифлис, 1916, отд. Стат., с. 245; Обзор Каресской области за 1894 г., Карс, 1895, Ведом. № 5; Обзор... за 1895 г., Карс, 1896, Ведом. № 3; Обзор... за 1896 г., Карс, 1897, Ведом. № 3; Обзор... за 1897 г., Карс, 1898, Ведом. № 3; Обзор... за 1899 г., Карс, 1900, Ведом. № 3; Обзор... за 1900 г., Карс, 1897, Ведом. № 4; Обзор... за 1903 г., Карс, 1904, Ведом. № 3; Обзор... за 1904 г., Карс, 1905, Ведом. № 3; Обзор... за 1905 г., Карс, 1906, Ведом. № 3; Обзор... за 1909 г., Карс, 1910, Ведом. № 3; Обзор... за 1910 г., Карс, 1911, Ведом. № 3; ՀԱՍ, ֆ. 39, գ. 1, Գ. 28, թ. 30; Գ. 29, թ. 22:

|      |      |       |      |       |      |              |             |
|------|------|-------|------|-------|------|--------------|-------------|
| 1896 | 1629 | 8126  | 35.8 | 3078  | 13.6 | <b>+5048</b> | <b>22.2</b> |
| 1897 | 1880 | 8587  | 37.9 | 3648  | 16.1 | <b>+4939</b> | <b>21.8</b> |
| 1898 | 1778 | 8806  | 38.0 | 4235  | 18.3 | <b>+4571</b> | <b>19.7</b> |
| 1899 | 1866 | 8399  | 35.5 | 3883  | 16.4 | <b>+4516</b> | <b>19.1</b> |
| 1900 | 1857 | 8452  | 34.4 | 3779  | 15.4 | <b>+4673</b> | <b>19.0</b> |
| 1903 | 2382 | 12352 | 44.4 | 5771  | 20.7 | <b>+6581</b> | <b>23.7</b> |
| 1904 | 2371 | 9821  | 34.7 | 4626  | 16.3 | <b>+5195</b> | <b>18.4</b> |
| 1905 | 2269 | 10734 | 37.1 | 5256  | 18.1 | <b>+5478</b> | <b>19.0</b> |
| 1908 | 2197 | 12301 | 40.3 | 6838  | 22.4 | <b>+5463</b> | <b>17.9</b> |
| 1909 | 2093 | 13718 | 44.2 | 8881  | 28.6 | <b>+4837</b> | <b>15.6</b> |
| 1910 | 2528 | 16144 | 51.1 | 9509  | 30.1 | <b>+6635</b> | <b>21.0</b> |
| 1911 | 2929 | 13781 | 43.1 | 6555  | 20.5 | <b>+7226</b> | <b>22.6</b> |
| 1912 | 2768 | 15445 | 40.3 | 7293  | 19.0 | <b>+8152</b> | <b>25.1</b> |
| 1913 | 2720 | 16048 | 48.0 | 7742  | 23.2 | <b>+8306</b> | <b>24.8</b> |
| 1914 | 1778 | 10394 | 26.5 | 5245  | 13.4 | <b>+5149</b> | <b>13.1</b> |
| 1915 | 2215 | 12284 | 48.0 | 10034 | 39.3 | <b>+2250</b> | <b>8.7</b>  |

Ըստ բնակչության բնական վերարտադրության ընդհանուր գործակիցների գնահատման սանդղակի՝ ծնելիության գործակիցները հիմնականում բարձր են, սակայն նույնը կարելի է ասել նաև մահացության ցուցանիշների մասին<sup>1</sup>: Ուստի մարզի բնակչության բնական շարժի տվյալները կարելի է բնութագրել բարձր ծնելիությամբ ու շատ բարձր մահացությամբ, որոնց հետևանքով առկա են աճի ոչ բարձր ցուցանիշներ: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Երևանի նահանգում բնակչության բնական աճի ցուցանիշներն ավելի ցածր էին (միջին հաշվով՝ 15.6‰),<sup>2</sup> քան Կարսի մարզում (միջինը՝ 18‰), հետաքրքիր է, որ գրեթե համանման միջին տարեկան գործակիցներ են արձանագրվել Խորհրդային Հայաստանում 1940-1990 թթ.<sup>3</sup>:

Ընտանեկան դրության վերաբերյալ եղած տվյալները ցույց են տալիս, որ 1897 թ. մարզի 1000 բնակչի հաշվով արձանագրվել է 566 ամուրի, 391 ամուսնացած, 42 այրի, 0.5 ամուսնալուծված, իսկ 0.5-ը չի նշել ընտանեկան դրությունը:


<sup>1</sup> **Федорова Н. А., Керимова Л. К.**, Историческая демография: теория и метод, Казань, 2013, с. 34.

<sup>2</sup> КК на 1884 г., Тифлис, 1883, отд. III, с. 212; КК на 1893 г., Тифлис, 1892, отд. II, с. 44; КК на 1898 г., Тифлис, 1897, отд. III, с. 70; КК на 1900 г., Тифлис, 1899, отд. III, с. 46; КК на 1901 г., Тифлис, 1900, отд. III, с. 64-67; КК на 1904 г., Тифлис, 1903, отд. III, с. 46-47; КК на 1912 г., Тифлис, 1911, отд. IV, с. 245; КК на 1913 г., Тифлис, 1912, с. 139, 224; КК на 1915 г., Тифлис, 1914, с. 217.

<sup>3</sup> Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2004, էջ 12:

Ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Կարսի մարզում 1887 թ. ամուսնության մասին գործում էր օրենք, ըստ որի տղամարդիկ կարող էին ամուսնանալ 15, իսկ կանայք՝ 13 տարեկանից: Մարզում 1000 ամուսնացած տղամարդուն ընկնում էր 885 ամուսնացած կին, ընդ որում քաղաքային բնակչության մեջ այդ թիվը նվազել է՝ հասնելով 450-ի, իսկ գյուղականում՝ բարձրացել մինչև 977-ի. ավելին, Արդահանի օկրուգում արձանագրվել է 1045 ամուսնացած կին:

Հետաքրքիր տվյալներ կան մարզի բնակչության ծագման վայրի վերաբերյալ: 1000 բնակչի հաշվով մարզի քաղաքային բնակչությունից տեղաբնիկ էին 310-ը, մարզի այլ շրջաններից՝ 20-ը, այլ նահանգներից ու մարզերից՝ 528-ը, արտերկրներից՝ 142-ը:



Գծապատկեր 2. Կարսի մարզի բնակչության բնական շարժը 1884-1915 թթ.

Գյուղական վայրերում տեղաբնիկ էին 738-ը, մարզի այլ շրջաններից՝ 15-ը, այլ նահանգներից ու մարզերից՝ 110-ը, արտերկրներից՝ 136-ը: Եկվոր բնակչության մեջ, 1000 բնակչի հաշվով, Կարսի մարզում հաստատվել են Երևանի նահանգից՝ 47 մարդ, Թիֆլիսի՝ 30, Վորոնեժի՝ 13, Ելիզավետպոլի՝ 10, այլ մարզերից՝ 20, Թուրքիայից՝ 113, Պարսկաստանից՝ 4: Խայտաբղետ էթնիկ կազմ ունեցող մարզի տարածքում 1000 բնակչի հաշվով ապրում էր 253 հայ, 218 թուրք, 148 քուրդ, 112 հույն, 103 կարափափախ, 96 ռուս, 29 թուրքմեն և այլք՝ 36 մարդ: Ըստ մարդահամարի արդյունքների՝ հայերը հիմնականում տեղաբաշխված էին Կարսի և Կաղզվանի օկրուգներում, ռուսների մեծ մասը՝ Կարսի օկրուգում, հույները գրեթե հավասարաչափ

էին տեղաբաշխված բոլոր օկրուցներում, թուրքերը՝ Արդահանի և Օլթիի, քրդերը՝ Կաղզվանի և Արդահանի, կարափափախները՝ Կարսի և Արդահանի, թուրքմենները՝ Արդահանի և Կարսի օկրուցներում<sup>1</sup>:

Կարսի մարզի առանձին ազգությունների բնական շարժի վերաբերյալ ցուցանիշների բացակայությունը հնարավորություն չի տալիս համեմատության մեջ դիտարկել ժողովրդագրական զարգացումների առանձնահատկությունները նշված ժամանակահատվածում: Սակայն գրավոր սկզբնաղբյուրներից մեկում նման տվյալների հանդիպեցինք (տե՛ս աղ. 4), որը պատկերացում է տալիս մարզի տարածքի տեղաբնիկների դավանական կազմի բնական շարժի մասին<sup>2</sup>:

Աղյուսակ 4

Կարսի մարզի բնիկ բնակչության բնական շարժը ըստ դավանանքի 1903 թ.

| Դավանանք               | Վարչական միավոր     | Ամուսնությունների թիվը | Ծնունդ թիվը | Մահաց. թիվը | Աճ +, Լվազում - |
|------------------------|---------------------|------------------------|-------------|-------------|-----------------|
| Հայ առաքելական         | Քաղաք և ք/տ ավաններ | 168                    | 990         | 624         | +366            |
|                        | Օկրուցներում        | 479                    | 1999        | 1219        | +780            |
|                        | Մարզում             | 647                    | 2989        | 1843        | +1146           |
| Ուղղափառ               | Քաղաք և ք/տ ավաններ | 33                     | 153         | 54          | +99             |
|                        | Օկրուցներում        | 388                    | 2174        | 966         | +1212           |
|                        | Մարզում             | 421                    | 2327        | 1016        | +1311           |
| Ռուս աղանդավոր         | Քաղաք և ք/տ ավաններ | 9                      | 62          | 28          | +34             |
|                        | Օկրուցներում        | 111                    | 562         | 196         | +366            |
|                        | Մարզում             | 120                    | 624         | 224         | +400            |
| Կաթոլիկ                | Քաղաք և ք/տ ավաններ | 8                      | 66          | 44          | +22             |
|                        | Օկրուցներում        | 2                      | 39          | 30          | +9              |
|                        | Մարզում             | 10                     | 105         | 74          | +31             |
| Բողոքական              | Կարսի տեղամաս       | 12                     | 18          | 13          | +5              |
| Մուսուլման-սունի աղանդ | Քաղաք և ք/տ ավաններ | 20                     | 167         | 109         | +58             |
|                        | Օկրուցներում        | 873                    | 4720        | 1758        | +2962           |
|                        | Մարզում             | 893                    | 4887        | 1867        | +3020           |

<sup>1</sup> ПВГНРИ, 1897 г., Карсская область, тетрадь 2, СПб., 1904, с. VII-VIII.

<sup>2</sup> Обзор Карсской области за 1903 г., Карс, 1904, Ведомость № 1.

|                               |                                |             |              |             |              |
|-------------------------------|--------------------------------|-------------|--------------|-------------|--------------|
| Մուսուլման-<br>շիա աղանդ      | Քաղաք և<br>ք/տ ավաններ         | 3           | 8            | 4           | +4           |
|                               | Օկրուգներում                   | 130         | 739          | 359         | +380         |
|                               | Մարզում                        | 133         | 747          | 363         | +384         |
| Մուսուլման-<br>ալիևի<br>աղանդ | Օկրուգներում                   | 106         | 579          | 299         | +280         |
| Քուրդ-եզդի                    | Կաղզվանի<br>օկրուգ             | 40          | 76           | 72          | +4           |
| <b>Ընդամենը</b>               | <b>Քաղաք և<br/>ք/տ ավաններ</b> | <b>241</b>  | <b>1431</b>  | <b>859</b>  | <b>+572</b>  |
|                               | <b>Օկրուգներում</b>            | <b>2141</b> | <b>10921</b> | <b>4912</b> | <b>+6009</b> |
|                               | <b>Մարզում</b>                 | <b>2382</b> | <b>12352</b> | <b>5771</b> | <b>+6581</b> |

Ինչպես երևում է աղյուսակից, բնական հավելաճի ցուցանիշները տարբերվում են ինչպես դավանական պատկանելությամբ, այնպես էլ ըստ քաղաքային ու գյուղական բնակչության: Բնական աճի ամենաբարձր ցուցանիշներ է արձանագրվել ռուս աղանդավորների շրջանում 1000 բնակչի հաշվով՝ 32.8 մարդ, ուղղափառների՝ 30.7, իսկ ամենացածրը եղել է եզդիների՝ 1.1 և բողոքականների՝ 5.7 մարդ:

Աղյուսակ 5

Կարսի մարզի բնակչության տեղաբաշխումը ըստ վարչամիավորների 1882 թ.<sup>1</sup>

| Վարչական<br>միավորներ | Բնակավայրերի<br>թիվը | Մշտական<br>բնակչություն |              |             |              | Ժամանակավոր<br>բնակվողներ |            |             | Ընդամենը<br>մարզում |             |              |
|-----------------------|----------------------|-------------------------|--------------|-------------|--------------|---------------------------|------------|-------------|---------------------|-------------|--------------|
|                       |                      | Ծիերի<br>թիվը           | Տղամարդ      | Կին         | Ընդամենը     | Տղամարդ                   | Կին        | Ընդամենը    | Տղամարդ             | Կին         | Ընդամենը     |
| Արդահանի<br>օկրուգ    | 173                  | 2798                    | 9932         | 9140        | <b>19072</b> | 352                       | 256        | 608         | 10284               | 9396        | <b>19680</b> |
| Արդահան               | 1                    | 134                     | 392          | 327         | <b>719</b>   | 304                       | 250        | 554         | 696                 | 577         | <b>1273</b>  |
| <i>Ընդամենը</i>       | <i>174</i>           | <i>2932</i>             | <i>10324</i> | <i>9467</i> | <i>19791</i> | <i>656</i>                | <i>506</i> | <i>1162</i> | <i>10980</i>        | <i>9973</i> | <i>20953</i> |
| Կաղզվանի<br>օկրուգ    | 62                   | 1154                    | 4287         | 3911        | <b>8198</b>  | 34                        | 28         | 62          | 4321                | 3939        | <b>8260</b>  |
| Կաղզվան               | 1                    | 634                     | 1818         | 1593        | <b>3411</b>  | 277                       | 131        | 408         | 2095                | 1724        | <b>3819</b>  |
| <i>Ընդամենը</i>       | <i>63</i>            | <i>1788</i>             | <i>6105</i>  | <i>5504</i> | <i>11609</i> | <i>311</i>                | <i>159</i> | <i>470</i>  | <i>6416</i>         | <i>5663</i> | <i>12079</i> |
| Օլթիի օկրուգ          | 142                  | 2749                    | 8590         | 8066        | <b>16656</b> | 18                        | 1          | 19          | 8608                | 8067        | <b>16675</b> |
| Օլթի                  | 1                    | 87                      | 221          | 194         | <b>415</b>   | 84                        | 25         | 109         | 305                 | 219         | <b>524</b>   |

<sup>1</sup> КК на 1884 г., Тифлис, 1883, отд. III, с. 318-319.

|                         |            |              |              |              |               |             |             |             |              |              |               |
|-------------------------|------------|--------------|--------------|--------------|---------------|-------------|-------------|-------------|--------------|--------------|---------------|
| <i>Ընդամենը</i>         | <i>143</i> | <i>2836</i>  | <i>8811</i>  | <i>8260</i>  | <i>17071</i>  | <i>102</i>  | <i>26</i>   | <i>128</i>  | <i>8913</i>  | <i>8286</i>  | <i>17199</i>  |
| Թախտինի օկրուզ          | 92         | 2864         | 10605        | 9709         | <b>20314</b>  | 37          | 31          | 68          | 10642        | 9740         | <b>20382</b>  |
| Շուրագլալի օկրուզ       | 138        | 4555         | 18253        | 16593        | <b>34846</b>  | 274         | 170         | 444         | 18527        | 1676<br>3    | <b>35290</b>  |
| Զարիշատի օկրուզ         | 81         | 2013         | 7330         | 6790         | <b>14120</b>  | 69          | -           | 69          | 7399         | 6790         | <b>14189</b>  |
| Չլդրի պրիստավ.          | 47         | 949          | 4134         | 3922         | <b>8056</b>   | 58          | -           | 58          | 4192         | 3922         | <b>8114</b>   |
| Փոսիտլի պրիստավ.        | 55         | 1190         | 4643         | 4103         | <b>8746</b>   | -           | -           | -           | 4643         | 4103         | <b>8746</b>   |
| Խորասանի պրիստավ.       | 32         | 1034         | 3883         | 3562         | <b>7445</b>   | 14          | 12          | 26          | 3897         | 3574         | <b>7471</b>   |
| ք. Կարս                 | 1          | 729          | 1803         | 1611         | <b>3414</b>   | 2276        | 1605        | 3881        | 4079         | 3216         | <b>7295</b>   |
| <b>Ընդամենը մարզում</b> | <b>826</b> | <b>20890</b> | <b>75891</b> | <b>69521</b> | <b>145412</b> | <b>3797</b> | <b>2509</b> | <b>6306</b> | <b>79688</b> | <b>72030</b> | <b>151718</b> |

Ինչ վերաբերում է հայ բնակչությանը, ապա բնական վերարտադրության գործակիցը (16.0%) ցածր է նույնիսկ մարզի միջին ցուցանիշից (23.7%), որը հետևանք էր բարձր ծնելիության և բարձր մահացության (41.7 և 25.7%): Մուսուլման և կաթոլիկ բնակչությունը, շնորհիվ բարձր ծնելիության ու համեմատաբար ցածր մահացության, ունեցել է բնական աճի բարձր գործակիցներ:

Կարսի մարզի 1882 թ. բնակչության վիճակագրությանը վերաբերող առաջին մանրամասն աղյուսակը հրապարակվել է «Կովկասյան օրացույցի» էջերում, որտեղ, բնակչության թվից, սեռային կազմից բացի, ներկայացված են համայնքների, բնակավայրերի, ծխերի, մշտական/բնիկ ու ժամանակավոր բնակչության թիվը, կազմն ու տեղաբաշխումը (տե՛ս աղ. 5): Ըստ աղյուսակի տվյալների՝ մարզի մշտական բնակչության թիվը գերազանցում էր 145.4 հազարը, իսկ ժամանակավոր (տարբեր նահանգներից, մարզերից ու արտերկրներից եկածներ) բնակչության հետ կազմում էր 151.7 հազար (նշված էր նաև զինվորականների տեղաբաշխումը ըստ վարչամիավորների): Յուրաքանչյուր ընտանիքում միջին հաշվով ապրել է 7 մարդ (հաշվարկներ կատարելիս օգտագործվել են մշտական կամ բնիկ բնակչության ցուցանիշները): Գյուղական բնակչության գերակշռությունն ակնհայտ էր. այն կազմել է ամբողջ բնակչության 94.6%-ը: Ժամանակավոր բնակչության կեսից ավելին կենտրոնացած էր Կարսում, ընդ որում շատ բարձր էր տղամարդ բնակչության տեսակարար կշիռը:

Անդրկովկասի ամբողջ տարածքում 1886 թ. կատարվեցին բնակչության հաշվառումներ, որոնք հայտնի են «Ընտանեկան ցուցակներ» անվամբ: Այդ նախաձեռնության նպատակն էր Կովկասում մտցնել համընդհանուր

զինապարտություն, որը հնարավորություն կտար նոր տվյալներ հավաքել երկրամասի բնակչության վերաբերյալ՝ այդպիսով լրացնելու 1872-1873 թթ. իրականացրած «Կամերալ ցուցակագրումների» բացթողումները<sup>1</sup>: Այդ հաշվառումը, չնայած առկա թերություններին, հնարավորություն տվեց մանրամասն տվյալներ հաղորդել մարզի բնակչության թվի, կազմի ու կյանքի այլ ոլորտների վերաբերյալ: Պետք է ասել, որ այն իր տեսակի մեջ ժամանակի եզակի հաշվառումներից էր: Ըստ 1886 թ. հաշվառումների՝ Կարսի մարզը բաժանված էր 4 օկրուգների (Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի), որոնք իրենց հերթին՝ տեղամասերի, իսկ վերջիններս՝ գյուղական համայնքների և գյուղերի: Մարզի մեկ քաղաքում, երեք գյուղաքաղաքներում և 803 գյուղերում ապրում էր 174044 մարդ<sup>2</sup>: Ամենաբազմամարդը Կարսի օկրուգն էր, որտեղ տեղաբաշխված էր ամբողջ բնակչության 44.2%-ը, Արդահանի օկրուգում՝ 25.1, Կաղզվանի՝ 19.6, և Օլթիի՝ 11.1%-ը (տե՛ս աղ. 6):

Գյուղական բնակավայրերում մեկ ընտանիքում միջին հաշվով ապրում էր 7.3 մարդ, ընդ որում ամենաբարձր ցուցանիշը Կարսի օկրուգում էր՝ 7.6, իսկ ամենացածրը՝ Օլթիի օկրուգում, որտեղ միջինը կազմում էր 5.8 մարդ: Կարծում ենք, 80%-ից ավելի հիմնականում կիսաքոչվորական կյանք վարող մուսուլմաններով բնակեցված օկրուգում հաշվառումների հետ կապված խնդիրներ են եղել (հայտնի է, որ հաշվառումների ժամանակ, հարկերից ու ծառայությունից խուսափելու նպատակով, կեղծ տվյալներ էին հաղորդում): Կարս քաղաքում և երեք գյուղաքաղաքներում (местечко) յուրաքանչյուր ընտանիքում միջին հաշվով ապրում էր 5.2 մարդ, ամենացածր ցուցանիշը դարձյալ Օլթիում էր՝ 4.7 մարդ: Հետագայում, բնակչության կայունության հետ կապված, այս ցուցանիշները զգալի փոփոխությունների ենթարկվեցին:

Ստորև բերված աղյուսակների (աղ. 6, 7, 8, 9) տվյալների վերլուծությունից հետևում է, որ մարզի բնիկ բնակչությունը 1886-1910 թթ. ավելացել է 1.8 անգամ, բացարձակ աճը կազմել է 44.8%, իսկ քաղաքայինը՝ 3.6 անգամ կամ 72.6%: Քաղաքային բնակչության բաժինն ամբողջ բնակչության մեջ 1890 թ. կազմել է 5%, իսկ 1908 և 1910 թթ.՝ 10.2%: 1886-1890 թթ. բնակչությունն աճել էր միայն 9%-ով, տարեկան միջին աճը կազմել է 2.2%, իսկ 1890-1908 թթ.՝ համապատասխանաբար 38.3 և 2.1%: Հետաքրքիր է, որ 1910 թ. ժամանակավոր բնակչության մեջ բավականին բարձր էր քաղաքներում ապրողների տեսակարար կշիռը՝ 26%: Այս կապակցությամբ բնակչության կարգավիճակի վերաբերյալ հետաքրքիր վիճակագրական տվյալներ են գետեղված «Обзор...»-ի 1897 թ. համարում<sup>3</sup>: Մարզի տարածքում 1897 թ. հունվարի 1-ի դրությամբ ժամանակավորապես բնակվող 17.8 հազ. անձից հայ վտարանդիներ էին 12.3 հազ., որոնք գաղթել էին Թուրքիայից: Այս գաղթականները

<sup>1</sup> КК на 1887 г., Тифлис, 1886, отд. I, с. 226.

<sup>2</sup> ССДНЗКИПС, 1886 г., Тифлис, 1893, б/с.

<sup>3</sup> Обзор Карсской области за 1896 г., Карс, 1897, с. 5.

մարզի տարածքում տեղաբաշխված էին հետևյալ կերպ. Կարս քաղաքում՝ 356 ընտանիք, 2 հազ. մարդ, այդ թվում՝ 902 երեխա, Կարսի օկրուգում՝ համապատասխանաբար 1.1 հազ., 6.2 հազ., 2.5 հազ., Կաղզվանի օկրուգում՝ 571, 3.3 հազ., 1.4 հազ., Օլթիի օկրուգում՝ 88, 536, 188, Արդահանի օկրուգում՝ 36, 228, 74 երեխա: Ընդամենը մարզում կար 2.2 հազ. ընտանիք, 12.3 հազ. մարդ, այդ թվում՝ 5.0 հազ. երեխա, նրանք կազմել են ամբողջ բնակչության 41%-ը: Ըստ այդ տվյալների, ցածր էր ընտանիքի անդամների միջին թիվը՝ 5.5 մարդ: Նշվում էր նաև, որ հայերը չունեին ապրելու միջոցներ. նրանք իրենց հայրենիքում հիմնականում զբաղվել են երկրագործությամբ, եղել են նաև արհեստավորներ՝ դարբիններ, հյուսններ, քարագործներ և այլն, որոնք Կարսի մարզում գոյատևում էին չնչին վաստակով ու ապրում տեղաբնիկ հայերի տներում: Այս իրավիճակն առաջացել էր այն պատճառով, որ մարզային իշխանությունները երկակի քաղաքականություն էին որդեգրել ներգաղթող բնակչության նկատմամբ:

Աղյուսակ 6

Կարսի մարզի բնակչության թիվն ու տեղաբաշխումը 1886 թ.<sup>1</sup>

| Վարչական միավոր      | Տարածքը (քառ.կմ) | Բնակավայրերի քանակը | Ծխերի քանակը | Տղամարդ      | Գին          | Ընդամենը      |
|----------------------|------------------|---------------------|--------------|--------------|--------------|---------------|
| Կարսի օկրուգ         | 5904.3           | 258                 | 9614         | 39953        | 36959        | 76912         |
| Այդ թվում՝ ք. Կարս   | -                | 1                   | 774          | 2077         | 1862         | 3939          |
| Արդահանի օկրուգ      | 5644.7           | 252                 | 5709         | 22493        | 21150        | 43643         |
| զ/ք Արդահան          | -                | 1                   | 149          | 424          | 354          | 778           |
| Կաղզվանի օկրուգ      | 4418.2           | 147                 | 4115         | 17954        | 16204        | 34158         |
| զ/ք Կաղզվան          | -                | 1                   | 610          | 1802         | 1633         | 3435          |
| Օլթիի օկրուգ         | 2958.6           | 149                 | 3231         | 9982         | 9344         | 19326         |
| զ/ք Օլթի             | -                | 1                   | 142          | 368          | 305          | 673           |
| <b>Ընդամենը</b>      | <b>18925.9</b>   | <b>807</b>          | <b>22669</b> | <b>90387</b> | <b>83657</b> | <b>174044</b> |
| Այդ թվում՝ Քաղաքային | -                | 4                   | 1675         | 4671         | 4154         | 8825          |
| <b>Գյուղական</b>     | -                | <b>803</b>          | <b>22669</b> | <b>85716</b> | <b>79503</b> | <b>165219</b> |

Կարսի մարզի բնակչության 1890 թ. հունվարի 1-ի վիճակագրության վերաբերյալ մանրամասն տվյալներ կան Հայաստանի ազգային արխիվի 274

<sup>1</sup> КК на 1896 г., Тифлис, 1895, отд. V, с. 34-35.



ֆոնդում, որի համաձայն՝ 24.4 հազ. ծխերում ապրել է 191.3 հազ. մարդ (աղ. 7), այդ թվում Կարս քաղաքում՝ 799 ծուխ, 4.3 հազ. մարդ, Կարսի օկրուգի չորս գավառակներում՝ 10.5 հազ. ծուխ, 85.2 հազ. մարդ, Արդահանի օկրուգի չորս գավառակներում՝ 5.8 հազ. ծուխ, 46.7 հազ. մարդ, Օլթիի օկրուգի երկու գավառակում՝ 3.3 հազ. ծուխ, 21.6 հազ. մարդ, Կադզվանի օկրուգի երեք գավառակում՝ 4.7 հազ. ծուխ, 37.7 հազ. մարդ<sup>1</sup>:

Մարզի բնակչության գերակշռող մասն ապրել է գյուղերում (95.1%), բացառությամբ Օլթիի օկրուգի, որտեղ յուրաքանչյուր ծուխ միջին հաշվով ուներ 6.5 բնակիչ, մյուս երեքում այն հավասար էր ութի, մարզի կտրվածքով միջին ցուցանիշը կազմել է 7.8%:

Աղյուսակ 7

Կարսի մարզի բնիկ բնակչության տեղաբաշխումը 1890 թ.<sup>2</sup>

| Վարչական միավոր             | Տարածքը<br>(քառ.կմ) | Տեղա-<br>մաս | Ծխերի<br>քանակը | Գյուղերի<br>քանակը | Ընդամենը<br>բնակիչ |
|-----------------------------|---------------------|--------------|-----------------|--------------------|--------------------|
| Կարսի օկրուգ                | 5904.4              | 5            | 10522           | 256                | 80913              |
| Այդ թվում՝<br>ք. Կարս       | -                   | -            | 799             | -                  | 4305               |
| Արդահանի օկրուգ             | 5644.7              | 4            | 5879            | 250                | 46718              |
| գ/ք Արդահան                 | -                   | -            | 147             | -                  | 782                |
| Կադզվանի օկրուգ             | 4418.2              | 3            | 4707            | 139                | 37734              |
| գ/ք Կադզվան                 | -                   | -            | 568             | -                  | 3516               |
| Օլթիի օկրուգ                | 2958.6              | 2            | 3305            | 146                | 21645              |
| գ/ք Օլթի                    | -                   | -            | 137             | -                  | 710                |
| <b>Ընդամենը<br/>մարզում</b> | <b>18925.9</b>      | <b>14</b>    | <b>24413</b>    | <b>791</b>         | <b>191315</b>      |
| Այդ թվում՝<br>քաղաքներում   | -                   | -            | 1651            | -                  | 9313               |

Որոշակի փոփոխություններ է կրել ծխերի թվով պայմանավորված գյուղերի քանակը 1886-1910 թթ., եթե մինչև 25 ծուխ ունեցող գյուղերի թիվը պակասել էր, ապա ավելացել էր մինչև 50 և 100-200 ծուխ ունեցողների թիվը (տե՛ս Կարսի մարզի էթնիկ քարտեզը): Հարկ է նշել, որ չնայած գյուղերի քանակը գրեթե չի փոխվել, սակայն ավելացել է ծխերի թիվը, այսինքն՝ փոխվել են բնակչության խտության ցուցանիշները. եթե 1886 թ. մեկ քառ. կմ-ին ապրել է 9.2 մարդ, ապա 1908 թ.՝ 16.5, իսկ 1910 թ.՝ 19 մարդ, այս ամենին

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 274, ց. 1, գ. 9/II (Обзор Карсской области, л. 118-126).

<sup>2</sup> Նույն տեղում:

շնորհիվ աճել է նաև ընտանիքի անդամների միջին թիվը. այսպես, 1886 թ. այն կազմել է 7.3, 1890 թ.՝ 7.8, իսկ 1910 թ.՝ 10.2 մարդ<sup>1</sup>:

Աղյուսակ 8

Կարսի մարզի բնակչության թիվն ու կազմը ըստ վարչամիավորի 1908 թ.<sup>2</sup>

| Վարչական միավոր             | Տարածքը<br>(քառ.կմ) | Գյուղական<br>համայնք | Գյուղերի<br>քանակը | Տղամարդ       | Կին           | Ընդամենը      |
|-----------------------------|---------------------|----------------------|--------------------|---------------|---------------|---------------|
| Կարսի օկրուգ                | 5785.4              | 67                   | 262                | 71177         | 66583         | 137760        |
| Այդ թվում՝<br>ք. Կարս       | -                   | -                    | -                  | 10103         | 8294          | 18397         |
| Արդահանի օկրուգ             | 5604.6              | 78                   | 258                | 37727         | 35509         | 73236         |
| զ/ք Արդահան                 | -                   | -                    | -                  | 962           | 814           | 1776          |
| Կաղզվանի օկրուգ             | 4373.6              | 35                   | 144                | 34130         | 31277         | 65407         |
| զ/ք Կաղզվան                 | -                   | -                    | -                  | 5399          | 4384          | 9783          |
| Օլթիի օկրուգ                | 2983.0              | 12                   | 146                | 17313         | 16439         | 33752         |
| զ/ք Օլթի                    | -                   | -                    | -                  | 1010          | 872           | 1882          |
| <b>Ընդամենը<br/>մարզում</b> | <b>18746.7</b>      | <b>192</b>           | <b>811</b>         | <b>160347</b> | <b>149808</b> | <b>310155</b> |
| Այդ թվում՝<br>քաղաքներում   | -                   | -                    | -                  | 17474         | 14364         | 31838         |

Աղյուսակ 9

Կարսի մարզի բնիկ և ժամանակավոր բնակչության թիվը 1910 թ.<sup>3</sup>

| Վարչական<br>միավոր        | Օկրուգ. թիվը | Բնակավ. թիվը | Ծխերի թիվը   | Բնիկ բնակչության<br>թիվը |               |               | Ժամանակավոր<br>բնակչության թիվը |              |              |
|---------------------------|--------------|--------------|--------------|--------------------------|---------------|---------------|---------------------------------|--------------|--------------|
|                           |              |              |              | Տղմ.                     | Կին           | Ընդ.          | Տղմ.                            | Կին          | Ընդ.         |
| Կարսի օկր.                | 21           | 264          | 18393        | 71671                    | 67572         | 139243        | 9256                            | 8905         | 18161        |
| Այդ թվում՝ ք. Կարս        | -            | 1            | 3155         | 10191                    | 8371          | 18562         | 2595                            | 2722         | 5317         |
| Արդահանի օկրուգ           | 12           | 258          | 8257         | 38761                    | 36645         | 75406         | 3840                            | 3457         | 7297         |
| զ/ք Արդահան               | -            | 1            | 260          | 1023                     | 860           | 1883          | 960                             | 816          | 1776         |
| Կաղզվանի օկրուգ           | 10           | 144          | 7951         | 34519                    | 31611         | 66130         | 3319                            | 2884         | 6203         |
| զ/ք Կաղզվան               | -            | 1            | 1520         | 5455                     | 4432          | 9887          | 454                             | 289          | 743          |
| Օլթիի օկր.                | 5            | 146          | 3612         | 17838                    | 16917         | 34755         | 1309                            | 1155         | 2464         |
| զ/ք Օլթի                  | -            | 1            | 275          | 1040                     | 893           | 1933          | 560                             | 522          | 1082         |
| <b>Ընդամենը</b>           | <b>48</b>    | <b>812</b>   | <b>38213</b> | <b>162789</b>            | <b>152745</b> | <b>315534</b> | <b>17724</b>                    | <b>16401</b> | <b>34125</b> |
| Այդ թվում՝<br>քաղաքներում | -            | 4            | 5210         | 17709                    | 14556         | 32265         | 4569                            | 4349         | 8918         |

<sup>1</sup> КК на 1905 г., Тифлис, 1904, отд. III, с. 40-43; ССДНЗКИПС, 1886, Тифлис, 1893, б/с; Ежегодник России 1908, СПб., 1909, с. 47; Ежегодник России 1910, СПб., 1911, с. 53.

<sup>2</sup> КК на 1910 г., Тифлис, 1909, часть I, отд. IV, с. 444-447.

<sup>3</sup> Обзор Карсской области за 1909 г., Карс, 1910, с. 3-12.

Կարճ ժամանակահատվածում Կարսի մարզի բնակչության աճի արագ տեմպերը պայմանավորված էին ռուսական կառավարության ստեղծած կարգ ու կանոնով ու ապահով վիճակով: Ձևավորվում էր քաղաքային բնակչությունը, ավելանում էր քաղաքների թիվը. Կարսը, Կաղզվանը, Արդահանը, Օլթին, Սարիղամիշը համարվում էին մարզի առևտրաարհեստագործական կենտրոններ: Տնտեսության զարգացմանը նպաստեցին 1899 թ. կառուցված Ալեքսանդրապոլ-Կարս և Կարս-Սարիղամիշ երկաթուղիները և ներքին ճանապարհների բարեկարգումը<sup>1</sup>:

**Բնակչության էթնիկ կազմը:** Կարսի մարզի բնակչությունը հատկապես Ռուսաստանի տիրապետության շրջանում աչքի էր ընկնում էթնիկ բազմազանությամբ: Մարզի բնակչությունը 1880-ականների սկզբին տեղաբաշխված էր մեկ քաղաքում (Կարս), երեք գյուղաքաղաքում (Արդահան, Կաղզվան, Օլթի) և 822 գյուղում. նրանք բաժանված էին երկու խմբի՝ *բնիկներ*, որոնք մինչև Ռուսաստանին միացումը ապրել են մարզի տարածքում, և *եկվորներ*, որոնք հաստատվել են միացումից հետո: Բնիկներ էին հայերի մեծ մասը, թուրքերը, թուրքմենները, կարափափախները, քրդերը, օսերը, լեզգիները, գնչուները և հույների փոքր մասը, իսկ եկվորներ՝ ռուսները (մեծ մասամբ՝ աղանդավորներ), հույների մեծ մասը, հայերի մի մասը, քուրդեզիները, էստոնացիները և այլն: Ըստ ապրելակերպի՝ նրանք բաժանվում էին նստակյացների ու կիսաքոչվորների<sup>2</sup>:

**Հայերը**, հնուց ի վեր լինելով Կարսի ու Կաղզվանի գավառների հիմնական բնակչությունը, մարզի հյուսիսային մասում ավելի սակավաթիվ էին, քան հարավայինում. Օլթիի օկրուգում փոքրաթիվ էին, իսկ Արդահանի օկրուգում միայն մեկ գյուղ կար: Հետագայում հայեր ներգաղթեցին Անդրկովկասից ու Թուրքիայից: Նրանց հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, մասամբ՝ նաև անասնապահությունը:

**Թուրքերը** հիմնականում զբաղեցնում էին Կարսի մարզի հյուսիսն ու արևմուտքը, սակայն նրանց կարելի էր հանդիպել նաև մարզի տարբեր մասերում: Հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ, մասամբ՝ նաև երկրագործությամբ:

**Քրդերը** հայտնվել են թուրքերի հիմնավորվելուց հետո: Նրանք տարածված էին ամբողջ մարզում, սակայն հիմնականում զբաղեցնում էին Արդահանի օկրուգի հյուսիսային և Կաղզվանի հարավային մասերը, ընդ որում արևմուտքում շատ ավելի էին, քան արևելքում: Քրդերը հիմնականում զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ:

---

<sup>1</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 72:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 274, ց. 1, գ. 8, թ. 10 (Всепоподданнейший отчет о состоянии Карсской области за 1888 г., Карс, 1890); КК на 1891 г., Тифлис, 1890, отд. I, с. 227-228.

*Կարափափախները (թաթարներ)* եկվորներ են, ընդ որում սունիները XIX դ. սկզբներին տեղափոխվել են Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառից, իսկ շիաները՝ Մոսուլի շրջակա բնակավայրերից. նրանք զբաղեցրել են մարզի հյուսիսարևելյան մասերը՝ Կարսի և Արդահանի օկրուգները:

*Հույները* գաղթել են XIX դ. վերջերին՝ Տրապիզոնի վիլայեթից և Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառից. նրանք մարզի տարածքում հավասարաչափ էին տեղաբաշխված, սակայն համեմատաբար սակավաթիվ էին Օլթիի օկրուգում: Հիմնականում զբաղվում էին երկրագործությամբ ու արհեստներով:

*Թուրքմենները*, ինչպես և հույները, տեղաբաշխված էին մարզի ամբողջ տարածքում, սակայն տեսակարար մեծ կշիռ ունեին Արդահանի և Օլթիի օկրուգներում և զբաղվում էին երկրագործությամբ ու ձիաբուծությամբ:

*Քուրդ-եզդիները* գաղթել էին Թուրքիայից (Բայազետի փաշայություն), որտեղ ենթարկվում էին տեղի քրդերի հալածանքներին, զբաղեցնում էին մարզի հարավարևելյան մասերը՝ Կաղզվանի օկրուգի 14 գյուղերը. նրանք վարում էին նստակյաց կյանք ու զբաղվում երկրագործությամբ ու անասնապահությամբ:

*Ռուսները* մարզի տարածք են թափանցել Ռուսաստանի հարավային նահանգներից ու Անդրկովկասից ռուս-թուրքական պատերազմից հետո ու հաստատվել մարզի կենտրոնական մասերում՝ Կարսի օկրուգում, իսկ Արդահանի օկրուգում ռուսական երկու գյուղ կար: Ռուս աղանդավորների թվում գերակշռում էին մոլոկանները, որոնք XIX դ. 30-40-ականներին գաղթել էին Անդրկովկաս՝ հիմնականում Սարատովի ու Տամբովի, իսկ դուխոբորները՝ Եկատերինոպոլսի ու Տամբովի նահանգներից, կային նաև ոչ մեծ թվով սուբոտնիկներ (տե՛ս քարտեզը):

*Ասորիները, էստոնացիները և գերմանացիները* զբաղեցնում էին Կարսի օկրուգի կենտրոնական մասը:

*Օսերը, լեզգիները և չերքեզները* գաղթել էին Կովկասից ու հիմնականում տեղավորվել Կարսի օկրուգում: Ընդհանուր առմամբ մարզի տարածքում բնակչությունը տեղաբաշխված էր բավականին անհավասարաչափ ու ազգագրական խառը խմբերով, բացառություն էր Փոսխով գետի հովիտը, որտեղ հիմնականում ապրում էին թուրքերը<sup>1</sup>:

Այժմ ներկայացնենք մարզի բնակչության էթնիկ կազմի փոփոխությունները XIX դ. վերջերին (տե՛ս աղ. 10): Բնակչության ազգային կազմի 15-ամյա պատկերը ցույց է տալիս, որ էթնիկ բոլոր խմբերի թվաքանակը հիմնականում ավելացել էր. այսպես, ամենաբարձր աճ ունեցել են ռուսները, որոնք ավելացել են 2.8 անգամ, նրանցից հետո հայերը՝ 2.3, հույները՝ 2.1, քրդերը՝

---

<sup>1</sup> Տե՛ս Янович Ф. С., Очерки Карсской области, СМОМПК, вып. 3, Тифлис, 1904, отд. I, с. 154-157; КК на 1899 г., Тифлис, 1898, отд. II, с. 46-48; Погосян А. М., նշվ. աշխ., էջ 126-127:

1.8 անգամ: Բնակչության էթնիկ բազմազանության առումով եզակի արդյունքներ է արձանագրվել 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի ժամանակ: Աղյուսակ 10-ում նշված էթնիկ խմբերից բացի՝ մարզում ապրել են նաև լիտվացիներ, էստոնացիներ, գերմանացիներ, պարսիկներ, օսեր, լեզգիներ, ասորիներ, վրացիներ և այլն: Բնակչության էթնիկ կազմի շարժընթացի հստակ պատկեր է ներկայացվում գծապատկեր 3-ում, որի թռուցիկ դիտարկումն անգամ ավելի տեսանելի է դարձնում նշված ժամանակահատվածի իրավիճակը:

Մարզի կազմավորման առաջին տարիներին բնակչության էթնիկ կազմը հետևյալ պատկերն ուներ. հայեր էին ամբողջ բնակչության 17.0%-ը, թուրքեր և թաթարներ՝ 67.4%, քրդեր՝ 5.9%, վրացիներ՝ 4.0%, ռուսներ՝ 1.0%, լեզգիները՝ 0.7%, այլք՝ 4.0%-ը<sup>1</sup>: 1882 թ. նկատելի է էթնիկ կազմի գործակիցների փոփոխությունը. հայեր էին բնակչության 21.7%-ը, թուրքեր՝ 27.0, կարափափախներ՝ 15.0, քրդեր՝ 15.0, հույներ՝ 10.5, ռուսներ՝ 5.5, թուրքմեններ՝ 5.0, այլք՝ 0.3%-ը<sup>2</sup>: Այս երկու խումբ ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ բնակչության կազմում բարձրացել է հայերի և ռուսների ու նվազել է թուրք-թաթարական խմբերի տեսակարար կշիռը. հայտնվել էին նոր էթնոսներ:

1886 թ. տվյալների համեմատական դիտարկումը (աղ. 6 և 10) ցույց է տալիս, որ Կարսի մարզը խայտաբղետ էթնիկ կազմ է ունեցել. նրանց թիվն անցնում էր երկու տասնյակը: Մարզի գյուղական բնակչության մեջ ամենաբարձր տեսակարար կշիռ ունեցել են թուրքերը՝ 24%, նրանց փոքր-ինչ զիջում էին հայերը՝ 21.3, իսկ քրդերը՝ 15.2%, որոնք միասին կազմել են գյուղական բնակչության ավելի քան 60%-ը: Բազմէթնիկ էին նաև Կարսի մարզի քաղաքները. բնակչության հիմնական մասը կազմել են հայերը, թուրքերը, հույները և ռուսները: Կարս քաղաքի բնակչության գերակշռող մասը հայեր էին՝ 63.6%, հույները կազմել են 8.2%-ը, իսկ ռուսները՝ 6.4: Արդահանում մեծամասնություն էին թուրքերը՝ 52%, այնուհետև ռուսները՝ 22 և հայերը՝ 18%: Կաղզվանում բնակչության կեսից ավելին հայեր էին՝ 50.3%, թուրքերը կազմել են 46.2%-ը: Օլթիում ևս թվային գերակշռություն ունեին հայերը՝ 75%, թուրքերը կազմել են բնակչության 31.6%-ը: Այսպիսով կարող ենք փաստել, որ մարզի քաղաքային բնակչության 54.4%-ը հայեր էին<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Эсадзе С., նշվ, աշխ., էջ 308:

<sup>2</sup> КК на 1884 г., Тифлис, 1883, отд. III, с. 317.

<sup>3</sup> КК на 1891 г., Тифлис, 1890, отд. I, с. 26-27; ССДНЗКИПС, 1886 г., Карсская область, Тифлис, 1893, б/с.

Կարսի մարզի բնակչության էթնիկ կազմի շարժընթացը 1882-1897 թթ.<sup>1</sup>

| Էթնիկ կազմը        | 1882 թ.       | 1886 թ.       | 1889 թ.       | 1892 թ.       | 1893 թ.       | 1895 թ.       | 1897 թ.       |
|--------------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Հայեր              | 31518         | 37094         | 40772         | 44354         | 45788         | 46710         | 73406         |
| Թուրքեր            | 39261         | 41823         | 44074         | 46955         | 47196         | 48325         | 63547         |
| Քրդեր              | 21812         | 26434         | 28565         | 27877         | 28735         | 29510         | 39390         |
| Հույներ            | 15268         | 23525         | 25532         | 27567         | 28975         | 29613         | 32593         |
| Կարափա-<br>փախներ  | 21815         | 24134         | 25520         | 27187         | 28366         | 28966         | 29879         |
| Ռուսներ            | 7998          | 10695         | 11452         | 11813         | 13250         | 13940         | 22327         |
| Թուրքմեններ        | 7270          | 8893          | 9664          | 10174         | 10470         | 10660         | 8442          |
| Ուկրաինացի-<br>ներ | -             | -             | -             | 876           | -             | -             | 5279          |
| Եզդիներ            | -             | -             | -             | 2386          | 2513          | 2580          | 3578          |
| Լեհեր              | -             | -             | -             | -             | -             | -             | 3243          |
| Թաթարներ           | -             | -             | -             | -             | -             | -             | 2347          |
| Հրեաներ            | -             | -             | -             | -             | -             | -             | 1138          |
| Այլք               | 470           | 1446          | 1449          | 1679          | 2081          | 1800          | 2485          |
| <b>Ընդամենը</b>    | <b>145412</b> | <b>174044</b> | <b>187028</b> | <b>200868</b> | <b>207374</b> | <b>212104</b> | <b>290654</b> |

Ինչ վերաբերում է նշված ժամանակահատվածի գյուղական բնակչության դավանանքին, նշենք, որ մարզում գերակշռող էին սունի մուսուլմանները, որոնք կազմել են գյուղական բնակչության 45.6%-ը, տեսակարար մեծ կշիռ ունեին նաև հայ առաքելականները՝ 20.7%, ուղղափառները՝ 14.3%, շիա մուսուլմանները՝ 6.8% և այլն: 1886 թ. հայերը կազմել են ամբողջ բնակչության 21.3%-ը, որը 2.7%-ով էր զիջում թուրքերին, քրդերը կազմել են 15.2, կարափափախները՝ 13.8, իսկ հույները՝ 13.5%, որոնք միասին կազմել են ամբողջ բնակչության 87.8%-ը: 1886 թ. համեմատ 1892 թ. հայերի տեսակարար կշիռը մեծացել է 0.8%-ով, թուրքերինը՝ նվազել 0.6, քրդերինը՝ 1.4%-ով, գրեթե նույն մակարդակին էին մնացել հույները և կարափափախները:

Մարզի բնակչության էթնիկ կազմում 1889-1892 թթ. մեծ փոփոխություններ տեղի չեն ունեցել. այսպես, հայ բնակչության տեսակարար կշիռը նվազել էր 0.3 տոկոսային կետով, թուրքերինը աճել էր 0.4, քրդերինը նվազել էր

<sup>1</sup> ССК, т. VII, Тифлис, 1880, с. LXIV-LXVII, LXX-LXXI; ССДНЗКИПС, 1886, Тифлис, 1893, б/с; КК на 1883 г., Тифлис, 1882, отд. III, с. 355; КК на 1891 г., Тифлис, 1890, отд. II, с. 26-27; КК на 1894 г., Тифлис, 1893, отд. V, с. 226-227; КК на 1896 г., Тифлис, 1895, отд. V, с. 130-131; КК на 1907 г., Тифлис, 1906, отд. II, с. 112-117; ПВПНРИ, 1897, Карсская область, Тетрадь 2, СПб., 1904, с. 1-3, 34-35; ЗУУ, ф. 274, г. 1, қ. 8, р. 9, ф. 274, г. 1, қ. 12, р. 1-2:

0.3, իսկ հույներինը՝ 0.2, կարափափախներինը աճել էր 0.4, ռուսներինը՝ 0.9 տոկոսային կետով<sup>1</sup>:

1893-1895 թթ. բնակչության ազգային կազմում լուրջ փոփոխություններ չեն կատարվել, սակայն այլ էին 1895-1897 թթ. համեմատական տվյալները. բացի հայերից ու ռուսներից, որոնց տեսակարար կշիռը կազմել է 25.2 և 7.7%, մյուս խմբերում արձանագրվել էր նվազում, այս հանգամանքը բացատրվում է հայ և ռուս բնակչության ներգաղթով:

Կարսի մարզի բնակչության էթնիկ կազմին ու տեղաբաշխմանը վերաբերող աղյուսակների տվյալների (աղ. 11, 12, 13) համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած 1897 թ. համեմատ 1903 թ. ամբողջ բնակչության թիվը նվազել էր ավելի քան 12.7 հազարով կամ 4.4%-ով, սակայն հայ բնակչության թիվը մնացել էր անփոփոխ, իսկ տեսակարար կշիռը՝ բարձրացել: Ամենից շատ նվազել էր ռուսների թիվը՝ 27.6%, ամենաբարձր աճ ունեցել են թուրքմենները՝ 37.9%, իսկ հույները՝ 15.5%: 1903-1910 թթ. ամբողջ բնակչությունն աճել էր շուրջ 12%-ով, գրեթե նույն չափով ավելացել էին հիմնական ազգությունները, փոքր-ինչ նվազել էր ռուսների թիվը: Բնակչության մեծ մասը ապրում էր Կարսի օկրուգում. եթե 1897 թ. այստեղ ապրում էր 134.1 հազ. բնակիչ կամ ամբողջ բնակչության 46.1%-ը, ապա 1910 թ.՝ 139.2 հազ. կամ 44.1%-ը, իսկ Օլթիի օկրուգում՝ 10.8 և 11.0%:

XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին մարզի բնակչության թվի ու կազմի փոփոխությունները հիմնականում տեղաշարժերի արդյունք են. հայտնի է, որ բնակչության զանգվածային ներգաղթի հետևանքով զգալի կուտակումներ էին առաջացել հատկապես կենտրոնական մասերում. տարաբնակեցման լուրջ խնդիրների առջև կանգնած վարչական մարմինները ստիպված էին բնակչությունը բաժանել երեք մասի՝ բնիկ բնակչության, ժամանակավոր ապրողների և զորամիավորումների:

Աղյուսակ 11

Կարսի մարզի բնակչության էթնիկ կազմը ըստ մայրենի լեզվի, 1897 թ.<sup>2</sup>

*մարդ*

| Էթնիկ կազմը | Կարսի օկրուգում | Արդահանի օկրուգում | Կադզվանի օկրուգում | Օլթիի օկրուգում | Ընդամենը |
|-------------|-----------------|--------------------|--------------------|-----------------|----------|
| Հայեր       | 46715           | 1918               | 21648              | 3125            | 73406    |
| Թուրքեր     | 10609           | 28047              | 5172               | 19719           | 63547    |
| Քրդեր       | 9165            | 12565              | 17733              | 3505            | 42968    |
| Հույներ     | 14805           | 7839               | 7245               | 2704            | 32593    |
| Ռուսներ     | 16874           | 1966               | 2617               | 870             | 22327    |
| Թուրքմեններ | 2456            | 4328               | 659                | 999             | 8442     |

<sup>1</sup> ՀՍՍ, ֆ. 274, ց. 1, գ. 8, թ. 9 (Всепогоднейший отчет о состоянии Карсской области за 1888 г. Карс, 1890); Նույն տեղում, գ. 9/II, թ. 118-126 (Обзор Карсской области за 1890 г.).

<sup>2</sup> ПВПНРИ, 1897 г., с. 34-35, 50-59: КК на 1907 г., Тифлис, 1906, отд. II, с. 89-149.

|                 |               |              |              |              |               |
|-----------------|---------------|--------------|--------------|--------------|---------------|
| Ուկրաինացիներ   | 3297          | 383          | 1431         | -            | 5279          |
| Լեհեր           | 2093          | 207          | 895          | -            | 3243          |
| Կարափափախներ    | 22002         | 7874         | -            | -            | 29879         |
| Թաթարներ        | 1439          | -            | -            | -            | 2347          |
| Հրեաներ         | 755           | -            | -            | -            | 1138          |
| Լիտվացիներ      | 611           | -            | -            | -            | 892           |
| Այլք            | 3321          | 636          | 1830         | 597          | 1593          |
| <b>Ընդամենը</b> | <b>134142</b> | <b>65763</b> | <b>59230</b> | <b>31519</b> | <b>290654</b> |

Այս պարագայում, բնականաբար, հնարավոր չէր ամբողջ բնակչության թվի, կազմի ու սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ հավաստի տվյալներ գրանցել: Այդ է պատճառը, որ տարակուսանք է առաջացնում աղ. 16-ում վրացիների 1912-1913 թթ.՝ 90.6%-անոց թռիչքային աճը, կամ 1914-1915 թթ.՝ 88% աճը, և իհարկե գնչուների առավել անհավանական աճը 1913-1914 թթ.՝ 214 անգամ:

Մի նկատառում ևս. XIX դ. վերջերին հրապարակված վիճակագրական տվյալներն ավելի մանրամասն են ու համակարգված (դրանք երևում են նաև ներկայացված աղյուսակներից). եթե 1882-1899 թթ. ներկայացվում էր բնակչության էթնիկ ու դավանական կազմերն առանձին-առանձին, ապա հետագայում դրանք միասին էին տրվում: Եթե հանգամանալից տվյալներ կային դավանական կազմի վերաբերյալ, ապա նույնը չենք կարող ասել էթնիկ կազմի մասին, քանի որ այնտեղ նույնիսկ հիմնական բնակիչներից առանձնացված չեն հույները, թուրքերը, թուրքմենները, կարափափախները և այլն: Այս բացը լրացնելու համար տարբեր աղբյուրների հիման վրա հնարավորինս փորձել ենք ստանալ ամբողջական պատկեր՝ հիմք ընդունելով 1897 թ. մարդահամարի տվյալները:

Աղյուսակների մյուս խումբը (աղ. 14, 15, 16) վերաբերում է 1899-1915 թթ., որոնք մոտավոր պատկերացում են տալիս մարզի բնակչության էթնիկ և դավանական կազմի մասին: Գրավոր սկզբնաղբյուրներում սփռված տարատեսակ վիճակագրական այս տվյալները մշակվել են ու համեմատելը դյուրին դարձնելու նպատակով ներկայացվել աղյուսակներով:



Կարսի մարզի բնիկ բնակչության էթնիկ կազմի տեղաբաշխումը 1903 թ.<sup>1</sup>

| Էթնիկ կազմը              | Կարսի օկրուգ  | Արդահանի օկրուգ | Կադզվանի օկրուգ | Օլթիի օկրուգ | Ընդամենը      |
|--------------------------|---------------|-----------------|-----------------|--------------|---------------|
| Հայեր                    | 45220         | 448             | 24391           | 3348         | <b>73407</b>  |
| Թուրքեր                  | 8767          | 28034           | 3521            | 16978        | <b>57300</b>  |
| Քրդեր                    | 8237          | 11976           | 17857           | 3651         | <b>41721</b>  |
| Հույներ                  | 17020         | 9837            | 8658            | 3066         | <b>38581</b>  |
| Կարափափախ.               | 25189         | 8756            | 751             | 5            | <b>34701</b>  |
| Ռուսներ                  | 14068         | 1792            | 287             | 1            | <b>16148</b>  |
| Թուրքմեններ              | 4077          | 5036            | 1946            | 2545         | <b>13604</b>  |
| Կովկասյան լեռնականներ    | 646           | 46              | -               | 36           | <b>728</b>    |
| Սաիական այլ ժողովուրդներ | 642           | -               | 11              | -            | <b>653</b>    |
| Գնչուներ                 | 464           | -               | -               | 94           | <b>558</b>    |
| Էստոնացիներ              | 321           | -               | -               | -            | <b>321</b>    |
| Գերմանացիներ             | 144           | -               | -               | -            | <b>144</b>    |
| Վրացիներ                 | -             | 24              | -               | -            | <b>24</b>     |
| Հրեաներ                  | 6             | -               | -               | -            | <b>6</b>      |
| <b>Ընդամենը</b>          | <b>119801</b> | <b>65903</b>    | <b>57468</b>    | <b>29724</b> | <b>277896</b> |

Բնակչության էթնոդավանական կազմի 1899 և 1905 թթ. տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ վեց տարիների ընթացքում բնակչությունը աճել էր 18.4%-ով կամ տարեկան միջինը կազմել է 3%, ընդ որում առաքելական դավանանքի հայ բնակչության թիվը բնական ու միգրացիոն բարձր աճի շնորհիվ ավելացել էր 31.4%-ով կամ տարեկան 5.2%-ով: 1899 թ. կաթոլիկ, բողոքական ու ուղղափառ հայերի թիվը 1403 էր, որը կազմում էր հայ բնակչության 2.6%-ը, 1905 թ. այդ գործակիցը մնացել էր անփոփոխ: Ինչ վերաբերում է սունի մուսուլմաններին, ապա նշված ժամանակահատվածում նրանք ավելացել էին 12.8%-ով կամ տարեկան միջինը 2.1%-ով, շիա մուսուլմանները՝ 8.3 կամ 1.4%-ով, ալիս աղանդի մուսուլմանները՝ 17.2 կամ 2.8%-ով, ուղղափառները՝ 20.3 կամ 3.4%-ով:

<sup>1</sup> Обзор Карсской области за 1903 г., Карс, 1904, с. 3.

Կարսի մարզի բնիկ բնակչության էթնիկ կազմն ու տեղաբաշխումը 1910 թ.<sup>1</sup>

| Էթնիկ կազմը                 | Կարսի օկրուգ  | Արդահանի օկրուգ | Կադզվանի օկրուգ | Օլթիի օկրուգ | Ընդամենը      |
|-----------------------------|---------------|-----------------|-----------------|--------------|---------------|
| Հայեր                       | 52930         | 1023            | 27398           | 3849         | <b>85200</b>  |
| Թուրքեր                     | 7995          | 30931           | 4078            | 21466        | <b>64470</b>  |
| Քրդեր                       | 8814          | 13810           | 20720           | 3112         | <b>46456</b>  |
| Հույներ                     | 19833         | 11424           | 10296           | 3451         | <b>45004</b>  |
| Կարափա-<br>փախներ           | 28966         | 10579           | 869             | 3            | <b>40417</b>  |
| Ռուսներ                     | 13827         | 1856            | 398             | -            | <b>16081</b>  |
| Թուրքմեններ                 | 4399          | 5748            | 2308            | 2690         | <b>15145</b>  |
| Ասիական այլ<br>ժողովուրդներ | 1357          | -               | 15              | -            | <b>1372</b>   |
| Կովկասի<br>լեռնականներ      | 776           | -               | 48              | 81           | <b>905</b>    |
| Եվրոպ. այլ<br>ժողովուրդներ  | 334           | -               | -               | -            | <b>334</b>    |
| Գնչուներ                    | -             | -               | -               | 103          | <b>103</b>    |
| Վրացի                       | 6             | 35              | -               | -            | <b>41</b>     |
| Հրեաներ                     | 6             | -               | -               | -            | <b>6</b>      |
| <b>Ընդամենը</b>             | <b>139243</b> | <b>75406</b>    | <b>66130</b>    | <b>34755</b> | <b>315534</b> |

Չնայած ռուս աղանդավորների՝ մուլկանների ու դուխոբորների թիվը բավականին նվազել էր, սակայն 1905 թ. հայտնվել էին նոր աղանդավորներ՝ պրիզուններն ու սուբոտնիկները: Ընդհանրացնելով նշենք, որ մուսուլմանները 1899 թ. կազմել են ամբողջ բնակչության 55.9, քրիստոնյաները՝ 42.8%-ը, իսկ 1905 թ., ընդհակառակը, բարձրացել էր քրիստոնյաների ու նվազել մուսուլմանների տեսակարար կշիռը ու կազմել համապատասխանաբար 52.4 և 46.2%:


Բնակչության սեռային կազմում 1899 թ. գերակշռողը տղամարդիկ էին, որոնց տեսակարար կշիռը միջին հաշվով 51.5% էր, իսկ եզդիների մեջ այս ցուցանիշը միջինից բարձր էր՝ 53.2%:

<sup>1</sup> Обзор Карсской области за 1909 год, Карс, 1910, с. 3.

Կարսի մարզի բնիկ բնակչության էթնոդավանական կազմը 1899 թ.<sup>1</sup>

| Դավանանք              | Էթնիկ կազմ    | Տղամարդ       | Կին           | Ընդամենը      |
|-----------------------|---------------|---------------|---------------|---------------|
| Հայ Առաքելական        | Հայեր         | 25999         | 24956         | 50955         |
|                       | Գնչուներ      | 17            | 8             | 25            |
| Մուսուլման-սունի      | Թուրքեր       | 27629         | 25780         | 53409         |
|                       | Քրդեր         | 17633         | 15994         | 33627         |
|                       | Կարափափախներ  | 9054          | 8334          | 17388         |
|                       | Օսեր          | 266           | 254           | 520           |
|                       | Լեզգիներ      | 142           | 114           | 256           |
|                       | Գնչուներ      | 36            | 27            | 63            |
|                       | Չերքեզներ     | 29            | 26            | 55            |
| Մուսուլման-շիա        | Կարափափախներ  | 7699          | 7274          | 14973         |
|                       | Պարսիկներ     | 16            | 15            | 31            |
| Մուսուլման-Ալի-Ալլահի | Թուրքմեններ   | 6154          | 5665          | 11819         |
| Ուղղափառներ           | Հույներ       | 16979         | 16149         | 33128         |
|                       | Ռուսներ       | 654           | 587           | 1241          |
|                       | Ասորիներ      | 293           | 257           | 547           |
|                       | Ուկրաինացիներ | 180           | 168           | 348           |
|                       | Էստոնացիներ   | 29            | 20            | 49            |
|                       | Վրացիներ      | 4             | 4             | 8             |
|                       | Հայեր         | 3             | 3             | 6             |
| Ռուս-ադանդավորներ     | Մոլդկաններ    | 4952          | 4766          | 9718          |
|                       | Դուխոբորներ   | 1536          | 1510          | 3046          |
| Բողոքականներ          | Հայեր         | 235           | 209           | 444           |
|                       | Էստոնացիներ   | 174           | 127           | 301           |
|                       | Գերմանացիներ  | 60            | 56            | 116           |
| Կաթոլիկներ            | Հայեր         | 496           | 457           | 953           |
|                       | Լեհեր         | 4             | 2             | 6             |
|                       | Քուրդ-եզդիներ | 1648          | 1448          | 3096          |
|                       | Հրեաներ       | 2             | 2             | 4             |
| <b>Ընդամենը</b>       |               | <b>121923</b> | <b>114212</b> | <b>236135</b> |

<sup>1</sup> Обзор Карсской области за 1898 год, Карс, 1899, Ведомость, Лит. Б.



Գծապատկեր 3. Կարսի մարզի բնակչության էթնիկ կազմի շարժընթացը 1882-1914 թթ.

1905 թ. գրեթե նույն վիճակն էր տիրում մուսուլմանների շրջանում: Տղամարդիկ միջին հաշվով կազմում էին ամբողջ բնակչության 51.8%-ը, ընդ որում շիաները՝ 52.7%-ը:

Աղյուսակ 16-ի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ բնակչության թիվը 1912-1914 թթ. ընդհանուր առմամբ աճել էր 5%-ով կամ տարեկան 2.4%-ով, սակայն 1915 թ. կտրուկ նվազել էր Առաջին աշխարհամարտի պատճառած կորուստների, ծնելիության անկման ու զանգվածային արտագաղթի հետևանքով: Արտագաղթի վերաբերյալ ներկայացված տվյալները շատ խոսուն են: 1914-1915 թթ. Կարսի մարզից գաղթեց 1213 ընտանիք՝ 4130 տղամարդ, 4248 կին, ընդամենը՝ 8378 մարդ, այդ թվում՝ Կարսի օկրուգից՝ 383 ընտ.՝ 1227 տղ., 1273 կին, Գաղզվանի օկրուգից՝ 60 ընտ.՝ 294 տղ., 268 կին, Արդահանի օկրուգից՝ 318 ընտ.՝ 1006 տղ., 1047 կին, Օլթիի օկրուգից՝ 452 ընտ.՝ 1603 տղ., 1660 կին: Գաղթած բնակչության զգալի մասը բնակություն հաստատեց Արևելյան Հայաստանում, ընդ որում Կարս քաղաքից՝ 167 ընտ.՝ 483 տղ., 516 կին, Սարիղամիշից՝ 155 ընտ.՝ 469 տղ., 491 կին, Կարսի մարզից՝ 934 ընտ.՝ 3272 տղ., 3348 կին<sup>1</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 20:

Կարսի մարզի բնիկ բնակչության էթնոդավանական կազմը 1905 թ.<sup>1</sup>

| Էթնիկ կազմ               | Դավանանք        | Տղամարդ       | Կին           | Ընդամենը      |
|--------------------------|-----------------|---------------|---------------|---------------|
| Հայեր                    | Առաքելական      | 38546         | 35787         | 74333         |
|                          | Կաթոլիկ         | 810           | 740           | 1550          |
|                          | Բողոքական       | 150           | 250           | 400           |
|                          | Ուղղափառ        | 24            | 10            | 34            |
|                          | <i>Ընդամենը</i> | <i>39530</i>  | <i>36787</i>  | <i>76317</i>  |
| Թուրքեր                  | Մահմեդ. սունի   | 32526         | 31040         | 63566         |
| Քրդեր                    | Մահմեդ. սունի   | 20081         | 18434         | 38515         |
|                          | Եզդի            | 2139          | 1910          | 4049          |
|                          | <i>Ընդամենը</i> | <i>22220</i>  | <i>20344</i>  | <i>42564</i>  |
| Կարափափախներ             | Մահմեդ. սունի   | 9344          | 8638          | 17982         |
|                          | Մահմեդ. շիա     | 8599          | 7756          | 16355         |
|                          | <i>Ընդամենը</i> | <i>17943</i>  | <i>16394</i>  | <i>34337</i>  |
| Թուրքմեններ              | Ալիևի աղանդ     | 7268          | 7010          | 14278         |
| Ռուսներ                  | Ուղղափառ        | 1189          | 1089          | 2278          |
|                          | Մոլդկան         | 4896          | 4493          | 9389          |
|                          | Պրիգուն         | 775           | 845           | 1620          |
|                          | Սուբոտնիկ       | 261           | 250           | 511           |
|                          | Դուխորոբ        | 373           | 369           | 742           |
|                          | <i>Ընդամենը</i> | <i>7494</i>   | <i>7046</i>   | <i>14540</i>  |
| Ուկրաինացիներ            | Ուղղափառ        | 885           | 780           | 1665          |
| Հույներ                  | -               | 20643         | 19389         | 40032         |
| Կովկասի լեռնականներ      | Մուսուլման      | 412           | 295           | 707           |
| Ասիական այլ ժողովուրդներ | Քրիստոնյա       | 352           | 319           | 671           |
|                          | Մահմեդ. շիա     | 8             | 9             | 17            |
|                          | <i>Ընդամենը</i> | <i>360</i>    | <i>328</i>    | <i>688</i>    |
| Էստոնացիներ              | Ուղղափառ        | 194           | 143           | 337           |
| Գերմանացիներ             | Բողոքական       | 76            | 69            | 145           |
| Գնչուներ                 | Մուսուլման      | 34            | 36            | 70            |
| Վրացիներ                 | Մուսուլման      | 14            | 12            | 26            |
| Հրեաներ                  | -               | 3             | 4             | 7             |
| <b>Ընդամենը</b>          |                 | <b>149602</b> | <b>139677</b> | <b>289279</b> |

<sup>1</sup> Обзор Карсской области за 1905 г., Карс, 1906, Ведомость 1.

Կարսի մարզի բնակչության էթնիկ և դավանական կազմը 1912-1915 թթ.<sup>1</sup>

| Դավանանք                    | Էթնիկ կազմ                 | Բնակչության թիվը (մարդ) |               |               |               |
|-----------------------------|----------------------------|-------------------------|---------------|---------------|---------------|
|                             |                            | 1912 թ.                 | 1913 թ.       | 1914 թ.       | 1915 թ.       |
| Առաքելական                  | Հայեր                      | 103983                  | 107286        | 108665        | 102543        |
| Մուսուլման-սունի            | Քրդեր                      | 51057                   | 70875         | 60439         | 31600         |
|                             | Ասիական այլ ժողովուրդներ   | 111950                  | 82968         | 79191         | 37696         |
|                             | Կովկասի լեռնաբնակներ       | 1151                    | 5209          | 1045          | 875           |
|                             | Վրացիներ                   | 27                      | 3843          | -             | -             |
| Մուսուլման-շիա              | Ասիական այլ ժողովուրդներ   | 20192                   | 19985         | 25420         | 2854          |
| Ուղղափառ                    | Ռուսներ                    | 4758                    | 29059         | 5470          | 4110          |
|                             | Վրացիներ                   | 1576                    | 13332         | 4153          | 34921         |
|                             | Հայեր                      | -                       | 967           | 1333          | 2230          |
| Քրիստոնյա                   | Ասիական այլ ժողովուրդներ   | 51946                   | 20227         | 33463         | 6110          |
| Մոլդկան, պրիգուն, սուրոտնիկ | Ռուսներ                    | 13563                   | 13533         | 14300         | 12356         |
| Կաթոլիկ, բողոքական, այլ     | Հայեր                      | 4197                    | 4216          | 3940          | 1725          |
|                             | Եվրոպական այլ ժողովուրդներ | 1993                    | 825           | 523           | 451           |
| Եզդի                        | Քրդեր                      | 5158                    | 10180         | 27418         | 13801         |
|                             | Գնչուներ                   | 156                     | 120           | 25696         | 4143          |
|                             | Այլք                       | 173                     | 120           | 157           | 46            |
| <b>Ընդամենը</b>             |                            | <b>371880</b>           | <b>382745</b> | <b>391213</b> | <b>255461</b> |

Այսպիսով, Կարսի մարզի բնակչության ժողովրդագրական 36-ամյա գործընթացները ցույց տվեցին, որ XIX դ. վերջին քսանամյակում բնակչության վերարտադրության գործում կարևոր դեր են ունեցել ոչ այնքան բնական շարժերը, որքան միգրացիայի սալդոյի դրական բարձր ցուցանիշները, որոնք ապահովել են բնակչության աճը: 1882-1899 թթ. բնակչությունն ավելացել է ավելի քան երկու անգամ, տարեկան միջին աճը կազմել է 7.4%: Այս կարճ ժամանակահատվածում զգալի փոփոխության է ենթարկվել նաև բնակչության էթնիկ կազմը. տարբեր հանրությունների զանգվածային ներգաղթի հետևանքով, որոնց թիվն անցնում էր երկու տասնյակը, այն

<sup>1</sup> КК на 1913 г., Тифлис, 1912, отд. Стат., с. 132-135; КК на 1914 г., Тифлис, 1913, отд. Стат., с. 122-125; КК на 1915 г., Тифлис, 1914, отд. Стат., с. 234-237; КК на 1916 г., Тифлис, 1915, отд. Стат., с. 42-45.

դարձել է խայտաբղետ: 1900-1914 թթ. բնակչության համար համեմատաբար կայուն իրավիճակ էր ստեղծվել, սակայն դեռևս լուծված չէր ժամանակավոր բնակչության հարցը. սոցիալ-տնտեսական իրավիճակները բնականոն կյանք վարելու բավարար հնարավորություններ չէին ընձեռում: Այդ է պատճառը, որ այս տարիներին արձանագրվել էին բնակչության աճի ոչ բարձր ցուցանիշներ. դա, մեր կարծիքով, պայմանավորված էր մի կողմից ծնելիության ցածր գործակիցներով, մյուս կողմից արտահոսքի աշխուժացմամբ: Նշված ժամանակահատվածում մարզի բնակչությունն ավելացել էր 1.3 անգամ, տարեկան միջին աճը կազմել էր 1.6%:

**Гамлет Саргсян – *Динамика числа населения и этнического состава Карсской области (1878-1914 гг.)***

Русско-турецкая война 1877-1878 гг. закончилась Сан-Стефанским и Берлинским мирными договорами, в результате которых к России была присоединена Карсская область. В новых экономических и административно-политических условиях неотложным было решение не только социально-экономических, но и проблем иммиграции, воспроизведения и распределения. В исследуемом отрезке времени население области увеличилось больше чем в 4 раза, годовой средний рост составил 2.2%.

Высокими темпами роста выделяется 20 десятилетие XIX века, когда в воспроизведении важнейшим было не столько естественная динамика, сколько миграционное сальдо. Подобные демографические развития являлись следствием высокой рождаемости и смертности, а также массовая иммиграция, в результате был зафиксирован среднегодовой рост в 7.4 %. В начале XX века картина была иная – важную роль играл естественный прирост, который выражался в высоких коэффициентах рождаемости и смертности, миграционное сальдо было положительным, а среднегодовой рост невысокий – 1.6%.

Население Карсской области во время Российского правления было отмечено этническим разнообразием. В первые годы формирования была следующая картина: армяне – 17%, турки и татары – 67.4%, курды – 5.9%, грузины – 4.0, русские – 1.0, другие – 4.7%. В результате массовой иммиграции были внесены значительные изменения в этнический состав области. По данным переписи 1897 года армяне составляли 25.3 % населения, турки – 21.9, курды – 14.8, греки – 11.2, карапахи – 10.3, русские – 7.7, другие – 8.8%.

**Hamlet Sargsyan – *The Number and Dynamics of Ethnic Structure of Kars Region (1878-1914)***

The Kars region became a part of the Russian Empire at the end of the 1877-1878 Russian-Ottoman and as a consequence of peace treaties signed in San-Stefano and Berlin. In the radically altered economic and political-administrative situation the social, economic problems of population, as well as the issues of immigration, reproduction and distribution required immediate solutions. In the period under discussion, the number of the population increased more than four times, annually growing to 2,2%.

The highest indices of population growth fell to the last two decades of the 19-th century when the role of immigration was more decisive than natural growth. To demographic changes in this period were characteristic high rates of birth and mortality, as well as massive

immigration, as a result of which an annual growth of 7,4% was recorded. In the first 15 years of the XX century the picture changed: the natural growth became pervasive while the annual growth stabilized at 1,6%.

In the period of the Russian rule, the population of Kars region was distinguished by its ethnic diversity. During the first years of its formation, it had the following picture: Armenians – 17%, Turks and Tatars – 67.4%, Kurds – 5.9%, Georgians – 4.0%, Russians – 1.0%. others – 4.7 %. As a result of mass immigration, the ethnic composition of the region changed significantly. According to the census data, the Armenians made up the 25.3% of the whole population, the Turks – 21.9, the Kurds – 14.8, the Greeks 11.2, the Karapapakhs – 10.3, the Russians – 7.7, others – 8.8%.



**ՀԵՅՂԱՐ ԱԼԻԵՎԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Բանալի բառեր - Ադրբեջան, Հեյդար Ալիև, դարաբաղյան պատերազմ, ներքաղաքական իրադրություն, խռովություն, բռնապետական կարգեր, Աբուլֆազ Էլչիբեյ, Սուրաթ Հուսեյնով, Ադրբեջանի ժողովրդական ճակատ, իշխանավոխություն*

Ղարաբաղյան խնդրի վերաբացումը 1988 թվականին կարևոր խթան դարձավ Խորհրդային Ադրբեջանում այլընտրանքային, կոմունիստական վարչակարգի դեմ հանդես եկող քաղաքական նոր ուժերի ձևավորման համար, որոնք մեծապես ազդեցին Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների վրա հատկապես հետանկախության շրջանում: 1988 թվականից մինչև Ադրբեջանի անկախացումը՝ 1991 օգոստոսն ընկած ժամանակաշրջանը, Ադրբեջանում նշանավորվեց նաև ներքաղաքական բուռն զարգացումներով, որոնք մեծ դեր խաղացին Սուլեյմանլի, Կիրովաբադի, Բաքվի հայկական կոտորածները կազմակերպելու գործում: Անկախացումից հետո Ադրբեջանը թևակոխեց քաղաքական պայքարի նոր փուլ, որը հիմնականում ընթանում էր կոմունիստական վարչակարգի նախկին ներկայացուցիչ, Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մուրադիբովի և Ադրբեջանի ժողովրդական ճակատի (հետայսու՝ ԱԺՃ) ղեկավար Աբուլֆազ Էլչիբեյի միջև: Մուրադիբովի հրաժարականն ու Էլչիբեյի՝ Ադրբեջանի նախագահ դառնալը ավելի խորացրին Ադրբեջանի ներքաղաքական պառակտվածությունը և հանգեցրին նոր հակասությունների: Իրադրությունը փոխվեց 1993 թ.՝ Հեյդար Ալիևի իշխանության վերադառնալուց հետո: 1993 թ. հոկտեմբերին Ադրբեջանում տեղի ունեցած նախագահական ընտրություններում հաղթած Հեյդար Ալիևին հաջողվեց մնալ այդ պաշտոնում տասը տարի՝ մինչև 2003 թ., երբ դեկտեմբերի 12-ին վախճանվեց հիվանդությունից: Նրա մահից հետո երկրի նախագահի պաշտոնում ընտրվեց նրա որդին՝ Իլհամ Ալիևը, ով իշխանության ղեկին է մինչ օրս:

Հեյդար Ալիևի անձին և գործունեությանը վերաբերող տեսակետները հակասական են և տարբեր: Նրան շատերը համարում են Ադրբեջանի փրկիչ<sup>1</sup>, ոմանք՝ բռնապետ, ով իր գործողությունների հետևանքով Ադրբեջա-

<sup>1</sup> Տե՛ս **Ramiz Mehdiyev**, Milli məkfurə, dövləçilik, müstəqillik yolu ilə iyun 1971-iyun 2001, Bakı 2006:

նում արգելակեց ժողովրդավարության զարգացումը՝ իշխանության բերելով Ալիևների կլանը և ձևավորելով անձի պաշտամունք<sup>1</sup>: Հեյդար Ալիևին տրվող ոչ միանշանակ գնահատականները կապված են նրա քաղաքական անցյալի և խորհրդային տարիների գործունեության հետ:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծության ենթարկել 1993 թ. նախօրեին ստեղծված իրադրությունն ու Հեյդար Ալիևի քաղաքական վերադարձի հիմնական առանձնահատկությունները: Որո՞նք էին այն գլխավոր պատճառները, որոնք հնարավորություն ընձեռեցին նախկին կոմունիստական գործչին կրկին գալու իշխանության: Անդրադարձ է արվում կառավարման առաջին տարիներին նրա իրականացրած ներքին և արտաքին քաղաքականությանը: Փորձ ենք արել պարզաբանելու նաև այն հարցը, թե ինչու և ինչպես դարաբաղյան հարցը ու հայերի դեմ իրականացվող քարոզչությունը դարձան ադրբեջանական հասարակության վրա ազդելու և քաղաքական փոփոխություններ իրականացնելու հիմնական միջոցները:

1993 թ. Հեյդար Ալիևի վերադարձի խորքային պատճառները հասկանալու և նախադրյալները վերլուծելու նպատակով կարևոր ենք համարում անդրադարձ կատարել նախ և առաջ խորհրդային տարիներին նրա ծավալած գործունեությանն ու դրա հետևանքով ստեղծված իրադրությանը: Ալիևի գործունեության շրջադարձային պահերից մեկը կապված է նրա՝ 1944 թ. Պետական անվտանգության կոմիտեի (այսուհետ՝ ՊԱԿ) աշխատակից դառնալու հետ<sup>2</sup>: 1953 թվականից նա աշխատել է ՊԱԿ-ի Արևելքի բաժնում՝ գործուղվելով Պակիստան, Իրան, Աֆղանստան և Թուրքիա: 1950-ականների վերջին Ալիևը ավարտում է ՊԱԿ-ի բարձրագույն դպրոցը, մի քանի տարի անց նրան տալիս են գնդապետի կոչում և նշանակում Ադրբեջանի ՊԱԿ-ի ղեկավարի տեղակալ: Այդ պաշտոնում Հեյդար Ալիևը լավագույնս է դրսևորել իրեն, ինչի շնորհիվ 1960 թ. արդեն նշանակվել է ՊԱԿ-ի պետի պաշտոնում և ստացել գեներալի կոչում<sup>3</sup>: Դա բացառիկ երևույթ էր խորհրդային պրակտիկայում, երբ միութենական հանրապետությունում՝ Ադրբեջանում, ՊԱԿ-ի ղեկավար է նշանակվում ազգությամբ ոչ ռուս անձնավորություն: Այդուհանդերձ, Ալիևը երբեք չէր ներկայանում որպես մուսուլման կամ ԽՍՀՄ մուսուլմանների պաշտպան, նա պաշտոնապես հանդես էր գալիս որպես Խորհրդային Միության արեխստ գործիչ<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Sadiqov I.**, İyun qiyamı və Azərbaycanın fəlakətlərinin başlanğıcı, [http://azadliq.az/index.php?option=com\\_content&view=article&id=15514:yun-qiyam-v-azrbaycann-flaktlrinin-balanc&catid=293:syas&Itemid=457](http://azadliq.az/index.php?option=com_content&view=article&id=15514:yun-qiyam-v-azrbaycann-flaktlrinin-balanc&catid=293:syas&Itemid=457), 11.04.2012:

<sup>2</sup> Տե՛ս **Lewis P.**, H. A. Aliyev, K.G.B. Officer and Azeri Leader, 80, Dies // The New York Times, December 13, 2003:

<sup>3</sup> Տե՛ս **Земцов И.**, Партия или мафия? Париж, 1976, с. 74:

<sup>4</sup> Տե՛ս **Altstadt A.**, The Azerbaijani Turks, Power and Identity under Russian rule, Stanford University, 1953, p. 178:

Հեյդար Ալիևը սերտ հարաբերություններ է ունեցել ԽՍՀՄ գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրժժնևի և ԽՍՀՄ ՊԱԿ-ի ղեկավար Յուրի Անդրոպովի հետ: Այդ մասին Ալիևը հաճախ էր սիրում խոսել անգամ Ադրբեջանի Հանրապետության նախագահ դառնալուց հետո<sup>1</sup>: 1969 թ. Հեյդար Ալիևը նշանակվում է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար: Նրա կառավարման ժամանակահատվածում կրկին վերականգնվեց Բաղիբովի օրոք որդեգրված պրակտիկան, երբ առաջին քարտուղարի ելույթները տպագրվում էին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի օրգանում՝ «Коммунист» թերթում: 1970 թ. ամռանից սկսած՝ Ալիևի ելույթները և զեկույցները ամբողջությամբ սկսեցին հայտնվել «Коммунист» թերթում, որտեղ անգամ նշվում էր, որ նրա ելույթը ընդհատվում է «ծափահարություններով» «կամ բուռն և հոտնկայս ծափահարություններով»<sup>2</sup>: Ալիևը կրկին սկսեց Ադրբեջանում քարոզել անձի պաշտամունք և կերպարի սրբացում:

Ալիևի իշխանության օրոք Ադրբեջանում կոմունիստական վարչակարգի սկզբունքների քարոզչությունը նոր թափ ստացավ: Քարոզչությունը դարձավ «ավելի կենտրոնացված», և առաջին քարտուղարը շարունակ նշում էր, որ կուսակցությունը հսկայական և առաջնային դեր է խաղում հանրապետության «հոգևոր կյանքում»: Սկսած 1970 թվականից՝ կուսակցության անդամների թիվն ավելացավ 27 տոկոսով՝ հասնելով 330.319-ի<sup>3</sup>: Երեք տարվա ընթացքում՝ 1969 թ. օգոստոսից մինչև 1972 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում, Ալիևը կուսակցական աշխատանքի նշանակեց ՊԱԿ-ի՝ լեզավ կամ գաղտնի 1983 աշխատակիցների<sup>4</sup>: Այսպիսով, նա Կոմկուսի շարքերը համալրեց իր հարազատներով, ընկերներով, Նախիջևանից տեղափոխվածներով, և հենց այդ կադրային քաղաքականության շնորհիվ Ալիևին հաջողվեց կարճ ժամանակահատվածում ամուր հենարան ապահովել իր համար երկրի ներսում, ինչը կարևոր նախապայման էր իր քաղաքականության իրականացման գործում:

Ալիևի դիրքերը շարունակում էին անսասան մնալ այնքան ժամանակ, քանի դեռ պետական ապարատում առանցքային պաշտոնները զբաղեցնում

---

<sup>1</sup> Օրինակ՝ 1994-2001 թթ. ընթացքում Ադրբեջանում Թուրքիայի դեսպանության մամուլի քարտուղար, թուրք դիվանագետ Թուրգուլ Էրը իր «Ազատությունից բռնապետություն. կարծես Ստալինն ու Բերիան հարություն են առել» գրքում նշում է, որ 1994 թ. փետրվարին Ալիևը նախագահական նստավայրում ընդունում է թուրք լրագրողների, նրանց հետ ունենում է դռնփակ հանդիպում, որի ժամանակ հարցազրույց է տալիս և խոսում խորհրդային ժամանակաշրջանի գործերից: «Երկար խոսեց Բրժժնևի հետ ընկերությունից, Անդրոպովի՝ իր հանդեպ ունեցած հիացմունքից և Գորբաչովի ու իր միջև առաջացած թշնամությունից»: Տե՛ս **Turqut Ö.**, «Azadlıqdan Tiranlığa: Sanki Stalin və Beriya xortlamışdı»:

[http://azadliq.info/bash\\_yazi/5641.html](http://azadliq.info/bash_yazi/5641.html), 10.12.2010.

<sup>2</sup> Տե՛ս **Altstadt A.**, նշվ. աշխ., էջ 178:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 179:

<sup>4</sup> Տե՛ս **Земцов И.**, նշվ. աշխ., էջ 89:

էին նրան հավատարիմ մարդիկ: Ավելին, 1993 թ.՝ նրա վերադարձի ժամանակ, այդ նույն մարդկանցից շատերը հսկայական աջակցություն ցույց տվեցին՝ զբաղեցնելու երկրի նախագահի պաշտոնը:

Ալիևի դարաշրջանը Ադրբեջանում համընկնում էր Բրեժնևի իշխանությանը: Բրեժնևն այցելել է Ադրբեջան 1970, 1978 1982 թվականներին և պարզևատրել Ալիևին, Բաքվին և Ադրբեջանական ԽՍՀ-ին բազմաթիվ պարզևներով, այդ թվում՝ Լենինի շքանշանով<sup>1</sup>: Շուտով Ալիևը դառնում է նաև ԽՍՀՄ Կոմկուսի կենտկոմի Քաղբյուրոյի անդամ: Դա Բաղիրովից հետո առաջին անգամն էր, երբ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարն ընդգրկվեց քաղբյուրոյում, ինչը փաստում է, որ Ալիևն իսկապես ազդեցիկ քաղաքական գործիչ էր:

Ալիևի իշխանության տարիներն ադրբեջանցիների համար արժեքավոր էին հատկապես ազգային ինքնագիտակցության բարձրացման տեսանկյունից, մինչդեռ Ադրբեջանում բնակվող ազգային փոքրամասնությունները, հատկապես հայերը, ճնշումների էին ենթարկվում:

«Իսկապես, նա ադրբեջանցիների համար շատ բան է արել. երբ իշխանության եկավ, սկսեց ազատվել հայերից՝ ղեկավար պաշտոնները հանձնելով ադրբեջանցիներին, կամ պահում էր մեկ հայի, ասենք՝ կուսակցության երրորդ քարտուղար, ով կզբաղվեր զեկուցումներ գրելով: Հենց Ալիևի կառավարման ժամանակահատվածում էլ սկսվեց հայ մտավորականության մասնակի արտագաղթը: Նա Մոսկվայի բոլոր դռները բացեց ադրբեջանցիների համար: Դրա համար էլ ադրբեջանցիները նրան համարում են իրենց հայրը, իրենց արևը: Նա լավ հրապարակախոս էր և հիանալի տիրապետում էր ռուսերենին»<sup>2</sup>:

Ալիևի կառավարման տարիներին ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվում էր ազգային խտրականության ակնհայտ քաղաքականություն, ինչի ապացույց են այդ տարիներին անցկացված մարդահամարները և վիճակագրական տվյալները<sup>3</sup>: Ալիևի հակահայկական քաղաքականության դրսևտրման օրինակ է Նախիջևանի ամբողջական հայաթափումը<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Altstadt A., նշվ. աշխ., էջ 179:

<sup>2</sup> Կիրովաբադի ջարդերի ականատես Ջուլիետա Վերոյանի հետ հարցազրույցից, 2012 թ. մարտի 20:

<sup>3</sup> Օրինակ՝ 1939 թ. մարդահամարի տվյալներով 87,5 հազարի հասնող թալիշները այնուհետ մարդահամարներում այլևս չեն հիշատակվում որպես առանձին ժողովուրդ: Թալիշների անհետանալը Ադրբեջանում ապրող ժողովուրդների շարքից «պաշտոնականացրեց» «Մովետական մեծ հանրագիտարանը» քողարկելով ակնհայտ խեղաթյուրումը հետևյալ տողերով. «ԽՍՀՄ-ում թալիշները գրեթե միաձուլվել են ադրբեջանցիներին, որոնց նրանք մտնում են նյութական ու հոգևոր մշակույթով և առանձնացված չեն 1970 թ. մարդահամարում» (BCE, տ. 25, M., 1976, c. 237): Դարերի պատմություն ունեցող թալիշների և քոչվոր թյուրքերի հետնորդների՝ նորահայտ ադրբեջանցիների միակ ընդհանրությունը կրոնն էր, որը չէր կարող հիմք հանդիսանալ մշակութային միաձուլման համար: Այնուամենայնիվ, 1989 թ.

Հեյդար Ալիևը Ադրբեջանի ԽՍՀ Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը զբաղեցրեց մինչև 1982 թ. նոյեմբեր, երբ ԽՍՀՄ Կոմկուսի կենտկոմի գլխավոր քարտուղար Յուրի Անդրոպովը նրան նշանակեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ: Ալիևի հետագա վերելքը կանխվեց, երբ իշխանության եկավ Միխայիլ Գորբաչովը: 1987 թ. նա հեռացվեց զբաղեցրած պաշտոնից: Ալիևի պաշտոնանկության մասին շրջանառվում են տարբեր կարծիքներ: Տեսակետներից մեկի համաձայն՝ Գորբաչովը որոշել է Ալիևին հեռացնել՝ զգուշանալով նրա հավակնություններից, այլը նշում են, որ նրանց միջև հակասություններ էին առաջացել գաղափարական առումով: Հեյդար Ալիևը պաշտոնապես հեռանում է զբաղեցրած պաշտոնից առողջական խնդիրների պատճառով: Հետագայում նա շարունակում էր ազդեցություն ունենալ Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների վրա, ինչին նպաստում էր կառավարման տարիներին նրա կադրային քաղաքականությունը, քանի որ նրան հավատարիմ անձինք նրա հեռացումից հետո շարունակում էին մնալ ղեկավար մարմիններում:

1993 թ. Ալիևի վերադարձը որպես Ադրբեջանի նախագահ այն բացառիկ դեպքերից էր, երբ նախկին խորհրդային պետությունում կրկին իշխանության է գալիս նույն կոմունիստական վարչակարգի ամենանշանավոր և ազդեցիկ ղեմքերից մեկը: Անկախացումից հետո Ադրբեջանի ներսում

---

գորբաչովյան վերակառուցման ալիքի հետևանքով, «ձուլված» թալիշ ժողովուրդը կրկին հայտնվում է վիճակագրական տվյալներում: Այդ ժամանակ նրանք 21,2 հազար էին, իսկ 1999 թ. տվյալներով թալիշների թիվը հասնում էր 76,8 հազարի (Мелик-Шахназарян Л., Азербайджан, Толерантные жонглеры от статистики, <http://yerkramas.do.am/news/2009-02-16-3757>, 30.11.2009.): Հասկանալի է՝ 10 տարվա ընթացքում քանակական նման աճ գրանցվել չէր կարող, պարզապես կենտրոնական իշխանության «բարյացակամությամբ» «ձուլված» թալիշները կրկին սկսեցին արձանագրվել որպես թալիշներ:

<sup>1</sup> Նշենք, որ եթե 1917 թ. Նախիջևանում բնակվում էր 53900 հայ, ապա 1926 թ. մարդահամարի տվյալներով հայերի թիվը 11276 էր (Տես՝ «Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության», ՀՀ Դաշնակցության հրատարակություն, Երևան, 2007, էջ 16): Արդեն 1959 թ. մարդահամարի տվյալներով հայերի թիվը Նախիջևանում ընդամենը 9519 էր, մինչդեռ ադրբեջանցիներին՝ 127508 (Տես՝ Центральное статистическое управление при Совете Министров СССР. Итоги всесоюзной переписи населения 1959. Распределение населения районов Республиканского подчинения Нахичеванское АССР и Нагорно-Карабахский автономной области по наиболее многочисленным национальностям и родному языку, Аз. СССР, Москва, 1963, таблица 54, с. 140): Բսկ 1970 թ. և 1979 թ. վիճակագրական տվյալներով հայերը կազմում էին Նախիջևանի բնակչության համապատասխանաբար 2,9% (5828 մարդ) և 1,4% (3406 մարդ), իսկ ադրբեջանցիները՝ 93,8% (189679 մարդ) և 95,7% (229968 մարդ) (Տես՝ Центральное статическое управление Азербайджанской ССР. Итоги всесоюзной переписи населения 1979 года по Аз. ССР. Численность населения отдельных национальностей по Аз. ССР в 1970 и 1979 гг., Баку, 1981, таблица 19, с. 149-160): Ըստ վիճակագրական տվյալների՝ քսան տարվա ընթացքում հայերի թիվը Նախիջևանում կրճատվել է շուրջ 6000-ով, մինչդեռ ադրբեջանցիների թվաքանակը աճել է ավելի քան 100.000-ով: Սա նշանակում է, որ Նախիջևանում ստեղծվել էին այնպիսի պայմաններ, որոնք նպաստում էին հայերի թվաքանակի կտրուկ նվազմանն ու ադրբեջանցիների աճին: 1989 թ. վիճակագրությամբ Նախիջևանում այլևս հայեր չկային :

ընթացող ներքաղաքական զարգացումների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Ալիևի վերադարձը կանխատեսելի էր՝ հաշվի առնելով նրա փորձառությունն ու կառավարման ձիրքը, ինչպես նաև գործունեության ներքին տրամաբանությունը:

Նախիջևանում դիրքերն ամրապնդելուց հետո Ալիևն օգտագործեց Էլչիբեյի բոլոր բացթողումները և քաղաքական սայթաքումները ու նրան հեռացրեց իշխանությունից: Ջուզահեռներ անցկացնելով 1940-ականներին սկիզբ առած Հեյդար Ալիևի վերելքի և 1990-ականներին կրկին Ադրբեջանի քաղաքական դաշտ վերադառնալու ուղղությամբ նրա ձեռնարկած գործողությունների միջև՝ կարելի է փաստել, որ նա իր քաղաքական խաղը սկսում է Նախիջևանից, որտեղից էլ կարողանում է ազդել նաև Բաքվում ընթացող զարգացումների վրա: Նախիջևանի ինքնավար հանրապետությունը (այսուհետև՝ ՆԻՀ), ընդհանուր սահման չունենալով Ադրբեջանի հանրապետության հետ, սակայն զբաղեցնելով աշխարհագրական բարենպաստ դիրք, մշտապես իրականացրել է որոշակիորեն ինքնուրույն քաղաքականություն՝ երբեմն նույնիսկ ընդդիմանալով Բաքվին: Դա հատկապես դրսևորվել է Հեյդար Ալիևի՝ ՆԻՀ-ի Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնը զբաղեցնելու ժամանակ: Ուստի Նախիջևանը Ալիևի կողմից օգտագործվում էր որպես յուրատեսակ «պլացդարմ»՝ Բաքու տեղափոխվելու և իշխանությունը վերցնելու համար:

Նշենք, որ ԱԺԸ-ն 1993 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին մի շարք ցույցեր է կազմակերպում Էլչիբեյին սատարելու նպատակով, սակայն ոստիկանությունը դրանք դաժանորեն ճնշում է՝ ձերբակալելով մասնակիցներին<sup>1</sup>:

Հեյդար Ալիևն ընտրվեց Ադրբեջանի նախագահ 1993 թ. հոկտեմբերի 3-ին: Թեպետ նրա նախագահ դառնալու ժամանակաշրջանում ևս Ադրբեջանն ունեցավ տարածքային ամենամեծ կորուստները, այդուհանդերձ նրա ղեկավարման օրոք երկրում առկա ներքաղաքական լարվածությունը որոշակիորեն թուլացավ: Նա իր ճանապարհից հեռացրել էր այն բոլոր ազդեցիկ քաղաքական գործիչներին, ովքեր կարող էին լինել իր մրցակիցները: Բացի դրանից, Ալիևը հիանալի օգտագործում էր քարոզչական մեթոդները, որոնք հետապնդում էին քիչ թե շատ ազդեցիկ քաղաքական ուժերին զրպարտելու, բոլոր բացթողումների համար նրանց մեղադրելու, ինչպես նաև սեփական անձի բացառիկությունը ընդգծելու նպատակ: Իր ելույթներում Ալիևը հրամանատարներին և հայկական զորքերի կողմից ազատագրված շրջանների ղեկավարներին ազգի դավաճան հայտարարեց: Դեկտեմբերին խորհրդարանում հայտարարելով Ֆիզուլիի և Ջեբրայիլի անկման մասին՝

---

<sup>1</sup> See Human Rights Watch Report 1994-Azerbaijan. <http://www.unhcr.org/refworld/country,,HRW,,AZE,,467fca891e,0.html>, 15.03.2012.

նա դատապարտեց հրամանատարների գործողությունները, ովքեր, փոխանակ ճակատը պաշտպանելու, զբաղված էին Բաքվում առանձնատներ կառուցելով<sup>1</sup>: Ուրիշների հասցեին քննադատությունը որոշակիորեն նպաստում էր Ալիևի հեղինակության բարձրացմանը. նա, իբր, մեծապես մտահոգված է երկրի խնդիրներով:

Ալիևը ուներ իր վաղեմի համախոհների բանակը, որը գոյացել էր դեռ նրա՝ Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար լինելու ժամանակ: Նրանք Ալիևի համար հենարան էին Ադրբեջանի ներսում: Իր խորամանկ և ճիշտ հաշվարկված քաղաքական քայլերի շնորհիվ՝ Ալիևին հաջողվեց նաև չեզոքացնել Մուրաթ Հուսեյնովին, որը տվյալ ժամանակահատվածում լուրջ հնարավորություններ ուներ դառնալու Ադրբեջանի ղեկավար: Մուրաթ Հուսեյնովին հանձնելով վարչապետի պաշտոնը՝ Ալիևը կարողացավ խուսափել նրա հետ առճակատումից: Այդ պայմաններում Ալիևը չէր կարող բռնի ուժ կիրառել Հուսեյնովի նկատմամբ, քանի որ վերջինս մեծ հեղինակություն էր վայելում երկրում: Այդուհանդերձ, մեկ տարի անց՝ 1994 թ. հոկտեմբերին, Հուսեյնովի գլխավորությամբ խռովություն է կազմակերպվում Ալիևի դեմ: Ընդամենը մի քանի ժամ իրավիճակը դուրս է գալիս Հուսեյնովի վերահսկողությունից՝ ստեղծելով անցանկալի հետևանքներ նրա համար<sup>2</sup>: Խռովության փորձը, որն ի սկզբանե շատ քառսային էր կազմակերպված, ձախողվեց և Հուսեյնովը արտաքսվեց Ռուսաստան<sup>3</sup>: Այս խռովության մասին կան տարբեր տեսակետներ: Այն հանգամանքը, որ Ալիևն առանց էական դժվարության ճնշեց խռովությունը, որոշ աղբյուրների հիմք էր տալիս պնդելու, որ նա ինքն էր դա կազմակերպել՝ Հուսեյնովին մեղադրելու և նրան վտարելու նպատակով<sup>4</sup>:

Շեյդար Ալիևը ասպարեզից հեռացրեց ԱԺԸ-ի ազդեցիկ ակտիվիստներին, որոնցից ոմանք արդեն հասցրել էին առանձնանալ «մայր» կուսակցությունից և ստեղծել իրենց սեփական քաղաքական ուժը: Այսպես, պաշտպանության նախկին նախարար Ռահիմ Ղազիևը ձերբակալվեց և դատապարտվեց երկարատև ազատազրկման: Նա ազատ արձակվեց միայն 2005 թ.: Ազգային ժողովի նախկին նախագահ, «Մուսավաթ» կուսակցության հիմանդիր, պատգամավոր Իսա Գամբարին, առանց գրկելու պատգամավորական անձեռնմխելիությունից, ևս ձերբակալեցին: Բացի դրանից, Ալիևի՝ իշխանության գալուց հետո ԱԺԸ-ի անդամ բոլոր պետական ծառայողները էլջիբեյի առաջարկությամբ ի նշան բողոքի «սառեցրին» իրենց գործունեությունը, ինչը շատ ավելի դյուրին դարձրեց նրա քայլերը: Առանց որևէ էական

---

<sup>1</sup> Տե՛ս **Waal T. de**, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, 2003, New York and London, p. 225:

<sup>2</sup> Տե՛ս **Забелин М., Татаренко В.**, Гейдар Алиев: лидер, политик, друг, Баку, 2005, с. 23:

<sup>3</sup> Տե՛ս **Cornell S.**, Nagorno Karabakh conflict, Uppsala university, 1999, p. 43:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

խոչընդոտի Ալիևը մաքրեց պետական ապարատը ԱԺԶ-ականներից՝ նրանց փոխարեն իշխանության բերելով իր հայրենակիցներին, հարազատներին, բարեկամներին և ուղղակի հարուստ մարդկանց, ովքեր կարող էին պաշտոն գնել<sup>1</sup>: Այդպիսով նա քայլ առ քայլ ամրապնդում էր իր դիրքերը երկրում:

Ալիևի բռնապետական ղեկավարման մեթոդը տարբեր տեսանկյուններից է բնութագրվում: Դա անվիճելիորեն կայունություն բերեց Ադրբեջանին, սակայն քաղաքական կյանքը շարունակում էր մնալ անհանգիստ՝ հաճախակի խռովություններով<sup>2</sup> և Ալիևի դեմ մահափորձերով լի: Նրա ընդդիմադիրները հաճախ են բողոքում անարդար ընտրություններից, մարդու իրավունքների խախտումներից և մամուլի ազատության ոտնահարումից<sup>3</sup>: Ալիևի վարչակարգը ընտրեց բռնությունների, սպառնալիքների, ձեռքալուծությունների մեթոդը՝ իր քաղաքական հակառակորդներին տապալելու և իր դեմ հանդես եկողներին չեզոքացնելու համար՝ դրանով կոպտորեն խախտելով Ադրբեջանի քաղաքացիների իրավունքները<sup>4</sup>:

Հեյդար Ալիևի իշխանության գալուց հետո մի շարք շրջադարձային փոփոխություններ տեղի ունեցան Ադրբեջանի արտաքին քաղաքական ուղեծրում: Մասնավորապես քաջ գիտակցելով ռուսական դիրքորոշման կարևորությունը դարաբաղյան պատերազմում՝ Հեյդար Ալիևը նկատելիորեն թուլացրեց Էլչիբեյի թրքամետ քաղաքականությունը՝ Ադրբեջանի արտաքին հարաբերություններում տեղ տալով ռուսական կողմնորոշմանը:

Ալիևի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո որոշակի փոփոխություններ տեղի ունեցան թուրք-ադրբեջանական հարաբերություններում: 1993 թ. նոյեմբերի 2-ին Անկարա ժամանեց Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Հասանովը: Ըստ մամուլի հաղորդած տեղեկությունների՝ նա դիմել է թուրքական ղեկավարությանը Ադրբեջանին ռազմական օժանդակություն տրամադրելու խնդրանքով<sup>5</sup>: Նոյեմբերի 12-ին Հասանովը կրկին ժամանում է Թուրքիա և առաջարկում թուրքական կառավարությանը խաղաղապահ ուժեր մտցնել Ադրբեջանի հանրապետություն: Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրիլի հետ հանդիպման ժամանակ նա ասել է. «Ադրբեջանական բանակ որպես այդպիսին գոյություն չունի: Դա թաքցնելու կարիք չկա: Ըստ վերջին հաղորդումների՝ հայկական զորքերի առաջիկա

---

<sup>1</sup> Տե՛ս **Ализде З.**, Конец второй республики, [http://www.azeribooks.narod.ru/politika/zardusht\\_alizade/konets\\_vtoroy\\_respubliki.htm](http://www.azeribooks.narod.ru/politika/zardusht_alizade/konets_vtoroy_respubliki.htm), 07.03.2012:

<sup>2</sup> Ալիևին տապալելու առաջին փորձը ձեռնարկել է վարչապետ Սուրաթ Հուսեյնովը 1994 թ. հոկտեմբերին, իսկ մյուսը՝ 1995 թ. մարտին Հատուկ նշանակության ոստիկանական ջոկատի հրամանատար Ռովշան Ջավադովը. դրանք մատնվել են անհաջողության:

<sup>3</sup> Տե՛ս **Lewis P.**, նշվ. աշխ.:

<sup>4</sup> Տե՛ս Human Rights Watch Report 1994-Azerbaijan.

<sup>5</sup> Տե՛ս **Чернявский С.**, Азербайджан и Турция-стратегическое партнерство, Независимый Азербайджан: Новые ориентиры, т. 2, М., 2000, с. 180:



թիրախը Բաքուն է»<sup>1</sup>: Չնայած Ալիևի և Դեմիրիլի միջև անձնական մտերմությանը՝ նրա՝ Ադրբեջանի նախագահի պաշտոնը զբաղեցնելուց հետո թուրք-ադրբեջանական հարաբերություններում ստեղծվել էր սառնության և փոխադարձ անվստահության մթնոլորտ: Դա պայմանավորված էր Հեյդար Ալիևի արտաքին քաղաքականությամբ, որի հիմնական նպատակն էր օգտագործել ռուսական ազդեցությունը տարածաշրջանում և դրա օժանդակությամբ հաղթահարել դարաբաղյան պատերազմի հետևանքով Ադրբեջանում ստեղծված ճգնաժամը: Դարաբաղյան պատերազմի ընթացքում Թուրքիան փակել էր իր պետական սահմանը ՀՀ-ի հետ՝ ենթարկելով նրան տնտեսական շրջափակման, որը շարունակվում է առ այսօր: Սակայն Թուրքիան չէր պատրաստվում անմիջականորեն միջամտել պատերազմական գործողություններին, իսկ հայկական զինված ուժերի առաջխաղացումը ի գործ էր կանխելու միայն տարածաշրջանային ամենահզոր ուժ համարվող Ռուսաստանը: Ուստի պատահական չէր Անկախ պետությունների համագործակցության զինվորական հրամանատար, մարշալ Եվգենի Շապոշնիկովի զգուշացումը. «Եթե որևէ այլ կողմ ներքաշվի այստեղ, մենք կարող ենք Երրորդ համաշխարհային պատերազմի նախաշեմին հայտնվել»<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով Թուրքիայի քաղաքական գործիչներից ոմանք թրքամետ Աբուլֆազ Էլչիբեյի տապալումն ու նախկին բոլշևիկ Հեյդար Ալիևի իշխանության գալը դիտում էին Թուրքիայի պարտություն և Ռուսաստանի հաղթանակ տարածաշրջանում: Թուրքական կողմն անվստահությամբ էր վերաբերվում Ալիևին, ավելին՝ Ադրբեջանում թուրքական դեսպանատունը ակտիվ դերակատարում ունեցավ 1995 թ. պետական հեղաշրջման անհաջող փորձի կազմակերպման գործում<sup>3</sup>: Սակայն 90-ականների երկրորդ կեսից երկու պետությունների միջև հարաբերությունները սկսեցին բարելավվել. դրա կարևոր արդյունքներից էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցումը: Նավթամուղը, որը Բաքվից Վրաստանի տարածքով ձգվում էր մինչև թուրքական միջերկրածովյան Ջեյհան նավահանգիստը, դարձավ կարևոր ազդակ թուրք-ադրբեջանական տնտեսական հարաբերությունների զարգացման համար:

1994 թ. Ադրբեջանը նավթի շահագործման վերաբերյալ կարևոր պայմանագիր կնքեց «Բրիթիշ Փեթրոլիումի» գլխավորած արտասահմանյան ընկերությունների կոնսորցիումի հետ, որը հսկայական եկամուտներ բերեց երկրին, բայց քիչ զումար էր հատկացվում բնակչության սոցիալական խնդիրներին: Նավթի արտադրությունը օրական հասնում էր 315.000 բարելի, սակայն նախատեսվում էր 2009 թ. հասցնել 1.4 միլիոնի: Այդուհանդերձ

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս Պատկերավոր պատմություն: Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճ, օգոստոս, 2009, էջ 12:

<sup>3</sup> Տե՛ս **Ismailzade F.**, Turkey-Azerbaijan: The honeymoon is over, Baku, 2009, p. 4:

համատարած կոռուպցիայի, կլանային համակարգի պայմաններում Ադրբեյջանի տնտեսական զարգացման հեռանկարները զգալիորեն նվազեցին<sup>1</sup>:

Իշխանության գալուց և իր դիրքերը ամրապնդելուց հետո Հեյդար Ալիևը սկսեց ակտիվ քայլեր ձեռնարկել հայկական գործերի ազատագրած տարածքները վերադարձնելու ուղղությամբ: Թեև ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը հոկտեմբերի 14-ին ընդունեց  $\sqrt{874}$  բանաձևը, որով կոչ էր արվում հակամարտող կողմերին դուրս բերել գործերը այդ տարածքներից, վերականգնել հաղորդակցությունը, դադարեցնել թշնամական գործողությունները, սակայն Ալիևը նախապատրաստվում էր նոր հարձակման ճակատի ամբողջ երկայնքով: Ալիևի կառավարման տարիներին Ղարաբաղի պատերազմում ակտիվորեն ներգրավվեցին աֆղան մոջահեդները: 1993 թ. հոկտեմբերի 21-ին վարձկան աֆղան մոջահեդների գումարտակը պատրաստում էր Ղարաբաղի հայկական ուժերի դեմ անակնկալ գրոհ Ջեբրայիլի ուղղությամբ<sup>2</sup>: Ի պատասխան՝ դարաբաղյան ուժերը ձեռնարկեցին նոր հարձակումներ՝ վերցնելով նոր տարածքներ: Ղարաբաղյան պատերազմի վերջին ամիսների ռազմական գործողությունների հետևանքով թե՛ հայկական և թե՛ ադրբեյջանական կողմերը կրեցին հսկայական մարդկային կորուստներ:

Ալիևը, որոշակի չափով կարգ ու կանոն հաստատելով բանակում, 1993 թ. դեկտեմբերի 22-ին ձեռնարկեց լայնածավալ ռազմական գործողություններ ամբողջ ճակատով, մասնավորապես Մարտակերտի և Քելբաջարի ուղղությամբ, ինչպես նաև Ղարաբաղի արևելքում<sup>3</sup>: Սկզբում ադրբեյջանական բանակին հաջողվեց որոշ տարածքներ ետ գրավել Ռուսաստանի օգնության շնորհիվ: Սակայն ադրբեյջանական գործերի հաջողությունը երկար չտևեց: 1994 թ. փետրվարի 18-ին դարաբաղյան ուժերը դուրս եկան Օմարի լեռանցք՝ կրկին ամբողջությամբ վերահսկողության տակ առնելով Քելբաջարի շրջանը<sup>4</sup>: Մարտերը ընդհատումներով շարունակվեցին մինչև ապրիլի վերջ: Մայիսին Ղրղրգստանի մայրաքաղաք Բիշքեքում կնքվում է «Բիշքեքյան արձանագրությունը», որով հաստատվում է հրադադար, որը ուժի մեջ մտավ մայիսի 11-ի լույս 12-ի գիշերը և պահպանվում է մինչ օրս: Ղարաբաղյան հարցը տեղափոխվեց դիվանագիտական քննարկումների հարթակ:

Տարածքային կորուստները հարկադրեցին ադրբեյջանական կողմին հրադադար կնքել, թեև Ալիևի սկզբնական քայլերից դատելով՝ ադրբեյջանցիները ցանկանում էին ռազմական լայնածավալ գործողությունների միջոցով վերադարձնել կորցրած տարածքները: Սակայն Ադրբեյջանի ներքաղաքական լարվածությունը մեծապես անդրադարձել էր զինված ուժերի մարտու-

<sup>1</sup> Տե՛ս **Lewis P.**, նշվ. աշխ.:

<sup>2</sup> Տե՛ս **Հակոբյան Թ.**, Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 266:

<sup>3</sup> Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 40:

<sup>4</sup> Տե՛ս **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 271:

նակության վրա: Հսկայական մարդկային կորուստները հարկադրեցին հրադադար կնքել: Հայկական կողմը ևս մեծ կորուստներ էր կրել հատկապես պատերազմի վերջին ամիսների ընթացքում<sup>1</sup>, ուստի հրադադարի հաստատումը ձեռնտու էր կողմերին:

Ադրբեջանում շարունակ քարոզվում էր, որ հենց Հեյդար Ալիևը Ադրբեջանին բերեց երկար սպասված խաղաղություն և քաղաքական կայունություն: Իսկապես, նրա կառավարումը նշանավորվեց ներքաղաքական բախումների, հակասությունների ավարտով, իսկ դարաբաղյան ճակատում՝ հրադադարի կնքմամբ: Այդուհանդերձ, քաղաքական կայունության հաստատումը հանգեցրեց քաղաքական լճացման, կուսակցություններից շատերի գործունեությունը կասեցվեց, դրանց մի մասը անցավ ընդհատակ: Քաղաքական ազդեցիկ գործիչները կամ ձերբակալվեցին, կամ վտարվեցին երկրից: Մինչդեռ քաղաքական պայքարի բացակայությունը խոչընդոտում է երկրի զարգացումը, այլակարծության ձևավորումն ու այլընտրանքային տարբերակների ստեղծումը: Ադրբեջանում կառավարման կլանային համակարգի ձևավորումը ձախողեց ժողովրդավարացման գործընթացը՝ փոխարենը երկրում ձևավորելով անձի պաշտամունք՝ հանձին Հեյդար բաբայի: Նրա նկարները և արձանները զարդարում են գյուղեր և քաղաքներ: Նրա անունով են կոչվում սարեր և աստղեր: Նրա պատվին կառուցվում էին թանգարաններ՝ նվիրված նրա գործին<sup>2</sup>:

Իրականում Ալիևը երկրում ձևավորեց վախի մթնոլորտ: Նա խորհրդային տարիներին յուրացրել էր մարդկանց վրա ազդելու բոլոր մեթոդները, որոնց շնորհիվ կարողացավ վերականգնել իր ազդեցությունը երկրի ներսում: Խորհրդային տարիներին առկա բացասական երևույթները՝ անձի պաշտամունքի ձևավորում, խոսքի ազատության սահմանափակում, այլակարծության ճնշում, տեղ գտան Ադրբեջանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում: Այդ ամենի հետ մեկտեղ՝ Հեյդար Ալիևը սկիզբ դրեց հակահայկական ավելի ագրեսիվ տրամադրությունների ձևավորմանը ադրբեջանական հասարակության մեջ, ինչը լուրջ բարդություններ ստեղծեց դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում: Ղարաբաղյան հարցի շահարկումը դարձավ զանգվածների վրա ազդելու հիմնական միջոցը: Օգտագործելով իր ազդեցությունը երկրում՝ Հեյդար Ալիևը մնաց Ադրբեջանի նախագահի պաշտոնում մինչև 2003 թ.: Նրա մահից հետո Ադրբեջանի նախագահի պաշտոնը ստանձնեց նրա որդին՝ Իլհամ Ալիևը: Ըստ Ադրբեջանի Սահմանադրության մեջ կատարված փոփոխության՝ նախագահի վերընտրությունը սահմանափակումներ չունի,

---

<sup>1</sup> 1994 թ. հունվարից մինչև հրադադարը՝ չորս ամիսների ընթացքում, հայերը տվել են ավելի քան երկու հազար զոհ, մինչդեռ պատերազմի երեք տարիների ընթացքում հայկական կողմի զոհերի թիվը կազմում է վեցուկես հազար մարդ: Տե՛ս **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ.:

<sup>2</sup> Տե՛ս **Lewis P.**, նշվ. աշխ.:

ուստի Ալիևների կլանը օրինականորեն ամրապնդում է իր վարչակարգը, որտեղ չեն հարգվում քաղաքացիների իրավունքները և ազատությունները:

Ամփոփելով նշենք, որ 1988-1994 թթ. Ադրբեջանի ներքաղաքական իրադարձությունների համատեքստում Ղարաբաղը, վճռորոշ դեր խաղալով Ադրբեջանի ներքաղաքական զարգացումներում, երբեք չդարձավ կամուրջ գործող վարչակարգի և ընդդիմադիր ազգայնականության միջև. Ղարաբաղի հարցը Ադրբեջանում դարձավ հակասությունների, անջատողականության և պառակտվածության խորացման հիմնական պատճառը: Ադրբեջանի քաղաքական ուժերի հակահայկական ագրեսիվ քարոզչությունը հանգեցրեց ադրբեջանական անհանդուրժող հասարակության ձևավորմանը մինչևնկախության և հետանկախության շրջանում, ինչը որոշակիորեն անհնարին դարձրեց ժողովրդավարական գաղափարների և արժեքների տարածումը այդ երկրում:

#### **Айрапетян Татевик – *Политические особенности возвращения Гейдара Алиева***

В данной статье анализируются существующие предпосылки для возвращения Гейдара Алиева на президентских выборах в Азербайджане в 1993 году, а также ситуация накануне. Была сделана попытка понять, какими были основные мотивы, которые вновь привели к власти бывшего коммунистического лидера. Возвращение Алиева к политике сыграло огромную роль в дальнейших внутривнутриполитических развитиях Азербайджана, недавно получившего независимость, в особенности в течение дальнейшей Карабахской войны. С приходом к власти Алиева в Азербайджане была установлена диктатура с выраженным культом личности. В деле формирования азербайджанского общества огромную роль продолжает играть активная пропаганда антиармянских настроений, что с каждым днем все больше делает невозможным установление мира в регионе.

#### **Tatevik Hayrapetyan – *Political Peculiarities of Heydar Aliyev's Return***

The present article analyzes the preconditions of Heydar Aliyev's return and the existing situation on the eve of presidential elections in Azerbaijan in 1993. An attempt has been made to understand the main motivations that brought the former communist leader to power. Aliyev's return to politics played a huge role in the development of the internal political situation in newly independent Azerbaijan and especially on the further course of Karabakh war. Since Aliev's return to power, the dictatorship with emphasized elements of personality cult was established. The anti-Armenian propaganda, which makes it increasingly impossible to establish peace in the region, continues to play a significant role in the restrictions of Azerbaijani public.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ XIII-XV ԴԱՐԵՐԻ ՀԱՅ  
ՓԻԼՍՈՓԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

*Բանալի բառեր – սոցիալական համերաշխություն, միջնադարյան փիլիսոփայություն, տիեզերական ու սոցիալական ներդաշնակություն, մարդու բնություն, աստվածային, բնական ու դրական օրենքներ, բարոյական նորմեր, համագործակցություն, իշխանություն*

Միջնադարի, այդ թվում XIII-XV դարերի հայ փիլիսոփայության մեջ<sup>1</sup> մարդու և հասարակության, անհատի ու պետության, սոցիալական տարբեր խավերի, աշխարհիկ ու հոգևոր դասերի, միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման և սոցիալական համերաշխության հաստատման հարցը քննարկվում էր աշխարհիկ կառույցների, ռացիոնալ գիտելիքի նկատմամբ եկեղեցու, քրիստոնեական կրոնի, կրոնական գաղափարախոսության ու եկեղեցական վարդապետության գերակայության ու գերադասության համատեքստում: Բարոյական հեղափոխության, բարոյական հավասարության ու արդարության պահանջով ու ճշմարտության նոր տեսլականով պատմական ասպարեզ իջած քրիստոնեական կրոնը նախատեսում էր կյանքի կոչելու հասարակության բարեփոխման, մարդկանց բարոյական կատարելագործման և սոցիալական համերաշխություն հաստատման լավատեսական մի նոր նախագիծ, որում համընդհանուր արժեքների (կրոնական պատվիրանների, բարոյական չափանիշների ու Հայտնության ճշմարտությունների) հիման վրա պետք է կարգավորվեին միջանձնային ու ազգամիջյան փոխհարաբերությունները: Սակայն ուտոպիաներ ու չափից դուրս լավատեսական նախագծերի «թշնամի, անուղղելի ու դաժան» իրականությունը ժամանակի ընթացքում խմբագրումներ մտցրեց սոցիալական,

<sup>1</sup> Հոդվածում դիտարկվում են սոցիալական համերաշխության վերաբերյալ XIII-XV դարերի հայ աստվածաբան-փիլիսոփաներ Վահրամ Բաբունու, Հովհաննես Պլուզ Երզնկացու, Հովհան Ռոտունեցու, Գրիգոր Տաթևացու, Առաքել Սյունեցու և Մատթեոս Ջուղայեցու հայացքները: Այս մտածողներից անհամեմատ մեծ տեղ են հատկացրել Հովհաննես Երզնկացուն և Գրիգոր Տաթևացուն, քանի որ նրանք հարցը ներկայացրել են ավելի համակողմանիորեն: Այս շրջանի մտածողների փիլիսոփայական հայացքների մասին տե՛ս **Գաբրիելյան Հ. Գ.**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Երևան, 1958, *նույնի՝* Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1976, **Չալոյան Վ. Վ.**, Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1945, **Григорян Г. О.**, Философская мысль в Армении в эпоху развитого феодализма. Ереван, 1984:

միջանձնային ու ազգամիջյան համերաշխության քրիստոնեական նախագծի իրագործման մեջ՝ նախ փորձելով դա համահունչ դարձնել մարդկային բնության արմատական պահանջմունքներին, երկրորդ՝ հարմարեցնել հասարակական կյանքի զարգացման օրինաչափություններին, երրորդ՝ հաշվի նստել պետությունների, ազգերի ու ժողովուրդների՝ կրոնական երանգավորում ստացած քաղաքական շահերի ու հետաքրքրությունների հետ: Չնայած նախագծի խմբագրման ու իրագործման վեհերոտ կամ արյունոտ փորձերին, այդուհանդերձ սոցիալական համերաշխության քրիստոնեական տեսլականը խարսխված էր բնագանցական, գոյաբանական, իմացաբանական ու բարոյագիտական մի շարք հիմնադրույթների վրա, որոնք գրեթե անփոփոխ մնացին կամ ավելի ստույգ՝ աննշան փոփոխությունների ենթարկվեցին միջնադարյան աստվածաբանական ու փիլիսոփայական մտքի երկարատև զարգացման ընթացքում:

Քանի որ միջնադարյան մտածողության համար սոցիալական համերաշխության հարցը նախ և առաջ առնչվում էր մարդու փրկության հիմնախնդրին, ուստի դրա քննարկումը շաղկապված էր բնագանցական հիմքեր ունեցող կրոնական ու բարոյագիտական հարցադրումների հետ: Միջնադարյան մտածողներին հետաքրքրում էին ոչ միայն առհասարակ (տիեզերական, ազգային ու սոցիալական) համերաշխության, այլև դրան առնչակից սոցիալ-բարոյական բինար երևույթների՝ հավասարության ու անհավասարության, արդարության ու անարդարության, իշխանության ու անիշխանության, հնագանդության ու անհնագանդության և այլնի փոխհարաբերության հարցերը: Սոցիալական համերաշխության հարցը քննարկելիս միջնադարյան հայ մտածողները սկզբում ներկայացնում են արարչագործության, տիեզերական ներդաշնակության, մարդու բնության ու սոցիալական կյանքի իրենց ըմբռնումը, այնուհետև՝ սոցիալական համերաշխության գոյության նախադրյալներն ու պայմանները և դրա իրագործման մեխանիզմները: Այս հարցի վերաբերյալ նրանց կողմից առաջադրված ու ձևակերպված աստվածաբանական-բնագանցական հիմնադրույթներից են՝ ա) արարված տիեզերքում գոյություն ունեն աստվածադիր օրենքներ, հասարակության մեջ ի վերուստ հաստատված կարգեր ու հարաբերություններ, որոնց պահպանումը մարդկանց սրբազան պարտականությունն է, բ) լինելով միևնույն Արարչի ստեղծագործության արգասիք բոլոր մարդիկ ի ծնե հավասար են, ունեն միանման կազմություն ու բնություն, միաժամանակ մարդկանց միջև առկա են «պարզական» (թե՛ ֆիզիկական կարողությունների և թե՛ մտավոր ունակությունների առումներով) տարբերություններ, հասարակական կյանքում՝ անհավասարություն, աշխատանքի բաժանման հետևանքով՝ տարբեր կարգավիճակներ, մասնագիտություններ ու դերեր, տերեր ու ծառաներ, իշխողներ ու հպատակներ, որոնք, փոխադարձաբար կապված լինելով, կոչված են փնտրելու համագործակցության փոխշահավետ ուղիներ, գ) հասարակության մեջ սոցիալական համերաշխության ապահովման մեխանիզմներից

են՝ ըստ աստվածային, բնական ու մարդկային օրենքների՝ իշխողների ու իշխվողների հարաբերությունների կարգավորումը (իշխանությունն աստվածատուր է, հետևաբար քաղաքական ու սոցիալական հնազանդությունը՝ պարտադիր), իշխողների բարոյական նկարագիրն ու պահվածքը և երկրի կառավարումն օրենքներով, իրավամբ ու արդարությամբ: Ավելի հանգամանորեն անդրադառնանք վերոնշյալ հիմնադրությունների վերլուծությանը:

**Ա. Տիեզերական և սոցիալական համերաշխության նախադրյալներն ու պայմանները:** Ժամանակաշրջանի մտածողները կարծում են, որ արարված տիեզերքում գոյություն ունեն աստվածադիր օրենքներ, հասարակության մեջ՝ ի վերուստ հաստատված կարգեր ու հարաբերություններ, մարդու բնության մեջ՝ մարմնականի և հոգևորի հարաբերակցության կանոններ, որոնց պահպանումը մարդկանց սրբազան, բարոյական պարտականությունն է և ուստի սոցիալական համերաշխության հաստատման նախապայմաններից մեկը: Սոցիալական համերաշխության հաստատման այս նախադրյալ-պայմանը նախ բխում է աստվածաբանական ու բնագանցական այն հիմնադրությից, որ Աստված տիեզերքն արարել է իմաստուն կերպով՝ «զի ո՛չ խառնակ ինչ եւ շփոթեալ էթող զարարածս, այլ կա՛րգ եղ ամենայնի եւ դաս եւ սահման ամենայն գոյից, եւ որոշումն զանագանութեան, որպէսզի կարգն ուսուսցէ մեզ զվերինն եւ զներքինն, զմիջինն եւ զամենայն ետեղական կարգաւորութիւնս»<sup>1</sup>: Այսինքն՝ արարված տիեզերքը կարգավորված, դասավորված, աստիճանակարգված, սահմանագծված ու տարբերակված գոյերի ներդաշնակ ամբողջություն է, որը ոչ միայն բացառում է անիշխանությունը (քառսը), այլև կառուցված է բանականորեն (որքանով մարդկային միտքը ի գորու է հասկանալու Աստծո անքննելի գործերը) ըմբռնելի ու բացատրելի հարաբերությունների վրա: Երկրորդ, արարչակարգում Աստված մարդուն շնորհել է բացառիկ կարգավիճակ նրան կարգելով որպես արարված աշխարհի ու արարածների թագավոր: Մարդը աստվածային արարչագործության պսակն է, գլուխգործոցը, որն իր համադրական բնության շնորհիվ միջանկյալ դիրք է զբաղեցնում աստվածայինի և երկրայինի, իմանալի ու զգալի գոյերի միջև: Մարդու համադրական բնությունը բնագանցական այն հիմքն է, որի վրա կառուցվում են միասնության ու համերաշխության հարաբերությունները մյուս արարածների հետ: Մարդու և մյուս արարածների փոխհարաբերությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ «միասնության ու համերաշխության» և «առավելության ու զերագանցության»<sup>2</sup>: «Միասնության ու համերաշխության» մոտեցման համաձայն՝ մարդը և մյուս արարածները միևնույն Արարչի ստեղծած գոյեր են, այսինքն՝ իրար

<sup>1</sup> **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, Բնագրերը հրատ. պատրաստեցին Ա. Երզնկացի-Տէր-Սրայայանը և Է. Բաղդասարյանը, Երևան, 2013, էջ 148:

<sup>2</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Չարսարյան Ս. Ա.**, Մարդու հիմնահարցը 13-15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ, Երևան, 1999, էջ 66-100:

համացեղակից են, համահավասար և միմյանց հետ կապված են որպես միասնական ամբողջի, որպես տիեզերական համընդհանուր Տան ազգակից անդամներ: Այս տեսանկյունից մոտենալով հարցին՝ հայ մտածողները կարծում են, որ Աստված մարդուն ստեղծել է նախ որպես տիեզերական, այնուհետև հասարակական, քաղաքական ու բարոյական էակ: Մարդը տիեզերական էակ է այն իմաստով, որ, լինելով համընդհանուր Տան տերն ու տիրակալը, պատասխանատու է տիեզերական ներդաշնակության, արարված տեսակների՝ մի կողմից իրեն դաշնակից ու բախտակից, մյուս կողմից՝ իրեն ենթակա բոլոր գոյերի պահպանության համար: Մյուս արարածները երբեք չեն կարող խախտել աստվածային-բնական կարգը, քանի որ իրենց կարգավիճակով ի վիճակի չեն դուրս գալու ի վերուստ հաստատված աստվածային-բնական սահմանադրությունից: Ինչպես տիեզերական ներդաշնակության, այնպես էլ համընդհանուր համերաշխության միակ հնարավոր կարգազանցը բանականությամբ ու անձնիշխանությամբ օժտված, նախնական մեղսագործության ժառանգորդ, ըմբոստ ու ընդվզող մարդն է: Ի տարբերություն անբան կենդանիների՝ մարդը ունակ է խախտելու բնական կարգը՝ «անասունքն գործեն ըստ բնական կարգի, իսկ մեք հակառակն փոխեմք»<sup>1</sup>: Սակայն ինչ-որ բան մարդ կարող է խախտել կամ վերափոխել այնքանով, որքանով դա չի վերաբերում աստվածային կարգին: Օրինակ, Վահրամ Բաբունին կարծում էր, որ արարչակարգում փոփոխություններ կարող է կատարել միայն նա, ով ստեղծել է տիեզերքը: Իսկ Առաքել Սյունեցու կարծիքով, ինչ-որ բան փոխելու, ավելի ճիշտ՝ հրաշք գործելու ունակությամբ օժտված են Աստծուց շնորհ ստացած եզակի մարդիկ՝ մարգարեները, առաքյալները և սրբերը: Մարդը կարող է խախտել աստվածային-բնական կարգը, կարող է փոփոխություններ կատարել իր շրջապատում (օրինակ, փոխել գետակի հունը, անցկացնել ջրատար, ստեղծել արհեստի ու արվեստի գործեր և այլն), սակայն նա ի գորու չէ վերացնելու այն, ինչ Աստված ստեղծել ու հաստատել է: Եթե մարդը փորձեր փոխել աստվածային-բնական կարգը, ապա դա միանշանակ կորակվեր որպես սրբապղծություն և կդատապարտվեր եկեղեցու կողմից: «Այդ աշխարհում, - միջնադարի մասին գրում է Կ. Յասպերսը, - մարդը կառուցում էր իր կյանքը՝ չձգտելով դա փոփոխել: Նրա գործունեությունը ուղղված էր իր կացության բարեփոխմանը ինքնին անփոփոխ պայմանների շրջանակներում»<sup>2</sup>:

Մարդը տիեզերական էակ է, սակայն նրա տիեզերական տարածությունը սահմանափակվում է երկրի շրջանակներում, իր գոյության միջոցների հայթայթման կենսաաշխարհում, իր նմանների շրջապատում, այսինքն՝ հասարակության մեջ, ուստի նա այդ առումով գերազանցապես հասարա-

<sup>1</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 564:

<sup>2</sup> **Ясперс К.**, Смысл и назначение истории. М., 1991, с. 288.



կական-քաղաքական էակ է: Հայ մտածողները, հենվելով այս հարցի մեկնաբանության պլատոն-արիստոտելյան և քրիստոնեական ավանդույթների վրա, կարծում են, որ մարդու ֆիզիկական-անատոմիական կառուցվածքը, մարմնական ու մտավոր հատկությունները ցուցանում են, որ նա նախատեսված է հասարակական համատեղ կյանքի համար, որ մարդը ինքնաբավ էակ չէ, այլ ունի այնպիսի բնություն, որ չի կարող առանց ուրիշ մարդկանց գոյատևել: Աստված մարդուն «միտումնավոր» է ստեղծել կարիքավոր, որ նա ունենա ուրիշ մարդկանց հետ հաղորդակցվելու, համագործակցելու, համերաշխ ու խաղաղ ապրելու պահանջ: Ճիշտ է, «առավելության և գերազանցության» սկզբունքի համաձայն՝ Արարիչը մարդու համար ստեղծել է անբան «դաշնակիցների ու ընկերների, ծառաների ու սպասավորների» մի ստվար բանակ, որոնց գոյության իմաստը մարդկանց ծառայելն է, այնուհանդերձ դրանով բնավ չի նվազում մարդու դերը մարդու կյանքում. «Մարդն է մարդոյ օգնական. զի թէպէտ կային այլ կենդանիք օգնական մարդոյ ի բեռն. ի լուծ. և այլ պէտս, այլ ... մարդն է օգնական մարդոյ»<sup>1</sup>: «Առ միմեանս կարօտութեան» գլխավոր պատճառներից մեկը, որ անհրաժեշտ է դարձնում մարդկանց միավորումը, գոյության համար միջոցների հայթայթումն ու կենսական պահանջմունքների բավարարումն է: Կարիքը մարդկանց հարկադրում է միավորվել, կազմակերպել համատեղ գործունեություն, միասին պայքարել դժվարությունների ու աղետների դեմ, դրանով իսկ հող ստեղծում բացառելու կամ նվազագույնի հասցնելու մարդկանց միջև թշնամական մտադրությունները: Աստված մարդկանց ստեղծել է «կարիքավոր», որ նրանց միջև հաստատվի մտերմության, վստահության ու եղբայրության հարաբերություններ: Եթե այդչափ բարեհոգի վերաբերմունքից հետո էլ մարդիկ շարունակում են իրար նախանձել ու ստել, անհանդուրժողական լինել միմյանց նկատմամբ, ապա ինչ կլինեք, գրում է Տաթևացին, եթե մարդիկ ի ծնե չունենային բարի բնություն և չզգային միմյանց կարիքը: Միմյանց «կարոտելու», մեկմեկու համար անհրաժեշտ ու պահանջված լինելու տեսությունը պաշտպանում է նաև Մատթեոս Ջուղայեցին, ըստ որի Աստված մարդուն ստեղծել է մարմնական (օրինակ, մարդն ունի աչքեր ուրիշներին տեսնելու, ականջ ուրիշներին լսելու, լեզու ուրիշների հետ խոսելու, հաղորդակցվելու, ձեռքեր տալու և առնելու համար) ու հոգևոր (մարդիկ միևնույն հույսով, հավատով ու սիրով են շաղկապված Աստծո հետ) այնպիսի կառուցվածքով, որպեսզի նրանք կարիք ունենան փոխադարձ հարաբերության<sup>2</sup>: Ուրեմն, ըստ հայ մտածողների, մարդու բնությունը սոցիալական համերաշխության կայացման կարևորագույն նախադրյալն է:

<sup>1</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, էջ 192:

<sup>2</sup> Տե՛ս **Մատթեոս Ջուղայեցի**, Գիրք քարոզութեան, Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. թիվ 6607, էջ 267բ:

**Բ. Տիգրիկական-մտավոր և դասային-ունեցվածքային անհավասարությունը որպես սոցիալական համերաշխության նախադրյալ:** Ժամանակաշրջանի հայ մտածողները պաշտպանում են քրիստոնեական մարդաբանության այն դրույթը, որ ի ծնե բոլոր մարդիկ հավասար են, որովհետև միևնույն Աստծո արարածներն են, նույն նախահոր ժառանգները: Հավասարությունը դրսևորվում է այն բանում, որ բոլոր մարդիկ ստեղծվել են միանման նյութից, ունեն մարմնական ու հոգեկան նույն կառուցվածքն ու կարողությունները: «Ամենայնքն ի միոյ հողոյ եմք, - գրում է Տաթևացին, - թէպէտ կէսք յետոյ, և կէսք յառաջոյ եկին: Եւ ոչ ստեղծեաց Աստուած երկու Ադամ. մին յոսկոյ վասն իշխանաց. և մին ի կաւոյ վասն աղքատաց. այլ մին Ադամ և այն ի հողոյ: Եւ ամենայնքն մեծամեծ և փոքունք՝ ի նմանէ յառաջ եկին»<sup>1</sup>: Թեև հասարակության մեջ գոյություն ունի աստիճանակարգություն, իշխողներ ու իշխվողներ, այնուհանդերձ մարդկային բնության առումով իշխողները ոչ մի առավելություն չունեն իրենց հպատակների նկատմամբ: Նրանց իշխանության տակ գտնվող մարդիկ, գրում է Երզնկացին, ոչ թե անբան հոտի անդամներ են, այլ «մարդիկ են ստեղծեալ յԱստուծոյ ի միոջէ զանգուածոյ, իբրև զինքն, և չունին ինչ-որ պակասութիւն, բայց միայն զիշխանութիւն»<sup>2</sup>: Դա վերաբերում է ոչ միայն մարմնական, աշխարհիկ տերերին, այլև հոգևոր առաջնորդներին: Վերջիններս չպետք է մոռանան, որ իրենք նույնպես մարդու զավակներ են, ինչպես բոլոր մարդիկ և մարդկային բնության առումով չունեն ոչ մի առավելություն: Դիմելով հոգևոր առաջնորդին՝ Տաթևացին գրում է. «Եվ ո՛չ ինչ ունիս աւելի ի բնութիւնդ քան զնոսա. ո՛չ ես որպէս զհովին ոչխարաց, զի հովին բանական մարդ է. և ոչխարքն անբան կենդանիք: Այլ դու որ հովիւդ ես մարդկան՝ մարդ ես նոցա հաւասար հոգւով և մարմնով, մտօք և այլովքն»<sup>3</sup>: Մարդուն բարձրագույն արժեք դիտող քրիստոնեական կրոնից բխող այս հումանիստական դիրքորոշումը, ըստ հայ մտածողների, պետք է ընկած լինի իշխանավորների գործունեության հիմքում, որովհետև ստորադրյալների ու հպատակների նկատմամբ նրանց վերաբերմունքից է կախված նաև հասարակության ցնցումնազերծ ու համերաշխ գործառույթունը:

Մարդկանց հավասարության գաղափարը չի խանգարում հայ մտածողներին պնդելու, որ հասարակության մեջ գոյություն ունի նաև անհավասարություն. մարդիկ իրարից տարբերվում են իրենց ունեցվածքով, հասարակական դիրքով, սոցիալական կարգավիճակով ու գործառույթներով: Հարց է ծագում. ո՞րն է այդ անհավասարության պատճառը, ինչո՞ւ «ոչ հասարակաց ետ Աստուծոյ զինչս որպէս զարնն, և զօդն, և զանձրնն, և զհողն»: Հայ

<sup>1</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 91:

<sup>2</sup> **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեցաց զաւառի // **Բաղդասարյան Է. Մ.**, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Բնագրեր, Երևան, 1977, էջ 217:

<sup>3</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 182:

մտածողները սոցիալական անհավասարության փաստը բացատրում են աստվածային նախախնամության գոյությամբ: Աստծո կամոք են ստեղծվել հարուստներ ու աղքատներ, իշխողներ ու ծառաներ, արհեստավորներ ու առևտրականներ, որոնք կոչված են համագործակցելու, մեկը մյուսի կարիքը հոգալու, միմյանց «վաճառելու» իրենց գործունեության արդյունքները՝ «վաճառելով ի միմեանց զմարմնաւորն և զհոգևորն և երկուքին շահել աւգոսեցին»<sup>1</sup>: Նախախնամությամբ տրված անհավասարությունը չի հակասում սոցիալական համերաշխության գաղափարին, քանի որ անհավասարությունը ոչ թե խոչընդոտում, այլ, ընդհակառակը, դրդում է հակադիր կողմերին փնտրել համագործակցության փոխշահավետ ուղիներ: Նրանք կախված են իրարից, և մեկի կեցությունն անպատկերացելի է առանց մյուսի: Անհավասարության հիմքի վրա խարսխված սոցիալական համերաշխության կայացման ու ապահովման երաշխիքը մարդկանց կողմից իրենց հասարակական, աշխատանքային ու բարոյական պարտականությունների կատարումն է: Աստվածային նախախնամությամբ բացատրելով սոցիալական անհավասարության փաստը՝ հայ մտածողները միաժամանակ չեն բացառում անհավասարության առաջացման «մարդկային գործոնը»: Հասարակական կյանքը հարափոփոխ, հակասություններով ու պատահականություններով լի մի գործընթաց է, որի ժամանակ մեկը կորցնում է իր ունեցվածքը, հարևատությունը, իսկ մյուսը իր աշխատասիրության, հնարամտության կամ բռնության միջոցով տիրում է հարստության, պատահում է մի տոհմիկ ազնվական սոցիալական սանդղակի վերին աստիճանից գահավիժում է ներքև, պատահում է նաև, որ ջրկիրը կամ ախոռապանը դառնում է թագավոր:

**Գ. Սոցիալական համերաշխության ապահովման մեխանիզմները:** Ժամանակաշրջանի հայ մտածողների կարծիքով, սոցիալական համերաշխության ապահովման մեխանիզմներից են՝ հնազանդությունն իշխանության հանդեպ (իշխանությունն աստվածատուր է, հետևաբար քաղաքական ու սոցիալական հնազանդությունը՝ պարտադիր), կառավարումն ըստ աստվածային, բնական և մարդկային օրենքների, իշխանության իմաստուն իրագործումը, բարոյական նորմերով, օրենքներով ու արդարությամբ կառավարումը:

Հայ մտածողները ելնում են այն մտքից, որ երկիրը, պետությունը, հասարակությունը չեն կարող գոյատևել առանց իշխանության ու կառավարման: Անկախ այն բանից, թե ինչ ծագում ունի իշխանությունը (օրինակ, Բաբելոնի, հետևելով Օգոստինոս Երանելուն, պետության ծագումը կապում է նախնական մեղսագործության, իսկ տաթևցիները, հետևելով Արիստոտելին՝ մարդու հասարակական-քաղաքական էակ լինելու, համատեղ ապրելու

---

<sup>1</sup> Մատթեոս Զուղայեցի, Գիրք քարոզութեան, ՄՄ, ձեռ. թիվ 6607, էջ 267բ:

պահանջումնքի հետ), դա անհրաժեշտ է մարդկանց երկրային կյանքը կարգավորելու ու կազմակերպելու, հետևաբար երկնային, հանդերձյալ կյանքին նախապատրաստելու, փրկության գործին նպաստելու համար: Երզնկացին, պաշտպանելով «ցանկացած իշխանություն գերադասելի է անիշխանությունից» դրույթը, կարծում է, որ «անիշխանութիւն ամենայն ուրեք չար է եւ պատճառք ոչ փրկութեան»<sup>1</sup>: Մեփական փորձից իմանալով անիշխան ու անառաջնորդ վիճակի կործանարար հետևանքները՝ հայ մտածողները կարևորում են իշխանության դերը թե՛ պետության գործառության և թե՛ ազգային հարցերի կարգավորման գործում: Տաթևացու կարծիքով, իշխանություն, պետականություն ունեցող երկիրը պաշտպանում է իր քաղաքացիներին, կյանքը դարձնում բարեկեցիկ, իսկ անիշխան, անդեկ ու անառաջնորդ երկիրը կամ հասարակությունը դատապարտված է կործանման. «Իսկ յորժամ երկիր առանց իշխանի լինի և ժողովուրդն առանց առաջնորդի, բաժանեալ են ի կենդանութեանց, անկեալ ի բարձրութեանց, և կոխան եղեալ յամենայն մարդկան. և ցրուեալք յամենայն հողմոց, տգեղացեալ և չորացեալ և ապականեալ զանազան մեղօք»<sup>2</sup>: Որպես ասվածի օրինակ Տաթևացին մատնանշում է հայոց վիճակը. «Որպէս ի ժամանակս յայս տեսանեմք յազգս մեր անիշխան և անառաջնորդ իբրև ոչխար առանց հովուի՝ զազանակուր լինին և կորնչին...»<sup>3</sup>: Այլ խոսքով՝ առանց իշխանության հնարավոր չէ պատկերացնել ոչ միայն սոցիալական ու ազգային համերաշխությունը, այլև առհասարակ պետության, հասարակության ու ազգի գոյությունը:

Հայ մտածողների կարծիքով, իշխանությունը մի հարաբերություն է, որում մեկը իշխում է, մյուսը՝ իշխվում, մեկը կառավարում է, մյուսը՝ կառավարվում: Մա տիեզերքում և արարչակարգում գործող աստվածային կարգ է: Այդ իշխանական հարաբերությունները գոյի մակարդակում դրսևորվում են երեք ձևով. ա) մեկը միմիայն իշխում է. դա տիեզերքի Արարիչն է, բ) մյուսը իշխում է և միաժամանակ գտնվում իշխանության տակ. դա մարդն է, գ) երրորդը՝ կենդանիները, միայն գտնվում են իշխանության տակ: Հասարակության մեջ գոյություն ունի երկու իշխանություն՝ աշխարհիկ (մարմնական) և հոգևոր: Հոգևոր իշխանությունը գտնվում է եկեղեցու, հոգևորականների ձեռքին, ովքեր կառավարում են «զհոգևոր տունս Աստուծոյ և զհոգիս մարդկան», իսկ աշխարհիկ տերերը՝ թագավորներն ու իշխանները, կառավարում են «զմարմնաւոր տունս աշխարհի. զգեղ՝ զքաղաք՝ զերկիր և զաշխարհ»: Ըստ այդմ հայ մտածողները տարբերակում են երկու կարգի օրենքներ՝ աշխարհիկ կամ քաղաքական և հոգևոր. «Մարմնաւոր իշխանքն՝ քաղաքական օրինօք կարգաւորեն զհնազանդեալս. և հոգևորքն հոգևոր օրինօք»: Հետևելով նորկտակարանային ավանդույթին՝ հայ մտածողները կոչ են անում

<sup>1</sup> **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 153:

<sup>2</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 423:

<sup>3</sup> Նույն տեղում:

հնազանդվել մարմնական, աշխարհիկ տերերին՝ «պարտիմք հնազանդ լինիլ իբրև փոխանորդութիւն Աստուծոյ. և զհրամայեալն նոցա լսել և կատարել»<sup>1</sup>: Ենթարկվել ու հնազանդվել իշխանին նշանակում է նախ և առաջ հնազանդվել աստվածային հրամաններին, որովհետև իշխան-իշխվող հարաբերությունն ունի աստվածային ծագում: Նրանց կարծիքով, սոցիալական հնազանդությունը ոչ միայն առաքինություն է, այլև աստվածային օրենքին համապատասխանող իմաստուն վարքագիծ, կյանքին հարմարվելու ճկուն պահվածք. «Եւ որք իմաստունք են՝ լինին հնազանդք և մտերիմք իշխանաց իւրեանց և ի բարութեան վայելեն: Իսկ որք անմիտք են՝ լինի ապստամբք և երկմիտք իշխանաց իւրեանց և ի խաւարի գնան. և զչար պատիժս կրեն ի պետաց իւրեանց»<sup>2</sup>:

Քարոզելով հնազանդություն՝ ժամանակաշրջանի հայ մտածողները ելնում են այն դրույթից, որ իշխանությունն աստվածատուր է, իսկ թագավորը՝ աստվածադիր: Եթե թագավորը կառավարում է օրենքների ու իրավունքի հիման վրա, մտածում է ընդհանուրի բարօրության մասին, ապա հպատակները իշխանությանը ենթարկվում են հոժարությամբ: Իսկ ինչպե՞ս պետք է վարվեն հպատակները, եթե իշխանավորները ոտնահարում են իրենց իրավունքները, չարաշահում իշխանական դիրքը, չար գործերով ու ծանր հարկերով ահաբեկում-նեղում քաղաքացիներին: Ըստ հայ մտածողների՝ այս դեպքում ևս բնակիչները պետք է հնազանդվեն, որովհետև ցանկացած իշխանություն, այդ թվում չարագործների ու մարդասպանների իշխանությունը, աստվածատուր է, համենայն դեպս գտնվում է աստվածային նախախնամության տակ: Իսկ ինչո՞ւ է Աստված, նախապես իմանալով, իշխանություն տալիս չարագործ մարդկանց: Հայ մտածողները այս հարցին պատասխանում են՝ հենվելով աստվածարդարացման ընդհանուր տեսության, ի մասնավորի՝ չարի նպատակահարմարության դրույթի վրա: Հովհան Ռրոտնեցու կարծիքով, «բռնաւորք խիստք յերբեմն երբեմն ժամանակի պիտանիք են աշխարհի. որպէս պատուհասն, որ գրեալ է յաւրէնս, պիտանի է վասն յանցաւորաց, այսպէս եւ նոքա վասն չարեաց մարդկան: Վասն այն Աստուած տայ նոցա զաւրք եւ փարթամութիւն, զի անհնար է առանց խակ ոգոց սրբիլ մարդկան եւ դառնալ ի չարեաց. եւ որպէս իշխանք զայնոսիկ, որք սպանողք են գողոց եւ մարդասպանաց, այն որ ջալատ կոչեն, կերակրեն եւ խնամեն՝ ոչ եթէ վասն արժանաւոր բարուց նոցա, այլ զի զայնպիսի գործսն կատարեսցեն, այսպէս եւ չար բռնաւորք երկրի»<sup>3</sup>: Չարն ու բարին, ըստ Տաթևացու, փոխկապակցված երևույթներ են, որոնք ծագումնաբանական ու պատճառահետևանքային կապի մեջ են՝ «նախախնամութեամբ բազում

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>2</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, էջ 194:

<sup>3</sup> **Հովհան Ռրոտնեցի**, Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, որ «Յաղագս նախախնամութեան» // «Բանբեր Մատենադարանի», 2006, թիվ 17, էջ 244-245:

բարիս յառաջացած է ի չարէ»: Հետևաբար՝ «ոչ է հաճոյ Աստուծոյ բառնալ զչարս,- գրում է Տաթևացին,- թէ պակասութիւն լինի բարեացն. գոր օրինակս թէ լինիցի մեծ ուն չար՝ թէ նա զնա բանադրելով կամ հանելով, զա՛յլ բարիս ընդ իւր հանէ. կամ ի ներքոյ նորա շատ բարիք կան՝ որք նորա շքովն ի խաղաղութեան և ի բարի գործս մնան: Որպէս այսժամ քրիստոնէայք ի ներքոյ բռնաւոր իշխանաց խաղաղութեամբ ունին զիրեանց եկեղեցականութիւնն...»<sup>1</sup>: Քարոզելով սոցիալական ու քաղաքական հնազանդություն, այնուհանդերձ հայ մտածողներից ումանք անում են վերապահումներ: Տաթևացու կարծիքով, հպատակներն իրավունք ունեն չենթարկվելու, եթե իշխանավորը շեղվում է հավատից և եթե արձակում է չար հրամաններ: Օրինակ, եթե թագավորը հրամայում է սպանել մի մարդու, որը գող է, ավագակ կամ «թշնամի թագավորութեան», ապա սպանելը կլինի արդար, օրենքով, իսկ սպանողը՝ անմեղ: Իսկ եթե սպանվողը անմեղ է, ապա նրա արյան համար պատասխանատու են թե՛ պատվիրատուն և թե՛ սպանողը, որովհետև դա «ըստ օրինացն Աստուծոյ» չէ, այլ «ըստ չար կամաց իւրեանց գործերին»<sup>2</sup>:

Այսպիսով, իշխանության ենթարկվելը աստվածահաճո երևույթ է, աստվածային օրենք, իսկ անհնազանդությունը՝ աստվածային օրենքի խախտում: Եթե Երզնկացին տարբերակում է իշխանության երեք տեսակ՝ աստվածային, մարդկային և բնական, ապա, Տաթևացու կարծիքով, իշխանության այս երեք տեսակներին համապատասխանում են երեք կարգի օրենքներ՝ աստվածային, մարդկային և բնական: Աստվածային օրենքները, որոնք ամփոփված են Ս. Գրքի մեջ, հավերժական են, անփոփոխ, կատարյալ, և մարդիկ պարտավոր են հնազանդվել ճանապարհ ցուցանող, ուղեցույց հանդիսացող այդ օրենքներին: Աստվածային օրենքների առջև բոլոր մարդիկ հավասար են, քանի որ, Տաթևացու արտահայտությամբ, «յօրէնս մեծ և փոքր չկայ»: Պետության և հասարակության մեջ կայունություն ու համերաշխություն հաստատելու համար նախ և առաջ հարկավոր է հետևել աստվածային օրենքներին, ըմբռնել արարչագործության իմաստը, հնազանդվել աստվածադիր կարգերին, նպատակ ունենալ հոգով բարձրանալ դեպի վեր՝ աստվածային աշխարհը, և ոչ թե իջնել վար՝ դեպի նյութական, անբան ու անասնական աշխարհը: Բնական օրենքը աստվածային օրենքի մասնավոր դրսևորումն է: Մատթեոս Ջուղայեցու կարծիքով, բնական օրենքն այն է, որ «բնութեամբ ի բարին էստեղծ Աստուած: Եւ բարին սիրեմք և զչարն ատեմք»<sup>3</sup>: Բնական օրենքի համաձայն՝ մարդը պետք է գործի Աստծո կողմից իր բնության մեջ ներդրած հակումներին համապատասխան: Օրինակ, մարդը բնությամբ ինքնիշխան է և հակված է սիրելու բարին, կամ՝ մարդու մեջ բուսական ու կենդանական հոգիները պետք է ենթարկվեն բանական հոգուն, իսկ մար-

<sup>1</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, էջ 452:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 194:

<sup>3</sup> **Մատթեոս Ջուղայեցի**, Քարոզգիրք, ՄՄ, ձեռ. թիվ 6607, էջ 332բ:

մինը՝ հոգուն: Հոգու երեք մասերի՝ բանականի, ցասմականի և ցանկականի միջև գոյություն ունեն ի վերուստ հաստատված՝ արդար՝ հարաբերություններ: Ինչպես մեծ աշխարհում մեկը միայն իշխում է (Աստված), մյուսը իշխվում և իշխում է (մարդը), իսկ երրորդը միայն իշխվում է (անբան կենդանիները), այնպես էլ փոքր աշխարհում «բանն միայն իշխան և ոչ ընդ իշխանութեամբ, իսկ ցասումն ընդ իշխանութեամբ բանին, բայց իշխե՛ ցանկականին, իսկ ցանկութիւնն միշտ ընդ իշխանութեամբ: Իսկ արդարութիւն է պահել զոսայ ի կարգ և ի չափ եղեալ սահմանին...»<sup>1</sup>: Բայց քանի որ մարդիկ ոչ միշտ են հետևում իրենց բնության օրենքներին, ուստի անհրաժեշտություն է ծագում ընդունել մարդկային (քաղաքական) օրենքներ, որոնք իրենց հերթին պետք է համապատասխանեն բնական օրենքներին: Քաղաքական օրենքները կոչված են կարգավորելու մարդկային հարաբերությունները, նպաստելու պետության ու հասարակության առջև կանգնած կենսական ինդիքների լուծմանը: Ի տարբերություն աստվածային օրենքների՝ դրանք հարաբերական ու ժամանակավոր բնույթ ունեն: Այս իմաստով օրենքներն են մարդկանց համար, և ոչ թե մարդիկ են օրենքների համար: Հայ մտածողներն իրենց քարոզներում երկրի բնակիչներին հորդորում են հարգել իրենց տերերին և հնազանդ լինել նրանց՝ դրանում տեսնելով աստվածային օրենքներին նվիրվածության, երկրի շենության, ընդհանուրի բարօրության ու տարբեր սոցիալական խավերի ու ազգերի համերաշխ ապրելու գրավականը. «Երկու իրաւք քաղաքն շէն լինի. յորժամ քաղաքացիքն իւրեանց իշխանացն հնազանդ լինին, և իշխանքն՝ Աստուծոյ աւրինացն»<sup>2</sup>:

**Պետության մեջ սոցիալական համերաշխության հաստատումը կապված է իշխանության իմաստուն իրագործման հետ:** Պետությունը, թագավորությունը իշխանության, մարդկանց գործունեության կազմակերպման ձև են, որի գործառնություններից են նաև հասարակության մեջ կայուն ու համերաշխ հարաբերությունների ստեղծումն ու պահպանումը: Թագավորությունը, ըստ Բաբունու, «է ըստ ուղիղ բանի՝ ի վերայ աշխարհի՝ որ իւր է վիճակեալ, և նմա բնակելոցն իշխել արդարացի հարկս և իրավունս ի նոցանէ առնուլ, և զնոսին ի հաստատութիւն պահել...»<sup>3</sup>:

---

<sup>1</sup> **Յովհաննու Որոտնեցոյ** քաջ հռետորի և արդիւնաբան բաբունապետի, արարեալ ի բան մարգարէին, որ ասէ «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յաիտեան», **Ս. Հովհանն Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 205:

<sup>2</sup> **Հովհաննես Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց գաւառի, էջ 217:

<sup>3</sup> **Վահրամ Բաբունի**, «Ի մեծի աւուր յայտնութեան Քրիստոսի, վերլուծութիւն բանին Եսայեայ, յետ որոյ և հաւաքմունք աստուածաշունչ բանից թարգման՝ յօրինեալ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ և իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր օծեալ ձեռնադրեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լեւոն» // «Արարատ», 1869, թիվ Ա, էջ 9:

Պաշտպանելով պետության կառուցվածքի օրգանիստական տեսությունը՝ հայ մտածողները պետությունը նմանեցնում են մարդու օրգանիզմին՝ կարծելով, որ ինչպես վերջինս կառավարում է գլուխը, այնպես էլ պետությունը պետք է կառավարվի թագավորի կողմից. «Որպես գլուխն մի է բոլոր մարմնոյն և բարձրացեալ ի վերա ամենայն անդամոցն և ի նմանէ իջանեն ամենայն կենդանութիւնք և զգայութիւնք և շարժումն ի բոլոր ամենայն օդուածս մարմնոյն. նոյնպէս և իշխանն մի է ի մէջ մարդկան. և բարձրացեալ փառօք և մեծութեամբ. և գլուխ նստեալ ամենայն մարդկան. և նմանէ գայ ի մարդ հրաման և շարժումն. մահ և կէանք. շէն և աւեր. և ամենայն նորա հրամանան կարգաւորի ընդ երկիր»<sup>1</sup>: Թագավորն օժտված է բացարձակ իշխանությամբ, ուստի նա կարող է միավորել մարդկանց, նրանց միջև հաստատել վստահության ու համերաշխության հարաբերություններ և, ընդհակառակը, իր կարգադրություններով ու գործողություններով կարող է թշնամացնել մարդկանց: Այսինքն՝ դա կախված է իշխանության իրագործման բնույթից: Մատթեոս Ջուղայեցին, տարբերակելով կառավարման երկու ձև՝ «բռնակալական» և «հասարակաբար», նշում է, որ բիրտ ուժի վրա հիմնված կառավարումը մարդկանց բաժանում է իրարից, ստեղծում ատելության ու սարսափի մթնոլորտ, իսկ «հասարակաբար», ընդհանուր կամ ժողովրդավարական կառավարումը մերձեցնում է մարդկանց, նրանց մէջ արթնացնում կարեկցանքի, սիրո ու գթասրտության զգացումներ:

Թեև հայ մտածողները կառավարման գործում չափազանց մեծ դեր են վերապահում անհատներին (թագավորներին ու իշխաններին), այնուհանդերձ նրանք կողմնակից չեն միահեծան ղեկավարման տարբերակին: Թագավորը իբրև մարդ բնությամբ տկար է, այսինքն՝ չի կարող ամեն ինչ իմանալ ու ամեն ինչ կարողանալ, ուստի նա կարիք ունի այլ մարդկանց աջակցության: Թագավորի ինքնիշխանությունը զսպելու ու հակակշռելու մեխանիզմներից է թագավորներին կից խորհրդականների և իմաստունների ինստիտուտի առկայությունը: Քանի որ Աստված մարդուն ստեղծել է «ոչ ինքնաբաւարար, այլ խրատատուի եւ խորհրդակցի կարօտ», ուստի իշխանը պարտավոր է իմաստուն խորհրդականների օգնությամբ կառավարել երկիրը: Կառավարման գործում իմաստուն խորհրդատուների անհրաժեշտությունը բխում է միմյանց օգտակար լինելու աստվածային կարգից: Ինչպես մարմնի անդամները միմյանց օգնում և լրացնում են, այնպես էլ մարդիկ պարտավոր են «ի խորհուրդն կցորդիլ միմեանց. և զուղիղն զտանել. և որպէս կարօտ են միմեանց ճորտ և պարոն, հարուստ և աղքատ, վարդապետ և աշակերտ, նոյնպէս միտքն կարօտ է առաջնորդի և խորհրդակցի: Եւ իմաստուն մարդն հանապազ խնդրէ իւր խորհրդակից և օգնական մտացն իւրաց»: Ավելին, Տաթևացու կարծիքով, յուրաքանչյուրի մասնակցությունը կառա-

<sup>1</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 422:



վարմանը ինքնին արժեքավոր է. «Եւ որպէս գլուխն մարմնոյն է պիտանի, նոյնպէս և մարմինն ի գլխոյն: Այսպէս և առաջնորդն և հետևեալքն՝ միմեանց պիտանիք են. ի շինութիւն երկրի, ի խորհուրդ, ի պատերազմ, ի խաղաղութիւն և յայլն: Եւ առաւել քան զամենայն պիտանաւորութիւն ունին առ միմեանս զժողովիլն ի խորհուրդ. և ապա համաձայն նորին խորհրդով՝ կարել զշինութիւն աշխարհի»<sup>1</sup>: Այդ խորհրդատվության արդյունքներից պետք է լինի կառավարման գործին մասնակցողների ճիշտ ընտրությունը: Հովհաննէս Երզնկացին կարծում է, որ կառավարողներ ու դատավորներ պետք է ընտրել հաշվի առնելով տվյալ մարդու գործնական ու բարոյական արժանիքները, այլ ոչ թե նրա քսակի ծանրությունը կամ սոցիալական ծագումը: Օրինակ, ոչ թե այն ձին պիտի ընտրել, գրում է Երզնկացին, որի թամբն ու սարքը կարված են ոսկու թելերով, այլ որը ազնիվ ու քաջասիրտ է, այնպէս էլ ոչ թե շատ ոսկի և արծաթ ունեցող մարդուն պիտի ընտրել, այլ նրան, ով աստվածապաշտ է, օրինապաշտ ու առաքինի: Նմանապէս «Ձցորենն ոչ թէ ի գեղեցիկ արտէ ընտրեն, այլ զայն, որ լաւ հաց լինի: Նոյնպէս և զայն մարդն պիտի սիրել, որ ինքն բնութեամբն լաւ լինի, և գործքն՝ բարի, և ո՛չ զայն, որ մեծագոյն է, և գործքն՝ վատ»<sup>2</sup>: Ճիշտ ընտրություն կատարելուց հետո կառավարման ընթացքում թագավորը պետք է պատվի ու մեծարի բանիմաց, բարեպաշտ, առաքինի, ճշմարտասեր, իրեն հավատարիմ, բայց իր սխալները մատնանշող, իր գործը արդարությամբ կատարող մարդկանց և, ընդհակառակը, պետք է խուսափի կեղծավորներից, շողոքորթներից ու երեսպաշտներից, առավել ևս պետք է «արհամարհէ չարագործն. եւ ո՛չ հաղորդի թէպէտ եւ մեծ ոք է»: Այս զգուշացումներից կարելի է ենթադրել, որ միջնադարում էլ իշխանության և մեծահարուստների ու հանցավոր տարրերի միջև գոյություն ունեին սերտ հարաբերություններ, որոնցից առաջին հերթին բնականաբար տուժում էին իշխանագուրկ մարդիկ:

**Սոցիալական համերաշխության հաստատման մեխանիզմներից են երկիրը բարոյական նորմերով կառավարումը, իշխանավորների նկարագրի ու վարքագծի համապատասխանությունը բարոյականության չափանիշներին:** Թագավորը ոչ միայն երկրի կառավարիչ է, այլև ժողովրդի առաջնորդը, ժողովրդին ուղղություն տվողն ու իր հետևից տանողը: Հետևաբար, նրանից են մեծապէս կախված հասարակության բարոյահոգեբանական վիճակը, մարդկանց միջանձնային ու սոցիալական հարաբերությունների բնույթը: Նա հեղինակություն է, համայնի տեսադաշտում է, հետևաբար նրա յուրաքանչյուր արարք անմիջականորեն գնահատվում է բոլորի կողմից. «ժողովրդեանն ամեն աչք և միտք՝ յառաջնորդն լինի. ոմն նայի ուսումն. և ոմն ի վարսն. և այլք ի հաւատն. ոմանք հային, զի ուսանին, ոմանք հային, զի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 423:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 218:

պարսաւեն...: Եւ այնպէս զգաստ պարտ է լինիլ առաջնորդին. զի ամենքն հաճեցեն ի նա. իւրքն և օտարքն, հաւատացեալքն և անհաւատքն...»<sup>1</sup>: Ընդ որում, որքան մեծ է թագավորի իշխանությունը, այնքան մեծ է բարոյական սայթաքման ու անկման, իշխանության չարաշահման հնարավորությունը. «Իշխանացն որքան բարձրութիւնն էւ արժանաւորութիւնն է, այնքան էւ վտանգն, եւ որքան բազմութեան իշխան է, պարտ է այնքան աչս ունել տեսանողս եւ ունկն՝ ի լսել, զի մի՛ վրիպեցի յիրաւանց: Եւ որքան իշխանութիւնն է յոլովից, այնքան էւ չարն տարածեալ լինի, զի ոչ ասք զներկուածն էւ ոչ անուշահոտ ինչ էւ կամ գարշահոտ ազդէ այնքան յընդունակսն, եւ ոչ ժանտախտ ի տարածումն ի մարդիկ, որքան դիրին էւ հեշտաբարն տարածեալ փոխի չարն յիշխանացն առ իշխեցեալսն»<sup>2</sup>: Ուստի իշխանի մի անխտհեմ քայլ, մի անբարո արարք կարող են արատավորել նրա բարի անունը, սև բիծ թողնել նրա հեղինակության վրա և ստվերել նրա կատարած բազմաթիվ բարի գործեր: Օրինակ, հպատակները ընդօրինակում են իշխանավորների թէ՛ լավ և թէ՛ վատ արարքները: Ինչպիսին իշխանավորներն են, գրում է Տաթևացին, այնպիսին էլ նրանց հպատակներն են դառնում. «Յորժամ կարգաւորն և իշխանն սխալին, ամենայն ժողովուրդքն և իշխեցեալքն ընդ նոսին սխալին և անկարգանան: Ջի երկիւղ և խրատ՝ նոքա են. յորժամ ի նոցանէ ոչ խրատին, զամենայն չարիս առանց ամօթոյ գործեն: Նմանապէս և գլուխն յորժամ ցաւի, ամենայն մարմինքն ընդ նմա ցաւին: Նոյնպէս և առաջնորդն թէ ցաւոտ և հիւանդ է մեղօք, ամենայն հետևալքն նոյնպէս ցաւոտ լինին»<sup>3</sup>:

Իշխանական դիրքը չչարաշահելու, չգոռոզանալու ու չմեծամտանալու, անիրավ արարքներ չգործելու համար նախ իշխանը պետք է իմանա «զչափ անձին զիրն և զայնոցիկ որոց իշխանն է»: Չափն իմանալ, նշանակում է իմանալ ինչպէս սեփական կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները, իր՝ որպէս անձնավորության, առավելություններն ու թերությունները, այնպէս էլ իր և մյուս մարդկանց միջև գոյություն ունեցող ընդհանրություններն ու տարբերությունները: Երկրորդ, իշխանը պետք է իմանա, որ ինքը՝ մահկանացու է, իսկ իր իշխանությունը՝ ժամանակավոր, և ամենակարևորը՝ «ինքն ընդ իշխանութեամբ Աստուծոյ է», որ այս կյանքը նման է անիվի. այսօր գտնվում ես վերևում, վաղը կարող ես հայտնվել ներքևում: Երրորդ, առաջնորդն իր կրթվածությամբ ու դաստիարակությամբ պետք է գերազանցի սովորական մարդկանց, որովհետև «հոգ աշխարհիս. և պատրանք մեծութեան առաւել տիրէ ի վերայ նորա, վասն որոյ պարտ է

<sup>1</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Չմեռան հատոր, էջ 183:

<sup>2</sup> **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 164: Տե՛ս նաև **Վահրամ Բարունի**, Ի մեծի յաւուր յայտնութեան Քրիստոսի..., «Արարատ», 1869, թիվ Գ, էջ 52, **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Չմեռան հատոր, էջ 183:

<sup>3</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 423:

նորա առաւել քարոզել»<sup>1</sup>: Այս իմացությունները պետք է զսպեն իշխանին, աստվածային ու մարդկային օրենքներին համապատասխան կարգավորեն նրա վարքը, փոխեն նրա վերաբերմունքը ծառայակիցների ու հասարակ ժողովրդի նկատմամբ: Կառավարողներին այսպիսի պահանջներ ներկայացնելով՝ հայ մտածողները նպատակ ունեին առավելագույնս մարդկայնացնել կառավարման գործընթացը, իշխողներին համոզել հեռու մնալ մեծամտությունից, իշխանական դիրքի չարաշահումից, ժողովրդից սոցիալական պատնէշներով սահմանազատվելու, իրենց ավելի բարձր դասելու և առհասարակ կառավարողներին բնորոշ այլևայլ բացասական ախտերից:

**Օրինապահությունը և օրենքներով կառավարումը սոցիալական համերաշխության կայացման գլխավոր գործիքն է:** Իշխանության իրագործման բնույթը կախված է իշխանավորի հետապնդած նպատակից. եթե թագավորը մտածում է ընդհանուրի բարիքի կամ բոլորի բարօրության մասին, իրեն պատասխանատու է համարում երկրի վիճակի համար, ապա հանդես է գալիս որպէս ազգային ու սոցիալական համերաշխության երաշխավոր. «Եւ սովորութիւն է աշխարհի՝ որ երաշխաւորն պարտական է վճարել զպարտսն. կամ ի հնազանդութիւն պահել զերաշխաւորեալն. նոյնպէս քահանայն և առաջնորդն որ երաշխաւոր է ժողովրդեանն՝ կամ պարտ է որ զժողովուրդն ի հնազանդութիւն Աստուծոյ պահէ՝ և կամ ինքն փոխանակ նոցա զպարտսն վճարէ...»<sup>2</sup>: Մարդկանց տրվում է իշխանություն ոչ թե իրենց անհատական պահանջումների բավարարման ու անձնական բարեկեցության ապահովման, այլ այդ իշխանությունը ծառայեցնելու ընդհանուրի բարօրությանը: Այսինքն՝ իշխանությունը պարտավորություն է և ստեղծված է ոչ թե իշխանի, թագավորի, այլ բոլորի համար, բայց իշխանության տերը պատասխանատու է իշխանության իրագործման ու կառավարման ընթացքի ու հետևանքների համար: Կառավարման գործընթացում ընդհանուրի բարիքը նպատակ դարձնել նշանակում է մտածել երկիրը շենացնելու, բնակիչների նյութական ու հոգևոր պահանջումները բավարարելու և օրենքներով գործառող համերաշխ ու արդար հասարակություն ստեղծելու մասին: Հայ մտածողները շեշտում են պետության (քաղաքի) մեջ իրավունքի ու օրենքի գերակայության մասին դրույթը: Օրենքը, ըստ Երզնկացու, պետության (քաղաքի) հոգին է. ինչպէս մարմինը մեռյալ է առանց հոգու, այնպէս էլ «բնակիչք քաղաքի տկարք եւ աղքատք՝ մեռեալ են առանց իրաւանց արիւնացն: Քանզի բժիշկք աւզնեն հիւանդաց, իսկ իշխանք արիւնաւքն՝ զրկելոց»<sup>3</sup>: Ինչպէս անգրագետ, դեղաբույսերի բուժիչ հատկություններին անտեղյակ բժիշկը բուժելու փոխարեն վնասում է հիվանդներին, գրում է Երզնկացին, այնպէս էլ «իշխանք որք ոչ գիտեն զիրաւունս արիւնացն և կամ ո՛չ պահեն՝ վնա-

<sup>1</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Սաղմոսի քաղուածոյ, ՄՄ, ձեռ. թիվ 1019, էջ 38բ:

<sup>2</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր, էջ 185:

<sup>3</sup> **Յովհաննէս Երզնկացի**, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 159:

սեն զարդարս եւ զանմեղս յանիրաւաց»<sup>1</sup>: Մատթեոս Ջուղայեցու կարծիքով օրենքը կարգավորում է մարդկանց գործերը և սոցիալական հարաբերությունները, ապահովում երկրի ներքին խաղաղությունը, իսկ, ընդհակառակը, անօրենությունը պատճառ է դառնում անհնազանդության ու ապստամբության. «որոնք ունին սահման օրինացն. հնազանդեն օրինադրին և որք չունին ապստամբեն ի նմանե»<sup>2</sup>:

Օրինապահությունը երկրի կայունության ու բարգավաճման հիմնապունն է, հետևաբար օրենքներին պետք է ենթարկվեն առանց բացառության բոլորը՝ թե՛ իշխողները և թե՛ հպատակները, թե՛ մեծահարուստները և թե՛ աղքատները: Օրենքներով կառավարումը ենթադրում է իրավահավասարություն և արդարադատություն, կամայական որոշումների ու գործողությունների սահմանափակում և բացառում: Իսկ արդարադատությունն ապահովելու համար թագավորը պետք է նշանակի անաչառ, անկաշառ ու օրինապաշտ դատավորների, որովհետև անարդարության ցանկացած դրսևորում, առավել ևս անարդար դատաստանը խոչընդոտում են սոցիալական համերաշխության հաստատումը, դառնում չարիք բոլորի համար: Հայ մտածողները թագավորին ու իշխաններին խորհուրդ են տալիս խիստ լինել օրինազանցների, հատկապես մեծահարուստների հանդեպ: Երզնկացին հորդորում է ինչպես իշխաններին, այնպես էլ դատավորներին հատկապես չկաշառովել մեծահարուստներից ու նրանց երես չտալ, որովհետև համոզված է, որ ծուռ, անարդար դատաստանը խեղճացնում է արդարությանը հավատացող սովորական բնակիչներին և էլ ավելի լկտիացնում մեծահարուստներին. «Անիրաւ և ծուռ դատաստանն սարդի ոստանի նման է, որ զճանճն և զմժեղն կարէ բռնել, պիծակ և մեղուն պատռեն և ելնեն: Նոյնպէս և անիրաւ արէնքն զաղքատն և զանկարն հանեցնեն, իսկ մեծամեծքն և հարուստն պատռեն և ի դուրս ելանեն և ոչ հնազանդին»<sup>3</sup>: Հայ մտածողները շեշտում են իրավունքի, օրինականության և բարոյականության միասնությունն ու փոխկապակցվածությունը՝ համոզված լինելով, որ օրինապահությունը, հավատքը երկրի անվտանգության, կայունության ու շենության հիմքն են:

Անարդար ու անօրեն կառավարումը կարող է պատճառ դառնալ ոչ միայն սոցիալական համերաշխության փլուզման, այլև ազգային պետականության կործանման: Հայ մտածողները (Երզնկացի, Տաթևացի) հայոց պետականության կործանումը բացատրում են այն բանով, որ հայ առաջնորդները իրենց կառավարման ընթացքում չեն հետևել աստվածային ու քաղաքական օրենքներին, չեն մտածել ընդհանուրի բարիքի մասին, կառավարել են անարդարությամբ, որի պատճառով Աստված գրկել է հայերին իշխանությունից: Երզնկացու կարծիքով, հայոց իշխանազրկության պատճառ-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Մատթեոս Ջուղայեցի, Քարոզգիրք, ՄՄ, ձեռ. թիվ 6607, էջ 331բ:

<sup>3</sup> Յովհաննէս Երզնկացի, Մատենագրութիւն, հ. Ա, Ճառեր եւ քարոզներ, էջ 217:

ներն են՝ ա) հայ թագավորներն ու իշխանները չեն պահպանել աստվածային օրենքները, բ) չեն լսել իմաստուն առաջնորդներին, գ) երկիրը կառավարել են անիրավությանը ու անարդարությանը. «Այսպես և Հայոց ետ մեծ իշխանութիւն և զարաւոր թագաւորութիւն և, յորժամ ոչ կացին յարէնս հրամանացն Աստուծոյ և ոչ լսեցին սուրբ և իմաստուն առաջնորդացն և եղեն անիրաւք և նեղիչք երկրի, էհան Աստուած յիշխանութենէն և գրկեաց ի բարի առաջնորդացն, և մատնեցաք մեք աւար ազգաց սպանողաց, գերողաց և դառն գրկողաց»<sup>1</sup>: Համանման տեսակետ է պաշտպանում Տաթևացին. «Ձի սովորութիւն է Աստուծոյ յորժամ տայ իշխանութիւն ի վերայ ազգաց, եթէ զարդարութիւնէ բուն հարկանէն. և իրավամբք վարեն զաշխարհս, բարձրանայ իշխանութիւնն. և օրըստօրէ առաւելանի. և երկիրն ի շինութիւն և ի խաղաղութիւն աճի: Իսկ զանիրաւութիւնէ բուն հարկանէն, նուազի իշխանութիւն նոցա. և երկիրն խռովի և աւերի: Եւ զբանիս ճշմարտութիւնն՝ տեսցես յիսմայելացոց ազգս և ի սեռս մեր: Որ աճեաց և մեծացաւ իշխանութիւն նոցա. և մերս նուազեցաւ և կորեալ»<sup>2</sup>: Այսպիսով, երկրի կառավարումն անիրավությանը ու անարդարությանը հանգեցնում է ոչ միայն սոցիալական համերաշխության չգոյությանը, համախմբող սոցիալական հարաբերությունների, սոցիալական կառույցների փլուզմանը, միջանձնային փոխհարաբերությունների խեղաթյուրմանը, այլև ազգային պետականության կործանմանն ու ազգային իշխանության վերացմանը:

**Сейран Закарян – Проблема социальной солидарности  
в армянской философии XIII-XV веках**

В статье показывается, что средневековые армянские мыслители, обсуждая вопрос о социальной солидарности, вначале представляют свое понимание вселенской гармонии, человеческой природы и социальной жизни, потом только обращаются к предпосылкам и условиям существования социальной солидарности и механизмам ее реализации. Ими являются: а) во Вселенной существуют Божьи законы, в обществе – изначально утвержденные свыше порядки и отношения, следовать которым – священная обязанность людей; б) являясь результатом творчества единого Бога, все люди равны с рождения, похожи по составу и природе, однако в то же время они разные (в плане физической и умственной способностей), а в общественной жизни люди бывают разные по социальному статусу, а также по социальной роли: государи и слуги, правители и подданные, которые, будучи взаимосвязанными, призваны искать пути взаимовыгодного сотрудничества, в) подчинение властям (власть дана от Бога, поэтому политическое и социальное послушание обязательно), правление по божественному, природному и человеческому законам, исполнение мудрого правления, правление согласно этическим нормам, законам и по справедливости.

<sup>1</sup> **Հովհաննէս Երզնկացի**, Թուղթ առ իշխանս Եկեղեաց զաւարի, էջ 205-206:

<sup>2</sup> **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, էջ 424:

**S.A. Zakaryan – *The Issue of Social Solidarity in the XIII-XV  
Century Armenian Philosophy***

The article indicates that while discussing the issue of social solidarity, medieval Armenian thinkers firstly introduce their understanding of creation, cosmic harmony, human nature and social life and then only refer to assumptions and conditions for the existence of social solidarity and mechanisms of its implementation. They are as follows: a) God's laws exist in the created universe and God's established order and relations in the society the maintenance of which is a sacred duty for human beings; b) being the products of the creation of the same God, all human beings are born equal, are similar in composition and nature; at the same time, there are some physical and mental differences among human beings determined at birth, there are inequities in society and different statuses due to work division as well as different social roles such as lords and servants, rulers and subjects who being mutually interrelated, are supposed to seek establishing mutually beneficial ways of cooperation; c) obedience to authority ( authority comes from God; therefore, political and social obedience is obligatory), governance according to natural, divine and human laws, wise exercise of natural, divine and human laws, governance according to moral norms and laws and justice.

## ՏԵՔՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

*Բանալի բառեր – տեքստ, համատեքստ, խոսք, բան, նախադասություն, շարահյուսական ամբողջություն, ասելիք, լեզվամտածողական համակարգ*

Ճիշտ է նկատում Յուրի Լոտմանը. «Տեքստ հասկացությունը գործածվում է տարբեր նշանակություններով: Այն նշանակություններով, որոնք տարբեր հեղինակներ ներդնում են **տեքստ** բառի մեջ, միանգամայն հնարավոր է մի ողջ հավաքածու կազմել: Անվիճելի է, որ հումանիտար գիտությունների բնագավառում ներկայումս ամենագործածական տերմիններից մեկը **տեքստ**-ն է: Գիտության զարգացումը զանազան պահերի ջրի երես է հանում բառեր, որոնք առանց անհրաժեշտ միանշանակության հեղեղում են գիտական տեքստերը: Դրանք ոչ թե տերմինաբանորեն ճշգրիտ նշում են գիտական հասկացությունը, այլ ազդարարում են հիմնախնդրի արդիականության մասին՝ մատնացույց անելով մի այնպիսի բնագավառ, ուր ծնվում են գիտական նոր գաղափարներ»<sup>1</sup>:

Իրոք, այն, ինչ անվանվում է տեքստ, դեռևս չի սահմանվում: Ուսումնասիրության առարկան կամ նյութն այնքան տարողունակ ու ծավալուն է, որ խոսքն այդպես էլ չի հասնում սահմանման դասական ընկալմանը և բավարարվում է (իհարկե, հարաբերականորեն) սոսկ տեքստի բնութագրականների արձանագրմամբ: Պետք է շեշտել, որ տեքստի առանձնահատկությունների բացահայտումը նույնպես դժվարին ու բարդ խնդիր է: Արտաքին բնութագրականներից մինչև տեքստի ներքին բովանդակային պարունակների ուսումնասիրությունն այսօր գրավում է լեզվաբան (և ոչ միայն) գիտնականների ուշադրությունը:

**Տեքստը** կամ, ինչպես գիտնականների մի մասն է ասում, **կապակցված խոսքը** հարկադրում է ավելի բազմակողմանի և ընդգրկուն վերաբերմունք դրսևորել լեզվամտածողության «արտադրանքի» նկատմամբ: Այսպես թե այնպես լեզվաբանական գիտության առաջընթացը պահանջում է սահմանել այն, ինչն ընդգրկում է խոսքի ողջ հյուսվածքն իր հարաբերականորեն մեծ ու փոքր դադարներով, ընդ որում չէինք ցանկանա, որ որպես **խոսքի հյուսվածք** հասկացվեր նախադասությունների և դրանց միջև եղած դադարների ամբողջությունը, որովհետև այնքան էլ հեշտ չէ պնդել, թե խոսք-տեքստը

<sup>1</sup> Լոտման Յու., Միֆ, անուն, մշակույթ, Ստեփանակերտ, 2012, էջ 228:

կազմված է նախադասություններից: Նախադասությունն ինքն այնքան բազմազան է, որ մինչևիսկ նրա սահմանումը մշտապես կարիք ունի լրացումների ու անընդհատ կարող է բանավեճեր հարուցել:

Սկսած 20-րդ դարի կեսերից՝ արդեն մի քանի տասնամյակ տեքստը՝ որպես լեզվաբանական գիտելիքի նոր մակարդակ, գտնվում է շատ լեզվաբանների անմիջական ուշադրության կենտրոնում, թեև տեքստին առնչվող անդրանդարձներ եղել են շատ ավելի վաղուց (օրինակ՝ Ա. Խ. Վոստոկով, Ա. Ա. Պոտեբնյա):

20-րդ դարի կեսերին լեզվաբանական գիտությունը սկսում է փորձեր կատարել տեքստը լեզվաբանական-քերականագիտական հասկացություն դարձնելու ուղղությամբ: Տեքստը լեզվաբանական հասկացություն դարձնելուն նպաստում են Ա. Ի. Բելիչի, այնուհետև Ն. Ս. Պոսպելովի աշխատությունները: Ն. Ս. Պոսպելովը գրում է. «Կապակցված խոսքի շարահյուսական կառույցն ուսումնասիրելիս անմիջական ելակետ պետք է համարել ոչ թե նախադասությունը, որը կապակցված խոսքում չունի բավարար ինքնուրույնություն, այլ բարդ շարահյուսական ամբողջությունը՝ որպես շարահյուսական միավոր, որը համեմատաբար ավելի անկախ է կապակցված խոսքի ենթատեքստից»<sup>1</sup>: Փաստորեն, խոսքի վերաբերյալ Ն. Ս. Պոսպելովի արտահայտած հիմնական գաղափարներից մեկն այն է, որ շարահյուսական միավորը ոչ թե նախադասությունն է, այլ **շարահյուսական ինքնուրույնություն ու ավարտվածություն պահպանող բարդ ամբողջությունը**: Ի՞նչ է սա նշանակում: Այն, որ գոյություն ունի նախադասությունն իր տիրույթում պարունակող ավելի ընդգրկուն մի ամբողջություն, որն ունի առավել մեծ ինքնուրույնություն: Իհարկե, այստեղ մշուշոտ է մնում ամբողջություն ասվածը, բայց կարծես թե այն ենթադրում է ամբողջականությունը կամ հարաբերական ամբողջականությունը: Սակայն եթե կապակցված խոսքից հարաբերական ինքնուրույնություն ու ամբողջականություն ունեցող ինչ-որ հատված առանձնացնենք (ընդ որում՝ այդ հատվածը կարող է լինել նաև մեկ նախադասություն, քանի որ սա նույնպես կարող է բարդ ամբողջություն լինել), ապա հենց այդ նույն հատվածի մեջ դարձյալ հնարավոր կլինի գատել ինքնուրույնություն (հարաբերական) ու ավարտվածություն (հարաբերական) պահպանող մեկ այլ բարդ ամբողջություն:

Ն. Ս. Պոսպելովի այս տեսակետում հակասություն կա, քանի որ տեքստի մեջ տեքստ է ենթադրում, ինչը Յու. Լոտմանի՝ տեքստային համակարգին վերաբերող տրամաբանության տիրույթում է: Բայց եթե Պոսպելովը առանձնացնում է ներկայացվող տեքստի առանձին, «հորիզոնականորեն» կողք կողքի «ապրող» հատվածները, ապա, ինչպես կտեսնենք քիչ հետո, Յու. Լոտ-

---

<sup>1</sup> Ст'я Поспелов Н. С., Проблема сложного синтаксического целого в современном русском языке, Ученые записки МГУ, вып. 137. Труды кафедры русского языка, кн. 2, М., 1948, с. 31:



մանի համակարգում տեքստի մեջ տեքստ ըմբռնումը նաև «ուղղահայացի» սկզբունքն ունի, ինչը հիշեցնում է ռուսական «մատրոյշկան»: Ճիշտ է, կապակցված խոսքի համատեքստից դուրս շարահյուսական բարդ ամբողջությունն իրոք կարող է պահպանել շարահյուսական ինքնուրույնություն ու ավարտվածություն, բայց և այդ իրավիճակում, մեր կարծիքով, խարխլվում ու կորչում է նրա ընկալման ամբողջականությունը, զգացվում է կամ կարող է նույնիսկ չզգացվել, որ դա ինչ-որ ավելի ծավալուն տեքստի մաս է: Կարծում ենք՝ այդ զգացողության բացակայությունն անգամ դեռևս բավարար չէ տեքստի առանձնացված հատվածի ամբողջականության ու ավարտվածության մասին խոսելու համար: Պատճառը թերևս այն է, որ տվյալ լեզվամտածողության սահմաններում տվյալ լեզվով ստեղծված ցանկացած խոսք-տեքստ տվյալ համատեքստի (այսինքն՝ տվյալ լեզվով ստեղծված արժեքավոր տեքստերի ամբողջության) մի հատվածն է՝ անկախ այն բանից՝ արդյոք, ասենք, սյուժետային, թեմատիկ, բովանդակային կամ մեկ այլ առումով դրանց ընդհանրությունը, կապը արտահայտված էն, թե՞ ոչ: Եթե հայտնի չէ ողջ տեքստը, ապա անտեղյակ անձը, դրանից կարդալով կամ լսելով շարահյուսական բարդ ամբողջություն կազմող ինչ-ինչ հատվածներ, դժվար թե կարողանա կռահել այն: Մա վկայում է, որ շարահյուսական ինքնուրույնություն ու ավարտվածություն պահպանող բարդ ամբողջությունը չի կարող հստակորեն շարահյուսական միավոր համարվել, քանի որ հնարավոր չէ որոշարկել նրա իսկ ինքնուրույնության և ավարտվածության աստիճանը: Որոշակի առումով այդ ինքնուրույնությունն ու ավարտվածությունը կան, սակայն չկան շարահյուսական չափանիշը, սահմանային հստակությունը:

Մեր համոզմամբ՝ ցանկացած տեքստային հատվածի ստեղծիչն ու նման հատվածների միավորիչը հենց այն ասելիք-բովանդակությունն է, որը դեռևս ընդհանուր մտադրության ելակետից փորձելու է հնարավորինս հանգամանալից ներկայացնել խոսողը կամ գրողը: Նշենք, որ բավականին մեծ թափ ստացած կառուցվածքային լեզվաբանությունը նշանակալից քայլեր է կատարել տեքստի կառուցվածքի արտաքին և ներքին կողմերը ճանաչելու ուղղությամբ, սակայն, մեր կարծիքով, այդ քայլերը առավել արժևորվել կարող են միայն տեքստի բովանդակային կողմի հետ զուգադրելու միջոցով: Այսպես ասած՝ **շարահյուսական ինքնուրույնություն ու ավարտվածություն պահպանող** տեքստի ամբողջականությունն անհնար է պատկերացնել առանց այն ասելիք-բովանդակության, որը տեքստ-խոսքի հեղինակի նպատակադրումն է: Մա, օրինակ, գեղարվեստական տեքստերի դեպքում պահանջում է լեզվաբանական և գրականագիտական-մշակութաբանական գիտելիքների համատեղում:

Կոնկրետ տեքստի ինչպիսին լինելը կախված է այն հանգամանքից, թե լեզվական ինչ կարողությունների տեր է դրա հեղինակը, և տեքստը ներկայացնելուց հետո դրա համար ինչ աստիճանի պատասխանատվություն է

զգում նա՝ հաշվի առնելով հավանական լսարանը: Տեքստից, ճիշտ է, կարելի է զգալ, թե շարահյուսական այս կամ այն հատվածն արդյոք նրա մասն է, սակայն, բնականաբար, անհնար է որևէ տեքստային հատվածի օգնությամբ տեքստը ճանաչել ամբողջովին: Դրան օգնել կարող է բովանդակությունը:

Նույն կերպ և տվյալ լեզվով ստեղծված համատեքստը իր իսկ պարունակած լեզվամտածողական-արժեհամակարգային իրողությունների շնորհիվ կարող է օգնել հասկանալու «իր տարածքում ստեղծվող» որևէ կոնկրետ տեքստ, քանի որ, մեր համոզմամբ, համատեքստը (տվյալ լեզվով ստեղծված տեքստերի ամբողջությունը) միշտ վերահսկում է կոնկրետ տեքստը: Կոնկրետ տեքստը կարող է որոշ, բայց ոչ ամբողջական պատկերացում տալ համատեքստի մասին: Այլ բան է, որ տեքստային հատվածը, իհարկե, կարող է որոշ, նույնիսկ էական այնպիսի հատկանիշներ ունենալ, որոնք կբնութագրեն համատեքստի կարևոր հատկանիշներից մի քանիսը:

Կոնկրետ տեքստի ամբողջությունից առանձնացված հատվածները նույնպես, որքան էլ դրանք ունենան շարահյուսական հարաբերական ինքնուրույնություն և ավարտվածություն, միննույն է, սովորաբար այս կամ այն չափով հեռանում են տվյալ տեքստի նպատակից: Այս տեսանկյունից թեն ընդունելի է Ի. Ռ. Գալպերինի այն միտքը, թե տեքստն ավարտուն հաղորդում է, որին հատուկ է բովանդակությունը, և թե «տեքստը խոսքաստեղծման պրոցեսի ստեղծագործություն է, որն օժտված է ավարտվածությամբ»<sup>1</sup>, սակայն, մեր համոզմամբ, որևէ տեքստ չի կարող ասելիքն ընդգրկել ամբողջությամբ, այն ասելիքը, որը դեռևս ընդհանուր մտադրության ելակետում է. ասելիքը որպես մտադրություն միշտ ավելի լայն է, քան կոնկրետ, ինչպես որ այդ ասելիքն արդեն արտահայտած տեքստն է ավելի կոնկրետ, քան ընդգրկուն՝ մտադրության առումով: Ասելիքի մտադրության մեջ կարող են առաջանալ այլ կոնկրետ տեքստեր, և այն պատճառով, որ որևէ կոնկրետ տեքստ ասելիքն ամբողջությամբ չի կարող սպառել, ստիպված ենք ընդունելու, որ յուրաքանչյուր տեքստ հարաբերականորեն է ավարտուն: Մրա հետևանքն այն է, որ խոսքը (տեքստը) չի կարող տեղ հասնել-ընկալվել ամբողջությամբ:

Ասվածից բխում է, որ յուրաքանչյուր տեքստ ըստ էության մեկ այլ տեքստի պատահիկն է, ցանկացած տեքստ մեկ այլ տեքստի պատճառն է, նաև մեկ ուրիշի հետևանքը: Մեր այս գաղափարին չի հակասում, ընդհակառակը, օգնում է հիմնախնդրի նկատմամբ հոգեբանական մոտեցումը, որը պահանջում է տեքստի իմաստը մեկնաբանել որպես անհատի գիտակցության մեջ հոգեպես արտացոլված իրականության հատված (Լ. Ա. Չերնյախովսկայա): Սկզբունքը, ըստ որի տեքստը լայն իմաստով խոսքային ամ-

---

<sup>1</sup> Ст' у Галперин И. Р., Текст как объект лингвистического исследования, М., 2006, с. 18: <http://prepod.nspu.ru/mod/resource/view.php?id=24892>

բողջական ստեղծագործություն՝ մակրոտեքստ է, նեղ իմաստով՝ միկրոտեքստ (Օ. Ի. Մոսկալսկայա), խթանում է ասելիքի ընդգրկման և այս առումով տեքստ ու տեքստային հատված ընկալումների ճշգրտման վերաբերյալ մեր մտածումները: «Տեքստի լեզվաբանության մեջ պետք է տարբերել երկու հիմնական օբյեկտներ՝ հաճախ նույնական չտարբերակված «տեքստ» անվանմամբ. 1) խոսքային ամբողջական ստեղծագործությունը տեքստ է, այսինքն՝ տեքստ՝ բառի լայն իմաստով, կամ մակրոտեքստ... և 2) բարդ շարահյուսական ամբողջություն՝ տեքստ՝ բառի նեղ առումով, կամ միկրոտեքստ»<sup>1</sup>:

Օրինակ՝ նախավերածննդի գրական տեքստի նպատակը եղել են աստվածներն ու Աստված: Վերածննդի և դրան հաջորդող ժամանակների գրական տեքստի նպատակը եղել է մարդը, և **գրականության անվերջանալիությունը բխում է ասելիքի (մարդ) վերաբերյալ ամբողջականության ձգտման պահանջից**: Իսկ եթե նկատենք նաև այն հանգամանքը, որ այդ ասելիքը՝ մարդը, անընդհատ ենթարկվում է փոփոխության, ուրեմն պետք է ընդունել, որ նրա մասին եղած տեքստը (կամ տեքստերը ամբողջությամբ) դատապարտված է անավարտության, և հենց սա է գրական-գեղարվեստական տեքստի հարատևության խորհրդավոր պատճառը:

Մեր համոզմամբ՝ **այն, որ խոսքը գործնականում չի կարող ամբողջությամբ ընդգրկել ասելիքը, դառնում է պատճառ, խթան ու պահանջ, որ կոնկրետ տեքստի մեջ ստեղծվի տեքստային այլ, նոր հատված, իսկ համատեքստի մեջ՝ այլ, նոր կոնկրետ տեքստ**: Տեքստերը գոյություն ունեն այն պատճառով, որ անհնար է սպառել ասելիքը, որը քաղաքակրթական գոյության նախապայմանն է: **Համատեքստը գոյանում է ընդհանրապես ասելու (պետք է հասկանալ՝ քաղաքակրթվելու), ասելիքը (մասնավոր) սպառելու մշտապես մտադրությունից և ասելիքը սպառած չլինելու հետևանքով մշտապես առաջացող անբավարարվածությունից**: Իսկ այն հանգամանքը, որ համատեքստը մշտապես հսկում և կառավարում է կոնկրետ տեքստը, պատճառ է դառնում, որ, նախ, տվյալ կոնկրետ տեքստը դարձյալ չկարողանա սպառել մտադրված ասելիքը, ապա նաև, բնականաբար, համատեքստը մնա «անկատար»:

Տեքստը համատեքստի միջոցով կապ ունի մարդկային ու քաղաքակրթական հիշողության հետ, ինչի շնորհիվ նրա լեզվական ատաղձը դառնում է բովանդակության այն խարիսխը, որը կարող է կրել, պահել ու պահպանել անհատի, ժողովրդի ու հանրության լինելության խորհուրդները:

Տեքստի տեսական չափորոշիչների պարզաբանումն անվերջանալի կարող է դառնալ, քանի որ անսահման են տեքստի, խոսքի խորհրդավորու-

---

<sup>1</sup> **Москальская О. И.**, Грамматика текста, пособие по грамматике для ин-тов и фак. иностр. яз., Учеб. пособие, М., 1981, с. 13.

թյունները: Առավել ընդունելի է այն, որ տեքստն է կառավարում նախադասությունը (Ն. Ի. Ժինկին), որ տեքստից դուրս նախադասություն գոյություն չունի (Վ. Ա. Ջվյագինցև), և խոսքը միայն տեքստերով է հյուսվում (Պ. Հարթման): Մրանք գաղափարներ են, որ տեղավորվում են լեզվաբանական գիտելիքի ոլորտում: Սակայն երբ հավելում ենք, որ **տեքստը նախադասությունը կառավարել կարող է համատեքստի հսկողությամբ ու միջոցով**, հիմնախնդիրը տեղափոխվում է լեզվաբանության և այլ գիտաճյուղերի (օրինակ՝ գրականագիտության, մշակութաբանության, փիլիսոփայության, հոգեբանության) պարտադիր համադրման ոլորտ:

Ուրախությամբ կարելի է նշել, որ տեքստի գիտական ընկալման բնագավառում մեզանում ևս քայլեր կատարվել և կատարվում են (Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Է. Աթայան, Բ. Ղազարյան, Զ. Ավետիսյան, Վ. Եփրեմյան, Ն. Համբարձումյան, Դ. Համբարձումյան և այլք):

Բ. Ղազարյանը, իր «Խոսքի մասերի խոսքային գործառությունները» ուսումնասիրության ակնարկ-ներածականում գուցադրելով լեզվաբանների տեսակետները, արտահայտում է առաջին հայացքից արտառոց թվացող կարծիք, թե «տեքստում այս կամ այն նախադասությունն իրեն անմիջականորեն նախորդող կամ հաջորդող նախադասության հետ անմիջական իմաստային կապ հնարավոր է, որ չհաստատի»<sup>1</sup>: Այստեղ, ճիշտ է, պահանջ է առաջանում՝ ճշտելու, թե ինչ ասել է անմիջական իմաստային կապ: Բհարկե, կարելի է ենթադրել, թե Բ. Ղազարյանը տեքստում անմիջական հարևանությամբ գտնվող որ նախադասությունների միջև է հնարավոր համարում «անմիջական իմաստային կապի» բացակայությունը (գուցե, օրինակ, նախորդող պարբերության վերջին և հաջորդող պարբերության առաջին նախադասությունների միջև), բայց լեզվաբանությունը տեքստն ուսումնասիրում է որպես միասնական, ամբողջական կառույց, որի գոյության առաջին պայմաններից մեկը իմաստային ամբողջականությունն է: Տեքստի իմաստային ամբողջականությունը ապահովվում է նախ խոսքի առարկայի՝ թեմայի միջոցով, որը Օ. Ի. Մոսկալսկայան անվանում է «տեքստի իմաստային միջուկ», իսկ տեքստային առանձին մասերի կապվածությունը բխում է տեքստի նպատակայնությունից, և տեքստի առանձին մասերի միջև կապի բացակայությունն անհնար է դառնում, քանի որ մշտապես առկա է թեմատիկ-տրամաբանական նպատակադրումը<sup>2</sup>: Տեքստի առանձին մասերի միջև կապվածությունը տեքստային ամբողջականության երաշխիքն է, սակայն նպատակայնությունը չի կարելի հանգեցնել կապվածության: Բհարկե, տեքստի մեջ առաջանում են միկրոթեմաներ (զլխավոր թեմայի պահանջից

<sup>1</sup> Ղազարյան Բ., Խոսքի մասերի խոսքային գործառությունները, Երևան, 1998, էջ 6:

<sup>2</sup> Стé u **Осипова Э. Н.**, Лингвистика текста и текстовый аспект изучения синтаксиса в школе, Учебно-методические рекомендации, Архангельск, 2009, с. 3-4:

բխող), որոնք, իրոք, կարող են թեմատիկ առումով առանձնանալ, բայց, կարծում ենք, ճիշտ չէ նույնացնել իմաստային և թեմատիկ ընկալումները:

Կասկածում ենք նաև Բ. Ղազարյանի այն տեսակետի ճշմարտացիությանը, թե «այս կամ այն լեզու կրողը... նախ իր մտքում, գիտակցության մեջ ստեղծում է մի որոշակի բովանդակության տեքստ կամ տեքստի հենք և այնուհետև սկսում է աստիճանաբար իրացնել այն»<sup>1</sup>: Հիշատակվող պատճառահետևանքայնությունը կամ հետևառաջությունը հակասում է լեզվի (որպես խոսք) և մտածողության միասնականության, համաժամանակյա և միատեղ հանդես գալու սկզբունքներին և մեր պաշտպանած այն տեսակետին, որ լեզուն (իր խոսք իրողությամբ) և մտածողությունը նույն երևույթն են: Եթե Բ. Ղազարյանը «տեքստի հենք» ասելով նկատի ունի մոտավորապես այն, ինչ մենք կոչում ենք **ասելիքի մտադրություն** կամ պարզապես **ասելիք**, ապա տեսակետն ավելի ճիշտ կհնչի:

Ընդունելի է հայ լեզվաբանի տեսակետի երկրորդ հատվածը, թե «տեքստը կազմողի և ստացողի միջև ստեղծվում է փոխադարձ ներգործություն, և ստացողը հիմնականում վերլուծական պրոցեսով կարող է թափանցել տեքստի բովանդակության մեջ միայն այն դեպքում, երբ այն դիտում է ամբողջության մեջ»<sup>2</sup>: Սա արդեն լեզաբանության մեջ եղած այն տեսակետի թեկուզև ոչ անմիջական հաստատումն է, ըստ որի տեքստում նախադասությունները անխզելիորեն կապված են և հյուսված միասնական ցանցով:

Յու. Լոտմանը տեքստի ընկալման և ըմբռնման մեջ համադրում է լեզվաբանական և գրականագիտական-մշակութաբանական սկզբունքները: Նա տեքստը նախ շաղկապում է **արտահայտվածությանը**, քանի որ այն միշտ պատկանում է խոսքի ոլորտին: Տեքստի մյուս կարևոր խարիսխը Յու. Լոտմանը համարում է **սահմանազատվածությունը**. «Իրանով տեքստը մի կողմից հակադրվում է բոլոր նյութականացած նշաններին, որ իր կազմում չեն («միացած» կամ «անջատված» լինելու սկզբունքով), մյուս կողմից հակադրվում է բոլոր այն կառույցներին, որոնք չունեն առանձնացված սահմանանշան»<sup>3</sup>: Կարծում ենք՝ Լոտմանի ընդգծած **սահմանազատվածության** պահանջին է զուգահեռվում նաև այն տեսակետը, թե **տեքստը տիրապետում է տեքստային միակ նշանակությանը** (Ա. Մ. Պյատիգորսկի) և այս առումով կարող է դիտարկվել որպես չմասնատված ազդանշան: Ինչ «ձևաչափով» էլ հանդես գա տեքստը՝ վեպ, փաստաթուղթ, աղոթք և այլն, կատարում է որոշակի մշակութային գործառույթ և այս կամ այն ամբողջական իմաստի հաղորդում: Տեքստային նշանակության միակությանը, սակայն, խանգարում է այն լսողի կամ ընթերցողի սուբյեկտիվությունը, քանի որ, մեր կարծիքով, տեքստ կամ խոսք կարող է գոյություն ունենալ առնվազն երկուսի համար,

<sup>1</sup> **Ղազարյան Բ.**, նշվ. աշխ., էջ 7:

<sup>2</sup> **Նույն տեղում**, էջ 8:

<sup>3</sup> **Լոտման Յու.**, նշվ. աշխ., էջ 222:

երբ ապահովված է քաղաքակրթական գոյության երկու կողմերի՝ ասողի և լսողի առկայությունը:

Ինչ վերաբերում է տեքստային սահմանազատվածությանը (օրինակ՝ գլուխների, տների և այլն), պետք է ասել, որ այն իր հերթին հիմք է ստեղծում տեքստային կառույցների տիպերի դասակարգման համար, և Յու. Լոտմանը տրամաբանորեն հանգում է տեքստի ընկալման ու ըմբռնման երրորդ հիմքին՝ **կառուցվածքայնությանը**: Նա գրում է. «Տեքստը նշանների պարզունակ հերթագայությունն է: Տեքստին հատուկ է ներքին կազմակերպվածությունը, որը նրան կառուցվածքային ամբողջություն է դարձնում շարույթային մակարդակում: Այդ պատճառով էլ, որպեսզի բնական լեզվի որոշ արտահայտությունների ամբողջությունն ընդունվի որպես գեղարվեստական տեքստ, անհրաժեշտ է համոզվել, որ դրանք գեղարվեստական կազմությունների մակարդակում ստեղծում են երկրորդային տիպի կառույցներ:

Հետևաբար պետք է նշել, որ տեքստի կառուցվածքայնությունն ու սահմանազատվածությունը փոխկապակցված են»<sup>1</sup>:

Ընդունված է ասել, որ խոսքը լեզուն է՝ գործածության մեջ: Սակայն եթե հիշենք Մ. Ա. Կ. Հելլիդեյի **«Տեքստը լեզուն է՝ գործածության մեջ»**<sup>2</sup> սահմանումը, ապա ստացվում է, որ խոսքը և տեքստը նույնանում են, ինչը, կարծում ենք, ավելի ճիշտ է, քան այն ճիզերն ու ջանքերը, որոնցով ձգտում են բովանդակային տարբերություն տեսնել տեքստի և խոսքի միջև: Կարծում ենք՝ Պ. Հարթմանի բանաձևումը՝ **«Լեզուն տեսանելի է դառնում տեքստի ձևով»**<sup>3</sup>, նույնպես մղում է տեքստի և խոսքի նույնականացմանը:

Մեզանում տեքստի ընկալման խնդրին վերջին տասնամյակներում ավելի հաճախ են անդրադառնում: Այդ անդրադարձների յուրահատկությունն այն է, որ փորձ է կատարվում գրականությունը տեքստային «մարմնի» տեսանկյունից քննելու, ինչի հետևանքով հնարավորություն է ստեղծվում գրական ստեղծագործություններին նոր, թարմ մեկնաբանություններ տալու: Ընդհանուր տպավորությունն այն է, որ հայ նորօրյա բանասիրությունը նույնպես դեռևս չունի տեքստի և տեքստ հասկացության միասնական ընկալում: Այդ են վկայում հիշյալ բնագավառում վերջին տասնամյակներին լույս տեսած ուսումնասիրությունները, որոնց համար հող են նախապատրաստել և՛ այն գիտնականների (Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Է. Աթայան, Ջ. Ավետիսյան և այլք) աշխատությունները, որոնցում շոշափվում են տեքստի ընկալման լեզվաբանական հիմքերը, և՛ այն գիտնականների (օրինակ՝ Ս. Աթաբեկյան, Հ. Էդոյան) ուսումնասիրությունները, որոնցում այս կամ այն հեղինակի գեղարվեստական ձեռքբերումների հիմքերը փնտրվում են ոչ թե գաղափարախոսական, այլ կոնկրետ տեքստային իրողություններում:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>2</sup> Новое в зарубежной лингвистике, т. 8, М., 1978, с. 142.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 97:

Ուշագրավ են Ս. Աթաբեկյանի գրականագիտական դիտարկումները, որոնք նա խարսխում է տեքստային տարրական մասնիկների վրա: Ս. Աթաբեկյանի նպատակը, սակայն, ոչ թե տեքստային խորհրդավորությունների քննությունն է, այլ տեքստի տարածքային յուրաքանչյուր հատվածի նկատմամբ գրողի ու գրականագետի բարձրագույն պատասխանատվությունը, որը արգելում է շրջանցել տեքստային որևէ մանրամասն, պարտադրում է ամենայն խստությամբ կարևորել տեքստի ընդգրկած յուրաքանչյուր «մանրուք»<sup>1</sup>:

Հ. Էդոյանը գրական տեքստի ուսումնասիրության գործընթացի մեջ պոետիկան խարսխում է բանաստեղծական տեքստին, այդ տեքստը կազմավորող բառերի իմաստային բազմաշերտությունը<sup>2</sup>:

Վ. Եփրեմյանն իր ուսումնասիրությունները հիմնում է այն տեքստերի վրա, որոնք, բխելով մշակութային ենթատեքստից, հենց իրենք են դարձել կամ դառնում այդպիսի ենթատեքստ<sup>3</sup>:

Ն. Համբարձումյանն իր ուսումնասիրության մեջ տեքստն ամբողջացնում է որպես մի կառույց, որը կամուրջ է ժամանակի և արարման միջև:

**Տեքստի** և դրա **մեկնության** փոխհարաբերական տիրույթում Ն. Համբարձումյանը ներառում է ողջ լինելությունը: Իհարկե, այդ լինելությունը առաջին հերթին և՛ **քաղաքակրթական գոյությունն** է, և՛ այդ **քաղաքակրթական գոյության փիլիսոփայությունը**, քանի որ «մշակույթի գոյության օբյեկտիվացված ձևերից մեկը հանրության կողմից գիտակցված տեքստն է որպես նյութական ու գաղափարական, անհատական ու սոցիալական միասնություն»:

Տեքստի ունիվերսալությունը, նրա հիմնական դերը մշակույթի տիրույթում արթնացնում են հումանիտար մտքի նոր ուղղություն՝ **տեքստի փիլիսոփայությունը**, որը սինթեզում է իմաստակիր երկխոսությունը, տեքստը, ինտերտեքստը, իմացաբանական տեքստերը, գրավոր խոսքի տարբեր ոլորտների՝ հետդասական, հետմոդեռնիստական չափանիշներով...<sup>4</sup>: Դիպուկ է նաև ուսումնասիրության վերնագիրը՝ «Տեքստ և մեկնություն», որը ինչ-որ տեղ նաև Վ. Եփրեմյանի «Բնագիր և մեկնություն» գրքի վերնագրի այլաձևումն է, ինչը արդարացվում է առանձնահատուկ բովանդակությամբ և այն օբյեկտիվությամբ, որ ցանկացած բնագիր տեքստ է:

Որոշ հեղինակներ փորձում են տարոթոշել տեքստը և բնագիրը՝ տեքստի և բնագրի փոխհարաբերությունը հանգեցնելով ամբողջի և մասի կամ եզակիի և ընդհանուրի փոխհարաբերությանը: Առանձին բնագրերը չեն

<sup>1</sup> Տե՛ս **Աթաբեկյան Ս.**, Ակսել Բակունց, խոսքի և լրության պոեզիան, Երևան, 2000:

<sup>2</sup> Տե՛ս **Էդոյան Հ.**, Չարենցի պոետիկան, Երևան, 1986:

<sup>3</sup> Տե՛ս **Եփրեմյան Վ.**, 20-րդ դարի հայ գրականություն. մշակութաբանական ենթատեքստեր, Երևան, 2007:

<sup>4</sup> **Համբարձումյան Ն.**, Տեքստ և մեկնություն, Երևան, 2013, էջ 5:

կարող հավաքվել մի տեղում և այդպիսով տեքստ դառնալ, եթե դրանք ինքնին տեքստեր չեն: Ուրեմն՝ որքան էլ տրոհենք տեքստի և բնագրի իմաստները միայն այն հիմքով, որ դրանցից մեկը իբրև թե եզակին է, մյուսը՝ ընդհանուրը, միևնույնն է, չենք կարող տեքստը և բնագիրը վերլուծել իբրև տարաբևեռ իմաստներ:

Երբեմն փորձում են տեքստը սահմանել իբրև բանավոր հղացք, իսկ բնագիրը՝ գրավոր: Սակայն արդյո՞ք բնագիրը ստեղծելիս հեղինակը նույն հղացքը չի ապրում, կամ մի՞ թե բնագիրն ինքնին տեքստ չէ: Ինչ-ինչ պարագաներում, ասենք՝ տպագրելիս, կարող է այնպես ստացվել, որ ստեղծագործության բնագրի տեքստի և արդեն տպագրված գրքի տեքստի միջև տարբերություններ լինեն (վրիպակներ, խմբագրումներ և այլն), սակայն պարզապես թյուրիմացություն է բանավոր և գրավոր լինելու մեջ տեսնել տեքստի և բնագրի տարբերությունը. նախքան Խորենացու գրի առնելը Հայկի, Տորքի առասպելները, Արտաշեսի և Սաթենիկի պատմությունը տեքստեր էին և գրավոր դառնալուց, գրի առնվելուց հետո բնագիր դարձան:

Կարծում ենք՝ լեզվաբանության մեջ կառուցվածքաբանական մեթոդի կիրառման շնորհիվ ի հայտ եկած խնդիրները տեքստային տարբեր հատվածների փոխհարաբերությունների, փոխադարձ կապի, այդ կապի աստիճանի, տեքստային տարբեր մասերի հորիզոնական և ուղղահայաց դիրքերի ուսումնասիրությունից բխած հարցադրումները չեն կարող ամբողջական պատկերացում ստեղծել տեքստի մասին, եթե այդ ամենը չամբողջացվի բովանդակության հետ հարաբերության ուսումնասիրությամբ: Այստեղ խաչաձևվում են լեզվաբանության և գրականագիտության խնդիրները, մեկ անգամ ևս սրվում է տեքստի ուսումնասիրության լեզվաբանական (որպես կառույց) և գրականագիտական (որպես բովանդակություն) մեթոդների համատեղման պահանջը: Այս առումով արդիական է դառնում համատեքստի ընկալման և սահմանման խնդիրը, քանի որ յուրաքանչյուր նոր ստեղծվող տեքստի վրա ավելի շատ ներգործում է նախորդ տեքստերի բովանդակությունը, քան այն լեզվի կառուցվածքը, որի կրողն են դրանք:

Ուստի կոնկրետ տեքստի ընկալման համար կարևոր ենք համարում ընդհանրապես ողջ **համատեքստի** ճանաչումը, դրանում ամփոփված լեզվամտածողական-արժեհամակարգային իրողությունների բացահայտումը:

Հարմար է և պարզ, երբ առանձին տեքստերի՝ լեզվամտածողական նույն համակարգին, այսինքն՝ նույն լեզվին պատկանելը նկատի ունենալով՝ դրանց ամբողջությունը կոչում ենք տվյալ լեզվի **համատեքստ**: Խնդրին իր «Տեքստի ընկալումը», «Տեքստը տեքստի մեջ» հոդվածներում անդրադառնում է Յու. Լոտմանը: Վկայակոչելով Լ. Ելմսլի սահմանած **տեքստը՝ որպես ամենայն ինչ, որ ասվել, ասվում ու կասվի տվյալ լեզվով**՝ Լոտմանը զարգացնում է հետևյալ գաղափարը. «Տեքստ հասկացության մեջ ինքնին ներդրված է հասկանալի լինելու իրողությունը, քանի որ տեքստն իր բնույթով նշանակում է որոշակի ծածկագրայնություն (կոդավորվածություն): Հետևա-



բար՝ ծածկագրի առկայությունը ենթադրում է նախորդող ինչ-որ բան, ինչ-որ նախընթացություն: Իսկ այդ նախընթացությունը չի կարող այլ բան լինել, քան մեկ այլ տեքստ՝ իր նեղ բովանդակությամբ և տվյալ լեզվի արժեհամակարգային մի շարք իրողությունների ներառմամբ:

Այս կանխավարկածի հետ է կապված փակ լեզվի մասին պատկերացումը՝ որպես փակ համակարգի, որն ունակ է ծնելու անվերջորեն բազմա-ցող տեքստեր»<sup>1</sup>:

**Մեր համոզմամբ՝ փակ համակարգ-լեզվի ներսում ոչ թե տվյալ լեզուն է ինքն իրեն վերարտադրում, այլ դրանով ստեղծված տեքստերն են ինքնավերարտադրվում:**

Տվյալ լեզվի տիրույթում նախորդները վերարտադրում են նոր տեքստեր, և դա պարզ վերարտադրությունն է: Այլ ձևով լեզուն չի կարող տեքստ ստեղծել. ոչ թե լեզուն է տեքստ ստեղծում, այլ տեքստը լեզվական տարրերի հաշվին ստեղծվում է լեզվի ներսում՝ տվյալ լեզվի «աշխարհագրության» մեջ: Իսկ վերոնշյալ վերարտադրության մեխանիզմն ավելի շատ նման է սերնդեսերունդ բանահյուսական տեքստի մշակմանը:

Տվյալ լեզվի «աշխարհագրությունը» կազմող տեքստերի ամբողջությունը գլխավոր հիմքն է, որի վրա մշտապես արտադրվում են տարբեր փոքր ու մեծ տեքստեր, և այդ տեքստերի ամբողջությունը՝ **համատեքստը**, ինքնավերարտադրվում է հատկապես հենց այն պատճառով, որ, ինչպես ասացինք, **տեքստը երբեք էլ ամբողջական չէ, այն, մինչևիսկ մշտապես ձգտելով դեպի ամբողջականություն, երբեք չի ամբողջանում:**

Չի ամբողջանում և համատեքստը, որովհետև խոսքն անսահման է:

**Համատեքստը նույն լեզվամտածողական տիրույթում տարբեր տեքստերի ընդհանրությունն է միևնույն արժեհամակարգային հողի վրա, այնպիսի տեքստերի, որոնք «գաղտնորեն» միահյուսվում, ընդհանրանում, ամբողջանում են տվյալ լեզվամտածողական համակարգում՝ ամրացնելով ու զարգացնելով հենց այդ արժեհամակարգը:** Իրենց հերթին տարբեր լեզվամտածողությունների վրա խարսխված քաղաքակրթական արժեհամակարգերը կարող են ընդհանրություն հանդես բերել, ինչի արդյունքն էլ հենց մարդկային քաղաքակրթությունն է, հումանիզմն ընդհանրապես, որ դրսևորվում է նախ խոսքի մեջ: Այլ կերպ՝ տվյալ լեզվամտածողական համակարգը անընդհատ ամբողջացնել ձգտող համատեքստը մեկ այլ լեզվամտածողական համակարգ ամբողջացնել ձգտող համատեքստի հետ կազմավորում են այն, ինչը քաղաքակրթությունն է, հումանիզմը:

Հետևաբար՝ **որևէ լեզվամտածողությամբ ստեղծվող գրականության համատեքստի շարժման ուղղությունը և՛ բանից (լոգոսից) է, և՛ դեպի բանը (լոգոսը):** Ընդ որում՝ այս երկուղղություն շարժումը ոչ միայն մշտական է,

---

<sup>1</sup> Լուտման Յու., նշվ. աշխ., էջ 229:

համաժամանակյա, այլև պարբերական է, այսինքն՝ բանը դառնում է աշխարհ, աշխարհը՝ բան: Քաղաքակրթական առաջընթացն այս պահին գտնվում է արարման պարբերական շղթայի այն փուլում, երբ մարդկությունը հասկանում է, որ անհրաժեշտ է բան ստեղծել՝ բանաստեղծել: Մեր ապրած ժամանակի յուրահասկությունը, գեղեցկությունն ու հետաքրքրությունը հենց այս իրողության մեջ են:

Դժվար է ասել, թե այս ուղղություններից (բանից և դեպի բանը) որն է նախորդում մյուսին, որն է հաջորդում նախորդին, սակայն անառարկելի է, որ երբ բանն է ստեղծում աշխարհը, այսինքն՝ երբ բանն է ի սկզբանե (հասկանալի է, որ խոսքն այս դեպքում արդեն հարաբերական սկզբի, նոր պարբերաշրջանի մասին է), ապա այդ բանը (խոսքը, տեքստը) **ոչ միայն աշխարհ է ստեղծում, այլև հենց տեքստ, այսինքն՝ բանը (խոսքը, տեքստը) զբաղվում է նաև ինքնավերարտադրմամբ ու ինքնավերստեղծմամբ:** Սրա ամենավառ ապացույցն այն է, որ բանը (խոսքը, տեքստը) իր հերոսը, կերպարը, իր նպատակն է դարձնում հենց **ինքն իրեն**. «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» (Եղիշե Չարենց), «Ա՛րի, բլբուլ, խո՛սի բառըն» (Սայաթ Նովա) և այլն:

Այս խնդրում Վ. Եփրեմյանի մտածումն այլ է. նա կարծես ընդունում է բացարձակ, ոչ հարաբերական սկզբի գաղափարը և գուցե այդ պատճառով էլ «Ի սկզբանե էր Բանն»-ը համարում է կատարյալ սկիզբ և այսօրվա ժամանակից դուրս իրականություն, քանի որ ««Ի սկզբանե էր Բանն» կատարյալ իրականությունից դուրս կամ հետո ժամանակն ու տարածությունը, գիրն ու իրականությունը այլևս չեն համընկնում, իրար չեն ընդունում, հակամարտում են: Անընդհատ հոսող ժամանակն ու շարունակաբար արարվող գիրը անընդհատ ու շարունակաբար մերժվում են, որովհետև գիրը տարածության նշանը չէ, տարածության նշանը բանն է՝ իրի նշանակությամբ...»<sup>1</sup>: Սակայն նրա՝ գրի (որ տվյալ դեպքում թերևս պետք է հասկանալ նաև խոսքի ու տեքստի) և իրականության հակամարտության ընկալումն ամեննին էլ չի հակադրվում մեր՝ նույն այդ երկուսի անընդհատ և փոխադարձորեն ստեղծելու գաղափարին: Պարզապես Վ. Եփրեմյանի պատկերացրած համակարգում այդ երկուսն անընդհատ ուզում են հաղթահարել միմյանց, որի հետևանքով մերթ իրականությունն է մնալու առանց գրի, մերթ էլ գիրն է մնալու առանց իրականության: Հետևանքը լինում է այն, որ, իրոք, «Ի սկզբանե էր Բանն» կատարյալ իրականությունից դուրս կամ հետո ո՛չ իրականությունը և ո՛չ էլ գիրը (որ պետք է հասկանալ նաև խոսքը ու տեքստը) կատարյալ լինել չեն կարող: Մա, սակայն, կարծում ենք, որ անկատար գրին (խոսքին, տեքստին) և անկատար իրականությանը (աշխարհին) չի զրկում անընդհատորեն և փոխադարձորեն ստեղծելու ներուժից:

<sup>1</sup> Եփրեմյան Վ., Բնագիր և մեկնություն, Երևան, 2013, էջ 287:

## Тадевос Тоноян – *Восприятие текста*

В области современных гуманитарных наук наиболее сложным термином является «текст». То, что называется текстом еще не имеет определения, однако стоит отметить важные особенности текста, разработать принципы квалификации текстов, разделять их по типу. Любое слово-текст, созданное в рамках данного языкового мышления является частью данного контекста (то есть единое целое ценных текстов созданных на данном языке), независимо от того, выражены или нет их сюжетные, тематические, содержательные или иное сходства. Если не известен весь текст, по некоторым его отрезкам сложно его угадать. Сложная целостность, сохраняющая синтаксическую самостоятельность и завершенность не может считаться точной синтаксической единицей, потому что невозможно определить степень его самостоятельности и завершенности. Эта самостоятельность и завершенность в некоторой степени есть, однако нет синтаксического параметра и точности определения.

Создающее любого текстового отрезка и объединяющее подобных отрезков - это именно то содержание, которое еще с отправной точки общего намерения пытается возможно тщательно представить говорящий. Каждый текст, по существу является частью другого текста, любой текст – это причина другого текста, а также следствие еще одного.

Речь на практике не способна полностью включить в себя тему, она становится причиной, стимулом и требованием, чтобы в конкретном тексте был создан новый текстовый сегмент, а в контексте – другой, новый конкретный текст. Тексты существуют по той причине, что невозможно исчерпать намерение что-либо сказать, что является предусловием существования цивилизации. Текст никогда не целостен, даже всегда стремясь к целостности, он никогда ее не достигает.

## Tonoyan Tadevos – *Text Perception*

At present, one of the most problematic terms in the humanities is the text. What is called a text, has not yet been determined, but we can specify the peculiarities of the text, work out principles of classifying them, distinguish them according to their type.

Any speech-text created within the limits of a given language mentality is a part of the given context (i.e. totality of texts created in the given language) regardless of whether their narrative, thematic generality, connection are expressed or not. If the whole text is not known, it is difficult to guess it with some parts of it. The complex totality preserving syntactic independence and completeness, can not be clearly considered as a syntactic unit as it is impossible to determine the degree of its independence and completeness. There are, to some extent, the independence and completeness, but there are no the syntactic standard, boundary clarity.

It is just the utterance-content that creates such textual segments and unifies them and the speaker is trying to thoroughly represent it according to the principle of general intention.

Each text is actually the part of another text, any text is the reason of some other text, as well as the consequence of another.

The speech can't practically cover the whole utterance completely, it becomes a cause, stimulus, and requirement so that some new textual segment could be created and some other, new concrete text in the context. Texts exist because it is impossible to do without speech which is the prerequisite for the existence of civilization.

A text is never complete, even trying to keep the integrity, it never becomes complete.

ՇԵՇՏԱԶԱՅՆԴԱՐԶԱՅԻՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԵՐՀԱՐԱՅՈՒՑՑԱՅԻՆ ԴԵՐԸ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ  
ՀՆԴԵՎՐՈՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

*Բանալի բառեր – շեշտաձայնդարձային հարացույցներ, ներքին բառակազմության տեսություն, ձայնդարձի լիաձայն և զրո աստիճաններ, ուժեղ ձևեր, թույլ ձևեր*

Ինչպես հայտնի է, հնդեվրոպական հիմքակազմության մեջ տարբերակում են բնավոր (թեմատիկ՝ e/o ձայնավորով վերջացող) և անբուն (աթեմատիկ՝ բաղաձայնով, ձայնորդով և e/o-ից տարբեր ձայնավորով վերջացող) հիմքեր: Բնավոր և անբուն հիմքերը միմյանցից տարբերվում են մի շարք առանձնահատկություններով և առաջին հերթին՝ շեշտաձայնդարձային օրինաչափությունների տեսանկյունից<sup>1</sup>: Բնավոր հիմքերի հոլովման և խոնարհման հարացույցում շեշտի դիրքը միշտ կայուն է. այն ընկնում է կա՛մ արմատի, կա՛մ էլ բնի ձայնավորի վրա. ընդհանուր առմամբ անփոփոխ է մնում նաև հիմքը՝ բացառությամբ բնի ձայնավորի և վերջավորության ձուլման որոշ դեպքերի<sup>2</sup>: Մինչդեռ անբուն հիմքերի հարացույցը բնութագրվում է շարժական շեշտով և ձայնավորային հերթազայությամբ: Հարացույցի ներսում շեշտի տեղաշարժի և ձայնդարձի հիման վրա ավանդաբար տարբերակում են ուժեղ և թույլ ձևեր. հոլովման հարացույցի ուժեղ ձևերն են եզակի ուղղական, կոչական, հայցական, մասամբ նաև ներգոյական, երկակի ուղղական, կոչական, հայցական և հոգնակի ուղղական, կոչական, հայցական հոլովաձևերը, իսկ մնացած ձևերը թույլ են. խոնարհման հարացույցում ուժեղ ձևեր են ներգործական սեռի եզակի թվի բոլոր ձևերը, մինչդեռ ներգործական սեռի երկակի և հոգնակի թվերի, ինչպես նաև միջին սեռի բոլոր ձևերը թույլ են<sup>3</sup>:

Չնայած հարացույցի անդամների բաշխումն ըստ ուժեղ և թույլ ձևերի հիմնականում նույնն է ավանդական և արդի հնդեվրոպաբանության տեսանկյունից, այդուհանդերձ արդի հնդեվրոպաբանության մեջ ուժեղ և

<sup>1</sup> Տե՛ս **Fortson B. W. IV**, Indo-European Language and Culture. An Introduction, Oxford: Blackwell, 2004, p. 77-78, 87-89, **Clackson J.**, Indo-European Linguistics. An Introduction, Cambridge University Press, 2007, p. 92-99:

<sup>2</sup> Տե՛ս **Савченко А. Н.**, Сравнительная грамматика индоевропейских языков. М., 1974, с. 156, 160:

<sup>3</sup> Տե՛ս **Clackson J.**, նշվ. աշխ., էջ 79, **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 103, 87:

թույլ ձևերի համար վերականգնվող շեշտաձայնդարձային օրինաչափությունները սկզբունքորեն տարբերվում են ավանդական հնդեվրոպաբանության մեջ ընդունված օրինաչափություններից: Արդ, սույն հոդվածում փորձ է արվում դիտարկել ավանդական և արդի հնդեվրոպաբանության հայեցակարգային առանձնահատկությունները հ.-ե. շեշտաձայնդարձային հերթագայությունների ըմբռնման հարցում<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, ավանդական հնդեվրոպաբանության մեջ հոլովական տիպերը սովորաբար նկարագրվում են հիմքերի վերջահանգ հնչյունի բնութիւն համապատասխան, իսկ շեշտաձայնդարձային օրինաչափությունները նկատի են առնվում միայն օժանդակ կերպով. ըստ այդմ տարբերակում են պայթական բաղաձայնի հանգող հիմքեր, *s*-ահանգ հիմքեր, ռնգային և նայ ձայնորդահանգ հիմքեր, *i*-ահանգ, *u*-ահանգ և երկբարբառահանգ հիմքեր և այլն<sup>2</sup>: Մինչդեռ արդի հնդեվրոպաբանության մեջ շեշտը և ձայնդարձը դիտվում են որպես հ.-ե. հարացույցային տիպերը բնութագրող առավել կարևոր գործոններ, և, ըստ այդմ, տարբերակվում են շեշտաձայնդարձային մի շարք հարացույցներ<sup>3</sup>: Ընդ որում, կազմությամբ միանգամայն տարբեր հիմքերը կարող են ունենալ նույն տիպի շեշտաձայնդարձային հարացույց, իսկ կազմությամբ նույնական հիմքերը կարող են պատկանել տարբեր շեշտաձայնդարձային հարացույցների<sup>4</sup>:

---

<sup>1</sup> «Ավանդական (դասական) հնդեվրոպաբանության» (19-րդ դ. վերջին քառորդից մինչև 20-րդ դ. 60-70-ական թթ.) և «արդի հնդեվրոպաբանության» (20-րդ դ. 70-80-ական թթ. մինչև մեր օրերը) ժամանակագրական սահմանազատումը որոշ չափով պայմանական է, քանի որ հաճախ ավանդական հնդեվրոպաբանության շրջանի առանձին հետազոտողներ չափազանց կարևոր դեր են խաղացել արդի հնդեվրոպաբանության այս կամ այն տեսության ձևավորման հարցում, մինչդեռ ավելի ուշ շրջանի որոշ լեզվաբաններ առաջնորդվել են ավանդական հնդեվրոպաբանության հայեցակարգային չափանիշներով: Ըստ այդմ՝ երբեմն նույն լեզվաբանը կարող է դիտվել մասամբ որպես ավանդական հնդեվրոպաբանության հետևորդ, մասամբ էլ որպես արդի հնդեվրոպաբանության ներկայացուցիչ:

<sup>2</sup> Տե՛ս **Szemerényi O.**, Introduction to Indo-European Linguistics, Oxford University Press, 1996, p. 164-192, նաև՝ **Hirt H.**, Indogermanische Grammatik, Vol. 3: Das Nomen, Cambridge University Press, 2009, S. 33- 35:

<sup>3</sup> Տե՛ս **Eichner H.**, Zu Etymologie und Flexion von vedisch *strī* und *pūmán*. // Die Sprache, 1974, 20, S. 27-28, **Schindler J.**, Zum Ablaut der neutralen *s*-Stämme des Indogermanischen. // Flexion und Wortbildung, Akten der V Fachtagung der Indogermanischen Gesellschaft, hrsg. von H. Rix, Wiesbaden, 1975, S. 262-264, **Mayrhofer M.**, Vorgeschichte der iranischen Sprachen; Uriranisch. // Compendium Linguarum Iranicarum, hrsg. von R. Schmitt, Wiesbaden, 1989, S. 14 ff., **Meier-Brügger M.**, Indogermanische Sprachwissenschaft, 9. Auflage, Berlin/New York, 2010, S. 328-329, 336-353, **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 107-110:

<sup>4</sup> Տե՛ս **Schaffner S.**, Das vernersche Gesetz und der innerparadigmatische grammatische Wechsel des Urgermanischen im Nominalbereich, Innsbruck, 2001, S. 76-93, **Widmer P.**, Das Korn des weiten Feldes. Interne Derivation, Derivationskette und Flexionsklassenhierarchie: Aspekte der nominalen Wortbildung im Urindogermanischen, Innsbruck, 2004, S. 49- 54:

Ինչ վերաբերում է հ.-ե. շեշտաձայնդարձային օրինաչափություններին, ըստ ավանդական հնդեվրոպաբանության՝ հարացույցի ուժեղ և թույլ ձևերը միմյանց հակադրվում են հետևյալ ընդհանուր սկզբունքի համաձայն. *ուժեղ ձևերում շեշտն ընկնում է հիմքի վրա, որն ունենում է լիաձայն աստիճանի ձայնավորում, իսկ թույլ ձևերում շեշտն անցնում է վերջավորության վրա, և այդ դեպքում հիմքը հանդես է գալիս ձայնդարձի զրո աստիճանի (այսինքն՝ ձայնավորագուրկ) ձևով*<sup>1</sup>. հմմտ. մի կողմից՝ հ.-ե. եզ. ուղղ. (\*ph<sub>2</sub>tér-s >) \*ph<sub>2</sub>tér «հայր», եզ. հայց. \*ph<sub>2</sub>tér-m, հոգ. ուղղ. \*ph<sub>2</sub>tér-es, եզ. սեռ. \*ph<sub>2</sub>tr-és/ós, եզ. տր. \*ph<sub>2</sub>tr-éi, մյուս կողմից՝ հ.-ե. ներկա եզ. III դ. \*g<sup>wh</sup>én-ti «հարվածում է, սպանում է», հոգ. III դ. \*g<sup>wh</sup>n-énti և այլն: Բայց հ.-ե. մի շարք անբուն հիմքերի հոլովական հարացույցների համար ավանդաբար վերականգնվող շեշտաձայնդարձային օրինաչափություններն ակնհայտորեն շեղվում են հիշյալ սկզբունքից: Այսպես, հ.-ե. \*-es/-os- ածանցով կազմված չեզոք սեռի վերացական անունների հ.-ե. հարացույցի թե՛ ուժեղ, թե՛ թույլ ձևերին բնորոշ է կայուն արմատական շեշտ և հիմքի լիաձայն աստիճանի ձայնավորում. հիմքակազմ ածանցը եզ. ուղղ.-հայց. հոլովաձևում պարունակում է \*o, իսկ մնացած հոլովաձևերում՝ \*e ձայնավոր<sup>2</sup>. օրինակ՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*mén-os-ø «միտք; ոգի», եզ. սեռ. \*mén-es-os և այլն: Մյուս կողմից, *i*-ահանգ և *u*-ահանգ հիմքերի կանոնավոր տիպի դեպքում շեշտակիր հիմքը եզակի ուղղական և հայցական հոլովաձևերում հանդես է գալիս զրո աստիճանի, իսկ թեք հոլովաձևերում՝ լիաձայն աստիճանի ձայնավորումով. հմմտ. հ. հնդ. եզ. ուղղ. sūnús «որդի», agnís «կրակ», եզ. հայց. sūnús-m, agnís-m, եզ. սեռ. sūnós-s, agné-s, եզ. տր. sūnáv-e, agnáy-e և այլն<sup>3</sup>: Իսկ, օրինակ, հ.-ե. \*pod-/\*ped- «ոտք» անբուն հիմքի հարացույցի թույլ ձևերում, թեև շեշտն անցնում է վերջավորության վրա, շեշտագուրկ հիմքը հանդես է գալիս ոչ թե զրո, այլ \*e լիաձայն աստիճանի ձայնավորով. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. \*pód-s «ոտք», եզ. հայց. \*pód-m, հոգ. ուղղ. \*pód-es, եզ. սեռ. \*ped-és/ós, եզ. տր. \*ped-éi և այլն<sup>4</sup>:

Շեշտաձայնդարձային հերթագայության ընդհանուր սկզբունքից նման շեղումները ավանդական հնդեվրոպաբանության մեջ մասամբ բացատրվում են որպես բաղաձայնային կուտակումից խուսափելու կամ համաբանական փոփոխության արդյունք, մասամբ էլ ձայնդարձի լիաձայն և զրո աստի-

<sup>1</sup> Տե՛ս **Савченко А. Н.**, նշվ. աշխ., էջ 156-157, 160-162, նաև՝ **Burrow T.**, The Sanskrit Language, London, 1955, p. 219, 302:

<sup>2</sup> Տե՛ս **Sihler A. L.**, New Comparative Grammar of Greek and Latin, New York/Oxford, 1995, p. 305, **Szemerényi O.**, նշվ. աշխ., էջ 174:

<sup>3</sup> Տե՛ս **Meïe A.**, Введение в сравнительное изучение индоевропейских языков. М.-Л., 1938, с. 313-317, **Burrow T.**, նշվ. աշխ., էջ 222-223, 244, հմմտ. նաև՝ **Красухин К. Г.**, Введение в индоевропейское языкознание, М., 2004, с. 142-144:

<sup>4</sup> Տե՛ս **Meïe A.**, նշվ. աշխ., էջ 312, նաև՝ **Brugmann K.**, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Vol. 1, Cambridge University Press, 2009, S. 251:

ճաննների հերթագայության հարցում շեշտից բացի այլ գործոններ են նշվում: Այսպես, թեև Կ. Բրուգմանը ընդունում է, որ *h.*-ե նախալեզվում չեզոք սեռի \**-es/-os-* ածանցով վերացական անունները թե՛ ուժեղ, թե՛ թույլ ձևերում ունեցել են կայուն արմատական շեշտ և հիմքի լիաձայն աստիճանի ձայնավորում, այդուհանդերձ գտնում է, որ նախալեզվի ավելի վաղ շրջանում թույլ ձևերում շեշտն անցնում էր վերջավորության վրա, իսկ հիմքը սկզբնապես ենթարկվում էր *o/e/ø*(գրո) ձայնդարձի՝ եզ. ուղղ.-հայց. *CéC-os-ø*, եզ. սեռ. *CC-s-és/ós*, եզ. ներգ. *CC-és(-i)* (որտեղ *C* = որևէ բաղաձայն) բանաձևի համաձայն<sup>1</sup>: Ֆ. դը Սոսյուրը և Ե. Կուրիլովիչը նույնպես \**-os/-es-* հերթագայության փոխարեն սկզբնական \**-os/-es/-s* հերթագայություն են վերականգնում, իսկ թույլ ձևերում ձայնդարձի օրինաչափ գրո աստիճանի հետագա փոխարինումը լիաձայն աստիճանի *e* ձայնավորով բացատրվում է մասամբ բաղաձայնային կուտակումից խուսափելու ձգտումով, մասամբ էլ *ձայնավոր + բաղաձայն* կապակցության հանգող արմատական հիմքերի հոգնակի թվի թույլ ձևերի համաբանական ազդեցությամբ (հմմտ. *h.*-ե. \**pod-/\*ped-* «ոտք» բառի հոգ. գործ. \**ped-bhis*, հոգ. գործ. \**ped-sú* և դրանց հետևողությամբ՝ եզ. տր. \**ped-éi* (<< \**pd-éi*) և այլ հոլովաձևերը)<sup>2</sup>: Բացի այդ, Ֆ. դը Սոսյուրը գտնում է, որ լիաձայն աստիճանի ձայնավորի սղումը ոչ միշտ է պայմանավորված շեշտի ազդեցությամբ. նա ըստ այդմ տարբերակում է ուժեղ թեքում և թույլ թեքում. ուժեղ թեքման դեպքում լիաձայն աստիճանի ձայնավորը շեշտի տեղաշարժի հետևանքով սղվում է շեշտանախորդ վանկում (հմմտ. *h.* *hնդ.* եզ. հայց. *pitár-am* «հայր», եզ. տր. *pitr-é*), իսկ թույլ թեքման դեպքում ձայնավորը սղվում է բաղաձայնով սկսվող վերջավորությունից առաջ՝ անկախ շեշտի դիրքից (հմմտ. *h.* *hնդ.* հոգ. գործ. *pitř-bhis* «հայրերով, հայրերի հետ միասին»): Ըստ Ֆ. դը Սոսյուրի՝ թույլ թեքումը եզակի թվում բնորոշ է եղել հիննականում *i*-ահանգ և *u*-ահանգ հիմքերին, իսկ հոգնակի թվում՝ գրեթե բոլոր անբուն հիմքերին<sup>3</sup>: Ա. Մեյեն, ըստ էության, ընդունում է թույլ թեքման սոսյուրյան մեկնաբանությունը<sup>4</sup>, բայց ուժեղ թեքում և թույլ թեքում չի տարբերակում: Պատճառը միանգամայն պարզ է. նա գտնում է, որ էապես սխալ կլիներ ձայնդարձը կապել շեշտի տեղաշարժի հետ<sup>5</sup> (սակայն առավել ընդունված տեսակետի համաձայն՝ *h.*-ե. ձայնդարձի գրո աստիճանի ծա-

<sup>1</sup> Տե՛ս **Brugmann K.**, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Vol. 2, Part 1, Cambridge University Press, 2009, S. 386-388:

<sup>2</sup> Տե՛ս **Saussure F. de**, Mémoire sur le système primitif des voyelles dans les langues indo-européennes, Cambridge University Press, 2009, p. 201-202, 214-215, **Kuryłowicz J.**, L'Apophonie en indo-européen, Wrocław, 1956, p. 67-68, 110-112:

<sup>3</sup> Տե՛ս **Saussure F. de**, նշվ. աշխ., էջ 187, 194-210:

<sup>4</sup> Տե՛ս **Mejse A.**, նշվ. աշխ., էջ 312-313:

<sup>5</sup> Տե՛ս apud **Pedersen H.**, La cinquième déclinaison latine, København, 1926 (Det Kgl. Danske Videnskaberne Selskab. Historisk-filologiske Meddelelser, XI, 5), p. 24:

գումը բացատրվում է շեշտի ազդեցությամբ<sup>1</sup>: Այդ առումով հատկանշական է, որ թեև Ա. Մեյեն *-tei/-ti-* ածանցով հիմքերի հոլովական հարացույցի համար սկզբնական շարժական շեշտ է ենթադրում (օրինակ՝ *h. հնդ. եգ. հայց. má-ti-m* «միտք» < *h.-ե. \*mǝ-ti-m*, *եգ. սեռ. ma-té-s* < *h.-ե. \*mǝ-téi-s*), այդուհանդերձ շեշտի տեղաշարժին համապատասխան արմատական ձայնավորի լիաձայն և զրո աստիճանների հերթագայություն չի վերականգնում<sup>2</sup>: Անշուշտ, դա նաև պայմանավորված է ավանդական հնդեվրոպարանության այն դրույթով, որի համաձայն՝ ածանցավոր հիմքերի հիմքակազմ ածանցին նախորդող մասը մնում է անփոփոխ ամբողջ հարացույցում<sup>3</sup>:

Սակայն Հ. Պեդերսենը վերանայում է այդ ավանդական տեսակետը: Նա նկատում է, որ, մի կողմից, *եգ. ուղղ. հուն. patrér*, *h. հնդ. pitá* «հայր», *եգ. հայց. հուն. patrér-a*, *h. հնդ. pitár-am*, *հուն. եգ. սեռ. patr-ós*, *h. հնդ. եգ. տր. pitr-é*, մյուս կողմից՝ *h. հնդ. եգ. ուղղ. sūnús-s* «որդի», *agní-s* «կրակ», *h. հնդ. եգ. սեռ. sūnós-s*, *agné-s*, *եգ. տր. sūnáv-e*, *agnáy-e* հոլովաձևերի պարագայում ուժեղ և թույլ ձևերը միմյանց հակադրվում են տարբեր սկզբունքով. առաջին դեպքում շեշտի տեղաշարժը և դրան համապատասխան ձայնդարձի լիաձայն և զրո աստիճանների հերթագայությունը սկզբնապես գործել է հիմքակազմ ածանցի և վերջավորության, իսկ երկրորդ դեպքում՝ արմատի և հիմքակազմ ածանցի միջև: Ըստ այդմ՝ երկու հարացույցների շեշտաձայնդարձային հերթագայությունները կարելի է արտահայտել հետևյալ բանաձևերի միջոցով<sup>4</sup>.

I- տիպ՝ ուժեղ ձևեր  $R(\theta) + S(\acute{e}) + D(\emptyset)$ , թույլ ձևեր  $R(\emptyset) + S(\emptyset) + D(\acute{e})$

II- տիպ՝ ուժեղ ձևեր  $R(\acute{e}) + S(\emptyset) + D(\emptyset)$ , թույլ ձևեր  $R(\emptyset) + S(\acute{e}) + D(\emptyset)$

Նա, *հուն. δύναμις (dynamis)* բառը կիրառելով «ուժեղ ձայնավորային աստիճան» (“*degré vocalique fort*”) իմաստով, հոլովական առաջին տիպը կոչում է հիստերոդինամիկ (“*flexion hystérodynamie*”, *hystero-* = «ավելի դեպի վերջը»), իսկ երկրորդ տիպը՝ պրոտերոդինամիկ (“*flexion protérodynamie*”, *protero-* = «ավելի դեպի առաջ»): Հ. Պեդերսենը միևնույն ժամանակ նշում է, որ շեշտի և ձայնդարձի սկզբնական փոխհարաբերությունը մեծապես մթազնել է զանազան համաբանական գործընթացների և նորագոյացությունների հետևանքով մասամբ դեռևս հնդեվրոպական նախալեզվում, մասամբ էլ գեղակից առանձին լեզուներում: Ուստի, *ասենք, h. հնդ. եգ. ուղղ. matís-s*

<sup>1</sup> Տե՛ս **Brugmann K.**, Grundriss..., Vol. 1, S. 249, **Saussure F. de**, նշվ. աշխ., էջ 187, 194-201, **Pedersen H.**, նշվ. աշխ., էջ 23-24, **Kuryłowicz J.**, նշվ. աշխ., էջ 97 և հջ., **Szemerényi O.**, նշվ. աշխ., էջ 111-112, **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 282, **Beekes R. S. P.**, Comparative Indo-European Linguistics. An Introduction, Second edition, revised and corrected by M. de Vaan, Amsterdam/Philadelphia, 2011, p. 176-177:

<sup>2</sup> Տե՛ս **Meĭe A.**, նշվ. աշխ., էջ 324, 284:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 200:

<sup>4</sup> Այստեղ և հետագա շարադրանքում՝ R — արմատ, S — հիմքակազմ ածանց, D — վերջավորություն, *é* — շեշտակիր լիաձայն աստիճան, *∅* — շեշտազուրկ զրո աստիճան:



«միտք», եզ. սեռ. *maté-s* և եզ. ուղղ. *sūnó-s* «որդի», եզ. սեռ. *sūnó-s* ձևերի հնդեվրոպական նախաձևերը նա վերականգնում է հետևյալ կերպ՝ եզ. ուղղ. \**ménti-s* «միտք», եզ. սեռ. \**mṛtṛéi-s* և եզ. ուղղ. \**sénu-s* «որդի», եզ. սեռ. \**sunéu-s*<sup>1</sup>: Ֆ. Բ. Յ. Կուիպերը հետևողականորեն զարգացնում է Հ. Պեդերսենի առաջ քաշած հիատերողինամիկ և պրոտերողինամիկ հոլովական տիպերի գաղափարը և այդ տեսանկյունից դիտարկում հին հնդկերենի ու ցեղակից այլ լեզուների ընձեռած փաստական նյութը<sup>2</sup>:

1964 թ. հնդեվրոպական շեշտաձայնդարձային մի նոր հարացույց է բացահայտում Յ. Նարթենը: Դեռևս Ա. Մեյեն գտնում էր, որ *h.* հնդ. ներկա եզ. III դ. *tás-ti* «կառուցում է», հոգ. III դ. *táks-ati* (-*ati* < \*-*ṛti*), լատ. ներկա եզ. III դ. *ēs-t* «ուտում է», հոգ. III դ. *ed-unt* և նման ձևերում պահպանվել են սկզբնական *ē/e* հերթագայության հետքերը, իսկ ընդհանուր առմամբ ցեղակից լեզուները հարացույցում ընդհանրացրել են ձայնդարձի կա՛մ երկար, կա՛մ լիաձայն աստիճանի հիմքային ձևը<sup>3</sup>: Բայց Ա. Մեյեն չի զարգացնում իր այդ գաղափարը և չի անդրադառնում այն դեպքերին, երբ ուժեղ ձևերի ձայնդարձի երկար աստիճանը թույլ ձևերում հերթագայվում է ոչ թե լիաձայն, այլ զրո աստիճանի ձևի հետ. *h.* հնդ. ներկա եզ. III դ. *stáu-ti* (<\**stéu-ti*) «գովում է», հոգ. III դ. *stuv-ánti* և այլն: Ավանդական հնդեվրոպաբանության շրջանի այլ հետազոտողներ խոնարհման հարացույցի ուժեղ և թույլ ձևերի *ē/e* հերթագայությունը սովորաբար մեկնաբանում են որպես հետագա նորագոյացություն, որը փոխարինել է սկզբնական *e/ø* հերթագայությանը<sup>4</sup>: Բայց Յ. Նարթենն անառարկելիորեն ապացուցում է, որ *ē/e* հերթագայությունը *h.-ե.* շեշտաձայնդարձային հնագույն օրինաչափություն է ներկայացնում. ձայնդարձի *ē* երկար աստիճանը հանդես է եկել կայուն արմատական շեշտով բնութագրվող բայահիմքի ուժեղ ձևերում, իսկ *e* լիաձայն աստիճանը՝ թույլ ձևերում: Բհարկե, հնդեվրոպական ուշ շրջանից սկսած՝ այդ տիպի արմատական բայահիմքերը թույլ ձևերի լիաձայն աստիճանը զրո աստիճանով փոխարինելու միտում են ցուցաբերել՝ թույլ ձևերում շեշտը տեղափոխելով վերջավորության վրա: Դրա հետևանքով առաջացել է ձայնդարձի մի նոր տիպ՝ *ē/ø*. *h.* հնդ. ներկա եզ. III դ. *stáu-ti* (<\**stéu-ti*) «գովում է», հոգ. III դ. *stuv-ánti* (փոխ.՝ *h.* հնդ. \**stáv-ati* <\**stéu-ṛti*): Հաճախ էլ սկզբնական *ē/e* հեր-

<sup>1</sup> Տե՛ս **Pedersen H.**, նշվ. աշխ., էջ 23-25, նաև՝ **Pedersen H.**, *Études lituaniennes*, Copenhague, 1933 (Det Kgl. Danske Videnskabernes Selskab. Historisk-filologiske Meddelelser, XIX, 3), p. 21 et suiv.:

<sup>2</sup> Տե՛ս **Kuiper F. B. J.**, *Notes on Vedic Noun-Inflexion*, Amsterdam, 1942, p. 1-5, 9-18, 29-70:

<sup>3</sup> Տե՛ս **Meiġe A.**, նշվ. աշխ., էջ 252:

<sup>4</sup> Տե՛ս **Kuryłowicz J.**, նշվ. աշխ., էջ 305-308, 155-156, **Watkins C.**, *Indogermanische Grammatik*, Bd. III, Teil 1: *Geschichte der indogermanischen Verbalflexion*, Heidelberg, 1969, S. 27-32, հմմտ. նաև՝ **Hirt H.**, *Indogermanische Grammatik*, Bd. II: *Der Indogermanische Vokalismus*, Heidelberg, 1921, S. 41-42:

թագայությունը վերացել է ձայնդարձի երկար կամ լիաձայն աստիճանի ընդհանրացման հետևանքով<sup>1</sup>: Արդի հնդեվրոպաբանության մեջ *é/é* հերթագայությունը, որն ուժեղ և թույլ ձևերում ուղեկցվում է կայուն արմատական շեշտով, ի պատիվ Յ. Նարթենի կոչվում է նարթենյան ձայնդարձ: Ի դեպ, նարթենյան ձայնդարձ է վերականգնվում հ.-ե. նաև որոշ ածանցավոր բայահիմքերի (այդ թվում՝ սիզմատիկ աորիստի), այլև մի խումբ անվանական հիմքերի համար<sup>2</sup>: Ինչպես իրավացիորեն նկատում է Ջ. Ջեյսընոֆը, նարթենյան ձայնդարձի բացահայտմամբ ոչ միայն հնդեվրոպական շեշտաձայնդարձային մի նոր հարացույց վերականգնվեց, այլև պարզ դարձավ, որ ավանդական *e/ø* հերթագայության պարագայում հարացույցի ուժեղ ձևերում հանդես եկող *e* լիաձայն աստիճանը շեշտաձայնդարձային մեկ այլ հարացույցում գործառել է որպես թույլ ձևերի արմատական ձայնավորում<sup>3</sup>:

1960-1970-ական թթ. սկսած՝ ավստրիացի և գերմանացի մի խումբ լեզվաբաններ (այդ թվում՝ Յ. Շինդլերը, Հ. Այխները, Հ. Ռիքսը, Գ. Կլինգենշմիդտը) ինտենսիվ ուսումնասիրություններ են կատարում հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցների ամբողջական համակարգի վերականգնման և մի միասնական տեսություն ստեղծելու ուղղությամբ, որի համար կարևոր ազդակ է ծառայում 1964 թ. Էռլանգենում կայացած գիտական քննարկումը<sup>4</sup>: Հ. Այխները շեշտի կայուն կամ շարժական բնույթի հիման վրա տարբերակում է շեշտաձայնդարձային հարացույցների երկու հիմնական տիպ՝ ստատիկ և կինետիկ՝ համապատասխան ենթատիպերով՝ ակրոստատիկ (արմատի կայուն շեշտով), մետոստատիկ (ածանցի կայուն շեշտով), տելետոստատիկ (վերջավորության կայուն շեշտով) և հոլոկինետիկ (շեշտը տեղաշարժվում է արմատի, ածանցի և վերջավորության միջև), պրոտերոկինետիկ (շեշտը տեղաշարժվում է արմատի և ածանցի միջև), հիստերոկինետիկ (շեշտը տեղաշարժվում է ածանցի և վերջավորության միջև), ամֆիկինետիկ (շեշտը տեղաշարժվում է արմատի և վերջավորության միջև)<sup>5</sup>: Յ. Շինդլերը Հ. Այխների մշակած տերմինաբանության հետևողությամբ հ.-ե. անվանական

---

<sup>1</sup> Տե՛ս **Narten J.**, Zum “proterodynamischen” Wurzelpresens // *Pratidānam: Indian, Iranian and Indo-European Studies*, ed. by J. C. Heesterman, G. H. Schokker and V. I. Subramoniam, The Hague: Mouton, 1968, p. 9-19, նաև՝ *Lexikon der Indogermanischen Verben. Die Wurzeln und ihre Primärstambildungen*, unter Leitung von H. Rix, 2. Auflage, Wiesbaden, 2001, S. 14, 230, 600, 638-639:

<sup>2</sup> Տե՛ս **Schindler J.**, Alte und neue Fragen zum indogermanischen Nomen. // *In honorem Holger Pedersen. Kolloquium der Indogermanischen Gesellschaft*, hrsg. von Jens E. Rasmussen, Wiesbaden, 1994, S. 398-399, *Lexikon der Indogermanischen Verben...*, S. 14(1b), 20-21(2b), **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 50-51:

<sup>3</sup> Տե՛ս **Jasanoff J. H.**, *Hittite and the Indo-European Verb*, Oxford University Press, 2003, p. 68:

<sup>4</sup> Տե՛ս **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 338-339:

<sup>5</sup> Տե՛ս **Eichner H.**, Die Etymologie von heth. “mehur” // *Münchener Studien zur Sprachwissenschaft*, 1973, 31, S. 91 Anm. 33:

անբուն հիմքերի համար վերականգնում է շեշտաձայնդարձային հարացույցների չորս հիմնական տիպ՝ ակրոստատիկ (երկու ենթատիպով), պրոտերոկլինետիկ, հիստերոկլինետիկ և հոլոկլինետիկ: Պրոտերոկլինետիկ, հիստերոկլինետիկ և հոլոկլինետիկ հարացույցները, որոնք ենթադրում են բառի եռաբաղադրիչ կառուցվածք (արմատի, հիմքակազմ ածանցի և վերջավորության առկայություն), բնականաբար բնորոշ են միայն ածանցավոր հիմքերին, մինչդեռ ակրոստատիկ հարացույց կարող են ունենալ թե՛ արմատական, թե՛ ածանցավոր հիմքերը<sup>1</sup>: Նշենք, որ շեշտաձայնդարձային հարացույցների շինղլերյան համակարգը (այն երբեմն կոչվում է նաև եղանգեկյան համակարգ) լայնորեն ընդունված է արդի հնդեվրոպաբանության մեջ և հանդես է գալիս հնդեվրոպական լեզվաբանության գրեթե բոլոր նորագույն դասագրքերում<sup>2</sup>, բայց տերմինաբանության հարցում դեռևս որոշ անմիօրինակություն է նկատվում. պրոտերոկլինետիկ, հիստերոկլինետիկ և հոլոկլինետիկ հարացույցների համար համապատասխանաբար գործածվում են նաև պրոտերոդինամիկ, հիստերոդինամիկ և հոլոդինամիկ (վերջինիս պարագայում՝ նաև ամֆիկլինետիկ և ամֆիդինամիկ, բայց տե՛ս ստորև) անվանումները, իսկ ակրոստատիկ տիպը կոչվում է նաև ակրոդինամիկ: Ընդ որում, եթե *-ստատիկ* և *-կլինետիկ* անվանումների դեպքում սովորաբար նկատի են առնվում շեշտի դիրքը և դրա կայուն կամ շարժական բնույթը, ապա *-դինամիկ* անվանման տակ ոմանք նկատի ունեն դարձյալ շեշտի, իսկ ուրիշները՝ լիաձայն աստիճանի ձայնավորի դիրքը հարացույցային ձևերում: Մակայն նշված տարբերությունը ի վերջո էական չէ, քանի որ շեշտային օրինաչափությունը համընդհանուր կերպով դիտվում է առաջնային, իսկ ձայնավորային հերթագայությունը՝ որպես նրա անմիջական հետևանք (*շեշտակիր վանկ* = *ձայնդարձի e աստիճան*, *շեշտագուրկ վանկ* = *ø(գրո)* կամ *o աստիճան* երբեմնի ընդհանուր սկզբունքի համաձայն)<sup>3</sup>:

Հիշյալ հարացույցային տիպերը սովորաբար բնութագրվում են եզակի ուղղական, հայցական, սեռական և ներգոյական հոլովաձևերի շեշտաձայնդարձային օրինաչափությունների հիման վրա: Ի դեպ, եզակի ներգոյականն իր շեշտաձայնդարձային առանձնահատկություններով հաճախ տարբերվում է թե՛ ուժեղ, թե՛ թույլ ձևերից. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*սօժ-ր «ջուր»,

<sup>1</sup> Տե՛ս **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme..., S. 262-264, նաև՝ **Schindler J.**, L'Apophonie des thèmes indo-européens en -r/n // Bulletin de la Société de Linguistique de Paris, 1975, 70, p. 4-5, **Schindler J.**, L'Apophonie des noms-racines indo-européens // Bulletin de la Société de Linguistique de Paris, 1972, 67, p. 32 et suiv.:

<sup>2</sup> Տե՛ս **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 107-110, Clackson **J.**, նշվ. աշխ., էջ 80 և հջ., **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 349-352, նաև՝ **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 50-54, **Николаев А. С.**, Исследования по праиндоевропейской именной морфологии, СПб., 2010, с. 293 и след.:

<sup>3</sup> Տե՛ս **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 340 և հջ., **Rix H.**, Historische Grammatik des Griechischen: Laut- und Formenlehre, 2. Auflage, Darmstadt, 1992, S. 122-124, **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 107-109, **Clackson J.**, նշվ. աշխ., էջ 80 և հջ.:

եզ. սեռ. \* $\acute{u}éd$ -ո-s, եզ. ներգ.  $ud$ -են; եզ. ուղղ. \* $d^h\acute{e}g^h$ - $\acute{o}m$  «գետիւն, հող», եզ. հայց. \* $d^h\acute{e}g^h$ - $\acute{o}m$ -ո-մ, եզ. սեռ. \* $d^h\acute{e}g^h$ - $m$ -էs, եզ. ներգ. \* $d^h\acute{e}g^h$ -էm և այլն<sup>1</sup>: Արդ, հ.-ե. շեշտա-  
ձայնդարձային հարացույցները նկարագրվում են հետևյալ կերպ.

**ակրոստատիկ I`** ուժեղ ձևեր  $R(\acute{o}) + S(\theta) + D(\theta)$   
 թույլ ձևեր  $R(\acute{e}) + S(\theta) + D(\theta)$   
 եզ. ներգ.  $R(\theta) + S(\acute{e}/\acute{e}) + D(\theta)[-i]$

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \* $\acute{g}\acute{o}n$ -u «ծունկ», եզ. սեռ. \* $\acute{g}\acute{e}n$ -u-s, եզ. ներգ. \* $\acute{g}n$ -  
 $\acute{e}u$ /\* $\acute{g}n$ - $\acute{e}u$ -i; եզ. ուղղ. \* $n\acute{o}k^w$ -t-s «գիշեր», եզ. հայց. \* $n\acute{o}k^w$ -t-ո-մ, եզ. սեռ. \* $n\acute{e}k^w$ -t-s և  
 այլն,

**ակրոստատիկ II`** ուժեղ ձևեր  $R(\acute{e}) + S(\theta) + D(\theta)$   
 թույլ ձևեր  $R(\acute{e}$  կամ  $\acute{o}) + S(\theta) + D(\theta)^2$

հմմտ. մի կողմից` հ.-ե. ուժեղ ձևերի հիմք \* $\acute{g}\acute{e}rh_2$ -s- «ծեր տարիք», թույլ  
 ձևերի հիմք \* $\acute{g}\acute{e}rh_2$ -s-, մյուս կողմից` ուժեղ ձևերի հիմք \* $h_1\acute{e}g^w$ -i- «օձ», թույլ  
 ձևերի հիմք \* $h_1\acute{o}g^w$ -i- և այլն,

**պրոտերոկլինետիկ`** ուժեղ ձևեր  $R(\acute{e}) + S(\theta) + D(\theta)$   
 թույլ ձևեր  $R(\theta) + S(\acute{e}) + D(\theta)$   
 եզ. ներգ.  $R(\theta) + S(\acute{e}) + D(\theta)$

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \* $h_1n\acute{e}h_3$ -ո-մ «անուն», եզ. սեռ. \* $h_1n\acute{h}_3$ - $m\acute{e}n$ -s; եզ.  
 ուղղ.-հայց. \* $p\acute{e}h_2$ - $u\acute{r}$  «կրակ», եզ. սեռ. \* $p\acute{h}_2$ - $u\acute{e}n$ -s; եզ. ուղղ. \* $p\acute{e}r$ -tu-s «ծանծա-  
 դուս, անցահուն», եզ. հայց. \* $p\acute{e}r$ -tu-m, թույլ ձևերի հիմքը` \* $pr$ - $t\acute{e}u$ -, եզ. ներգ.  
 \* $pr$ - $t\acute{e}u$  և այլն,

**հիստերոկլինետիկ`** ուժեղ ձևեր  $R(\theta) + S(\acute{e}) + D(\theta)$   
 թույլ ձևեր  $R(\theta) + S(\theta) + D(\acute{e})$   
 եզ. ներգ.  $R(\theta) + S(\acute{e}) + D(\theta)[-i]$

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. \* $p\acute{h}_2$ - $t\acute{e}r$  (< \* $p\acute{h}_2$ - $t\acute{e}r$ -s) «հայր», եզ. հայց. \* $p\acute{h}_2$ - $t\acute{e}r$ -ո-մ, եզ.  
 սեռ. \* $p\acute{h}_2$ - $tr$ -էs, եզ. ներգ. \* $p\acute{h}_2$ - $t\acute{e}r$ -i; եզ. ուղղ. \* $h_2uk^w$ -s-էն, եզ. հայց. \* $h_2uk^w$ -s-էն-ո-մ,  
 եզ. սեռ. \* $h_2uk^w$ -s-n-էs և այլն,

**հոլոկլինետիկ`** ուժեղ ձևեր  $R(\acute{e}) + S(\theta) + D(\theta)$   
 թույլ ձևեր  $R(\theta) + S(\theta) + D(\acute{e})$   
 եզ. ներգ.  $R(\theta) + S(\acute{e}) + D(\theta)[-i]$

հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. \* $d^h\acute{e}g^h$ - $\acute{o}m$  (< \* $d^h\acute{e}g^h$ - $\acute{o}m$ -s) «գետիւն, հող», եզ. հայց.  
 \* $d^h\acute{e}g^h$ - $\acute{o}m$ -ո-մ > \* $d^h\acute{e}g^h$ - $\acute{o}m$ , եզ. սեռ. \* $d^h\acute{e}g^h$ - $m$ -էs, եզ. ներգ. \* $d^h\acute{e}g^h$ -էm; եզ. ուղղ. \* $h_2\acute{e}u$ -  
 $\acute{o}s$  «այգաբաց», եզ. հայց. \* $h_2\acute{e}u$ - $\acute{o}s$ -ո-մ, եզ. սեռ. \* $h_2us$ -s-էs, եզ. ներգ. \* $h_2us$ -էs(-i);

<sup>1</sup> Տե՛ս **Schindler J.**, Alte und neue Fragen..., S. 397, **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-  
 Stämme..., S. 262-263, նուև` **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 349-352:

<sup>2</sup> Հմմտ. **Schindler J.**, Alte und neue Fragen..., S. 398-399, **Nussbaum A.**, Two Studies in Greek  
 and Homeric Linguistics, Göttingen, 1998 (Hypomnemata, Heft 120), p. 150, note 179, **Widmer P.**, նշվ.  
 աշխ., էջ 50-51, 63, **Герценберг Л. Г.**, Краткое введение в индоевропеистику, СПб., 2010, с. 43-44:

եզ. ուղղ. \*h<sub>2</sub>ék-mōn «քար, ապառաժ», եզ. հայց. \*h<sub>2</sub>ék-mon-դ, եզ. սեռ. \*h<sub>2</sub>k-(m)n-és և այլն:

**Ծան.** *Ինչպես հայտնի է, ավանդական հնդեվրոպաբանության մեջ շնչավոր սեռի \*-n- և \*-r- ձայնորդահանգ հիմքերի դեպքում ձայնդարձային երկու տիպ էր տարբերակվում՝ ա) եզ. հայց. \*-on-դ, եզ. ներգ. \*-en-i, հոգ. ուղղ. \*-on-es և եզ. հայց. \*-or-դ, եզ. ներգ. \*-er-i, հոգ. ուղղ. \*-or-es, բ) եզ. հայց. \*-en-դ, եզ. ներգ. \*-en-i, հոգ. ուղղ. \*-en-es և եզ. հայց. \*-er-դ, եզ. ներգ. \*-er-i, հոգ. ուղղ. \*-er-es. հմմտ. մի կողմից՝ հ. հայ. եզ. ուղղ.-հայց. մատ-ն (-ն < \*-ուն < \*-ōn-), եզ. ներգ. (հ) մատ-ին (\*-ին < \*-en-i), հոգ. ուղղ. մատ-ուն-ք (-ուն-ք < \*-on-es), մյուս կողմից՝ հ. հայ. եզ. ուղղ.-հայց. գառ-ն (-ն < \*-ին < \*-ǽn-), եզ. ներգ. (հ) գառ-ին (\*-ին < \*-en-i), հոգ. ուղղ. գառ-ին-ք (-ին-ք < \*-en-es): Արդ, հորվական երկու տիպերի հիմնական տարբերությունը համարվում էր հիմքակազմ ածանցում e/o հերթագայության անկայությունը կամ բացակայությունը<sup>1</sup>: Մինչդեռ ըստ արդի հնդեվրոպաբանության՝ հիշյալ հորվական տիպերը միմյանցից տարբերվում են ոչ միայն ածանցի, այլև արմատի ձայնդարձային օրինաչափությամբ և շեշտի տեղաշարժի բնույթով. եզ. հայց. \*R(é)-on-դ, եզ. ներգ. \*R(θ)-én-i, հոգ. ուղղ. \*R(é)-on-es և եզ. հայց. \*R(é)-or-դ, եզ. ներգ. \*R(θ)-ér-i, հոգ. ուղղ. \*R(é)-or-es հորվական տիպը բնորոշ է հորվկի-նետիկ հիմքերին, իսկ եզ. հայց. \*R(θ)-én-դ, եզ. ներգ. \*R(θ)-én-i, հոգ. ուղղ. \*R(θ)-én-es և եզ. հայց. \*R(θ)-ér-դ, եզ. ներգ. \*R(θ)-ér-i, հոգ. ուղղ. \*R(θ)-ér-es տիպը՝ հիստերոկի-նետիկ հիմքերին<sup>2</sup>:*

Ինչ վերաբերում է արմատական (այն է՝ ածանցազուրկ) հիմքերին, արդի հնդեվրոպաբանության մեջ Յ. Շինդլերից սկսած տարբերակում են շեշտաձայնդարձային հարացույցների երկու հիմնական տիպ: Դրանցից առաջինին բնորոշ է ակրոստատիկ հարացույց՝ ուժեղ ձևեր R(ó) + D(θ), թույլ ձևեր R(é) + D(θ), եզ. ներգ. R(é/é) + D(θ)[-i] բանաձևի համաձայն. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. \*dóm-s (> \*dóm) «տուն», եզ. հայց. \*dóm-դ > \*dóm, եզ. սեռ. \*dém-s, եզ. ներգ. \*dém-i/\*dém, հ.-ե. եզ. ուղղ. \*g<sup>w</sup>óu-s «խոշոր եղջերավոր անասուն, ցուլ, կով», եզ. հայց. \*g<sup>w</sup>óu-դ > \*g<sup>w</sup>óm, եզ. սեռ. \*g<sup>w</sup>éu-s և այլն: Իսկ երկրորդ հարացույցը բնութագրվում է շարժական շեշտով և ձայնդարձի լիաձայն և զրո աստիճանների հերթագայությամբ. բնականաբար, ածանցի բացակայության պարագայում շեշտաձայնդարձային հերթագայությունը տեղի է ունենում արմատի և վերջավորության միջև՝ ուժեղ ձևեր R(é) + D(θ), թույլ ձևեր R(θ) +

<sup>1</sup> Տե՛ս **Meiße A.**, նշվ. աշխ., էջ 310-311:

<sup>2</sup> Տե՛ս **Harðarson J. A.**, Der geschlechtige Nom. Sg. und der neutrale Nom.-Akk. Pl. der n-Stämme im Urindogermanischen und Germanischen. // Sprachkontakt und Sprachwandel, Akten der XI Fachtagung der Indogermanischen Gesellschaft, hrsg. von G. Meiser und O. Hackstein, Wiesbaden, 2005, S. 217, 220-221 und Anm. 38:

D(é), եգ. ներգ. R(é) + D(ø). հմմտ. հ.-ե. եգ. ուղղ. \*d(i)ǰéu-s «երկինք, երկնային աստվածություն, ցերեկային լույս», եգ. հայց. \*d(i)ǰéu-ṃ > \*d(i)ǰé-ṃ, եգ. սեռ. \*diu-és, եգ. ներգ. \*diéu-i; հ.-ե. եգ. ուղղ. \*h<sub>2</sub>nér (< \*h<sub>2</sub>nér-s) «մարդ, այր», եգ. հայց. \*h<sub>2</sub>nér-ṃ, եգ. սեռ. \*h<sub>2</sub>nr-és և այլն<sup>1</sup>: Ինչպես տեսանք, այդպիսի հերթագայությամբ բնութագրվող հարացույցը Հ. Այխները կոչում էր ամֆիկլինետիկ: Հետևաբար ճիշտ չէ ամֆիկլինետիկ (ամֆիդինամիկ) անվանումը կիրառել հոլոկլինետիկ (հոլոդինամիկ) իմաստով, քանի որ դրանք երկու տարբեր հարացույցներ են ներկայացնում. ամֆիկլինետիկ հարացույցը սովորաբար հանդիպում է արմատական, իսկ հոլոկլինետիկ հարացույցը՝ ածանցավոր հիմքերի դեպքում. ամֆիկլինետիկ հարացույցում շեշտաձայնդարձային հերթագայությունը տեղի է ունենում արմատի և վերջավորության, իսկ հոլոկլինետիկ հարացույցում՝ արմատի, ածանցի և վերջավորության միջև<sup>2</sup>:

Բայական հիմքերի դեպքում հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցներից հանդիպում են միայն ակրոստատիկ և ամֆիկլինետիկ տիպերը. հմմտ. ակրոստատիկ II՝ հ.-ե. ներկա եգ. III դ. \*stéu-ti «գովում է», հոգ. III դ. \*stéu-ṛti, ամֆիկլինետիկ՝ հ.-ե. ներկա եգ. III դ. \*g<sup>wh</sup>-én-ti «հարվածում է, սպանում է», հոգ. III դ. g<sup>wh</sup>-énti և այլն<sup>3</sup>:

Հ.-ե. շեշտաձայնդարձային հերթագայությունները ցեղակից լեզուներում համեմատաբար լավ պահպանվել են հիստերոկլինետիկ և ամֆիկլինետիկ հարացույցների դեպքում, իսկ ակրոստատիկ, պրոտերոկլինետիկ և հոլոկլինետիկ հարացույցների սկզբնական դրությունը մեծ մասամբ մթազնել է հետագա համաբանական փոփոխությունների հետևանքով: Այսպես, հնդեվրոպական միասնության ուշ շրջանից սկսած՝ ակրոստատիկ արմատական հիմքերը ամֆիկլինետիկ տիպին, իսկ ածանցավոր հիմքերը հոլոկլինետիկ տիպին անցնելու միտում են ցուցաբերել՝ թույլ ձևերում շեշտը տեղափոխելով վերջավորության վրա և, ըստ այդմ, եգ. սեռ. զրո աստիճանի –s վերջավորությունը փոխարինելով լիաձայն աստիճանի –és-ով: Իսկ արմատի լիաձայն աստիճանը փոխարինվել է զրո աստիճանով, եթե ակրոստատիկ հիմքի արմատն ունեցել է –éR- կամ –éRT- կառուցվածք (R = ձայնորդ, T = պայթական բաղաձայն), մինչդեռ –éT- կամ –RéT- կառուցվածքի դեպքում արմատը պահպանվել է լիաձայն աստիճանի ձևով. օրինակ՝ հ.-ե. եգ. հայց.

<sup>1</sup> Տե՛ս **Schindler J.**, L'Apophonie des noms-racines..., p. 31-38, նաև՝ **Schindler J.**, Bemerkungen zur Herkunft der idg. Diphthongstämme und zu der Eigentümlichkeiten ihrer Kasusformen. // Die Sprache, 1973, 19, S. 157, **Mayrhofer M.**, Etymologisches Wörterbuch des Altindoarischen, Bd. I, Heidelberg, 1992, S. 478-480, 697, 750-752, Bd. II, Heidelberg, 1996, S. 19-20, **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 346-348:

<sup>2</sup> Տե՛ս նաև **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 351-352:

<sup>3</sup> Տե՛ս Lexikon der Indogermanischen Verben..., S. 14, 218, 600, **Герценберг Л. Г.**, նշվ. աշխ., էջ 44, 46, 48: Որոշ հետազոտողներ վերականգնում են հ.-ե. նաև ակրոստատիկ I տիպի (ó/é հերթագայությամբ) բայական հարացույց (տե՛ս **Jasanoff J. H.**, նշվ. աշխ. էջ 64-72):

\*dóm-դ > \*dóm «տուն» (հմմտ. հայ. տուն, հուն. dō «տուն»), հ.-ե. եզ. սեռ. \*dém-s (հմմտ. \*dém-s pótis «տանտեր» > հ. հնդ. dām-pati-, վաղ ավ. dōng patōiṣ, հուն. despótēs «տեր») >> \*dṃ-és (հմմտ. հայ. եզ. սեռ. տան)<sup>1</sup>; հ.-ե. եզ. հայց. \*pód-դ «ոտք» (հմմտ. հուն. եզ. հայց. pód-a, հ. հնդ. pād-am «ոտք», հ. հայ. եզ. ուղղ.-հայց. nún), հ.-ե. եզ. սեռ. \*péd-s >> \*ped-és (հմմտ. հ. հնդ. եզ. սեռ. pad-ás, լատ. ped-is «ոտք»): Որոշ ակրոստատիկ հիմքեր էլ դարձել են պրոտերոկլինետիկ. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*dór-u «ծառ, փայտ» (հմմտ. հ. հնդ. dāru, ուշ ավ. dāru, հուն. dōru, իեթ. tāru «փայտ»), հ.-ե. եզ. սեռ. \*dér-u-s >> \*dr-éu-s (հմմտ. հ. հնդ. եզ. սեռ. drós, ուշ ավ. draoś «փայտ») և այլն<sup>2</sup>: Իսկ պրոտերոկլինետիկ և հոլոկլինետիկ հարացույցներում ձայնդարձը համեմատաբար լավ պահպանվել է ածանցի և վերջավորության պարագայում (իհարկե, ածանցի լիաձայն աստիճանի ընդհանրացման մասնակի միտումով), մինչդեռ արմատական ձայնավորի հերթագայությունը մեծ մասամբ վերացել է լիաձայն աստիճանի կամ զրո աստիճանի ընդհանրացմամբ: Միաժամանակ գործել է շարժական շեշտը արմատի կամ ածանցի կայուն շեշտով փոխարինելու ընդհանուր միտում, որը գրեթե համատարած բնույթ է կրել նախկին պրոտերոկլինետիկ հիմքերի դեպքում. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. \*ménti-s «միտք» >> \*mṃtí-s (թույլ ձևերի շեշտի դիրքի և արմատական զրո աստիճանի ընդհանրացմամբ) > հ. հնդ. matí-s, հ.-ե. եզ. սեռ. \*mṃtí-s > հ. հնդ. maté-s «մտք»<sup>3</sup>, հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*mén-s >> \*mén-es (ածանցի լիաձայն աստիճանի ընդհանրացմամբ) > \*mén-os «միտք, ոգի» (հմմտ. հուն. ménos, հ. հնդ. mánas «ոգի, խիզախություն, միտք»), հ.-ե. եզ. սեռ. \*mn-és-s >> \*men-és-os (արմատական լիաձայն աստիճանի ընդհանրացմամբ) >> \*mén-es-os (հարացույցում արմատական շեշտի կայունացմամբ) (հմմտ. հուն. եզ. սեռ. méneos, հ. հնդ. mánasas) և այլն<sup>4</sup>: Իսկ որոշ պրոտերոկլինետիկ հիմքեր թույլ ձևերում համաբանությամբ նմանվել են հոլոկլինետիկ հիմքերին, ըստ այդմ՝ հիմքակազմ ածանցը հանդես է գալիս զրո աստիճանի, իսկ եզակի սեռականի վերջավորությունը՝ լիաձայն աստիճանի ձայնավորումով, թեև շեշտը հաճախ դարձել է կայուն-արմատական. հմմտ. հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*h₁néh₃-mṃ (հմմտ.

<sup>1</sup> > նշանը ցույց է տալիս օրինաչափ հնչունական զարգացումները, իսկ >> նշանը՝ ձևաբանական-համաբանական զարգացումները:

<sup>2</sup> Տե՛ս **Schindler J.**, L'Apophonie des noms-racines..., p. 32-36, **Schindler J.**, L'Apophonie des thèmes..., p. 6-7, նաև՝ **Fortson B. W. IV**, նշվ. աշխ., էջ 108-109, **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 350, 343:

<sup>3</sup> Տե՛ս **Pedersen H.**, Études lituaniennes, p. 21 et suiv., **Mayrhofer M.**, Etymologisches Wörterbuch..., Bd. II, S. 296, **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 342-343:

<sup>4</sup> Հմմտ. **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme..., S. 264-266, **Clackson J.**, նշվ. աշխ., էջ 82, **Mayrhofer M.**, Etymologisches Wörterbuch..., Bd. II, S. 308, **Kloekhorst A.**, Indo-European nominal ablaut patterns: The Anatolian evidence. // Indo-European Accent and Ablaut, ed. by G. Keidana, P. Widmer and Th. Olander, Copenhagen: Museum Tusulanum Press, 2013, p. 120-121:

h. հնդ. *nāma*, ուշ ավ. *naṃa*, լատ. *nōmen* «անուն», հայ. *անուն* (< *\*անումն*՝ *-մն* > *-ն* անցմամբ), հ.-ե. եզ. սեռ. *\*h<sub>1</sub>neh<sub>3</sub>-mén-s* >> *\*h<sub>1</sub>neh<sub>3</sub>-mn-es/-os* > խեթ. *lāmnas*, հ. հնդ. *nāmnas* «անվան» և այլն<sup>1</sup>:

Հնդեվրոպական շեշտաձայնդարձային հարացույցների վերը նկարագրված համակարգից զգալիորեն տարբերվում է Ռ. Բեքեսի առաջարկված տարբերակը, որը հայտնի է որպես շեշտաձայնդարձային հարացույցների լեյդենյան համակարգ: Ռ. Բեքեսը արմատական հիմքերի դեպքում տարբերակում է հարացույցային երկու տիպ՝ ստատիկ և հիստերոդինամիկ (կամ պարզապես՝ շարժական ‘mobile’). հիստերոդինամիկ կամ շարժական հարացույցը մասամբ համապատասխանում է վերը դիտարկված ամֆիկինետիկ տիպին (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *\*h<sub>3</sub>b<sup>h</sup>r<sup>é</sup>uH-s* «հոնք», եզ. հայց. *\*h<sub>3</sub>b<sup>h</sup>r<sup>é</sup>uH-m*, եզ. սեռ. *\*h<sub>3</sub>b<sup>h</sup>ruH-ós*), բայց որոշ հիմքերի դեպքում եզակի ուղղականը բնութագրվում է արմատական *ó* ձայնավորով, ի տարբերություն եզակի հայցականի, որը բոլոր դեպքերում ունենում է *é* ձայնավոր (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *\*sóm* «մեկ», եզ. հայց. *\*sém-m*, եզ. սեռ. *\*sm-ós*): Իսկ արմատական ստատիկ հիմքերը շեշտաձայնդարձային հերթագայությամբ հիշեցնում են են ակրոստատիկ I տիպը՝ բացառությամբ եզ. հայց. հոլովածի, որը թույլ ձևերի հետ միասին պարունակում է արմատի *é* լիաձայն աստիճան (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *\*pód(s)* «ոտք», եզ. հայց. *\*péd-m*, եզ. սեռ. *\*péd-s*)<sup>2</sup>: Ածանցավոր հիմքերի դեպքում վերականգնվում է հարացույցային երեք հիմնական տիպ՝ ստատիկ, պրոտերոդինամիկ և հիստերոդինամիկ: Պրոտերոդինամիկ տիպը համապատասխանում է շինդլերյան համակարգի պրոտերոդինետիկ տիպին: Ստատիկ հարացույցը ածանցավոր հիմքերի դեպքում բնութագրվում է ոչ միայն արմատական կայուն շեշտով, այլև ձայնդարձի բացակայությամբ՝ ուժեղ ձևեր *R(é) + S(ø) + D(ø)*, թույլ ձևեր *R(é) + S(ø) + D(ø)* բանաձևի համաձայն (հմմտ. հ.-ե. եզ. ուղղ. *\*méh<sub>2</sub>-tr* «մայր», եզ. հայց. *\*méh<sub>2</sub>-tr-m*, եզ. սեռ. *\*méh<sub>2</sub>-tr-s*), թեև Ռ. Բեքեսը սկզբունքորեն չի առարկում հ.-ե. եզ. ուղղ.-հայց. *\*gón-u* «ծունկ», եզ. սեռ. *\*gón-u-s* տիպի վերականգնման դեմ<sup>3</sup>: Հիստերոդինամիկ տիպը ներառում է չորս ենթատիպ, որոնցից չորրորդը համապատասխանում է շինդլերյան համակարգի հիստերոդինետիկ տիպին, երրորդը՝ հոլոկինետիկ տիպին: Երկրորդ ենթատիպը հոլոկինետիկ տիպից տարբերվում է միայն նրանով, որ եզակի հայցականի հիմքը շեշտաձայնդարձային հերթագայության տեսանկյունից համընկնում է ոչ թե եզակի ուղղականին, այլ եզակի ներգոյականին՝ եզ. ուղղ. *CéC-ōC*, եզ. հայց. *CC-éC-m*, եզ. սեռ. *CC-C-és/ós*, եզ. ներգ. *CC-éC*, այսինքն՝ եզ. ուղղ. *R(é) + S(ō) + D(ø)*, եզ. հայց. *R(ø) +*

<sup>1</sup> Տե՛ս **Schindler J.**, Zum Ablaut der neutralen s-Stämme..., S. 263-264, **Meier-Brügger M.**, նշվ. աշխ., էջ 344:

<sup>2</sup> Տե՛ս **Beekes R. S. P.**, նշվ. աշխ., էջ 208-209:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 190- 191, 208:



S(é) + D(ø), եգ. սեռ. R(ø) + S(ø) + D(é/ó), եգ. ներգ. R(ø) + S(é) + D(ø) քանաձևի համաձայն: Իսկ առաջին ենթատիպը երկրորդ ենթատիպից տարբերվում է եզակի ուղղականում ածանցի գրո աստիճանի ձայնավորմամբ՝ եգ. ուղղ. Céc-C, եգ. հայց. CC-éc-m, եգ. սեռ. CC-C-és/ós, եգ. ներգ. CC-éc: Ինչ վերաբերում է չորս ենթատիպերի պատմական փոխհարաբերությանը, Ռ. Բեքեսը ենթադրում է, որ սկզբնական հարացույցը բնութագրվել է առաջին ենթատիպի շեշտաձայնդարձային հերթագայությամբ, իսկ երկրորդ, երրորդ և չորրորդ ենթատիպերը առաջին ենթատիպի հետագա հնչյունական և համաբանական-ձևաբանական փոփոխությունների արդյունք են<sup>1</sup>: Ա. Կլոքհորստը, հետևողականորեն զարգացնելով Ռ. Բեքեսի այդ գաղափարը, գտնում է, որ շեշտաձայնդարձային հարացույցների լեյդենյան և էռլանգենյան (շինդլերյան) համակարգերը իրականում ոչ թե հակասում, այլ լրացնում են միմյանց. լեյդենյան համակարգն արտացոլում է հնդեվրոպական նախալեզվի զարգացման համեմատաբար վաղ շրջանը, իսկ էռլանգենյան համակարգը՝ ավելի ուշ շրջանը: Ըստ այդմ՝ վաղ շրջանի համար վերականգնվում է շեշտաձայնդարձային հարացույցների երեք տիպ. 1) ստատիկ՝ եգ. ուղղ. Céc-C, եգ. հայց. Céc-C(-m), եգ. սեռ. Céc-C-s, եգ. ներգ. Céc-C, 2) պրոտերոդինամիկ՝ եգ. ուղղ. Céc-C, եգ. հայց. Céc-C(-m), եգ. սեռ. CC-éc-s, եգ. ներգ. CC-éc, 3) հիստերոդինամիկ՝ եգ. ուղղ. Céc-C, եգ. հայց. CC-éc(-m), եգ. սեռ. CC-C-és, եգ. ներգ. CC-éc: Հետագայում հիստերոդինամիկ հարացույցը որոշ դեպքերում պահպանվել է սկզբնական տեսքով, իսկ ընդհանուր առմամբ համաբանական ձևափոխության է ենթարկվել՝ ծնունդ տալով էռլանգենյան հիստերոդինետիկ և հոլովինետիկ հարացույցներին<sup>2</sup>:

Հարկ է նշել, որ լեյդենյան համակարգում եզակի ուղղականի և հայցականի հիմքերի շեշտաձայնդարձային անհամապատասխանությունը, որը ենթադրվում է հիստերոդինամիկ (եգ. ուղղ. Céc-C, եգ. հայց. CC-éc(-m)) և որոշ արմատական ստատիկ (եգ. ուղղ. CōC(-s), եգ. հայց. Céc(-m)) հարացույցների պարագայում, հակասում է հնդեվրոպական ձևաբանության ընդհանուր սկզբունքին, որի համաձայն՝ հարացույցի ներքում ուժեղ ձևերը սովորաբար բնութագրվում են հոլովական հիմքի շեշտաձայնդարձային նույն օրինաչափությամբ<sup>3</sup>: Թերևս դա է հիմնական պատճառներից մեկը, որ շեշտաձայնդարձային հարացույցների լեյդենյան համակարգը Լեյդենից դուրս լեզվաբանների շրջանում ընդհանուր ճանաչման չի արժանացել:

Արդի հնդեվրոպաբանության մեջ առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցների տարբեր տիպերը

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 190-191, 214-215, 176-177, հմմտ. նաև՝ **Kloekhorst A.**, նշվ. աշխ., էջ 115-121 և ծան. 36:

<sup>2</sup> Տե՛ս **Kloekhorst A.**, նշվ. աշխ., էջ 124-126, նաև էջ 121 ծան. 36:

<sup>3</sup> Հմմտ. **Schindler J.**, Die idg. Wörter für “Vogel” und “Ei” // Die Sprache, 1969, 15, S. 155:

ներքին բառակազմության փոխհարաբերության մեջ են գտնվում միմյանց նկատմամբ: Ըստ այդ տեսության՝ հնդեվրոպական նախալեզվում բառը կարող էր շեշտաձայնդարձային մի հարացույցից անցնել մեկ այլ հարացույցի՝ արտահայտելով նոր իմաստ: Եվ քանի որ տվյալ դեպքում արտահայտության պլանում փոխվում է բառի միայն շեշտաձայնդարձային հերթագայության տիպը, ուստի այդ գործընթացն անվանվում է ներքին բառակազմություն (internal derivation)<sup>1</sup>: Ներքին բառակազմության երևույթը չպետք է շփոթել հարացույցի հետագա համաբանական փոփոխության վերը նկարագրված առանձին դեպքերի հետ (հ.-ե. եզ. հայց. \*dóm-դ > \*dóm «տուն», եզ. սեռ. \*dém-s >> \*dṃ-és «տան»; հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*dór-ու «ծառ, փայտ», եզ. սեռ. \*dér-u-s >> \*dr-éu-s «ծառի, փայտի» և այլն). ներքին բառակազմության դեպքում բառի՝ հարացույցային մի տիպից մեկ այլ տիպին անցումը պայմանավորված է նոր իմաստ արտահայտելու պահանջով և ընդհանուր առմամբ բնութագրվում է երեք հիմնական գործառույթներով՝ 1) անշունչ (չեզոք) սեռի գոյականից կազմվում է հավաքական անուն, 2) գոյականից կազմվում է ածական՝ «տվյալ գոյականի ցույց տված առարկան կամ երևույթն ունեցող, կրող, բերող» նշանակությամբ (հաճախ ածականի հետագա գոյականացման միտումով), 3) անշունչ սեռի գոյականից կազմվում է շնչավոր սեռի անձնավորված գոյական: Իսկ արտահայտության պլանում երկու հիմնական օրինաչափություն է գործում. 1) շեշտաձայնդարձային մի հարացույցից մեկ այլ հարացույցին անցումը տեղի է ունենում որոշակի ենթաստորակարգային հարաբերության սկզբունքով՝ ակրոստատիկ  $\Rightarrow$  պրոտերոկլինետիկ, պրոտերոկլինետիկ  $\Rightarrow$  հիստերոկլինետիկ, հիստերոկլինետիկ  $\Rightarrow$  հոլոկլինետիկ, 2) անմիջականորեն հոլոկլինետիկ հարացույցին կարող են անցնել մնացած բոլոր հարացույցային տիպերին պատկանող բառերը<sup>2</sup>: Ասվածը կարելի է լուսաբանել հետևյալ օրինակներով.

**ակրոստատիկ**՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*uód-դ «ջուր» (հմմտ. իւեթ. wadar, հ. վ. գերմ. wazzar «ջուր»), հ.-ե. եզ. սեռ. \*uéd-դ-s (հմմտ. իւեթ. wedenas «ջրի» < \* uéd-en-s << \*uéd-դ-s)  $\Rightarrow$  **հոլոկլինետիկ**՝ հ.-ե. հավաքական հոգ. \*uéd-ōr (հմմտ. իւեթ. հոգ. widār «ջրեր», հուն. húdōr «ջուր»). սկզբնական հավաքական ձևը իւեթերենում վերաիմաստավորվել է որպես հոգնակի, իսկ հունարենում՝ որպես եզակի. հունարենում նաև ընդհանրացել է թույլ ձևերի արմատական զրո աստիճանը<sup>3</sup>,

<sup>1</sup> Տե՛ս **Watkins C.**, Notes on the Plural Formations of the Hittite Neuters. // *Investigationes Philologicae et Comparativae. Gedenkschrift für Heinz Kronasser*, hrsg. von E. Neu, Wiesbaden, 1982, S. 261, **Nussbaum A.**, նշվ. աշխ., էջ 147 և հջ., **Schaffner S.**, նշվ. աշխ., էջ 585 ծան. 5, **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 27-32, 62-70:

<sup>2</sup> Տե՛ս **Widmer P.**, նշվ. աշխ., էջ 27-32, 62-70, **Николаев А. С.**, նշվ. աշխ., էջ 298-299:

<sup>3</sup> Տե՛ս **Schindler J.**, L'Aphonomie des thèmes..., p. 3-7, նաև՝ **Mayrhofer M.**, *Etymologisches Wörterbuch...*, Bd. I, S. 215:

**ակրոստատիկ**՝ հ.-ե. եզ. ուղղ. \*krót-u-s, եզ. սեռ. \*krét-u-s «մտավոր կարողություն, ուժ» (հմմտ. հ. հնդ. krátus «ուժ») ⇒ **պրոտերոկլինետիկ**՝ հ.-ե. եզ. ուղղ. \*krét-u-s, եզ. սեռ. \*krt-éu-s «մտավոր ուժ ունեցող, ուժեղ» (հմմտ. հուն. kratús «ուժեղ») և այլն<sup>1</sup>,

**պրոտերոկլինետիկ**՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. (\*kérh<sub>1</sub>s >>) \*kérh<sub>1</sub>os «աճ, աճելը, զարգացում» (հմմտ. հ. հայ. *սէր*, եզ. սեռ. *սէրոյ* «ցեղ, ծագում, սերունդ») ⇒ **հիստերոկլինետիկ**՝ եզ. ուղղ. (\*k<sub>1</sub>rh<sub>1</sub>és >>) \*k<sub>1</sub>erh<sub>1</sub>és (հմմտ. լատ. Cerēs «աճի և պտղաբերության աստվածուհին»), որտեղ արմատի լիաձայն աստիճանը ընդհանրացել է պրոտերոկլինետիկ հիմքի համաբանությամբ<sup>2</sup>. հաճախ պրոտերոկլինետիկ հիմքերը հիստերոկլինետիկ տիպին են անցնում՝ հանդես գալով որպես բարդության երկրորդ բաղադրիչ<sup>3</sup>. հմմտ. հուն. ménos «ոգի, միտք» ⇒ eu-menés «բարյացակամ» և այլն,

**պրոտերոկլինետիկ**՝ հ.-ե. եզ. ուղղ.-հայց. \*séh<sub>1</sub>-mō «սերմ, սերմանում» (հմմտ. լատ. sēmen «սերմ») ⇒ **հոլոկլինետիկ**՝ ուժեղ ձևերի հիմք \*séh<sub>1</sub>-mon-, եզ. ուղղ. \*séh<sub>1</sub>-mōn (հմմտ. լատ. Sēmō «սերմի աստվածը») և այլն<sup>4</sup>:

Հիստերոկլինետիկ հիմքերի անցումը հոլոկլինետիկ տիպին հիմնականում վկայված է նրանց՝ որպես բարդության երկրորդ բաղադրիչ գործածությամբ. հմմտ. հուն. եզ. ուղղ. patér «հայր» ⇒ eu-pátōr «լավ, բարի հայր ունեցող», հ. հնդ. հոգ. ուղղ. pitáras «հայրեր» (-táras < \*-tér-es) ⇒ tvátpitáras «քեզ որպես հայր ունեցողները» (-táras < \*-tor-es, բաց վանկում հ.-ե. \*o > հ. հնդ. ā հնչյունական անցմամբ<sup>5</sup>); հ. հայ. *անձն*, հոգ. ուղղ. *անձինք* (-ին-ք < \*-én-es) ⇒ *միանձն*, հոգ. ուղղ. *միանձունք* (-ուն-ք < \*-on-es) և այլն<sup>6</sup>:

Արդ, շեշտաձայնդարձային հարացույցների տեսությունը և ներքին բառակազմության տեսությունը հնդեվրոպական ձևաբանության և բառակազմության հնագույն օրինաչափությունների վերհանմամբ հնարավորություն են տալիս լուսաբանելու ցեղակից լեզուներում վկայված բազմաթիվ ծագումնային ընդհանրությունների իրական փոխհարաբերությունը, որն ավանդական հնդեվրոպաբանության շրջանակներում մնում էր անբացատրելի: Օրինակ, հ.-ե. \*ǵonu-/\*ǵenu- «ծունկ», \*nok<sup>w</sup>-t/\*nek<sup>w</sup>-t- «գիշեր, երեկո», \*dom-/\*dem- «տուն» և նման ձևերը, որոնք ավանդական հնդեվրոպաբանության տեսանկյունից պարզապես նշվում էին իբրև տարբերակային նախաձևեր, արդի հնդեվրոպաբանության մեջ դիտվում են որպես նույն հարացույցի (ակրոստատիկ I տիպի) ուժեղ և թույլ հիմքային ձևեր: Իսկ, ասենք, հ. հնդ.

<sup>1</sup> Տե՛ս Nussbaum A., նշվ. աշխ., էջ 147, Widmer P., նշվ. աշխ., էջ 65, 96-97:

<sup>2</sup> Տե՛ս Schaffner S., նշվ. աշխ., էջ 586:

<sup>3</sup> Տե՛ս Widmer P., նշվ. աշխ., էջ 66:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 32, 69:

<sup>5</sup> Տե՛ս Meïe A., նշվ. աշխ., էջ 311-312, Mayrhofer M., Indogermanische Grammatik, Bd. I, 2. Halbband: Lautlehre [Segmentale Phonologie des Indogermanischen], Heidelberg, 1986, S. 146-148:

<sup>6</sup> Տե՛ս Widmer P., նշվ. աշխ., էջ 70, նաև՝ Harðarson J. A., նշվ. աշխ., էջ 221, ծան. 38:

krátus «ուժ» և հուն. kratús «ուժեղ» ձևերի կամ հուն. ménos «ոգի, միտք» և eu-menés «բարյացակամ», patér «հայր» և eu-pátōr «լավ, բարի հայր ունեցող», հ. հայ. *անձն*, հոգ. ուղղ. *անձինք* և *մի-անձն*, հոգ. ուղղ. *մի-անձունք* պարզ և բաղադրյալ ձևերի շեշտաձայնդարձային փոխհարաբերությունը լիովին հասկանալի է դառնում ներքին բառակազմության տեսության շնորհիվ:

Այսպիսով, եթե փորձենք ի մի բերել վերը կատարված քննության արդյունքները, ապա հ.-ե. շեշտաձայնդարձային հերթագայությունների ըմբռնման հարցում ավանդական հնդեվրոպաբանության և արդի հնդեվրոպաբանության մոտեցումային առանձնահատկությունները կարելի է ընդհանրացված բնութագրել հետևյալ կերպ: Ըստ ավանդական մոտեցման՝ հ.-ե. բոլոր անբուն հիմքերի հոլովման և խոնարհման հարացույցների սկզբնապես բնորոշ է եղել շարժական շեշտ և, դրան համապատասխան, ձայնդարձի լիաձայն և զրո աստիճանների հերթագայություն (ուժեղ ձևերում հիմքը հանդես է եկել լիաձայն աստիճանի, իսկ թույլ ձևերում՝ զրո աստիճանի ձայնավորմամբ), այսինքն՝ գործել է շեշտաձայնդարձային հերթագայության մեկ ընդհանուր օրինաչափություն: Մինչդեռ արդի հնդեվրոպաբանության շեշտաձայնդարձային հարացույցների տեսության համաձայն՝ հ.-ե. անբուն հիմքերի համար շեշտաձայնդարձային հերթագայությունների մի քանի տիպեր են վերականգնվում, որոնք միմյանցից տարբերվում են, մի կողմից, հարացույցի ներսում շեշտի կայուն կամ շարժական բնույթով, մյուս կողմից՝ ուժեղ և թույլ ձևերում շեշտի տեղաշարժի և ձայնդարձի օրինաչափություններով: Ըստ այդմ տարբերակվում են արմատական կայուն շեշտ ունեցող (ակրոստատիկ) հարացույցներ և շարժական շեշտով բնութագրվող (կինետիկ) հարացույցներ՝ ամֆիկինետիկ, պրոտերոկինետիկ, հիստերոկինետիկ և հոլոկինետիկ ենթատիպերով: Հատկանշական է նաև, որ ակրոստատիկ հարացույցների թույլ ձևերում հիմքը հանդես է գալիս ոչ թե զրո աստիճանի, այլ e լիաձայն աստիճանի ձայնավորմամբ: Շեշտաձայնդարձային հերթագայությունների ըմբռնման հարցում արդի հնդեվրոպաբանության մյուս կարևոր ձեռքբերումը ներքին բառակազմության տեսությունն է, ըստ որի՝ հ.-ե. շեշտաձայնդարձային հարացույցների տարբեր տիպերը բառակազմական փոխհարաբերության մեջ են գտնվում միմյանց նկատմամբ, այսինքն՝ հ.-ե. բառը, շեշտաձայնդարձային մի հարացույցից անցնելով մեկ այլ հարացույցի, արտահայտում էր նոր իմաստ:

**Саргис Аветян – Внутрепарадигматическая роль акцентно-аблаутных чередований с точки зрения традиционной и современной индоевропейстики**

Статья посвящена рассмотрению характерных особенностей подходов традиционной и современной индоевропейстики в понимании акцентно-аблаутных закономерностей и их внутрепарадигматической роли в праиндоевропейском. Согласно традиционной точке зрения все праиндоевропейские атематические основы первоначально характеризовались одной общей закономерностью акцентно-аблаутного чередования: как в именных, так и в глагольных парадигмах сильные формы имели ударение на основе и полную огласовку основы, слабые же формы имели ударение на окончании и редуцированную (нулевую) огласовку основы. Однако имеются много отклонений от указанного принципа, которые не получают удовлетворительного объяснения в рамках традиционной теории. В современной индоевропейстике общепринято, что на самом деле есть несколько разных акцентно-аблаутных парадигм (акцентно-аблаутных классов), обнаруживающих разные акцентно-аблаутные чередования между сильными и слабыми формами. Разные акцентно-аблаутные парадигмы находятся в деривационном взаимоотношении друг с другом: в праиндоевропейском новые существительные и прилагательные могли образоваться с помощью перемещения ударения и, тем самым, перехода основы из одного акцентно-аблаутного класса в другой.

**Sargis Avetyan - *The Inner-paradigmatic Role of Accent-Ablaut Alternations from the Viewpoint of Traditional and Modern Indo-European Linguistics***

The article is devoted to the consideration of the specific characteristics of the traditional and modern Indo-Europeanistic approaches in understanding the accent-ablaut patterns and their inner-paradigmatic role in Proto-Indo-European. According to the traditional view, all PIE athematic stems were originally characterised by a general pattern of accent-ablaut alternation: in nominal as well as in verbal paradigms the stem was in the full grade and accented in strong forms, and the accent shifted to the ending, and the unstressed stem appeared in the zero-grade in weak forms. However, there remain many deviations from the above principle which are not satisfactorily explained within the framework of the traditional theory. In modern Indo-European linguistics it is generally accepted that there are in fact a number of different accent-ablaut paradigms (accent-ablaut classes), showing different alternations between strong and weak forms. The different accent-ablaut classes in PIE stand in a derivational relationship with one another: the language could derive new nouns or adjectives simply by shifting the accent and thereby changing the stem's accent-ablaut class membership.

## ПИСЬМА Б. Б. ПИОТРОВСКОГО К М. Г. НЕРСИСЯНУ

*Ключевые слова* – Б. Б. Пиотровский, М. Г. Нерсисян, Г. Е. Арешян, Ереванский государственный университет, Мохра-блур, Шамирам, раскопки, памятник, могильник, храм, крепость

Ниже впервые публикуются письма академика АН СССР и АН АрмССР Б. Б. Пиотровского к академику АН АрмССР М. Г. Нерсисяну.

Жизнь и научная деятельность Б. Б. Пиотровского была неразрывно связана с Арменией. Будучи еще начинающим исследователем, несмотря на пристрастие к египтологии, интерес к которой у него возник еще в студенческие годы, он по совету одного из своих учителей, академика Н. Я. Марра, сосредоточил свое внимание на исследовании истории Урарту<sup>1</sup> и за короткий срок добился весьма ощутимых результатов. Начиная с 1930 г. Б. Б. Пиотровский регулярно приезжал в долгосрочные научные командировки в Армению, где вначале занимался исследованием циклопических крепостей у горы Арагац, а также урартских надписей в районе озера Севан. Однако наиболее серьезных результатов Б. Б. Пиотровский достиг при раскопках на холме Кармир-Блур, а затем и урартской крепости Арин-Берд. Приспутив к раскопкам в Кармир-Блуре в 1939 г., он их продолжал вплоть до 1971 г. Результаты своих полевых исследований он обобщил в докторской диссертации, которую защитил в 1945 г. в Академии наук АрмССР, а в 1946 г. ему была присуждена Сталинская премия второй степени в области науки и техники за книгу «История и культура Урарту».

На протяжении своей долгой жизни, которая, как и у многих его советских коллег, начиная с академика Е. В. Тарле, отнюдь не была усыпана одними розами<sup>2</sup>, Б. Б. Пиотровский поддерживал тесные научные и дружеские отношения с армянскими археологами и историками, по достоинству оценившими его научные заслуги (в 1945 г. он был избран членом-корреспондентом, а в 1968 г. – действительным членом АН АрмССР). Дружеские отношения связывали Бориса Борисовича с академиками АН АрмССР А. Р. Иоаннисяном и М. Г. Нерсисяном, о чем могу свидетельствовать исходя из моих многочисленных бесед с ним. Он высоко ценил обоих историков и приложил много усилий, чтобы способствовать избранию Абгара Рубеновича академиком АН СССР, которого в 1975 г. в разговоре со мной охарактеризовал как «украшение нашей (советской – В. П.) Академии»<sup>3</sup>. В декабре 1981 г., когда будучи исполнителем обязанностей академика-

---

<sup>1</sup> Зуев В. Ю., Борис Борисович Пиотровский (1908-1990) // Портреты историков. Время и судьбы. Т. 3. Древний мир и Средние века, М., 2004, с. 246.

<sup>2</sup> См. об этом: там же, с. 249-250, 255-259.

<sup>3</sup> См. о нем: Погосян В. А., В окружении историков, Ереван, 2011, с. 95-111.

секретаря отделения истории АН СССР Борис Борисович проводил выборы, очередная неудача А. Р. Иоаннисяна привела его в негодование. Говоря со мной об этом с дрожащим от волнения голосом, он весьма нелестно отзывался о своих голосовавших коллегах.

В личном архиве М. Г. Нерсисяна, хранящемся в Национальном архиве Армении, мне удалось обнаружить четыре письма Б. Б. Пиотровского (ф. 818, оп. 1, д. 427), адресованных Мкртичу Гегамовичу в бытность его ректором Ереванского государственного университета. Эти письма являются неопровержимым доказательством трепетного отношения Бориса Борисовича к археологическим изысканиям, присущего ему чувства высокой ответственности перед избранной профессией, а также бережного отношения к начинающим армянским исследователям. Они свидетельствуют также о его глубочайшей принципиальности в науке, перед которой его личные дружеские отношения с армянскими коллегами при необходимости отходили на второй план.

При подготовке этих писем к печати мы сочли необходимым сохранить орфографию оригинала.

*ВАРУЖАН ПОГОСЯН*

## 1

Ленинград  
22-ХІІ-[19]67 [г.]

Дорогой  
Мкртич Гегамович,

Ко мне приезжал Сандро Сардарян с просьбой дать отзыв об его новой книге<sup>1</sup>. Я имел с ним долгий и откровенный разговор и настоятельно советовал эту книгу не продвигать. Она писалась без руководства и списывалась из разных книг, с игнорированием авторов. Советчики у него были плохие, а сам он не понял того, что делает.

Я ему посоветовал заниматься подготовкой книги по его раскопкам, с учетом всего того, что делали его товарищи по работе.

Прошу Вас убедить его не настаивать на защите его книги, ничего хорошего не получится. Поговорите с ним, его надо убедить, а Вас он очень уважает.

Очень огарчен, что так получилось, но лишь правильное поведение Сандро может потушить пожар. Ему надо решительно порвать со злыми советчиками.

Всего хорошего.

Сердечный привет Вам и всем Вашим от Рипсик<sup>2</sup>.

Ваш [подпись]

Л. 28.

---

<sup>1</sup> См.: Сардарян С. А., Первобытное общество в Армении, Ереван, 1967 (на армянском языке).

<sup>2</sup> Речь идет о супруге Б. Б. Пиотровского Рипсимэ Микаэловне Джанполадян-Пиотровской (1918-2004).

Ереван  
3-VIII-[19]71 [г.]

Глубокоуважаемый  
Мкртич Гегамович,  
раскопки на Мохра-блуре, которые проводит Г. Е. Арешян, при моей консультации, дали уже интересные результаты.

Впервые проведены точные стратиграфические наблюдения, позволяющие распределить материал по времени.

Статья Г. Е. Арешяна отражает результаты работ 1970 г. и поэтому я рекомендую ее к печати в Вестнике Ерев[анского] Гос[ударственного] Ун[иверсите]та или же в Историко-филол[огическом] журнале (где можно скорее опубликовать)<sup>1</sup>.

На армянском языке краткая информация печатается в Бюллетене Ерев[анского] Гос[ударственного] Ун[иверсите]та<sup>2</sup>.

Всего хорошего.

[подпись]

Л. 29.

Ереван  
3 авг[уста] 1972 [г.]

Дорогой  
Мкртич Гегамович,  
очень сожалею, что не смог с Вами встретиться в Ереване.  
Как Вы помните, я нарочно не вмешивался в улаживание конфликта между Сардаряном и Гр. Арешяном. Но я снова могу сказать, что аспирант Гр. Арешян ведет раскопки на должном методическом уровне.

Работы на Мохраблуре дали великолепные результаты, открыто каменное монументальное сооружение (храм), относящийся, примерно, к 2700 гг. до н. э. Это выдающееся открытие.

Средства, отпущенные Мин[истерст]вом мясо-молочной промышленности окончены, добавку можно ожидать, но не скоро. Поэтому, я Вас очень прошу ознакомиться с результатами работ на Мохраблуре и помочь продолжению раскопок.

---

<sup>1</sup> См.: Арешян Г. Е., Материалы из раскопок Мохраблур 1970 года // «Вестник Ереванского университета», 1972, № 1, с. 253-258.

<sup>2</sup> См.: Арешян Г., Забытые поселения на берегу Аракса // «Ереванский университет», 1971, № 11, с. 28-31 (на армянском языке).



Этот объект жалко отдавать комунибудь, после успешного начала экспедицией Ерев[анского] Гос[ударственного] Ун[иверсите]та.

Всего хорошего.

[подпись]

Л. 30.

4

Ленинград  
4 мая 1976 г.

Глубокоуважаемый

Мкртич Гегамович,

в прошлом году я с Г. Е. Арешяном посетил разрушившийся работами «Сельхозтехники» древний памятник Шамирам (в Аштаракском районе, около сел. Аруч). Там громадное городище XI-IX вв. до н. э. (доурартского времени) и могильник, занимающий очень большую территорию. На городище много развалин древних построек, сохранивших свои стены, и могильник представляет совершенно исключительный интерес тем, что он сохранил планировку, по которой можно изучать систему могильников того времени. Сами могилы имеют каменные ограждения и древние скульптурные украшения (грубые статуи в рост человека).

Работы 1975 г. дали хорошие результаты.

В 1976 г. Г. Е. Арешян будет работать на поселении Мохра-блур (Эчмиадзинского р[айо]на), где основным заданием будет консервация каменной постройки (храма), проводимая Госстроем АрмССР. Учитывая громадный интерес Шамирам и необходимость проведения дальнейших на нем работ, я прошу Вас разрешить Г. Е. Арешяну в 1976 г. совместить работы на Мохра-блуре, на которые Университетом отпущены договорные средства, с работами в Шамирам (в счет средств проблемной лаборатории Арменоведения).

Я вообще против распыления работ по разным темам, но в данном случае совмещение этих двух тем представляется мне целесообразным, особенно при учете необходимости сохранения крепости и могильника в Шамирам, учитывая также и их значительный интерес в археологическом отношении.

[подпись]

(Борис Борисович Пиотровский)

Л. 31-32.

### **Վարուժան Պողոսյան – Բ. Բ. Պիոտրովսկու նամակները Մ. Գ. Ներսիսյանին**

Հրապարակվում են ԽՍՀՄ ԳԱ և ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, Էրմիտաժի տնօրեն Բորիս Պիոտրովսկու՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1966-1977 թթ. ԵՊՀ ռեկտոր Մկրտիչ Ներսիսյանին հղած անտիպ նամակները, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվի վերջինիս անձնական ֆոնդում: Այդ նամակները հայ գործընկերների,

մասնավորապես երիտասարդ գիտաշխատողների հանդեպ Բ. Պիոտրովսկու տա-  
ծած անթաքույց հարգալից վերաբերմունքի անհերքելի ապացույցներն են: Դրանք  
միաժամանակ վկայում են խորհրդային մեծ հնագետի՝ գիտության ասպարեզում  
սկզբունքայնության, իր մասնագիտության հանդեպ պատասխանատվության  
բարձր զգացումի, ինչպես նաև Հայաստանում հնագիտական աշխատանքների կազ-  
մակերպման բնագավառում նրա մեծ դերի մասին:

**Varoujean Poghosyan – *Letters of B. B. Piotrovsky to M. G. Nersisyan***

The publication includes the unpublished letters of Boris Piotrovsky, member of the Academy of Sciences of the USSR and the Academy of Sciences of the Armenian Soviet Socialist Republic, director of the Hermitage, addressed to the member of the Academy of Sciences of the Armenian Soviet Socialist Republic, rector of YSU (1966-1977) Mkrtich Nersisyan. These letters are in the private archives of the latter kept in the National Archives of Armenia. These are the irrefutable proofs of respect towards his Armenian colleagues, particularly young researchers. These letters also reveal the principles of the great Soviet archeologist in the sphere of science, the huge sense of responsibility towards his profession, as well as his role in organizing archeological works in Armenia.

---

---

## ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ

*Բանալի բառեր – Շահան Շահնուր, Բերսաբե Գրիգորյան, նամակներ, հայ գրականություն, գրողներ, գրական առնչություններ*

Հայոց ցեղասպանության ամբողջ սարսափներն ապրած, հայրենիքից արմատախիլ արված և արքորի տառապալից ուղիներով անցած հայ որբերը, հայտնվելով աշխարհի մեծ ու փոքր քաղաքներում, փորձում էին իրենց տեղը հաստատել օտար ափերում, ձևավորվում էր հայ սփյուռքը, դրա հետ նաև «սփյուռքահայ» հասկացությունը: Տարիներ անց հենց նրանց սերունդը հայ գրականությանը պարզևեց սփյուռքահայ գրողների մի շքեղ աստղաբույլ, որի կարկառուն ներկայացուցիչներից էր ֆրանսահայ գրող Շահան Շահնուրը (1903-1973):

Շահան Շահնուրը (Շահնուր Քերեսթեճյան) ծնվել է Կոստանդնուպոլսի գեղեցիկ ու հայաշատ թաղամասերից մեկում՝ Սկյուտարում, 1903 թ. օգոստոսի 3-ին: Մի քանի տարի սովորել է տեղի Մեմերճյան վարժարանում, այնուհետև տեղափոխվել Պերպերյան վարժարան, որն ավարտել է 1921 թ.: Հետագայում իր անվանը ավելացնելով վարժարանի տնօրեն Շահան Պերպերյանի անունը՝ սկսել է հանդես գալ Շահան Շահնուր անունով:

Վարժարանում ուսանելու տարիներին նա գիտելիքները հարստացրել է նաև իր մորեղբոր՝ արևմտահայ անվանի մտավորական Թեոդիկի մոտ, օգտվել ոչ միայն նրա հարուստ գրադարանից, այլև նույնքան հարուստ կենսավորձից, շփվել նրա տանը հյուրընկալվող արևմտահայ նշանավոր մշակութային գործիչների հետ:

1922 թ. նոյեմբերից Պոլսում սկսված նոր արտագաղթը Շահնուրին 1923 թ. հասցնում է Փարիզ: Այստեղ նա հանգամանորեն ուսումնասիրում է ֆրանսիացի ճանաչված գրողների գործերը, շատ բան սովորում նրանցից: Մակայն Շահնուրը ամենից առաջ իր հետ Փարիզ էր տարել արևմտահայ դասական գրականության լավագույն ավանդույթները՝ լեզվի հարստությունն ու արտահայտիչ պատկերավորությունը, բառի, խոսքի մեծ տարողությունն ու դիպուկ գործածությունը, վերլուծական մտքի խորությունն ու սեղմությունը:

Թերևս հենց սա էր այն վճռորոշ գործոնը, որը միանգամից մեծ հռչակ ու ճանաչում բերեց 25-ամյա Շահնուրին, երբ 1929 թ. հրատարակեց իր անդրանիկ գեղարվեստական երկը՝ «Նահանջ առանց երգի» վեպը: Փարիզում Շահնուրը շարունակում է հարստացնել իր գիտելիքները. 1928-1932 թթ. սովորում է Փարիզի համալսարանի գրականության ֆակուլտետում: 1933 թ.

լույս է տեսնում նրա «Հարալեզներուն դավաճանությունը» խորագրով պատմվածքների ժողովածուն:

Գրողի ինքնությունն գրելաձևն ու ոճը, հարուստ ու պատկերավոր լեզուն արժանի շարունակությունն էր մեր արևմտահայ շքեղ արձակի այն բարձր մակարդակի, որը ձևավորվել էր Գրիգոր Զոհրապի, Երվանդ Օտյանի, Ռուբեն Զարդարյանի և այլոց բեղուն գործունեությամբ:

Թե՛ վեպում և թե՛ պատմվածքներում հայրենիքից արմատախիլ եղած վտարանդու հոգու ցավի ուժով նա համարձակ նայել է ճշմարտության այքերին՝ իր հերոսների միջոցով ամբողջացնելով ինքնությունը կորցնելու վտանգի ենթակա հայի հավաքական կերպարը: Տաղանդի հոգր ուժով նա ահագանգել է սփյուռքահայի գլխին կախված ազգային ինքնամոռացման վտանգը, քանի որ շատ լավ տեսնում ու զգում էր, որ եվրոպական քաղաքակրթության կլանիչ հորձանուտում դանդաղ ու անդառնալի կորչում էր հայի տեսակը: Իր հիմնած գաղթօջախներում հայը գերմարդկային ճիգեր էր գործադրում վերագտնելու և վերստեղծելու ազգային կյանքը, պայքարում էր ուժացման համառորեն առաջ գնացող գործընթացի դեմ, որը գրողի համար խիստ ցավագին էր:

1930-ական թվականների վերջին վերոհիշյալ երկու գործերից ու հոդվածներից հետո Շահնուրը Արմեն Լյուբեն գրական կեղծանունով սկսեց տպագրվել ֆրանսերենով, թեև այդ գործերով ևս նա մնաց հայ, իր ժողովրդի ցավերով ապրող ու տառապող գրող, որը շատ արագ ճանաչում ձեռք բերեց ֆրանսերենով ընթերցողների շրջանում: 1955 թ. նրա՝ ֆրանսերենով հրատարակած «Գիշերային փոխադրություն» վերտառությամբ պատմվածքների ժողովածուն 1956 թ. արժանացավ ֆրանսիական «Ռիվարոլ» գրական մրցանակին, որը շնորհվում էր ֆրանսերենով ստեղծագործող այլազգի գրողներին:

Շահնուրի տաղանդը փայլեց ոչ միայն արձակի, այլև ֆրանսերենով հրատարակած բանաստեղծական չորս ժողովածուներում, որոնք ստեղծվեցին գրողի առողջական վիճակի հաճախակի դարձած սրացումների տարիներին («Ոչինչը որոնում» (1942), «Ծպտյալ ճամփորդը» (1946), «Սուրբ համբերություն» (1951), «Բարձրադիր դարավանդներ» (1957)):

Արդեն 1930-ական թվականների վերջից Շահան Շահնուրը տառապում էր ոսկրախտով, որի պատճառով երկար տարիներ բուժվում էր: Մակայն նրա բեղմնավոր աշխատանքը չէր ընդհատվում, և 1950-1960-ական թվականներին նա դարձել էր ֆրանսիական գրականության նշանավոր դեմքերից մեկը, իր համար ապահովել մնայուն, բարձր ու արժանի տեղ թե՛ հայ և թե՛ ֆրանսիական գրականության մեջ:

Գրողի 60-ամյակին ընդառաջ՝ 1960 թ., Հայպետհրատը պատրաստվում էր հրատարակել նրա արձակ գործերի ժողովածուն: 1959 թ. սեպտեմբերի 19-ին Հայաստանի գրողների միության առաջին քարտուղար Էդվարդ Թովիչյանը գրությամբ դիմում է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ

Անտոն Քոչինյանին և խնդրում Հայպետհրատին գումար տրամադրել անբուժելի հիվանդությամբ անկողնուն գամված և նյութական ծանր դրության մեջ գտնվող Շահնուրին հոնորար վճարելու համար, որն անմիջապես հասկացվում է:

1963 թ. մեծ շուքով նշվեց Շահնուրի ծննդյան 60-ամյակը, նրա գործերը վերահրատարակվեցին հայերենով և ֆրանսերենով, իսկ 1964 թ. ֆրանսերենով լույս տեսած «Հուր ընդ հրո» բանաստեղծությունների ընտրանին արժանացավ ֆրանսիական ակադեմիայի «Ժուֆրուա Ռենո» պետական մրցանակին:

Այս ընթացքում Շահնուրը սերտ կապեր հաստատեց հայրենիքի, հայ գրողների ու մտավորականների հետ. հատկապես տևական ու ջերմ էր նրա ու Գուրգեն Մահարու մտերմությունը:

1962 թ. հունիսի 28-ին Մահարին գրել է Շահնուրին. «Շահնուր՝ սիրելի, վեպից փոքր և վիպակից մեծ աշխատությունս, որի վրա եմ, վերնագիր չունի: Վերնագիր ր, թե՛ խորագիր, թե՛ անուն... երեքն ալ չունի: Հարուստ մարդ ես, վերնագիր մը ուղարկե: Ունեմ «թեկնածուներ». «Մատյան մահու և անմահության». շատ է ճոռոմ, «Այրվող այգեստաններ». շատ է մասնավոր, «Վանավանդ». շատ է ընդհանուր և անհասկանալի՝ մանավանդ..., «Ողջակիզված կրակն է ր». բանի նման չէ, «Նահանջը առանց երգի». սքանչելի է, բայց Շահնուրը առեք է ինձմե, «Նահանջ երգով». տաղանդավոր բանաստեղծ Պարույր Սևակը մի պոեմ է գրել այս վերնագրով: Մնացել եմ գլուխբաց: Վերնագիր մը ուղարկե, շահնուրյան խորագիր մը. պիտի ըսես՝ չեմ կարող, վեպը չեմ կարդացեր, բայց կարդացեր ես...»<sup>1</sup>, – հորդորում է Մահարին՝ ավելացնելով, որ գործը նվիրված է Վանի հերոսամարտին՝ մինչև նրա անկումը:

Ի պատասխան Մահարու՝ վերնագրի համար ներկայացրած հայտի՝ Շահնուրն առաջարկել է «Հովն հրձիգին մեղսակից էր» «թեկնածուն»: Շահնուրը նամակում<sup>2</sup> գանգատվել է նաև, որ ֆրանսերեն գրելու համար իրեն ամբաստանել են իբրև «դասավիք»: Հուլիսի 27-ին Մահարին շնորհակալություն է հայտնել վերնագրի համար և գրել, որ այն կդարձնի բնաբան իր «Այրվող այգեստաններ» վեպի համար, որ գիրքը ձուներու է նրան, իսկ Արմեն Լյուբենի ծնունդը ևս հարստություն է, ինչպիսի հարստություն է նաև Վիլյամ Սարոյանը: «Մտածել, որ Շահնուրեն գատ և միասին դեռ կա Արմեն Լյուբեն անունով ֆրանսիական բանաստեղծ-արձակագիր մը ևս... Վերջերս մեծ եղավ ուրախությունս, երբ ձայնասփյուռով լսեցի Ռուբեն Մելիքի<sup>3</sup> և Արսեն

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1741, ց. 1, գ. 39, թ. 41-42:

<sup>2</sup> Գուրգեն Մահարու՝ Հայաստանի ազգային արխիվի անձնական ֆոնդում ցավոք չեն պահպանվել Շահնուրի նամակները, սակայն պատասխան նամակներից հնարավոր է ենթադրել նրա արժարժած հարցերը:

<sup>3</sup> Ռուբեն Մելիք (Մելիք-Մինասյանց Ռուբեն Լևոնի) (1921-2007) – ֆրանսահայ բանաստեղծ, ստեղծագործել է ֆրանսերենով, բանաստեղծությունների մի շարք ժողովածուների

Երկաթի<sup>1</sup> բարձր գնահատությունը Արմեն Լյուբենիդևի և Շահան Շահնուրիդևի մասին: Ձեռքդ կանաչ... Մեկ հատիկ Շահնուր ունենք, որ նույն մեծ ուժով և զորությամբ կբարձրանա և՛ հայրենի գրականության անդաստանեն, և՛ ֆրանս մեծ գրականության Հելիկոնեն<sup>2</sup> վեր...»<sup>3</sup>, – գրել է Մահարին:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Արտասահմանյան երկրների հետ կուլտուրական կապի հայկական վարչության նախագահության նախագահ Բերսաբե Գրիգորյանի<sup>4</sup> և Շահան Շահնուրի նամակագրությունը, գրականագետ Հրանտ Թամրազյանին և ֆրանսահայ ինքնուս նկարիչ, տպարանատեր Ալեքսանդր Օհանյանին ուղղված Շահնուրի նամակները, որոնց բնագրերը պահպվում են Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում: Նամակները հրապարակվում են առանց միջամտությունների:

ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

## 1

14 օգոստոսի 1959 թ.  
Երևան

Հարգելի բարեկամ Շահան Շահնուր,

Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը ցանկանում է ունենալ սփյուռքահայ մի շարք անվանի գրողների երկերը՝ ֆրանսերեն թարգմանությամբ: Այդ կապակցությամբ խնդրում ենք մեր ընկերության հասցեով, ըստ հնարավորին շուտ, ուղարկել Ձեր «Պճեղ մը անուշ սիրտ» ստեղծագործության ֆրանսերեն թարգմանությունը:

Հարգանքներով՝ Բերսաբե Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 249, թ. 23, պատճեն, մեքենագիր:

---

հեղինակ է, արժանացել է Ֆրանսիական ակադեմիայի և ֆրանսիական գրողների մրցանակների:

<sup>1</sup> *Արսեն Երկաթ* (Շամյան) (1893-1969) – սփյուռքահայ բանաստեղծ, արձակագիր: Սովորել է Կահիրեի Գալստյան վարժարանում, Փարիզի Սորբոնի համալսարանում, 1966 թ. հաստատվել է Մոնրեալում: Բանաստեղծությունների մեկ տասնյակի հասնող ժողովածուների հեղինակ է:

<sup>2</sup> Լեռ Հունաստանում: Ըստ հունական դիցաբանության՝ Հելիկոնի վրա բնակվել են մուսաները, իսկ լեռան աղբյուրների ջուրը ոգեշնչել է բանաստեղծներին:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 1741, ց. 1, գ. 39, թ. 41-42:

<sup>4</sup> Բեսարբե Գրիգորյանը ԱՕԿՄ-ի վարչության նախագահության նախագահ է ընտրվել 1958 թ. նոյեմբերի 1-ին և պաշտոնավարել մինչև 1966 թ. դեկտեմբերի վերջը (ՀԱԱ, ֆ. 709, ց. 9, գ. 9, թ. 48, գ. 14, թ. 23):

13 ապրիլի 1960 թ.  
Երևան

Հարգելի պարոն,

Ինչպես Ձեզ հայտնի է, Ֆրանսիայում լույս տեսնող «ԷՌՕՊ» գրական-գեղարվեստական պարբերականը իր համարներից մեկը նվիրելու է հայ գրականությանն ու արվեստին: Ընդ որում՝ այդ համարը կպարունակի հայ արձակի անթոլոգիա:

Ուրախ կլինեինք, եթե Ձեր գործերից որևէ մեկը տեղ գտներ վերոհիշյալ անթոլոգիայում:

Ուստի թույլ տվեք հուսալ, որ կբարեհաճեք կապ հաստատել «ԷՌՕՊ»-ի դիրեկտոր պարոն Պիեռ Աբրահամի հետ և ներկայացնել ինչ Դուք գտնում եք նպատակահարմար:

Հարգանքներով՝ Բերսաբե Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 100, թ. 71, պատճեն, մեքենագիր:

Հ. Գ. Monsieur Piere Abraham  
Directeur de la Revue mensuelle, Europe,  
21, rue de Richelieu, Paris 1-er

26 հունվարի 1963 թ.  
Երևան

Հարգելի բարեկամ,

Կներեք, որ ստույգ հասցեն չունենալու պատճառով չկարողացանք շարունակել Ձեզ հետ սկսված նամակագրությունը: Ուրախ առիթով ուզում ենք այդ կապը վերահաստատել և վստահ ենք, որ հետզհետե այն ավելի կամրապնդվի:

Օրերս Հայպետհրատը լույս ընծայեց Ձեր գործերի միհատորյակը, որն ընդգրկում է «Նահանջը առանց երգի» վեպը, մի շարք պատմվածքներ և այլ գործեր: Վստահ եղեք՝ հետագայում լույս կտեսնի Ձեր գործերի ավելի ընդարձակ ժողովածուն:

Մեզ շատ է հետաքրքրում Ձեր ստեղծագործական ծրագիրը. ի՞նչ եք գրել վերջին տարիներին, ի՞նչ նոր գործով եք ուրախացնելու սփյուռքի և հասկապես Հայաստանի ընթերցողներին, որոնք առաջին իսկ օրից բարձր են գնահատել Ձեր վեպը, պատմվածքներն ու գրականագիտական հոդվածները: Այս առթիվ խնդրում ենք մեզ ուղարկել ֆրանսերեն լեզվով լույս տեսած Ձեր գործերը:

1963 թվականի համար մեր Ընկերությունը Ձեզ բաժանորդագրել է «Գրական թերթ», «Սովետական գրականություն», «Սովետական Հայաստան», «Սովետական արվեստ» ամսագրերը: Հուսով ենք՝ կանոնավոր կստանաք:

Գրեցե՛ք Ձեր առողջական վիճակի մասին: Ձեզ ցանկանում ենք քաջառողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Խորին հարգանքներով՝ Բերսաբե Գրիգորյան

Հ. Գ. Ուղարկում ենք Ձեր միատորյակից հինգ օրինակ<sup>1</sup>, ինչպես նաև Հայաստանի քառասնամյակի, Երևանի և պետական պատկերասրահի պլանները և «Սասունցի Դավիթը»: Խնդրում ենք գրեք, թե հայաստանյան ինչ գրքեր կցանկանայիք ունենալ:

Ֆ. 709, ց. 3, գ. 304, թ. 25, պատճեն, մեքենագիր:

4

22 փետրվարի 1963 թ.

Սեն Ռաֆայել

Յարգելի Տիկին Բ. Գրիգորեան,

Կը հաստատեմ ստացած ըլլալ Ձեր 26 Յունուար թուակիրը, իմ **երկերս**, մեկէ աւելի օրինակներով, ինչպես նաև «Գրական թերթը», որ հասցէիս կը ժամանէ կանոնաւոր կերպով: Այս բոլորի համար կը յայտնեմ իմ անկեղծ շնորհակալութիւնս:

Հատորը ունի շատ ներկայանալի և ճաշակաւոր տեսք: Ստ. Ալաջաջեանի<sup>2</sup> «Երկու խօսքը»<sup>3</sup> խղճամիտ աշխատութիւն մըն է, որ ոչ միայն համակրութեամբ, այլև ներողամտութեամբ կը մօտենայ իմ այս երիտասարդական էջերուս: Աւելցնեմ որ, ճշմարտութեան հաւատարիմ կը մնայ ան, գէթ իր ընդհանուր գիծերուն մէջ (կը սխալի, սակայն, ըսելով թէ ես ֆրանսերէն լեզուն ընդգրկած եմ՝ քիչ մը դրամի համար: Այս հաստատումը հիմովին անճիշդ է):

Նշմարեցի որ բնագիրս ենթարկուած է մկրատումներու և յապաւումներու: Տպագրական անխուսափելի սխալներէն զատ, կան դեռ օտար բառերու և ասութիւններու անճիշդ բացատրողականներ: Կը ցաւիմ որ ընթերցողը պիտի մնայ մտամոլար՝ երբ ջանայ մեկնել նախադասութիւններ՝ որոնց իմաստը մթագնած է:

---

<sup>1</sup> Տե՛ս **Շահնուր Շ.**, Երկեր, Երևան, 1962:

<sup>2</sup> Ստեփան Եղիայի Ալաջաջյան (1924-2001) – գրող, թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ: 1967-1975 թթ. Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: 1992 թվականից ապրել է ԱՄՆ-ում:

<sup>3</sup> Տե՛ս **Ալաջաջյան Ստ.**, Երկու խոսք // **Շահնուր Շ.**, նշվ. աշխ., էջ 3-7:



Յիշած ըլլալու համար օրինակ մը, թուիմ էջ 140-ի **թուրքը**, որ իբր **հայ** մեկնաբանուած է: Բնա՛վ երբեք: Թուրքը թուրք կը նշանակէ, ամենայն պարզութեամբ: Եւ ո՛չ թէ **հայ**: Այդու իսկ, ինդրոյ առարկայ անցքը կը զգենու ազգային-քաղաքական իմաստ մը, զոր ստորագրած են իմ բոլոր քննադատներս: Բու՛ն իմաստը աս է. «Նախորդ սերունդի մեր ղեկավարները զմեզ խաբէցին»:

Այս կետերը ոչ մէկ կերպով չէին կրնար մթագնել այն ճշմարիտ հրճուանքը, որով կընդունեն երկերս, ինչպէս այն բոլոր երկասիրութիւնները զոր Երևան կարտադրէ, տալով ապացոյցը իր յառաջադիմութեան և նուաճումներուն: Մփիւռքը հպարտ է Ձեր վերելքով:

Ձերդ՝ սիրով Շահան Շահնուր

Ֆ. 709, ց. 3, գ. 305, թ. 79, ինքնագիր:

## 5

12 ապրիլի 1963 թ.

Երևան

Հարգելի պարոն Շահնուր,

Ուրախությամբ ստացել ենք Ձեր նամակը: Առավել ուրախությամբ հայտնում ենք, որ Սովետական Հայաստանի ընթերցասեր հասարակայնութիւնը շատ լավ ընդունեց այստեղ հրատարակված Ձեր գիրքը: Թէն Դուք ներողամտաբար եք մոտեցել հատորում տեղ գտած սխալներին, սակայն գրաքննադատությունը և Ձեզ սիրող-ընթերցողները նվազ ներողամիտ են: Գուցէ արդէն լսած կլինեք, որ Ձեր պատմվածքներից մի քանիսը լույս են տեսել ռուսերեն լեզվով ռուսական պարբերականներում:

Ձեր դիտողությունը հատորի «Երկու խոսք»-ում գրված այն մտքի վերաբերյալ, թէ Դուք սկսել եք ֆրանսերեն գրել «քիչ մը դրամի համար», միանգամայն իրավացի է: Այդ դիտողությունը ընդունեց նաև ընկեր Ալաջաջյանը: Մենք հավատում ենք նաև Ալաջաջյանի այն հավաստիացմանը, որ նա այդ միտքը արտահայտել է ոչ թէ Ձեր «դրամասեր» լինելը ցույց տալու, այլ կապիտալիստական երկրում հայ գրողի նյութական անձուկ վիճակը նկարագրելու համար: Այնպես որ եկեք մի նեղացեք այդ թյուրիմացությունից, որը, ըստ ընկ. Ալաջաջյանի, կբացատրվի և կսրբագրվի այստեղի մամուլում լույս տեսնելիք գրախոսականներում:

Շատ հարգելի պարոն Շահնուր,

Արտասահմանի հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության անդամները և Ձեր բազմաթիվ ընթերցողները շատ են հետաքրքրվում Ձեր առողջական վիճակով, սակայն Դուք զլանում եք անգամ ժլատորեն գրել Ձեր մասին: Բարի եղեք մտերմաբար զրուցելու մեզ հետ Ձեր նամակներում և գրելու Ձեր ցանկությունների և հետաքրքրությունների

մասին, մեր սովետական հայրենիքի, գրականության և մշակույթի վերաբերյալ:

Հարգանքներով՝ Բերսաբե Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 305, թթ. 77-78, պատճեն, մեքենագիր:

6

1 օգոստոսի 1963 թ.

Սեն Ռաֆայել

Միրելի Տիկին,

Զուգադիպությունը այնպես ուզեց, որ Ձեր սրտագործով հեռագիրը ստանամ Յուլիսի արևակեզ օր մը, երբ թմբիրը և պապակը կը տիրապետէին մեր երկրամասին վրայ, ճպուռներու խելայեղ և երկարուձիգ ճոհնչին մէջ: Բնական է որ, իմ շրջապատիս համատարած երաշտին մէջ, Ձեր խօսքը ստանայի որպէս կենսախայտ և անապակ ջուր: Մի՛ տարակուսէք, կ'աղաչեմ, իմ փոխադարձ զգացումներուս անկեղծութեան: Կը ճանչնաք մեր գրական բերքը: Շատ պատճառներ չունինք անով հպարտանալու: Բայց մինչ տկար է և համեստ՝ մեր գրականությունը, աներկբայելի մեծությունը մը ունի մեր գրագէտին յառաջադիմական ընթացքը, ինչպէս որ մեծ է անոր ցոյց տուած գուրգուրանքը, հանդէպ մեր լեզվին, սահմանին այս կողմն ըլլայ թէ այն կողմը: Մշակութային կապի Ձեր Միությունը պատնէշ բարձրացաւ երբ օրը տարածամած էր: Բայց գիշերային պահակները աւելի ևս աչալուրջ ըլլալու սովոր են: Շատ մը բաներ մեզ մտածել կուտան թէ, անոնք պիտի ողջունեն արշալույսը, աւել լի յուսալից քան երբէք:

Ձերդ՝ յարգանքներով Շահան Շահնուր

Ֆ. 709, ց. 3, գ. 307, թ. 149, ինքնագիր:

7

19 օգոստոսի 1963 թ.

Երևան

Մեծարգո բարեկամ,

Ստացանք Ձեր 1 օգոստոսի թվակիր նամակը: Ուրախությամբ իմացանաք, որ մեր ողջույնի հեռագիրը այդքան ոգևորել է Ձեզ: Կրկին ու կրկին շնորհավորելով Ձեր վաթսունամյակը՝ հաճույքով ողջունում ենք Ձեր նամակի հատկապէս վերջին տողում արտահայտված լավատեսական եզրակացությունը: Միանգամայն ճիշտ էք նկատել, թե այսօր մեր երկրի ու մեր ժողովրդի «արշալույսը ավելի հուսալից է, քան երբէք»: Իսկ չե՞ք գտնում, հարգելի բարեկամ, որ Ձեզ անհրաժեշտ է սեփական աչքերով տեսնել հայ-

րենիքը, մեր ժողովրդի կյանքն ու կենցաղը: Արդյոք Դուք չեի՞ք համաձայնվի թեկուզ մեկ-երկու շաբաթով մեր Ընկերության հյուրը լինել Հայաստանում:

Հայաստանի մամուլը նշեց Ձեր վաթսունամյակը: «Երևան» և «Գրական» թերթերում<sup>1</sup>, ինչպես և «Սովետական գրականություն» ամսագրում<sup>2</sup> լույս տեսան նյութեր Ձեր կյանքի ու ստեղծագործության մասին: Ուրախությամբ ուղարկում ենք այդ համարները: Մեր Ընկերությունը ծրագրել է այդ օրը նշել, երբ քաղաքի մտավորականությունը վերադառնա ամառային հանգստից:

Հայաստանի գրողների միության և մեր Ընկերության համատեղ նիստը՝ նվիրված Ձեր վաթսունամյակին, տեղի կունենա սեպտեմբերին: Ճշգրիտ օրվա մասին կհայտնենք:

Հույս ունենք, որ այսուհետև մեզ ավելի հաճախակի կգրեք:

Խնդրում ենք գրեք Ձեր գրական գործունեության և առողջության մասին:  
Հարգանքներով՝ Բերսաբե Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 307, թ. 147, պատճեն, մեքենագիր:

## 8

8 սեպտեմբերի 1963 թ.

Սեն Ռաֆայել

Միրելի Տիկին նախագահ,

Շնորհակալությամբ ստացայ Ձեր 19 Օգոստոս թուակիրը, ինչպես նաև բազմաթիւ կտրոններ երևանեան մամուլէն, բոլորն ալ խոռովիչ և շահեկան՝ իրենց համակրական արտայայտութիւններով և բարեմաղթանքներով: Այսօրուան թղթաբերը ինծի յանձնեց վերջին յօդուած մը ևս, Շահէ Տատուրեանէ<sup>3</sup>, «Սովետական Հայաստան»-էն անջատուած<sup>4</sup>: Ա՛յս վերջինին առաւելութիւնը, իր նախորդներուն վրայ, սա է թէ՛ հոն յստակօրէն մատնանիշ եղած են գիրքիս տպագրական թերութիւնները և յապաւումները, այլ մանաւա՛նդ անճիշդ թարգմանութիւնը՝ ֆրանսերէն բառերու և ասութիւններու: Ուրախութեամբ հաստատեցի, որ պրն. Տատուրեանի ֆրանսերէնը հեռու է զուտ

---

<sup>1</sup> Տե՛ս **Քեշիշյան Գ.**, Շահան Շահնուր (ծննդյան 60-ամյակի առթիւ) // Երևան, 3 օգոստոսի 1963, **Թոփչյան Ալ.**, Հայրենիքը վերջին զանգն է (Շահան Շահնուրի ծննդյան 60-ամյակի առթիւ) // Գրական թերթ, 16 օգոստոսի 1963:

<sup>2</sup> Տե՛ս Շահան Շահնուր // Սովետական գրականություն, 1963, թիվ 8, էջ 116-118, **Թոփչյան Ստ.**, Շահան Շահնուրի խոստովանությունը // նույն տեղում, էջ 119-122, **Ալիքյան Ա.**, Շահան Շահնուրի «Գիշերային փոխադրություն» գիրքը // նույն տեղում, էջ 123-125:

<sup>3</sup> *Շահէ Սամվէլի Տատուրյան* (1911-1990) – հասարակական գործիչ, հրապարակախոս: Ֆրանսիական դիմադրական շարժման հայկական կազմակերպության ղեկավարներից: 1947 թ. հայրենադարձվել է, 1948-1982 թթ. աշխատել է Հայաստանի հեռուստառադիոպետությունում:

<sup>4</sup> **Տատուրյան Շ.**, Շահան Շահնուր // Սովետական Հայաստան, 31 օգոստոսի 1963:

բառարանային ըլլալէ: (Միջանկեալ ըսեմ որ, սիսալ թարգմանանութիւնները զիս աւելի զուարճացուցած էին քան թէ նեղսրտած):

Գալով Ձեր ազնիւ հրաւերին, պէտք կա՞յ միթէ ըսել թէ որքա՞ն շատ կը խօսի ան իմ սրտիս: Երկու ամիս առաջ ստացայ նմանօրինակ հրաւեր մը, որ ինծի փոխանցուած էր պատուական Գուրգեն Մահարիի խողովակով: Հոս ստիպուած եմ Ձեզի պատասխանել այն՝ ինչ որ ըսի արդէն Մահարիի-ֆիզիքսպէս անկարող եմ տոկալու երկար ճամբորդութեան մը յոգնութիւններուն: Այն հաստատութեան մէջ, ուր հիւրընկալուած եմ ներկայիս, կապրեմ հիւանդապուհուհիի մը մշտական և աչալորջ հսկողութեանը տակ: Թէն իմ հիւանդութիւնս անցած-գացած է, բայց իր թողած աւերները կը մնան անջնջելի:

Խնդրելով որ ընդունեք, սիրելի Տիկին, իմ ջերմ համակրանքիս հաւաստիքը, կը մնամ Ձերդ՝ յարգանօք Շահան Շահնուր:

Ֆ. 709, ց. 3, գ. 309, թ. 3, ինքնագիր:

9

4 հոկտեմբերի 1963 թ.  
Երևան

Մեծարգո բարեկամ,

Ձեր 8 սեպտեմբերի նամակից հաճույքով իմացանք, որ Ձեր 60-ամյակի առթիվ հայաստանյան մամուլում տպագրված նյութերը գոհունակությամբ եք ընդունել:

Մեզ ուրախացնում է Ձեր լայնախոհությունը թարգմանական սիսալների և այլ մանրուքների նկատմամբ: Իսկապէս որ կարևորը երևույթն է՝ սփյուռքահայ գրականությունը և նրա մշակներին Հայրենիքի լայն հասարակությանը ներկայացնելու, հայ ժողովրդի երկու մեծ հատվածները իրար մերձեցնելու ուղղությամբ գործադրված ջանքերի հաջողությունը:

Շատ ենք ափսոսում, որ վատառողջության պատճառով չեք կարող այցելել Հայրենիք:

Հաճույքն ունեմ հայտնելու, որ Ձեր 60-ամյակի հոբելյանը մեր Ընկերությունը նշում է հոկտեմբերի տասին: Համապատասխան նյութերը, ինչ խոսք, ժամանակին կուղարկենք:

Թույլ տվեք կրկին ու կրկին շնորհավորել Ձեզ՝ ցանկանալով քաջառողջություն, ստեղծագործական նոր հաջողություններ:

Անկեղծորեն Ձեր՝ Բերսաբե Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 309, թ. 2, պատճեն, մեքենագիր:

24 հոկտեմբերի 1963 թ.  
Երևան

Մեծարգո բարեկամ,

Հաճույք ունեմ տեղեկացնելու, որ անցած շաբաթ՝ հոկտեմբերի 12-ին, մեր Ընկերությունը իր սրահում հանդիսավոր կերպով նշեց Ձեր ծննդյան 60-ամյակը: Երեկոյին հավաքվել էին գրողներ, ուսուցիչներ, մշակույթի և արվեստի ներկայացուցիչներ, երիտասարդ գրասերներ:

«Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր, գրող Ստեփան Կուրտիկյանը, բաց անելով երեկոն, ներկաներին ծանոթացրեց Ձեր կյանքը և գնահատանքի խոսք ասաց Ձեր գրական ստեղծագործության մասին: Այնուհետև գրող Ստեփան Ալաջաջյանը ավելի հանգամանորեն խոսեց Ձեր ստեղծագործության մասին, վերլուծեց մի քանի երկեր՝ ցույց տալով Ձեր արվեստի առանձնահատկությունները:

Ողջույնի ջերմ խոսքով հանդես եկավ նշանավոր բանաստեղծ Վաղարշակ Նորենցը, որն առաջ քաշեց սփյուռքահայ գրականության լավագույն ներկայացուցիչներին ավելի լայնորեն ծանոթացնելու խնդիրը:

Հարգանքներով՝ Բերսաբե Գրիգորյան

Ֆ. 709, ց. 3, գ. 309, թ. 67, պատճեն, մեքենագիր:

3 նոյեմբերի 1963 թ.  
Սեն Ռաֆայել

Յարգելի Տիկին Բերսաբե Գրիգորյան,

Հոկտեմբեր 12 -ի հանդիսությունը իր արձագանքը գտած էր մեր տեղական մամուլի մեջ, անշուշտ խռովելով սիրտս: Իմ շա՛տ անկեղծ և խորին համակրանքս փոխանցեցեք, խնդրեմ, բոլոր անոնց, որոնք կազմակերպեցին այս հաւաքոյթը և մասնակցեցան անոր, մասնաւորաբար երկու բանախօսներուն, պ.պ. Ստեփան Կուրտիկեանի և Ստեփան Ալաջաջեանի, որոնց կրկնակ յօդուածները, տեղւոյդ թերթերուն մեջ, եղած էին արդէն կանխանշանը այն համակութեան և ներողամիտ հայեցողութեան զոր կը տածին ինծի հանդէպ:

Գալով բանաստեղծ Վաղարշակ Նորենցի, որուն մասնակցութիւնը երեկոյթին մասնաւորաբար թանկագին է ինծի համար, ըսեմ որ՝ գրագետներու փոխադարձ ծանօթութիւնը մէկն է այն հարցերէն, որոնք պէտք ունեն Նորենցի նման անձնաւորութեան մը ջատագովութեան և պաշտպանութեան: Կան հմայիչ ձայներ որոնք կ'արձագանքեն մինչև հեռու աշխարհներ:

Ձերդ՝ յարգանքով Շահան Շահնուր

Ֆ. 709, ց. 3, գ. 310, թ. 52, ինքնագիր:

10 դեկտեմբերի 1963 թ.  
Երևան

Մեծարգո պարոն Շահնուր,

Ձեր 3 նոյեմբերի թվակրի մեջ հուզմունքով կարդացինք, որ գոհունակությամբ եք ընդունել Ձեր 60-ամյակը մեզ մոտ նշելու իրողությունը:

Նման միջոցառումները, ինչպես և մամուլի մեջ տպագրվող հոդվածները այն հաջող միջոցներից են, որ նպաստում են Հայրենիքի և սփյուռքի գործիչների փոխադարձ ծանոթացմանը, նրանց միջև բարեկամական կապեր ստեղծելուն, այդպիսով նաև մեր ժողովրդի երկու մեծ հատվածների փոխադարձ մերձեցմանն ու միասնությանը:

Ի դեպ՝ Ձեր ստեղծագործության մասին ջերմ հոդված է տպագրել նաև մեր Ընկերության օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը: Հոդվածի հեղինակն է մեր Ընկերության աշխատակից, արձակագիր ընկեր Գրիգոր Քեշիշյանը<sup>1</sup>: Սիրով ուղարկում եմ նաև այդ համարը:

Հայտնում ենք, որ 1964 թ. հունվարից Ձեր հասցեով կուղարկենք «Սովետական Հայաստան», «Սովետական գրականություն», «Սովետական արվեստ» հանդեսները և «Գրական թերթ»-ը: Հուսով ենք, որ թերթելով այդ հանդեսները, Ձեզ համար հետաքրքիր նորություններ կգտնեք հայրենի մշակույթի կյանքից:

Ձեր նամակի բովանդակությանը ծանոթացրել ենք Վաղարշակ Նորենցին, Ստեփան Կուրտիկյանին և Ստեփան Ալաջաջյանին: Նրանք խնդրեցին իրենց շնորհակալությունը հայտնել Ձեր ջերմ խոսքերի համար և ասացին, որ առանձին նամակներ են գրելու Ձեզ: Տիկին Բ. Գրիգորյանը արձակուրդի մեկնելու կապակցությամբ բացակայում է Երևանից, դրա համարել էլ չկարողացավ անձամբ պատասխանել Ձեր նամակին:

Թույլ տվեք քաջառողջություն և ստեղծագործական եռանդ մաղթել Ձեզ:

Անկեղծ հարգանքով՝ Ընկերության նախագահի տեղակալ  
Ա. Մարտիրոսյան

Ֆ. 709, ց. 3, գ. 310, թթ. 50-51, պատճեն, մեքենագիր:

<sup>1</sup> Տե՛ս **Քեշիշյան Գ.**, Սփյուռքահայ կյանքի մեծ նկարիչը (Շահան Շահնուրի ծննդյան 60-ամյակի առթիվ) // Սովետական Հայաստան, 1963, թիվ 9, էջ 29-30:

23 հունիսի 1965 թ.  
Մեն Ռաֆայել

Միրելի Հր. Թամրազեան,

Հետաքրքրությամբ և լարուած ուշադրութեամբ կարդացի Ձեր գիրքը, որ առաջին ընդարձակ ուսումնասիրութիւնն է, որ նուիրած ըլլայ Ատոմ Եարճանեանի անձին և գործին<sup>1</sup>: Գրականագետի և խղճամիտ պրպտողի Ձեր արժանիքներուն վրայ կուգայ աւելնալ Ձեր լեզուն, որուն գեղեցկութիւնը այնքան կը մոտենայ մեր հեշտալուր աշխարհաբարին: Այս երկրորդ անգամ է որ Երևան ինձի կը պարզևէ բացառիկ վայելքը, թրքահայ գրագետի մը գործին մէջ մխրճուելու, և ատով իսկ վերապրելու՝ մեր գրական կեանքին խոովիչ երէկը: Առաջին հատորը, որ նուիրած էր Սրբուհի Տիւսաբ Փաշայի<sup>2</sup>, զերծ էր այն ողբերգական մթնոլորտէն, որ կը յուզի և կը ճնշէ Ձեր գիրքի վրայ: Ես անոնցմէ եմ, որոնց համար Ապրիլ 11-ը<sup>3</sup> հեռու է տարուան մէկ օրը ըլլալէ: Մեր ողբերգական կեանքին ամէն մէկ օրը, այ՛ն, ամէն մէկ օրը, իր մէջ կը հաշուէ սև բոպէ մը, որ կը կոչուի Ապրիլ 11:

Ատոմ Եարճանեան այնպիսի մէկն էր, որ կը սարսափէր ի՛ր իսկ ստուերէն: Ան վախկոտ էր՝ ծայր աստիճան: Իր առնական քոյրը կը վկայէ, որ սենեակին խորը կերթար ապաստանել Ատոմ, երբ միայն լսէր հնչեղ ոտնաձայնը անցորդ ոստիկանի մը: Այս վկայութիւնը կասկածի տակ դնել դիւրին չէ, երբ խորհուի, որ ճիշդ և խժալուր աղաղակը օտար բաներ չեն դիւրայոյզ երկչտններու: Երբ այս այսպէս է, մարդ կը փշաքաղէ խորհելով, թէ ի՛նչ կրնայ եղած ըլլալ եղերաբախտ հայորդիին հոգեվիճակը, ի տես բարբարոս ջարդարարներու վոհմակին: Կան ողբերգութեններ, որոնց խորը թափանցել հնար չէ:

Գալով իմ ցուցմունքիս (էջ 117) կասկած չ'եկայ, որ դեռատի Ա. Ե.-ն<sup>4</sup> խորապէս դրոշմուած է Մեթեոլինքի<sup>5</sup> Serres Chaudes-ով<sup>6</sup>, ինչպէս Վարուժան՝ ազդուած նոյն հեղինակին Douze Chansons-ներէն<sup>7</sup>: Իմ ցուցմունքս ուրիշ բան չընէր, եթէ ոչ ցոյց տալ տաղանդին կազմութեան հանգրուանները: Ան երբէք չը կրնար վնասել վերոյիշեալ գրագետներու համբաւին: Դիտելի է նաև որ,

<sup>1</sup> Տե՛ս **Թամրազյան Հ.**, Միամանթո, Երևան, 1964:

<sup>2</sup> Խոսքը վերաբերում է Ալբերտ Շարուրյանի «Սրբուհի Տյուսաբ: Կյանքը և ստեղծագործությունը» (Երևան, 1963) գրքին:

<sup>3</sup> Ըստ հին տոմարագրության՝ ապրիլի 11-ը համապատասխանում է ապրիլի 24-ին:

<sup>4</sup> Ակատի ունի Միամանթոյին (Ատոմ Յարճանյան):

<sup>5</sup> *Մորիս Մետեոլինգ* (1862-1949) – բելգիացի գրող, դրամատուրգ և փիլիսոփա: Ստեղծագործել է ֆրանսերէնով, 1911 թ. արժանացել Նոբելյան մրցանակի: Փարիզում մտերմացել է ֆրանսիացի սիմվոլիստների հետ, որոնք նրա վրա թողել են մեծ ազդեցություն:

<sup>6</sup> Խոսքը վերաբերում է 1889 թ. տպագրված Մ. Մետեոլինգ պոեմների՝ «Ձերմոց» խորագրով ժողովածուին:

<sup>7</sup> «Տասներկու երգեր» խորագիրը կրող սույն ժողովածուն լույս է տեսել 1896 թ.:

անոնք, որոնց անունը միշտ կը յիշուի գուգորդաբար, անոնք առաւելապէս սնուած են, իրենց երիտասարդ տարիքին, Պելճիքայի<sup>1</sup> երկրորդական սիմպօլիաթներով, ինչպէս՝ Մեթեռլինք, Վերհառն<sup>2</sup>, Մաքս Էլսքամբ<sup>3</sup>, Ժորժ Ռօտենպաք<sup>4</sup>, փոխանակ բարձրանալու դեպի ակը սիմպօլիզմին, այսինքն դեպի Ռենպօ<sup>5</sup>, Մալառմէ<sup>6</sup>, Վեռլեն<sup>7</sup> – անշուշտ Պօտրլէռե<sup>8</sup> վերջ: Ատով կը բացատրուի այն մասնայատուկ միաթիսիզմը, որ երբեմն տեղ կը գտնէ իրենց գրութիւններու մէջ:

Գրական վերոյիշեալ ազդեցութիւնէն աւելի կարևոր է այն տարակարծութիւնը, որ միշտ տիրած է Ա. Ե.-ի տաղանդին շուրջ, և որ դեռ կը գտնէ իր արձագանքը՝ Ձեր աշխատասիրութեան մէջ (էջ 206 և 245): Թէ այսօր Սփիւռքը ինչպէ՞ս կը դատէ Ա. Ե.-ի երկը, այդ բանը Դուք պէտք է գիտնաք, առանց որ ես խօսք առնիմ:

Մնաց որ, շատ երկարեցաւ իմ նամակս: Ո՛չ տարիքս և ո՛չ ալ առողջութիւնս կը թոյլատրեն մանրամասնօրէն արտայայտուելու բարդ խնդիրներու մասին: Տեսէ՞ք ցաւս: Կաղանդի առթիւ Երևանէն ստացայ մէկէ աւելի սիրազեղ բացիկներ, առանց որ ոյժը ունենամ անոնց պատասխանելու պատշաճօրէն: Կը խնդրեմ որ ներողամիտ ըլլաք ինծի, բոլորդ ալ:

Ձերդ՝ լաւագոյն զգացումներով Շահան Շահնուր

Ֆ. 297, ց. 1, գ. 23, թ. 1 և շրջ., ինքնագիր:

---

<sup>1</sup> Նկատի ունի Բելգիան:

<sup>2</sup> *Էմիլ Վերհառն* (1855-1916) – բելգիացի ֆրանսալեզու բանաստեղծ և դրամատուրգ, սիմվոլիզմի հիմնադիրներից մեկը: Մտերիմ է եղել նաև հայ գրողներ Էդգար Շահինի և Արշակ Չոպանյանի հետ, «Աղաղակը» վերնագրով բանաստեղծություն է նվիրել 1915 թ. Հայոց եղեռնի զոհերին (1917 թ. այն հրատարակվել է հայերեն), 1913 թ. Ա. Չոպանյանի հրատարակած «Կյանք և երազ» գրքի առաջաբանի հեղինակն է:

<sup>3</sup> *Մաքս Էլսքամբ* (1862-1931) – բելգիացի սիմվոլիստ բանաստեղծ, լեզվի և գրականության ֆրանսիական թագավորական ակադեմիայի անդամ:

<sup>4</sup> *Ժորժ Ռոդենբախ* (1855-1898) – սիմվոլիստ բանաստեղծ, արձակագիր: XX դարասկզբին համարվել է ֆրանսալեզու խոշորագույն սիմվոլիստ գրողը:

<sup>5</sup> *Արթուր Ռեմբո* (1854-1891) – ֆրանսիացի սիմվոլիստ բանաստեղծ: Բողլերի և նրա ստեղծագործությունները XX դարասկզբի պոեզիայի վրա ունեցել են մեծ ազդեցություն:

<sup>6</sup> *Ստեֆան Մալառմէ* (1842-1898) – ֆրանսիացի սիմվոլիստ բանաստեղծ: Նրա պոեզիան հեղաշրջում է առաջացրել XX դարասկզբի արվեստի մեջ, մասնակցել է այնպիսի ուղղությունների ձևավորմանը, ինչպիսիք էին կուրիզմը, դադաիզմը, ֆուտուրիզմը և սիմվոլիզմը:

<sup>7</sup> *Պոլ Վեռլեն* (1844-1896) – ֆրանսիացի բանաստեղծ, կրել է Արթուր Ռեմբոյի և Շառլ Բողլերի ստեղծագործությունների ազդեցությունը:

<sup>8</sup> *Շառլ Բողլեր* (1821-1867) – ֆրանսիացի բանաստեղծ, արվեստաբան, քննադատ, թարգմանիչ: XIX դարի վերջերին Բողլերի թե՛ արձակ և թե՛ չափածո գործերը թարգմանվել են հայերեն և տպագրվել մամուլում:



Միրելի Ա. Օհանեան,

Եթէ նոր գիրքի մը հրատարակութիւնը տեսակ մը ծննդաբերութիւն է (և ուրիշ ինչ կրնայ ըլլալ) իմ բաց տոմարը<sup>1</sup> չէր կրնար ընտրել լաւագոյն օր մը, ձեռքս հասնելու համար, քան թէ Հինգշաբթի օրը, երբ աշխարհ կը պատրաստունն տօնել Joyeux Noël<sup>2</sup>: Հատորին արտաքին տեսքը, որ քոյ նուրբ ճաշակին և ճշմարիտ հոգածութեան պտուղն է, զիս գմայելցուց իր գուսպ ազնուականութեամբ: Եթէ ան ասելի գեղափայլ է քան իր նախորդը, «Յարալեզները», այդ բանը կը պարտի ո՛չ այնքան plastification-ի<sup>3</sup>, որքան մեր անձնական ծանօթութեան: Այն թանկագին յիշատակը գոր պահած եմ մեր փարիզեան հանդիպումէն, չէր կրնար ասելի գեղեցիկ չընել այն՝ ինչ որ արդէն իսկ գեղեցիկ է ըստ ինքեան: Սրտանց կը յայտնեմ իմ շնորհակալութիւնս, սիրելի Օհանեան, և կը մաղթեմ որ զիրար կրկին տեսնելու բաղդը ունենանք:

Քոյդ՝ Նոր տարվոյ լավագոյն մաղթանքներով Շահան Շահնուր

Ֆ. 1125, ց. 1, գ. 16, թ. 1, ինքնագիր:

### **Эмма Овсепян – Из переписки Шагана Шагнура**

Шаган Шагнур является одним из выдающихся зарубежных армянских писателей. Созидая на армянском и французском, он обеспечивал постоянное высокое и достойное свое место и в армянской и во французской литературе.

В 1963 г. в Ереване было широко отмечено 60-летие писателя, на родине были изданы его произведения.

Шагнур вел переписку с представителями интеллигенции и писателями Армении. Публикуемые письма являются частью этой переписки.

### **Emma Hovsepyan – From the Correspondence of Shahan Shahnur**

Shahan Shahnur is a significant member of diaspora's literature of XX century. He earned his high, enduring and rightful place in both French and Armenian literature by his French and Armenian works. The writer's 60<sup>th</sup> anniversary was celebrated in 1963. His books were published in the motherland. He corresponded with the Armenian writers and intellectuals. This is a little selection from those letters.

<sup>1</sup> Նկատի ունի իր «Բաց տոմարը» գիրքը (1971):

<sup>2</sup> Սուրբ ծնունդը (Ֆր.):

<sup>3</sup> Հարմարեցան (Ֆր.):

*Հակոբ Զորյան, Պատմագիտական ուսումնասիրություններ: Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, 384 էջ*

Գրեթե մոռացության մատնված պրոֆեսոր Հակոբ Զորյանի (1894-1942) անունն անձանոթ է ոչ միայն մեր հանրությանը, այլև հայագիտական լայն շրջանակներին: Մինչդեռ իր կարճատև կյանքի ընթացքում նա կարողացել է իրեն դրսևորել պատմագիտական, տնտեսագիտական, հրապարակախոսական, հասարակական-քաղաքական, կազմակերպչական (1936-1937 թթ. եղել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, 1930-1937 թթ.՝ Հայոց պատմության ամբիոնի վարիչ) ոլորտներում:

Հայտնի պատմաբան, աղբյուրագետ և մատենագետ, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի աշխատասիրությամբ վերջերս լույս ընծայվեց նրա պատմագիտական աշխատությունների ժողովածուն: Դրանով իսկ Հ. Զորյանը վերադարձավ մասնավորապես պատմագիտական և հայագիտական շրջանակներ, առավել ևս եթե նկատի ունենանք, որ Պ. Հովհաննիսյանն իրեն բնորոշ բարեխղճությամբ նրա անցած ուղուն նվիրված ներածականում այս բավականին հետաքրքիր մտավորականին, հնարավորինս, ներկայացնում է համակողմանիորեն, լուսաբանում նրա բուն, հազեցած և բեղմնավոր գործունեության մանրամասները: Նա ընթերցողին համոզում է, որ Հ. Զորյանը ոչ միայն պատմաբան էր, այլև մասնակցել է «Նեմեսիսի» վրեժխնդրական ձեռնարկումներին և նպաստել Թալեաթի դեմ կազմակերպված ահաբեկչական գործողությանը:

Դրվատելի է, որ Պ. Հովհաննիսյանը Հ. Զորյանի գործունեությունը ներկայացրել է սկզբնաղբյուրների և նորահայտ փաստերի հիման վրա, որոնց համադրությամբ ոչ ընդարձակ կենսագրականում մեկնաբանել է նրա հակասական կյանքի բոլոր ելևէջները, վեր հանել նրա կյանքի վերջին՝ ստալինյան ճամբարներում անցկացրած տարիների մանրամասները, որոնք լի էին ընտանիքի և սիրելի ժողովրդի հանդեպ իր պարտականությունները մինչև վերջ կատարելու անհուն հավատով: Այն, «ինչ չորս տարի շարունակ անհույս հետևողականությամբ փորձում էր ապացուցել» Հ. Զորյանը, այն է՝ իր վրա բարդվող մեղադրանքների անհիմնությունը, հաստատվել է միայն նրա մահից տասներեք տարի անց, ինչը դարձել է անբասիր, առաքինի և ճշմարիտ հայրենասերի կերպարի վերաթևորման հիմքը: Մույն գիրքը, ի դեպ, դրա վառ ապացույցն է:

Հատորի առաջին մասը ամփոփում է Հ. Ջորյանի «Սոցիալ-տնտեսական հարցեր պատմական Հայաստանէն: Հայ ժողովրդի դասակարգային շերտավորումը» ուսումնասիրությունը, որի տեսական հիմքը, ցանկանում ենք անմիջապես շեշտել դա, մարքսիստական մեթոդոլոգիան է: Այս սկզբունքով հեղինակը ներկայացնում է պատմական Հայաստանի դասակարգային շերտավորումները: Նրա ընդհանրացումները կարծես տարածվում են հին հայկական բոլոր պետական կազմավորումների վրա, որը վիճարկելի է, թեև մասամբ կարելի է հիմնավորված համարել առանձին կազմավորումների պարագայում: Միայնամբ սատարելով այն տեսակետը, թե իբր հայերը եկվորներ են եղել, հեղինակը նրանց Հայաստան գալու առնչությամբ կարծես թե բաժանում է Յոզեֆ Մարկվարտի տեսակետը, ըստ որի՝ «Հայաստանի նախաբնիկները Ասորեստանի նման ունեցած են ավատական կարգեր. դրություն մը, որ շատ կհարմարեր անջատ իշխանություններու բաժնված երկրի մը» (էջ 18): Դրա համար որպես ապացույց նա մատնանշում է այն, որ ավատական իշխաններին բնորոշ է եղել բարձունքների վրա դոյակների կառուցումը, որոնց կից տարածված են եղել ավատները, ուր աշխատել է արդյունաբերող դասը: Ասուրա-բաբելոնական համակեցության այս ձևը գոյություն է ունեցել նաև հնագույն Հայաստանում: Սրանով, փաստորեն, նա անուղղակիորեն հերքում է դեռևս այսօր շրջանառվող այն վարկածը, որ Հին Հայաստանում ստրկություն է եղել:

Հ. Ջորյանը տնտեսագիտական կրթություն էր ստացել, ուստի դասային շերտավորումների պատճառները փորձում է փնտրել և գտնել տնտեսության զարգացման մեխանիզմներում, մոտեցում, որը լիովին արդարացնում է իրեն: Նա գրում է. «Այսպես՝ պատմական Հայաստանի դասակարգային շերտավորումը գրեթե հետևյալ պատկերով կներկայանա մեզ. նախապատմական հնագույն շրջանին գոյություն ունեցած են գլխավորաբար երկու դասակարգ. 1. ավագորյաններ՝ գավառական իշխանները, քաղքենի ազնվականությունը, պատրիկները, 2. գեղջուկները՝ գյուղը բնակողներ, որոնք բնակչության մեծագույն մասը կազմած են» (էջ 27): Իսկ Արշակունիների ժամանակաշրջանից սկսած նա առանձնացնում է հետևյալ դասակարգային շերտավորումները՝ ազնվականություն, կղերական դաս, քաղքենի տարր, որոնք միասին կազմում էին ազատների դասը: Վերջինիս նա հակադրում է անազատների դասը, որի մեջ մտնում էին ռամիկները, գեղջուկները, մշակները և գերիները: Կարծում ենք, որ Արշակունիների ժամանակաշրջանի համար այս դասակարգային տարաբաժանումները ճիշտ են, թեպետ անազատների շարքում ներառված տարրերին կեղեքվողներ ներկայացնելը չափազանցություն է և հետևանք մարքս-լենինյան գաղափարախոսության:

Հեղինակն առանձին-առանձին ներկայացնում է երկու դասակարգի ներկայացուցիչներին՝ պետական և տնտեսական կյանքում նրանց դերակատարություններով, քննական-վերլուծական մեթոդաբանությամբ լուսաբանում «հողի և աշխատավորների» սեփականության հարաբերությունները,

որոնք բավական բարդ խնդիրներ էին և տարբեր՝ պատմական առանձին ժամանակահատվածներում: Այդ հարաբերությունները նա քննարկում է հետևյալ պարբերացմամբ՝ ըստ նախապատմական և Արշակունիներից մինչև Ռուբինյանների ժամանակաշրջանների: Ցավոք, հոդվածի ծավալը նրան հնարավորություն չի ընձեռել մանրամասնելու հողային սեփականության ձևերի կամ հողի նկատմամբ անազատների՝ տնտեսակա՞ն, թե՞ իրավական լինելու փոխհարաբերությունները: Բայց Հ. Ջորյանի գիտական ժառանգության պատմագիտական արժեքը գնահատելիս դյուրին է համոզվել, որ նրա շատ գնահատականներ չեն կորցրել իրենց արդիական նշանակությունը և կարող են նոր հայեցակետերի մշակման հիմքեր լինել:

Բավականին հետաքրքիր է Հ. Ջորյանի հաջորդ՝ «Արաբների հարկային քաղաքականությունը ավատական Հայաստանում» հոդվածը: Թեպետ նրա քննական վերլուծությունները խարսխվում են Մարքսի դրույթներից մեկի վրա, ըստ որի՝ նոր արտադրաեղանակը առաջանում է արտադրողական ուժերի զարգացումից, այդուհանդերձ նա զարգացնում է այդ դրույթին հակասող տեսակետներ: Հեղինակը փորձում է հիմնավորել, որ արաբական տիրապետության շրջանում Հայաստանում ավատատիրական հարաբերություններ չեն եղել և կարծես թե հակասություններ է գտնում այդտեղ արաբների վարած հարկային քաղաքականության և ավատատիրական հարաբերությունների միջև:

Այս տեսակետը Հ. Ջորյանն ավելի է հիմնավորում հաջորդ՝ «Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը» ուսումնասիրության մեջ, ուր փորձում է ցույց տալ, թե ինչպես են արաբական նվաճումները անդրադարձել ֆեոդալական հողատիրության փոխհարաբերությունների վրա, ինչ տնտեսական շարժառիթներով են բարգավաճել քաղաքները, ինչպիսի ազդեցություն է ունեցել արհեստավորական արտադրությունը ֆեոդալական Հայաստանի ապրանքափոխանակության վրա, և թե վերջապես ինչպես է առաջացել առևտրական և վաճախատրական կապիտալը: Այս բոլոր հարցերի պատասխանները նա տալիս է պատճառահետևանքային հստակ կապի շրջանակներում:

Ամենին չհետապնդելով այն թյուր տպավորությունը ստեղծելու նպատակ, թե այլ պետության գերիշխանության տակ ընկնելը նպաստավոր է տնտեսության զարգացման համար, միաժամանակ ցանականում ենք շեշտել, որ Հ. Ջորյանը կարողացել է ապացուցել, որ արաբական գերիշխանության ժամանակաշրջանում տնտեսական զարգացման մեկ հնարավորության բացասումը ազդակ է հանդիսացել մեկ այլ տնտեսական առավելություն ստանալու համար: Բավական է նշել, որ Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության ցանկում Հայաստանի ընդգրկվելը ազդակ է քաղաքների զարգացման կամ նոր քաղաքների առաջացման համար, ինչպես նաև քաղաքներում առևտրական կապիտալի աշխուժացումն է հարստացնում քաղաքային ազգաբնակչությանը, իսկ մանր արտադրող

դասն ընկնում է վաշխատուական կապիտալի գիրկը: Այն է՝ հընթացս գյուղի քայքայման՝ տեղի էր ունենում քաղաքային բնակչության հարստացում:

Գրքի հաջորդ գլուխը անդրադարձ է X դարում ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումներին: Այս թեմայի վերլուծությունը ևս հսկայածավալ մի նյութ կկազմի, քանի որ հարցադրումները բավականին ինքնատիպ են իսկ պատասխանները՝ ոչ սովորական: Մարքսիստական տեսության գերակայությունը հեղինակի վերլուծություններում հաճախ սոսկ շղարշ է, իսկ նրա եզրակացությունները հաճախ հակասում են գյուղացիական շարժումների մարքսիստական դրդապատճառների մեկնաբանությանը:

Հատորի մյուս երեք գլուխները վերաբերում են հայ պատմագրության ձևավորման հիմնախնդիրներին: Դրանց ընթերցումից հետո կիսում ես Պ. Հովհաննիսյանի այն կարծիքը, որ Հ. Ջորյանը «առաջինն էր, որ փորձեց գնահատել ու արժևորել խորհրդային շրջանում ստեղծված պատմագիտական երկերը և հրատարակեց մի քանի հոդվածներ: Սակայն նրա այս աշխատություններում միակողմանի, սուբյեկտիվ դիրքերից են ներկայացվել խորհրդահայ պատմագրությանն ու դրա առանձին ներկայացուցիչներին (հատկապես Լեոյին, Բ. Բորյանին, Հ. Մանանդյանին) վերաբերող հարցերը, ճիշտ չեն դասակարգվել նախախորհրդային շրջանի պատմագիտական ուղղություններն ու հիմնախնդիրները: Հասկանալի է, որ նրա՝ այդ կարգի շատ մոտեցումներ ու մեկնաբանություններ մեծ չափով աղերս ունեին և հետևանք էին այն տարիներին խորհրդային պատմագիտության մեջ տեղ գտած սխալ մտայնություններին, ինչպես նաև տիրապետող, քաղաքացիություն ստացած գոեհիկ-սոցիոլոգիական տեսակետներին» (էջ 8-9):

Թեև Պ. Հովհաննիսյանը չի սխալվում, այդուհանդերձ Հ. Ջորյանի տեսակետներն ունեն նաև ընդունելի կողմեր, իսկ նրա որոշ ծայրահեղ մոտեցումների համար կան նրբացուցիչ հանգամանքներ: Չէ՞ որ նրա ապրած ժամանակահատվածում խորհրդային պատմագրության մասը կազմող խորհրդահայ պատմագրությունը զարգացման ուղիների որոնումների մեջ էր և վերջնականապես հստակեցված չէր այն տեսությունը, որը պետք է դառնար նրա զարգացման հիմքը: Հարկ է կարծում ենք, սրանով պայմանավորել նրա որոշ հակասական եզրահանգումները, թե՛ մեր մատնանշած և թե՛ հատորի մաս կազմող մյուս ուսումնասիրություններում, որոնցից հատկապես խիստ շահեկան ենք համարում «Ներդասակարգային պայքարը հայ Արշակունի թագավորության վերջին շրջանում (330-337 թթ.)» (*Պատմական Հայաստանի բաժանումը Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև*) հոդվածը: Դրանով Հ. Ջորյանը օգնում է Արշակունյաց թագավորության հիշյալ ժամանակահատվածի բարդ ներքաղաքական կյանքի խորքային գործընթացների մասին առավել ամբողջական պատկերացումներ կազմելու, վեր է հանում այն դրդապատճառները, որոնք նպաստեցին, որ ոչ արդյունավետ ավարտ ունենան մասնավորապես հինգ արքաների (Խոսրով, Տիրան, Արշակ, Պապ,

Վարազդաստ) ջանքերը՝ Մեծ Հայքի թագավորության անկախության պահպանման և ամրապնդման համար: Փաստերի համադրական քննությամբ նա բացահայտում է հիշյալ արքաների քաղաքական ամբողջական դիմագիծը կերտելուն նպաստող ներքաղաքական կյանքի նրբերանգները: Նրանք, սակայն, հերոսականի հետ մեկտեղ միաժամանակ ողբերգական կերպարներ էին, քանի որ Հռոմի և Պարսկաստանի դավադիր նկրտումներին դիմակայելու նրանց ջանքերն ի վերջո ձախողվում էին ներքին ընդդիմադիր իշխանական տարրերի ոչ պետականամետ գործունեության հետևանքով:

Այս առումով հատկանշական են Հ. Չորյանի հետևյալ տողերը. «Երևույթի միայն ձևական հաստատումն ու ներքին ազդակների անտեսումն է այն պնդումը, թե Հայաստանի ճակատագիրը տնօրինվել է հարևան երկու պետությունների միջև կնքված գաղտնի կամ բացահայտ համաձայնություններով: Անկասկած, Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև IV դարում մղված կռիվները նշանակալից դեր են կատարել: Սակայն, դեռևս անլուծելի է մնում այն հարցը, թե ինչու պատմական Հայաստանի հարևան կայսրությունների համար դարեր շարունակ վիճելի առարկա դարձած մի խնդիր կոմպրոմիսային լուծման փորձերից հետո միայն չորրորդ դարում էր իր արմատական լուծումն ստանում: Նախորդ դարերում նույնպես կռիվներ են տեղի ունեցել այդ հարցի շուրջը, որի արմատական լուծումը, սակայն, չեն կարողացել տալ հարևան պետությունները:

Այս հարցի բացատրությունը հնարավոր կլինի տալ միայն այն ժամանակ, երբ հարևան կայսրությունների վարած քաղաքականության կողքին միաժամանակ նկատի կառնենք ֆեոդալական Հայաստանի ներքին կացությունը և այն դրությունը, որ ստեղծվել էր Արշակունի թագավորության և աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների միջև» (էջ 295-296):

Վերջին պարբերությունը հաստատում է այն ճշմարտությունը, որ իրոք IV դարի Արշակունիների ողբերգականության մեջ իրենց ազդեցիկ չափաբաժինն ունեին աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները: Այս առումով Հ. Չորյանը հանգում է գրեթե անխոցելի եզրակացությունների: Հատկապես հետաքրքիր հայեցակետեր է նա զարգացնում Մամիկոնյանների քաղաքական դիրքորոշումների մասին: Մեր կարծիքով, հիմնավոր է հնչում նրա այն տեսակետը, որ Մամիկոնյանների տոհմը, սկսած Վաչեից, «բնիկ «հայրենատեր» նախարարների վերջնական կործանման կողմնակցի դերում հանդես չի գալիս» (էջ 301): Այսպես, Վաչեն Աղձնյաց Բակուր բղեշխի տոհմը վերացնելուց հետո նրա մի ժառանգի խնամակալն է դառնում՝ պահպանելով նրան, Վասակը, որը սխալմամբ դարձյալ կոչվում է Վաչե, թաքցնում է Կամսարական տոհմից մի մանուկի, «որ յետոյ լիներ ժառանգ աշխարհին», Մուշեղը փաստորեն մասնակցում է Պապի դեմ դավադրության կազմակերպմանը, իսկ Մանվելը գահընկեց է անում Վարազդաստին և Մամիկոնյաններին համարում է ոչ թե Արշակունիների ծառաները, այլ ընկերները, դեռ ավելին՝ նրանցից բարձր: Պատմաբանը ստեղծում է այնպիսի տպավորություն, որ Մամիկոնյանները,

ծառայելով արքաներին, միաժամանակ գաղտնաբար ցանկացել են հաստատել իրենց առաջնահերթությունը հայոց քաղաքական աշխարհում: Այդ ցանկությունն ի վերջո ի կատար է ածում Մանվելը:

Վերջապես կարևորում ենք գրքի «Հավելվածը», որում ներառված գրախոսությունները և բանախոսությունները ևս մեկ անգամ վկայում են Հ. Զորյանի՝ պատմաբան-քաղաքագետի և տնտեսագետի անուրանալի ձիրքերի մասին, որոնց առավել հանգամանալից բացահայտումը անհնար է մեր սահմանափակ հնարավորությունների շրջանակներում: Զերծ մնալով այլ մանրամասներից՝ շեշտենք, որ Պ. Հովհաննիսյանի աշխատասիրությամբ լույս տեսած այս հատորը մեզ է վերադարձնում մի մոռացված գիտնականի, որը, ապրելով և գործելով բավականին բարդ ու խիստ հակասական ժամանակահատվածում, կարողացել է հայոց պատմության սոցիալ-տնտեսական և քաղաքական ստվերոտ կողմերի լուսաբանման ասպարեզում խիստ գնահատելի աշխատանք իրականացնել, և որի մշակած պատմագիտական շատ հայեցակարգեր կարող են նպաստել ժամանակակից հայ պատմագիտական մտքի զարգացմանը:

*ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

---

---

*Վանիկ Վիրաբյան, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ. (հետախուզություն, բանակ, ՆԳՆ), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, 746 էջ*

Գիտական և առհասարակ ընթերցող հասարակության ուշադրությանն է ներկայացված մի նոր և արժեքավոր մենագրություն: ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանիկ Վիրաբյանը մանրագնին, համակողմանի վերլուծության է ենթարկել և բազմաթիվ նորահայտ արխիվային փաստաթղթերի հիման վրա առաջին անգամ հետազոտել է մի շարք հիմնախնդիրներ, որոնք սերտորեն առնչվում են Հայաստանի առաջին Հանրապետության հետախուզական ծառայության և հայկական բանակի չմեկնաբանված ու հիրավի կնճռոտ էջերի լուսաբանմանը: Խիստ արդիական այս թեման կարևորվում է մասնավորապես Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ամբողջացման տեսանկյունից:

Վ. Վիրաբյանը ոչ միայն օգտագործել է արխիվային նորահայտ փաստաթղթեր, այլև ուսումնասիրել մամուլում, ժամանակակիցների հուշերում, պատմագիտական գրականության մեջ ամփոփված տեղեկություններ ու տարբեր տեսակետներ: Նրա քննախույզ մոտեցումից ակնհայտ է դառնում, որ նորաստեղծ հայկական պետականության առջև 1918-1920 թթ. ծառայել էին հատուկ ծառայությունների՝ հետախուզության և հակահետախուզության, ինչպես նաև պետական անվտանգության լիարժեք համակարգեր, կարգապահ և մարտունակ կանոնավոր ազգային բանակ ստեղծելու հիմնախնդիրներ:

Հեղինակն առաջին անգամ հանգամանալից պատմաքննական վերլուծության է ենթարկել ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական ու հակահետախուզական բաժանմունքի գործառույթները 1918-1920 թթ. միջազգային ասպարեզում և աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում (Կարսի մարզ, Զանգիբասար, Նախիջևան և այլուր) և հարևան երկրներում (Ադրբեջան, Վրաստան) թշնամական նկրտումների բացահայտման և կանխարգելման ուղղությամբ:

Հավաստի փաստերի ուսումնասիրության հիման վրա Վ. Վիրաբյանը ապացուցում է, որ ՀՀ հետախուզական բաժանմունքը 1918-1920 թթ. որոշակի աշխատանքներ է իրականացրել նաև երկրի սահմաններից դուրս՝ իր գործունեության ոլորտում ընդգրկելով Անդրկովկասը, Ռուսաստանի



հարավը և Հյուսիսային Կովկասը: Մասնավորապես արժեքավոր է Թուրքիայում հայ հետախույզների ծավալած գործունեության լուսաբանումը: Աշխատանքն իրականացվում էր արտաքին գործերի նախարարության միջոցով, որն իր ներկայացուցչություններին կից ուներ հետախույզական ապարատ ու գործակալական ցանց, որոնց միջոցով անհրաժեշտ տեղեկություններ էր հավաքում Թուրքիայի և թուրքական բանակի վիճակի, նրա տեղադրության, թվաքանակի, ծրագրերի, տարածաշրջանային այլ հարցերի մասին (էջ 175-238): Վ. Վիրաբյանը այս առումով կարևոր տեղ է հատկացրել նաև հանրապետության առջև կանգնած անվտանգության ապահովման խնդիրների իրագործման տեսանկյունից ՀՀ հետախույզական ծառայության և արտաքին գործերի նախարարության միջև համագործակցության հաստատման հարցին, ինչպես նաև բացահայտել նրանց միջև առկա տարաձայնությունները, որոնք խոչընդոտել են հետախույզական մարմինների արդյունավետ աշխատանքը (էջ 24-32):

Արժանահավատ սկզբնաղբյուրների հիման վրա Վ. Վիրաբյանը անդրադարձներ է կատարում ՀՀ հետախույզական ծառայության ֆինանսական հնարավորություններին, ՀՀ կառավարության կողմից հատկացվող սուղ միջոցներին, ինչն էապես կաշկանդել է հայ հետախույզների գործունեության արդյունավետությունը: Նա եզրակացնում է, որ այդ գումարները հնարավոր էր ավելացնել, եթե պետական տարբեր օղակներում և տնտեսության մեջ չգերիշխեին թալանը և ներքին քառուրտ, չարաշահումներն ու պետական ունեցվածքի կողոպուտը, անկանոն գորամասերում աչքի զարնող կամայականությունները և Հայաստանի տարածքում մուսուլման բնակչության հակահայկական և հակապետական ընդվզումները, աստիճանավորների բյուրոկրատիան, մեծ չափերի հասնող կաշառակերությունը և այլն (էջ 44-59):

Վ. Վիրաբյանը ներկայացնում է նաև Ջանգեզուրի շրջանում ՀՀ հետախույզական ծառայության գործադրած ջանքերը Ադրբեջանի կառավարության մեքենայությունների բացահայտման և կանխարգելման խնդրում (էջ 127-128, 135-136): Այսպես, հեղինակն ապացուցում է, որ հայկական հետախույզական ծառայության գործուն աջակցությամբ է զանգեզուրցիներին, հայ զորապետներին և մասնավորապես Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ գործող հայկական բանակի զորամասերին հաջողվել 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբերից մինչև 1920 թ. ապրիլը ընկած ժամանակահատվածում կանխել գեներալներ Ալի աղա Շիխլինսկու և Սամեդ բեկ Մեհմանդարովի հրամանատարությամբ գործող ադրբեջանական զորքերի ագրեսիան Սյունիք-Ջանգեզուրի շրջանում (էջ 148-154): Այդուհանդերձ, հարկ ենք համարում մեր խոսքը կենտրոնացնել հայ պատմագրության մեջ բոլորովին չհետազոտված, փոխարենը Վ. Վիրաբյանի կողմից քննարկված հիմնահարցերից մեկի վրա, որն առնչվում է Առաջին Հանրապետության հետախույզական և հակահետախույզական ծառայությունների գործունեությանը՝ միտված իր

դեմ Ադրբեջանի Հանրապետության դեմ կազմակերպած քայքայիչ գործողությունների կանխարգելմանը:

Ուշադրության է արժանի հեղինակի բացահայտած իրողություններից ևս մեկը: ՀՀ հետախուզական ծառայություններն իրենց համեստ հնարավորություններով հարկադրված էին լրջորեն դիմակայել ադրբեջանաթուրքական գործակալների՝ հայկական սահմանի ամբողջ երկայնքով ծավալված գործունեությանը: Բացի դրանից, այդ պայքարը ընթանում էր նաև բուն ՀՀ տարածքում՝ տեղի մուսուլման բնակչության դեմ, որը, ձևավորելով ինքնուրույն կառավարություններ Ախալցխայում, Կարսում, Արալիխում (Սուրմալուի գավառ) ու Նախիջևանում և միաժամանակ Ջանգեզուրի ու Ղարաբաղի տարածքների վրայով կապեր հաստատելով Ադրբեջանի հետ, թուրքական գործակալական ցանցով օղակել էր Հայաստանը՝ սպառնալիք դառնալով հայ ժողովրդի խաղաղ, ստեղծարար աշխատանքի համար (էջ 112-126, 129-134, 137-142):

Վ. Վիրաբյանը անդրադառնում է ադրբեջանա-թուրքական նկրտումներին Կարսի մարզի մի շարք բնակավայրերում, ինչը հաստատվում է նաև ֆրանսիական ռազմական ներկայացուցչության սպա Ա. Պուադեբարի վկայությամբ: Վերջինս փաստել է 1918 թ. վերջին և 1919 թ. սկզբին թուրք գործակալների քարոզչական գործունեությունը Աղբաբայի, Ջարուշատի, Արդահանի և Օլթիի շրջանում՝ «երկրորդ Ղարաբաղ» ստեղծելու նպատակով: Նա վկայակոչում է հավաստի փաստեր 1919 թ. Արդահանի շրջանում վրացական զորամասերի լրտեսական հրահրիչ գործողությունների մասին: Ի դեպ, այդ առիթով բողոք է ներկայացվել նաև Երևանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մախարաձեին (էջ 115-117, 122-125, 135, 144, 194-195 և այլն):

Գրախոսվող մենագրությունում ներկայացված է ադրբեջանա-թուրքական ակտիվ գործունեությունը Շարուր-Նախիջևանում և այլ շրջաններում, որտեղ թուրքերը դեռևս 1918 թ. Երևանի նահանգից հարկադրաբար հեռանալիս թողել էին որոշ թվով սպաներ՝ մուսուլման ազգաբնակչությանը օգնելու համար: Վ. Վիրաբյանը շրջանառում է հետաքրքիր փաստեր այն մասին, որ 1919 թ. ամռանը թուրքական 15-րդ կորպուսից ՀՀ տարածքի տարբեր մասեր էին ուղարկվել արհեստավարժ գործակալներ՝ ընդգրկելով նրանց անունները դասալիքների ցուցակում, որոնց հայկական հետախուզությունը ստիպված էր հակադրել՝ ձեռնարկելով համապատասխան գործողություններ (էջ 128, 140, 180-181, 190-191, 196, 207 և այլն):

Հեղինակը հետաքրքիր փաստեր է բերում նաև այն մասին, որ իրադարձությունների սաղմնավորման հենց սկզբից ՀՀ հետախուզական ծառայությունը տեղեկացված է եղել թուրք-ադրբեջանական մեքենայությունների մասին Ջանգիբասարում, Բոյուք-Վեդիում՝ օգտվելով Երևանում գտնվող Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության բացահայտ աջակցությունից, ինչից ելնելով՝ 1920 թ. սկզբին Հայաստանի կառավարությունը հա-

տուկ որոշում է ընդունում ճնշել խռովարարական շարժումները Կարսի մարզի Զարուշատ, Աղբաբա և այլ բնակավայրերում՝ սկզբնապես ձեռնամուխ լինելով իրավիճակի հանգուցալուծման խաղաղ տարբերակին (էջ 128-129, 136-141, 147-175, 200 և այլն):

Վ. Վիրաբյանը կարևորել է ՀՀ հետախուզական և հակահետախուզական ծառայության գործունեությունը՝ ուղղված Թուրքիայի ձեռնարկած ռազմաքաղաքական պատրաստությունների և մեքենայությունների դեմ: Հենվելով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող արխիվային վավերագրերի վրա՝ նա, ըստ էության, մերժում է Կ. Սասունու և Վ. Արծրունու փաստագուրկ տեսակետները՝ կապված թուրքական բանակի թե՛ թվաքանակի և թե՛ ծրագրերի մասին հայկական հետախուզության ունեցած իբր թե աղոտ պատկերացումների կամ նույնիսկ բացարձակ չիմացության վերաբերյալ, որի հետևանքով հայկական կողմը չի կարողացել արդյունավետորեն հակազդել Քյազիմ Կարաբեքիրի բանակի հետախուզիչների գործունեությանը (էջ 168, 176-177, 181-182, 191, 270 և այլն): Հեղինակը ցույց է տալիս, որ ՀՀ հետախուզական ծառայությունը ոչ միայն աշխատել է հայթայթել արժեքավոր տեղեկություն թշնամական ուժերի կողմից նախապատրաստվող ու ծրագրվող սադրանքների մասին, այլև մերկացրել է և կանխել հակառակորդի լրտեսական գործունեությունը ՀՀ տարածքում, որն ապացուցելու համար նա վկայակոչում է Առաջին Հանրապետության ՆԳ նախարարներից մեկին՝ Ա. Գյուլխանդանյանին, որը ևս փաստել է Հայաստանի զինվորական հետախուզական մարմինների իրազեկությունը թուրքական բանակի կանոնավոր զորամասերի տեղաշարժերի մասին Օլթիի, Սարիղամիշի և Ալաշկերտի ուղղությամբ և այլուր (էջ 157, 173, 179-180 և այլն): Ավելին, համադրելով բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, ինչպես նաև վկայակոչելով Ռ. Հովհաննիսյանի կողմից շրջանառության մեջ դրված որոշ օժանդակ նյութեր, Վ. Վիրաբյանը փաստում է Անդրկովկասում թուրքական նախապատրաստությունները, բանակային սպաներին Անկարայից տրված հրահանգները՝ Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանի Հանրապետությունում տեղավորվելու և մասնավորապես ադրբեջանական բանակում հոժարակամ ծառայության մտնելու առնչությամբ: Նման հեռահար ռազմավարությունը հետագայում գործուն դեր է խաղացել հայ-ադրբեջանական սահմանային կռիվներում, Երևանի նահանգում հրահրված խռովություններում (էջ 125, 180-181 և այլն):

Ի հայտ բերելով ժամանակակիցների և մասնավորապես Վ. Արծրունու վկայակոչած տեղեկություններում առկա հակասությունները՝ Վ. Վիրաբյանը գտնում է, որ հայկական հետախուզական բաժինները բավարար իրազեկված էին Մոսկվայի և Անգորայի միջև կապերի հաստատման, թուրքերին՝ բոլշևիկների ցուցաբերած ռազմական օժանդակության, ինչպես նաև սահմանագլխին թուրքերի ռազմական նախապատրաստությունների և, ինչը շատ ավելի էական է, ՀՀ կառավարության ու զինվորական իշխանու-

թյան դատապարտելի անտարբերության մասին: Ավելին, հմտորեն վերլուծելով մի շարք կարևոր ռազմահետախուզական ամփոփագրեր, նա հանգում է հիմնավոր և միանգամայն իրատեսական եզրակացության, որ չնայած հետախուզական ծառայությունների հաղորդած տեղեկության որոշ հակասականությունը և աղոտությանը՝ Հայաստանի քաղաքական-կուսակցական դեկավար շրջանները և զինվորական բարձրաստիճան այրերը իրոք անհրաժեշտ խելամտությամբ չեն վերաբերվել ստացած տեղեկությանը, նույնիսկ հակառակը՝ անհետատեսորեն կողմնորոշվել են աշխարհաքաղաքական իրադրության թելադրանքով և մեծ տերությունների քաղաքական շահերին հարմարվելով և ռազմավարական խարդավանքներին կուլ գնալով: Հեղինակը իր տեսակետը հիմնավորելու համար վկայակոչում է նաև Ալ. Խատիսյանին, որը փաստել էր, որ Հայաստանի Հանրապետության դեմ խնամքով նախապատրաստվող թուրքական հարձակման մասին առաջին տեղեկությունները հայկական կառավարության խուզարկու մարմինները ստացել են դեռևս 1920 թ. օգոստոսին (էջ 154) և ժամանակին իրազեկել Դաշնակիցների ներկայացուցիչներին՝ պատերազմը կանխելու կամ ագրեսորին զսպելու նպատակով, սակայն վերջիններս դրան առանձնապես կարևորություն չեն տվել, որն ավելի է ոգևորել թուրքերին, որոնք Մուստաֆա Քեմալի ջանքերով այդ ժամանակ բոլշևիկների հետ շահավետ համագործակցության եզրեր էին հաստատել:

Կարծում ենք, իրավացի է Վ. Վիրաբյանը՝ արձանագրելով, որ Գլխավոր շտաբի հետախուզական բաժինն իր հնարավորությունների շրջանակներում տեղեկություններ է հայթայթել թե՛ 1919 թվականին (երբ արդեն կարծես թե կազմակերպվել էր նրա տարբեր օղակների աշխատանքը), թե՛ 1920 թվականին (երբ բարենպաստ պայմաններ էին առկա նրա գործունեության համար)՝ ընդհուպ մինչև 1920 թ. Սևրի օգոստոսյան խանդավառության օրերը, և թե՛ 1920 թ. երկրորդ կեսին, երբ Եվրոպայի հակաթուրքական որոշումները Թուրքիային մղեցին բոլշևիկների հետ մերձեցման: Հենվելով բազմաթիվ փաստերի վրա՝ հեղինակը իրավացիորեն պնդում է, որ հայկական հետախուզական ծառայությունը բավարար չափով տեղեկացված է եղել Կարմիր խաչի դրոշի քողածածկույթի ներքո բոլշևիկյան կառավարության կողմից թուրքերին մատակարարված մեծաքանակ զենք ու ռազմամթերք, ինչպես նաև Սվազ և Մալաթիա դեղորայք փոխադրելու մասին, որոնք բաշխվել են հունական ու հայկական ռազմաճակատներում գործող թուրք զինվորներին: Նա մեջբերում է նաև հետախուզական բաժանմունքի ձեռքբերած Քյազիմ Կարաբեքիրի հայտարարությունը, որ դաշնակից բոլշևիկները իրենց միշտ զենք ու ռազմամթերք են մատակարարել, ինչի շնորհիվ նրանց դժվար օրերը մնացել են ետևում (էջ 181, 183, 187, 192 և այլն):

Վ. Վիրաբյանը բերում է Հետախուզական բաժանմունքի հայթայթած որոշ ուշագրավ փաստեր այն մասին, որ թուրքերը Կ. Պոլսում կազմակերպել են հետախուզական բյուրո, որի գործակալները պետք է աշխատեին

Վրաստանի սահմանագծի մոտ և հետևեին Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Ըստ այդմ նրա կողմից բերվում են հետաքրքիր փաստեր, որոնք վկայում են, որ այդ ժամանակ թուրքերը հավաքագրել էին հայերենին տիրապետող բազմաթիվ վրացիների և ռուսների՝ Հայաստան ուղարկելու և Գերմանիայում տպագրված մեկ միլիոն թուրքական կեղծ լիբրաներ տարածելու, տեղում հայկական չեկերը արժեզրկելու և հայկական շուկայում անարխիա սերմանելու ու տնտեսական քառսը խորացնելու նպատակով (էջ 213):

Սույն մենագրությունում քննության է առնված չափազանց հետաքրքիր մի հարց ևս. կարևորություն է տրվել Կ. Պոլսից հայ հետախույզ, կապիտան Տ. Դևոյանցի՝ գեներալ Գ. Ղորղանյանին Փարիզ ուղարկած մի շարք տեղեկատվական ծրարներին, որոնցում ուշագրավ փաստեր կան թուրքական գործերի տեղաշարժերի, նրանց մի շարք ռազմաքաղաքական ձեռնարկումների և նախապատրաստությունների մասին: Դրանք ընդգծված հակահայկական միտվածություն ունեին և մաթեմատիկական ճշգրտությամբ հետազայում իրականության վերածվեցին, սակայն ՀՀ պաշտոնական իշխանության, մասնավորապես զինվորական նախարարության կողմից անտեսվեցին, ավելին, գնահատվեցին որպես «Դևոյանցի ցնդաբանություններ»: Վ. Վիրաբյանը առանձնահատուկ նշանակություն է տալիս 1919-1920 թթ. Տ. Դևոյանցի՝ Կ. Պոլսից ուղարկած մի շարք հեռագրերին ու ամփոփագրերին և այն տեղեկատվությանը, որ անգամ դեռ 1920 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության վրա նախապատրաստվող թուրքական հարձակման մասին, որն ուղղակի անտեսվեց ՀՀ բարձրագույն իշխանությունների և զինվորականների կողմից (էջ 187, 236-237, 270 և այլն):

Հեղինակի կողմից մանրամասն անդրադարձ է կատարվել նաև ՀՀ հետախուզական մարմինների կողմից Հայաստանի տարածքում թշնամու գործակալների գործունեության կանխարգելման աշխատանքներին, որոնց արդյունքում բացահայտվել և կանխվել է Անտոն Մարոկուտտիի, Իվան Տարականովի և այլոց հայկական պետության դեմ ուղղված քայքայիչ գործունեությունը, որոնք ՀՀ զինվորական դատարանի կողմից դատապարտվել են և կրել իրենց պատիժը բանտում (էջ 238-258):

Մենագրության մեջ Վ. Վիրաբյանը հանգամանալից անդրադարձել է 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության, միլիցիայի տարբեր օղակների ստեղծման աշխատանքներին որպես պետական անվտանգության համակարգի կարևոր բաղկացուցիչների, փաստական հարուստ հիմքի վրա վերհանել դրանց աշխատանքում տեղ գտած թերություններն ու բացթողումները: Միաժամանակ հեղինակի կողմից բացահայտվել են ՆԳՆ մարմինների համագործակցության եզրերը ՀՀ հետախուզական մարմինների հետ, ինչպես նաև ի ցույց են դրվել տեղ գտած ձախողումներն այդ բնագավառում (էջ 254-255):

Վ. Վիրաբյանը հանգամանալից պարզաբանել է ՀՀ կառավարության գործադրած ջանքերը հայկական բանակում զանգվածային տարածում գտած դասայրության, անկանոն խմբավորումների ու ջոկատների հակաօրինական և գործնականում հակապետական գործողությունների հաղթահարման ուղղությամբ, որոնք ցավոք անհրաժեշտ արդյունավետություն չունեցան բյուրոկրատական քաշքշուկների, հանցավոր շահարկումների, կաշառակերության և անհամար գեղծարարությունների պատճառով, որոնք արդյունք էին նաև ՆԳ մարմինների և հատկապես կանոնավոր բանակի կառույցների և «խմբապետական համակարգի» միջև առկա հակամարտության: Հեղինակը ըստ ամենայնի ձգտում է կարևորել ՀՀ կառավարության ու պետության զինված խմբերի կողմից կատարվող հանցագործությունները կանխելու ջանքերը, որոնք կարևոր էին բանակաշինական ու պետական անվտանգության համակարգի ձևավորման գործընթացները կյանքի կոչելու տեսանկյունից (էջ 371-423):

Նա հայկական բանակը ներկայացրել է որպես պետական անվտանգության համակարգի կարևորագույն բաղկացուցիչ՝ ձգտելով համակողմանի բացահայտել կուսակցական խմբակցությունների ռազմավարությունն այդ խնդրում: Հայկական բանակը ստեղծվել է ռուսական ձևանմուշով և կոչված էր լուծելու ՀՀ առաջ ծառացած անվտանգության հիմնախնդիրները (էջ 310-371): Հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, որ ՀՀ անվտանգության ապահովման տեսանկյունից կարևորագույն այդ համակարգը մի շարք դժվարություններ, սայթաքումներ ունեցավ, այն դիմազրկվեց, թուլացավ և որոշակի իմաստով բարոյալքվեց, ոգու ահռելի կորուստ ունեցավ, չկարողացավ հաղթահարել իր մեջ արմատացած վախը և դիմակայել ավելի մեծ փորձությունների՝ Ադրբեջանի հետ տևական հակամարտությանը, և վերջապես՝ թուրք-հայկական 1920 թ. աղետալի պատերազմին, առավել ևս, երբ այդ բանակի մի մասը պարզապես անմարտունակ դարձավ, իսկ մյուս մասը, ինչպես դա տեղի ունեցավ Ղարաբաղի պարագայում, դաշնակիցների կողմից խաբեությամբ դուրս բերվեց ռազմաքաղաքական առճակատման թատերաբեմից, որը նաև ՀՀ թշնամիների կողմից լավ հաշվարկված ռազմավարության արդյունք էր, և դա այն պարագայում, երբ հայկական զորքը փառավոր հաղթանակ էր տարել Մարդարապատի 1918 թ. հերոսամարտում, և անշուշտ՝ 1918 թ. դեկտեմբերին վրաց-հայկական երկշաբաթյա հաղթական պատերազմում:

Վ. Վիրաբյանի պատմաքննական անդրադարձը անցյալի դասերին, կարծում ենք, միանգամայն ուսանելի է մեր օրերի պետաքաղաքական զարգացման գործընթացների իմաստավորման տեսանկյունից: Հեղինակը գիտատեսական բարձր մակարդակով քննության է ենթարկել նաև ՀՀ հետախուզական ծառայության և բանակի, ՆԳՆ մարմինների հնարավորինս փոխկապակցված գործունեության ամբողջական պատմությունը, որը ժամանակին անտեսվել է խորհրդահայ պատմագրության կողմից:

Հարկ է նաև հատուկ նշել Վ. Վիրաբյանի կողմից գիտական շրջանառության մեջ դրված այն հսկայածավալ արխիվային նորահայտ փաստերի մասին, որոնք ամփոփված են վեց արժեքավոր ու փաստական նյութով հարուստ հավելվածներում և զգալի հետաքրքրություն են ներկայացնում մասնագետ պատմաբանների և մասնավորապես Առաջին Հանրապետության պատմության հետազոտողների համար: Հեղինակն առաջին անգամ հայ պատմագիտության մեջ գիտական շրջանառության մեջ է դրել ՀՀ Զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և հակահետախուզական բաժանմունքի բոլոր 22 ռազմահետախուզական ամփոփագրերը, և մասնավորապես Տ. Դևոյանցի դիտարժան փաստերով առատ զեկուցագրերը և այլ փաստաթղթեր:

Վ. Վիրաբյանի այս հիմնարար մենագրությունը կարևոր ներդրում է հայ պատմագիտության մեջ, որն անտարակույս իր արժանի տեղը կգտնի պատմաբանների, ընթերցող լայն հասարակայնության, պետական և քաղաքական գործիչների գիտատեսական հետաքրքրությունների զինանոցում:

*ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ*

---

**Рубен Галчян**, *Азербайджанские историко-географические фальсификации. Историко-культурное и картографическое исследование, Москва, «Ключ-С», 2013, 210 с.*

**Ռուբեն Գալչյան**, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները: Պատմամշակութային և քարտեզագրական հետազոտություն, Մոսկվա, «Կլուչ-Ս», 2013, 210 էջ*

Թավրիզում՝ Մեծ եղեռնից մազապուրծ վանեցիների ընտանիքում, ծնված Ռուբեն Գալչյանը սկզբնական կթությունը ստացել է Թեհրանում, այնուհետև ուսումը շարունակել Մեծ Բրիտանիայի Բիրմինգհեմ քաղաքի Աստոն համալսարանում: Լոնդոնում բնակություն հաստատելուց հետո նա սկսել է գիտահետազոտական աշխատանքներ իրականացնել Մեծ Բրիտանիայի և եվրոպական այլ երկրների գրադարաններում, հավաքել է և վերլուծել հայ ժողովրդին և Հայաստանին առնչվող քարտեզագրական ու պատմական հարուստ ժառանգության վերաբերյալ նյութեր:

Իր առաջին՝ «Հայաստանի պատմական քարտեզներ» վերտառությամբ աշխատությունը Ռ. Գալչյանը 2004 թ. հրատարակել է անգլերեն<sup>1</sup>, որի տրամաբանական շարունակությունը հետագայում հայերեն, անգլերեն, ռուսերեն և պարսկերեն հրատարակած կարևոր և հետաքրքիր տարատեսակ հետազոտական աշխատանքներն են՝ նվիրված տարածաշրջանի, մասնավորապես Հայաստանի պատմական քարտեզներին<sup>2</sup>: Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի հեղինակի գրախոսվող սույն աշխատությունը<sup>3</sup>:

Ռ. Գալչյանն անդրադառնում է Հայաստանի և Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունների նկատմամբ Ադրբեջանի պետական իշխանությունների որդեգրած հայատյաց քաղաքականությանը և տեղեկատվական պատերազմում կիրառվող զեղծարարություններին ու մտահոգություն հայտնում, որ այդ լայնածավալ զեղծարարությունները համատարած են: Բազմաթիվ հակահայկական աշխատություններ այնտեղ հրատարակվում

---

<sup>1</sup> **Galichian R.**, *Historic Maps of Armenia. The Cartographic Heritage*, London & NY, 2004.

<sup>2</sup> Տե՛ս օրինակ՝ **Galichian R.**, *Countries South of the Caucasus in Medieval Maps*, Yerevan and London, 2007, *նույնի՝* *The Invention of History. Armenia, Azerbaijan and the Showcasing of Imagination*, Yerevan and London, 2009, *նույնի՝* *Clash of Histories in the South Caucasus. Redrawing the Maps of Armenia, Azerbaijan and Iran*, London, 2012, *նույնի՝* *Clash of Histories in the South Caucasus*, Tehran, 2015, *նույնի՝* *A Glance into the History of Armenia through Cartographic Records*, London, 2015:

<sup>3</sup> Այս աշխատությունը հրատարակվել է նաև անգլերեն և պարսկերեն, իսկ հայերեն տարբերակը տե՛ս [www.roubengalichian.com](http://www.roubengalichian.com) կայքում:



են շքեղ ձևավորմամբ, տարբեր լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, արաբերեն) և տարածվում համայն աշխարհում (էջ 8-9):

Հեղինակը մեկնաբանում է Արաքսից հյուսիս ընկած «Ադրբեջան» կոչվող երկրի առաջացման (1918 թ.) դրդապատճառները, խորհրդային գաղափարախոսության պայմաններում քաղաքական կեղծարարությունները, նախորդ դարի 60-ական թվականներին նոր թափ ստացած հակահայկական քարոզչությունը (Զ. Բունյաթով, Ֆ. Մամեդով, Ի. Ալիև, Կ. Մահմեդ-գադե, Դ. Ախունդով և այլք) և անդրադարձներ կատարում հակազիտական հրատարակությունների դեմ պայքարում իրենց ավանդը ներդրած հայ հեղինակների (Պ. Սևակ և Ա. Մնացականյան, Կ. Մելիք-Օհանջանյան, Բ. Ուլուբաբյան, Բ. Հարությունյան, Ա. Հակոբյան, Պ. Մուրադյան և Կ. Յուզբաշյան, Հ. Մարգարյան և այլք) աշխատություններին ու պատմական քարտեզների կեղծարարությանը:

Ռ. Գալյանը ուշադրությունը բևեռում է ադրբեջանցիների՝ շրջանառության մեջ դրած «Արևմտյան Ադրբեջան», «Հյուսիսային Ադրբեջան» և «Հարավային Ադրբեջան» (նկատի ունեն համապատասխանաբար՝ ներկայիս Հայաստանի և Արցախի, Ադրբեջանի և Իրանի հյուսիսարևելյան տարածքները) աշխարհագրական մտացածին հասկացություններին: Նշենք, որ մեր տարածքներից գատ՝ ադրբեջանցիները մեծ հավակնություններ ունեն նաև մյուս հարևանից՝ Իրանի Իսլամական Հանրապետության Ատրպատական-Ադրբեջան նահանգից: Քանի որ այդ տարածաշրջանը սահմանակցում է ՀՀ-ին և ԱՀ-ին, ապա հեղինակը իրեն իրավունք է վերապահում քննարկել նաև այդտեղ առկա տարածքային, լեզվական, մշակութային և այլ խնդիրները ու այդ ամենը դիտարկել մեկ ենթատեքստում: Նա մեկնաբանում է նաև ադրբեջանական «պատմագիտական մտքի արգասիք» այլ «փայլուն» օրինակներ, ինչպիսիք են տարածաշրջանում հայերի «եկվոր» լինելու, ադրբեջանցի հեղինակների կողմից շրջանառության մեջ դրված՝ իրենց իբրև «տեղաբնիկներ» ներկայացնող և աղվանների (Աղվանքի) հետնորդներ հորջորջվող պիտակները: Պարզաբանենք, որ վերջին հակապատմական դրույթից է բխում այն թեզը, թե իբր պատմամշակութային հայկական արժեքները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ աղվանաադրբեջանական: Իրենց վերագրելով հայկական պատմամշակութային արժեքները, օրինակ՝ խաչքարերը, ադրբեջանցիները փորձում են այդ եզրույթը փոխարինել թուրքերեն «խաչդաշ» («դաշ» թուրքերեն նշանակում է քար) բառեզրով, սակայն միաժամանակ չեն խորշում կեղծել իրենց իսկ տարածքում գտնվող նույն այդ հուշարձանները՝ ջնջելով եկեղեցիների վրա փորագրված հայկական գրություններն ու խաչերի պատկերները և կամ դրանք հողին հավասարեցնել: Այդպիսի վառ օրինակներից է Ջուղայի միջնադարյան հայկական խաչքարերի ճակատագիրը, որոնք 2005 թ. ավերվեցին: Ըստ հեղինակի՝ նմանատիպ քաղաքականության նշանաբանն է. «Եթե հնարավոր է յուրացնել՝ յուրացրեք, եթե ոչ՝ ոչնչացրեք» (էջ 106-110):

Չնայած այն հանգամանքին, որ գրքում պատմական քարտեզները ներկա-

յացվում են առանձին բաժնում, այդուհանդերձ գործնականում դրանց մասին հղումների հանդիպում ենք ամենուր: Ռ. Գալյանը թվարկում է անցյալի այդ խոսուն «վկաների» վերնագրերը և դրանց հեղինակների անունները, որոնք հին աշխարհի, միջնադարի և համեմատաբար ոչ վաղ անցյալի գիտական մտքի փայլուն ներկայացուցիչներն են (Հերոդոտոս, Ստրաբոն, Պտղոմեոս, Պաուլուս Օրոսիոս, Իսիդոր, Իստախրի, Ալ. Մուղադասի, Իդրիսի, Ֆիլիպ դե լա Ռոյու և այլք): Միաժամանակ նա գրքում զետեղված այդ քարտեզների օրինակների համեմատության միջոցով ևս մեկ անգամ փաստում է այն պարզ ճշմարտությունը, որ տարածաշրջանին վերաբերող բոլոր հին քարտեզներում ներկայացված է Հայաստանը (Մեծ և Փոքր Հայքերը), իսկ Արաքսից հյուսիս գտնվող տարածքներում նույնիսկ շատ մեծ ցանկության դեպքում, ի հեճուկս աղբյուրների «գիտնականների» և կեղծարարների, «Աղբյուր» կոչվող աշխարհագրական միավոր ոչ մի կերպ հնարավոր չէ նշմարել (էջ 11, 72-104, 118-137): Աղբյուրների հեղինակների իրականացրած կեղծարարությունները տասնամյակներ շարունակ հող են նախապատրաստել հարևան երկրներին տարածքային հավակնություններ ներկայացնելու համար: Հեղինակը ընթերցողին է ներկայացնում «հայցող կողմի» տարածքային «Մեծ Աղբյուր» «պահանջ-ցանկությունները» և միաժամանակ չհիմնավորված, մտացածին ու մտավարժանքների արգասիք այդ «գիտական» աշխատանքներին հակադրում իրական փաստեր՝ հղելով պատմական գրավոր և քարտեզագրական սկզբնաղբյուրները՝ հայկական, հունական, հռոմեական, բյուզանդական, մուսուլմանական, ինչպես նաև օտարազգի ճանապարհորդների հիշատակությունները՝ ի ցույց դնելով աղբյուրական «պատմագրության» սնանկությունը: Նա ստեղծել է գիտականորեն հիմնավորված տրամաբանական հարցադրումների և հերքումների մի կուռ կառույց՝ աներկբա ապացուցելով այդ «պահանջ-ցանկությունների» կեղծ և անհիմն լինելը:

Ռ. Գալյանը ոչ միայն հերքում է աղբյուրների հեղինակների անհիմն հավակնությունները, այլև պատմական փաստերի վերհանումով ու նորովի մեկնաբանությամբ նրանց հասկացնում, որ «մի քանի հազարամյա պատմության, տեղաբնիկ լինելու, աղվանների հետնորդներ և հարուստ մշակույթի» մասին զառանցանքների փոխարեն լավ կլիներ, եթե նրանք խորհրդածեին, թե ինչ գործ ունեն այս տարածաշրջանում, փորձեին փնտրել իրենց իրական պատմական արմատները Ասիա կոչվող աշխարհամասի մեկ այլ տարածաշրջանում և ընդհանրապես մտորեին, թե «Աղբյուր» կոչվող պետությունն իրենից ինչ է ներկայացնում:

Կասկածից վեր է, որ Ռ. Գալյանի աշխատության հստակ, տրամաբանական շարադրանքն ու մեկնաբանությունները համոզիչ են ոչ միայն մասնագետներին, այլև ընթերցող հանրության լայն շրջաններին:

*ՎԱՐԴԱՆ ՄԽԻԹԱՆՅԱՆ*

---

---

**Мамука Гогитидзе, Георгий Бежиташвили**, Военная элита Армении (Армяне-генералы, уроженцы Грузии), Биографический справочник, Тбилиси, «Свети», 2014, 230 с.

**Մամուկա Գոգիտիձե, Գեորգի Բեժիտաշվիլի**, Հայաստանի ռազմական էլիտան (Վրաստանում ծնված հայ զենեարալները), Կենսագրական տեղեկատու, Թբիլիսի, «Սվետի», 2014, 230 էջ

Պատմական գիտությունների դոկտորներ Մամուկա Գոգիտիձեի և Գեորգի Բեժիտաշվիլու հեղինակած կենսագրական գիրքն ամփոփում է Վրաստանում ծնված հայկական ծագումով զինվորականների մասին հարուստ տեղեկություններ: Նրանցից 63-ը, սկսած 1723 թ. մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը, որոնց հեղինակներն ընդգրկել են զինվորականների առաջին խմբում, ռուսական բանակում ունեցել են ծովակալի կամ զենեարալի աստիճաններ: Երկրորդ խմբում ի մի են բերված 1940-1991 թթ. խորհրդային բանակում և ռազմածովային նավատորմում ծառայած 38 անձինք, իսկ երրորդում՝ Հայաստանի Հանրապետության վեց զենեարալ, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունում և ԱՄՆ-ում ծառայած՝ համապատասխանաբար չորս և մեկ զենեարալներ: Հեղինակները ներկայացրել են 112 հայ զենեարալների կենսագրություն, որոնց մի մասի լուսանկարները կցված են նրանց կենսագրականներին (խոսքը վերաբերում է ավելի քան 70 լուսանկարների, մահարձանների դիմապատկերների և այլն, քանզի նրանց չի հաջողվել ձեռք բերել բոլոր գորավարների լուսանկարները):

Հարկ է նշել, որ Մ. Գոգիտիձեն և Գ. Բեժիտաշվիլին գրքի սկզբնամասում տեղադրել են Ռուսական կայսրության զինանշանը, որին հաջորդում են իշխան Աբամելիքովների կամ Աբամելիքների տոհմական զինանշանը և տապանագիրը, այնուհետև՝ Մ. Զ. Արդոյան-Երկայնաբագուկի (Դոլգորուկի) Թեմիր-Խան-Շուրայում գտնվող հուշարձանի լուսանկարը և նրա իշխանական տոհմի զինանշանը (էջ 18, 23): Գրքում ամփոփված են նաև ազնվականական ծագում ունեցող Հախվերդովների, Բեհբութովների, Բեկթաբեգովների տոհմական զինանշանները (էջ 35, 56, 59), զենեարալներ Հակոբ Բագրատունու Լոնդոնում գտնվող գերեզմանի և Տեր-Ղուկասովի Թիֆլիսում գտնվող տոհմական դամբարանի լուսանկարները (էջ 91):

Գրքի երկրորդ մասում Մ. Գոգիտիձեն և Գ. Բեժիտաշվիլին տեղադրել են հավելված ռուսական բանակի զենեարալական աստիճանակարգի մասին (էջ 93-96), որին հաջորդում են ռուսական բանակի զինվորական աստիճանակարգը և մեդալները, շքանշանները, զենեարալների ուսապանակները և ուսադիրները ներկայացնող ֆոտո նկարագրումները (էջ 97-108):

Խորհրդային բանակում և ԽՍՀՄ ռազմածովային ուժերում ծառայած գեներալներին նվիրված՝ գրքի հաջորդ մասում Մ. Գոգիտիձեի և Գ. Բեժիտաշվիլին գետեղել են նրանց մի մասի գերեզմանաքարերը (էջ 113, 129, 132, 137, 155, 162, 166, 172-173, 178): Հավելվածի տեսքով նրանք ներկայացրել են նաև ԽՍՀՄ պետական բարձրագույն պարգևների, այդ թվում մեդալների, շքանշանների, գեներալական ուսադիրների լուսանկարները, որոնց արժանացել են գրքում տեղ գտած հայ գեներալները:

Կենսագրական տեղեկատուի վերնագիրը ինքնին փաստում է, որ այն կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել հայագիտության որոշ կողմերի պարզաբանման, ինչպես նաև հայ-վրացական առնչությունների լուսաբանման տեսանկյուններից: Առհասարակ, վրաց հեղինակների կողմից նման բնույթի գրքերի հրատարակումը արժանի է առանձնակի ուշադրության, մանավանդ որ խնդրո առարկա գրքում ներկայացված է Վրաստանում ծնված հայկական բարձրագույն զինվորականության ընտրանին: Մեզ համար առավել կարևոր է սկզբունքորեն պարզել, թե հեղինակները ինչ տեսանկյունից են նրանց ներկայացրել, ինչ խնդիրներ են առաջադրել և արդյոք նոր կնճիռներ չեն հավելել հայ-վրացական հարաբերությունների մեկնաբանությանը:

Հարկ է ընդգծել մեկ հանգամանք: Ըստ Մ. Գոգիտիձեի և Գ. Բեժիտաշվիլու մոտեցման՝ Հայաստանի Հանրապետության զարգացման տարբեր փուլերում (Առաջինից մինչև Երրորդ Հանրապետության ժամանակաշրջանում) հայ ժողովրդի համար կարևոր ռազմաքաղաքական զարգացումներում և առհասարակ հայկական պետականության կայացման գործում կարևոր դեր խաղացած ռազմաքաղաքական այրերի զգալի մասը ծնվել է վրացական միջավայրում և ոչ թե Արևելյան կամ Արևմտյան Հայաստանի տարածքներում՝ էապես ազդելով բազմաթիվ վճռորոշ իրադարձությունների վրա: Իսկ նման հավաստումների համար որոշ հիմքեր անտարակույս կան:

Անառարկելի է, որ հայ մտավորականության, ինչպես նաև պետական ու քաղաքական գործիչների մի ստվար մասը ծնվել է և գործել վրացական միջավայրում, անգամ նախընտրել այն և նույնիսկ հայկական պետականության կազմավորման պահին դժկամությամբ լքել Վրաստանը՝ փորձելով թիֆլիսից կառավարել Երևանում ծնունդ առած հայոց պետական մեքենան: Գրախոսվող տեղեկատուն վերլուծելիս կարելի է ակամայից հանգել այն եզրակացության, որ Մ. Գոգիտիձեի և Գ. Բեժիտաշվիլու նպատակը եղել է թեկուզև այդ գեներալների հայ լինելու հանգամանքը ի ցույց դնելը: Մակայն, դրա հետ մեկտեղ, նրանք հետապնդել են այլ նպատակներ ևս. այն է՝ ընթերցողին համոզել, որ բարձրաստիճան հայ զինվորականների համապատասխան սերնդի ներկայացուցիչները միայն վրացական հողի վրա կարող էին ծաղկել, քանզի թիֆլիսը այդ ժամանակ եղել է Անդրկովկասի կարևորագույն և անփոխարինելի մշակութային-քաղաքական կենտրոնը: Միաժամանակ նրանց ուշադրության կենտրոնում է նաև այն իրողությունը, որ Հայաստանի

Առաջին Հանրապետության հռչակման և հետագա գործառույթների ժամանակաշրջանում հենց թիֆլիսյան-վրացական բովով անցած հայ գեներալներն են իրենց ծառայությունները ի սպասս դրել հայկական պետականության վերածննդի գործին:

Ընդհանուր առմամբ սույն գիրքը որոշակի հետաքրքրություն ներկայացնում է, թեպետ տարբեր հեղինակներ այդ թեմային անդրադարձներ արդեն կատարել են<sup>1</sup>: Մ. Գոգիտիձեն և Գ. Բեժիտաշվիլին այս կամ այն կերպ ներկայացրել են ռազմական գիտելիքներով և զորավարական տաղանդով աչքի ընկած, Ռուսական կայսրության բանակի մղած մարտերում և Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմաքաղաքական տարեգրության մեջ իրենց ներդրումն ունեցած, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո թե՛ Ռուսաստանի Դաշնության բանակում և թե՛ ազգային պետականությունների հռչակումից հետո ձևավորված վրացական ու հայկական զորամիավորումներում ծառայության մեջ գտնված հայ զինվորականներին:

Գրախոսվող գիրքը բնականաբար միանշանակ հնարավոր չէ ընդունել, քանզի այն արժանի է ոչ միայն դրվատանքի, այլև գիտական անկողմնակալ քննադատության: Զինվորական գործիչներին վրաց հեղինակները որոշակի առումով ներկայացնում են ըստ իրենց մեկնակետի, ինչն անաչառ վերլուծության պարագայում հարկադրում է հետամուտ լինել մի շարք պատմաքննական սկզբունքների՝ ամեննին չբացառելով նրանց նկատմամբ հարգանքը:

Մ. Գոգիտիձեն և Գ. Բեժիտաշվիլին զգալի տեղ են հատկացրել 1918-1920 թթ. իրենց գործունեությունը ծավալած, ինչպես նաև խորհրդային ժամանակաշրջանից առ այսօր գործած գեներալներին: Ըստ այդմ՝ հնարավորության շրջանակներում կարևորելով անդրադարձը այդ հիմնախնդրին՝ նրանք ի մի են բերել հասանելի բոլոր տեղեկությունները, նախկինում հրապարակված նյութերը և մասնակի առումով լուծում են տվել մի խնդրի, այն է՝ համեմատաբար համահավաք ներկայացրել տարբեր ժամանակաշրջաններում և երկրներում գործած՝ Վրաստանում ծնված հայ գեներալներին: Այս առումով կասկածից վեր է, որ կենսագրական տեղեկատուն արժեքավոր է: Սակայն այս կապակցությամբ տեղին է հիշատակել նաև այն կարևոր փաստի մասին, որ Մ. Գոգիտիձեն, օգտվելով ընձեռված հնարավորությունից և առիթից, դեռևս 2001 թ. Կիևում հրատարակած իր աղմկահարույց «Վրացական գեներալիտետ» տեղեկատվական գրքում ծագումով հայ մի շարք գեներալների և

---

<sup>1</sup> Տե՛ս **Асадов Ю. А.**, 1000 офицерских имен в армянской истории, Пятигорск, 2004, **Հայազն Տ.** (**Պետրոսյանց Տ. Մ.**), **Ղազարյան Գ.**, 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ, Երևան, 2009 (տե՛ս նաև անգլերեն թարգմանությունը՝ **Petrosyants T., Ghazaryan G.**, 1100 Armenian Generals and Admirals, Yerevan, 2015. Маршалы, генералы армянского происхождения в Санкт-Петербурге. Биографический справочник, изд. второе, допол., составитель Армен Меружанян, Санкт-Петербург, 2013): Տե՛ս նաև **Հայազն Տ., Պետրոսյանց Հ.**, 200 հայ զորավարներ, Երևան, 2011:

գորավարների ներկայացրել է իբրև ազգությամբ վրացիների<sup>1</sup>: Դրան կտրականապես հակադրվում են հայ հեղինակներ Տիգրան Հայազնը և Գարեգին Ղազարյանը, որոնք արդարացիորեն նրան դարձրել են իրենց քննադատության թիրախը, որը ջանք չի խնայել վերոնշյալ իր գրքում հայ գեներալների մի մասին անհարկի վերագրել «շվիլի» վերջածանցը: Ըստ այդմ՝ որպես վրացի գեներալներ են ներկայացվել երեք Ավալովները, երկու Արդուսյան-Երկայնաբագուկները, երեք Գեղնանովները, երկու Կորգանովները (Ղորղանյանները), գեներալ-մայոր Սարաջևը, երկու Սումբատովները, գեներալ-մայոր Թարխանովը և մի շարք հայորդիներ<sup>2</sup>, որոնց անունները, սակայն, հանիրավի բացակայում են ընթերցողի դատին հանձնված կենսագրական գրախոսվող տեղեկատուում:

Այդուհանդերձ, հեղինակները որդեգրել են բավականին նրբանկատ մի մոտեցում՝ նշելով, որ հայազգի գեներալների ծննդավայրերը անվիճարկելիորեն վրացական են և մշտապես կազմել են Վրաստանի հանրապետության տարածքային ամբողջականության բաղկացուցիչ մասը (էջ 126, 130, 135, 160, 163, 167, 174, 200, 206 և այլն): Դրա հետ մեկտեղ նրանք թույլ են տվել նաև, մեր կարծիքով, անճշտություններ և սխալներ: Թվարկելով իշխան, գեներալ-մայոր Իվան Սեմյոնի Աբամելիքովի (Աբամելիք) կենսագրական տվյալները՝ Մ. Գոգիտիձեն և Գ. Բեժիտաշվիլին նշում են, որ նա ծնվել է Թիֆլիսում (էջ 17), այն դեպքում, երբ Տ. Հայազնը և Գ. Ղազարյանը այլ փաստերի հիման վրա իբրև նրա ծննդավայր մատնացույց են անում Մոսկվան<sup>3</sup>: Նույնն է նկատվում գեներալ-մայոր Դմիտրի Իվանի Ախշարումովի պարագայում: Իբրև նրա ծննդավայր հեղինակները համարում են Թիֆլիսը (էջ 36), այն դեպքում, երբ Արմեն Մերուժանյանի կազմած ժողովածուում որպես նրա ծննդավայր նշվում է Աստրախանը<sup>4</sup>:

Մ. Գոգիտիձեն և Գ. Բեժիտաշվիլին ոչ այնքան ընդունելի մոտեցում են ցուցաբերում ինժեներատեխնիկական ծառայությունների գեներալ-գնդապետ Արտեմ Իվանի Միկոյանի նկատմամբ, որը հարուցում է շարադրանքի որոշակի խճճվածություն: Այսպես, մի կողմից նրանք գրում են, որ նա ծնվել է Թիֆլիսի նահանգի Սանահին բնակավայրում՝ այն համարելով Վրաստանի տարածքի անքակտելի մաս և ըստ էության կարևորում նրա վրացական հողում ծնված լինելու հանգամանքը: Մյուս կողմից՝ ընդամենը փակագծերում հեղինակները նշում են, որ այժմ այն գտնվում է Ալավերդի քաղաքի սահմանագծում՝ Լոռվա մարզում՝ Հայաստանում՝ արձանագրելով

---

<sup>1</sup> Ст'у Грузинский генералитет (1699-1921). Биографический справочник. Составил М. Гогитидзе, Киев, 2001, с. 16-19, 27-30, 33-34, 61-64, 72-73, 87, 98-99, 101, 104-112, 114-116, 137-146, 149-150, 160-162 և այլն:

<sup>2</sup> Ст'у **Հայազն Տ., Ղազարյան Գ.**, նշվ. աշխ., էջ 17:

<sup>3</sup> Ст'у նույն տեղում, էջ 281:

<sup>4</sup> Ст'у Маршалы, генералы армянского происхождения в Санкт-Петербурге, с. 71:

այսօրվա իրողությունը, սակայն դրա հետ մեկտեղ կրկին հատուկ ընդգծում են նրա Վրաստանում ծնված լինելու հանգամանքը (էջ 153): Այդուհանդերձ, հայկական սկզբնաղբյուրներում հստակ նշված է գեներալ-գնդապետ Արտեմ Իվանի Միկոյանի՝ հայկական Լոռիում ծնված լինելու փաստը<sup>1</sup>:

Կարծում ենք նաև, որ վրաց հեղինակները սխալ են թույլ տվել Լևոն (Լեոն) Աբգարի Օրբելու կենսագրական տվյալները ներկայացնելիս, երբ ընդգծել են, որ նա ծնվել է Վրաստանում, սակայն միաժամանակ փաստել, որ նրա ծննդավայրը Ծաղկաձորի մոտ գտնվող Դարաչիչագ ավանն է (էջ 163), և դա այն պարագայում, երբ վերջինս եղել է Հայաստանի Հանրապետության տարածքի անբաժանելի և անօտարելի մասը:

Մ. Գոգիտիձեի և Գ. Բեժիտաշվիլու գրքում տեղ գտած ծագումով հայ՝ Վրաստանում ծնված գեներալների կենսագրականները ընդհանուր առմամբ այս կամ այն չափով հրապարակված են: Այնուամենայնիվ, այն՝ որպես համահավաք գործ, հայ զորապետների անցած ուղու և կենսագրական դիմանկարների՝ ամբողջացման առումով կարող է հետաքրքրել պատմաբաններին՝ մասնավորապես հայ ժողովրդի անցած ռազմական ուղու, նրա տարեգրության առավել լիարժեք հետազոտման տեսանկյունից: Միաժամանակ, թեև մեր կողմից նշված և այլ կարգի սխալներն ու անճշտությունները, անհարկի աղավաղումները, անշուշտ, անցանկալի են, սակայն հավանաբար՝ ոչ պատահական: Այս հետաքրքիր կենսագրականը հասցեագրված է նաև ընթերցող հանրության լայն շերտերին: Բացի դրանից, Մ. Գոգիտիձեի և Գ. Բեժիտաշվիլու գիրքը կարող է օգտակար լինել հայ-վրացական պատմամշակութային և ռազմաքաղաքական հարաբերությունների պատմության բազմակողմանի ուսումնասիրության տեսանկյունից, առավել ևս, որ այն լույս է տեսել նաև վրացերեն<sup>2</sup>:

*ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ*

---

<sup>1</sup> Տե՛ս Հայագն Տ., Ղազարյան Գ., նշվ. աշխ., էջ 391:

<sup>2</sup> ԳՕԳԻՏԻՁԵՄ Թ., ԵՋԵԻՏԱՇՎԻԼԻ Գ., სომხეთის სამხედრო ელიტა (სომეხი გენერლები საქართველოდან) ბიოგრაფიული ცნობარი, თბილისი, 2014.

---

---

*Raymond H. Kévorkian, Yves Ternon, Mémorial du génocide des Arméniens, Paris, Éditions du Seuil, 2014, 509 p.*

*Ռայմոնդ Հ. Գևորգյան, Իվ Տերնոն, Հայոց ցեղասպանության հուշակոթող, Փարիզ, «Սոյ», 2014, 509 էջ*

Հայոց ցեղասպանության հարյուրամյակը մեծապես խթանեց իրադարձության պատմության գիտական ուսումնասիրությանը տարբեր ձևաչափերով: Հինավուրց ավանդույթներով հարուստ ֆրանսիական պատմագիտությունը իր մնայուն ավանդը ներդրեց այս ասպարեզում<sup>1</sup>: Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության ներկայացուցիչների ջանքերին հակահարված տալու նպատակով ֆրանսիացի պատմաբանները վերջին տասնամյակներում առանձնահատուկ ուշադրություն են դարձրել ֆրանսիական արժեքավոր սկզբնաղբյուրների հրատարակությանը<sup>2</sup>, համալրելով իրենց նախորդների անուրանալի ներդրումը<sup>3</sup>: Հայոց ցեղասպանության պատմագրությունը, շնորհիվ այս թեմայի նշանավոր մասնագետներ Ռայմոնդ Հարություն Գևորգյանի և Իվ Տերնոնի բժախնդիր աշխատանքի, վերջերս հարստացավ փաստաթղթերի ևս մեկ արժեքավոր ժողովածուով<sup>4</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Bozarслан H., Duclert V., Kévorkian R. H.**, Comprendre le génocide des Arméniens, Paris, 2015 ; **Duclert V.**, La France face au génocide des Arméniens du milieu du XIX<sup>e</sup> siècle à nos jours, Paris, 2015 ; **Nichanian M.**, Détruire les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 2015 ; Le génocide des Arméniens. Cents ans de recherche 1915-2015, Paris, 2015. Առիթից օգտվելով՝ մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Սոնալեյլեի Պոլ Վալերի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Ժիրայր Դեդեյանին՝ այս գրքերը, ինչպես նաև գրախոսվող ժողովածուն մեզ նվիրելու համար:

<sup>2</sup> Տե՛ս **Beylerian A.**, Les grandes puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918), Paris, 1983 ; **Meyrier G.**, Les massacres de Diarbékir. Correspondance diplomatique du Vice-Consul de France. 1894-1896. Présentée et annotée par Claire Mouradian et Michel Durand-Meyrier, Paris, 2000 ; 1895, Massacres d'Arméniens. Alphonse Cillière, consul de France à Trébizonde. Texte présenté par Gérard Dédéyan, Claire Mouradian et Yves Ternon, Toulouse, 2010.

<sup>3</sup> Այդ մասին տե՛ս **Պողոսյան Վ.**, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), Երևան, 2011, էջ 27-50:

<sup>4</sup> Նկատենք, որ « Revue d'histoire de la Shoah » ֆրանսիական հանդեսի՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված համարում, Ի. Տերնոնը հրատարակել է մեծաթիվ փաստաթղթեր՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և Հայոց ցեղասպանությունը» խորագրով: Տե՛ս La Première Guerre mondiale et le génocide des Arméniens. Textes rassemblés et présentés par Yves Ternon // Revue d'histoire de la Shoah. Se souvenir des Arméniens 1915-2015. Centenaire d'un génocide, 2015, n° 202, p. 21-372: Սակայն, իր իսկ հավաստմամբ, այդտեղ զետեղված բոլոր



Առաջնորդվելով ֆրանսիական պատմագիտությանը բնորոշ հայեցակարգային սկզբունքով՝ Ռ. Ն. Գևորգյանը և Ի. Տերնոնը գրքի առաջաբանում կատարում են անդրադարձներ արևմտահայության ոչնչացման տարբեր հիմնախնդիրներին, մեծ տեղ հատկացնում Աբդուլ Համիդ II-ի սանձազերծած հայաջինջ քաղաքականության մեկնաբանությանը և փաստում 1890-ական թվականների հայկական կոտորածների «ցեղասպան բնույթը»: Դրանց պատասխանատվությունը նրանք վերագրում են «կարմիր սուլթանին» (էջ 14, 15,) ընդգծում, որ համիդյան կոտորածները իրականացվել են պետական քաղաքականության մակարդակով, ինչը ցեղասպանության՝ իբրև երևույթի հիմնական բաղադրիչներից է: Այդուհանդերձ, Հայոց ցեղասպանության ժամանակագրական եզրերը հեղինակները պարփակում են 1915-1916 թթ. սահմաններում, ինչը պայմանավորում են գլխավորապես երիտթուրքական վարչակարգի որդեգրած թուրքիզմի գաղափարախոսությամբ, որը հետապնդում էր «օսմանցիներին մեկ ազգի, մեկ ժողովրդի, մեկ ռասայի մեջ համախմբելու» (էջ 15), այն է՝ թուրք ժողովրդի ձևավորման նպատակ<sup>1</sup>: Ինչպես նրանք փաստում են, 1908 թ. իշխանության գալուց հետո «երիտթուրքերն աստիճանաբար մշակում են կայսրության և մասնավորապես Փոքր Ասիայի թրքացման ծրագիր» (էջ 15):

Ռ. Ն. Գևորգյանը և Ի. Տերնոնը իրավացիորեն նշում են, որ Հայոց ցեղասպանությունը հավելյալ ապացույցների կարիք չունի<sup>2</sup>, ուստի իրենց խնդիրը համարում են դրա հուշակոթողի, այն է՝ «հիշողության օբյեկտի» կերտումը, որի նպատակը ոչ թե հայերի համատարած բնաջնջման ապացույցների որոնումն է, այլ այդ գործընթացի պատճառների և դրսևորման եղանակների բացահայտումը ըստ վավերագրերի (էջ 10): Ժողովածուն կազմողները գերադասում են ուշադրությունը կենտրոնացնել գլխավորապես մինչև 1921 թ. գրի առնված արժանահավատ սկզբնաղբյուրների վրա: Ի դեպ, այս հարցը կարիք ունի մեկնաբանության, քանի որ նրանք ոչ միայն շրջանառության մեջ են դնում ֆրանսիական, գերմանական, ավստրիական,

նյութերը բովանդակությամբ և սկզբնաղբյուրների առումով տարբերվում են սույն ժողովածուում տպագրված վավերագրերից: Տե՛ս նույն տեղում, էջ 21:

<sup>1</sup> Ռ. Ն. Գևորգյանը ֆրանսիացի միակ պատմաբանն է, որը վերջերս հարգայից մեկնաբանել է «հայկական պատմագիտական դպրոցի», այն է՝ Հայաստանի Հանրապետության իր գործընկերների գերակշռող մասի որդեգրած՝ ֆրանսիական պատմագիտության դիրքորոշմանը անհարիր և իր կողմից անընդունելի հայեցակարգային մոտեցումը, ըստ որի՝ Հայոց ցեղասպանությունը սկիզբ է առել 1890-ական թվականներին և ունեցել շարունակական բնույթ: Այս առնչությամբ նա հայտնում է իր կարծիքը, ըստ որի՝ «իրենց նախնիների տարածքում հայերի ոչնչացմանը» առնչվող փաստերը հարկ է միմյանցից զանազանել: Տե՛ս **Bozarslan H., Duclert V., Kévorkian R. H.**, նշվ. աշխ., էջ 42:

<sup>2</sup> Ի. Տերնոնը վերջերս ընդգծել է, որ ցեղասպանության՝ իբրև երևույթի մասնագետները առայժմ ապացուցված են համարում երեք՝ հայերի, հրեաների և թուսիների ցեղասպանությունների փաստը: Տե՛ս Entretien avec Yves Ternon. De la spécificité du crime de génocide // Politique internationale, dossier spécial, 2015, supplément n° 147, p. 51-52:

ամերիկյան արխիվներից քաղված նորահայտ փաստաթղթեր, այլև տեղ են հատկացնում եվրոպական, ամերիկյան, թուրքական և հայկական տարաբնույթ տպագիր սկզբնաղբյուրների, այդ թվում՝ Յոհաննես Լեփսիուսի, Ջեյմս Բրայսի և Առնոլդ Թոնբիի, Արա Սարաֆյանի հրատարակած փաստաթղթերի արժեքավոր ժողովածուներում ընդգրկված արժանահավատ վավերագրերին: Եթե հաշվի առնենք, որ Հայոց ցեղասպանության պատմաբանների գերակշռող մասը միաժամանակ չի տիրապետում հայերեն և թուրքերեն (ինչպես նաև օսմաներեն) լեզուներին, ուստի նման բազմաբնույթ վավերագրերի մեկտեղումը գրախոսվող ժողովածուի ակնառու արժանիքներից է: Նշենք նաև, որ այդ լեզուների իմացությունը Ռ. Հ. Գևորգյանին վաղուց ի վեր հնարավորություն է ընձեռել Հայոց ցեղասպանության պատմությանն առնչվող տարատեսակ հիմնախնդիրները պարբերաբար ուսումնասիրել բազմակողմանիորեն, մասնավորապես մանրակրկիտ քննական վերլուծության ենթարկել հայկական և թուրքական քաղաքական ուժերի դիրքորոշումների զանազանությունները և կրած փոփոխությունները:

Հեղինակները առանձնացնում են Հայոց ցեղասպանության ընդամենը երկու փուլ, որոնք ընդգրկում են 1915 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր և 1915 թ. հոկտեմբերից մինչև 1916 թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածները<sup>1</sup>: Ըստ այդմ՝ ներկա ժողովածուն բաղկացած է երեք բաժնից՝ հեղինակների համառոտ մեկնաբանություններով հագեցված մեծաքանակ ենթաբաժիններով: Առաջին երկու բաժինները ամփոփում են ցեղասպանության նշված փուլերի պատմությունը մանրամասնորեն լուսաբանող վավերագրեր, իսկ երրորդում խիստ համառոտ ներկայացված են 1917-1923 թթ. տեղի ունեցած որոշ իրադարձություններ:

Նախ նպատակահարմար ենք գտնում ընդգծել խիստ էական մի հանգամանք. երիտթուրք պարագլուխների գրավոր ելույթների հիման վրա ժողովածուն կազմողները բացահայտում են թուրքիզմի գաղափարախոսության որդեգրումը երիտթուրքերի կողմից: Ի շարս այլոց՝ նրանք հղում են Նազըմ Բեյին, որը 1913 թ. հայտարարել է. «Մեր հողի վրա հարկ է ունենալ միայն մեկ ազգ՝ օսմանյան ազգը և մեկ լեզու՝ թուրքերեն լեզուն» (էջ 23): Ուշադրության է արժանի նաև երիտթուրքական «Թանին» լրագրում մեկ այլ գործչի՝ Հուսեյին Ջահիթի հայտնած կարծիքը. «Այս երկիրը կլինի թուրքական երկիր» (էջ 23):

Տպագրված փաստաթղթերի մի մասում արտացոլվել է երիտթուրք ղեկավարների՝ Հայոց ցեղասպանության հանդեպ որդեգրած դիրքորոշման ամենակարևոր առանձնահատկություններից մեկը, այն է՝ Օսմանյան կայս-

---

<sup>1</sup> Նշենք, որ միևնույն հայեցակարգային մոտեցման վրա է խարսխված նաև Հայոց ցեղասպանությանը նվիրված Ռ. Հ. Գևորգյանի հիմնական մենագրությունը (տե՛ս **Kévorkian R. H.**, *Le génocide des Arméniens*, Paris, 2006), որը թարգմանվել է և հրատարակվել անգլերեն (Լոնդոն, Նյու Յորք, 2011), ռուսերեն (Մոսկվա, 2015) և թուրքերեն (Ստամբուլ, 2015):

րության տարածքում բնակվող հայերը համիդյան կոտորածներից ի վեր ստանձնել են կարծեցյալ ըմբոստների և ապստամբների անհանդուրժելի կարգավիճակ, որոնց ղեկավարները, ըստ Բահաեդդին Շաքիրի, կազմակերպել են «սադրանքներ» (էջ 20, 21, 23): Նման ստահող փաստերի հրապարակմամբ հեղինակներն անուղակիորեն բացահայտում են և հիմնավորում դեռևս 1890-ական թվականների երկրորդ կեսին Արևմտյան Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում սկզբնավորված Հայոց ցեղասպանության պատմագրության ժխտողական ուղղության պատճառներն ու ակունքները<sup>1</sup>: Միաժամանակ փաստաթղթերում արտացոլվել են ոչ միայն երիտթուրքերին ուղղված ՅՅԴ-ի՝ հեղափոխական հայերին իբրև ավագակներ որակելը դադարեցնելուն առնչվող պահանջը (էջ 24), այլև Ադանայում մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Դուգթի-Ուայլիի դիրքորոշումը, որը 1909 թ. կիլիկյան կոտորածների առնչությամբ փաստել է. «Ես չեմ հավատում որևէ հայկական ապստամբության» (էջ 31): Այս առնչությամբ կարևոր է նաև գերմանացի դիվանագետ Յոհաննես Մորդտմանի կարծիքը, որը 1915 թ. ապրիլին հայերի դիրքորոշումը համարել է «անբասիր» (էջ 73):

Ինչ վերաբերում է 1910-ական թվականների առաջին կեսին Արևմտյան Հայաստանում նախատեսվող բարենորոգումների իրականացմանը, Ռ. Ն. Գևորգյանը և Ի. Տերնունը բացահայտում են օսմանյան իշխանությունների խիստ բացասական դիրքորոշումն այս հարցում հայ քաղաքական (հատկապես հնչակյան) և հոգևոր գործիչների էլյութների հենքի վրա, որոնք 1912-1913 թթ. ընդգծել են ազգայնամոլության որդեգրումը երիտթուրքական կառավարության կողմից, հայկական վիլայեթներում հայերին հալածանքների ենթարկելը և կանխատեսել իրենց հայրենակիցների բնաջնջումը՝ իբրև «պատմական անհրաժեշտություն» (էջ 49, 54):

Ռ. Ն. Գևորգյանը և Ի. Տերնունը համոզված են, որ Հայոց ցեղասպանության սանձազերծմանն առնչվող վճիռը, պայմանավորված թուրքիզմի և պանթուրքիզմի կյանքի կոչմամբ, կայացվել է 1915 թ. մարտի 22-ից 30-ը, որը նրանք, հղում կատարելով Ուինստոն Չերչիլին, իրավամբ համարում են «քաղաքական պատճառներով ծրագրված և իրականացված ոճիր» (էջ 101): Դրանով է հայ ժողովրդի բնաջնջումը զանազանվում XX դարում իրականացված շատ այլ ժողովուրդների ցեղասպանություններից: Հեղինակներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են հատկապես «Հատուկ կազմակերպության» (Teşkilât-ı Mahsusa) ստեղծման վրա, որը, ըստ նրա ղեկավարներից մեկի հավաստման, «հետապնդելով երեք հիմնական նպատակներ, որոնք առնչվում են Թուրքիայի միավորմանը, իսլամական միությանը և պանթուրքիզմին», իրականացրել է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը (էջ 99):

---

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս **Պողոսյան Վ.**, նշվ. աշխ., էջ 171-209:

Ինչ վերաբերում է Մեծ եղեռնին, Ռ. Ն. Գևորգյանը և Ի. Տերնոնը տարբեր սկզբնաղբյուրների ընդգրկմամբ հիմնավորապես և մանրամասնորեն ներկայացնում են ցեղասպանության գործընթացի տարատեսակ եղանակները՝ տարբեր վիլայեթներում հայ զինակոչիկների ընդգրկումը «աշխատանքային գումարտակներում» և նրանց բնաջնջումը, որոնց համարում են «ցեղասպանության առաջին զոհեր» (էջ 111), հայ մտավորականների ձերբակալումը և ոչնչացումը, ինչը համարում են Հայոց ցեղասպանությունն ազդարարող առաջին քայլը (էջ 101-102), իշխանությունների կողմից պետական մակարդակով զոհերի և տեղահանվածների գույքի բռնագրավումը և այլն:

Հայոց ցեղասպանությանը բնորոշ առանձնահատկություններից է դեռևս 1890-ական թվականներից ի վեր կիրառվող կրոնափոխության հանգամանքը, որը բոլոր ցեղասպանություններին բնորոշ չէ (Շոալին, Պորաջմոսին և այլն): Մեծ եղեռնի պարագայում դա անշուշտ պայմանավորված էր երիտթուրքերի որդեգրած թուրքիզմի գաղափարախոսությամբ, որն այլազգիներին ինչ-որ չափով հնարավորություն էր ընձեռում խուսափել ոչնչացումից: Հաշվի առնելով այս իրողության կարևորությունը՝ հեղինակները հրապարակել են Թալեաթի 1915 թ. հոկտեմբերի 28-ի թվակիր շրջաբերականը, որով կրոնափոխ եղած հայերին արտոնվում էր խուսափել տեղահանությունից, իսկ արքայալիներին՝ վերադառնալ իրենց բնակավայրերը և կրկին տիրանալ իրենց պատկանած, սակայն գուցե արդեն հափշտակված ունեցվածքին կամ ստանալ կորցրած գույքի գումարը (էջ 165): Այդուհանդերձ, հրատարակված տարբեր վավերագրերում արտացոլվում է նաև կրոնափոխ երիտասարդ կանանց և երեխաների վաճառքը, որը եվրոպացի ժամանակակիցներից մեկը համարել է «լավ վաճառվող լավ ավար» (էջ 166):

Ժողովածուն կազմողներն անհրաժեշտ ուշադրություն են բևեռում հայերի տեղահանության վրա, քանի որ այն համարում են «1915 թ. մայիսի 27-ին ընդունված՝ հայերի ոչնչացումն արդարացնելու օրինական միջոց» (էջ 135): Նրանք հրապարակում են երիտթուրքերի պարագլուխների՝ տեղական օսմանյան պաշտոնյաներին հղած հեռագրերից մեջբերումներ, որոնցից մեկում Թալեաթը կարգադրել է Էրզրումի վիլայեթի ղեկավարությանը տեղահանել հայերին և նրանց տեղավորել «կառավարության մատնանշած վայրերում՝ Ջորի սանջակում և Մոսուլի վիլայեթի հարավային գոտում» (էջ 136): Տեղահանության մանրամասների առնչությամբ խիստ հետաքրքրական է օսմանյան III բանակի հրամանատար, գեներալ Վեհիբ փաշայի՝ 1918 թ. դեկտեմբերի 5-ի թվակիր զեկուցագիրը, որում նա անաչառորեն հավաստել է, որ հայերի տեղահանությանը բնորոշ են եղել «մարդկության, քաղաքակրթության և կառավարության պատվին» անհարիր չափանիշներ, իսկ այն իրականացնողներին բնութագրել է «Չինգիզ խանի նման՝ բանականությունից և ըմբռումից ամբողջությամբ զուրկ անձինք, անպատասխանատուներ, դաժաններ» (էջ 141, 143):

Հարկ ենք համարում առանձնացնել Ռ. Ն. Գևորգյանի և Ի. Տերնոնի անժխտելի և դրվատելի ամենակարևոր արժանիքը՝ Հայոց ցեղասպանության առաջին փուլի վերհանումը միկրո հարթության վրա: Նրանք գերադասում են առանձին ենթագլուխներում ներկայացնել Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթներում (Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքի, Մամուրեթ-ուլ-Ազիզի/Խարբեռլի, Սվազի, Տրապիզոնի, Անգորայի/Անկարայի, Կաստամունուի, Էդիրնեի, Բրուսայի, Այդընի, Կոնիայի, Ադանայի, Հալեպի), ինչպես նաև Իզմիդի սանջակում և Կոստանդնուպոլսում իրականացված հայկական կոտորածները (էջ 185-388): Գիտական տեսակետից խիստ կարևոր այս ինքնատիպ մոտեցումը<sup>1</sup>, ըստ էության, ամբողջությամբ համահունչ է Ռ. Ն. Գևորգյանի՝ վերը նշված մենագրության կառուցվածքային հենքին<sup>2</sup>, որին նա իրավամբ հատկացնում է մեծ նշանակություն, առավել ևս եթե նկատի ունենանք, որ Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առկա են տարբեր տարածաշրջաններում տեղի ունեցած եղելությունների պատմությանը նվիրված ընդամենը մի քանի պատմագիտական ուսումնասիրություններ<sup>3</sup>: Այս առնչությամբ նա վերջերս փաստել է. «Ցեղասպանության նկատմամբ միկրո պատմության հիման վրա աշխարհագրական մոտեցումը հնարավորություն է ընձեռում ցեղասպան երևույթն ընդգրկել ամբողջությամբ»<sup>4</sup>: Ներկա ժողովածուն դրա վառ ապացույցն է:

Բազում փաստաթղթերի հրատարակմամբ այն կազմողները անհերքելիորեն բացահայտում են Օսմանյան կայսրության տարբեր տարածաշրջաններում տեղի ունեցած իրադարձությունների ցեղասպան բնույթը, ըստ երիտթուրքական կառավարության ղեկավարների և օսմանյան տեղական պաշտոնյաների, ինչպես նաև ամերիկացի դիվանագետների գրագրությունների (գլխավորապես ֆրանսիական և ամերիկյան արխիվներից քաղված)՝ նրանք փաստում են հայերի համատարած տեղահանությունների իրականացումը պետական քաղաքականության մակարդակով (էջ 283, 319, 332 և

<sup>1</sup> Վերջին տարիներին այս գիտական մոտեցմանը, որը սկիզբ է առել սոցիալական պատմությունից (տե՛ս **Гуревич А. Я.**, *История – нескончаемый спор*, М., 2005, с. 303-308, **Уваров П.**, *Между «ежами» и «лисцами»*. Заметки об историках, М., 2015, с. 231), հետամուտ են նաև ռուսական պատմագիտության որոշ ներկայացուցիչներ. տե՛ս օրինակ՝ **Земцов Н. В.**, 1812 год. Пожар Москвы, М., 2010, *նույնի՝* Наполеон в Москве, М., 2014:

<sup>2</sup> Տե՛ս **Kévorkian R. H.**, նշվ. աշխ.:

<sup>3</sup> Տե՛ս **Ternon Y.**, Mardin 1915. Anatomie pathologique d'une destruction, Paris, 2002 ; **Üngör U. Ü.**, *The Making of Modern Turkey. Nation and State in Eastern Anatolia, 1913-1950*, Oxford, 2012: Մոռացության չմատնենք նաև Հայկ Ղազարյանի մենագրությունը, որը ևս ջանքեր է գործադրել, սակայն ավելի սահմանափակ կտրվածքով, Հայոց ցեղասպանության գործընթացը հայկական տարբեր վիլայեթներում իրականացված կոտորածների հիման վրա քննարկելու ուղղությամբ: Տե՛ս **Ղազարյան Հ.**, *Հայ ժողովրդի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում*, Կ. երկրորդ, Երևան, 2007:

<sup>4</sup> **Kévorkian R. H.**, *Un bref tour d'horizon des recherches historiques sur le génocide des Arméniens : sources, méthodes, acquits et perspectives // Revue d'histoire de la Shoah*, 2015, n° 202, p. 541.

այլն): Որոշ վավերագրեր առնչվում են տարբեր քաղաքներում (Տրապիզոն, Կեսարիա) տեղահանության մասին օսմանյան կառավարության ընդունած պաշտոնական հայտարարություններին (էջ 309, 331): Հեղինակները իրավամբ շեշտում են նաև բուն թուրքական տարածքներում ցեղասպանության գործընթացի ծավալումը միևնույն ձևաչափերով, ինչ Արևմտյան Հայաստանի վիլայեթներում (էջ 321): Մեծաթիվ փաստաթղթերում արձանագրված են այն դաժան և անմարդկային եղանակները, որոնց միջոցով ոչնչացվում էին կամ տեղահանվում հայերը: Բավարարվենք՝ հղելով Մալաթիայի սանջակում տեղի ունեցած վայրագությունների ակննատես, ազգությամբ թուրք կապիտան Ֆազրի՝ 1918 թ. տված ցուցմունքը. «Կառավարությունը ոչ միայն հրաժարվեց գործելուց՝ ի վնաս մեր ազգային պատվի, այլև իրականացրեց այնպիսի ոճիրներ և այնպիսի վայրագություն, որոնցից նույնիսկ գիշատիչները կգայրանային ու կկարմրեին» (էջ 277):

Ինչ վերաբերում է տարբեր բնակավայրերում տեղի ունեցած իրադարձությունների յուրահատկություններին, կցանկանայինք առանձնացնել Վանի ինքնապաշտպանության լուսաբանումը (էջ 189-202) և մասնավորապես հայկական ապստամբության վարկածի հերքումը: Ըստ Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Պոսելդտի վկայության՝ «հայերը հանգիստ կմնային, եթե թուրքերի կողմից ճնշումների և սադրանքների չենթարկվեին» (էջ 194):

Իսիստ հետաքրքրական է նաև երեք առանցքներում՝ Բաղդադահն երկաթուղու և Եփրատի երկարությամբ ձգվող, ինչպես նաև Իսլահիե-Հալեպի տարածաշրջանում տեղակայված շուրջ 25 համակենտրոնացման ճաբարներում<sup>1</sup> ապաստանած հայերի վիճակի նկարագրությունը, առավել ևս, որ ժողովածուն ամփոփում է նրանց անմխիթար կացությանն առնչվող՝ օտար ականատեսների մեծաքանակ անաչառ վկայություններ (էջ 394-402): Հետաքրքիր են նաև հրաշքով վերապրած հայերի վկայությունները տեղահանվածներին վիճակված ճակատագրի վերաբերյալ տարբեր ճամբարներում (Բաղդադի երկաթուղու, Հալեպի, Ռաս ուլ-Սյնի, Մեսքենեյի, Տեր Ջորի), որոնց մեծ մասը, այդ թվում երեխաները, ոչնչացվել են: Ըստ հեղինակների, ի դեպ, ոչ ամբողջական տվյալների՝ համակենտրոնացման ճամբարներում «բնական մահով» կյանքին հրաժեշտ են տվել շուրջ 372 հազար տեղահանվածներ<sup>2</sup>, ուստի նրանք իրենց իրավունք են վերապահում դրանք որակելու ոչ միայն «համակենտրոնացման», այլև «բնաջնջման» ճամբարներ (էջ 389, 391):

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 543:

<sup>2</sup> Տեղահանված հայերի ոչնչացմանը նվիրված իր գրքում Ռ. Հ. Գևորգյանը, վկայակոչելով ավելի մեծ թվով համակենտրոնացման ճամբարներում մահկանացուն կնքած հայերի փաստը, մատնացույց է անում 630.000 գոհերի, որոնցից 200.000-ին կոտորել են Ռաս ուլ-Սյնում և Տեր Ջորում: Տե՛ս L'extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915-1916). La deuxième phase du génocide. Volume préparé par R. H. Kévorkian, Paris, 1998, p. 61:

Հեղինակների ուշադրությունից չի վրիպել մուսուլմանների՝ քրիստոնյաներին երբեմն ցուցաբերած օգնության հանգամանքը (էջ 251), ինչը վկայում է նրանց անկողմնակալ մոտեցման մասին: Ընտրված փաստաթղթերի մի մասը փաստում է մասնավորապես Դերսիմի քրդերի՝ հայերին ցուցաբերած աջակցության մասին (էջ 448-450), ինչպես նաև սակավաթիվ օսմանյան պաշտոնյաների՝ Անգորայի և Կասսամոնուի կուսակալներ Մազհարի և Ռեշիդի մարդասիրական և սկզբունքային դիրքորոշումը, որոնք պաշտոնազրկվել են, քանի որ հրաժարվել են կատարել հայերին ոչնչացնելու կարգադրությունները (էջ 96, 321):

Ժողովածուի վերջին գլխում համառոտակի անդրադարձներ են կատարված 1917-1918 թթ. ցեղասպանային գործընթացին Կովկասում և պարսկական Ադրբեջանում, ինչպես նաև՝ 1919 թ. երիտթուրքերի դատավարությանը:

Ռ. Հ. Գևորգյանը և Ի. Տերնոնը գրքում գետեղել են 13 քարտեզ (որոնցից ինը առնչվում են Օսմանյան կայսրության տարբեր վիլայեթներում տեղի ունեցած տեղահանություններին), ինչպես նաև հայ և թուրք պետական ու քաղաքական գործիչների, պատմական Հայաստանի աշխարհագրական վայրերի 72 նկար, որոնց գերակշռող մասը պահվում է Փարիզի Նուբարյան և Վենետիկի Միխթարյանների գրադարաններում:

Հարկ է չանտեսել նաև ժողովածուում տեղ գտած որոշ մասնակի թերություններ: Գրքի առաջաբանում հեղինակները, ցավոք, չեն հիշատակում Հայաստանի ռազմակալման փաստը XVI դարում, իսկ Օսմանյան կայսրության՝ հայերով բնակեցված տարածքները գերադասում են անվանել Արևելյան Անատոլիա (էջ 9, 11, 48, 64, 321 և այլն)<sup>1</sup>, այլ ոչ թե Արևմտյան Հայաստան: Տողերիս հեղինակի կողմից նման անընդունելի դիրքորոշումը հատուկ է ֆրանսիացի ժամանակակից պատմաբաններին առհասարակ<sup>2</sup>:

Հեղինակները 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը համարում են պետական հեղաշրջում (էջ 15, 29)<sup>3</sup>: Սակայն եթե հարցը քննարկենք ըստ բուրժուական հեղափոխությունների տիպաբանության մասնագետների

---

<sup>1</sup> Այն իբրև այդպիսին են անվանում նաև ժամանակակից ռուս որոշ պատմաբաններ. տե՛ս օրինակ՝ **Орешкова С. Ф., Мейер М. С.**, Османская империя в XIX веке: долгие поиски обновления // Всемирная история. Т. 5. Мир в XIX веке: на пути к индустриальной цивилизации, М., 2014, с. 538:

<sup>2</sup> Ի դեպ, Միքայել Նշանյանը օգտագործում է ոչ միայն «Արևելյան Անատոլիա», այլև «Թուրքահայաստան» և «Օսմանյան Հայաստան» եզրույթները: Տե՛ս **Nichanian M.**, նշվ. աշխ., էջ 59, 107: Նշենք նաև, որ իր նախորդ գրքերից մեկում Ի. Տերնոնը հայերին պատկանող տարածքները անվանել է «Արևմտյան Հայաստան» և «Թուրքահայաստան»: Տե՛ս **Ternon Y.**, Les Arméniens. Histoire d'un génocide, Paris, 1996, p. 73, 78, 95:

<sup>3</sup> Այս տեսակետը սատարում են նաև եվրոպացի և հայրենական տարբեր հեղինակներ: Տե՛ս օրինակ՝ **Nichanian M.**, նշվ. աշխ., էջ 79, **Մակիդիս Թ.**, Հույների ցեղասպանությունը: Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս, Ալեքսանդրոպոլիս, 2014, էջ 34, **Եսոյան Մ.**, Հայկական հարցը Միքիայի արաբալեզու մամուլում 1908-1914 թվականներին, Երևան, 2015, էջ 28, 57, 90:

առաջադրած հայեցակարգային մոտեցումների, ապա այն ավելի նպատակահարմար է բնութագրել իբրև միևնույն սոցիալ-տնտեսական ֆորմացիայի ընդերքում տեղի ունեցած բուրժուական հեղափոխություն<sup>1</sup>: Նշենք, ի դեպ, որ թե՛ Ռ. Հ. Գևորգյանը և թե՛ Բ. Տերնոնը իրենց նախորդ աշխատանքներում հիշյալ իրադարձությունը գնահատել են իբրև «հեղափոխություն»<sup>2</sup>:

Եզրափակելուց առաջ նշենք, որ Ռ. Հ. Գևորգյանի և Բ. Տերնոնի՝ գիտական հանրությանը ներկայացրած փաստաթղթերի ժողովածուն, պատմագիտականից բացի, ունի նաև քաղաքական մեծ նշանակություն, քանզի այն ոչ միայն մեծապես նպաստում է գրքի առաջաբանում հեղինակների առաջադրած խնդիրների ըմբռնմանը, այլև հուժկու հակահարված է տալիս Հայոց ցեղասպանության պատմության կեղծարարների գործադրած սին ջանքերին: Անհրաժեշտ է այս ժողովածուն թարգմանել տարբեր լեզուներով, այդ թվում նաև՝ թուրքերեն և հայերեն:

*ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ*

---

<sup>1</sup> Տե՛ս **Барг М. А., Черняк Е. Б.**, Великие социальные революции XVII-XVIII веков, М., 1990, с. 224:

<sup>2</sup> Տե՛ս **Ternon Y.**, L’empire ottoman. Le déclin, la chute, l’effacement, Paris, 2005, p. 234, **Kévorkian R. H.**, Le génocide des Arméniens, p. 56, *նույնի՝* Introduction // Une mémoire arménienne. De Medz Nor Kiugh (Bursa, Empire ottoman) à Saint-Martin-d’Hères (Isère, France). Yervant Der Goumeian 1894-1976, présenté et traduit de l’arménien par Raymond Kévorkian, Isère, 2007, p. 14:



---

---

*Rolf Hosfeld, Tod in der Wüste. Der Völkermord an den Armeniern, München, Verlag C. H. Beck, 2015, 288 S.*

**Ռոլֆ Հոսֆելդ**, *Մահ անապատում. Հայոց ցեղասպանությունը, Մյունխեն, «C. H. Beck» հրատարակչություն, 2015, 288 էջ*

Հայոց ցեղասպանության գերմանալեզու պատմագրության մեջ մինչ այժմ ի հայտ չէր եկել այնպիսի աշխատություն, որտեղ ցեղասպանության ամբողջական պատկերը ներկայացնելու հետ մեկտեղ հանգամանալից լուսաբանվեր նաև Գերմանիայի և Ավստրիայի համապատասխանատվության խնդիրը: Պոտտամում գործող Լեփսիուսի տան տնօրեն դոկտոր Ռոլֆ Հոսֆելդի սույն գիրքը, որը «Նեմեսիս գործողություն» մենագրությունից<sup>1</sup> հետո Հայոց ցեղասպանությանը նվիրված նրա երկրորդ ծավալուն աշխատությունն է, լրացնում է այդ բացը: Ընդ որում, այստեղ նա արժևորում է նաև Հայոց ցեղասպանությանը նվիրված կարևորագույն գիտական ուսումնասիրությունները:

Հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է սկզբնաղբյուրներին և մասնագիտական գրականությանը, Հայոց ցեղասպանությունը ներկայացնում ժամանակագրական հաջորդականությամբ դասակարգված տասը գլուխներում, որոնցից յուրաքանչյուրը բովանդակում է խնդրո առարկային վերաբերող՝ ժամանակակիցների արժեքավոր վկայությունները և հարկ եղած դեպքում նաև՝ նրանց նպատակային մեկնաբանությունները: Գրքի արժանիքներից է այն, որ Ռ. Հոսֆելդը հանգամանալից քննարկում է նաև Հայոց ցեղասպանության նախապատմությունը, իրադարձության ծրագրված լինելու հանգամանքը, օսմանյան վարչակարգերի հետևողականությունը այն իրականացնելու հարցում:

Մենագրությունը գլուխ առ գլուխ բացահայտում է զարհուրելի իրադարձությունների, հայ ժողովրդի բնաջնջման համապարփակ պատկերը, որն իբրև մեկ ամբողջական գործընթաց սկիզբ է առել դեռևս XIX դարի 90-ական թվականների երկրորդ կեսին՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից մտահղացված և իրականացված զանգվածային կոտորածներով: Հեղինակը պարզաբանում է համիդյան և երիտթուրքական վարչակարգերի հաջորդափոխման հանգամանքները, լուսաբանում Մեծ եղեռնին առնչվող հիմնահարցերը, մասնավորապես «Հատուկ կազմակերպության» ստեղծումը, թուրքական

---

<sup>1</sup> **Hosfeld R.**, Operation Nemesis. Die Türkei, Deutschland und der Völkermord an den Armeniern, Köln, 2005.

բանակ գորակոչված հայերի զինաթափումն ու զանգվածային սպանողը, հայ մտավորականության ձերբակալումն ու ոչնչացումը, այնուհետև բնակչության տեղահանությունն ու բնաջնջումը: Բնականաբար նա ներկայացնում է այն հիմնական մեթոդներն ու միջոցները, որոնցով իրականացվում էր Հայոց ցեղասպանությունը, հանգամանակից անդրադարձներ է կատարում խոշտանգումներին, բռնաբարություններին, կրոնափոխությանը, կողոպուտին, արևմտահայության ունեցվածքի սեփականացմանը և հարակից խնդիրներին:

Եզրափակիչ՝ 10-րդ գլխում Ռ. Հոսֆելըը քննարկում է Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո երիտթուրք ղեկավարների փախուստը, Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ 1919-1920 թթ. կազմակերպված դատավարությունները և Մուստաֆա Քեմալի դիմադրական շարժման կողմից դրանց կասեցումը: Նա տեղեկացնում է, որ այդ իրադարձությունների ետնախորքի վրա 1920 թ. Կիլիկիայում և Կովկասի տարածաշրջանում դարձյալ սպանվել են շուրջ 50.000 հայեր: Գիրքն ավարտվում է Մոդոնոն Թեհլերյանի դատավարության լուսաբանմամբ, որի ընթացքում ներկայացվում են դատավարության դիտորդ Ռոբերտ Քեմպների հայտնած նկատառումները, որը, ի դեպ, հետագայում՝ Նյուրնբերգյան դատավարության ժամանակ հանդես է եկել որպես մեղադրող<sup>1</sup>:

Հեղինակն անդրադարձել է նաև Ռաֆայել Լեմկինին, ով 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանի վավերացրած «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի իրավական դրույթները շարադրելու հարցում 1921 թ. մեծապես ազդվել է վերոնշյալ դատավարությունից<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Ազգությամբ հրեա իրավաբան Ռ. Կեմպները, որը, Եվրոպայից ԱՄՆ փախչելով, փրկվել էր նացիստների հետապնդումներից, Նյուրնբերգի դատավարության ժամանակ հանդես եկավ որպես ԱՄՆ-ի գլխավոր մեղադրող Ռոբերտ Յակտոնի ներկայացուցիչը: Նա հայտնաբերեց և դատավարությանը ներկայացրեց Վանզեի հայտնի կոնֆերանսի արձանագրությունը՝ դառնալով հանրահայտ անձնավորություն: Ռ. Կեմպները հետադարձ հայացքով գրել է, որ Թեհլերյանի ատրճանակի կրակոցը աշխարհի աչքերի առջև առաջին անգամ ի ցույց դրեց միջազգային իրավունքի մի դիլեմա, որը սկզբնավորվել է Առաջին աշխարհամարտի ժամանակ: «Իրավաբանական առումով այդ դատավարությունը առանձնահատուկ նշանակություն ուներ,– նշել է Կեմպները,– քանի որ իրավունքի պատմության մեջ առաջին անգամ ճանաչվեց այն սկզբունքը, որ մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների, մասնավորապես մի կառավարության կողմից իրականացված ցեղասպանության դեմ անպատճառ կարող է օտար պետությունների կողմից պայքար մղվել, և որ այդ պայքարը չի նշանակում միջամտություն մեկ ուրիշ պետության ներքին գործերին» (էջ 233): Հմմտ. **Kempner R. M. W.**, Vor sechzig Jahren vor einem deutschen Schwurgericht. Der Völkermord an den Armeniern // Recht und Politik, 3 (1980), S. 167-169:

<sup>2</sup> Այդ առումով բնութագրական է գրքում Լեմկինի ինքնակենսագրական նոթերից կատարված հետևյալ հղումը, որի շարժառիթը դարձել էր իր ուսանելու տարիներին Թեհլերյանի մասին կարդացած մի լրագրային նյութ: «Թեհլերյանն ինքն է իրեն նշանակել որպես մարդկության խղճի պահանջների իրագործող,– գրել է այդ առնչությամբ Լեմկինը: –

Ռ. Հոսֆելդի մենագրությունը աչքի է ընկնում խնդրո առարկա թեմայի լուսաբանման հստակությամբ և հետազոտական նյութի քննության անաչառությամբ: Բացի դրանից, պատմական իրողությունների և գործընթացների վերաբերյալ նրա գնահատականներում բացակայում են արևմտյան պատմագրության մեջ հաճախակի հանդիպող, այսպես կոչված, «հավասարակշռողական» մոտեցումները, երբ փորձ է արվում «եթե...», «այս...», «չնայած...», «բայց և այնպես...» և համանման ձևակերպումներով մեղքը և պատասխանատվությունը տարրալուծել դահճի ու գոհի միջև: Ավելին, հեղինակը հանգամանակից ներկայացնում է Հայոց ցեղասպանության ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական նպատակադրումները՝ ընդգծելով, որ հայերի անխնա կողոպուտն ու սեփականագրվումը կոչված էին անուղղակիորեն նպաստելու թուրքական բուրժուազիայի ձևավորմանը, որը փաստորեն դառնալու էր թուրքական նոր՝ ազգային պետության սյուներից մեկը: Ոչ պակաս ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ, ինչպես նշում է հեղինակը, երիտթուրքերի և քեմալականների անձնային և գաղափարական շարունակականության հետևանքով ցեղասպանություն իրականացրած բազմաթիվ ոճրագործներ ի վերջո ստացան բարձր պաշտոններ: Ըստ նրա՝ եթե նկատի ունենանք, թե որքան շատ են ներկայումս Թուրքիայում ապրող՝ վերոնշյալ կողոպուտից օգտվողների հետնորդները, ապա պարզ կդառնա, որ այնտեղ տիրող ժխտողականությունը միայն ազգային պետության հիմնադրման կեղծ առասպելներով չի պայմանավորված, այլ ետնախորքում ունի նաև շատ ավելի ամուր տնտեսական շարժառիթներ (էջ 198-199):

Այս արժեքավոր մենագրության մեջ Ռ. Հոսֆելդը Աբդուլ Համիդ II-ից դեպի Մուստաֆա Բեմալ Աթաթուրք ձգվող Թուրքիայի պատմությունը բնութագրում է որպես համաշխարհային պատմության մեջ իր նախադեպը չունեցող մի շարունակական ոճրագործության դարաշրջան (էջ 27), և, որ ոչ պակաս կարևոր է, նա, ինչպես վերևում նշվեց, ընդգծում է Օսմանյան պետության դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրիայի համապատասխա-

---

Կարո՞ղ է, սակայն, որևէ մեկը իրեն նշանակել արդարադատություն իրականացնող: Արդյո՞ք արդարադատության նման եղանակը չի կարող գտնվել հույզերի գերիշխանության ներքո և վերածվել ծաղրանկարի: Այդ իսկ ակնթարթից անմեղ ժողովրդի սպանող ավելի մեծ նշանակություն ստացավ ինձ համար: Ես չնայած դեռևս վերջնական պատասխաններ չունեի, բայց ունեի այն հաստատուն զգացումը, որ ռասայական կամ կրոնական հիմքերի վրա տեղի ունեցած սպանողի այդ ձևի դեմ աշխարհում պետք է մի օրենք հրապարակվի: Ես կարծում էի, որ սուվերենությունը չպետք է թյուրիմացաբար ընկալվի որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք» (էջ 236): Նույն միտքը, ինչպես նշում է Ռ. Հոսֆելդը, Լեմկինը հայտնել է 1949 թ. մի հարցազրույցի ժամանակ. «Ես սկսել եմ ցեղասպանության թեմայով զբաղվել, քանի որ այդ ճակատագիրը վիճակվեց հայերին: ...1921 թ. Բեռլինում Թալեաթ փաշայի դատավարությունն այդ առումով խիստ ուսանելի է: Մի մարդ, ում մայրը ցեղասպանության ժամանակ սպանվել է, սպանեց Թալեաթ փաշային: ...Բայց տեսեք, որպես դատավոր ես այն կարծիքին եմ, որ ոճրագործությունը պետք է պատժվի ոչ թե գոհի կողմից, այլ մի կանոնավոր դատարանի» (էջ 236):

նատվությունը Հայոց ցեղասպանության հարցում (էջ 18), որոնց կառավարությունները սկզբից ևեթ տեղյակ էին, թե ինչ նպատակ էր հետապնդում թուրքական կառավարությունը հայ ժողովրդին զանգվածաբար տեղահանելով, սակայն ոչինչ չձեռնարկեցին այն կանխելու կամ կասեցնելու համար (էջ 8-10, 18-19):

Այս մենագրության ակնհայտ առավելություններից է նաև այն, որ Ռ. Հոսֆելդը գերադասում է ձեռնպահ մնալ պատմական եղելությունների անհարկի մեկնաբանություններից ու գնահատականներից:

Նրա գիրքը անժխտելի ներդրում է Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ, մեծ սպառում ունի և արտերկրի մասնագիտական շրջաններում արդեն իսկ լայն համարում է վայելում: Ուրախալի է, որ ներկայումս այն թարգմանվում է հայերեն ու թուրքերեն և մոտ ապագայում մատչելի կդառնա հայալեզու և թուրքալեզու ընթերցողներին:

*ՄՇՈՏ ՀՄՅՐՈՒՆԻ*

# Գ Ի Տ Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ք

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՄԻԽԱԻԼ ՀԵՌԼԵՍ,  
ՆԱՏԱԼՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## ՕՇԱԿԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 2013 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

**Քանալի բառեր** – պեղումներ, դամբարան, կրոմլեխ, քարարկղ, ժամանակագրություն, թաղման ծես, խեցեղեն, երկաթի դար, զինատեսակ, պերճանքի առարկաներ

2013 թ. Օշականի արշավախումբը Սյունիսենի համալսարանի հնագետների հետ միասին պեղումներ կատարեց Օշականի դամբարանադաշտում: Այն հիմնականում ընկած է Դիդի Կոնդի արևելյան լանջին (նկ. 1, 2): Այստեղ նախկինում, ամրոցից բացի, Ս. Եսայանի կողմից են պեղվել նաև 120 դամբարաններ, որոնք վերաբերում են ուշ բրոնզից մինչև ուրարտական և անտիկ դարաշրջաններին: Պեղավայրը գտնվում է քիչ հարավ (40°15'45" հյուսիս, 44°19'31" արևելք) այն տեղից, ուր հայ հնագետները Ա. Քալանթարյանի և Ա. Փիլիպոսյանի<sup>1</sup> գլխավորությամբ 2000-ական թթ. սկզբին փրկչական պեղումներ են իրականացրել՝ հեռահաղորդակցության անտենայի տեղադրման պատճառով (նկ. 3, 4): Տեղանքում ընտրած դամբարանների ծածկասալերի վերին մասերը հողի մակերեսին էին: Նախնական տպավորությամբ այդ դամբարանները պետք է որ թալանված չլինեին: Ընդհանուր առմամբ արշավախումբը պեղել է երեք դամբարան:

### Դամբարան 1 (նկ. 5, 6, 7)

Դամբարանը փորված էր զանգվածեղ տուֆի մեջ, իսկ խուցը ուներ հյուսիս-հարավ ուղղվածություն: Դամբանախցի պատերը միջին չափի հարթ քարե սալեր էին, որոնց վերնամասում մեծ և կլոր գետաքարեր էին դրված: Դրանք բերվել են Դիդի Կոնդի երկայնքով հոսող Քասախ գետից: Երկարավուն-ձվաձև կառույցի վրա մեծ սալաքար էր դրված: Հարավային պատը և նրա վերևում նշմարվող շինությունը ենթադրել են տալիս, որ այս դամբարանը նախապես երկխցանի է եղել:

Դամբարանախցի կենտրոնական հատվածում, 1.5 մ խորության վրա բացվեց կավե լիցք: Հանգուցյալը դեպի աջ կծկված դիրքով էր: Ոսկորները

<sup>1</sup> Տե՛ս Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ., Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Երևան, 2005, էջ 20:

վատ էին պահպանված: Գլուխը in situ չէր և գտնվում էր մարմնի վերնամասից արևմուտք: Այն դիմահայաց ուղղված է եղել դեպի արևմուտք: Ձեռքերը առաջ ծալված դիրքում էին: Դրանց շրջակայքում առանձին հատվածներ փաստագրվեցին: Ոտքերը քիչ տեղաշարժված էին, աջ ոտքը մարմնին մոտ էր, ձախը՝ ավելի ներքև: Մարմնի մոտ դրված էին երեք անոթներ, չորրորդ անոթը ձեռքերը մարմնին մոտենալու տեղում էր: Բացի խեցանոթներից, ծնկի և կոնքոսկրի մոտ գտնվեց նաև սերդոլիկից երեք ուլունք, ինչը վկայում է, որ դամբարանը թալանված է եղել:

Հետազոտությունից հետո փորձեցինք պարզել հյուսիսում գտնվող կառույցի գործառույթը: Սալաքարի տակ ի հայտ եկան կարմիր անգորապատ ուրարտական խեցեղենի բեկորներ, այլ գտածոներ չկային: Այսպիսով կարող ենք ենթադրել, որ դամբարանի հյուսիսային հատվածը հավանաբար թաղման կառույցի մի մասն է:

Չի բացառվում, որ խնդրո առարկա դամբարանը երկու անգամ է թալանվել. առաջին անգամ հնում, որի մասին կարող են վկայել ուրարտական անոթների բեկորները: Երկրորդ անգամ, օգտագործելով արդեն հնում առաջացած հորը, այն նորից բացվել է հավանաբար վերջին շրջանում, որի մասին կարող են վկայել հողային լիցքում գտնված տոպրակները, ծխախոտի տուփը:

Թվագրության համար բնորոշ է մոխրագույն փայլեցված, ցածր ջերմաստիճանով թրծված, փխրուն խեցեղենը: Անոթ 1-ը փոքր քրեղան է, որի շուրթի տակ ակոսագիծ կա. այն զուգահեռներ ունի Թալինի դամբ. 57-ում, Շիրակավանի կառույց VI, VIII նյութերում և թվագրվում է մոտ Ք.ա. 12-11-րդ դդ.<sup>1</sup>:

Երկրորդ և երրորդ անոթները ունեն ուռուցիկ իրան: Երկրորդ անոթն ուսից դեպի վիզ անցման տեղում ունի ալիքազարդ, որին լրացնում են երկու ուղիղ ներգծված զարդեր, ինչը զուգահեռներ ունի Լճաշեն-Մեծամորյան մշակույթի 4-րդ փուլի բազմաթիվ անոթների հետ: Անոթ 3-ի ուսի հատվածում կան ներգծված եռանկյունիներ, որոնց մեջ գծեր են արված, և այս ամենը պարփակված է վերևով և ներքևով անցնող հորիզոնական ներգծված ակոսներով: Դրանց զուգահեռները առկա են Լճաշեն-Մեծամորյան 5-րդ փուլի հուշարձաններում:

## **Դամբարան 2 (նկ. 8, 9, 10)**

Այս դամբարանը գտնվում է նախորդից մոտ 20 մ հեռավորության վրա: Դամբարանախուցը ուղղված էր հյուսիս-հարավ և կառուցվածքով նման էր նախորդին՝ տուֆի մեջ փորված երկարավուն խուց, վերնամասում՝ մեծ և

---

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Ս.**, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. 11-6-րդ դարերում, Երևան, 2006, էջ 38-39:

կլոր գետաքարեր: Հարավային պատը բաղկացած էր երկու՝ իրար նկատմամբ թեք դասավորված սալերից: Ի տարբերություն դամբարան առաջինի՝ բացակայում էր ծածկասալը:

Ամբողջ կառույցը լի էր փխրուն հողով, որը խառնված էր տուֆի մանր բեկորների հետ: Վերին մասում գտնվող գլաքարերը հավանաբար ցույց են տալիս դամբարանի սահմանը: Դամբարանի մեջ շերտագրական բաժանում չի նկատվում: Մայր հողից վերև ի հայտ եկան մարդկային բազմաթիվ ոսկորներ, որոնք հատկապես կուտակված էին խցի հարավային հատվածում: Խոսքը գանգի և մարմնի այլ հատվածների մասին է, որոնք պատկանում են 40-ից բարձր տարիքի տղամարդու<sup>1</sup>: Դրանց միջև բացվեցին երկու անոթներ, մինչդեռ երրորդ անոթը գտնվում էր խցի հյուսիսարևմտյան անկյունում՝ քարերի տակ: Այլ գտածոներ չկային:

Տպավորությունն այնպիսին էր, որ դամբարանը խաթարված չէ, ինչի մասին վկայում են ոսկորների ու նյութի փշրվածությունը և կուտակումը մուտքի մոտ՝ հարավային հատվածում: Սովորաբար նման վիճակ է լինում այն դեպքերում, երբ իրականացվում են երկրորդական թաղումներ, սակայն այս պարագայում ոչ մի նման բան չի նկատվում: Հետևաբար այս պարագայում ևս անառարկելի է դամբարանի թալանված լինելու փաստը:

Հայտնաբերված խեցանոթներից առաջինը ունի ուռուցիկ իրան, դեպի դուրս ելնող շուրթ և լավ կոկված մակերես, մեկ կանթ՝ ուսից վեր: Վերնամասում 11 շեղակի արված կամարանախշեր են, որոնց վերևում՝ փորագծերի մեջ, արված է փայլանախշ գոտի: Այս զարդարուն գոտին ուսից դեպի վիզը անցման շրջանում ունի ներգծված շրջանների մի շարք: Չարդամոտիվների զուգահեռները կարելի է բերել Կարմիր Բերդ դամբ. 20, 38, 54-ի, Արթիկ դամբ. 223-ի նյութերում<sup>2</sup>:

Երկրորդ անոթը կոպտավուն մակերեսով կճուճ է, միջին հատվածում կա երկշար ակոսագիծ, որի մեջ են առնված երկու փորագիր գծեր: Դրանք տիպական խեցանոթներ են՝ հայտնի ուշ բրոնզի-վաղ երկաթի հուշարձաններում: Սակայն և՛ ձևը, և՛ զարդերը հատուկ են հիմնականում Լճաշեն-Մեծամորի 5-րդ փուլի հուշարձաններին (տե՛ս, օրինակ՝ Թալինի դամբարան 48-ի նյութերը): Երրորդ անոթը մոխրադարչնագույն փոքրիկ քրեղան է, որի մոտավոր զուգահեռները նկատելի են Կարմիր բլուրում, Թալինի երկրորդ դամբարանում, և կարելի է թվագրել Լճաշեն-Մեծամոր 5-րդ փուլով:

---

<sup>1</sup> Մարդաբանական նյութի այս բնորոշման համար երախտապարտ ենք պատմական գիտությունների թեկնածու Ռուզաննա Մկրտչյանին:

<sup>2</sup> **Badalyan R., Avetisyan P., Smith A.**, Periodization and Chronology of Sothern Caucasia: from the Erly Bronze Age through the Iron III Period. The archeology and Geography of Ancient Transcaucasian. Vol. I. OIP 134, Chicago, 2009, p. 33-93.

Առկա տվյալները հիմք են տալիս Օշականի երկրորդ դամբարանը տեղադրել Լճաշեն-Մեծամոր 5-ի սահմաններում և թվագրել մ.թ.ա. 11/10-9/8-րդ դդ.:

### **Դամբարան 3 ( նկ. 11, 12)**

Առաջին դամբարանին անմիջապես կից՝ հողի մակերեսի վրա, տեսանելի էին կրաքարե սալերի և մեծ գլաքարերի հետքեր: Տարածքը մաքրելուց հետո պարզվեց, որ գործ ունեինք մի սալածածկ դամբարանի հետ, որի կառուցվածքը նույնն էր, ինչ առաջին և երկրորդ դամբարանները, սակայն այն ավելի փոքր էր և ավելի անփույթ կառուցված: Լիցքը հանելու ընթացքում ի հայտ եկան խեցեղենի բեկորներ, ինչպես նաև մարդու և կենդանիների ոսկորներ: Պեղումները ցույց տվեցին, որ գործ ունենք թալանված դամբարանի հետ: Այդուհանդերձ, քանի որ ոսկորները շատ էին քայքայված, հնարավոր չէր պարզել, թե ինչ տարիքի և սեռի է պատկանում հանգուցյալը: Քիչ քանակությամբ հանդիպող մոխրագույն խեցեղենի բեկորները ևս հնարավոր չէ ախտորոշել: Սակայն ինչպես դամբարանի կառուցվածքը, այնպես էլ խեցեղեն բեկորները նախորդ երկու դամբարանների ժամանակաշրջանին են վերաբերում:

Այսպիսով, Օշականի դամբարանադաշտի 2013 թ. պեղված համալիրները պատկանում են վաղ երկաթի դարաշրջանին: Դրանք արտաքինից քարահողային լիցքով ոչ մեծ թմբեր են: Խցերի կառուցվածքով նույնատիպ են և պատկանում են քարարկղային դամբարանախցերի հայտնի ձևերին: Թաղումները ծածկվել են դամբարանախցի լայնքով դրված մեկ և ավելի սալերով: Պեղված քարարկղային խցերի պատերը շարված են երկու և ավելի շարք մշակված քարերով: Հետագուտված դամբարաններում թաղումները կատարվել են միայն դիաթաղման ծիսակարգով: Դրանք հիմնականում անհատական թաղումների շարքին են դասվում և իրենց լայն գուգահեռները ունեն Հայաստանի տարածքի վաղ երկաթի դարի դամբարանային համալիրներում<sup>1</sup>:

Տարածաշրջանի բրոնզ-երկաթի դարերի առաջին հնագիտական սանդղակի մշակման ժամանակաշրջանից հատուկ շեշտադրվել է այն փաստը, որ նման սանդղակների առաջադրման համար պետք է հիմք ընդունել Վանի թագավորության (Ուրարտու) շրջանի հուշարձանների տվյալները<sup>2</sup>: Մինչև օրս Հայաստանի բրոնզ-երկաթի դարերի հուշարձանների հասակագրման խնդիրների պարզաբանման համար, ուրարտական հնավայրերի հետ մեկ-

---

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիսյան Հ.**, Այգեշատի դամբարանադաշտի ուսումնասիրությունը // «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, թիվ 2, էջ 118-124:


<sup>2</sup> Տե՛ս **Ավետիսյան Պ.**, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. 24-9-րդ դարերում (Սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Երևան, 2014, էջ 19-20:




տեղ, ելակետային նշանակություն ունեն Վանի թագավորների արշավանքների ընթացքում ավերված բնակատեղիների շերտագրական տվյալները, հատկապես վաղ երկաթեդարյան փուլը նշանավորող հուշարձանները:



*Նկ. 1. Օշականի բլուրը (Դիդի-կոնդ)*



**Նկ. 2. Քարտեզ (տոպոհանույթ)**



**Նկ. 3. Ս. Եսայանի պեղած համալիրները**



**Նկ. 4. Պեղման ենթակա դաժբարանները**





**Նկ. 5. Դամբարան 1**





Abb. 1 Grab 1


**Նկ. 6. Դամբարան 1**




*Նկ. 7. Դամբարան 1*




**Նկ. 8. Դամբարան 2**



**Abb. 2 Grab 2**




**Նկ. 9. Դամբարան 2**



**Նկ. 10. Վերականգնված խեցեղեն, դամբարան 2**



**Նկ. 11. Դամբարան 3**



**Abb. 3 Grab 3**

**Նկ. 12. Դամբարան 3**



**Гайк Аветисян, Михаэль Герлес, Наталья Аветисян – *Раскопки Ошаканского могильника в 2013 г.***

С 2012 г. в рамках армяно-германского сотрудничества осуществляются новые раскопки неподалеку от холма Диди Конд близ современного села Ошакан. По сегодняшней основной задачей проекта было исследование проблематики I тыс до н. э., в частности вопросов, касающихся погребального обряда эпох раннего и среднего железа. В течении первых двух этапов полевых исследований было раскопано 7 погребений эпохи раннего железа, которые располагаются близ уже известного могильника на северо-восточном склоне холма. Кроме этого начаты работы около небольшого холма к югу от Диди Конда (1121 м. н. у. м.) в районе современного деревенского кладбища Ошакана, простирающегося с южной части Диди Кондского холма до края Казахского ущелья. Здесь еще в начале XX века эпизодические исследования провел Е. Лалаян. К сожалению, какие-либо данные о раскопках Е. Лалаяна отсутствуют, а о ходе полевых исследований упоминает только Т. Торамаян.

**Hayk Avetisyan, Michael Herles, Natalya Avetisyan – *Excavations of Oshakan Cemetery, 2013***

Since 2012, in the frames of Armenian-German collaboration, new excavations having been realized by the hill Didi Kond, near the village Oshakan. Thus far the main purpose of the project is to investigate the problems concerning burial rites of the Early and Middle Iron Ages, late 2<sup>nd</sup> early 1<sup>st</sup> millennia BC. During the first two stages of the work seven tombs have been excavated which are dated to the Early Iron Age. Tombs N 1-3, explored in 2013, are situated by already known cemetery on the north-eastern slope of the hill. Besides, investigations began around a hill situated south of Didi Kond (on 1121 m above the sea level), where the modern graveyard of the Oshakan village stretches (from the southern part of Didi Kond to the Kasakh river). The name of the Hill is Pokr Blur (Armenian for “Small Hill”). Already at the beginning of the XX<sup>th</sup> century Ervand Lalayan realized small scale investigations here. Unfortunately no data are present about these excavations, although the process of field works has been reported by Toros Toramanyan.

---

---

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԲԵՌԼԻՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 5-ին Գերմանա-հայկական ընկերության և Գերմանիայի Կանաչների կուսակցության՝ «Հայնրիխ Բյոլլ» հիմնադրամի նախաձեռնությամբ Բեռլինում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով՝ «Անցյալի արդիականությունը. 1915 թ. Հայոց ցեղասպանությունը 100 տարի անց» խորագրի ներքո: Այն այլ գիտաժողովներից դրականորեն առանձնանում էր մի շարք առանձնահատկություններով. <sup>3</sup>ՄԿ այն երկլեզու էր գերմաներեն կամ թուրքերեն, համաժամանակյա թարգմանությամբ: Բազմամարդ լսարանում ներկա էին նաև մեծ քանակությամբ թուրք ունկնդիրներ: Գիտաժողովն աչքի էր ընկնում քննարկումներին և բանավեճերին հատկացված՝ համեմատաբար լայն ժամանակահատվածով, ինչը մի կողմից լավագույնս ապահովում էր ելույթ ունեցողների և ունկնդիրների միջև ուղղակի կապը՝ վերջիններիս հնարավորություն տալով ազատ բարձրաձայնել նաև իրենց տեսակետներն ու մտահոգությունները, իսկ մյուս կողմից հնարավորություն էր ընձեռում սահմանափակ ժամանակահատվածում անդրադառնալ համեմատաբար մեծ թվով հարցերի: Գիտաժողովին մասնակցում էր Գերմանիայի Կանաչների կուսակցությունը, ինչը ելույթներին և ասուլիսներին հաղորդում էր նաև որոշ քաղաքական բովանդակություն, և եթե նկատի ունենանք, որ Բունդեսթագում Հայոց ցեղասպանության թեմայով առաջիկայում դարձյալ քննարկումներ են սպասվում, միանգամայն ուրախալի և օրինաչափ էր:

Գիտաժողովի բացմանը ելույթներով հանդես եկան «Հայնրիխ Բյոլլ» հիմնադրամի գործադիր վարչության անդամ Սերգեյ Լագոդինսկին և Գերմանա-հայկական ընկերության նախագահ, հայ մեծանուն և վաստակաշատ մտավորական դոկտոր Ռաֆֆի Քանդյանը, ովքեր իրենց ելույթներում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձան նաև Հայոց ցեղասպանությանը պատմաքաղաքական լիարժեք և սպառիչ գնահատական տալու անհրաժեշտությանը: Այնուհետև ընդարձակ ներածական զեկուցմամբ ելույթ ունեցավ շվեյցարացի ցեղասպանագետ պրոֆ. Հանս Լուկաս Կիզերը, ով մի շարք ստույգ փաստաթղթերի հիման վրա վերակերպավորեց Հայոց մեծ եղեռնի՝ որոշ բնութագրական կողմերը և առանձնահատկությունները: Նրա ելույթին հաջորդեցին եղեռնը վերապրած հայերի ճակատագրի լուսաբանմանը նվիրված զեկուցումներ ու քննարկումներ: Հումբոլդտի համալսարանի ներկայացուցիչ Անահիտ Բալայանը անդրադարձավ Արևմտյան Եվրոպայում ապաստան գտած հայ վերապրողներին, Քեմբրիջի համալսարանի աշխատակցուհի դր. Ալիսե ֆոն Բիբերշտայնը ներկայացրեց Թուրքիայում կենդանի մնա-

ցած հայերի դրությունը: Տոդերիս հեղինակը քննական լուսաբանման ենթարկեց Արևելյան Հայաստանում հանգրվանած արևմտահայերի ճակատագիրը՝ թե՛ Առաջին Հանրապետության ժամանակաշրջանում և թե՛ Խորհրդային Հայաստանում, իսկ բեռլինաբնակ դոկտոր Վահե Տաշյանը ներկայացրեց Մերձավոր Արևելքի երկրներում, մասնավորապես Լիբանանում և Սիրիայում ապաստանած արևմտահայերի դրությունը:

Ջեկուցումների հաջորդ շարքում, որը վերաբերում էր ոճրագործներին, ելույթ ունեցավ Ստամբուլից ժամանած քրդուհի Այշենուր Կորկմազը՝ քննական լուսաբանման ենթարկելով քրդերի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը: Նրան հաջորդեց համբուրգցի հրապարակախոս Վոլֆգանգ Գուստը, ում ելույթը վերաբերում էր Գերմանիայի մեդսակցությանն ու համապատասխանատվությանը, իսկ այնուհետև բանախոսությամբ հանդես եկավ բեռլինաբնակ թուրք հրապարակախոս Ռեջեպ Մարաշլին՝ պարզաբանելով թուրք ոճրագործների տխրահոջակ դերակատարությունը ցեղասպանության հարցում:

Վերոնշյալ զեկուցումներին հաջորդեց գերմանական Բունդեսթագի փոխնախագահ, Կանաչների կուսակցության ներկայացուցիչ Կլաուդիա Ռոթի ելույթը՝ «Ինչպե՞ս պետք է վերաբերվել ցեղասպանությանը» թեմայով: Նա ներկայացրեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր կուսակցության ծրագրած քայլերը և միջոցառումները: Նա մասնավորապես անհրաժեշտ էր համարում Գերմանիայի, ինչպես նաև Եվրոպական միության անդամ այլ երկրների դասագրքերում ցեղասպանության ներկայացումը և դրա ճանաչմանն ու հայ-թուրքական հաշտեցմանն ուղղված որոշակի միջոցառումների իրականացումը: Կ. Ռոթը, անդրադառնալով նաև ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում Բունդեսթագում և այլուր առկա դժվարություններին, առնվազն «տարօրինակ» էր համարում ցեղասպանության առնչությամբ ազնիվ վերագնահատում կատարելու հարցում իր Բունդեսթագի մի շարք գործընկերների մոտ և Գերմանիայի արտգործնախարարության որոշ բաժանմունքներում առկա մերժողական մոտեցումը, ինչին, ինչպես նա նշեց, ինքը շատ երկար ժամանակ ակնաստես է եղել:

Ելույթների և քննարկումների հաջորդ շարքը, որը կրում էր «Ճանապարհի դեպի առաջ» ենթախորագիրը, սկսվեց տոդերիս հեղինակի ելույթով, ընդգծվեց Գերմանիայի՝ որպես Հայոց ցեղասպանության հարցում համապատասխանատու պետության կողմից ցեղասպանության պաշտոնական ճանաչման և դատապարտման անհրաժեշտությունը՝ միաժամանակ շեշտելով այն նշանակությունը, որ դա կունենա թուրքական հասարակության և պետության համար՝ հարցին նորովի առերեսվելու տեսանկյունից: Անդրադառնալով նաև մի ելույթի ժամանակ բարձրաձայնված՝ հայ-թուրքական հաշտեցման և հայ-թուրքական պատմաբանների հանձնաժողովի ստեղծման արդեն բավականաչափ չարչրկված հարցերին՝ բանախոսն ընդգծեց, որ քանի դեռ թուրքական կառավարությունը երկու երկրների հասարակու-

թյունների երկխոսությունը խոչընդոտելու նպատակով շարունակում է փակ պահել Հայաստանի հետ սահմանը և միաժամանակ հետևողականորեն ժխտել Հայոց ցեղասպանությունը, ապա նման հանձնաժողովի ստեղծման առաջարկը պետք է դիտարկել որպես թուրքական ժխտողական քաղաքականության մի հերթական բաղադրիչ, որն այլ նպատակ չունի, քան հարցը քաղաքական հարթությունից հեռացնել և տանել անվերջ ձգձգումների փակուղի: Ինչպես նշեց բանախոսը, եթե այդ հանձնաժողովի խնդիրը պետք է լինի քննարկել այն հարցը՝ ցեղասպանություն եղել է, թե ոչ, ապա դա միանգամայն անիմաստ է, քանի որ այն արդեն հիմնովին փաստված է, իսկ ինչ վերաբերում է ցեղասպանությանն առնչվող մասնակի խնդիրներին, ապա դրանք կարող են քննարկվել, սակայն միայն Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումից հետո: Ինչ վերաբերում է հայ-թուրքական հաշտեցմանը, ապա բանախոսը նշեց, որ քանի դեռ Թուրքիան՝ որպես Օսմանյան պետության իրավահաջորդ, կշարունակի ժխտել ցեղասպանությունը, կմնա իբրև ոճրագործ պետություն, իսկ գոհի և ոճրագործի միջև իրական հաշտությունը հնարավոր է միայն այն պարագայում, երբ վերջինս կընդունի պատմական իրողությունը:

Այնուհետև ելույթ ունեցավ Միչիգանի համալսարան պրոֆ., թրքուհի Ֆաթմա Մյուգե Գյոչեկը, ով խստորեն քննադատեց թուրքական կառավարության կողմից ցեղասպանության ժխտումը և, որպես դրա դեմ արդյունավետ պայքարի հիմնական նախադրյալ, մատնանշեց թուրքական հասարակության իրազեկվածության ընդլայնումը: Նրան հաջորդեց Գերմանիայի Կանաչների կուսակցության ներկայացուցիչ և Բունդեսթագի պատգամավոր Պետեր Մայվալդի ելույթը. նա նույնպես անդրադարձավ սեփական պատմության հետ Թուրքիայի առերեսման և Հայոց ցեղասպանությունը միջազգային հանրության հիշողության մաս դարձնելու կարևորությանը: Գիտաժողովի եզրափակիչ հատվածում որպես բանախոսներ հանդես եկան Հանս Լուկաս Կիզերը և Պետեր Մայվալդը՝ անդրադառնալով Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը և հետագա լուսաբանմանը վերաբերող որոշ խնդիրների:

Ուրախալի էր գիտաժողովում մեծաքանակ թուրք ունկնդիրների ներկայությունը, որոնք հիմնականում թուրքական սփյուռքի մտավորականության ներկայացուցիչներ էին: Նրանց շարքում կային նաև որոշ թուրք ազգայնականներ, որոնք միջոցառման ընթացքում փորձեցին լսարանի ուշադրությունը հրավիրել իբրև թե հայերի կողմից իրականացված թուրքական կոտորածների վրա, բայց չհասցրեցին նույնիսկ իրենց խոսքն ավարտել, քանի որ թուրք պրոֆեսոր Ֆաթմա Մյուգե Գյոչեկը թուրքերենով խստորեն լռեցրեց նրանց, որից հետո նրանք գլխիկոր հեռացան դահլիճից:

Գիտաժողովին ներկա էր նաև Բեռլինում թուրքական դեսպանության ներկայացուցիչը, ով միջոցառման վերջում Հանս Լուկաս Կիզերին և Պետեր Մայվալդին հարց ուղղեց առ այն, թե արդյոք ցեղասպանությունները պատ-

Ժելու և կանխարգելելու մասին՝ Ռաֆայել Լեմկինի հեղինակած հոչակագիրը կարող է հետադարձ ուժ ունենալ, այսինքն՝ վերաբերել Հայոց ցեղասպանությանը, որը տեղի է ունեցել նախքան այդ իրավանաբանական փաստաթղթի ընդունումը: Հարցը, բնականաբար, ավելորդ էր, քանի որ կոնվենցիան վաղեմության ժամկետ չունի: Բացի այդ՝ նման տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում դա չէր կարող վերաբերել նաև հրեաների ցեղասպանությանը, ինչը նույնպես տեղի է ունեցել կոնվենցիայի ընդունումից առաջ:

Հարկ է արձանագրել, որ գիտաժողովը, որի կազմակերպումը հնարավոր դարձավ Գերմանա-հայկական ընկերության և «Հայնրիխ Բյոլլ» հիմնադրամի միասնական ջանքերով, իր գիտական նշանակությունից զատ մեծ կարևորություն ուներ նաև Գերմանիայի ներքաղաքական կյանքում Հայոց ցեղասպանության հանդեպ մոտեցումները թարմացնելու, լսարանը և մարդկանց իրազեկվածությունն ընդլայնելու հարցում, և այդ առումով այն կդառնա նշանակալից ազդակ Գերմանական Բունդեսթագում նոր քննարկումների ծավալման համար, որոնք սպասվում են առաջիկայում:

*ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ*

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

|                           |   |
|---------------------------|---|
| <b>Ավետիսյան Հայկ</b>     | ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, ԵՊՀ ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (hykavetisyan@yahoo.com) |
| <b>Ավետիսյան Նատալյա</b>  | ԵՊՀ ՀՀԻ հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող (avetisyannata@yahoo.com)   |
| <b>Ավետյան Սարգիս</b>     | ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (avetyansargis@gmail.com)  |
| <b>Գրիգորյան Հովիկ</b>    | ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (hovgrig58@gmail.com)   |
| <b>Զաքարյան Սեյրան</b>    | ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (S.A. Zakaryan@mail.ru)   |
| <b>Թունյան Վալերի</b>     | Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (tunyanvalery@rambler.ru)                                     |
| <b>Հակոբյան Տաթևիկ</b>    | ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոս (tatevik.hakobyan@mail.ru)   |
| <b>Հայրապետյան Տաթևիկ</b> | ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ (haytatev@gmail.com)   |
| <b>Հայրունի Աշոտ</b>      | ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ahayruni@yahoo.de)  |
| <b>Հեռլես Միխայիլ</b>     | Մյունխենի համալսարանի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու (michael.herles@gmx.de)   |
| <b>Հոսֆելդ Ռոլֆ</b>       | Լեփսիդուսի տան տնօրեն Պոտսդամում (rolf.hosfeld@gmx.de)  |
| <b>Հովսեփյան Էմմա</b>     | Հայաստանի ազգային արխիվի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու (emmahov@rambler.ru)  |
| <b>Մելքոնյան Ռուբեն</b>   | ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (rubmelk@yahoo.com)  |
| <b>Մենեմյան Անահիտ</b>    | ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, մամուլի պատմության և տեսության ամբիոնի   |

|                          |   |
|--------------------------|---|
| <b>Մխիթարյան Վարդան</b>  | դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (a.menemshyan@ysu.am)<br>ԵՊՀ ՀՀԻ Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի վարիչ (vardan_gm@yahoo.com) |
| <b>Ներսիսյան Աշոտ</b>    | ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ashot-nersisyan@mail.ru)   |
| <b>Պետրոսյան Դավիթ</b>   | ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (davidpetrosyan3@rambler.ru)   |
| <b>Պողոսյան Նաիրա</b>    | ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոս (nairapoghosyan@ysu.m)   |
| <b>Պողոսյան Վարուժան</b> | ԵՊՀ ՀՀԻ ցեղասպանագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (varuzhan.poghosyan@mail.ru)   |
| <b>Սայադյան Լիանա</b>    | ԵՊՀ մամուլի պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (lians@hetq.am)  |
| <b>Սարգսյան Համլետ</b>   | ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (hsargsyan46@mail.ru)  |
| <b>Վիրաբյան Վանիկ</b>    | ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (vanik.virabyan@mail.ru)  |
| <b>Տոնոյան Թադևոս</b>    | ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (aghbyur@yandex.com)  |
| <b>Քոսյան Լիլիթ</b>      | ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող (l.qosyan@gmail.com)   |

## СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

- Аветисян Гайк** Заведующий кафедрой археологии и этнографии ЕГУ, заведующий лабораторией археологических исследований Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук, профессор (hykavetisyan@yahoo.com)
- Аветисян Наталья** младшая научная сотрудница лаборатории археологических исследований Института арменоведческих исследований ЕГУ (avetisyannata@yahoo.com)
- Аветян Саркис** Доцент кафедры общего языкознания ЕГУ, кандидат филологических наук (avetyansargis@gmail.com)
- Айрапетян Татевик** Аспирантка Института востоковедения НАН РА (haytatev@gmail.com)
- Айруни Ашот** Профессор кафедры истории армянского народа ЕГУ, ведущий научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук (ahayruni@yahoo.de)
- Акопян Татевик** Преподавательница кафедры тюркологии ЕГУ (tatevik.hakobyan@mail.ru)
- Вирабян Ваник** Старший научный сотрудник отдела армяно-грузинских отношений Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук, профессор (vanik.virabyan@mail.ru)
- Герлес Михаил** Преподаватель Мюнхенского университета, кандидат исторических наук (michael.herles@gmx.de)
- Госфельд Рольф** Директор Дома Лепсисуса в Потсдаме (rolf.hosfeld@gmx.de)
- Григорян Овик** Доцент кафедры истории армянского народа ЕГУ, кандидат исторических наук (hovgrig58@gmail.com)
- Закарян Сейран** Заведующий кафедрой истории философии ЕГУ, доктор философских наук, профессор (S.A.Zakaryan@mail.ru)
- Косян Лилит** Младшая научная сотрудница Института истории НАН Армении (l.qosyan@gmail.com)
- Мелконян Рубен** Заместитель декана факультета востоковедения ЕГУ, кандидат филологических наук, доцент (rubmelk@yahoo.com)
- Менемшян Анаит** Заместитель декана факультета журналистики ЕГУ, доцент кафедры истории и теории прессы, кандидат филологических наук (a.menemshyan@ysu.am)
- Мхитарян Вардан** Заведующий лабораторией исторической географии и картографии имени Б. Арутюняна Института арменоведческих исследований ЕГУ (vardan\_gm@yahoo.com)
- Нерсисян Ашот** Профессор кафедры истории армянского народа ЕГУ, доктор исторических наук (ashot-nersisyan@mail.ru)



|                        |   |
|------------------------|---|
| <b>Овсебян Эмма</b>    | Заведующая отделом информационных технологий Национального архива РА, кандидат филологических наук (emmahov@rambler.ru)                       |
| <b>Петросян Давид</b>  | Заведующий кафедрой истории и теории прессы факультета журналистики ЕГУ, доктор филологических наук, профессор (davidpetrosyan3@rambler.ru)   |
| <b>Погосян Варужан</b> | Заведующий отдела геноцидологии Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук (varuzhan.poghosyan@mail.ru)             |
| <b>Погосян Наира</b>   | Преподавательница кафедры тюркологии ЕГУ (nairapoghosyan@ysu.m)   |
| <b>Сайадян Лиана</b>   | Доцент кафедры истории и теории прессы, кандидат филологических наук (lians@hetq.am)  |
| <b>Саркисян Гамлет</b> | Старший научный сотрудник Института археологии и этнографии НАН Армении, кандидат исторических наук (hsargsyan46@mail.ru)                     |
| <b>Тоноян Тадевос</b>  | Доцент кафедры армянского языка ЕГУ, кандидат филологических наук (aghbyur@yandex.com)  |
| <b>Тунян Валерий</b>   | Профессор Ереванского филиала Российского государственного университета туризма и сервиса, доктор исторических наук (tunyanvalery@rambler.ru) |

## INFORMATION ABOUT THE AUTHORS

- Avetisyan Hayk** Doctor of History, Professor, Head of the Chair of Archeology and Ethnography, Head of the Laboratory of Archeological Researches of the Institute for Armenian Studies of Yerevan State University (YSU) (hykavetisyan@yahoo.com)
- Avetisyan Natalia** Junior Researcher at the Laboratory of Archeological Researches of the Institute for Armenian Studies of YSU (avetisyannata@yahoo.com)
- Avetyan Sargis** PhD, Associate Professor of the Chair of General Linguistics, YSU (avetyansargis@gmail.com)
- Grigoryan Hovik** PhD in History, Associate Professor of the Chair of Armenian History (YSU) (hovgrig58@gmail.com)
- Hakobyan Tatevik** Lecturer of the Chair of Turkish Studies, YSU (tatevik.hakobyan@mail.ru)
- Hayrapetyan Tatevik** PhD student of the Institute of Oriental Studies, NAS RA (haytatev@gmail.com)
- Hayruni Ashot** Senior Researcher of the Institute for Armenian Studies of YSU, Professor of the Chair of Armenian History, YSU, Doctor of History (ahayruni@yahoo.de)
- Herles Michael** PhD in History, Lecturer of the University of Muenchen (michael.herles@gmx.de)
- Hosfeld Rolf** Academic Director of the Potsdam Lepsius House in Germany (rolf.hosfeld@gmx.de)
- Hovsepian Emma** PhD in Philology, Head of the Department of the Informational Technologies of the National Archives of RA (emmahov@rambler.ru)
- Melkonyan Ruben** Deputy Dean of the Faculty of Oriental Studies of YSU, PhD in Philology, Associate Professor (rubmelk@yahoo.com)
- Menemshyan Anahit** Deputy Dean of the Faculty of Journalism, Associate Professor of the Chair of the History and Theory of Press, PhD in Philology, YSU (a.menemshyan@ysu.am)
- Mkhitaryan Vardan** Head of the Laboratory of Historical Geography and Cartography of Armenia after B. Harutyunyan of the Institute for Armenian Studies of YSU (vardan\_gm@yahoo.com)
- Nersisyan Ashot** Professor of the Chair of Armenian History, YSU, Doctor of History, Professor (ashot-nersisyan@mail.ru)
- Petrosyan David** Head of the Chair of the History and Theory of Press, Doctor of Philology, Professor, YSU (davidpetrosyan3@rambler.ru)
- Poghosyan Naira** Lecturer of the Chair of Turkish Studies, YSU (nairapoghosyan@ysu.m)
- Poghosyan Varoujean** Senior Researcher of the Institute for Armenian Studies of YSU, Doctor of History (varuzhan.poghosyan@mail.ru)
- Qosyan Lilit** Junior Researcher at the Institute of History of NAS RA (l.qosyan@gmail.com)
- Sargsyan Hamlet** Senior Researcher at the Department of Ethnography of the Institute of Archeology and Ethnography of NAS RA, PhD in History (hsargsyan46@mail.ru)

|                        |   |
|------------------------|---|
| <b>Sayadyan Liana</b>  | Associate Professor of the Chair of the History and Theory of Press, PhD in Philology, YSU (lians@hetq.am)                              |
| <b>Tonoyan Tadevos</b> | Associate Professor of the Chair of Armenian Language, PhD in Philology, YSU (aghbyur@yandex.com)                                       |
| <b>Tunyan Valery</b>   | Doctor of Historical Sciences, Professor of Yerevan branch of Russian State University of Tourism and Service (tunyanvalery@rambler.ru) |
| <b>Virabyan Vanik</b>  | Senior Researcher of the Department of Armenian-Russian Relations, Doctor of Historical Sciences, Professor (vanik.virabyan@mail.ru)    |
| <b>Zakaryan Seyran</b> | Head of the Chair of History of Philosophy, YSU (S.A. Zakaryan@mail.ru)   |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

#### Ռուֆ Հոսֆելդ

Բարոյական քաղաքականությունից դեպի միջազգային արդարություն  
(անգլերեն) ..... 3

#### Ռուբեն Մելքոնյան

Հայոց ցեղասպանության նկատմամբ թուրքական քաղաքականության  
որոշ առանձնահատկությունների շուրջ (1965 և 2015 թթ.) ..... 11

#### Դավիթ Պետրոսյան

Հայոց ցեղասպանության թեման հայկական առցանց մամուլի  
երկխոսային դիսկուրսում (2015 թ.) ..... 22

#### Անահիտ Մենեմյան, Լիանա Մայադյան

Ֆրանսիական մամուլը՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին  
ընդառաջ ..... 30

#### Աշոտ Հայրունի

Գերմանիան կարո՞ղ էր կասեցնել Հայոց ցեղասպանությունը՝ առանց  
Թուրքիայի հետ դաշինքը վտանգելու (գերմաներեն) ..... 39

#### Լիլիթ Քոսյան

Կարսի մարզում ապաստանած արևմտահայ փախստականների  
դրությունը և մոտավոր թվաքանակը 1890-ական թթ. .... 46

#### Հովիկ Գրիգորյան

Հովակիմ Շահբազյանի «Դատվան» անտիպ հուշագրությունը ..... 52

#### Տաթևիկ Հակոբյան

Աբդուլ Համիդ II-ը հայերի մասին ..... 61

#### Նաիրա Պողոսյան

Հայկական հարցը գերմանաբնակ թուրք գրող Զաֆիր Շենոջաքի  
ստեղծագործություններում ..... 69

#### Համլետ Մարգարյան

Կարսի մարզի բնակչության թվաքանակի և էթնիկ կազմի շարժընթացը  
1878-1914 թթ. .... 79

#### Տաթևիկ Հայրապետյան

Հեյդար Ալինի վերադարձի քաղաքական առանձնահատկությունները ..... 113

#### Մեյրան Զաքարյան

Սոցիալական համերաշխության հարցը XIII-XV դարերի հայ  
փիլիսոփայության մեջ ..... 125

#### Թադևոս Տոնոյան

Տեքստի ընկալումը ..... 143

|   |     |
|---|-----|
| <b>Մարգիս Ավետյան</b>   |     |
| Շեշտաձայնդարձային հերթագայությունների ներհարացույցային դերը<br>ավանդական և արդի հնդերոպաբանության տեսանկյունից..... | 156 |

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

|   |     |
|---|-----|
| <b>Վարուժան Պողոսյան</b>                                      |     |
| Բ. Բ. Պիոտրովսկու նամակները Մ. Գ. Ներսիսյանին (ռուսերեն)..... | 174 |
| <b>Էմմա Հովսեփյան</b>   |     |
| Պատառիկներ Շահան Շահնուրի նամակագրությունից .....             | 179 |

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

|   |     |
|---|-----|
| <b>Աշոտ Ներսիսյան</b>   |     |
| Հակոբ Զորյան, Պատմագիտական ուսումնասիրություններ .....  | 194 |
| <b>Վալերի Թունյան</b>   |     |
| Վանիկ Վիրաբյան, Հայաստանի Հանրապետության պետական<br>անվտանգության համակարգի ստեղծումը և զործունեությունը<br>1918-1920 թթ..... | 200 |
| <b>Վարդան Մխիթարյան</b>   |     |
| Ռուբեն Գալյան, Ադրբեջանական պատմաաշխարհագրական<br>խեղաթյուրումներ .....   | 208 |
| <b>Վանիկ Վիրաբյան</b>   |     |
| Մամուկա Գոգիտիձե, Գեորգի Բեժիտաշվիլի, Հայաստանի զինվորական<br>վերնախավը .....   | 211 |
| <b>Վարուժան Պողոսյան</b>  |     |
| Ռայմոնդ Հ. Գևորգյան, Իվ Տերնոն, Հայոց ցեղասպանության<br>հուշակոթող .....  | 216 |
| <b>Աշոտ Հայրունի</b>  |     |
| Ռուֆ Հոսֆելդ, Մահ անապատում.....  | 225 |

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

|   |     |
|---|-----|
| <b>Հայկ Ավետիսյան, Միխաիլ Հեդլես, Նատալյա Ավետիսյան</b> |     |
| Օշականի դամբարանադաշտի 2013 թ. պեղումները .....         | 229 |
| <b>Աշոտ Հայրունի</b>                                    |     |
| Հայոց ցեղասպանությանը նվիրված գիտաժողով Բեռլինում.....  | 242 |
| <b>Տեղեկություններ հեղինակների մասին .....</b>          | 246 |

## СОДЕРЖАНИЕ

### СТАТЬИ

|   |     |
|---|-----|
| <b>Рольф Госфельд</b><br>От нравственной политики до международной справедливости<br>(на английском языке) .....  | 3   |
| <b>Рубен Мелконян</b><br>О некоторых особенностях турецкой политики относительно Геноцида армян<br>(1965 и 2015 гг.) .....                              | 11  |
| <b>Давид Петросян</b><br>Тема Геноцида армян в диалогическом дискурсе армянской онлайн прессы .....   | 22  |
| <b>Анаит Менемшиян, Лиана Саядян</b><br>Французская пресса к 100-летию Геноцида армян .....   | 30  |
| <b>Ашот Айруни</b><br>Германия могла бы остановить Геноцид армян, не ставя под угрозу союз с<br>Турцией (на английском языке) .....                     | 39  |
| <b>Лилит Косян</b><br>Положение и приблизительное количество беженцев из Западной Армении в<br>Карсской области в 1890-х гг. ....                       | 46  |
| <b>Овик Григорян</b><br>Неопубликованные воспоминания Овакима Шахбазяна “Датван” .....  | 52  |
| <b>Татевик Акопян</b><br>Абдул-Гамид II об армянах .....  | 61  |
| <b>Наира Погосян</b><br>Армянский Вопрос в произведениях турецкого писателя из Германии Зафера<br>Шеноджака .....                                       | 69  |
| <b>Гамлет Саргсян</b><br>Динамика числа населения и этнического состава Карсской области<br>(1878-1914 гг.) .....                                       | 79  |
| <b>Айрапетян Татевик</b><br>Политические особенности возвращения Гейдара Алиева 113-124   |     |
| <b>Сейран Закарян</b><br>Проблема социальной солидарности в армянской философии XIII-XV веках ....  | 125 |
| <b>Тадевос Тоноян</b><br>Восприятие текста .....  | 143 |
| <b>Саргис Аветян</b><br>Внутрипарадигматическая роль акцентно-аблаутных чередований<br>с точки зрения традиционной и современной индоевропейстики ..... | 156 |

### ПУБЛИКАЦИИ

|  |     |
|--|-----|
| <b>Варужан Погосян</b><br>Письма Б. Б. Пиотровского к М. Г. Нерсисяну (на русском языке) ..... | 174 |
| <b>Эмма Овсепян</b><br>Из переписки Шагана Шагнура .....                                       | 179 |

## **РЕЦЕНЗИИ**

|   |     |
|---|-----|
| <b>Ашот Нерсисян</b>  |     |
| Акоп Зорян, Исторические исследования .....                               | 194 |
| <b>Валери Тунян</b>   |     |
| Ваник Вирабян, Создание системы безопасности Республики Армения .....     | 200 |
| <b>Вардан Мхитарян</b>  |     |
| Рубен Галчян, Азербайджанские историко-географические фальсификации ..... | 208 |
| <b>Ваник Вирабян</b>  |     |
| Мамука Гогитидзе, Георгий Бежиташвили, Военная элита Армении .....        | 211 |
| <b>Варужан Погосян</b>  |     |
| Раймонд А. Геворгян, И. Тернон, Мемориал Геноцида армян .....             | 216 |
| <b>Ашот Айруни</b>  |     |
| Рольф Госфельд, Смерть в пустыне .....                                    | 225 |

## **НАУЧНАЯ ЖИЗНЬ**

|   |     |
|---|-----|
| <b>Гайк Аветисян, Михаил Герлес, Наталья Аветисян</b> |     |
| Раскопки Ошаканского могильника в 2013 г. ....        | 229 |
| <b>Ашот Айруни</b>                                    |     |
| Коллоквиум посвященный Геноциду армян в Берлине ..... | 242 |
| <b>Сведения об авторах</b> .....                      | 248 |

## CONTENTS

### ARTICLES

#### **Rolf Hosfeld**

From Moral Politics to International Justice..... 3

#### **Ruben Melkonyan**

On Some Peculiarities of the Turkish Policy towards the Armenian Genocide  
(1965 & 2015) 11.....

#### **David Petrosyan**

The Topic of the Armenian Genocide in the Dialogic Discourse of Armenian Online  
Media ..... 22

#### **Anahit Menemshyan, Liana Sayadyan**

The French Press: on the Eve of the 100<sup>th</sup> Anniversary of the Armenian Genocide ..... 30

#### **Ashot Hayruni**

Could Germany stop the Armenian Genocide ..... 39

#### **Lilit Kosyan**

The Condition of Western Armenian Refugees Sheltered in Kars Province and Their  
Approximate Number in the 1890s. .... 46

#### **Hovik Grigoryan**

Hovakim Shahbazyan's Unpublished Memoirs "Datvan" ..... 52

#### **Tatevik Hakobyan**

Abdul Hamid II about the Armenians ..... 61

#### **Naira Poghosyan**

The Armenian Question in the Works of Turkish-German Writer Zafer Shenocak..... 69

#### **Hamlet Sargsyan**

The Number and Dynamics of Ethnic Structure of Kars Region (1878-1914)..... 79

#### **Tatevik Hayrapetyan**

Political Peculiarities of Heydar Aliyev's Return ..... 113

#### **Seyran Zakaryan**

The Issue of Social Solidarity in the XIII-XV Century Armenian Philosophy ..... 125

#### **Tadevos Tonoyan**

Text Perception..... 143

#### **Sargis Avetyan**

The Inner-Paradigmatic Role of Accent-Ablaut Alternations from the Viewpoint of  
Traditional and Modern Indo-European Linguistics ..... 156

### PUBLICATIONS

#### **Varoujean Poghosyan**

Letters of B. B. Piotrovsky to M. G. Nersisyan (in Russian)..... 174

#### **Emma Hovsepyan**

Selection from Shahan Shahnurs messaging ..... 179



## REVIEW

|  |     |
|--|-----|
| <b>Ashot Nersisyan</b><br>Hakob Zoryan, Historical Studies .....   | 194 |
| <b>Valery Tunyan</b><br>Vanik Virabyan, The Establishment of National Security of Armenia and<br>its Functioning in 1918-1920..... | 200 |
| <b>Vardan Mkhitaryan</b><br>Ruben Galchyan, Azerbaijani Historical-Geographical Distortions.....                                   | 208 |
| <b>Vanik Virabyan</b><br>Mamuka Gogitidze, Georgi Bezhitashvili, The Military Elite of Armenia.....                                | 211 |
| <b>Varoujean Poghosyan</b><br>Raymond H. Kevorkian, Yves Ternon, The Armenian Genocide Memorial.....                               | 216 |
| <b>Ashot Hayruni</b><br>Rolf Hosfeld, Death in the Desert.....   | 225 |

## SCIENTIFIC LIFE

|   |     |
|---|-----|
| <b>Hayk Avetisyan, Natalia Avetisyan, Michael Herles</b><br>The Excavations of Oshakan Burial Vault in 2013 ..... | 229 |
| <b>Ashot Hayruni</b><br>Berlin Conference Dedicated to the Armenian Genocide.....                                 | 242 |
| <b>Information about the Authors</b> .....  | 250 |

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

3 (6)

Սրբագրիչ՝ Վ. Դերձյան  
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:  
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

---

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (զվաստառերով), վերնագիրը (զվաստառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլեկտրոնային անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (*info@armin.am*), հեռ. +374 60 710092

## NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author's agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2<sup>nd</sup> annex, 5<sup>th</sup> floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (*info@armin.am*), tel.: +374 60 710092

## К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовок, том, место и год издательства (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (*info@armin.am*), тел.: +374 60 710092